Եզրակացություն: Առաջին անգամն է որ ստեղծվել է շեղումների ձևաչափը, օգտագործելով ֆինֆեթ տեխնոլոգիայի հիման վրա ստեղծված 14նմ-ոց ուսումնական նախագծման հավաքածուն: Արդյունքները մոտ են ստացվել արտադրական տեխնոլոգիայով ստեղծված նույն ձևաչափին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Վ. Մելիքյան**, Ինտեգրալ սխեմաների ներածություն, Երևան, Ճարտարագետ, 2017թ.
2. **V. Melikyan, M. Martirosyan, A. Melikyan, G. Piliposyan**, 14nm Educational Design Kit: Capabilities, Deployment and Future, Small Systems Simulation Symposium 2018, Niš, Serbia, 12th-14th February 2018
3. **Jayaram Bhasker and Rakesh Chadha**, Static Timing Analysis for Nanometer Designs: A Practical Approach
4. **Sanjay Churiwala and Sridhar Gangadharan**, Constraining Designs for Synthesis and Timing Analysis
5. Prime Time documentation, Synopsys Inc., 2017
6. **S. J. Mason, R. R. Hill, L. Mönch, O. Rose, T. Jefferson, J. W. Fowler** eds., INTRODUCTION TO MONTE CARLO SIMULATION, Simulation Conference, 2008. WSC 2008. Winter

МЕРУЖАН МАРТИРОСЯН

Синописис Армении,
специалист по университетским программам

ПОЛУЧЕНИЕ ФОРМАТА ВАРИАЦИЙ С ИСПОЛЬЗОВАНИЕМ МОДЕЛЕЙ МОНТЕ КАРЛО 14-НАНОМЕТРОВЫХ ТРАНЗИСТОРОВ

Получение формата вариаций с использованием недавно созданного 14-нанометрового образовательного комплекта разработки средств и процессного комплекта разработки средств. В статье приведены форматы вариаций для нескольких стандартных ячеек, но были сгенерированы таблицы для всех ячеек из соответствующей библиотеки.

MERUZHAN MARTIROSYAN

Synopsys Armenia,
University program specialist

DEVELOPMENT OF SEMICONDUCTOR CELLS PARAMETRIZED SYSTEMS BASED ON 7 NM TECHNOLOGY

Implemented the parametrized cells based on 7 nm technology using the classes of python API. Developed design rules, which were used to check the generated cells' topologies with different parameter values.

ՄԱՆՈՒԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

փիլիսոփայական գիտությունների դոկտոր
ԽԱՉԱՏՈՒՐ ՄԱԶԻԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ
ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

Հոդվածում դիտարկված են պառլամենտարիզմի որոշ առանձնահատկությունները Արևելյան Եվրոպայի երկրներում:

Հետազոտության հիմնական հետազոտությունն է՝ Արևելյան Եվրոպայի երկրներում խորհրդարանական զարգացումների տիրապետող միտումների բացահայտումը:

***Բանալի բառեր՝** ազգային խորհրդարան, սահմանադրություն, Եվրոինտեգրում, խորհրդարանների լիազորություններ:*

1989թ. շրջադարձային տարի եղավ Արևելյան Եվրոպայի երկրների կյանքում: Նշյալ երկրներում տեղի ունեցան հակամաքոջատիրական հեղափոխություններ, որոնց ընթացքում կոմունիստական վարչակարգը տապալվեց, իսկ սոցիալիստական շինծու դաշնային կազմավորումները (ԽՍՀՄ, Հարավսլավիայի Սոցիալիստական Դաշնային Հանրապետություն, Չեխոսլովակիայի Սոցիալիստական Հանրապետություն) շուտով փլուզվեցին: Ընդունվեցին նոր, ժողովրդավարական սահմանադրություններ (1990թ.՝ Խորվաթիայի Սահմանադրությունը, 1991թ.՝ Բուլղարիայի, Մակեդոնիայի, Ռումինիայի, Սլովենիայի սահմանադրությունները, 1992թ.՝ Լեհաստանի փոքր Սահմանադրությունը, Լիտվայի, Սլովակիայի, Չեխիայի, Էստոնիայի սահմանադրությունները): Հունգարիայում 1989-1990թթ. ընդունվեց նոր խմբագրմամբ Սահմանադրությունը:¹ Վերթվարկյալ բոլոր սահմանադրությունները (բացի լեհականից) ներկայումս գործող են՝ փոփոխություններով ու լրացումներով հանդերձ: Ամենաուշը ընդունվեցին Բոսնիա և Հերցեգովինայի (1995թ.), Լեհաստանի (1997թ.) և Ալբանիայի (1998թ.) սահմանադրությունները: Հենց թվարկված սահմանադրություններն էլ իրավական հիմք դարձան և այժմ էլ այդպիսին են Արևելյան Եվրոպայի երկրներում ժողովրդավարական իրավական, սոցիալական ուղղվածության շուկայական տնտեսությամբ պետություն կառուցելու համար: Ներկայումս ընդունված է այդ երկրներն անվանել «երիտասարդ ժողովրդավարություններ»:

Արևելյան Եվրոպայի երկրները սահմանադրություններ մշակելիս հենվել են նաև սեփական սահմանադրական փորձի վրա, առաջին հերթին մինչսո-

¹ Страшун Б. А. Конституционные перемены в Восточной Европе 1989-1990. М., 1991. С. 3.

ցիալիստական ինքնուրույն կառավարման շրջանի, որին այդ երկրներում վերաբերվում են մեծ հարգանքով, թեկուզ և խոստովանում են, որ այն այնքան էլ հաջող փուլ չէր:¹

Վերադարձ սեփական անցյալին կարելի է նկատել, օրինակ, խորհրդարանի կառուցվածքում (վերին պալատը վերականգնելը) և պալատների անվանման մեջ: Պետք չէ մոռանալ, որ մինչսոցիալիստական սահմանադրություններն էլ այդ երկրներում ստեղծվում էին իրենց ժամանակակից արտասահմանյան երկրների փորձի վրա հենվելով: Օրինակ՝ Չեխիայի գործող Սահմանադրությունում փոխառված դրույթները հարաբերականորեն քիչ են, սակայն 1920թ. Չեխոսլովակիայի Սահմանադրությունը, որն անկասկած նրա համար օրինակ է ծառայել, մշակվել է ավստրիական պետական իրավունքի ուժեղ ազդեցությամբ: Ինչ վերաբերում է սոցիալիստական ժամանակաշրջանի նորմերի ժառանգականությանը, ապա այդ առումով աչքի է ընկնում Հունգարիայի Հանրապետության Սահմանադրությունը: Արևելյան Եվրոպայի մյուս երկրների նման Հունգարիան էլ հրաժարվեց «սոցիալիզմի» բոլոր կանխադրյալներին, բայց նախընտրեց ոչ թե նոր սահմանադրություն ընդունել, այլ հիմնովին վերանայել հինը՝ նախկին տեքստից թողնելով միայն որոշ ոչ էական դրույթներ:

Նախքան Արևելյան Եվրոպայի երկրների խորհրդարանների իրավական դրության քննությանն անցնելը հարկավոր է մատնանշել նրանց սահմանադրությունների ընդհանուր առանձնահատկությունները, որոնք ազդում են նաև ներկայացուցչական մարմինների վրա: Նախ և առաջ՝ դա սահմանադրությունների ընդգծված ժողովրդավարական և հակամարտողատիրական բնույթն է: Նախնական դրույթներից սկսած դրանք հաստատում են իրենց նվիրվածությունը քաղաքական բազմակերպությանն ու իշխանությունների բաժանմանը, ընդ որում՝ հաշվի առնելով կոմունիստական կառավարման ժամանակաշրջանում ձեռք բերած բացասական փորձը: Նշյալ սահմանադրությունների երկրորդ առանձնահատկությունը ազգային հարցի նկատմամբ դրանց ուշադրությունն է: Դրանցում ընդգծվում են պետականության ազգային բնույթը, ազգային մշակույթի ու պետության վաղեմի ավանդույթները, երաշխավորվում են էթնիկ փոքրամասնությունների իրավունքները:

Քննության առարկա սահմանադրությունների երրորդ առանձնահատկությունը կարելի է համարել նրանց հավատարմությունը եվրոպական ինտեգրմանը, միջազգային համագործակցությանը և միջազգային իրավունքի համընդհանուր ընդունելության արժանացած սկզբունքներին ու նորմերին: Ներկայումս Արևելյան Եվրոպայի մեկ տասնյակ երկրներ Եվրոպական միության անդամներ են: Ընդ որում, ԵՄ անդամ դառնալու փաստացի նախապատրաստությունը սկսվեց այդ երկրներում կոմունիստական վարչակարգի տապալմանը գրեթե համընթաց: 1989թ. դեկտեմբերին ԵՄ-ի ղեկավարությունը հավա-

¹ Светлорусова Л. М. Развитие парламентаризма в Болгарии (Обзор) // Процессы демократизации в Восточной Европе: ожидания и реальность: Сб. обзоров и реф. / РАН ИНИОН. Отв. редактор Игрицкий Ю. И., М., 2002. С. 25.

նություն տվեց Հունգարիային և Լեհաստանին տնտեսական օժանդակություն ցուցաբերելու ծրագրին (PHARE), ինչը հետագայում կիրառվեց նաև մյուս արևելաեվրոպական երկրներում: 1991թ. մեկնարկեց ԵՄ-ի հետ ասոցացման պայմանագրեր կնքելու վերաբերյալ նախկին սոցիալիստական երկրների կողմից դիմումներ ներկայացնելու պաշտոնական գործընթացը:¹ Տնտեսական պահանջներից բացի, հավակնորդ երկրները պետք է բավարարեին նաև քաղաքական-իրավական պահանջները՝ հավաստելով հարգանքը ժողովրդավարական սկզբունքների, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և փոքրամասնության պաշտպանության նկատմամբ, ինչպես նաև ի գործու լինելին կատարել ԵՄ-ի անդամակցությունից բխող պարտավորությունները՝ ներառյալ Եվրամիության ազգային իրավական համակարգին ինտեգրվելը: Ներկայումս ԵՄ-ի ազդեցությունը անդամ երկրների վրա շատ ուժեղ է: Օրինակ՝ այդ երկրներում սոցիալ-տնտեսական ոլորտում (տնտեսություն, ֆինանսներ, առողջապահություն, տրանսպորտ, կրթություն, արդյունաբերություն) որոշումների չորս հինգերորդը կայացվում է եվրոպական նորմերի հիման վրա: Այդ ազդեցությունը շարունակ աճում է՝ ընդգրկելով նաև ազգային խորհրդարանները:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ անցնենք Արևելյան Եվրոպայի հետսոցիալիստական երկրների խորհրդարանների իրավական կացության համեմատական վերլուծությանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով դրանց ընդհանուր առանձնահատկություններին:

Իսկույն կարելի է նկատել, որ տվյալ խմբի երկրներին բնորոշ է խորհրդարանների նշանակալի դերը պետական իշխանության բարձրագույն մարմինների համակարգում: Դրանց մեջ չկան նախագահական հանրապետություններ: Դրանք կա՛մ մաքուր խորհրդարանական երկրներ են՝ Ալբանիան, Հունգարիան, Լատվիան, Չեխիան, Էստոնիան, կա՛մ հանրապետություններ են, որոնցում երկրի ղեկավարն ընտրվում է բնակչության կողմից, սակայն կառավարությունը ձևավորվում է խորհրդարանի վճռորոշ ազդեցությամբ և քաղաքական պատասխանատվություն է կրում նրա առջև: Հետագոտողները նկատելով խառը հանրապետության տարրեր այդ երկրներում (Նախագահի ուղղակի ընտրություն), սովորաբար խոստովանում են, որ իշխանությունը փաստացի «գործառում է խորհրդարանական համակարգով» (Լեհաստան), «պառլամենտարիզմի տարրերի գերակշռությամբ» (Լիտվա), կամ անմիջականորեն դասում են դրանք խորհրդարանական հանրապետությունների շարքին (Ռումինիա,² Բոսնիա և Հերցեգովինա):³ Այս տեսանկյունից կարելի է խոսել Արևելյան Եվրոպայի երկրների՝ «իշխանությունների բաժանման եվրոպական մոդելին» հակվածության մասին, որի պարագայում գործադիր իշխանությունը

¹ **Штадтмюллер Э.** Проблемы и перспективы развития Европейского союза. Польша и ЕС // Европейский союз на рубеже веков / РАН.ИНИОН. М., 2000. С. 201.

² **Мойсеенко М. Г.** Вводная статья к Конституции Румынии // Конституции государств Европы: В 3 т. Т. 3 / Под общ. ред. Л. А. Окунькова.- М.: НОРМА, 2001. С. 60.

³ **Шрам В. П.** Вводная статья к Конституции Боснии и Герцоговины // Конституции государств Европы: В 3 т. Т. 1 / Под общ. ред. Л. А. Окунькова.- М.: НОРМА, 2001. С. 429.

անմիջականորեն կախված է օրենսդիր (ներկայացուցչական) մարմնի աջակցությունից:

Չնային առումով խորհրդարանի գերակայությունը Արևելյան Եվրոպայի երկրներում դրսևորվում է նույնիսկ սահմանադրությունների բաժինների դասավորության մեջ: Բոլոր այդ երկրներում պետական իշխանության բարձրագույն մարմինների կանոնակարգումն սկսվում է խորհրդարանից, որին հաջորդում են նախագահին, ապա կառավարությանը վերաբերող դրույթները: Ռումինիայի Սահմանադրությունում (ակներևաբար ֆրանսիականի օրինակով) կա նաև բաժին խորհրդարանի և կառավարության հարաբերությունների վերաբերյալ: Լատվիական և էստոնական սահմանադրություններում տեղ է գտել «Օրենսդրություն» բաժինը:

Արևելյան Եվրոպայի երկրների սահմանադրությունները սահմանում են խորհրդարանի ընդհանուր գործառույթը բարձրագույն պետական մարմինների համակարգում՝ օրենսդիր իշխանության իրականացումը՝ հրաժարվելով ներկայացուցչական մարմինների գերակայության և լիակատար իշխանության սոցիալիստական սկզբունքից: Բացառություն կարելի համարել Հունգարիան, որտեղ խորհրդարանը սահմանվում է որպես «պետական իշխանության և ժողովրդական ներկայացուցչության բարձրագույն մարմին», որն «ապահովում է հասարակության սահմանադրական կարգի պաշտպանությունը, սահմանում է նրա կազմակերպումը, զարգացումը և կառավարման պայմանները» (§19): Նման ձևակերպումները վկայում են այն մասին, որ Հունգարիայի Սահմանադրության որոշ դրույթներ պահպանվել են նախկին սոցիալիստական փորձից: Խորհրդարանի «բարձրագույն» դիրքի մասին խոսվում է նաև Ռումինիայի Սահմանադրության մեջ: Բացի այդ, այնտեղ ընդգծվում է, որ դա «երկրի միակ օրենսդիր մարմինն է» (հոդված 58): Սլովակիայի Սահմանադրության մեջ խորհրդարանը նշվում է որպես «միակ մարմինը, որն ընդունում է Սահմանադրությունն ու օրենքները» (հոդված 72): Խորհրդարանի բացառիկ դերը մատնանշելը կարող է հետապնդել երկակի նպատակ. մի կողմից՝ բարձրացնել խորհրդարանի հեղինակությունը, մյուս կողմից՝ սահմանափակել մյուս մարմինների (գործադիր կամ տեղական ինքնակառավարման) օրենքներ ընդունելու հնարավորությունը:

Խորհրդարանի ներկայացուցչական բնույթի մասին են նշում Հունգարիայի, Մակեդոնիայի, Ռումինիայի և Խորվաթիայի սահմանադրությունները: Խորհրդարանի կարևորագույն գործառույթներից մեկի՝ վերահսկողության մասին հիշատակվում է միայն Բուլղարիայի և Լեհաստանի (ներքին պալատի՝ Սեյմի առնչությամբ) սահմանադրություններում: Մյուս սահմանադրություններում այդ բացը լրացվում է այն բանով, որ տեքստում նրանք պարտադիր նախատեսում են խորհրդարանական վերահսկողության զանազան ձևեր: Մի շարք սահմանադրություններ (Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա, Լատվիա, Լիտվա, Սլովենիա) որևէ կերպ չեն նշում խորհրդարանի գործառույթները: Սակայն վերլուծության առարկա սահմանադրությունների գերաշիռ մասում թվարկվում են խորհրդարանական լիազորությունները:

Խորհրդարանի գլխավոր լիազորությունները օրենսդրականն են: Այս խմբի երկրներին բնորոշ է խորհրդարանի օրենսդրական իրավասության միանգամայն անսահմանափակ ոլորտ: Ոչ մի սահմանադրություն չի թվարկում այն հարցերը, որոնց վերաբերյալ խորհրդարանը իրավասու է ընդունել որոշումներ: Դա հաստատում է խորհրդարանի ինքնուրույն դերը պետական իշխանության բարձրագույն մարմինների շարքում: Ինչ վերաբերում է օրենքների հատուկ կատեգորիաներին, ապա պետք է նշել, որ քննարկվող տասնչորս սահմանադրություններից միայն հինգում են հիշատակվում սահմանադրական օրենքներ (Լիտվա, Մակեդոնիա, Ռումինիա, Սլովակիա և Չեխիա), իսկ օրգանական օրենքներ՝ միայն Մակեդոնիայի և Խորվաթիայի սահմանադրություններում: Որոշ երկրներում (օրինակ՝ Ալբանիայում, Հունգարիայում, Մակեդոնիայում, Էստոնիայում) գոյություն ունեն օրենքների կատեգորիաներ, որոնք ընդունելու համար անհրաժեշտ են առավելագույն թվով ձայներ, սակայն դրանց համար որևէ հատուկ անվանում մտածված չէ:

Արևելյան Եվրոպայի երկրների մյուս ընդհանուր գիծը կարելի է համարել նրանց շրջահայաց վերաբերմունքը օրենսդրական լիազորությունների պատվիրակմանը: Սահմանադրությունների մեծ մասում այն թույլատրվում է միայն ծայրահեղ, բացառիկ իրադրություններում, երբ արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում անհրաժեշտ է անհապաղ կարգավորել հասարակական հարաբերությունների ինչ-որ տեսակ. այդ դեպքում Նախագահը կամ կառավարությունը իրավունք ունեն ընդունելու ակտեր, որոնք օրենքի ուժ ունեն, պարտադիր աժանանալով խորհրդարանի հավանությանը (օրինակ՝ Հունգարիայում, Լատվիայում, Մակեդոնիայում, Լեհաստանում): Իսկ սովորական պայմաններում օրենսդրությունը պատվիրակել հնարավոր է միայն ըստ Ռումինիայի Սահմանադրության (հատուկ իրավական ակտեր կարող են ընդունվել այն ոլորտներում, որոնք օրգանական օրենքների առարկա չեն) և Խորվաթիայի Սահմանադրության համաձայն, երբ խորհրդարանն իրավունք ունի պատվիրակելու օրենսդրական լիազորությունները կառավարությանը մինչև մեկ տարի ժամկետով:

Չեխիայի Սահմանադրությունը ևս ունի առանձնահատկություն. այն միակն է նշյալ խմբից, որը իրավունք է տալիս ընդունելու օրենքի ուժ ունեցող ակտեր ոչ թե կառավարությանը, այլ խորհրդարանի վերին պալատին այն դեպքում, երբ ստորին պալատն արձակված է, իսկ օրենսդրական կարգավորում պահանջող հարցը անհետաձգելի է (հոդված 33):

Եվրոպական միության ազդեցությունը նորագույն ժամանակների գործոն է: Սլովակիայի Սահմանադրության մեջ կատարված վերջին փոփոխություններից մեկը (հոդված 7) հնարավորություն ընձեռեց կառավարությանը այդ կազմակերպության անդամակցությանը նախապատրաստվելու ընթացքում ընդունելու որոշումներ ԵՄ-ի նորմերը ազգային իրավական համակարգ ներդնելու համար: Կառավարության նմանօրինակ ակտերը չունեն օրենքի ուժ, սակայն ընդունելու համար պահանջում են խորհրդարանի հատուկ լիազորումը: Չեխիայում կառավարությունը նույն նպատակով փորձեց ամրապնդել իր իրավունքը օրենքի ուժ ունեցող ակտեր ընդունելու հարցում,

բայց ապարդյուն: Արևելյան Եվրոպայի երկրների սահմանադրությունները չեն նախատեսում նաև մշտական հանձնաժողովների կամ խմբակցությունների իրավունքը խորհրդարանի փոխարեն ընդունելու օրենքներ, ինչպես նախատեսում են Բուլղարիայի, Հունաստանի, Բուլղարիայի կամ Բրազիլիայի սահմանադրությունները: Դրանում կարելի է տեսնել հետսոցիալիստական օրենսդրի ձգտումը խուսափելու խորհրդարանի պատվիրակումից կամ առավել ևս փոխարինումից սովորական պայմաններում՝ ի հակակշիռ սոցիալիստական պրակտիկայի, երբ նեղ կոլեգիալ մարմինները (նախագահությունները, պետական խորհուրդները) փաստացի իրականացնում էին խորհրդարանի բոլոր լիազորությունները նրա հազվադեպ և կարճատև նստաշրջանների միջև ընկած ժամանակահատվածներում:

Խորհրդարանի լիազորությունների երկրորդ խումբը ֆինանսական լիազորություններն են: Խորհրդարանի ավանդական լիազորությունը՝ ընդունելու բյուջեն և վերահսկելու դրա կատարումը, կարգավորվում է բոլոր սահմանադրությունների կողմից: Ամենալայն տնտեսական լիազորությամբ օժտված է Հունգարիայի խորհրդարանը, այն սահմանում է երկրի սոցիալ-տնտեսական ծրագիրը: Երեք երկրում (Լեհաստան, Խորվաթիա և Էստոնիա) խորհրդարանը կարող է նույնիսկ արձակվել, եթե ժամանակին չընդունի բյուջեն: Սահմանադրությունների մեծ մասում կան ֆինանսներին նվիրված են հատուկ բաժիններ (օրինակ՝ Լեհաստանում և Սլովենիայում՝ «Հանրային ֆինանսներ», Ռումինիայում՝ «Տնտեսություն և հանրային ֆինանսներ», Լիտվայում և Էստոնիայում՝ «Ֆինանսներ և պետական բյուջե» և այլն): Հասարակական հարաբերությունների նշյալ տեսակի մանրակրկիտ կարգավորումը համաշխարհային սահմանադրականության արդի միտումներից է և վկայում է զարգացած արևմտյան պետությունների, մասնավորապես Գերմանիայի փորձի հետ ծանոթության մասին: Սակայն արևելաեվրոպական որոշ երկրների համար դա նաև վերադարձ է սեփական մինչսոցիալիստական անցյալին:¹ Հասարակական հարաբերությունների կարևորությունը, որ ձևավորվում են պետական բյուջեի մշակման, հաստատման և կատարման գործընթացում, պայմանավորում է դրանց կարգավորման անհրաժեշտությունը իրավական նորմերով, որոնցից գլխավորները ամրագրված են բոլոր պետությունների սահմանադրություններում:²

Այս առումով կարելի նշել երկու մարմին (հաստատություն), որոնք հանդիպում են Արևելյան Եվրոպայի երկրների գործող սահմանադրություններում և առհասարակ բոլոր նորագույն սահմանադրություններում: Առաջինը Կենտրոնական բանկն է, երկրորդը՝ Հաշվիչ պալատը (Բուլղարիա, Հունգարիա), Հաշվիչ դատարանը (Ռումինիա, Սլովենիա), Բարձրագույն վերահսկիչ վարչությունը (Սլովակիա, Չեխիա), Պետական վերահսկողությունը (մերձբալթյան

¹ **Трещетенкова Н. Ю.** Вводная статья к Конституции Литвы // Конституции государств Европы: В 3 т. Т. 2 / Под общ. ред. Л. А. Окунькова. - М.: НОРМА, 2001. С. 330.

² **Тимошенко И. Г.** Конституционная регламентация бюджетного процесса в зарубежных государствах // Очерки конституционного права иностранных государств: Учебное и научно-практическое пособие / Отв. ред. Д. А. Ковачев, М. 1999. С. 73.

հանրապետություններ): Ընդ որում՝ սահմանադրությունները ֆինանսական վերահսկողության մարմինների կարգավիճակը կարգավորում են առավել մանրամասն, քան բանկերինը: Լեհաստանի Սահմանադրության մեջ Վերահսկողության բարձրագույն պալատին նվիրված է վեց հոդված (այս մարմինը հիշատակված է դեռ 1921թ. լեհական Սահմանադրության մեջ): Սահմանադրությունների մեծ մասում հաշվիչ պալատների ղեկավարությունը նշանակվում է խորհրդարանի կողմից, իսկ Կենտրոնական բանկերի ղեկավարությունը՝ խորհրդարանի և Նախագահի կողմից համատեղ:

Խորհրդարանի լիազորությունների երրորդ խումբը միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի վավերացումն ու չեղարկումն է: Վերլուծվող սահմանադրություններից յուրաքանչյուրը կարգավորում է նշյալ հարցը: Դրանց սկզբնական գլուխներում սովորաբար կա հոդված, որը ճանաչում է միջազգային պայմանագրերի գերակայությունը ներքին օրենսդրության նկատմամբ, սակայն մի շարք նախապայմաններով, օրինակ՝ որ պայմանագիրը վավերացվի և հրապարակվի: Արտաքին քաղաքականությանը նվիրված հատուկ բաժիններ գոյություն ունեն Ալբանիայի, Լիտվայի, Մակեդոնիայի, Խորվաթիայի և Էստոնիայի սահմանադրություններում:

Միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի առումով այս կամ այն լիազորությամբ օժտված են բոլոր բարձրագույն պետական մարմինները՝ պետության ղեկավարից մինչև դատարաններ: Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասում խորհրդարանը վավերացնում է առավել կարևոր միջազգային պայմանագրերը, որոնց կատեգորիաները սահմանված են հենց սահմանադրության մեջ: Դրանք, օրինակ, այն պայմանագրերն են, որոնք նախատեսում են ընդունել օրենքը կամ փոփոխել այն, ռազմական կամ քաղաքական բնույթի պայմանագրերը, պետության ֆինանսական պարտավորությունները նախատեսող պայմանագրերը և այլն: Որոշ սահմանադրություններ միջազգային պայմանագրերը վավերացնելու լիազորությունը վերապահում են պետության ղեկավարին, ինչին խորհրդարանը տալիս է իր համաձայնությունը (օրինակ՝ Բոսնիա և Հերցեգովինայում, Լեհաստանում, Չեխիայում): Սահմանադրություններում առանձնակի տեղ է նվիրվում միջազգային որևէ կազմակերպության անդամակցելու դեպքում ազգային իրավասության իրականացման իրավունքի մի մասը նրան փոխանցելու հարցին. նման միջազգային պայմանագիրը վավերացնելու համար պահանջվում է անցկացնել հանրաքվե (այդպես եղավ արևելաեվրոպական բոլոր երկրներում ԵՄ-ին անդամակցելիս):

Խորհրդարանի լիազորությունների չորրորդ խումբը հանրաքվե նշանակելու լիազորությունն է: Արևելյան Եվրոպայի բոլոր երկրների սահմանադրությունները նախատեսում են ուղիղ ժողովրդավարության այդ կարևոր ձևը: Հաճախ հանրաքվեով կարելի փոփոխություններ կատարել սահմանադրության մեջ: Սլովակիայի Հիմնական օրենքում հանրաքվեին նվիրված է ութ հոդված (հոդվածներ 93-100): Վերլուծության առարկա երկրների մեծ մասում համազգային հանրաքվեն նշանակվում է խորհրդարանի և Նախագահի կողմից համատեղ: Այսպես, Բուլղարիայում խորհրդարանը որոշում է կայացնում ազգային հանրաքվե անցկացնելու մասին (հոդված 84), իսկ Նախագահը նշա-

նակում է ժամկետը (հոդված 98): Լեհաստանում համապետական հանրաքվե նշանակելու իրավունք ունի Սեյմը, կամ Նախագահը՝ Սենատի համաձայնությամբ (հոդված 125): Հինգ երկրներում (Հունգարիա, Լիտվա, Մակեդոնիա, Սլովենիա, Էստոնիա) դա խորհրդարանի առանձնաշնորհն է: Այս համապատկերում բացառություն է Չեխիան, որի Սահմանադրության մեջ հանրաքվեն տևական ժամանակ առհասարակ ամրագրված չէր: 2001թ. այնտեղ ներառվեցին դրույթներ միջազգային որևէ կազմակերպության անդամակցելու հարցով հանրաքվե անցկացնելու հնարավորության մասին: 2002թ. լրացումներով երկրի Նախագահին հնարավորություն տրվեց «հայտարարելու հանրաքվե Չեխիայի Հանրապետության ԵՄ-ին անդամակցության և դրա արդյունքների վերաբերյալ»: Ներկայումս հանրաքվեի մասին ոչինչ չի ասվում միայն Բոսնիա և Հերցեգովինայի Սահմանադրությունում: Թերևս էթնիկ հակամարտության պայմաններում նշյալ ինստիտուտը կարող էր միայն սրել իրադրությունը:

Խորհրդարանի լիազորությունների հինգերորդ խումբը տարբեր մարմինների ձևավորմանն ու պաշտոնատար անձանց նշանակմանը մասնակցելու լիազորությունն է: Հարկ է հիշեցնել, որ որոշ երկրներում (Ալբանիա, Էստոնիա, Լիտվա, Հունգարիա և Չեխիա) խորհրդարանն է ընտրում երկրի ղեկավարին, մյուս դեպքերում այն նշանակում է Նախագահի ընտրություններ: Ի տարբերություն Գերմանիայի կամ Իտալիայի՝ երկրամասերի ներկայացուցիչները չեն մասնակցում խորհրդարանի կողմից անցկացվող նախագահական ընտրություններին, բացառությամբ Էստոնիայի, որտեղ եթե խորհրդարանը (Պետական ժողովը) չի կարողանում ընտրել Նախագահ ընտրությունների երրորդ փուլում, ապա նրան ընտրում է ընտրիչների կոլեգիան, որը ձևավորվում է Պետական ժողովի անդամներից և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներից (հոդված 79):

Այժմ անդրադառնանք խորհրդարանի մասնակցությանը կառավարության ձևավորմանը: Արդեն նշել ենք, որ Արևելյան Եվրոպայի երկրներում կառավարությունը ցանկացած դեպքում պետք է վայելի խորհրդարանական մեծամասնության աջակցությունը: Համապատասխանաբար սահմանադրությունները սահմանում են, որ կառավարությունը ձևավորվում է յուրաքանչյուր խորհրդարանական ընտրություններից հետո՝ համաձայն դրա արդյունքների: Չնայած խորհրդարանի առաջատար դերին այդ գործընթացում, խորհրդարանի և Նախագահի կոնկրետ լիազորությունները կարող են տարբերվել: Ելնելով դրանից՝ առանձնացնենք արևելաեվրոպական երկրներում կառավարության ձևավորման երեք հիմնական մոդելներ:

Առաջին մոդելը պայմանականորեն կարելի է անվանել «Նախագահն առաջարկում է - խորհրդարանը նշանակում է»: Այն բնորոշ է Բուլղարիային, Մակեդոնիային և Սլովենիային: Այսպես, համաձայն Սլովենիայի Սահմանադրության 111 հոդվածի, հանրապետության Նախագահը խորհրդարանական խմբակցությունների ղեկավարների հետ խորհրդակցելուց հետո առաջարկում է խորհրդարանին կառավարության ղեկավարի թեկնածությունը: Խորհրդարանն ընտրում է կառավարության ղեկավարին և նրա առաջարկու-

թյամբ նշանակում կառավարության մյուս անդամներին: Կառավարությունը երդվում է խորհրդարանի առջև: Ռուս հետազոտող Ա. Կ. Կոլիբաբի կարծիքով, Արևելյան Եվրոպայի երկրներում պետության ամենաբարձր ներկայացուցչական մարմնի կողմից կառավարության անդամներին նշանակելը պայմանավորված է այն բանով, որ տակավին մինչև վերջերս այնտեղ գոյություն չունեին Նախագահի ինստիտուտը, այն լիազորությունները, որոնք ուներ պետության ղեկավարը Արևմտյան Եվրոպայի երկրներում, վերոնշյալ երկրներում բաշխված էին պետական խորհրդի և բարձրագույն ներկայացուցչական մարմնի միջև: Արդյունքում, երբ Արևելյան Եվրոպայի երկրներից շատերում սահմանվեց Նախագահի պաշտոնը, սկսեց ձևավորվել պետական իշխանության մի կառուցվածք, որը շատ կոդներով չէր համընկնում ավանդական խորհրդարանական ժողովրդավարությամբ երկրների պետական իշխանության կառուցվածքին:

Մակայն Արևելյան Եվրոպայի երկրների գերակշիռ մասում կառավարությունը նշանակելու լիազորությունները այնուամենայնիվ գտնվում են պետության ղեկավարի ձեռքում, իսկ ներկայացուցչական մարմինը վստահություն է հայտնում (կամ չի հայտնում) կառավարության այդ կազմին: Ուստի դիտարկենք Արևելյան Եվրոպայի երկրներում կառավարություն ձևավորելու երկրորդ մոդելը: Այն կարելի պայմանականորեն ձևակերպել հետևյալ կերպ՝ «Նախագահն առաջարկում է – խորհրդարանը վստահություն է հայտնում – Նախագահը նշանակում է»: Որպես օրինակ կարելի է նշել Էստոնիան, Խորվաթիան և Ռումինիան: Այսպես, համաձայն Ռումինիայի Սահմանադրության 102-103 հոդվածների՝ Նախագահը վարչապետի պաշտոնում թեկնածություն է առաջադրում խորհրդարանական կուսակցությունների հետ խորհրդակցելուց հետո: Թեկնածուն տասնօրյա ժամկետում խորհրդարան է ներկայացնում ծրագիր և կառավարության ամբողջ կազմը՝ վստահության արժանանալու համար: Խորհրդարանից ստացած վստահության քվեի հիման վրա Նախագահը նշանակում է կառավարությունը: Կառավարությունը երդում է տալիս Նախագահին:

Երրորդ մոդելը կարելի է ձևակերպել այսպես՝ «Նախագահը նշանակում է – խորհրդարանը վստահություն է հայտնում»: Այն կիրառվում է Բոսնիա և Հերցեգովինայում, Սլովակիայում, Չեխիայում և Լեհաստանում, արևմտյան երկրներից՝ Իտալիայում: Այսպես, համաձայն Սլովակիայի Սահմանադրության 110-113 հոդվածների, երկրի Նախագահը նշանակում է կառավարության ղեկավարին և վերջինիս առաջարկությամբ՝ կառավարության մյուս անդամներին: Նշանակումից հետո 30-օրյա ժամկետում կառավարությունը պետք է խորհրդարան ներկայացնի իր գործունեության ծրագիրը՝ վստահության արժանանալու համար: Կառավարությունը երդում է տալիս Նախագահին: Նման կարգը հաճախ արժանանում է քննադատության, քանի որ այդ երկրների սահմանադրությունները ձևական առումով չեն պարտադրում Նախագահին հաշվի առնել խորհրդարանի կուսակցական կազմը, իսկ նրա նշանակած անձանց որոշակի ժամկետով հասանելի են դառնում կարևորագույն, այդ թվում և գաղտնի պետական փաստաթղթերը:

Հետաքրքիր է համեմատել խորհրդարանի լիազորությունները դատական մարմինները ձևավորելիս: Ինչպես հայտնի է սոցիալիստական ժամանակաշրջանում դատավորներին նշանակում էր (և փոխում) բարձրագույն ներկայացուցչական մարմինը: Ներկայումս Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասում դատավորներ նշանակելու իրավունքը պատկանում է պետության ղեկավարին: Խորհրդարանը դատավորներ է ընտրում միայն Լատվիայում, Մակեդոնիայում և Սլովենիայում: Սակայն բարձր դատական ատյանների դատավորներ, այդ թվում և Սահմանադրական դատարանի անդամներ նշանակելու գործընթացին սովորաբար մասնակցում են և՛ խորհրդարանը, և՛ Նախագահը: Բացի այդ, Ֆրանսիայի, Իսպանիայի և Իտալիայի օրինակով արևելաեվրոպական երկրների սահմանադրությունները նախատեսում են ստեղծել դատական հանրակցության բարձրագույն մարմիններ, որոնք հաճախ անվանվում են Դատական խորհուրդներ: Բուլղարիայում և Խորվաթիայում նշյալ մարմինները նշանակում են դատավորներին: Ուշագրավ է, որ խորհրդարանը պարտադիր մասնակցում է այդ մարմինների ձևավորմանը՝ Նախագահի և դատավորների հետ մեկտեղ:

Ջարգացած երկրների փորձն ազդել է նաև այնպիսի ինստիտուտի ձևավորման վրա, ինչպիսին մարդու իրավունքների հանձնակատարն է (օմբուդսմեն), որին ընտրում է խորհրդարանը: Հունգարիայում, բացի քաղաքացիների իրավունքների հանձնակատարի պաշտոնից, հիմնվել է նաև ազգային և էթնիկ փոքրամասնությունների իրավունքների հանձնակատարի պաշտոն (§ 32/B), մի շարք երկրներում գործում են երեխայի իրավունքների հանձնակատարներ: Վերջապես, ժամանակաշրջանի բնորոշ գծերից է այն, որ արևելաեվրոպական որոշ սահմանադրություններ կանոնակարգում են այնպիսի մարմինների կարգավիճակը, ինչպիսիք են Ռադիոյի և հեռուստատեսության համալեկական խորհուրդը կամ Ռումինիայի տեղեկատվական ծառայությունը: Միանգամայն տրամաբանական է, որ այդ մարմինները ձևավորվում են Նախագահի և խորհրդարանի կողմից համատեղ (համապատասխանաբար՝ հոդված 214 և հոդված 62):

Խորհրդարանի լիազորությունների վեցերորդ խումբը քաղաքական և իրավաբանական վերահսկողությունն է պետական մարմինների և պաշտոնատար անձանց նկատմամբ, առաջին հերթին կառավարության և պետության ղեկավարի: Արևելյան Եվրոպայի երկրների սահմանադրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցում ամրագրվել է խորհրդարանական ռեժիմի կարևորագույն սկզբունքներից մեկը՝ խորհրդարանի առջև կառավարության պատասխանատվության սկզբունքը: Միակ բացառությունը, երբ սահմանադրությունը նախատեսում է կառավարության պատասխանատվությունը ոչ միայն խորհրդարանի, այլև Նախագահի առջև, Լիտվայի Սահմանադրությունն է: Այնտեղ ամրագրված է, որ նախարարները պատասխանատվություն են կրում Սեյմի և Նախագահի առջև, և որ կառավարությունը վայր է դնում լիազորությունները Սեյմի կամ Նախագահի ընտրություններից հետո (հոդվածներ 92 և 96):

Դրա հետ մեկտեղ՝ արևելաեվրոպական սահմանադրությունները ներառել են ռացիոնալացված պառլամենտարիզմի գաղափարները, որոնց իմաստը կառավարության կայունությունը առավելագույն չափով ապահովելն է: Այսպես, Գերմանիայի Սահմանադրության օրինակով որոշ երկրներ ներառեցին կառուցողական վստահության քվեն, որը թույլատրում է հեռացնել կառավարության գործող ղեկավարին (նրա հետ նաև կառավարության ամբողջ կազմին) միայն խորհրդարանի կողմից կառավարության նոր ղեկավար ընտրվելու դեպքում (Ալբանիա, Հունգարիա, Լեհաստան, Սլովենիա): Մյուս երկրները, թեպետ և կիրառում են ավանդական վստահության քվեն, սակայն զգալիորեն բարդացրել են խորհրդարանի կողմից անվստահություն հայտնելը: Օրինակ՝ Բուլղարիայի Սահմանադրությունը սահմանել է, որ կառավարությանը անվստահություն հայտնելու վերաբերյալ առաջարկություն կարող է ներկայացնել միայն խորհրդարանի պատգամավորների մեկ հինգերորդ մասը. այն ընդունելու համար անհրաժեշտ են պատգամավորների կեսից ավելիի ձայները, իսկ եթե ձայների նման քանակություն չի ապահովվում, անվստահության վերաբերյալ նոր առաջարկություն նույն հիմնավորմամբ չի կարող արվել հաջորդող վեց ամիսների ընթացքում (հոդված 89):

Բացի խորհրդարանի առջև կառավարության համերաշխ քաղաքական պատասխանատվությունից, քննարկվող սահմանադրությունների մեծ մասում նախատեսված է կառավարության անդամների անձնական պատասխանատվություն: Այս առումով հետաքրքիր է Լիտվայի Սահմանադրության այն դրույթը, ըստ որի, եթե փոխարինվում է նախարարների կեսից ավելին, կառավարությունը վերստին պետք է լիազորություններ ստանա Սեյմից (հոդված 10): Համանման դրույթ գոյություն ունի նաև Մակեդոնիայի Սահմանադրությունում (հոդված 94):

Քննարկվող երկրների կեսում ռացիոնալացված պառլամենտարիզմի ոգով կիրառվում է կառավարության՝ խորհրդարանին ուղղված ոչ թե պարզ, այլ կապակցված հարցը: Օրինակ, համաձայն Ռումինիայի Սահմանադրության 117 հոդվածի, կառավարության ղեկավարը կարող է կառավարության վստահության հարցը կապել խորհրդարանի կողմից օրենքի կամ այլ որոշման ընդունման հետ, եթե որոշումը ընդունված չէ, համարվում է, որ կառավարությանը անվստահություն է հայտնվել: Նման գործողությունների օգնությամբ կառավարությունը ճնշում է բանեցնում խորհրդարանի վրա՝ նպատակ ունենալով հասնել իրեն ձեռնտու ակտի ընդունմանը: Ավելին, երկու երկրում՝ Սլովակիայում և Չեխիայում, Նախագահին իրավունք ունի արձակելու խորհրդարանը, եթե այն երեք ամսվա ընթացքում որոշում չի կայացրել կառավարության օրինագծի վերաբերյալ, ինչի հետ կառավարությունը կապում է իրեն վստահություն հայտնելը (համապատասխանաբար՝ հոդվածներ 102 և 35):

Ինչ վերաբերում է խորհրդարանի առջև բարձր պաշտոնատար անձանց իրավաբանական պատասխանատվությանը, ապա արևելաեվրոպական երկրներում խորհրդարանն իրավունք ունի առաջադրելու մեղադրանք երկրի ղեկավարին՝ առավել հաճախ սահմանադրությունը, օրենքները խախտելու կամ պետական դավաճանության համար: Ուշագրավ է, որ այդ երկրների մեծ

մասն ընտրել է Նախագահի իրավաբանական պատասխանատվության գերմանական մոդելը, որի դեպքում Նախագահին պաշտոնանկ անելու որոշում կայացնում է Սահմանադրական դատարանը: Բացառություն են մերձբալթյան հանրապետությունները, որտեղ նման որոշում կայացնելու իրավասություն ունի խորհրդարանը, ինչպես նաև Լեհաստանը, որտեղ նման որոշում ընդունում է Պետական տրիբունալը, և Ռումինիան, որտեղ նման որոշում կայացնելու իրավունք ունի Արդարադատության գերագույն դատարանը, որը գլխավորում է ընդանուր իրավասության դատարանների համակարգը: Բացի այդ, Ռումինիայում այդ հարցով հնարավոր է անցկացնել հանրաքվե (հոդված 95):

Հետաքրքիր է, որ Սլովակիայում ևս Նախագահը կարող է պաշտոնանկ արվել ժողովրդական քվեարկությամբ՝ խորհրդարանի նախաձեռնությամբ (հոդված 106): Սակայն այստեղ Ավստրիայի օրինակով տեղ ունի Նախագահի յուրատեսակ քաղաքական պատասխանատվությունը, քանի որ իրավաբանական հիմքեր նման պաշտոնանկության համար սահմանված չեն, և եթե Նախագահը հետ չի կանչվում հանրաքվեի արդյունքներով, ապա նա ցրում է խորհրդարանը, և սկսվում է նախագահի լիազորությունների նոր ժամկետը: Լատվիայում և Լիտվայում ևս խորհրդարանը կարող է պաշտոնանկ անել Նախագահին առանց իրավաբանական հիմքերի (համապատասխանաբար՝ հոդվածներ 51 և 87): Կառավարության անդամները իրավաբանական պատասխանատվություն են կրում խորհրդարանի առջև մի շարք երկրներում (օրինակ՝ Լեհաստանում, Ռումինիայում, Սլովենիայում), որոնցում ընթացակարգը նման է նախագահների պատասխանատվությանը: Վերջապես, որոշ երկրներում խորհրդարանի իրավասության մեջ է մտնում բարձրագույն դատարանների դատավորների նկատմամբ քրեական հետապնդում սկսելու վերաբերյալ համաձայնություն տալը (օրինակ՝ Ալբանիայում, Չեխիայում, Էստոնիայում):

МАНУК АРУТЮНЯН

доктор философских наук

ՎԱՇԱՏՄԱՆԴՅԱԿՅԱՆ

Институт философии, социологии и права Национальная академия наук РА, соискатель

**ОБЩИЕ ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ
НАЦИОНАЛЬНЫХ ПАРЛАМЕНТОВ В СТРАНАХ ВОСТОЧНОЙ ЕВРОПЫ**

В статье рассмотрены некоторые особенности парламентаризма в странах Восточной Европы. Основная направленность исследования – раскрытие доминирующих тенденций развития парламентаризма в странах Восточной Европы.

MANUK HARUTYUNYAN

International Scientific-Educational Center of NAS RA

Doctor of Philosophy

ՎԱՇԱՏՄԱՆԴՅԱԿՅԱՆ

Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA, Applicant

**GENERAL FEATURES OF FORMATION AND DEVELOPMENT
NATIONAL PARLIAMENTS IN THE COUNTRIES OF EASTERN EUROPE**

The article discusses some features of parliamentarism in Eastern Europe. The main focus of the study is to reveal the dominant trends in the development of parliamentarism in Eastern Europe.

ԱՆԺԵԼԱ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության Կադրերի և Ռազմական Կրթության վարչության առաջին կարգի կրտսեր մասնագետ, Երևանի Պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի հայցորդ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև գոյություն ունեցող հարաբերությունները ունեն ռազմավարական նշանակություն, քանի որ նպաստում են Հայաստանի և ամբողջ Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության մի շարք առաջնային խնդիրների լուծմանը: Ռազմական տեսանկյունից հայ-վրացական համագործակցության աշխուժացումը կնպաստի տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատման և անվտանգության ամրապնդմանը:

Բանալի բառեր՝ անվտանգության ապահովման համակարգ, ռազմական համագործակցություն, ռազմավարական փոխադրումներ, շրջափակում, գործարժույթություններ:

Վրաստանը տարածաշրջանում Հայաստանի հետ բարձր մակարդակի հարաբերություններ ունեցող պետություն է, և համագործակցությունը տարբեր ոլորտներում բխում է երկուստեք ռազմավարական շահերից¹: Հայ-վրացական փոխհարաբերությունների զարգացման գործընթացում շարունակում են իրենց ազդեցությունն ունենալ տարածաշրջանային այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ Ջավախքը և մեծաքանակ հայ համայնքի առկայությունը Վրաստանում, տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման շուրջ կողմերի ունեցած տարաձայնությունները, տարածաշրջանային գործընթացներում ներգրավվելու և միջազգային զանազան կազմակերպություններին անդամագրվելու՝ կողմերին ընձեռվող հնարավորությունների տարբերությունները, Վրաստանի հայաբնակ շրջաններում Հայ Առաքելական եկեղեցու և Վրաց Ուղղափառ եկեղեցու հակասությունները² և այլն: Հայ-վրացական հարաբերությունները ռազմավարական կարևոր նշանակություն ունեն, քանի որ նպաստում են Հայաստանի Հանրապետության և Հարավ-կովկասյան տարածաշրջանի անվտանգության մի շարք կարևոր խնդիրների լուծմանը: Հայ-

¹ ՀՀ ԱԳՆ պատմադիվնագիտական արխիվ, գործ 135, էջ 48

² Ս. Մինասյան «Հայ-վրացական հարաբերություններ. Արդի վիճակը և դինամիկան» 14.02.2012 Նորավանք հիմնադրամ www.noravank.a/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6305 նաև Տ. Քոչարյան «ՀՀ ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում» Երևան, 2012, էջ 333

վրացական հարաբերությունները կարևոր են նաև փոխշահավետության տեսանկյունից. երկու պետությունների աշխարհագրական դիրքը թույլատրում է տնտեսական և տրանսպորտային համագործակցությամբ ապահովել Հայաստանի կապը Ռուսաստանի և Եվրոպայի այլ պետությունների հետ, իսկ Վրաստանի կապը՝ Իրանի և Մերձավոր Արևելքի հետ¹: Թուրքիայի և Ադրբեջանի կողմից իրականացվող Հայաստանի շրջափակման պայմաններում Վրաստանը այն երկիրն է, որի միջոցով հիմնականում ապահովվում է Հայաստանի տնտեսական և տրանսպորտային ելքը դեպի արտաքին աշխարհ: Իր աշխարհաքաղաքական դիրքի և աշխարհաքաղաքական զարգացումների շնորհիվ Վրաստանը հանդես է գալիս, որպես տնտեսական և առևտրային միջնորդ Հայաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի միջև², ինչը Վրաստանին որոշակի արտոնյալ կարգավիճակ է տրամադրում, որը չի համապատասխանում Հայաստանի վարած արտաքին ռազմական քաղաքականությանը, քանի որ հաճախ Վրաստանը Թուրքիայի և Ադրբեջանի թելադրանքով վարում է Հայաստանի շահերին չհամապատասխանող քաղաքականություն:

Պաշտոնական Երևանը և Թբիլիսին շատ արագ անդամակցեցին միջազգային և տարածաշրջանային մի շարք կազմակերպությունների և անմիջականորեն ներառվեցին տարածաշրջանում իրականացվող բազմապիսի ծրագրերում³: Երկու երկրների միջև հիմնարար փաստաթուղթը 2001 թվականի հոկտեմբերին ստորագրված «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին» պայմանագիրն է⁴: Միջազգային կազմակերպությունների ծրագրերում հայ-վրացական համագործակցությունը հիմնականում վերաբերում է տնտեսական և սոցիալական բնագավառներին⁵:

Քաղաքական ոլորտում հայ-վրացական հարաբերությունների վրա ազդող խիստ էական հարց է վրացական տարածքով դեպի Հայաստան տանող տրանսպորտային հաղորդակցությունների կայուն և անվտանգ գործառնության խնդիրը: Դա միանգամայն բնական է՝ հաշվի առնելով Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի տնտեսական շրջափակումը: Ներկա դրությամբ միակ գործող երկաթուղին, որով Հայաստանը կապ է ապրանքաշրջանառություն է ապահովում այլ պետությունների հետ,⁶ անցնում է Վրաստանի տարածքով:

¹ **Л. Овсепян, В. Иванов.** Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан,Тырция) и Центральной Азии: Динамика и основные тенденции развития/ Институт политических исследований ГНКО.- Ереван, 2010, с. 54

² **В. Иванов.** Основные контуры турецко-грузинского военно-политического сотрудничества, динамика и перспективы развития.- Том 6 /Институт политических исследований,- ГНКО, Ереван, 2008

³ **Տ. Քոչարյան** «Ազգային անվտանգության հիմունքների վերաբերյալ դասընթաց», Երևան 2013, էջ 175

⁴ ՀՀ ԱԳՆ պաշտոնական էջ <http://mfa.am/hy/country-by-country/ge/>

⁵ "Conflict Resolution in the South Caucasus: EU`s Role" Europe Report N 173, 20 March 2006

⁶ **Ս. Մինասյան** «Հայ-Վրացական հարաբերություններ. դինամիկան և արդի վիճակը» Նորավանք հիմնադրամ 14.02.2012 www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6305

Հայաստանի արտաքին գործերի նախարարության տարեկան հաշվետվություններից պարզ է դառնում, որ հայ-վրացական փոխհարաբերությունների վրա որոշակի բացասական ազդեցություն ունի Վրաստանի համագործակցությունը Ադրբեջանի և Թուրքիայի հետ¹, վերջիններս օգտվելով Վրաստանի և Հայաստանի ժողովրդագրական խնդրից, Հայաստանի նկատմամբ օգտագործում են շրջափակման և ագրեսիվ հարձակողական քաղաքականության, իսկ Վրաստանի հանդեպ՝ տնտեսապես գերելու և երկրի որոշ շրջաններ թրքացնելու քաղաքականություն: Տվյալ քաղաքականության գլխավոր կետերից մեկն էլ հանդիսանում է ամեն կերպ սեպ խրելը հայ-վրացական բազմադարյան հարաբերությունների մեջ:

Վրաց-ադրբեջանական համագործակցությունը ունի երկու կարևոր բաղադրիչ: Առաջինը՝ վրացական և ադրբեջանական զինված ուժերի երկկողմ և բազմակողմ ուսումնավարժանքները, զորավարժությունները, խաղաղարար, տարանցիկ և այլ բնույթի համատեղ միջոցառումները, գերազանցապես՝ ՆԱՏՕ-ի ծրագրերի շրջանակներում: Երկրորդը՝ երկու երկրների անմիջական ռազմատեխնիկական համագործակցությունը և աջակցությունը երրորդ երկրներից սպառազինության և ռազմական տեխնիկայի մատակարարումների և տարանցիկ փոխադրումների գործում: Հարկ է նշել, որ ոչ երկկողմ, ոչ եռակողմ և ոչ էլ բազմակողմ ձևաչափերում Վրաստանի և Ադրբեջանի զինված ուժերի համար չկա օպերատիվ մակարդակում համատեղ կիրառման և փոխգործունեության առումով որևէ պարտավորություն²: Վրաստանի սերտ համագործակցությունը Ադրբեջանի հետ խախտում է «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին» 2001 թվականի պայմանագրի 5-րդ հոդվածը, ըստ որի «բարձր պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է չձեռնարկել որևէ գործողություն և չաջակցել որևէ գործողության, որը ուղղված կլինի մյուս բարձր պայմանավորվող կողմի դեմ, և թույլ չի տա իր տարածքում այնպիսի խմբերի և կազմակերպությունների ձևավորում, որոնք կարող են վտանգ ստեղծել մյուս կողմի ինքնիշխանության, տարածքային ամբողջականության համար կամ էլ տնտեսական վնաս հասցնել մյուս կողմին»³: Չնայած սերտ համագործակցությանը, Ադրբեջան-Վրաստան փոխհարաբերություններում առկա է հակադրում՝ կապված Քվեմո Քարթվիում՝ Բորչալուում, Վրաստանի իշխանության վարած քաղաքականության հետ⁴:

Հայ-վրացական ռազմական համագործակցության զարգացմանը որոշակի խոչընդոտող հանգամանք է երկու երկրների արտաքին անվտանգությունն ապահովող ռազմական կողմնորոշումների հակամարտությունը: Հայաստա-

¹ ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական արխիվ գործ 136, էջ 35

² Նույն տեղում, էջ 12-18

³ «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին պայմանագիր» 2001, Հոդված 5, ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական էջ www.parliament.am

⁴ X. **Ибрагимли**. Азербайджанци Грузии.- Москва, 2006, с. 48

նի համար կարևոր ռազմավարական գործընկեր է Ռուսաստանը, որի հետ Վրաստանի հարաբերություններում առկա է ռազմավարական հակադրում¹: Վրաստանի կողմից Ռուսաստանը ընկալվում է որպես սահմանակից գաղութարար մեծ տերություն, որը սպառնում է Վրաստանի տարածքային ամբողջականությանը և անկախությանը²:

Վրաստանը շարունակում է ակտիվ համագործակցությունը ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի հետ՝ 2008 թվականի օգոստոսյան պատերազմի արդյունքում կորցրած ռազմական ներուժը վերականգնելու նպատակով³: Այդ համագործակցության շրջանակներում Վրաստանը ՆԱՏՕ-ից լուրջ աջակցություն է ստանում ինչպես իր ռազմատեխնիկական, այնպես էլ զինված ուժերը վերականգնելու համար⁴: ՆԱՏՕ-ի հետ համագործակցության բարձր մակարդակի օրինակ է Աֆղանստանում 2011 թվականի ընթացքում վրացական զինված ուժերի գորակազմի ընդլայնումը՝ մինչև 940 զինծառայողի: Հայաստանի և Վրաստանի միջև ազգային և տարածաշրջանային անվտանգության վերաբերյալ դիրքորոշումների տարբերությունը ի հայտ է գալիս նաև ՀԱՊԿ-ի ստեղծման և գործունեության հետ կապված⁵:

2011 թվականի հունվարին երկու երկրների անկախացումից հետո առաջին անգամ Հայաստանի և Վրաստանի պաշտպանության նախարարությունների միջև ստորագրվեց ռազմական համագործակցության տարեկան պլան, համաձայն որի՝ կողմերը իրականացրեցին փորձի փոխանակում պաշտպանական բարեփոխումների և պաշտպանական վերանայման, պաշտպանական ոլորտում քաղաքացիական ծառայության ներդրման, խաղաղապահության, ինչպես նաև ռազմական կրթության բնագավառներում⁶: Վրացական մամուլում միջև 2007 թվականի կեսերը առկա էին հակահայկական հրապարակումներ, սակայն 2007 թվականի իրադարձությունները սկսեցին որոշակի փոփոխությունների հույս ներշնչել: Վրաստանում սոցիալական ներքին ընդվզումների պայմաններում վրացահայերի իշխանամետ դիրքորոշումը Վրաստանի համար դարձավ ընդունելի և դադարեց «անջատողական վտանգի»

¹ «Конфликты в Абхазии и Южной Осетии», Документы 1989-2006 гг. /Русская панорама.- Москва, 2008 с. 348-351, նաև **Ս.Մինասյան** «Հայ-վրացական հարաբերություններ. Արդի վիճակը և դինամիկան» 14.02.2012 Նորավանք հիմնադրամ www.noravank.a/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6305, նաև **Ի. Չափիձև** «Վրաստանի հսկիչ փաթեթը անցնում է Ռուսաստանի ձեռքը» Ռեզոնանս 2006, նաև **Պ. Չոբանյան** «Վրաստանի նկատմամբ ՀՀ անվտանգային քաղաքականության կողմնորոշիչները» ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ԱՌՀԻ «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ», Հատոր 1, Երևան, 2014, էջ 497 նաև **Թ. Իդոր** «The Georgian Crisis and Russian-Turkey relations» The Jamestown Foundaton Washington DC 2008 p 56-58

² «IRI, USAID Baltic Surveys/The Callup Organization, IPM» Georgian National Voters Study, September 2007, p 48

³ **Տ. Քոչարյան** «ՀՀ ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում», Երևան, 2012, էջ 332

⁴ **Ս. Մինասյան** «Проблема региональной безопасности на Южном Кавказе. Военный баланс и асимметрия политических стратегий», //Ежегодник Института Кавказа.- Ереван, 2009- с. 120

⁵ **Ս. Մինասյան** «Армяно-грузинские отношения после пятидневной войны» Ноев ковчег. Вып 9.- Ереван, 2009.- с. 28

⁶ ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական էջ www.mil.am/12980064791/page128

զգացում առաջացնել: Հայ-վրացական հարաբերությունների հետագա զարգացման համար անհրաժեշտ է նկատի ունենալ Վրաստանի ներքին և արտաքին անվտանգության գերակայությունը և դրանց վրա ազդելու միջոցները փնտրել ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական ոլորտներում: Պետք է հաշվի առնել, որ Վրաստանը մի կողմից փորձում է ազատվել Հայաստանի և հայկական ազդեցության ցանկացած լծակներից, ինչպես Աբխազիայում և Ջավախքում, այնպես էլ Վրաստանի այլ մասերում, իսկ մյուս կողմից՝ փորձում է ստանալ Հայաստանի աջակցությունը՝ Վրաստանում հայ բնակչության հնարավոր ընդվզումները զսպելու համար¹:

Վերջին շրջանում ակտիվացում է նկատվում նաև հայ-վրացական ռազմական հարաբերություններում, դրա վառ ապացույց է 2016 թվականին Հայաստանի պաշտպանության նախարարի այցը Վրաստան, որի ընթացքում քննարկվել են հայ-վրացական ռազմական համագործակցությունը և ապագա ծրագրեր: Կողմերը անդրադարձել են նաև տարածաշրջանային անվտանգության խնդիրներին: Բանակցությունները ավարտվել են Հայաստանի և Վրաստանի պաշտպանության նախարարությունների միջև երկկողմ համագործակցության վերաբերյալ 2017 թվականի ծրագրի ստորագրման արարողությամբ: Նույն օրը Վիգեն Սարգսյանը հանդիպում է ունեցել Վրաստանի վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլու հետ: Հանդիպման ընթացքում ընդգծվել է երկու պետությունների բարեկամական հարաբերությունների բարձր մակարդակը, քննարկվել են պաշտպանության ոլորտում համագործակցության ամրապնդման և տարածաշրջանային անվտանգության հարցեր: Բարձր գնահատելով երկու պետությունների համագործակցությունը տարբեր բնագավառներում և ընդգծելով երկկողմ հարաբերությունների հետագա զարգացման անհրաժեշտությունը՝ երկուստեք շեշտվել է նաև տարածաշրջանում խաղաղության և ամրապնդման ապահովման կարևորությունը՝ որպես բարեկամ պետությունների կայուն զարգացման անհրաժեշտ նախապայման:

Տարածաշրջանային անվտանգության համատեքստում, Հայաստանի համար խիստ կարևոր է կառուցողական հարաբերություններ պահպանել Վրաստանի հետ: Վրաստանը գտնվելով շահեկան դիրքում հաճախ վարում է Հայաստանի շահերի «անտեսման» քաղաքականությունը՝ համագործակցելով Ադրբեյջանի և Թուրքիայի հետ: Վրաստանը ձգտում է թուլացնել հայկական գործոնը՝ հայ համայնքը, իր երկրում, ինչի հետևանքով շատ հաճախ հայտնվում է թուրք-ադրբեյջանական ազդեցության տակ և ինչպես հարկն է չի կարողանում հակազդել վերջիններիս ճնշումներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, գործ 135, էջ 48
2. ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական արխիվ գործ 136, էջ 35
3. ՀՀ ԱԳՆ պաշտոնական էջ ww.mfa.am

¹ Պ. Չոբանյան «Վրաստանի նկատմամբ ՀՀ ազգային քաղաքականության կողմնորոշիչներ» ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ԱՌՀԻ «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ», Հատոր 1, Երևան, 2014, էջ 508

4. ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական էջ www.mil.am/12980064791/page128
5. **Ա. Ավագյան, Բ. Պողոսյան, Է. Աթանեսյան** «Ադրբեջանի արտաքին ռազմավարության փոփոխման գնահատումը» ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ԱՌՀԻ «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ», Հատոր 4, Երևան, 2014
6. **Է. Այվազյան** «Այս բարդ տարածաշրջանում մենք միմիջանց կարիքն ունենք» Սամցխե-Ջավախքի Մեդիա Վերլուծական Կենտրոն 13.01.2017 www.javakhkmedia.com/?p=8264
7. «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին պայմանագիր» 2001, Հոդված 5, ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական էջ www.parliament.am
8. **Ի. Չափիձև** «Վրաստանի հսկիչ փաթեթը անցնում է Ռուսաստանի ձեռքը» Ռեզոնանս 2006
9. **Պ. Չոբանյան** «Վրաստանի նկատմամբ ՀՀ անվտանգային քաղաքականության կողմնորոշիչները» ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ԱՌՀԻ «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ» Հատոր 1, Երևան, 2014
10. **Ս.Մինասյան.** «Վրաստանի էթնիկական փոքրամասնություններ. համարկման ներուժը հայ բնակչության օրինակով» Երևան 2013
11. **Ս. Մինասյան** «Հայ-Վրացական հարաբերություններ. դինամիկան և արդի վիճակը» Նորավանք հիմնադրամ 14.02.2012 www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6305
12. **Տ. Քոչարյան** «ՀՀ ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում» Երևան, 2012
13. **Տ. Քոչարյան** «Ազգային անվտանգության հիմունքների վերաբերյալ դասընթաց», Երևան, 2013
14. **В. Иванов.** Основные контуры турецко-грузинского военно-политического сотрудничества, динамика и перспективы развития.- Том 6 /Институт политических исследований.- ГНКО, Ереван, 2008
15. **Л. Овсепян, В. Иванов.** Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан,Турция) и Центральной Азии:Динамика и основные тенденции развития //Институт политических исследований ГНКО. – Ереван, 2010
16. “Конфликты в Абхазии и Южной Осетии: Документы 1989-2006 гг/ Русская панорама.- Москва, 2008 с. 348-351
17. **С. Минасян.** Армяно-грузинские отношения после пятидневной войны Ноев ковчег.-Вып 9.- Ереван, 2009
18. **С. Минасян.** Этнические меньшинства Грузии: Потенциал интеграции на примере армянского населения страны.- Ереван, 2006
19. **С. Минасян.** Проблема региональной безопасности на Южном Кавказе. Военный баланс и асимметрия политических стратегий Ежегодник Института Кавказа.- Ереван, 2009
20. **Х. Ибрагимли**“Азербайджанци Грузии“.- Москва, 2006
21. “Conflict Resolution in the South Caucasus: EU` s Role” Europe Report N 173, 20 March 2006
22. “IRI, USAID Baltic Surveys/The Callup Organization, IPM” Georgian National Voters Study, September 2007 p 48
23. **T.Idor** “The Georgian Crisis and Russian-Turkey relations“ The Jamestown Foundaton Washington DC 2008

24. **Z. Shiriyev, K. Kakacho** “Azerbaijan-Georgian Relations: The Foundation and Challenges of the Strategic Alliance” SAM Review Special Double Issue 2013. Vol. 7-8 pp 40-41 www.sam.gov.az/pdf/SAM-Review-7-web.pdf

АНЖЕЛА МНАЦАКАНЯН

Министерство обороны Республики Армения, младший специалист управления кадров и военного образования, соискатель факультета международных отношений Ереванского Государственного Университета

НАПРАВЛЕНИЕ ВНЕШНЕЙ ВОЕННОЙ ПОЛИТИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В ОТНОШЕНИИ РЕСПУБЛИКИ ГРУЗИЯ

Отношения между Арменией и Грузией имеют стратегическое значение, так как способствуют решению ряда первоочередных задач региональной безопасности Республики Армения и всего Южного Кавказа. Армяно-грузинское военное сотрудничество может способствовать установлению прочного мира и укреплению безопасности в регионе.

ANZHELA MNATSAKANYAN

First class junior serviceman of MOD HR and Education Department of the RA Ministry of Defense YSU, Faculty of International Relations, Applicant

EXTERNAL MILITARY POLICY DIRECTION OF THE RA WITH REGARD TO THE REPUBLIC OF GEORGIA

Relations between Armenia and Georgia are of strategic significance since they contribute to the solution of a number of primary security issues for the Republic of Armenia and the entire South Caucasus region. Armenian-Georgian military cooperation is mutually beneficial. The activation of that cooperation will promote the establishment of sustainable peace and strengthening of security in the region.

ՄԵՎԱԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ,
ՀՀ ՊՆ աշխատակազմի վերահսկիչ վարչության ավագ սպա

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԱՆ
ԱՐԺԵՔԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

Ամենաընդհանուր բնորոշմամբ՝ զգային անվտանգության քաղաքականությունն ընկալվում է որպես ազգային շահերի պաշտպանության համակարգ և իր մեջ ներառում է սոցիալ-տնտեսական, քաղաքական, արտաքին, ռազմական, տեխնիկական, իրավական և այլ բնույթի օպերատիվ ու երկարաժամկետ միջոցառումների, պետության կողմից ձեռնարկվող համապատասխան գործողությունների, ինչպես նաև քաղաքացիների ու նրանց հասարակական միավորումների գործունեության համալիր:

Բանալի բառեր՝ ազգային անվտանգություն, քաղաքականություն, ռյորտ, տեսակ, մակարդակ, պետություն, հասարակություն, անձ:

Վերջին տարիների աշխարհաքաղաքական զարգացումները, միջազգային և տարածաշրջանային իրադրության փոփոխությունները, անվտանգության և

ռազմաքաղաքական ծավալվող փոփոխությունները անհրաժեշտություն են առաջացնում վերանայելու Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության, պաշտպանության և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, սպառնալիքներն ու առաջնայնությունները:

Անվտանգության քաղաքականության հիմնարար խնդիրն է ազգային անվտանգության ապահովումը, որի առաջնային նպատակը պետք է լինի ոչ միայն ազգի գոյապահպանության, նրա պետականության, հասարակական-քաղաքական կյանքի ամրապնդման, զարգացման դեմ ուղղված առկա սպառնալիքներից պաշտպանությունը, այլև նախատեսի դրանք կանխարգելող միասնական ու համակարգված կառուցակարգեր: Կարևոր է ընդգծել, որ թե ազգային անվտանգությունը, թե դրա ապահովմանն ուղղված քաղաքականությունը կրում է միջոցիսցիպլինար բնույթ՝ դրանով հանդերձ պահանջելով ինչպես իշխանական ամբողջական, այնպես էլ հասարակական ու անհատական կարողությունների համախմբում¹:

Հարկ է նշել, որ ազգային անվտանգության գաղափարը առաջ է քաշվել դեռևս հին աշխարհի մտածողների կողմից: Հին Չինաստանում ազգային անվտանգության հարցերը դիտարկվում էին թե՛ ներքին, և թե՛ արտաքին սպառնալիքներից պաշտպանվելու տեսանկյունից: Ավելին, մշակվում էին անվտանգության ապահովման հայեցակարգեր, ստեղծվում էին դրանց իրականացման համար անհրաժեշտ միջոցներ: Արիստոտելը հասարակության կառավարման մեթոդների վերաբերյալ իր գաղափարների հիմքում սահմանում էր քաղաքացիների անվտանգության չափանիշը: Բ. Սպինոզան քաղաքացիական վիճակի հիմնական նպատակը համարում էր «խաղաղության և կյանքի անվտանգության ապահովումը»: Թ. Հոբսի աշխատություններում հստակորեն հիմնավորվում է այն գաղափարը, որ պետությունը կոչված է պաշտպանելու իր քաղաքացիների շահերը, ապահովելու նրանց անվտանգությունը՝ օգտագործելով տրամադրության տակ եղած ռեսուրսները: Ըստ Ժան-ժակ Ռուսոյի՝ անվտանգության և ինքնապաշտպանության նկատմամբ հոգատարությունը պետք է լինի պետության կարևորագույն հոգատարությունը²:

Անձի և հասարակության անվտանգության վերաբերյալ գաղափարները ունեն պատմական խորը ակունքներ: Բայց ազգային անվտանգության տեսությունը մշակվել է ազգային պետությունների ստեղծման ու զարգացման ժամանակաշրջանում, ինչի պարագայում մինչ օրս շարունակվում է դրա առանձին կողմերի ու հատկանիշների, մասնավորապես՝ անվտանգության ապահովման կառուցակարգերի կատարելագործումը, օրինաչափությունների հետազոտությունը և քաղաքականության զարգացումները:

Ազգային անվտանգությունն ունի մի շարք բաղկացուցիչներ՝ կապված մարդկանց կենսագործունեության տարբեր կողմերի և առաջին հերթին

¹ **Глебов И. Н.**, Национальная безопасность Российской Федерации: проблемы правового регулирования, СПб: Ун-т МВД России, 1998, с. 10

² **Лесков М. А.**, Гомеостатические процессы и теория безопасности, «Безопасность», N 4, М., 1994, с. 66

մարդկության գոյապահպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովման հետ: Ազգային անվտանգության բաղկացուցիչների առանձնացումն անհրաժեշտ է իրականացնել անձ-հասարակություն-պետություն-միջազգային հանրություն քառամիասնական մեխանիզմի հիման վրա:

Մասնագիտական գրականության մեջ ազգային անվտանգության հարցերը քննարկում են տարբեր առումներով: Նեղ առումով անվտանգության ապահովման հարցերը, որպես կանոն, վերաբերում են հասարակական-քաղաքական կյանքի առանձին կողմերին ու գործընթացներին, որը պայմանավորված է տվյալ ժամանակաշրջանի կոնկրետ հանգամանքներով: Լայն առումով ազգային անվտանգության խնդիրն ընդգրկում է մարդկանց կենսագործունեության բոլոր կողմերը, առնչվում ինչպես մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության, նրանց անվտանգության ապահովման, այնպես էլ հասարակական-քաղաքական կարգի պահպանման ու ամրապնդման հետ (ներքին ու արտաքին համաչափ սպառնալիքների հաշվառմամբ)¹:

Ազգային անվտանգության հիմնախնդիրը դիտարկելիս անհրաժեշտ է առանձնացնել տարածաշրջանային, պետական և անհատական մակարդակները: Ընդ որում, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր մակարդակին կարող են համապատասխանել ազգային անվտանգության որոշակի ոլորտներ, որոնք կապված լինեն այս կամ այն կոնկրետ խնդիրների իրականացման հետ:

Տարածաշրջանային անվտանգությունը ենթադրում է տարածաշրջանում բնակվող ազգերի և ժողովուրդների, ինչպես նաև պետությունների կենսական շահերի նկատմամբ սպառնալիքի բացակայություն: Տարածաշրջանային անվտանգությունը պայմանավորված է ուժերի հարաբերակցության պահպանմամբ, տարածաշրջանի բոլոր երկրներում խաղաղության համաչափ արմատավորմամբ: Վերջին տարիներին մեծ պետությունների ազգային անվտանգության հայեցակարգերում գերակայում է տարածաշրջանային մոտեցումը, քանզի տարածաշրջանային անվտանգության համակարգերի դերն ու նշանակությունը գլոբալ անվտանգության և առանձին պետությունների անվտանգության ապահովման գործում անհամեմատ բարձրացել են:

Պետական անվտանգությունը կարևորագույն բաղկացուցիչներից մեկն է, որ ներառում է այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են՝ տնտեսությունը, քաղաքականությունը, մշակույթը, սոցիալական ոլորտը, տեղեկատվական և էներգետիկ ոլորտությունները: Պետության անվտանգության մասին խոսելիս անհրաժեշտ է անվտանգությունը առանձնացնել տարբեր դիտանկյուններով: Նախևառաջ, պետական անվտանգությունը նշանակում է տարածքի, ազգաբնակչության և կառավարման համակարգի նկատմամբ սպառնալիքի ու վտանգի բացակայություն: Տվյալ դեպքում հարկ է խոսել նաև պետության՝ որպես քա-

¹ Հայաստանի ազգային անվտանգության ուղղված մարտահրավերները. ազգային անվտանգության ռազմավարություն // **Քոթանջյան Հ.Ս.**, Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Եր.: ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010, էջ 686-688

ղաքական համակարգի անվտանգության կրողի մասին: Եվ հաջորդը՝ պետական անվտանգությունը ենթադրում է պետական կառավարման համակարգի նկատմամբ սպառնալիքին դիմակայելու հնարավորություն, համապատասխան համակարգ: Այս առումով ազգային անվտանգությունը կոչված է ոչ միայն կանխարգելելու և չեզոքացնելու անվտանգային սպառնալիքները, այլև ամրապնդելու անձի և քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանվածությունը, հասարակության հոգևոր և նյութական արժեքների պահպանումը, պետության սահմանադրական կարգն ու ինքնավարությունը¹:

Ազգային անվտանգության ապահովման համակարգում առաջնային տեղում պետությունն է՝ որպես քաղաքական համակարգի կենտրոնական ինստիտուտ, գործունեության հստակ ուղղություններով ու գործառույթներով օժտված ինստիտուցիոնալ համակարգով²: Պետությունը ոչ միայն արտահայտում է ազգային շահերը, այլ նաև երաշխավորում է դրանց իրականացումը պետության օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների միջոցով: Պետական մարմիններից յուրաքանչյուրն իր իրավասությունների շրջանակում այս կամ այն կերպ մասնակցում է ազգային անվտանգության ապահովման խնդիրների լուծմանը: Այնուամենայնիվ, այդ գործընթացում նրանց զբաղեցրած տեղն ու դերը էականորեն միմյանցից տարբեր են:

Ազգային անվտանգության քաղաքականության տեսագործական հիմնախնդիրների խմբավորման համատեքստում անվտանգության համակարգը կարելի է բովանդակային տեսակետից ներկայացնել տնտեսական, գիտատեխնիկական, տեղեկատվական, բնապահպանական, հոգևոր, սոցիալական, ռազմական, քաղաքական և այլ ոլորտների տարանջատմամբ: Այդ ենթահամակարգերից յուրաքանչյուրն իր հերթին ունի արտաքին ու ներքին կողմեր:

Տնտեսական անվտանգությունը պահանջում է ստեղծել այնպիսի տնտեսական կառուցվածք, որը ներքին ռեսուրսներն օգտագործելով՝ տնտեսական արդյունավետ վերարտադրության կարողություն կապահովի երկրի անվտանգության ամրապնդման և ժողովրդի հիմնական պահանջմունքների բավարարման համար, անհրաժեշտության դեպքում կկարողանա երկիրը պահել որոշակի ժամանակահատվածում: Տնտեսական անվտանգությունը պետության անկախության և ինքնիշխանության կարևոր հիմքերից է: Տնտեսական անկախության ապահովման քաղաքականության կոնկրետ ծրագրերի մշակման ժամանակ առաջնային են հետևյալ ուղղությունները՝ տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացում, երկրի համակողմանի զարգացման համար անհրաժեշտ տնտեսական գոտիների ստեղծում, էկոլոգիապես մաքուր արտադրանքի թողարկում, անթափոն տեխնոլոգիաների կիրառում և այլն: Որոշ երկրների համար անվտանգության տնտեսական բաղադրիչը գնահատվում է որպես հիմնական և իր անմիջական ազդեցությունն

¹ **Урсул А.Д.**, Государство в стратегии устойчивого развития. М.: РАГС, 2000, с. 85-86

² Правовая основа обеспечения национальной безопасности Российской Федерации: Монография / Под ред. А.В.Опалева, М.: ЮНИТИ-ДАНА, 2004, с. 13

է ունենում անվտանգության մյուս ոլորտների ու դրանց շրջանակներում վարվող քաղաքականությունների վրա (օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում)¹:

Աշխարհատնտեսական տեսանկյունից անվտանգությունը ենթադրում է համաշխարհային տնտեսական ճգնաժամերի հնարավորության նվազեցում, հումանիտական գլոբալ շուկայի առաջացում, տարբեր ազգերի տնտեսական զարգացման միջև հնարավոր համամասնության ապահովում, իսկ քաղաքական և ռազմական անվտանգությունը ենթադրում է աշխարհում ուժերի հարաբերակցության և համաշխարհային մակարդակով ընդհանուր խաղաղության պահպանում, համաշխարհային ուժային կենտրոնների հզորության հավասարակշռման ապահովում:

Գիտատեխնիկական անվտանգությունը պահանջում է ի շահ երկրի զարգացման ստեղծել առաջավոր տեխնոլոգիաների, երկրի գիտական կարողության և մտավոր մրցունակության ապահովման կառուցակարգ: 21-րդ դարում գիտատեխնիկական անվտանգությունը երաշխավորելու հիմնական ուղիներն ու միջոցներն են՝ մշակել միասնական գիտահետազոտական և տեխնիկական քաղաքականություն, սահմանել առաջնահերթ հիմնախնդիրները, խրախուսել գիտական մշակումները, ապահովել գիտական հայտնագործությունների ու մտավոր աշխատանքի պաշտպանությունը, խրախուսել ազնիվ մրցակցությունը արտադրության մեջ գիտատեխնիկական նվաճումների և դրանց գործնականում ներդրման, արդյունաբերական տեխնոլոգիաների մշակման հարցերում ու մի շարք այլ միջոցառումներ:

Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրը վերջին տարիներին առավել մեծ չափով քննարկման առարկա է դարձել գլոբալացման, ինտերնետի զարգացման, նաև գլոբալ ինֆորմացիոն հասարակության ձևավորման պայմաններում: Այն իր նշանակությամբ հավասարվում է ռազմական, տնտեսական և քաղաքական ոլորտների անվտանգության խնդիրներին: Տեղեկատվական անվտանգությունը ենթադրում է տեղեկատվական տարածքի պաշտպանվածություն, տեղեկատվության կիրառում միայն վերջինիս հասցեատերերի կողմից և միայն նպատակային կերպով, տեղեկատվության գաղտնիության ամբողջության և հասանելիության պաշտպանվածություն, ռազմական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական և տեղեկատվական ու հեռահաղորդակցման կառավարման համակարգերի պաշտպանվածություն:

Քաղաքական անվտանգությունն առաջին հերթին նշանակում է քաղաքական ռեժիմի անվտանգություն՝ կախված նրանից, թե տվյալ պետությունը քաղաքական ինչպիսի ռեժիմ ունի, քաղաքական ռեժիմի լեգիտիմություն, կոնֆլիկտների լուծման ու կանխարգելման արդյունավետ մեխանիզմ, կայուն ինստիտուտներ, նպատակային փոփոխությունների այնպիսի մեխանիզմի առկայություն, որը միաժամանակ ապահովում է համակարգի զարգացող գոր-

¹ Вахрамеев А.В., Кулешев С.Г., Национальная безопасность России. Декларация и реальность. М.: Вузовская книга, 2003, с. 260

ծառնությունն ու արդիականությունը: Քաղաքական անվտանգության խնդիրը առավել քան կարևոր է, քանի որ, ինչպես նշում են բազմաթիվ հեղինակներ (Ն.Մաքիավելի, Պ.Սոբոլևիչ և այլն), ազգային անվտանգությունը քաղաքական բնույթ է կրում և հանդիսանում է ազգային քաղաքականության միջուկը:

Հոգևոր անվտանգությունը պահանջում է երկրում ստեղծել միջավայր, որում հուսալիորեն կպահպանվեն ազգաբնակչության և պետականության գոյության, հետագա զարգացման հիմքը կազմող սովորույթներն ու ավանդույթները, ժողովուրդների պատմությունը, լեզուն, մշակույթը: Հոգևոր անվտանգության ապահովման համար կենսականորեն կարևոր է վարել քաղաքակրթության զարգացման և հարստացման եռանդուն քաղաքականություն, պահպանել մշակույթի ու ավանդույթների բոլոր արժեքավոր տարրերը, նյութական և մտավոր կյանքում դրանք զարգացնել համաշխարհային քաղաքակրթության արժեքների հետ ներդաշնակորեն համադրված:

Սոցիալական անվտանգությունը ենթադրում է քաղաքացիական և սոցիալական խաղաղություն, հասարակության ներսում սոցիալական բևեռացման և խիստ շերտավորման բացակայություն, միայն «կառուցողական» հակամարտությունների առկայություն, սոցիալական համաձայնություն ու գործընկերություն, միջին խավի առկայություն: Սոցիալական անվտանգության կարևորագույն խնդիրներից է սոցիալական հակամարտությունների կտրուկ քաղաքականացման, քաղաքական հակամարտությունների վերաճման դեմ պայքարը¹: Պետք է հաշվի առնել, որ ինչպես արևմտյան, այնպես էլ անցումային հասարակություններում սոցիալական հակամարտությունների լուծման հնարավորությունը պայմանավորված է, այսպես կոչված, համաձայնողական «փափուկ» տեխնոլոգիաներ կիրառելու միջոցով պետական իշխանության իրականացմամբ՝ հիմնված այն սզբունքի վրա, որ անձաբ, անհատը արտահայտում և կրում է կոնկրետ հասարակության կողմնորոշումներն ու առաջնայնությունները²:

Անվտանգության առանձնացող տեսակ է համարվում բնապահպանական անվտանգությունը, որը վտանգվում է շրջակա միջավայրին ուղղված սպառնալիքներով և դրսևորվում է «մարդկանց պայքարը բնության հետ» շղթայում: Այդ բնապահպանական իրողություններն իրապես հնարավոր չէ վերահսկել: Սակայն, ժամանակակից մարդու ներգործությունը բնության վրա, որը ուղեկցվում է նաև երկրագնդի գլոբալ տաքացմամբ, շրջակա միջավայրի աղտոտվածությամբ, օգոնային շերտի քայքայմամբ և այլ բացասական հետևանքներով, կարելի է միանշանակ ձևակերպել որպես բնապահպանական անվտանգության սպառնալիք:

Ռազմական անվտանգությունը պետության տարածքի, ազգաբնակչության պաշտպանության ունակությունն է արտաքին ռազմական սպառնալիքներից և վտանգներից: Ռազմական անվտանգությունը ենթադրում է պետության

¹ **Першин А.А.**, К вопросу о категориально-понятийном аппарате в теории национальной безопасности, Власть. 2004, N 6, с. 48

² **Մարկոսյան Ա.**, Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ, Եր.: Նորավանք, ԳԿՀ, 2005, էջ 15

սահմանների անխախտելիություն, հարձակման դեպքում արագ և հաղթակա-
նորեն դիմակայելու ներուժ, սեփական պետության սահմաններից դուրս ռազ-
մական գործողությունների իրականացում և այլն: Գերակայողը, իհարկե, պե-
տության ազգաբնակչության և տարածքի պաշտպանությունն է:

Այս կապակցությամբ բավական ակնհայտ է դառնում, որ պետության ռազ-
մական անվտանգությունը կախված է ոչ միայն հավանական հակառակորդի
դեմ համարժեք ռազմական կարողության առկայությունից, այլ գնալով ավելի
է խարսխվում որակապես նոր գործոնների վրա, որոնք ունեն տնտեսական,
տեղեկատվական, տեխնոլոգիական, քաղաքական ու սոցիալական բնույթ:
Հետևաբար, պետության ռազմական անվտանգությունը դիտարկվում է որ-
պես ողջախոհ հաշվեկշիռ պահանջմունքների ու հնարավորությունների
միջև, որոնց պայմաններում պետությունը պահում է իր զինված ուժերը՝ այն-
պիսի կազմով և ունակությամբ, որը թույլ կտա կասեցնել ցանկացած ագրե-
սիա, պահպանել ռազմավարական կայունությունը, կանխել պատերազմն ու
դրա սպառնալիքները, ապահովել հասարակության ժողովրդավարական
գարգացումը¹:

20-րդ դարի վերջին և 21-րդ դարի առաջին երկու տասնամյակում Հայաս-
տանի Հանրապետության շուրջ ձևավորված աշխարհաքաղաքական ու ռազ-
մաքաղաքական իրադրությունների վերլուծությունը հանգեցնում է այն հետ-
ևությունը, որ ազգային անվտանգության ոլորտային տարանջատման կառու-
ցակարգում իր դերով և նշանակությամբ առանձնանում է պաշտպանական-
անվտանգային ուղղությունը (ռազմական անվտանգությունը): Ազգային ան-
վտանգության տեսակների տարբեր արժեքայնության վերաբերյալ Հայաստա-
նի իրականությանը առավել մոտ է Կոպենհագենյան անվտանգային տեսու-
թյունը: Անվտանգության Կոպենհագենյան դպրոցն ընդունում է բազմավեկ-
տոր մոտեցումը անվտանգության հանդեպ², որի պարագայում տեսակային
հինգ բաղադրամասերից չորսն ուսումնասիրում է անվտանգության ոչ ռազ-
մական սպառնալիքները: Այսպես, քաղաքական սպառնալիքները մշտապես
անհանգստացնում են պետությանը: Սակայն, շատ դեպքերում դժվար է
դրանք տարանջատել ռազմական սպառնալիքներից, քանի որ պետությունը
համարվում է քաղաքական միասնականություն և այդ պարագայում նման
միասնության թուլացումը կարող է դիտարկվել ռազմական սպառնալիքների
մակարդակով: Քաղաքական անվտանգությունը վերագրվում է առաջին հեր-
թին պետության կայունությանը, նրա կառավարման ու գաղափարախոսու-
թյան համակարգին:

Ռազմական սպառնալիքները շոշափում են պետության գրեթե բոլոր բա-
ղադրիչները, որոնք հարցականի տակ կարող են դնել պետության հիմնական
պարտականությունը՝ քաղաքացիների պաշտպանության ունակությունը:

¹ Լրացուցիչ տես **Քոչարյան Տ.**, Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության
ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 140-153

² Կոպենհագենի դպրոցն առաջացել է Հակամարտության և խաղաղության հիմնախնդիրների
հետազոտությունների ինստիտուտում (ք. Կոպենհագեն): Վերջինս ներկայացված է այնպիսի
հեղինակների կողմից, ինչպիսիք են՝ Բարրի Բուզանը, Օլե Վաեկերը, Յասպ դե Վիլդեն և այլք:

Ռեզոլուցիան անվտանգությունը վերաբերվում է պետության անվտանգության երկակի մակարդակների՝ հարձակողական և պաշտպանական փոխկապակցված հնարավորություններին, որտեղ յուրաքանչյուր երկիր ինքն է ընտրում, թե նշվածներից որին առաջնություն պետք է տա: Անվտանգության ինստիտուտի շատ հետազոտողներ հակված են այն տեսակետին, որ բոլոր ռազմական սպառնալիքներն ուղղված են անվտանգությանը, բայց դա միշտ չէ, որ այդպես է: Ռեզոլուցիան ուժը կարող է օգտագործվել նաև մարդասիրական գործընթացներում, ինչպիսիք են՝ խաղաղապահ առաքելությունը, մասնակցությունը տարրերային աղետների վերացմանը և այլ դեպքերում:

Տնտեսական սպառնալիքները բավականին դժվար է որոշել հենց տնտեսության բնույթից ելնելով: Շուկայական տնտեսության պայմաններում ակտորների նորմալ վիճակը կապվում է ռիսկի գործոնի հետ, որտեղ միշտ առկա է մրցակցությունը և անորոշությունը տնտեսական գործունեության հանդեպ: Կայունության ու սպառնալիքների միջև սահմանը շատ հաճախ հստակ չի արտահայտվում: Հասկանալի է, որ ռազմական անվտանգությունը կախված է տնտեսականից, թեկուզ և հենց այն պատճառով, որ ռազմական ծախսերն ամբողջությամբ ֆինանսավորվում են պետական բյուջեից, սակայն տնտեսական անվտանգությունը կոնկրետ բխում է նյութական, աշխատանքային, ֆինանսական ռեսուրսներին հասանելիությունից, որոնք շուկայական հարաբերությունների պայմաններում անհրաժեշտ են պետական իշխանության և բնակչության կենսամակարդակի ապահովման համար:

Այդպիսով, անվտանգության ապահովման համար պահանջվում է, որ անհատները, հասարակական կազմակերպությունները և պետական մարմիններն ակտիվ, գործուն մասնակցություն ունենան անվտանգության կառուցակարգերի ամրապնդման գծում: Անվտանգության ամրապնդման քաղաքականությունը պետք է հավասարակշռված հենվի անվտանգության ապահովման պետական ու ոչ պետական (հասարակական) ենթահամակարգերի վրա:

СЕВАК НИКОГОСЯН

Национальная Академия Наук РА,

Институт философии,

социологии и права, старший офицер контрольного управления аппарата МО РА,

соискатель

**АКСИОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ ВИДОВОГО РАЗДЕЛЕНИЯ
НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ**

В наиболее распространенном определении политика национальной безопасности воспринимается как система защиты национальных интересов и включает в себя комплекс социально-экономических, политических, внешних, военных, технических, правовых и других оперативных и долгосрочных мероприятий, а также соответствующих действий, предпринимаемых государством, гражданами и их общественными объединениями.

SEVAK NIKOGHOSYAN

National Academy of Sciences of the RA, Institute of Philosophy,
Sociology and Law, Applicant
Ministry of Defense of the RA, Control Department, Senior Officer

VALUABLE FOUNDATIONS OF SPECIES DIVISION OF NATIONAL SECURITY

In the most common definition, the national security policy is perceived as a system of protecting national interests and includes a complex of socio-economic, political, external, military, technical, legal and other operational and long-term activities, and also the appropriate action taken by the state, the citizens and their public associations.

VIGEN SIMONYAN

Fraud data specialist at Armenian Card CJSC

**THE EFFECT OF THE US PRESIDENT'S JOB APPROVAL RATING
ON THE US STOCK MARKET**

We analyze how US presidents job approval ratings affects the stock market of the country. Rasmussen daily presidential tracking poll is taken as a measurement for job approval rating and closing prices of Dow Jones Industrial Average (DJIA) is taken for the stock market. We analyzed the research question for Barack Obama and Donald Trump and the final results are different for the two. In case of Barack Obama we found that one day lagged job approval rating is predictive of changes in DJIA closing price which goes along with our hypothesis of positive relationship between the two variables. For Donald Trump we found a significant negative predictive power which as a matter of fact may not be too reliable coefficient partly because there is lack of observations for that president.

Keywords: *Dow Jones Industrial Average (DJIA), Approval Index (AI), Donald Trump, Barack Obama, ARCH, GARCH*

Historically it is found that stock prices rise by greater percentage during Democratic hold than Republican hold in the United States. In 20th century alone during Republican hold Dow Jones Industrials Index increased by an average of 30.5% while in Democratic hold by 32.5% (Stovall, 1992). Getting to the level of individual presidents, Franklin D. Roosevelt had the highest return, 200.2%, among all other democrats in his 1st term. In case of Republicans the highest return was during Calvin Collidge's term 148.9%.

A question arises: what causes such differences? Obviously, there is no single answer otherwise every stock trader would be a millionaire. The numerous reasons include economic freedom, political forces, business regulations and several hundreds of others. One reason that stands out and that has gained considerable research interest in the previous years is public mood. As later on will be presented in literature review, public mood can be used to predict movements in stock prices with high correctness.

However, analyzing public mood may be perceived as too general simply because someone's mood may not be related anyhow with the stock market. (e.g. due to bad exam results, university students post tweets with negative emotions). Hence, it would be much more correct if public mood was analyzed on something which is related to stock market or to economy. One figure who matches that requirement is the president who not only has strong relations/effect on the US economy but also there is enough information to analyze the public mood about him which we do not have in case of other figures/institutions which are related to US economy (e.g. FED).

Similar to the above case, public mood about president can be considered to be quite general and not to the point because it may not be logically related to the stock market. For instance, people may find the president to be attractive and thus have positive opinion about his look which possibly has little relation with stock market performance. Making the public opinion more concentrated to point and related to stock market we will concentrate on presidential job approval rating. Obviously, that indicator may also be perceived as general, however, it is much more related to the economic performance than generally populations opinion about the president. In this research we will concentrate on two presidents Barack Obama and Donald Trump.

We hypothesize that there should be a positive relation between presidential job approval index and the stock market. The intuitive chain of reasoning is that the better is the state of economy, the happier people are and as they assign some part of that good state of economy to the president, they should have positive opinion about the way president conducts his work. And for the reverse case when there is a bad economic situation the last person in the government to whom people express their dissatisfaction and demand his resignation is the president. Hence, in bad economic states public will have a negative mood about president.

Based on our research, we found that our hypothesis is confirmed for Barack Obama as there is a positive relation between his job approval rating and stock market. However, we did not reach expected results for Donald Trump, we found a significant negative coefficient.

The rest of the paper is organized as follows: Section 2 reviews the related literature, section 3 introduces the data that is used in the research. Sections 4 and 5 represent the main results of the research. The paper ends with Section 6, with concluding statements and directions for future research.

Literature review

Prediction of stock markets has always been one of the most attractive areas of study not only for financial analysts and economists but also for people from other backgrounds: physicians, mathematicians etc. Traditionally it was thought that stock markets follow Efficient Market Hypothesis (EMH) [1], [2]. Basically, it implied that it is not possible to "beat the market" because stock prices reflect all the possible information about the company under consideration.

However, later on new theories were introduced which relaxed the conclusions of EMH. Recent research in behavioral finance [3], [4] shows that emotions and human irrational decision making overall can play a role in predicting stock prices. But how those factors can be analyzed? [5] studies the relation between text sentiments and public polls. The results show a very high correlation between the considered variables. In particular, the sentiment ratio is 73.1%. [6] analyzes the reverse of the relationship we will analyze in our research. That is, how U.S. presidential approval ratings respond to changes in stock markets. They argue that the stock market is a good economic indicator responding to big shocks, government policies and economic trends. They conclude that stock market movements can be used to predict movements in job approval ratings.

Data Description

The data used in the research are Rasmussen Daily Presidential Tracking Poll and Dow Jones Industrial Average Index. The former data is collected by “Rasmussen Reports” company through automated telephone polling techniques, which implies that surveys are conducted through digitally recorded voice. This method insures that every participant hears exactly the same wording with the same intonation. Participants of the survey are selected from a pool of likely voters whose data is provided by census bureau. Surveys are done daily with 500 people and the final result is reported on the bases of three-day rolling average. Respondents are offered four choices for describing their approval: “strongly approve”, “strongly disapprove”, “somewhat approve” and “somewhat disapprove”. In the final report, survey participants are grouped in these four categories and each number below the categories represents the share/percentage of people who answered that category. In addition, the Rasmussen company reports “Approval Index” which is equal to the difference between the percentages of “strongly approve” and “strongly disapprove” ratings. We will use “Approval Index” as a measure for presidential job approval rating. None of the other four variables were taken because of uncertainties in their interpretations the cause of which is that their sum does not total to 100 percent. It is worth to mention that after the raw data is collected, it is processed by Rasmussen Reports on a weighting bases to make sure that final results are a good indicator of the overall population with its subgroups. Compared to other polling organizations job approval ratings, Rasmussens data has quite similar trends (Rasmussen, 2017). However, the data contains one possible limitation which is that the proportion of “strongly disapprove” is slightly higher compared to some other polls. That is usual for polls conducted with automated techniques. The data is drawn in Figure 1 and Figure 2.

Dow Jones Industrial Average (DJIA) index was taken as a measurement for stock prices. The index was chosen due to the diversity of industries that its member firms are part of. That makes the index an overall good indicator of stock market in United States. However, there are no companies from the industries of transportation and utilities. In addition, comparison was made between DJIA, S&P

500 and Russel 2000 during the research. It is found that the three indices are highly correlated (Appendix A). The data is drawn in Figure 3 and Figure 4.

Figure 1: *Approval Index for Barack Obama* Figure 2: *Approval Index for Donald Trump*





Figure 3: *Dow Jones index during Obamas period*

Figure 4: *Dow Jones Index during Trumps period*



Some changes in data were done before passing to the main analysis. In particular, job approval ratings for Saturdays and Sundays were removed because DJIA does not give stock prices for those days. In addition, in the cases where dates of approval rating and index did not coincide for a very short period the observations were deleted if the date of approval rating was later than the date of index. That was done based on the logic that future rating does not affect present Dow Jones Industrial Average (DJIA) index.

Analysis for Barack Obama

We took the detrended DJIA which is stationary as implied Dickey-Fuller unit root test. Our data is described by ARCH, AR and MA models (Appendix B). Also, we took lagged approval indexes following the idea that it may take some time

before the information about change in approval index spreads around the stock market and affects the decisions made by traders. So, the final model is:

$$DJIA_t = \beta_0 + \sum_{i=1}^n \beta_{1,i} AI_{t-i} + \sum_{i=1}^m \beta_{2,i} DJIA_{t-i} + \sum_{i=1}^p \beta_{3,i} \varepsilon_{t-i}$$

$$Var(\varepsilon_t) = \partial_0 + \sum_{i=1}^q \partial_{1,i} \varepsilon_{t-i}^2 + \sum_{i=1}^p \partial_{2,i} \sigma_{t-i}^2$$

DJIA – Detrended Dow Jones Industrial Average

AI – Approval Index

To find the best model for detrended DJIA the above model is tested for different cases and the final outcome is represented by the outcome below. This model was chosen based on Akaike Information Criterion (AIC) and Bayesian Information Criterion (BIC).

$$DJIA_t = 415.8 + 1.76AI_{t-1} + 0.967DJIA_{t-2} + 0.977\varepsilon_{t-1}$$

(102.7) (1.022) (0.00591) (0.00550)

$$Var(\varepsilon_t) = 816 + 0.146\varepsilon_{t-1}^2 + 0.806\sigma_{t-1}^2$$

(124.3) (0.0150) (0.0186)

Interpretation of the coefficient of AI_{t-1} would be: holding everything else constant, 1 percent increase in AI_{t-1} will cause an increase in detrended DJIA by 1.76 dollars. In addition, detrended DJIA today has a significant effect on DJIA 2 days later on.

Results for Donald Trump

Unlike the case of Barack Obama, Donald Trumps data is not described by an ARCH model. Only in the case of AR, 13th, 14th and some other lags are significant. So, the final model is assumed to be given by

$$DJIA_t = \beta_0 + \sum_{i=1}^n \beta_i AI_{t-i} + \sum_{i=1}^n \theta_i DJIA_{t-i}$$

As in the case of Barack Obama the model was tested for different coefficients, however, we reached an unexpected result which is the negative coefficient. That contradicts to our initial hypothesis. Such result may be due to small number of observations for this analysis. Because Donald Trump has only been president for several months and stock markets are closed during weekends and national holidays we only had 59 observations. If we were to do this research a year later from now the possibility of having results similar to the case of Obama might be higher.

Conclusion and limitations of results

Different results are reached for the considered presidents. The final formulation of the results for President Barack Obama would be: presidential job approval index for Barack Obama today is significant at predicting Dow Jones Industrial Average rating tomorrow and there is positive relationship between that two variables. In case of Donald Trump we reached significant results, however, due to low number of observations those results may not be reliable so we will restrain us from making conclusions.

One important limitation that our research did not consider is a causality test. It may be so that DJIA also affects AI following the logic that an improvement in stock market is correlated with improvement in overall economy and the better is the state of economy the better opinion will people have about the president and therefore president's job approval rating will be higher. In the case of decrease in stock market, similar logic will follow. In addition, several other tests were not done other effects such as EGARCH were not tested in our analysis.

Due to above mentioned important limitation, our data should be tested for vector auto regression (VAR) models in future research. In addition, our results should be checked for previous presidents. That will enable to reach generalizations in case of positive outcomes. Also, other tests could be done on our research which would further improve the results.

LITERATURE

1. **Barberis, N., & Thaler, R.** (2003). A survey of behavioral finance. *Handbook of the Economics of Finance*. Retrieved March 27, 2017, from <https://bbs.pku.edu.cn/attach/57/f5/57f568f5e9366cda/a%20survey%20of%20behavior%20finance.pdf>.
2. **Basu, S.** (1977). Investment Performance of Common Stocks in Relation to Their Price- Earnings Ratios: A test of the Efficient Market Hypothesis. *The Journal of Finance*. Retrieved March 04, 2017, from <http://e-m-h.org/Basu1977.pdf>
3. **Nofsinger, J. R.** (2003). Social Mood and Financial Economics. *The Journal of Behavioral Finance*. Retrieved March 02, 2017, from http://www.tandfonline.com/doi/abs/10.1207/s15427579jpfm0603_4
4. **D. Kahneman.** (usa). *Thinking, fast and slow*. New York: Farrar, Straus and Giroux. doi:https://www.ttu.ee/public/m/mart-murdvee/EconPsy/4/Kahneman_2011_Thinking_Fast_and_Slow.pdf
5. **O'Connor, B., Balasubramanyan, R., R. Routledge, B., & Smith, N. A.** (2010). From Tweets to Polls: Linking Text Sentiment to Public Opinion Time Series. ICWSM
6. **Aymar, C. F., & Stegmaier, M.** (2013). Presidential popularity rises and falls with the stock market. *The LSEs US centers daily on American politics and policy*. doi:http://eprints.lse.ac.uk/57188/1/blogs.lse.ac.uk-Presidential_popularity_rises_and_falls_with_the_stock_market.pdf
7. **Stovall, R. H.** (n.d.). Forecasting Stock Market Performance via the Presidential Cycle. *Financial Analysts Journal*. Retrieved May 12, 2017, from <http://www.jstor.org/stable/pdf/4479536.pdf>
8. **Rasmussen, S.** (2017, May 17). Comparing Approval Ratings From Different Polling Firms. Retrieved from http://www.rasmussenreports.com/public_content/political_commentary/commentary_by_scott_rasmussen/comparing_approval_ratings_from_different_polling_firms

Appendix A.

```
corr Russel SP500 DowJones
(obs=2062)
```

	Russel	SP500	DowJones
Russel	1.0000		
SP500	0.9855	1.0000	
DowJones	0.9889	0.9954	1.0000

B. Figure 3: *Partial Autocorrelation*

Figure 4: *Autocorrelation*





Table 1: *LM test for ARCH*

LM test for autoregressive conditional heteroskedasticity (ARCH)

lags (p)	chi2	df	Prob > chi2
1	154.704	1	0.0000
2	261.915	2	0.0000
3	285.711	3	0.0000
4	314.445	4	0.0000
5	315.541	5	0.0000
6	323.785	6	0.0000
7	319.836	7	0.0000
8	323.404	8	0.0000
9	331.738	9	0.0000
10	331.973	10	0.0000
11	325.396	11	0.0000
12	311.968	12	0.0000
13	300.218	13	0.0000
14	313.910	14	0.0000
15	316.288	15	0.0000
16	304.184	16	0.0000
17	305.598	17	0.0000
18	304.820	18	0.0000
19	301.149	19	0.0000
20	296.425	20	0.0000
21	301.584	21	0.0000
22	306.779	22	0.0000
23	307.253	23	0.0000
24	309.475	24	0.0000
25	310.147	25	0.0000
26	310.516	26	0.0000
27	309.592	27	0.0000
28	316.877	28	0.0000
29	319.305	29	0.0000
30	321.020	30	0.0000

H0: no ARCH effects vs. H1: ARCH(p) disturbance

ՎԻՉԵՆ ՄԻՄՈՆՅԱՆ

Զեղծարարության տվյալների մասնագետ "Արմենիան քարդ" ՓԲԸ

**ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ
ԱՄՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒՎԱՅԻ ՎՐԱ**

Մենք ուսումնասիրում ենք թե ինչպես է ԱՄՆ նախագահի աշխատանքի ցուցանիշը ազդում երկրի ֆոնդային շուկայի վրա: Ռասմուսենի նախագահական վերահսկողության հարցման արդյունքները վերցվել են որպես նախագահի աշխատանքի հաստատման ցուցանիշ և Dow Jones Industrial Index (DJIA) ինդեքսի փակման գինը վերցվել է որպես ֆոնդային շուկայի ցուցանիշ: Մենք ուսումնասիրել ենք թեման Բարակ Օբամայի և Դոնալդ Թրամպի համար և վերջնական արդյունքները տարբեր են երկուսի համար: Բարակ Օբամայի դեպքում ստացել ենք, որ նախորդ օրվա աշխատանքի հաստատման ցուցանիշը կանխատեսում է ինդեքսը, որը հաստատում է մեր հիպոթեզը՝ դրական կորելացիա քննարկվող փոփոխականների միջև: Դոնալդ Թրամպի համար ստացանք նշանակալի բացասական կանխատեսող ուժ ինչը: Ը ստ էության, այս արդյունքը չի կարող չափազանց հուսալի գործակից լինել, քանի որ այդ նախագահի համար քիչ են դիտարկումներ:

ВИГЕН СИМОНЯН

Специалист по данным о мошенничестве в ЗАО «Армянская карта»

**ВЛИЯНИЕ РЕЙТИНГА ОДОБРЕНИЯ ПРЕЗИДЕНТОМ США
НА ФОНДОВОМ РЫНКЕ США**

Анализируется, как рейтинги одобрения президентов США влияют на фондовый рынок страны. Расмуссенский ежедневный опрос по отслеживанию президентских выборов принимается за измерение рейтинга одобрения президентов, а цены закрытия Dow Jones Industrial Average (DJIA) принимаются за фондовый рынок. Мы проанализировали исследовательский вопрос для Барака Обамы и Дональда Трампа, и окончательные результаты для них разные. В случае Барака Обамы мы обнаружили, что рейтинг предыдущего дня прогнозирует изменения цены закрытия DJIA, что согласуется с нашей гипотезой о положительной взаимосвязи между двумя переменными. Для Дональда Трампа мы обнаружили значительную отрицательную прогностическую силу, которая, по сути, не может быть слишком надежным результатом, частично из-за отсутствия наблюдений для этого президента.

ԱՐԺՈՒՐ ԲՈՒՂՈՒՐՅԱՆ

Երևանի Պետական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետի մագիստրոս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻՆ**

Հայաստանի Հանրապետությունը 1992թ. վավերացրել է «Պետությունների և այլ պետությունների քաղաքացիների միջև ներդրումային վեճերի լուծման մասին» կոնվենցիան, 1994թ. ընդունվել է «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը և այժմ էլ քննարկման փուլում է գտնվում Օրենքի փոփոխության նախագիծը: Այս ամենը թույլ է տալիս դրական գնահատել Հայաստանի Հանրա-

պետության ձգտումները բարձրացնելու օտարերկրյա ներդրումների պաշտպան-վածությունը:

Բանալի բառեր՝ կոնվենցիա, ՆՎԿՄԿ, ներդրումային վեճեր, օտարերկրյա ներդրումների պաշտպանվածություն, վավերացնել, Առավել բարենպաստ-ման ռեժիմ (MFN), Ազգային ռեժիմ (NT), արդար և հավասար վերաբերմունքի սկզբունք, նվազագույն ստանդարտ:

Հայաստանի Հանրապետությունը 1992թ. վավերացրել է «Պետությունների և այլ պետությունների քաղաքացիների միջև ներդրումային վեճերի լուծման մասին» կոնվենցիան, որով սահմանված միջազգային պարտավորություն-ները կատարելու նպատակով էլ հենց 1994թ. Հուլիսի 31-ին ստորագրվել և ընդունվել է ՀՀ օրենքը «Օտարերկրյա ներդրումների մասին», որը քայլ էր զարգացման նպատակ հետապնդող և բաց առևտրի քաղաքականության մի-տում ունեցող պետության համար: Կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավորություն են ստանձնել ապահովել օտարերկրյա ներդրողների և նրանց կատարած ներդրումների պաշտպանությունը: Կոնվենցիայի առանձ-նահատկությունը կայանում է նրանում, որ այն հնարավորություն է տալիս օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանց պաշտպանելու իրենց կողմից կատարված ներդրումները այն պետության և պետական մարմինների հետ հարաբերություններում, որտեղ կատարվում է ներդրումը: Նախքան Կոն-վենցիայի նախագծումը և վերջնական համաձայնեցումը, օտարերկրյա ներդրողների մասնակցությամբ ներդրումների հետ կապված հարաբերու-թյունները կարգավորվում էին դիվանագիտական ուղիներով՝ ներդրողի քա-ղաքացիության երկրի և ներդրումը ստացող երկրի պետական մակարդա-կում: Կոնվենցիան հնարավորություն տվեց խուսափել միջպետական վեճե-րից և ներդրումների հետ կապված հարցերը լուծել ոչ թե դիվանագիտական այլ իրավական հարթակում՝ արբիտրաժում:

Հիմնական բովանդակություն

Հայաստանի Հանրապետությունում ներդրումների և ներդրողների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Օտարերկրյա ներդրում-ների մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես՝ Օրենքի առաջին հոդվածը սահ-մանում է, որ ներդրում է համարվում գույքի ցանկացած տեսակի այդ թվում՝ ֆինանսական միջոցների տեղաբաշխումը ՀՀ տարածքում իրականացվող գործարարության ոլորտներում շահույթ՝ «եկամուտ», ստանալու կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով¹: Սահմանվում է նաև ներդրվող բարիքների ոչ սպառիչ ցանկ: Մասնավորապես՝ 3-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետությունում ներդրումները կարող են իրականացվել՝ ՀՀ դրամով, արժույթային այլ արժեքներով, շարժական և անշարժ գույքով և դրանց հետ կապված գույքային ցանկացած իրավունքով, բաժնետոմսերով, պարտատոմսերով, այլ արժեթղթերով, դրամական պահանջների ձևով և պայ-մանագրային արժեք ունեցող պարտավորությունների կատարման պահանջի իրավունքով, արժեք ունեցող մտավոր սեփականության ցանկացած իրավուն-

¹ Տե՛ս ՀՀ օրենքը «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀՊՏ 2010.12.30/69(803).1

քով, ՀՀ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված տնտեսական գործունեության իրականացման իրավունքով, այդ թվում նաև բնական միջոցների հետախուզման, արդյունահանման, մշակման կամ շահագործման իրավունքով, վճարովի ծառայություններով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ներդրումների ցանկացած տեսակներով: Օրենքը նաև նախանշում է հետևյալ պայմանները տեղաբաշխված նյութական և ոչ նյութական բարիքները ներդրում համարելու համար՝

1. ներդրվող բարիքները պետք է օգտագործվեն ոչ թե անձնական սպառման համար, այլ ներդրվեն գործարարական գործունեության ոլորտում,
2. ներդրումը կատարվի շահույթ ստանալու կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով,
3. արժեքներ ներդրողը պետք է ունենա ներդրումային գործունեություն իրականացնելու իրավունք,
4. ներդրումը պետք է կատարվի սուբյեկտի ինքնուրույն, կամահայտնությամբ և նախաձեռնությամբ,
5. ներդրվող միջոցների ինվեստիցիոն կարգավիճակը պետք է սահմանվի ներդրումային պայմանագրով¹:

ՀՀ Կառավարության 2005թ. Ապրիլի 21-ի նիստի թիվ 15 արձանագրային որոշմամբ հաստատվել է «ՀՀ Ներդրումային քաղաքականության» հայեցակարգը, որի հիմնական նպատակն է՝ բարձրացնել ՀՀ ներդրումային քաղաքականության թափանցիկությունը, ամրագրել վերջինիս հիմնական սկզբունքները և ուղղությունները: Դրանք են՝ (i) ներդրումային ոլորտում տնտեսավարման ազատական սկզբունքների կիրառումը, (ii) ներդրումները կարգավորող օրենսդրության գրավչությունն ու կայունությունը, (iii) օտարերկրյա և տեղական ներդրողներին հավասար՝ ոչ խտրական, տնտեսավարման պայմանների տրամադրումը, (iv) ազգային և առավել բարենպաստման ռեժիմների տրամադրումը, (v) ներդրումների և ներդրողների օրինական շահերի պաշտպանության ապահովումը, (vi) ներդրումները կարգավորող միջազգային իրավական նորմերի և միջազգային ընդունված պրակտիկայի ընդունումն ու կիրառումը:

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հիմնական նպատակներն են՝ ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորումը կարգավորող ոլորտների թափանցիկության բարձրացումը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտումը, Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալի մեծացումը, շուկայական ենթակառուցվածքի զարգացումը, մարդկային կապիտալի զարգացումը և այդ բոլորի հիման վրա՝ տնտեսական կայուն աճի և բնակչության բարեկեցության ապահովումը, ինչը համահունչ է Հայաստանի Հանրապետության հեռանկարային զարգացման ռազմավարական 2014-2025թթ. Ծրագրի (այսուհետ՝ «Ռազմավարական Ծրագիր») կամ «Ծրագիր») գերակա խնդիրներին²: Հիշյալ Ծրագրում

¹Տե՛ս նույն տեղում:

²Տե՛ս ՀՀ 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, հասանելի է <http://www.gov.am/am/prsp/hղումով>

գործարար և ներդրումային միջավայրի բարելավման նպատակով նախատեսվում է հեշտացնել գործարարությամբ զբաղվելն ու ներդրումների իրականացումը, ինչին համապատասխան անհրաժեշտ է նաև կրճատել գործարար ոլորտում պետական *անհարկի* միջամտությունը: Ռազմավարական Օրագրում ընդգծվում է, որ օտարերկրյա ներդրումների տեսանկյունից բացի քաղաքական, գործարարական և ներդրումային միջավայրի ներդաշնակեցումից, *բացարձակ անհրաժեշտություն է նաև ներդրողների շահերի պաշտպանության մակարդակի հետևողական և [կայուն] աճը:*

Օրագրում որպես ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականության ուղեգծման և ընթացքի գնահատման ցուցանիշ Հայաստանը հիմնվում է Համաշխարհային Բանկի (ՀԲ) և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) կողմից իրականացվող BEEPS¹ հետազոտության հենանիշերը:

Ինչպես նշեցինք ՀՀ-ն գործող «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը ընդունել է 1994թ., այսինքն՝ ICSID կոնվենցիան վավերացնելուց 2 տարի անց և Հայաստանի ԽՍՀՄ կազմից դուրս գալուց ու Արցախի ազատագրական պայքարի արդյունքում կնքված հրադադարի համաձայնագրից հետո: Այդ ժամանակ երկիրը դեռ գտնվում էր որպես այդպիսին կայացման նախնական փուլում, և պետք էր հնարավորինս արագ տեղ զբաղեցնել միջազգային սեղանի շուրջ: Այս և այլ օբեկտիվ, ինչպես նաև սուբեկտիվ պատճառներով ընդունվեց ՀՀ գործող օրենքը «Օտարերկրյա ներդրումների մասին»՝ բոլոր թերություններով և անհամաձայնություններով հանդերձ:

Բարեբախտաբար մերօրյա թե տնտեսական, թե սոցիալական, թե իրավական և թե քաղաքական հնարավորություններն ու կամքը թույլ են տալիս նախագծելու և քննարկման առարկա դարձնելու օտարերկրյա ներդրումները կարգավորող նոր՝ ասել է թե ավելի համընդգրկուն և կատարյալ օրենքի նախագիծ, որը պետք է առավել համապատասխանի ոչ միայն ՀՀ պետական շահին, այլև ՀՀ միջազգային պարտավորություններին: Մասնավորապես՝ ՀՀ «Օտարերկրյա ներդրումների մասին» Օրենքի նոր խմբագրության (այսուհետ՝ «Նախագիծ») առանձնահատկություններն են.

- հստակեցվում է «Ներդրում» սահմանումը, հիմք ընդունելով պորտֆելային ներդրումները և փոխառու միջոցները: Սահմանման մեջ ներառվել է չհայրենադարձված հասույթն ու իրացումից ստացված գույքը և գումարները: Գործող Օրենքի ձևակերպումը Նախագծի հետ համեմատելիս, կարող ենք փաստել որ Օրենքը ոչ հստակ և տարընթերցման տեղիք տվող ձևակերպում է օգտագործում: Խնդիրն այն է, որ նախ ներդրման ոլորտները պարզելու հարց է առաջացնում, և երկրորդ՝ օգտագործում է «այլ օգտակար արդյունք» եզրույթը ինչը ևս խնդրահարույց ու անորոշ է,

- ընդլայնվում և առավել պրակտիկ է սահմանվում «Օտարերկրյա ներդրող» հասկացությունը, ընդգծելով միայն *ՀՀ տարածքից դուրս մշտապես*

¹BEEPS (Business Environment & Enterprise Performance Survey)՝ Գործարար միջավայրի եւ ձեռնարկությունների գործունեության հետազոտություն:

բնակվող կամ գործունեություն ծավալող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց: Գործող Օրենքը ի տարբերություն Նախագծի, ներդրողների շարքում առանձնացնում է օտարերկրյա պետությունը և միջազգային կազմակերպությունը, ինչը ներդրման իմաստով կարող է խնդրահարույց լինել: Մեր կարծիքով տվյալ պարագայում դա կարող է ավելի մեծ հավանականությամբ համարվել ոչ թե ներդրում, այլ ֆինանսական օգնություն, վարկ բայց ոչ ներդրում: Գործող խմբագրության պարագայում մեծ է ռիսկը, որ կարող ենք կանգնել մի այնպիսի իրավիճակի առջև, երբ Համաշխարհային Բանկից, ՄԱԿ-ից, Եվրամիությունից և այլ միջազգային կառույցներից, օրինակ՝ օրենսդրական դաշտի զարգացման նպատակով ստացված գումարները դիտվեն ներդրում և ենթադրեն ներդրողի շահույթը,

- առաջարկվում է ներդնել ՀՀ երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերով նախատեսված և միջազգայնորեն կիրառելի **առավել բարենպաստման**(Most Favored Nation կամ MFN) **և ազգային ռեժիմները** (National Treatment կամ NT), ինչը բացակայում կամ մասնակի է առկա գործող Օրենքում: Նման դրույթների սահմանումը բխում է օտարերկրյա ներդրողների համար ՀՀ ներդրումային դաշտը առավել գրավիչ դարձնելու նկատառումներից,

- փորձ է արվում սահմանել «ազատ փոխարկելի արտաբժույթ» հասկացությունը, ինչը ի հարկե գովելի նորամուծություն կլինի, սակայն սահմանման ձևաչափը համարում ենք անընդունելի: Խնդիրը այն է, որ նախագծում ուղղակի հղում է արվում Արժույթի Միջազգային Հիմնադրամի (IMF) կանոնադրությանը, ինչը համարում ենք անընդունելի, քանի որ օրենքը պետք է լինի համապարփակ և ամբողջական: Կարծում ենք, որ պետք է սահմանվի հենց հասկացության բացատրությունը, թեկուզ եթե այն լինի ինկորպորացիայի միջոցով,

- նախատեսվում է ներդնել արդար և հավասար վերաբերմունքի սկզբունքը և ներդրումների պաշտպանության նվազագույն ստանդարտները (անգլ. Fair and equitable treatment & minimal standart): Դրա համաձայն օտարերկրյա ներդրումներին և ներդրողին ՀՀ-ում տրվում է նվազագույն ստանդարտից առավել պաշտպանություն: Համաձայն նախագծի արդար և հավասար վերաբերմունքը ներառում է՝ i) ներդրողի օրինական, օբյեկտիվ և ինելամիտ սպասելիքների հարգանքը ii) արդարադատության մատչելիությունը և հիմնարար արդարադատության ապահովումը, iii) օտարերկրյա ներդրողների և նրանց ներդրումների նկատմամբ ցանկացած հիմքով խտրականության արգելքը, iv) հանրային իշխանության չարաշահման արգելք, v) հակաիրավական և հակաօրինական ճնշումների արգելք, vi) ապօրինի վարչարարության արգելք: Նախագիծը սահմանում է, որ **նախքան** օտարերկրյա ներդրողների գործունեությանն ուղղակիորեն առնչվող օրենսդրական փոփոխություն կատարելը, որոնք կարող են **բացասաբար** ազդել օտարերկրյա ներդրումների վրա, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով **օտարերկրյա ներդրողների մասնակցությամբ անցկացվում են հանրային քննարկումներ**,

- թե Օրենքով և թե Նախագծով սահմանվում է «օրենքի կայունության երաշխիք», որը ենթադրում է, որ օրենքի փոփոխության պարագայում ներդրողը վեց ամսյա ժամկետում ՀՀ Կառավարությանը ծանուցելով կարող է ներդրման ամբողջ ժամկետի ընթացքում օգտվել ներդրման պահին գործող օրենսդրական երաշխիքներից և իրավունքներից: Գործող Օրենքը սահմանել է անհամեմատ ավելի կարճ՝ 5 տարվա ժամկետ,

- նախագիծը սահմանում է «անուղղակի բռնագրավման» հասկացությունը, ինչը ակնհայտ առաջընթաց է Օրենքի հետ համեմատած, որը առհասարակ չի անդրադառնում այդ ինստիտուտին: Նախագծի համաձայն **անուղղակի բռնագրավում է** համարվում ներդրողների օրինական, օբյեկտիվ և ինելամիտ սպասելիքների (ակնկալիքների) չիրականանալը [բաց թողնված օգուտ]՝ պայմանավորված նրանց ներդրումից զրկելու հիմքով, որն առաջանում է հանրային շահով պայմանավորված, օրենքի համաձայն և ոչ խտրական հանրային վարչարարության իրականացման արդյունքում և հանգեցնում ուղղակի բռնագրավման հետևանքների: Կարևոր է, որ այս հասկացությամբ սահմանվում է օտարերկրյա ներդրողների պաշտպանությունը խտրական վերաբերմունքից, ինչը ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների հիմնական դրույթներից է: Հստակ սահմանվում է նաև, որ բռնագրավման համար անհրաժեշտ նախապայմանները: Նախագիծը պարունակում է հետևյալ ձևակերպումը՝ «Հայաստանի Հանրապետությունում արգելվում է օտարերկրյա ներդրումների *բռնագրավումը* կամ *անուղղակի բռնագրավումը*, **բացառությամբ** «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի՝ նույն օրենքով նախատեսված երաշխիքների ապահովմամբ»: Օրենքը սահմանում է ազգայնացման և բռնագրավման արգելք, իսկ առգրավումը դիտում է որպես բացառիկ երևույթ և միայն դատարանի վճռի հիման վրա: Նախագիծը, սակայն, ազգայնացման փոխարեն կիրառում է անուղղակի բռնագրավում եզրույթը իսկ ազգայացումը կարող է լինել համաձայն վերը նշված օրենքով սահմանված կարգի: Մեր կարծիքով այս պարագայում Նախագծի ընդունման դեպքում նշված հանգամանքը օտարերկրյա ներդրողներին վանող ազդեցություն կարող է ունենալ,

- ըստ էության թե Օրենքով և թե Նախագծով ներդրումներից ստացված շահույթի տիրապետման համար սահմանվում է նույն մոտեցումը, այն է՝ օտարերկրյա ներդրումներից ստացված եկամուտները ներդրողը՝ ՀՀ օրենքով սահմանված պարտադիր վճարները վճարելուց հետո, կարող է տնօրինել ըստ իր ցանկության: Այդ թվում կարող է օգտագործել ՀՀ ներքին շուկայում՝ հաշվի առնելով առկա օրենսդրական ընդհանուր սահմանափակումները [Նախագիծ] կամ անմիջապես արտահանել ՀՀ տարածքից: Նախագիծը սպառնիչ սահմանում է արտահանման ենթակա ներդրումից ստացված շահույթի ցանկը,

- նախագծում վեճերի լուծման վերաբերյալ սահմանվել է մի դրույթ, որը մեր կարծիքով ներհատուկ է ոչ թե օրենքին այլ մասնավոր սուբյեկտների

միջև կնքվող պայմանագրերին, այն է. «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա ներդրումների հետ կապված բոլոր վեճերը Կողմերի միջև հնարավորության դեպքում կարգավորվում են բանակցությունների, խորհրդակցությունների կամ հաշտարարության միջոցով»: Նմանօրինակ դրույթի սահմանումը օրենքում համարում ենք մասնավոր հարաբերություններին հնարավոր անհարկի միջամտություն, քանի որ կողմերը իրենք պետք է որոշեն կոնկրետ պայմանագրի շրջանակներում իրենց ձեռնտու է վեճը հանձնել իրավասու մարմնի լուծմանը, թե նախ բանակցությունների միջոցով փորձել գալ փոխհամաձայնության [ինչը կարող է տևել ամիսներ], և ապարդյուն լինելու դեպքում նոր հանձնել իրավասու ատյաններին,

- նախագծով ի տարբերություն Օրենքի սահմանվում են այն միջազգային արբիտրաժային/հաշտարարական մարմինները, որոնց կարող է հանձնվել վեճը: Նմանօրինակ դրույթի բացակայությունը Օրենքում օտարերկրյա ներդրողի մոտ տարակածություն կարող է առաջացնել:

Հայաստանի Հանրապետությունը սկսած 1992 թվականից՝ Կոնվենցիայի վավերացման տարեթվից, առ այսօր ստորագրել և վավերացրել է մի շարք երկկողմ միջազգային ներդրումային համաձայնագրեր¹: Սակայն համաձայն Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի (ICSID) պաշտոնական տեղեկատվության այն որպես վեճի մասնակից հանդես է եկել ընդամենը 2 անգամ: Առաջինը՝ GLOBAL GOLD MINING LLC v. REPUBLIC OF ARMENIA² գործով որպես պատասխանող իսկ երկրորդը՝ EDMOND KHUDYAN & Arin Capital & Investment Corp. v. REPUBLIC OF ARMENIA³: Ավելին՝ երկրորդ վեճը տրիբունալի կողմից գրանցվել է ընդամենը 2017 թվականի սեպտեմբերին: Հաշվի առնելով վեճերի վերաբերյալ տվյալների գաղտնիությունը ստորև կներկայացնենք հասանելի տեղեկատվությունը:

Առաջին գործով դիմումատուն՝ Գլոբալ գոլդ մայնինգ ՍՊԸ հանքագործությամբ զբաղվող ամերիկյան ընկերություն էր որը ներգրավված էր յուրի, գազի և հանքափորության ոլորտներում: Վեճը Կենտրոնի կողմից գրանցվել է 2007թ. փետրվարի 20-ին, նույն թվականի սեպտեմբերի 3-ին կողմերը դիմել են տրիբունալին վեճի քննությունը հետաձգելու խնդրանքով, 2008թ. մարտի 4-ին կողմերը Կենտրոնի գլխավոր քարտուղարին դիմում են ներկայացրել, որով խնդրել են վեճի քննությունը դադարեցնել, եթե մինչև նույն թվականի մայիսի 2-ը կողմերից ոչ ոք գաղտնի համաձայնագրի դրույթների խախտման մասին չի տեղեկացնի: 2008թ. մայիսի 9-ին Տրիբունալը համաձայն արբիտրաժային կանոնների 43(1) հոդվածի նշում է արել վեճի քննության դադարեցման մասին:

Երկրորդ գործը՝ Khudyan & Arin Capital vs Armenia, տրիբունալի կողմից գրանցվել է 2017թ. Սեպտեմբերի 27-ին և հասանելի տեղեկատվության

¹ Տե՛ս՝ <http://investmentpolicyhub.unctad.org/IIA/mappedContent#iiaInnerMenu> հղումով

² Տե՛ս՝ Global Gold Mining LLC v. Republic of Armenia , ICSID Case No. ARB/07/7 հասանելի է <https://icsid.worldbank.org/en/Pages/cases/casedetail.aspx?CaseNo=ARB/07/7> հղումով

³ Տե՛ս՝ Edmond Khudyan and Arin Capital & Investment Corp. v. Republic of Armenia (ICSID Case No. ARB/17/36) հասանելի է <https://icsid.worldbank.org/en/Pages/cases/casedetail.aspx?CaseNo=ARB/17/36>

համապատասխան բողոքը ներկայացվել է՝ ՀՀ Նախագահի, ՀՀ Վարչապետի, ՀՀ Արտաքին գործերի նախարարի, ՀՀ Արդարադատության նախարարի դեմ:

Կենտրոնի տեղեկատվական բաժնում առկա չեն Հայաստանի քաղաքացիների, որպես դիմումատու, մասնակցությամբ վեճեր: ՀՀ մասնակցությամբ վեճերի նման նվազ՝ գրեթե զրոյական քանակությունը մեր կարծիքով ոչ թե վկայում է այն մասին, որ Հայաստանը պատշաճ կատարում է իր միջազգային պարտավորությունները այլև այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունը դեռ շատ ջանք պետք է գործադրի օտարերկրյա որակյալ ներդրողներին և նրանց ներդրումները ներգրավելու համար:

Եզրահանգում

Վերլուծելով ՀՀ-ում առկա ներդրումային ոլորտի կարգավորման վերաբերյալ դիրքորոշումների զարգացումները կարող ենք պնդել, որ բացարձակ անհրաժեշտությամբ էլ հենց պայմանավորված է նոր՝ օտարերկրյա ներդրումների հետ կապված հարաբերությունները կարգավորող, օրենքի նախագծի քննարկումն իրականացումը: Պետք է ընդգծենք, որ օրենքի նախագիծը իր բնույթով ավելի համընդգրկուն և կատարյալ է գործող օրենքի համեմատ, այն, ըստ էության, համապատասխանում ոչ միայն ՀՀ պետական շահին, այլ նաև ՀՀ միջազգային պարտավորություններին: Այսպիսով՝ ընդհանուր առմամբ կարող ենք դրական գնահատել Հայաստանի Հանրապետության ձգտումները բարձրացնելու օտարերկրյա ներդրումների պաշտպանվածությունը այդպիսիք ներգրավման նպատակով: Չնայած վերջին երկու տարիներին ՀՀ-ի ցուցանիշը վատացել է, սակայն համեմատած 2011թ. 48-րդ տեղի՝ 2016թ. ինչպես երևում է ավելի քան 10 դիրքով առաջխաղացում է գրանցել, ինչը բնականաբար դրական արդյունք է, իսկ ներդրումային ոլորտի նկատմամբ առկա ուշադրությունը, մեր կարծիքով դրական ազդեցություն կունենա ՀՀ միջազգային ներդրումային վարկանիշի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ օրենքը «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀՊՏ 2010.12.30/69(803)
2. ՀՀ 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր <http://www.gov.am/am/prsp/>
3. BEEPS (Business Environment & Enterprise Performance Survey)՝ Գործարար միջավայրի և ձեռնարկությունների գործունեության հետազոտություն
4. Edmond Khudyan and Arin Capital & Investment Corp. v. Republic of Armenia (ICSID Case No. ARB/17/36) <https://icsid.worldbank.org/en/Pages/cases/casedetail.aspx?CaseNo=ARB/17/36>
5. Global Gold Mining LLC v. Republic of Armenia ICSID Case No. ARB/07/7 <https://icsid.worldbank.org/en/Pages/cases/casedetail.aspx?CaseNo=ARB/07/7>
6. Investmentpolicyhub.unctag.org <http://investmentpolicyhub.unctad.org/PIA/mappedContent#iiaInnerMenu>
Associate “Legalata” LLC Law firm

АРТУР БУДУРЯН

Магистр права в Юридическом факультете в Ереванском Государственном
Университете.

**“УЧАСТИЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ В КОНВЕНЦИИ ОБ УРЕГУЛИРОВАНИИ
ИНВЕСТИЦИОННЫХ СПОРОВ МЕЖДУ ГОСУДАРСТВАМИ И ФИЗИЧЕСКИМИ ИЛИ
ЮРИДИЧЕСКИМИ ЛИЦАМИ ДРУГИХ ГОСУДАРСТВ»**

Республика Армения ратифицировала Конвенцию об “Урегулировании инвестиционных споров между государствами и физическими или юридическими лицами других государств”, в 1992 году, в 1994 году был принят закон РА “Об иностранных инвестициях” и на данный момент проект изменений данного закона находится на стадии обсуждения. Все вышеперечисленное позволяет позитивно оценивать стремления Республики Армении увеличить защиту иностранных инвестиций.

ARTUR BUDURYAN

Yerevan State University, Faculty of Law, Master of Law

**THE RA PARTICIPATION TO THE CONVENTION ON THE SETTLEMENT OF
INVESTMENT DISPUTES BETWEEN STATES AND NATIONALS OF OTHER STATES**

In 1992 the Republic of Armenia has ratified the Convention on the “Settlement of Investment Disputes between states and nationals of other states”, in 1994 the RA Law “On the foreign investments” was admitted and currently the amendment of the latter is being discussed. The above mentioned makes it possible to positively assess the Republic of Armenia's aspirations to increase the protection of foreign investments.

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՄԵՎՈՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Հոդվածում անդրադարձ է կատարվել ինքնիշխանության սահմանադրական ամրագրման հիմնախնդիրների և դրսևորման ձևերի հետազոտությանը Հայաստանի Հանրապետության սահմանադրական նոր կարգավորումների տեսանկյունից:

Հեղինակն ընդհանրացնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված դրույթների համակարգային վերլուծության արդյունքները, բացահայտել է «պետական ինքնիշխանություն», «ժողովրդական ինքնիշխանություն» և «ազգային ինքնիշխանություն» եզրույթների իրավական բովանդակությունը և նորմատիվ գործառույթային դերակատարությունը սահմանադրական կարգավորման զարգացման ժամանակակից միտումների շրջանակում:

***Բանալի բառեր՝** Սահմանադրություն, պետության ինքնիշխանություն, պետական ինքնիշխանություն, ժողովրդական ինքնիշխանություն, ազգային ինքնիշխանություն:*

Ժամանակակից սահմանադրություն ունեցող պետությունների համար ինքնիշխանությունը պետության հիմնական բնութագրիչների համակարգում դիտարկվում է առաջինը հավասարների շրջանակում: Դա վերաբերում է նաև ՀՀ Սահմանադրությանը, որի 1-ին հոդվածը հռչակում է. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է:

Որպես սահմանադրական ամրագրում ունեցող հիմնարար սկզբունք՝ ինքնիշխանությունն առավել ընդհանուր ու ելակետային է, քանի որ արտահայտում է պետական իշխանության ներքին գերակայությունն ու լիիշխանությունն և արտաքին անկախությունը, որն էական է պետության կազմակերպման ու գործունեության համար:

Չնայած այն հանգամանքին, որ սահմանադրական հիմնարար այդ սկզբունքը հռչակվում էր նաև խորհրդային օրենսդրությամբ, այնուամենայնիվ, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից 1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունված Հայաստանի անկախության մասին հռչակագրով և Հայաստանի Հանրապետության 1995 թվականի հուլիսի 5-ի Սահմանադրությամբ (2005 և 2015 թվականների փոփոխություններով) ինքնիշխան

նությունը նորովի դիտարկվեց ու ընկալվեց որպես սահմանադրական հիմնարար արժեք սահմանադրական այլ արժեքների համակարգում:

Այսպես, օրինակ, ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի տրամաբանության շրջանակում Հայաստանի Հանրապետության որպես իրավական պետության հռչակումն ենթադրում է, որ ինքնիշխան և իրավական պետության հարաբերակցությունն ինքնին մատնանշում է որոշակի սկզբունքների ու հատկանիշների առկայություն, որոնք կարող են հնարավորություն տալ բացահայտել հենց ինքնիշխանության ոչ միայն իմաստը, բովանդակային սահմաններն ու դրսևորման բնութագրիչները, այլև՝ տարանջատել սահմանադրաիրավական այլ երևույթների նշանակությունից:

Այդ հանգամանքով պայմանավորված՝ անհրաժեշտ է մեթոդաբանական նոր մոտեցումներ ցուցաբերել պետության ինքնիշխանության որպես իրավական երևույթի հետազոտության ժամանակ: Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգավորումների արդի զարգացումների շրջանակում ինքնիշխան պետության սահմանադրական սկզբունքն էական զարգացում է ստացել ընթացիկ օրենսդրությամբ: Հետևաբար, պետության ինքնիշխանության իրականացման հարցերն անհրաժեշտ է տեսականորեն իմաստավորել՝ հատկապես պետության ինքնիշխան իրավունքների նորմատիվային ամրագրման տեսանկյունից:

Պետության ինքնիշխանության սկզբունքի ամրապնդմանը զուգընթաց «պետական ինքնիշխանություն», «ժողովրդական ինքնիշխանություն» և «ազգային ինքնիշխանություն» եզրույթների իրավական բովանդակությունը և նորմատիվ գործառնության դերակատարությունը պատմական զարգացման ընթացքում ենթարկվել են որոշակի փոփոխությունների, և, չնայած ՀՀ Սահմանադրությունը, ինչպես նաև ընթացիկ օրենսդրությունն ամրագրում են դրույթներ ինքնիշխանության առնչությամբ, այնուամենայնիվ, ոչ միանշանակ կերպով է ընկալվում այդ հասկացությունների սահմանադրաիրավական իմաստը:

Սահմանադրական իրավունքի գիտության մեջ և սահմանադրաիրավական կարգավորումների համակարգում «ինքնիշխանություն» եզրույթի էական նշանակության ու դերի մասին հարցերի հետազոտությունը չի կարող իրական արդյունավետություն ապահովել՝ առանց հաշվի առնելու այն հանգամանքները, որոնք կյանքի են կոչել տվյալ կատեգորիան ու ծառայել պետության ինքնիշխանության տեսության առաջացմանը:

Բազմաթիվ սահմանադրականագետների կարծիքով՝ ինքնիշխանությունը դիտարկվում է սահմանադրական իրավունքի կառուցվածքի բաղկացուցիչ մաս, ինչը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ այդ ինստիտուտն իր ամրագրումն է ստանում հենց սահմանադրական իրավունքի նորմերով¹:

¹ Ст'ю История политических и правовых учений. Под общ. ред. В.С. Нерсесяна. М: 2007. էջ 180, **Кистяковский Ф.** Лекция по общему государственному праву. М., 1912 // Теория государства и права: Хрестоматия: В 2 т. Т. 1. Государство / Автор-составитель М.Н.Марченко.

Սակայն շարադրված տեսակետի հետ դժվար է համաձայնվել, քանի որ պետության ինքնիշխանությունը արտահայտվում է գլխավորապես պետության իշխանության անկախության ու գերակայության ապահովմամբ: Պետական իշխանության նշված հատկանիշները մարմնավորում են պետության ինքնիշխան իրավունքների մեջ, մինչդեռ, վերջիններս ամրագրվում են ոչ թե սահմանադրական իրավունքի ինչ-որ առանձին ինստիտուտի, այլ սահմանադրաիրավական նորմերի գործնականում ողջ ամբողջությամբ:

Այսինքն, պետության ինքնիշխանությունը դրսևորվում է բազմապիսի հարաբերություններում, որոնց շրջանակներում իրականացվում է պետության գործունեությունը: Սակայն, հարկավոր է հաշվի առնել, որ սահմանադրաիրավական կարգավորման առարկայի մեջ են մտնում պետական իշխանության իրականացման ոչ միայն ձևերը, այլև անհատների, հասարակական կազմակերպությունների, սոցիալական այլ միավորումների քաղաքացիական վարքագծի ոչ պետական ձևերը: Ընդ որում՝ վերջինս ներառում է, օրինակ, այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են՝ քաղաքացիությունը, հասարակական միավորումների իրավունքը, տեղեկատվական իրավունքը և այլն:

Այդ կապակցությամբ հարց է ծագում, թե արդյո՞ք պետության ինքնիշխանությունն ամրագրող նորմերը ներառվում են միայն սահմանադրական իրավունքի ինստիտուտների կազմում, թե լուծվում են սահմանադրական իրավունքի ողջ համակարգում: Այդ առումով տեղին է նշել, որ տարբեր սահմանադրաիրավական ինստիտուտներով են դրանք ամրագրվում, օրինակ, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության երաշխիքները:

Այլ կերպ ասած, պետության ինքնիշխանությունը կարելի է բնութագրել իբրև սահմանադրական կարգի սկզբունք, որը թեև ձևականորեն ամրագրված է միայն ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում, սակայն գործնականում այն իրականացվում է սահմանադրական իրավունքի բազմաթիվ ինստիտուտների նորմերով:

Այդ առումով համակարծիք ենք այն պնդման հետ, ըստ որի՝ պետության ինքնիշխանությունը հանդիսանում է այն սկզբունքը, որը կանխորոշում է սահմանադրաիրավական ողջ համակարգն ու դրա պետական կարգավորման սկզբունքների բովանդակությունը¹:

Բացի դրանից, պետության ինքնիշխանության դրսևորումներից մեկն է հանդիսանում ժողովրդի կողմից հավանությանն արժանացած կամ ընդունված Սահմանադրության, այսինքն՝ Հիմնական օրենքի առկայություն:

Մ.: 2004, էջ 344: **Еллинек Г.** Общее учение о государстве / СПб.: 2004. էջ 426. **Гродовский А.Д.** Сочинения. СПб.: 2001. էջ 385, **Алексеев Н.Н.** Идея государства. СПб.: 2007, էջ 247 և ուրիշներ.

¹ Տե՛ս **Дамдинов Б.Д.** Государственный суверенитет в системе принципов федеративного устройства России: некоторые проблемы теории и практики // Сибирский юридический вестник. 2003. N4. էջ 19: Ճիշտ է, ներկայացվում է, որ բերված համատեքստում պետական կարգավորման հասկացությունը հարկավոր է հասկանալ բավականաչափ ընդգրկուն կերպով:

նը, որը սահմանված է սահմանադրի կողմից, այլ ոչ թե պարտադրված որևէ այլ պետությունների ու միջազգային կազմակերպությունների կողմից: Եվ տվյալ դեպքում սահմանադրաիրավական այն նորմերը, որոնք սահմանում են սահմանադրության մշակման, ընդունման ու փոփոխման կարգը, վերաբերում են սահմանադրական իրավունքի ինքնուրույն ինստիտուտին¹:

Ժամանակակից իրավագիտության առանցքային հաջորդ հիմնահարցերից է ժողովրդական ինքնիշխանության, ազգային ինքնիշխանության ու պետական ինքնիշխանության հարաբերակցության մասին հարցը: Հենց ինքնիշխանության բովանդակության մեջ հիմնական համակարգային բաղադրիչի դերին են հավակնում՝ պետական ինքնիշխանությունն ու ժողովրդի ինքնիշխանությունը, քանի որ ժողովրդին է վերապահված երկրի քաղաքական համակարգը, տնտեսական ու սոցիալական կարգերի հիմնական սկզբունքները սահմանելու գլխավոր ու անօտարելի իրավունքը:

Ժողովրդավարական պետության պարագայում պետական իշխանությունն ու ժողովրդի իշխանությունը կազմում են իշխանության նույն համակարգը: Սակայն, անհրաժեշտ է նկատել, որ ժողովրդական ու պետական ինքնիշխանությունը կարող են համընկնել, որը բնորոշ է ժողովրդավարական պետություններին, և չհամընկնել քաղաքական այլ ռեժիմների ժամանակ: Այդ իմաստով պետական իշխանությունը հանդիսանում է ժողովրդի իշխանության դրսևորման գլխավոր ձևը:

Բացի այդ, պետական իշխանության ինքնիշխան բնույթի վերաբերյալ անհրաժեշտ է նկատել դրա ածանցյալ բնույթը ժողովրդի ինքնիշխանությունից²: Պետական իշխանության ածանցյալ բնույթի մասին դրույթն իր սահմանադրական ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ մասով, համաձայն որի. «Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»:

Սակայն, եթե պետական իշխանության մեջ արտահայտվում է ողջ ժողովրդի ու պետության կամքը, ապա տեղական ինքնակառավարման մեջ իրականացվում է միայն համայնքի բնակչության կամքը: Ուստի, չի կարելի խոսել, որ տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով ժողովուրդը մասնակցում է իր իշխանության իրականացմանը³:

¹ Տե՛ս **Баглай М.В.** Конституционное право Российской Федерации. М.: Норма, 2006. էջ 32:

² Մասնավորապես, պառլամենտական իշխանության որպես ժողովրդի ինքնիշխանությունից ածանցվող երևույթի վերաբերյալ իր հետազոտությունն է կատարել նաև պրոֆեսոր Ա.Հարությունյանը: Մանրամասն տե՛ս **Арутюнян А.Ш.** Конституционализм: проблемы постсоветской реальности. – М.: Норма, 2013, էջ 132:

³ Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի սահմանադրական կարգավորումների համատեքստում վերանայվել է տեղական ինքնակառավարման հասկացության բովանդակությունը, ընդգծվել այն գաղափարը, որ տեղական ինքնակառավարման մարմինները լուծում են ոչ թե պարզապես «համայնքային նշանակության», այլ «համայնքային նշանակության հանրային հարցեր»՝ դրանով իսկ ընդգծելով այդ մարմինների սահմանադրական կար-

Ժողովրդի ինքնիշխանությունը իրենից ներկայացնում է ժողովրդի կողմից պետական ողջ իշխանության իրավաբանորեն ու փաստացի տնօրինում, քանի որ ժողովուրդն է հանդես գալիս իբրև այդ իշխանության միակ աղբյուրն ու կրողը: Այս հիմնավորմամբ կարելի է պնդել, որ ժողովրդի ինքնիշխանությունը հանդես է գալիս որպես պետական իշխանության ինքնիշխանության հիմք: Եթե ժողովուրդը կորցնում է ինքնիշխանությունը, ապա պետական իշխանությունն ինքնաբերաբար կորցնում է իր ինքնիշխան բնույթը:

Պետական ինքնիշխանությունը սահմանափակված է ժողովրդի ինքնիշխանությամբ, որին պատկանում է երկրի տնտեսական, սոցիալական ու քաղաքական համակարգերը սահմանելու բարձրագույն իրավասությունը: Միաժամանակ, պետական ինքնիշխանությունը՝ դա ժողովրդի կամքից բխող բարձրագույն իշխանությունն է, որն իր արտացոլումն է գտնում պետության կողմից ազգային ու միջազգային իրավունքի շրջանակներում սեփական գործառույթների իրականացման գործում:

Այդ համադրումից հետևում է, որ պետական իշխանությունը, իր հերթին, խստորեն կախվածության մեջ է գտնվում իր աղբյուրից ու կրողից: Որքան բարձր է պետական իշխանության կախվածության աստիճանն իր կրողից, այնքան ավելի մեծ է իր ինքնիշխանության աստիճանը:

«Պետական ինքնիշխանություն», «ժողովրդական ինքնիշխանություն» ու «ազգային ինքնիշխանություն» հասկացությունների բովանդակության բացահայտման ու իրենց գործնական նշանակության մեջ առաջին տեղում գտնվում է ժողովրդական ինքնիշխանությունը, որն արտացոլում է ժողովրդի բարձրագույն, անօտարելի իրավունքը որոշելու սեփական ճակատագիրը, լինել պետության ու հասարակության մեջ իշխանության միակ, ոչ մեկից ու ոչնչից չկախված կրողն ու արտահայտողը:

Ժողովրդական ինքնիշխանությունից ածանցվում է պետական ինքնիշխանությունը: Դրանք սերտորեն փոխկապակցված են և անբաժանելի կերպով համագոյակցում են պետական ու հասարակական կյանքում: Այդ հարաբերակցությունն ենթադրում է պետության կարողություն ներքին ու արտաքին քաղաքականությունն ինքնուրույն որոշելու՝ մարդու ու քաղաքացու իրավունքների պահպանման, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ու միջազգային իրավունքի նորմերի պահպանման պայմաններում¹:

Առավել խնդրահարույց է ազգային ինքնիշխանության էության բացահայտման հիմնախնդիրը: Վերջինս ավանդաբար ընկալվում է իբրև ինքնիշխան ազգի բարձրագույն անօտարելի իրավունք՝ սեփական ճակատագիրը սահմանելու, ազգային-պետական կարգավորման այս կամ այն ձևը

գավիճակի հանրային արժեքը (ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 179-րդ հոդվածի 1-ին մաս):

¹ Տե՛ս **Золотарева М.В.** Национальный суверенитет: на стыке права и политики // Федерализм. №3, 2009. էջ 141-142:

ընտրելու, քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային, ազգային և այլ բնույթի հարցերը լուծելու իրավունք՝ հաշվի առնելով օբյեկտիվ պատմական պայմանները:

Ազգային ինքնիշխանությունը ժողովրդական ինքնիշխանության հետ նույնականացումը բնորոշ է ձևավորված քաղաքացիական հասարակություն ունեցող զարգացած երկրներում: Մյուս կողմից, անհրաժեշտ է հաշվի առնել ազգային ինքնիշխանության իբրև էթնիկ ընդհանրության ինքնապաշտպանության իրավունք, որը նաև կարող է ընկալվել որպես ազգի ինքնորոշման իրավունք¹:

Ազգային ինքնիշխանության այդպիսի մեկնաբանությունից հետևում է, որ ազգը չի կարող իրականացնել սեփական լիարժեք ու քաղաքական ազատությունը՝ առանց որոշակի պետական կազմակերպության ու դրա իշխանական կառույցների: Ընդ որում, սակայն, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ոչ բոլոր էթնիկական միասնություններն ի վիճակի են ինքնուրույն ձևակերպել իրենց պետականությունն ու ձեռք բերել համապատասխան ինքնիշխանություն²:

Այսպիսով, «պետական ինքնիշխանություն», «ժողովրդական ինքնիշխանություն» և «ազգային ինքնիշխանություն» հասկացությունները համարժեք չեն, այլ սերտորեն փոխկապակցված են ու գործում են միասնական համակարգում: Ինքնիշխանության բոլոր այդ տարատեսակներն ունեն ընդհանուր բաղադրատարրեր՝ գերակայություն, անկախություն, անօտարելիություն և միասնություն: Իսկ ինքնիշխանության միասնականությունը նշանակում է, որ դրա սուբյեկտը, կրողը հանդիսանում են ժողովուրդը, ազգը, պետությունը:

Միաժամանակ, պետական ինքնիշխանությունը որպես սահմանադրական իրավունքի գիտության առանցքային ինստիտուտ և գաղափար, ունի գենետիկական կապ սահմանադրական իրավունքի ողջ համակարգի հետ, միաժամանակ հանդիսանալով պետական կարգավորման կարևորագույն հարց: Այն ունի ածանցյալ բնույթ, սակայն, էթե պետական իշխանության

¹ Տե՛ս **Карапетян Л.М.** Федеративное устройство Российского государства. М., 2001. էջ 228:

² Հարկ է նշել, որ ՀՀ Սահմանադրական դատարանն՝ իր 2014 թվականի նոյեմբերի 14-ի ՍԴՈ-1175 որոշմամբ ևս անդրադարձ է կատարել այդ եզրույթների բովանդակության և նշանակության բացահայտմանը: Այսպես, ըստ Սահմանադրական դատարանի որոշման տրամաբանության՝ 1) պետական ինքնիշխանությունն ենթադրում է, որ, ա) պետական իշխանությունն ունի գերակայություն ու անկախություն երկրի ներսում և միջազգային հարաբերություններում, բ) միայն ինքնիշխան պետությունն ունի միջազգային իրավասուբյեկտի կարգավիճակ, գ) երկրի ներսում ինքնիշխան պետությունն ինքն է սահմանում և պահպանում իր երկրի իրավակարգը՝ անհրաժեշտության դեպքում գործադրելով պետական հարկադրանքի միջոցներ, դ) պետական ինքնիշխանությունը տարածվում է երկրի ամբողջ տարածքի վրա, բացառում է երկիշխանությունը, միակ լեգիտիմ իշխանությունն է իրականացնում օրենսդիր, գործադիր և դատական գործառույթները, 2) ժողովրդական ինքնիշխանության էությունն է ճանաչել ժողովրդի՝ իշխանության միակ կրող ու աղբյուր լինելը, 3) ազգային ինքնիշխանությունն նշանակում է ազգի իրավունքն՝ ինքնուրույն և ազատորեն որոշել իր մշակութային, սոցիալ-տնտեսական և քաղաքական կեցությունը: Մանրամասն տե՛ս սույն աշխատանքի 3.1 ենթագլուխը:

մեջ արտահայտվում է ողջ ժողովրդի ու պետության կամքը, ապա ժողովրդի ինքնիշխանությունը իրենից ներկայացնում է ժողովրդի կողմից պետական ողջ իշխանության իրավաբանորեն ու փաստացի տնօրինում, քանի որ հենց ժողովուրդն է հանդես գալիս իբրև այդ իշխանության միակ աղբյուրն ու կրողը:

Այս հիմնավորումներով պայմանավորված անհրաժեշտ է կարևորել հետևյալը.

ա) ժողովրդի ինքնիշխանությունը հանդես է գալիս որպես պետական իշխանության ինքնիշխանության հիմք, իսկ, եթե ժողովուրդը կորցնում է ինքնիշխանությունը, ապա պետական իշխանությունն ինքնաբերաբար կորցնում է իր ինքնիշխան բնույթը,

բ) քաղաքացիական հասարակություն ունեցող ժողովրդավարական պետություններում ազգային ինքնիշխանությունը նույնականացվում է ժողովրդական ինքնիշխանության հետ, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ ազգային ինքնիշխանության իբրև էթնիկ ընդհանրության ինքնապաշտպանության իրավունք, ընկալվում է նաև որպես ազգի ինքնորոշման իրավունք, ինչը նշանակում է, որ ազգը չի կարող իրականացնել սեփական լիարժեք ու քաղաքական ազատություն՝ առանց որոշակի պետական կազմակերպության ու դրա իշխանական կառույցների¹:

Այսպիսով, կատարելով ամփոփում, անհրաժեշտ է նշել, որ ժամանակակից սահմանադրական իրավունքի արդիականացման պայմաններում Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության էության իմաստավորումը, դրա իրավական բովանդակության սահմանումը անհրաժեշտ են հենց պետության ներքին և արտաքին գործունեության արդյունավետության բարձրացման համար համապատասխան երաշխիքների ձևավորման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական կառուցվածքի ու ազգային անվտանգության հիմնախնդիրների գիտական հետազոտման նպատակով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գրիգորյան Հ.**, Ժան-ժակ Ռուսոյի «Ժողովրդի ինքնիշխանության» ուսմունքը և իրավաստեղծ գործունեության արդի հիմնախնդիրները // Օրենք և իրականություն: 2008: N9, 121 էջ,

2. **Խաչատրյան Ա.Ա.** Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության հիմնախնդիրները սահմանադրական ժամանակակից կարգավորումների համատեքստում և դրանց լուծումները միջազգային իրավական ու սահմանադրական արդարադատության պրակտիկայում, -Եր.: 2016, 166 էջ,

3. Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն) / **Գ.Բ.Դանիելյան, Վ.Ա.Այվազյան, Ա.Ա.Մանասյան.** -Եր., 2015, 240 էջ,

¹ Տե՛ս **Խաչատրյան Ա.Ա.** Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության հիմնախնդիրները սահմանադրական ժամանակակից կարգավորումների համատեքստում և դրանց լուծումները միջազգային իրավական ու սահմանադրական արդարադատության պրակտիկայում, -Եր.: 2016, էջ 43-49:

4. **Арутюнян А.Ш.** Конституционализм: проблемы постсоветской реальности. – М.: Норма, 2013, 342 էջ,
5. **Алексеев Н.Н.** Идея государства. СПб: 2007, էջ 247
6. **Баглай М.В.** Конституционное право Российской Федерации. М.: Норма, 2006. 654 էջ,
7. **Гродовский А.Д.** Сочинения. СПб.: 2001. էջ 385,
8. **Дамдинов Б.Д.** Государственный суверенитет в системе принципов федеративного устройства России: некоторые проблемы теории и практики // Сибирский юридический вестник. 2003. N4. էջ
9. **Еллинек Г.** Общее учение о государстве / СПб.; 2004. էջ 426.
10. **Золотарева М.В.** Национальный суверенитет: на стыке права и политики // Федерализм. N3, 2009. էջ 141-142:
11. История политических и правовых учений. Под общ. ред. В.С. Нерсесяна. М: 2007. էջ 180,
12. **Карапетян Л.М.** Федеративное устройство Российского государства. М., 2001. էջ 228:
13. Кистяковский Ф. Лекция по общему государственному праву. М., 1912 // Теория государства и права: Хрестоматия: В 2 т. Т. 1. Государство / Автор-составитель **М.Н.Марченко**. М.: 2004, էջ 344:
14. **Stephen D.Krasner.** Promlematic Sovereignty, New York: 2001 // Конституционное право и политика. Юр., фак. МГУ, 2012, 726 էջ:

АШОТ ХАЧАТРЯН

доктор юридических наук, профессор

АРАМ ХАЧАТРЯН

кандидат юридических наук

**ФОРМЫ ПРОЯВЛЕНИЯ СУВЕРЕНИТЕТА ГОСУДАРСТВА В КОНТЕКСТЕ
МОДЕРНИЗАЦИИ КОНСТИТУЦИОННОГО РЕГУЛИРОВАНИЯ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

В статье были затронуты проблемы исследования суверенитета конституционного закрепления и форм его проявления в контексте современного конституционного регулирования Республики Армения.

Обобщая результаты системного анализа положений закрепленных в Конституции Республики Армения, выявлено правовое содержание и функциональные роли понятий «государственный суверенитет», «народный суверенитет», «национальный суверенитет» в контексте современных тенденций конституционного регулирования.

ASHOT KHACHATRYAN

Doctor of Law, Professor

ARAM KHACHATRYAN

PhD in Law

**FORMS OF SOVEREIGNTY MANIFESTATION IN THE SCOPE OF CONSTITUTIONAL
REGULATIONS' MODERNIZATION OF THE REPUBLIC OF ARMENIA**

The article discusses the issues of constitutional fixing of sovereignty and the observation of manifestation forms from the viewpoint of new Constitutional Regulations of the Republic of Armenia.

The author, summarizing the results of the systematic analysis of the provisions fixed in the Constitution of the Republic of Armenia, has discovered the legal content of "State sovereignty", "Public self-government" and "National sovereignty" and the normative functional role within the framework of modern trends of constitutional regulation.

ԻԶԱ ԻՄԿԱՆԴԱՐՅԱՆ

Հայ-Ռուսական համալսարանի,
Սահմանադրական և մոնիթինգայալ իրավունքի
ամբիոնի հայցորդ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԱԶԱՏ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԱԿ-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ,
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ԴԱՇՆԱԳՐԻ ԽՈՐԱՊԱՏԿԵՐՈՒՄ**

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական ժամանակակից կարգավորումների շրջանակում աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրացման առանձին հիմնահարցերի հետազոտությանը, հատկապես ՄԱԿ-ի 1966 թվականի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրի դրույթների հիման վրա ձևավորված պրակտիկայի հաշվառման համատեքստում:

Բանալի բառեր՝ աշխատանքի իրավունք, աշխատանքի ազատ ընտրության իրավունք, աշխատանքի հասանելիություն, աշխատանքի հնարավորություն, պետության պարտավորություններ

Հազարամյակների ընթացքում միմյանց հերթափոխող քաղաքակրթությունների շարքը և դրանցով պայմանավորված գաղափարախոսությունների փոփոխությունները ոչ մի կերպ չեն ազդել մարդկային քաղաքակրթական արժեքների վրա, որոնք գնահատվել են թե՛ հին ժամանակներում, թե՛ գիտատեխնիկական առաջընթացի մեր օրերին: Այդ արժեքները խարսխված են բարության, միմյանց նկատմամբ հարգանքի, ինչպես նաև մարդու իրավունքների ճանաչման և դրանց պաշտպանության իրավական կառուցակարգերի ու ընթացակարգերի վրա:

1993 թվականին Հայաստանի Հանրապետությունը, միանալով ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրին, աշխատանքի իրավունքի արդյունավետ իրացման առումով որոշակի պարտավորություններ ստանձնեց: Անշուշտ, դաշնագրով ներկայացված իրավակարգավորումների շրջանակը լայն է, որոնք առնչվում են ոչ միայն աշխատանքային իրավունքների հետ: Հենց այս դաշնագրի իրավա-

կարգավորումներն ու ոլորտները առանձնահատուկ են Եվրոպական նորացված սոցիալական խարտիայի նկատմամբ¹:

Դաշնագրին միանալուց հետո Հայաստանի Հանրապետությունն իր Սահմանադրությամբ բառացիորեն չի երաշխավորել աշխատանքի իրավունքը: Փոխարենը ամրագրվել է աշխատանքի ազատ ընտրության իրավունք [1, ՀՀ 1995 թվականի Սահմանադրության 29-րդ հոդված], [2, ՀՀ 2015 թվականի Սահմանադրության 57-րդ հոդված] կամ աշխատանքի ընտրության ազատություն [3, ՀՀ Սահմանադրության 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 32-րդ հոդված]: Այս առումով դաշնագրի ներքո աշխատանքի իրավունքի նորմատիվային բովանդակության բացահայտումը թույլ կտա հետևություններ անել, թե արդյոք Հայաստանի Հանրապետությունը Սահմանադրությամբ երաշխավորելով յուրաքանչյուր ոքի աշխատանքի ազատ ընտրության իրավունքը ըստ էության ճանաչել է աշխատանքի իրավունքը, թե՛ ոչ, և թե ինչպիսի պարտավորություններ է ստանձնել աշխատանքի իրավունքի իրացման մասով:

Այսպես, դաշնագրի 2-րդ հոդվածի համաձայն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվել է իր ունեցած ռեսուրսների առավելագույն սահմաններում, անհատապես և միջազգային օգնության ու համագործակցության միջոցով, ձեռնարկել միջոցներ, մասնավորապես, տնտեսական և տեխնիկական բնագավառներում, առաջադիմորեն հասնելու համար դաշնագրում ճանաչվող իրավունքների լիարժեք իրականացմանը՝ բոլոր հարկ եղած միջոցներով, ներառյալ, մասնավորապես, օրենսդրական միջոցների ընդունմամբ: Դաշնագրի 6-րդ հոդվածով պետությունները ճանաչել են աշխատանքի իրավունքը, որն իր մեջ ներառում է յուրաքանչյուր մարդու իրավունքն իր ապրուստի համար աշխատանքով վաստակելու հնարավորություն ստանալը, որը նա ազատորեն ընտրում է, կամ որին նա ազատորեն համաձայնում է, և կձեռնարկեն հարկ եղած քայլեր այդ իրավունքի ապահովման համար [4]: Արժանի է հատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ նշված հոդվածների բառացի մեկնաբանությամբ, դաշնագրին միանալով, պետությունները պարտավորվել են ոչ թե երաշխավորել այլ «ճանաչել»² աշխատանքի իրավունքը և դրա լրիվ իրականացմանը հասնել աստիճանաբար,

¹ Օրինակ Դաշնագրով ամրագրվել են կրթության իրավունք, մշակութային կյանքին մասնակցելու իրավունք, բավարար այնպիսի կենսամակարդակի իրավունքը, որն իր մեջ ներառում է բավարար սնունդ, հագուստ ու բնակարան և կյանքի պայմանների անընդհատ բարելավման իրավունքը, որոնք տեղ չեն գտել Եվրոպական Սոցիալական Խարտիայում:

² Հայերենում թարգմանվել է՝ «ապահովել, որպեսզի աստիճանաբար, ... ապահովի մարդու՝ սույն դաշնագրում ճանաչվող իրավունքների լրիվ իրականացումը», ինչը կարծում ենք սկզբնաղբյուրի հետ փոքր ինչ տարբերվում է: Սկզբնաղբյուրից 2-րդ հոդվածի առաջին մասի բառացի թարգմանությունը կլիներ հետևյալը. Սույն դաշնագրին մասնակցող յուրաքանչյուր պետություն պարտավոր է անհատական կարգով և միջազգային օգնության ու համագործակցության կարգով, մասնավորապես, տնտեսական և տեխնիկական բնագավառներում եղած ռեսուրսների առավելագույն սահմաններում միջոցներ ձեռնարկել այն բանի համար, որպեսզի աստիճանաբար, բոլոր հարկ եղած եղանակներով, ներառյալ, մասնավորապես, օրենսդրական միջոցների ընդունումը, հասնի մարդու՝ սույն դաշնագրում ճանաչվող իրավունքների լրիվ իրականացմանը:

այդ կապակցությամբ միջոցներ ձեռնարկելով տնտեսական և տեխնիկական բնագավառներում եղած ռեսուրսների առավելագույն սահմաններում: Երկրորդ հոդվածի իրավակարգավորման մեջ օգտագործվող արտահայտությունները, գրեթե անհնար են դարձնում պարտավորությունների հստակ բնույթը որոշելը¹, և պատահական չէ, որ շատ հեղինակներ իրենց տեսակետները պայմանավորում են «իրավունքների լրիվիրականացմանը հասնելու» գաղափարի առկայությամբ [5]:

Տարբնկալումներից խուսափելու նպատակով դաշնագրով սահմանված դրույթների նկատմամբ վերահսկողություն իրականացնող ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային կոմիտեն իր թիվ 3 Ընդհանուր մեկնաբանությունների շրջանակում փորձել է լուսաբանել երկրորդ հոդվածի կարգավորումները՝ նշելով, որ պետությունները պարտավորվել են երաշխավորել, որ համապատասխան իրավունքները կիրականացվեն առանց խտրականության [6, էջ 1]: Անկախ պարտավորությունների աստիճանական բնույթից, անշուշտ, պետությունները պետք է ձգտեն, որպեսզի հատկապես հասարակության խոցելի անդամները, որքան հնարավոր է լայնորեն, երաշխավորվեն դաշնագրով սահմանված իրավունքներով: Ինչ վերաբերում «հարկ եղած քայլերին կամ միջոցներին», ապա կոմիտեն պարզաբանել է, որ ի լրումնօրենսդրությամբ իրավունքները ճանաչելուն, անդամ-պետությունները պետք է ապահովեն նաև այդ իրավունքների դատականկամ այլ միջոցներով արդյունավետ պաշտպանությունը [6, էջ 2]:

Աշխատանքի իրավունքի նորմատիվային բովանդակությունը լուսաբանվել է ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային կոմիտեի մեկ այլ՝ 2006 թվականի փետրվարի 6-ի 18 թվագրված Ընդհանուր մեկնաբանությամբ, որի շրջանակում կարևորել են աշխատանքի իրավունքի արդյունավետ իրացման նպատակով պետություններին ներկայացվող հետևյալ իրավական չափորոշիչները, որ

ա) անհատները պետք է ազատ ընտրեն աշխատանքը և /կամ ազատորեն համաձայնեն դրան,

բ) արգելվում է աշխատողներին անհիմն (անարդարացիորեն) ձևով ազատել աշխատանքից,

գ) աշխատանքը պետք է լինի արժանապատիվ, այսինքն հարգի անձի ինչպես հիմնարար իրավունքներն ու ազատությունները, այնպես էլ նրա աշխատանքային այնպիսի իրավունքները, ինչպիսիք են աշխատավայրում առաջ-

¹ Ըստ Մեթյու Քրեյվիի դաշնագրի 2-րդ հոդվածում տեղ գտած անորոշ ձևակերպումները փոխզիջում են ծառայել դաշնագրի այն անդամ-պետությունների համար, որոնք ցանկացել են տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասով պարտավորություններ սահմանելիս միևնույն ժամանակ պահպանել ճկունություն՝ հաշվի առնելով պետության ռեսուրսների սահմանափակումները, որոնք կարող էին խոչընդոտ հանդիսանալ իրավունքների անմիջական և ամբողջական իրականացման համար: Մանրամասների համար տե՛ս՝ **Mathew C. R.**, International Covenant on Economic, Social and Cultural Rights: A Perspective on its Development, Thesis submitted for doctor of philosophy submitted at the Nottingham University in September 1992, 564, p. 116

խաղացման հավասար հնարավորության ընձեռնումը, հանգստի, վճարովի պարբերական արձակուրդի և տոնական օրերի դիմաց վարձատրության երաշխավորումը:

Այս մեկնաբանությունների շրջանակում ամրագրվել է նաև, որ աշխատանքի ազատ ընտրության իրավունքը վերապահված է յուրաքայտորին՝ ազատորեն որոշել կամ ընտրել աշխատանքը, ինչը ենթադրում է որևէ կերպ հարկադրված չլինել աշխատանքի անցնելու հարցում և իրավունք ունենալ օգտվելու աշխատանքի հասանելիությունը երաշխավորող պաշտպանության համակարգից: Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ աշխատանքի ազատ ընտրության իրավունքը ինքնին ընկալվում է որպես յուրաքանչյուր անձի՝ աշխատանքից անարդար կերպով չզրկվելու իրավունք [7, էջ3]:

ՄԱԿ-ի կոմիտեի նույն մեկնաբանությունների շրջանակում առանձնացվել են աշխատանքի իրավունքի այն տարրերի շրջանակը, որոնք պայմանավորված են անդամ-պետությունում առկա պայմաններից: Դրանք են՝

1) աշխատանքի հնարավորությունը՝ որը կարելի է բնութագրել մասնագիտացված ծառայություններից օգտվելու այնպիսի հնարավորություն, որպեսզի անձը կարողանա աշխատանք գտնել առկա աշխատաշուկայում,

2) աշխատանքի հասանելիությունը՝ այսինքն աշխատաշուկայի հասանելիության երաշխավորում՝ առանց որևէ խտրականության:

3) ընդունելի և որակյալ աշխատանքը, ինչը նշանակում է, որ աշխատող անձինք պետք է ունենան արդար և նպաստավոր աշխատանքային պայմաններ, այդ թվում՝ անվտանգության կանոններին համապատասխանող, ինչպես նաև ստեղծել արհմիություններ, ազատ ընտրել աշխատանքը և դրան ազատորեն համաձայնել [7, էջ 4]:

Անշուշտ, աշխատանք ընտրելու ազատության իրացման ժամանակ ցանկացած ձևի խտրականության դրսևորում արգելվում է՝ պայմանավորված անձի ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային դրության ծննդյան, ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամության, առողջական կարգավիճակի /այդ թվում ՄԻԱՎ և ՁԻԱՀ/, սեռական ուղղվածության, քաղաքացիական, քաղաքական կամ սոցիալական կարգավիճակով: Բացի այդ, աշխատանքի հասանելիության եզրույթը բովանդակային առումով ներառում է աշխատանք ձեռք բերելու համար անհրաժեշտ տեղեկություններ փնտրելու, ձեռք բերելու և փոխանակելու իրավունքը, ինչը նշանակում է, որ պետք է ստեղծվեն տեղեկատվական ռեսուրսներ և այլ հնարավորություններ, որոնց միջոցով կերաշխավորվի տեղական, տարածաշրջանային և միջազգային աշխատաշուկայի մասին տեղեկությունների ապահովումը: Միաժամանակ, աշխատանքի «ընդունելություն ու ւորակ» իրավական չափանիշը թերևս ենթադրում է որոշակի տարրի առկայություն, այն է՝ աշխատանքը պետք է ընտրվի, իսկ անձը դրան համաձայնի ազատորեն: Այստեղից ենթադրվում է, որ պետք է հաշվառվի և վերացվի կամ արգելվի հարկադրված աշխատանքի ցանկացած տեսակ, իսկ որպես հետևանք, դիտարկվի այնպիսի միջոցառումների իրականացում,

որոնք անհրաժեշտ են հատկապես առանձնահատուկ խումբ կազմող աշխատողներին աշխատանքային իրենց իրավունքների պաշտպանության համար [7, էջ 7]:

Աշխատանքի իրավունքի վերը նշված տարրերի ու նորմատիվային բովանդակության համադրումը ՀՀ Սահմանադրությամբ տրված իրավակարգավորումների հետ թույլ է տալիս նկատել, որ թեև աշխատանքի իրավունքը բառացիորեն չի ճանաչվել, առավել ևս երաշխավորվել ՀՀ Սահմանադրությամբ, սակայն այն (դաշնագրով սահմանված նորմատիվային բովանդակության շրջանակներում) տարածական տեղ է գտնել ՀՀ Սահմանադրության մի քանի հոդվածներում: Մասնավորապես ՀՀ Սահմանադրության 57-րդ և 58-րդ հոդվածներով որպես հիմնարար իրավունքներ և ազատություններ երաշխավորվել են աշխատանքի ազատ ընտրության իրավունքը, պարտադիր կամ հարկադիր աշխատանքի արգելքը, մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելու արգելքը, գործադուլի իրավունքը (աշխատողների տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով), իսկ որպես պետության քաղաքականության նպատակներ և օրենսդրական երաշխիքներ ՀՀ Սահմանադրության 82-83-րդ հոդվածներով ճանաչվել են նաև յուրաքանչյուր աշխատողի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունքները, յուրաքանչյուր ոքի գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Ինչպես տեսնում ենք, պետության ռեսուրսներից կախման մեջք տնվող և դաշնագրով նախատեսված աշխատանքի իրավունքի տարրերը՝ (աշխատանքի հնարավորություն, ընդունելի և որակյալ աշխատանք) ՀՀ Սահմանադրությամբ ընդգրկվել են պետության քաղաքականության նպատակներում, ինչը համահունչ է դաշնագրի ներքո Հայաստանի Հանրապետության ստանձնած՝ աշխատանքի իրավունքի աստիճանաբար իրացումն ապահովելու պարտավորության հետ:

Հաշվի առնելով, որ աշխատանքի ազատ ընտրության իրավունքը, որպես աշխատանքի իրավունքի մասնիկ, սերտորեն կապված է աշխատանքի և՛ հնարավորության, և՛ հասանելիության, և՛ ընդունելիության ու որակի հետ, կարելի է ներկայացնել աշխատանքի ազատ ընտրության իրավունքի հետևյալ տարրերի ամբողջությունը, որը ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի տրամաբանության շրջանակում՝ անհրաժեշտ է դիտարկել որպես մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների վերաբերյալ դրույթների մեկնաբանման համար միջազգային մարմինների պրակտիկայի պարտադիր հաշվառման պայման: Դրանք են.

- 1) աշխատանքը չպետք է կատարվի հարկադրաբար, միաժամանակ, աշխատելու իրավունքը ենթադրում է նաև չաշխատելու իրավունք,
- 2) աշխատանքը պետք է անհատի համար լինի հասանելի, առանց խտրականության, իսկ յուրաքանչյուր անձ պետք է ունենա աշխատանք փնտրելու

մասին տեղեկություններ հայթայթելու, ձեռք բերելու և տարածելու հնարավորություն,

3) անհատը չպետք է անհիմն կերպով գրկվի աշխատանքից և այդ կապակցությամբ պետք է ունենա դատական կամ այլ իրավական պաշտպանության հնարավորություն:

Դաշնագրի կարգավորումների այս խորապատկերում աշխատանքի ազատ ընտրության իրավունքի նորմատիվային բնույթը բացահայտելու հետ մեկտեղ, կարևոր է նաև վեր հանել, թե ինչպիսի պարտավորություններ է ստանձնել Հայաստանի Հանրապետությունը աշխատանքի իրավունքի կապակցությամբ:

Անշուշտ, ի լրումն աշխատանքի իրավունքի փոխկապակցված տարրերի ուժով սահմանված նշված պարտավորությունների՝ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության հարցերով կոմիտեն հիշատակված մեկնաբանությունների շրջանակում վկայակոչել է նաև մարդու իրավունքները «հարգելու, պաշտպանելու և իրականացնելու» չափորոշիչային տիպաբանությունը: Այդ իրավունքը հարգելու պարտավորությունը պահանջում է, որ անդամ-պետությունները զերծ մնան ուղղակի կամ անուղղակի կերպով աշխատանքի իրավունքի իրականացմանը միջամտելուց: Ինչ վերաբերում է այդ իրավունքի պաշտպանությանը, ապա այդ պարտավորությունը պահանջում է, որ պետությունները միջոցներ ձեռնարկեն, որպեսզի երրորդ անձինք չմիջամտեն աշխատանքի իրավունքի իրականացմանը: Իրականացման պարտավորությունն էլ իր հերթին բովանդակում է այդ իրավունքը ապահովելու, նպաստելու և խթանելու մեկ այլ գործառույթ: Ասվածը ենթադրում է, որ պետությունները պետք է ընդունեն համապատասխան օրենսդրական, վարչական, բյուջետային, դատական և այլ միջոցառումներ, որպեսզի ապահովեն այդ իրավունքի ամբողջական իրականացումը [7, էջ 7]:

Միաժամանակ, նույն կոմիտեն կարևորել է հատուկ պարտավորությունների կատարման անհրաժեշտությունը՝ նշելով, որ պետությունները պարտավոր են արգելել պարտադիր և հարկադիր աշխատանքը, զերծ մնան առանձին խումբ կազմող մարզինալացված կամ հաշմանդամ, բանտարկյալների կամ կալանքի տակ գտնվող անձանց աշխատանքի հավասար հնարավորությունների սահմանափակումներից կամ մերժումներից, ինչպես նաև՝ հարգեն կանանց և երիտասարդների աշխատանքին հասանելի լինելու իրավունքը և միջոցներ ձեռնարկեն խտրականության դեմ պայքարելու և հավասար հասանելիությունն ու հնարավորությունները խթանելու ուղղությամբ [7, էջ 7]:

Բացի այդ, աշխատանքի իրավունքը պաշտպանելու պարտականությունը պահանջում է քայլեր ձեռնարկել կանխարգելելու երրորդ անձանց միջամտությունը աշխատանքի իրավունքը իրականացնելու հարցում՝ արգելելով ոչ պետական մարմիններին ցուցաբերել խտրականություն կամ շահագործել աշխատանքը: Ըստ այդ տրամաբանության, պետությունները պետք է քայլեր ձեռնարկեն հնարավորինս կրճատելու ֆորմալ առումով տնտեսությունից դուրս աշխատողների քանակը, ովքեր չունեն իրենց աշխատանքային իրա-

վունքների պաշտպանություն: Ավելին, գյուղատնտեսական աշխատանքը պետք է կարգավորվի ազգային օրենսդրությամբ, այնպես որ աշխատողները ունենան պաշտպանվածության հավասար մակարդակ:

Կարևորելով պետությունների կողմից իրենց պարտավորությունների բարեխիղճ կատարման անհրաժեշտությունը, այդ մեկնաբանությունների շրջանակում պետությունները պարտավոր են ապահովելու, որ որևէ ձևի սեփականաշնորհումը չթուլացնի աշխատողների իրավունքները կամ աշխատաշուկան ճկունացնող գործողությունները չբերեն աշխատանքի անկայունությանը կամ սոցիալական պաշտպանվածության կրճատմանը [7, էջ 7]: Իհարկե, արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ, այդ թվում պատշաճ փոխհատուցում, պետք է տրամադրվի աշխատանքից անարդար հեռացնելու և խտրական վերաբերմունքի համար [7, էջ 12]:

Միաժամանակ, աշխատելու իրավունքի իրականացման պարտականությունը պահանջում է ընդունել և կիրառել մանրակրկիտ աշխատանքային ռազմավարություն՝ ուղղված տնտեսական աճը խթանելուն, կյանքի ստանդարտները բարձրացնելուն և գործազրկությունը հաղթահարելուն: Այդ առումով, ՄԱԿ-ի մասնագիտացված կոմիտեի իրավական դիրքորոշումներն ուղղված են նաև գործազրկության ցուցանիշի կրճատմանը հատկապես անապահով խմբերի շրջանում (կանայք, երիտասարդ և տարեց անհատներ, ներգաղթյալներ և հաշմանդամներ), կարևորելով աշխատանքը կորցնելու դեպքերի մասով ազգային և տեղական մակարդակով այդ անձանց մասնագիտական կրթության տրամադրման և աշխատանքային նոր ծառայությունների մատուցման հանգամանքը [7, էջ 7]:

Ամփոփելով վերոգրյալը անհրաժեշտ է կատարել հետևյալ եզրահանգումը.

1) ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների Կոմիտեի կողմից աշխատանքի իրավունքին տրված մեկնաբանության իմաստով Հայաստանի Հանրապետությունը Սահմանադրությամբ անուղղակիորեն ճանաչել է աշխատանքի իրավունքը,

2) ՄԱԿ-ի 1966 թվականի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրի դրույթների հիման վրա ձևավորված պրակտիկայի հաշվառման համատեքստում Հայաստանի Հանրապետությունը հանձն է առել տնտեսական և տեխնիկական առկա ռեսուրսների սահմաններում միջոցներ ձեռնարկելու աստիճանաբար իրականացնելու աշխատանքի իրավունքը (Կոմիտեի թիվ 18 Ընդհանուր մեկնաբանությամբ դրան տրված իմաստով)՝ առնվազն ապահովելով օրենսդրությամբ դրա ամրագրումը և այդ իրավունքի դատական պաշտպանության երաշխավորումը,

2) աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրավական բովանդակությունը կազմող աշխատանքի իրավունքի տարրերն են՝ աշխատանքի հնարավորությունը, աշխատանքի հասանելիությունը և ընդունելի ու որակյալ աշխատանքի երաշխավորումը,

3) աշխատանքի ազատ ընտրության իրավունքի միջազգային իրավական կարգավորման և ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի հարաբերակցության տրամաբանությունից բխում է, որ ա) ցանկացած աշխատանք

չպետք է կատարվի հարկադրաբար, բ) աշխատելու իրավունքը ենթադրում է նաև չաշխատելու իրավունք, գ) աշխատանքը պետք է անհատի համար լինի հասանելի, դ) աշխատանքի ազատության իրավունքի իրացման ժամանակ պետք է բացառվի որևէ ձևի խտրականություն ե) յուրաքանչյուր անձ պետք է ունենա աշխատանք փնտրելու մասին տեղեկություններ հայթայթելու, ձեռք բերելու և տարածելու հնարավորություն, զ) անհատը չպետք է անհիմն կերպով զրկվի աշխատանքից և է) յուրաքանչյուրի համար պետք է երաշխավորվի աշխատանքային խախտված իրավունքի դատական կամ այլ իրավական պաշտպանության հնարավորություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. 1995թ. սեպտեմբերի 21-ին ընդունված ՀՀ Սահմանադրություն
2. 2015թ. դեկտեմբերի 6-ին ընդունված փոփոխություններով ՀՀ Սահմանադրություն
3. 2005թ. նոյմբերի 27-ին ընդունված փոփոխություններով ՀՀ Սահմանադրություն
4. 1966թ. դեկտեմբերի 16-ին ընդունված Տնտեսական, Սոցիալական և Մշակութային իրավունքների մասին Դաշնագիր
5. **Mathew C. R.**, International Covenant on Economic, Social and Cultural Rights: A Perspective on its Development, Thesis submitted for doctor of philosophy submitted at the Nottingham University in September 1992, 564, p. 116
6. General Comment of Committee on Economic, Social and Cultural rights, No. 3, adopted on 14 December 1990, E/1991/2
7. General Comment of Committee on Economic, Social and Cultural rights, No. 18, adopted on 24 November 2005, E/C.12/GC/18
8. **Կրիժտոս Դրժեվիցկի**, Աշխատանքի իրավունքը և աշխատանքային իրավունքներ, Սարյոն Է., Կատարինա Կ. և Ալան Ռ.՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ դասագրքում, Երևան, Տիգրան Մեծ, 2009, 1114, էջ 320

ИЗА ИСКАНДАРЯН

Российско-Армянский (Славянский) университет, соискатель кафедры конституционного и муниципального права

ПРОБЛЕМЫ РЕАЛИЗАЦИИ КОНСТИТУЦИОНАЛЬНОГО ПРАВА НА СВОБОДНЫЙ ВЫБОР ТРУДА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ В СВЕТЕ МЕЖДУНАРОДНОГО ПАКТА ООН ОБ ЭКОНОМИЧЕСКИХ, СОЦИАЛЬНЫХ И КУЛЬТУРНЫХ ПРАВАХ

Статья посвящена изучению отдельных проблем реализации права на свободный выбор труда в рамках современного конституционного регулирования в Республике Армения и, в частности, в контексте практики, сформировавшейся на основе положений Международного Пакта 1966г. об экономических, социальных и культурных правах

ИЗА ИСКАНДАРЯН

Russian-Armenian Univeristy
Department of Constitutional and Municipal Law, Applicant

ISSUES RELATED TO THE IMPLEMENTATION OF CONSTITUTIONAL RIGHT TO FREE LABOR CHOICE IN THE RA IN THE LIGHT OF THE INTERNATIONAL COVENANT ON ECONOMIC, SOCIAL AND CULTURAL RIGHTS

The article is dedicated to exmination of certain issues in the field of relaization of the right to free choice of work in frames of current constitutional regulations and particularly in the light of the International Covenant on Economic, Social and Cultural rights of 1966.

**ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ.
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Սույն հոդվածում ուսումնասիրության առարկա են հանդիսանում կատարողական վարույթի սուբյեկտները: Քննարկվում է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության իրավական կարգավիճակը: Որպես առաջարկ ներկայացվում է մասնավոր դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող անձանց ներգրավումը ՀՀ-ում՝ հաշվի առնելով օտարերկրյա առաջավոր փորձը:

***Բանալի բառեր՝** Կատարողական վարույթ, դատական ակտ, դատական ակտերի հարկադիր կատարում, հարկադիր կատարող, մասնավոր հարկադիր կատարող, կատարողական վարույթի սուբյեկտ, պարտապան, պահանջատեր, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, կատարողական թերթ, բանկ, ոստիկանություն:*

Ցանկացած իրավահարաբերություն ձևավորվում է որոշակի սուբյեկտների մասնակցությամբ: Բացառություն չեն նաև կատարողական իրավահարաբերությունները, որոնց սուբյեկտներին անդրադարձ են կատարվել ինչպես տեսական գրականության մեջ, այնպես էլ առանձին նորմատիվ իրավական ակտերում:

Որպես կանոն, կատարողական վարույթի սուբյեկտի էության բացահայտման և նրա իրավական կարգավիճակին առնչվող հարցադրումներին առավել արդյունավետ լուծումներ տալու կարևոր միջոցներից է հանդիսանում այդ սուբյեկտների դասակարգումը: Իսկ նման դասակարգումների վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա են տարբեր մոտեցումներ:

Այսպես, ըստ լիազորությունների շրջանակի, կատարողական վարույթի սուբյեկտները դասակարգվում են՝ հանրային իշխանական լիազորություններով օժտված մարմինների և այդպիսի լիազորություններ չունեցող սուբյեկտների: Ընդ որում, առաջին խմբի մեջ մտնում են՝ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, դատարանները, ոստիկանությունը և պետական իրավասու այլ մարմինները, իսկ երկրորդ խմբում՝ կատարողական վարույթի կողմերը (պահանջատեր և պարտապան), բանկերը, ընթերականները, կատարողական վարույթին օժանդակող այլ անձինք (փորձագետ, թարգմանիչ և այլն)¹:

Միաժամանակ, ըստ իրավական կարգավիճակի բնույթի, կատարողական վարույթի սուբյեկտները դասակարգվում են նաև՝ ա) հարկադիր կատարման մարմինների, բ) դատարանների, գ) կատարողական վարույթի

¹ Տե՛ս **Վ.Воронов Е.Н.** Исполнительное производство (заключительная стадия гражданского процесса): Учеб. пособие.- Курск, 2014. էջ 21:

կողմեր (պահանջատեր և պարտապան), դ)կատարողական վարույթի պատշաճ իրականացմանը օժանդակող սուբյեկտներ (ընթերականեր, բանկեր, վարկային կազմակերպություններ, թարգմանիչներ և այլ սուբյեկտներ)¹:

Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն.

Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը հանդիսանում է կատարողական վարույթի կենտրոնական սուբյեկտներից մեկը:

«Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանվում է, որ հարկադիր կատարման ծառայությունը պետական ծառայության հատուկ տեսակ է: Հարկադիր կատարման ծառայությունը գործում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում: Այն կազմված է կառուցվածքային ստորաբաժանումներից և տարածքային մարմիններից: Ըստ էության հարկադիր կատարողներին հատուկ ծառայության մեջ ներառելով օրենսդիրը նպատակ է ունեցել իրականացնել նաև հարկադիր կատարողների իրավունքների պաշտպանությունը՝ համապատասխան երաշխիքներ սահմանելու միջոցով²:

Այս առումով, անհրաժեշտ է նաև նկատել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. *«Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ՝ հարկադիր կատարման ծառայություն) ապահովում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դատական ակտերի հարկադիր կատարումը»:*

Հարկ է նշել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի քննարկվող նորմը մեր կարծիքով ունի որոշակի թերություն այն առումով, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն հարկադիր կատարման են ենթակա ոչ միայն դատական ակտերը, այլ նաև իրավասու մարմնի կողմից ընդունված համապատասխան ակտերը: Հետևաբար կարծում ենք, որ այս առումով պետք է լրացում կատարվի «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածում և հարկադիր կատարման ծառայությունը բացի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովելուց օժտվի այլ իրավասու մարմինների համապատասխան ակտերի հարկադիր կատարումն ապահովելու լիազորությամբ³:

¹ Տե՛ս. **Гладышев С.И.** Исполнительное производство в английском и российском праве. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2001, 30-35 էջեր:

² Տե՛ս **Чекмарева А.В.** Защита прав человека в исполнительном производстве. /Диссе. на соиск. уч. ст. канд. юрид. наук.- Саратов, -2003, էջ 82:

³ Տե՛ս **И.В. Кириленко, М.Ю. Дымкина, А.А. Игнатенко, Г.Д. Улетова.** К вопросу о правовом статусе органов принудительного исполнения // Защита прав и законных интересов граждан и

Ներկայումս աշխարհի մի շարք երկրներում ընդունված է մասնավոր հարկադիր կատարողների ինստիտուտը: Այսպես, օրինակ՝ Ղազախստանի «Կատարողական վարույթի և դատական կատարողի կարգավիճակի մասին» օրենքով¹, Ուկրաինայի «Կատարողական վարույթի մասին» օրենքով², «Դատական և այլ մարմինների որոշումների հարկադիր կատարումն իրականացնող մարմինների և անձանց մասին» օրենքով³, ինչպես նաև Ֆրանսիայի, Իտալիայի, Հունգարիայի, Լեհաստանի, Չեխիայի, Սլովակիայի, Ռումինիայի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի համապատասխան օրենսդրություններով սահմանվում է մասնավոր հարկադիր կատարողների ինստիտուտը⁴:

Բնականաբար մասնավոր հարկադիր կատարողի ինստիտուտը, ինչպես ցանկացած իրավական երևույթ, ունի իր թեր և դեմ կողմերը: Մասնավորապես, ընտանեկան, պետական մարմինների մասնակցությամբ և մի շարք այլ իրավահարաբերություններում դատական և այլ ակտերի հարկադիր կատարման լավագույն սուբյեկտը հանդիսանում է պետական մարմինը: Դա է վկայում նաև այն հանգամանքը, որ վերը նշված երկրներից շատերում մասնավոր հարկադիր կատարողներին վերապահված է լիազորություններ միայն որոշակի իրավահարաբերությունների կապակցությամբ:

Միևնույն ժամանակ, պետք է նկատի ունենալ, որ հաճախ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը չի կարողանում ցուցաբերել այն արագությունը, մասնագիտական կարողությունները կամ չունի այն նյութական հնարավորությունները, որոնք անհրաժեշտ են կատարողական վարույթի գլխավոր սուբյեկտի համար:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում գործարար հարաբերություններում մասնավոր լիցենզավորված սուբյեկտների ինստիտուտի ներդրումը, ընդ որում, վերջիններս կարող են հանդես գալ որպես հարկադիր կատարողներ, եթե պարտատերն ու պարտապանը նախապես նման ցանկություն հայտնել են:

Կարծում ենք, որ օրենսդրությամբ նմանատիպ մոտեցումների ամրագրումն արդյունավետ կլինի այն առումով, որ՝

ա) Հայաստան Հանրապետության օրենսդրությունն այս առումով ևս կհամապատասխանեցվի եվրոպական իրավական չափորոշիչներին և կմոտարկվի միջազգային լավագույն փորձին,

բ) բացի պետական հարկադիր կատարման համակարգից, կստեղծվի մեկ այլ այլընտրանքային համակարգ, որը համարժեքորեն համահունչ կլինի, օրինակ, արդարադատություն իրականացնող դատարանին՝ հաշտեց-

организаций: Материалы международной научно-практической конференции. -Краснодар - Сочи, 23-26 мая 2002. – г. Сочи: Кубанский государственный ун-т, 2002. - Часть 1, с. 105:

¹ Տե՛ս https://online.zakon.kz/Document/?doc_id=30617206#pos=237;-106:

² Տե՛ս http://base.spininform.ru/show_doc.fwx?rgn=86789:

³ Տե՛ս http://base.spininform.ru/show_doc.fwx?rgn=86715:

⁴ Տե՛ս <https://slavdelo.dn.ua/2017/03/04/chastnyie-sudebnyie-ispolniteli-kto-oni-i-chem-budut-zanimatsya/>. http://www.concourt.am/armenian/con_right/4.22-2003/A.V.%20Avakyan.htm:

ման միջոցով վեճերը լուծող առևտրային արբիտրաժին կամ որակավորված հաշտարարին փոխարինելու տրամաբանությանը,

գ) գործարարական հարաբերություններում կողմերն իրենց ռիսկով ու գործողություններով առավել կանխատեսելի կլինեն դատական և այլ ակտերի կատարման ժամանակ,

դ) կնվազեն կոռուպցիոն ռիսկերը,

ե) հարկադիր կատարման ծառայության մատուցման կապակցությամբ կստեղծվի մրցակցություն, ինչը բնանակաբար դրական ազդեցություն կունենա այդ ոլորտում մատուցվող ծառայությունների վրա:

Դատարանները որպես կատարողական վարույթի սուբյեկտներ.

Դատարանները հանդիսանում են կատարողական վարույթի հատուկ սուբյեկտ, քանի որ վերջիններս որպես այդպիսին կատարողական վարույթում չունեն այնպիսի իշխանական լիազորություններ (կատարողական վարույթի հարուցում կամ դադարեցում, հարկադիր կատարման միջոցի ընտրություն և այլն), ինչպես դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, սակայն վերջիններիս ընձեռված են այնպիսի լիազորություններ, որոնք էականորեն տարբերվում են կատարողական վարույթի մյուս սուբյեկտներին ընձեռված լիազորություններից¹: Կատարողական վարույթը կարգավորող օրենսդրությամբ մի շարք լիազորություններ են դրված դատարանների վրա, որոնցով ապահովվում է կատարողական վարույթի պատշաճ իրականացումը:

Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի առանձին իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը հետազոտության առարկա հիմնախնդիրների համատեքստում դատարանին վերապահել է մի շարք լիազորություններ, մասնավորապես, խոսք կարող է գնալ կատարողական թերթ տված դատարանը պահանջատիրոջ կամ պարտապանի դիմումով իրավունք ունի հետաձգելու կամ տարաժամկետելու դատական ակտի կատարումը, փոփոխելու դրա կատարման եղանակն ու կարգը (հոդվ. 22), քաղաքացիապահանջատիրոջ կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց թողնելու դեպքում դատարանը կարող է այն վերականգնել (հոդվ. 23), իրականացնել վճռի կատարման շրջադարձ (հոդվ. 26) և այլ լիազորությունների մասին:

Տեսության մեջ՝ որպես կատարողական վարույթի վերահսկողության լավագույն ձևի վերաբերյալ նշվում է դատարանի՝ հարկադիր կատարողի որոշումների բողոքարկման քննության լիազորությունը²: Անշուշտ, այս կապակցությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի չորրորդ մասը սահմանում է, որ հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել հարկադիր կատարման

¹ Տե՛ս **Кузнецов Е. Н.** Исполнительное производство Франции. /Дисс. на соиск. уч. ст. канд. юриди. наук, -Екатеринбург, 2004, էջ 69:

² Տե՛ս **Воронов Е. Н.** Исполнительное производство: Заключительная стадия гражданского процесса): Учеб. пособие. -Курск, 2014, էջ 29:

ծառայության մարզային ստորաբաժանման գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան կամ վերադատության կարգով որոշումն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում:

Ոստիկանությունը որպես կատարողական իրավահարաբերության սուբյեկտ

Ոստիկանությունը, ոչ միշտ, սակայն, հաճախ, կատարողական իրավահարաբերություններում հանդես է գալիս որպես սուբյեկտ: Մասնավորապես, այս կապակցությամբ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է, որ ոստիկանությունը օրենսդրությամբ սահմանված դեպքերում պարտավոր է օժանդակել հարկադիր կատարման ծառայություններին դատական վճիռների և դատավճիռների կատարումն ապահովելիս:

Կատարողական վարույթի կողմերը

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է, որ կատարողական վարույթի կողմերն են՝ պահանջատերը և պարտապանը: Ընդ որում, պահանջատերն այն քաղաքացին կամ իրավաբանական անձն է, Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կամ օտարերկրյա պետությունը, որի օգտին կամ ի շահ որի տրվել է կատարողական թերթը: Ըստ էության անձը պահանջատիրոջ կարգավիճակ ձեռք է բերում համապատասխան կատարողական փաստաթուղթ ստանալուց հետո միայն. օրինակ՝ մինչև կատարողական թերթ ստանալը պահանջատերը անվանվում է պարտատեր պարտավորական հարաբերությունների մեջ:

Պարտապանն այն քաղաքացին կամ իրավաբանական անձն է, Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կամ օտարերկրյա պետությունը, որը կատարողական թերթի համաձայն, պարտավոր է կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ դրանց կատարումից:

Կատարողական վարույթին կարող են մասնակցել երկու և ավելի պահանջատեր կամ պարտապան: Յուրաքանչյուր պահանջատեր կամ պարտապան կատարողական վարույթում մյուս կողմի նկատմամբ հանդես է գալիս ինքնուրույն: Նա կարող է նաև կատարողական վարույթին մասնակցությունը հանձնարարել համամասնակիցներից մեկին:

Կատարողական վարույթի կողմերը իրենց իրավունքները կարող են իրականացնել ինչպես անմիջապես այնպես էլ ներկայացուցչի կողմից: Իսկ անչափահասների, անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների իրավունքները և օրինական շահերը կատարողական վարույթում պաշտպանում են նրանց ծնողները (որդեգրողները), ինամակալները կամ հոգաբարձուները, որոնք ներկայացնում են իրենց կարգավիճակը հավաստող փաստաթղթեր:

Ներկայացուցիչները հանդես են գալիս լիազորագրի հիման վրա: Ընդ որում կատարողական վարույթին մասնակցելու լիազորագիրը ներկայացուցչին իրավունք է տալիս ներկայացվողի անունից կատարել կատարողական վարույթի հետ կապված գործողություններ:

Օրենքով ամրագրվում է նաև կատարողական վարույթի կողմերի իրավահաջորդության հարցը: Մասնավորապես, կատարողական վարույթի կողմերից մեկի դուրս գալու դեպքում (քաղաքացու մահ, իրավաբանական անձի վերակազմակերպում, պահանջի զիջում, պարտքի փոխանցում) հարկադիր կատարողը պարտավոր է կատարել նրա փոխարինում՝ օրենքով, դատարանի վճռով կամ պայմանագրով որոշված իրավահաջորդով:

Ընդ որում մինչև իրավահաջորդի գործի մեջ մտնելը կատարողական վարույթի ընթացքում կատարված գործողությունները պարտադիր են իրավահաջորդի համար այնքանով, որքանով դրանք պարտադիր կլինեին իրավահաջորդի կողմից փոխարինված անձի համար:

Բանկերը որպես կատարողական իրավահարաբերության սուբյեկտներ.

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի առանձին իրավակարգավորումների համադրված վերլուծությունից բխում է, որ բանկերը որպես այդպիսին կատարողական վարույթի ընթացքում հանդես են գալիս օժանդակ սուբյեկտներ: Մասնավորապես, նշված օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանի մոտ դրամական միջոցների առկայության դեպքում պարտապանի հաշիվները սպասարկող բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը հարկադիր կատարողի որոշումը ստանալու օրվանից եռօրյա ժամկետում դրանք փոխանցում է հարկադիր կատարման ծառայության մարզային (Երևանի քաղաքային) բաժնի դեպոզիտ հաշվին:

Փորձագետները և թարգմանիչները որպես կատարողական իրավահարաբերության սուբյեկտներ.

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է, որ՝ կատարողական վարույթին կարող են մասնակցել փորձագետներ և թարգմանիչներ: Մասնավորապես, նույն օրենքի 14 և 16-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ, եթե կատարողական գործողությունների ընթացքում ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման համար հարկադիր կատարողն իրավունք ունի նշանակել փորձագետ (փորձագետներ), որի վերաբերյալ կայացնում է որոշում, ապա նույն կատարողական գործողությունների ընթացքում հայերենին չտիրապետող կողմերն իրավունք ունեն հրավիրել թարգմանիչ, որի նշանակման վերաբերյալ հարկադիր կատարողը կայացնում է որոշում:

Ընթերակաները որպես կատարողական իրավահարաբերությունների սուբյեկտներ.

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածով սահմանվում է, որ պարտապանին պատկանող, սակայն այլ անձանց կողմից զբաղեցրած բնակարանների, շենքերի և շինությունների բացման, գննության, ինչպես նաև պարտապանին պատկանող, սակայն այլ անձանց մոտ գտնվող պարտապանի գույքի առգրավման հետ կապված կատարողական գործողություններին ընթերականների մասնակցությունը պարտադիր է: Ավելին՝ հարկադիր կատարողի նախաձեռնությամբ ընթերականներ կարող են հրավիրվել նաև այլ դեպքերում:

Միաժամանակ, ընթերական կատարողական վարույթով չչահագրգրված՝ Հայաստանի Հանրապետության չափահաս քաղաքացին է, որին հարկադիր կատարողը հրավիրում է մասնակցելու կատարողական գործողությունների կատարմանը՝ հաստատելու համար դրա կատարման փաստը, բովանդակությունը, ընթացքը և արդյունքները: Ընդ որում ընթերական պետք է ունակ լինի լրիվ և ճշտորեն ընկալելու իր ներկայությամբ կատարվող գործողությունները:

Այսպիսով, կատարված ուսումնասիրության արդյունքում կարող ենք ամրագրել, որ կատարողական վարույթի սուբյեկտների իրավական կարգավիճակի բացահայտումն ունի ոչ միայն տեսական, այլ նաև գործնական նշանակություն: Մասնավորապես, արդի զարգացման միտումներն ուղղված են նրան, որպեսզի կատարողական վարույթը կատարելագործվի նաև խիստ մրցակցության միջոցով, երբ դատական ակտերի հարկադիր կատարողը օբյեկտիվ տնտեսական կանոններից ելնելով էլ է նպաստում կատարողական իրավահարաբերությունների կատարելագործմանը: Կարծում ենք, որ այս տեսանկյունից մասնավոր հարկադիր կատարողի ներմուծումը ՀՀ օրենսդրություն միայն կնպաստի այս ինստիտուտի զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին, ՀՀՊՏ 1998.06.15/12(45),
2. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է 2001թ. ապրիլի 16-ին, ՀՀՊՏ 2001.05.31/15(147) Հոդ.378,
3. **Воронов Е.Н.** Исполнительное производство: Заключительная стадия гражданского процесса): Учеб. пособие. -Курск, 2014,432 с.
4. **Гладышев С.И.** Исполнительное производство в английском и российском праве /Дисс. на соиск.уч. ст.канд. юрид.наук. -М., 2001, 368 с.
5. **Кириленко И.В., Дымкина М. Ю., Игнатенко А.А., Улетова Г.Д.** К вопросу о правовом статусе органов принудительного исполнения // Защита прав и законных интересов граждан и организаций: Материалы международной научно-практической конференции. Краснодар - Сочи, 23-26 мая 2002. - Сочи: Кубанский государственный ун-т, 2002. - Часть 1, 635 с.
6. **Кузнецов Е.Н.** Исполнительное производство Франции/ Дисс.на соиск.уч. ст. канд. юрид. наук, -Екатеринбург, 2004, 541 с.
7. **Чекмарева А.В.** Защита прав человека в исполнительном производстве/ Дисс. на соиск. уч. ст. канд. юрид. наук, -Саратов, 2003, 568 с.

ՐՈԲԵՐՏ ԿԱԶԱՐՅԱՆ

Академия государственного управления РА, соискатель

СУБЪЕКТЫ ИСПОЛНИТЕЛЬНОГО ПРОИЗВОДСТВА. ВОПРОСЫ ПРАВОВОГО СТАТУСА В УСЛОВИЯХ МОДЕРНИЗАЦИИ СОВРЕМЕННОЙ ПРАВОВОЙ СИСТЕМЫ

Предметом обсуждения в настоящей статье являются субъекты исполнительного производства. Рассматривается правовой статус службы, обеспечивающей принудительное исполнение судебных актов. Выдвигается предложение о привлечении в РА

частных лиц, обеспечивающих принудительное исполнение судебных актов, учитывая передовой опыт зарубежных стран.

ROBERT GHAZARYAN

Public Administration Academy of the RA, Applicant

THE SUBJECTS OF ENFORCEMENT LAW: ISSUES RELATED TO THE LEGAL STATUS OF LAW IN THE CONTEXT OF CONTEMPORARY LEGAL SYSTEM MODERNIZATION

Within the given article, the author discusses the subjects of the enforcement law. In particular, the legal status of the service providing the law enforcement of the judicial acts is being discussed. While taking into account the leading experience of the foreign countries, the author suggests, as a recommendation, a possible engagement of private entities as entities providing law enforcement of the judicial acts.

ՀՈՒՄԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմի
Իրավաբանական վարչության իրավաբան

ԱՆՁԻ ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՐՊԵՍ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Տեխնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը պետության առաջ դրեցին նոր խնդիրներ, այն է՝ հստակեցնել անձնական բնույթի տեղեկատվության դերը տեղեկատվական ռեսուրսների համակարգում, որը օգտագործվում է սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում, ինչպես նաև դրա պաշտպանության համար համապատասխան միջոցներ ձեռնարկել:

Այդ խնդիրների լուծումը առավել արդյունավետ իրականացնելու համար նախ անհրաժեշտ է ուսումնասիրել ամերիկյան, եվրոպական և այլ երկրների անձնական տվյալների պաշտպանության իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրական համակարգերը, որոնք՝ ի սկզբանե հանդիսանալով մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի մաս անցել են պատմական զարգացման միևնույն ուղին:

Բանալի բառեր՝ *անձնական տվյալներ, սահմանադրական իրավունք, հիմնարար իրավունք, անձնական կյանքի անձեռնմխելիություն*

Մարդու և քաղաքացու իրավունքների և հիմնարար ազատությունների ժամանակակից տեսլականը, որի մի մասը հանդիսանում է նաև անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը, ոչ միայն իրավական նորմերի այլև իրավագիտակցության պատմական զարգացման արդյունք է:

Անձնական իրավունքները, որոնց թվին դասվում են նաև անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը, տեղեկատվության ազատությունը, անձնական տվյալների պաշտպանության իրավունքը և այլն, ընդունված է դասել այսպես ասած իրավունքների առաջին սերնդին: «Անձնական իրավունքներ» հասկացությունը նշանակում է սուբյեկտի մոտ այնպիսի չափորոշիչների առկայություն, որը բնորոշում է վերջինիս ինքնությունը, ներքին, ան-

հատական ուղենիշները [1]: Բացի այդ, ինչպես պնդում է պրոֆեսոր Ի. Բերլինը, «Իրավունքների այս խմբի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն հիմնվում է նեգատիվ ազատության կոնցեպցիայի վրա, ինչը ենթադրում է ճնշման բացակայություն, սեփական ցանկությամբ գործելու հնարավորություն, չենթարկվելով որևէ մեկի, հատկապես պետության միջամտությանը» [2]:

Ամերիկյան, եվրոպական և այլ երկրների անձնական տվյալների պաշտպանության իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրական համակարգը որպես առանձին իրավունքի ինստիտուտ ձևավորվել է անցած դարի յոթանասունական թվականներից սկսած, բայց ի սկզբանե հանդիսանալով մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի մաս՝ այն անցել է պատմական զարգացման միևնույն ուղին:

Հարկ է նշել, որ եվրոպական երկրներում մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ամրապնդմանը նպաստել են դատական գործունեությունն ու դոկտրինալ աղբյուրները, քանի որ այդ իրավունքը մշտապես մեկնաբանման լայն հնարավորություններ է ընձեռել: Ի սկզբանե մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ամրագրումը սահմանադրական մակարդակում մի շարք խնդիրներ է առաջացրել հենց նորմատիվ իրավական ակտերում ճիշտ ձևակերպման բարդության պատճառով: Գուցե այդ է պատճառը, որ ինչպես անգլոսաքսոնական իրավական համակարգում, այնպես էլ ռոմանոգերմանական իրավական համակարգում մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ձևավորումը մի շարք իրավական դոկտրինաների և ինստիտուտների առաջացման պատճառ էր դարձել: օրինակ՝ ֆիզիկական մեկուսացման դոկտրինը գերմանական իրավունքում, որը պաշտպանում էր հանրային մարդկանց անձնական կյանք ներխուժումից լուսանկարահանման միջոցով, պայմանով, որ այդ մարդիկ գտնվում են առանձնացված վայրում՝ «in eine ortliche Abgeschiedenheit»: Սակայն, այս դոկտրինը քննադատության արժանացավ ՄԻԵԴ-ի կողմից «Von Hannover v. Germany» գործում[3]: Իրավական դոկտրինների նմանատիպ ձևավորումներ, զարգացումներ ու վերացումներ կարելի է տեսնել, ուսումնասիրելով մայրցամաքային իրավունքի երկրների դատական պրակտիկան, որտեղ ժամանակ առ ժամանակ ձևավորվում է այս կամ այն դոկտրինը, շատ հաճախ երբ այն նախատեսված չի լինում ազգային օրենսդրությամբ[4]:

Մասնավոր կյանքի իրավունքի առանձնահատկությունից է նաև վերջինիս հանրային և մասնավոր իրավունքների խաչմերուկում լինելու փաստը: Մասնավոր կյանքի իրավունքի ձևավորման սկզբնական փուլում այն իրավական կարգավորում էր ստանում մասնավոր իրավունքի շրջանակում, քանի որ մասնավոր կյանքի իրավունքը դիտարկվում էր հեղինակային իրավունքի, սեփականության իրավունքի և այլ իրավունքների իրացման տեսանկյունից:

Ֆրանսիան իրավամբ համարվում է այս իրավունքի առաջացման հայրենիքը: Մինչ օրս այս երկրի համար բնութագրական է անձնական կյանքի և անձնական տվյալների պաշտպանության նկատմամբ առավելագույն ուշադրությունը: Ֆրանսիայում անձնական տվյալների պաշտպանության գա-

դափարը առաջացել է 19-րդ դարի երկրորդ կեսին, սակայն 1804թ. Նապոլեոնի օրենսգրքում[5] մասնավոր կյանքի կամ անձնական տվյալների պաշտպանության հատուկ հոդվածներ նախատեսված չէին: 19-րդ դարի կեսից մարդու երեսը պատկերելու իրավունքը սկսում է գրավել ֆրանսիացի իրավաբանների ուշադրությունը: 1858թ. Ֆրանսիայում դատարանը արգելեց հայտնի դերասանուհու մահվան մահճում պատկերված կերպարի հրապարակումը առանց վերջինիս ընտանիքի հատուկ արտահայտված համաձայնության: Դատարանները առանց քննարկումների և առարկությունների դեմքի պատկերի իրավունքը ճանաչեցին բացարձակ իրավունք: Արդյունքում, անձի անվան և անձի պատկերի իրավունքը դուրս բերվեցին սեփականության իրավունքի և անձի պաշտպանության ընդհանուր սկզբունքների ոլորտից: Ֆրանսիայում մասնավոր կյանքի պաշտպանության իրավունքը քրեական իրավունքի մաս է դարձել, երբ քրեականացվել է նամակագրության գաղտնիությունը [6]:

Գերմանիայում մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանությունը որպես իրավունք ձևավորվել է 20-րդ դարի սկզբից: Օրինակ՝ 1910թ. գերմանական դատարանը պաշտպանեց հայտնի գրող Կ. Ջիպելինի անձնական տվյալների իրավունքը՝ վերջինիս պատկերը և անունը որպես թուրունի արտադրությամբ զբաղվող ընկերության առևտրային նշան օգտագործվելուց, չնայած այն հանգամանքին, որ այդ ընկերությունը հանդիսացել էր հեղինակի հովանավորը: Գերմանական դատարանների որոշումների մեծ մասը, որոնք կապված էին անձի իրեն նույնականացնելու և անձնական տվյալների իրավունքի հետ հիմնվում էին հիմնականում այս կամ այն անձնական իրավունքի վրա, որոնք ամրագրված էին 1900թ. Քաղաքացիական օրենսգրքում և 1907թ. «Պատկերի նկատմամբ հեղինակային իրավունքի մասին» օրենքում, որոնք արգելում էին անվան կամ պատկերի օգտագործումը առանց հատուկ թույլտվության [7]: Այս իրավունքները ստացան «առանձնահատուկ անձնական իրավունքներ» անվանումը, և մինչև 1950թ. քաղաքացիական իրավունքում անձի պաշտպանությունը սահմանափակված էր այս հատուկ իրավունքներով: 1954թ. Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բարձրագույն դատարանը ընդունեց «անձի պաշտպանության ընդհանուր իրավունքը», որը ցանկացած տեսակի խախտումից պաշտպանում էր մարդկային անհատի բոլոր ասպեկտները: Գերմանիայում «անձի պաշտպանության ընդհանուր իրավունք» տերմինով հասկանում են անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք [6, p.94-95.]: Այսպիսով, քաղաքացիական օրենսգրքի դրույթները, «Պատկերի նկատմամբ հեղինակային իրավունքի մասին» օրենքը և Գերմանիայի Բարձրագույն դատարանի որոշումը հիմք հանդիսացան առևտրային շահագործումից առանց անձի թույլտվության անձի պատկերի և անվան պաշտպանության համար, ընդ որում դատարանի համար առավել կարևոր էր անձի իրավունքների պաշտպանությունը քան կազմակերպության կոմերցիոն շահերը:

Անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներում ավանդաբար սահմանադրությունները մասնավոր կյանքի իրավունքի պաշտպանության

ուղղակի նորմեր չեն պարունակում: Մեծ Բրիտանիայում բացակայում է գրված Սահմանադրություն, և այդ իրավունքը պաշտպանվում է բավականին սահմանափակ ձևով՝ հիմնվելով դատական նախադեպերի վրա: Իսկ ԱՄՆ-ում անձնական կյանքի և անձնական տվյալների պաշտպանության իրավունքները դուրս էին բերվել դատական նախադեպերի միջոցով Իրավունքների մասին Բիլլի որոշ հոդվածներից, որոնք ուղղակիորեն չեն նախատեսում մասնավոր կյանքի իրավունքի նորմեր [8]:

Մայրցամաքային իրավունքի երկրներում այս հարցի միանշանակ լուծում չկա, սակայն մեծամասնությունը ընտրել է այլ ճանապարհ՝ ամրագրելով մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանության իրավունքների նորմերը երկրի հիմնական օրենքում՝ Սահմանադրությունում: Շատ հաճախ, սակայն, նման մոտեցման դեմ են արտահայտվում հատկապես անգլո-սաքսոնական իրավական համակարգի ներկայացուցիչները, պնդելով, որ «մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը» շատ լայն հասկացություն է, և դրա բնորոշման մեջ առաջանում են դժվարություններ, ուստի իմաստ չկա այդ կատեգորիան սահմանափակելու՝ այն ամրագրելով նորմատիվ իրավական ակտում: Սա այնքան էլ արդարացված մոտեցում չէ, քանի որ սահմանադրաիրավական նորմը չի ենթադրում այս կամ այն իրավունքի բովանդակության սպառիչ ամրագրում և որպես կանոն վերջնական ու հաստատական գործառույթ չի իրականացնում, և բացի այդ իրավական մեկնաբանության հետ կապված դժվարությունները կապված են ոչ միայն անձնական կյանքի իրավունքի հետ, այլև բնութագրական են այլ իրավունքների համար ևս, օրինակ՝ կյանքի իրավունքը, սեփականության իրավունքը և այլն: Դրանք բոլորը օրենսդրության մեջ ոչ սպառիչ են ամրագրված և բոլորը մեկնաբանման կարիք ունեն: Միևնույն ժամանակ հարկ է փաստել, որ դեմոկրատական երկրներում մասնավոր կյանքի իրավունքի՝ օրենքում ամրագրելու անհրաժեշտությունը ավելի շուտ հանդիսանում է այդ երկրների օրենսդրական ավանդույթի և օրենսդրական ոճի խնդիր, իսկ սահմանադրության տեքստում նման ամրագրման բացակայությունը, որպես կանոն, բացասական չի անդրադարձնում այդ իրավունքի ձևավորման վրա [9]:

Անձնական կյանքի և անձնական տվյալների պաշտպանության իրավունքները ԱՄՆ-ում իրենց դիրքերն ամրագրեցին 19-րդ դարի վերջին, և թեև սկզբում դրանք հանդիսանում էին բրիտանական քաղաքականության ժառանգության մի մաս, սակայն Մեծ Բրիտանիայի դատարանների որոշումները ԱՄՆ դատարանների որոշումների հետ համեմատած առավել կոնսերվատիվ և զգույշ էին:

Անգլոսաքսոնական իրավական համակարգում այս իրավունքների ամենից էական հատկանիշներից էր այն, որ ի սկզբանե դրանք Իրավունքների Բիլլով նախատեսված սուբյեկտիվ իրավունքների շարքում չէին և ձևավորվել են դատական նախադեպերով և իրավական դոկտրինաներով:

Այնուհետև ԱՄՆ-ի Սահմանադրության մեջ կատարվեց 4-րդ լրացումը, որը պաշտպանում էր անձի անձնական իրերն ու փաստաթղթերը կամայական ներխուժումից: Սակայն ԱՄՆ-ում անձնական կյանք ունենալու և

անձնական տվյալներ պաշտպանելու առաջին պաշտոնական հայտարարությունը կատարվել է շատ ավելի ուշ 1890 թվականին, երբ ԱՄՆ Գերագույն դատարանի դատավոր Լուիս Բրանդեյզը Ս.Դ. Ուորենի հետ համահեղինակությամբ հրատարակել էր հոդված «Փրայվեսի [10] ունենալու իրավունքի մասին» [11], որտեղ այն բնորոշվեց որպես մարդու «մենակ մնալու» իրավունք: Փրայվեսին (անգլերենից՝ Privacy- գաղտնիք, մեկուսացում, անձնական կյանք) հատուկ իրավական կատեգորիա է անգլոամերիկյան իրավական համակարգում, որը նշանակում է անձնական կյանքի գաղտնիություն և անձեռնմխելիություն, մարդու կյանքի անձնական ոլորտ: «Փրայվեսի» տերմինը հայերենում չունի իր անալոգները, հետևաբար այն նոր օգտագործվող իրավական տերմին է: Այն կարող է ունենալ մի քանի նշանակություն՝ մի դեպքում՝ անձնական կյանք, մեկ այլ դեպքում՝ անձնական կյանք ունենալու իրավունք, մեկ ուրիշ դեպքում՝ անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք և այլն: Իրապես Փրայվեսին իրավունքի կարևոր, բայց երևակայական գաղափար է [12]:

Անձնական կյանքի պաշտպանության իրավունքի ամերիկյան դոկտրինի հիմնադիրները՝ Բրանդեյզը և Ուորենը գտնում էին, որ տպագրության, լուսանկրաչության, տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց պաշտպանության ենթակա իրավական իրականության նոր ոլորտ էր ձևավորվում, որի արդյունքում կարծիքներ էին հնչում, որ անհրաժեշտ է անձնական կյանքի իրավունքի օրենսդրական պաշտպանություն և՛ մասնավոր և՛ հանրային իրավունքի շրջանակում:

Նրանք գտնում էին, որ անձնական կյանքի և անձնական տվյալների իրավունքի պաշտպանության գաղափարը առաջացել է հեղինակային իրավունքի անալոգիայից, այդ պատճառով ենթադրվում էր, որ այն պաշտպանության ենթակա չէ, եթե տեղեկատվության տնօրինողը ինքն է հրապարակում այն սեփական նախաձեռնությամբ: Սակայն շեշտվում էր այն փաստը, որ անձնական կյանք ունենալու իրավունքի գոյությունը սեփականության իրավունքի կամ հեղինակային իրավունքի շրջանակներում դիտարկելը սխալ է, քանի որ պաշտպանության ենթակա իրավունքի առարկան այս դեպքում այլ է:

Պրոֆեսոր Ս.Դ. Ուորենը և դատավոր Լ.Դ. Բրենդեյզը անձնական կյանքի գոյության մասին դատողությունները անում էին ընդհանուր իրավունքի զարգացման տեղեկանքների, այդ թվում օրինաստեղծ դատական որոշումների և դատավորների իրավական դիրքորոշումների ուսումնասիրության հիման վրա, ինչպիսին *Prince Albert v. Strange* [13] 1849թ. (գնված փորագրությունների հրապարակման արգելք) *Wyatt v. Wilson* [14] 1820թ. (պատկերի հրապարակման արգելք), *Abernethy v. Hutchinson* [15] 1825 (երրորդ անձանց կողմից կարդացած լեկցիաների հրապարակման արգելք, որպես վստահության չարաշահում), *Pollard v. Photographic Co.* 1888 [16] (լուսանկարների հրապարակման արգելք որպես վստահության չարաշահում) և այլ դատական գործերն էին:

Բրայնդեյզը և Ուորենը պնդում էին, սակայն որ Փրայվեսի ունենալու իրավունքը, ընդհանուր իրավունքի համակարգում, կարգավորվելով մտավոր սե-

փականության և ոչ գույքային իրավունքների շրջանակներում, հիմնված էր ոչ թե «մասնավոր սեփականության սկզբունքի» այլ «անձի անձեռնմխելիության սկզբունքի» վրա [12, p.205]: 1977թ.-ին Գերագույն դատարանը առաջին անգամ ճանաչեց «տեղեկատվության Փրայվեսի ունենալու իրավունքը» Վալենը ընդդեմ Ռոյի գործում [17]: Դատարանը նշում էր, որ Սահմանադրությունը պաշտպանում է անձնական իրավունքների երկու տեսակ «Առաջինը՝ անձնական տվյալների բացահայտման արգելքը և երկրորդը՝ որոշակի կատեգորիայի կարևոր որոշումներ կայացնելու անկախությունը [19, p. 599-600.^[17]]: Մյուս գործերում դատարանը հավասարակշռում էր Փրայվեսի և այլ իրավունքների համադրությունը:

Արդյունքում, ԱՄՆ-ի ընդհանուր իրավունքի կողմից ձևավորված Փրայվեսի կոնցեպցիան միջազգային պրակտիկայում այնպիսի իրավախախտումների ձևավորման հիմք դարձավ ինչպիսին են՝ անձնական կյանքին վերաբերվող փաստերի հրապարակումը, անձի անվան և ինքնության գողությունը, անձնական տարածք ներխուժումը և այլն: Սա, իհարկե, հեղափոխական քայլ էր, քանի որ մինչ այդ իրավունքը առավելապես պաշտպանում էր միայն գույքային իրավունքները և հակված չէր ընդունել բարոյական վնասի կամ ոչ գույքային իրավունքների գոյությունը:

ԱՄՆ-ի Գերագույն դատարանին պահանջվեց ավելի քան 70 տարի, որպեսզի վերջինս ճանաչեր այն սկզբունքը, համաձայն որի անձն իրավունք ունի պաշտպանելու իր անձնական կյանքը և անձնական տվյալները, եթե ապացուցի, որ այն ունենալու հիմքեր ունի: Նշված սկզբունքը ամերիկյան դատարանները ընդունեցին, որպես նախադեպային (*Meyer v Nebraska* (1923), *Buck v Bell* (1927), *Griswold v Connecticut* (1965), *Stanley v Georgia* (1967), *Katz v United States* (1967), *Buchanan v Batchelor* (1970), *Roe v Wade* (1973) և այլն) դատական գործերով [18]:

Ուսումնասիրելով մասնավոր, անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի և անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ձևավորման փուլերը, պատմական զարգացման հիմնական ուղղություններն ու խնդիրները գալիս ենք հետևյալ եզրահանգման.

Առաջինը, անգլսաքսոնական և մայրցամաքային իրավական համակարգերում մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի բնորոշման և օրենսդրական ամրագրման մոտեցումները միմյանցից նշանակալի տարբերվում են: Անգլսաքսոնական իրավական համակարգի երկրներում ավանդաբար Սահմանադրությունները մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի կամ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ուղղակի սահմանում չունեն: Մեծ Բրիտանիայում բացակայում է գրված Սահմանադրությունը և այդ իրավունքները պաշտպանության են ենթարկվում դատական նախադեպերի հիման վրա բավականին սահմանափակ ձևով, իսկ ԱՄՆ-ում այդ իրավունքները դուրս են բերվում Իրավունքների մասին Բիլլի մի շարք հոդվածների դատական մեկնաբանություններից: Իսկ մայրցամաքային իրավունքի երկրներում այս հարցի միաձայն լուծում բացակայում է, սակայն այս երկրների մեծամասնությունը այլ մոտեցում է որդեգրել, այն է՝

մասնավոր կյանքի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանության իրավունքների ամրագրումը հիմնական օրենքում՝ Սահմանադրությունում: Սա հատկապես բնորոշ է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընդունված սահմանադրություններին:

Երկրորդ, անգլաաքսոնական իրավական համակարգի երկրների ներկայացուցիչները, որոնք դեմ են մասնավոր կյանքի անձեռնմխելիության կամ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի սահմանադրական ամրագրմանը, պնդում են, որ «մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունք» հասկացությունը բավականին լայն է, իսկ դրա բնորոշումը՝ բավականին բարդ, հետևաբար իմաստ չունի այդ իրավունքը սահմանափակել՝ ամրագրելով այն նորմատիվ իրավական ակտում: Մինչդեռ նման մոտեցումը այնքան էլ արդարացված չէ, քանի որ սահմանադրական իրավական ակտը չի ենթադրում այս կամ այն իրավունքի բովանդակության սպառիչ ամրագրում՝ դրա մանրամասն կարգավորումը նախատեսելով առանձին օրենսդրական ակտում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Гаврилов О.А.** Информационное право России// Вестник Академии Наук. -2005. -Том 75 N 4. С. -323
2. **Берлин И.** Две концепции свободы// Современный либерализм. -М., 1998. С. - 19-20
3. **Головистикова А.Н., Грудцына Л.Ю.** Указ. соч. 10 , Von Hannover v. Germany. Application No 59320/00, Judgment of 24 June 2004.
4. **Хужокова И.М.** Право на частную жизнь в континентальной Европе // Журнал зарубежного законодательства и сравнительного правоведения. -2010. No 4.- С. 62-69.
5. Французский гражданский кодекс: Учебн.-практич. комментарий. М.: Проспект, 2008.
6. **Beverly-Smoth H., Ohly A., Lucas-Schloetter A.** Privacy, Propriety and Personality. Civil Law Perspectives on Commercial Appropriation. Cambridge University Press, 2005. P. 147-148.
7. **Волтерс Клувер,** Гражданское уложение Германии. Вводный закон к Гражданскому уложению. Пер. с нем. / Науч. ред. А.Л. Маковский и др. М.: 2004; Alfred Kommentar zu dem Gezetze Betreffend das Urheberrecht an Werken der bildenden Kunst und der Photographie, 1908. S. 15.
8. Constitution of United States. New York, 1992, Commonwealth of Australia Constitution ACT (Constitution) 9th July 1900. С. 1263.
9. **Хужокова И.М.** Право на неприкосновенность частной жизни в англосаксонской правовой системе (на примере США и Великобритании) // Журнал зарубежного законодательства и сравнительного правоведения. 2009. No 4. С. 36 – 43.
10. **Волосова М.Е.** и др. Большой юридический словарь, -М., -2006
11. **Samuel D. Warren & Louis D. Brandeis.** The Rights to Privacy// Harvard Law Revue. 1890. Vol. 193. N 4, P. 193-220
12. **Jean Slemmons Stratford & Juri Stratford,** Data Protection and Privacy in the United States and Europe, 1998 p 17
13. **Bently, Lionel,** Prince Albert v Strange (1849), in: Mitchell, Charles/Mitchell, Paul Mitchell (Ed.), Landmark Cases in Equity 2012, p.235–267.

14. **Megan Richardson**, University of Melbourne, Cambridge University Press, 2017 pp 132-135
15. H&Tw 28, [1825] EngR 653,
<http://www.commonlii.org/uk/cases/EngR/1825/653.pdf> վերջին այցելություն 12.02.2018թ.):
16. Pollard v. Photographic Co. (1888) 40 Ch. D. 345.
17. Whalen v. Roe, 429 U.S. Reports (February 22, 1977), 589-604.
18. **Fisher L.** American Constitutional Law. N. Y., 1990. P. 1143-1157.

ЛУСИНЕ МИНАСЯН

Юридическое управление аппарата
 Контрольной палаты Республики Армения, юрист

**ПРАВО НА НЕПРИКОСНОВЕННОСТЬ ЧАСТНОЙ ЖИЗНИ КАК ИСТОРИЧЕСКАЯ
 ОСНОВА ДЛЯ ПРАВА НА ЛИЧНЫЕ ДАННЫЕ**

Развитие индустрии информационных технологий и коммуникаций создало новые проблемы для государств - определение роли персональной информации в системах хранения данных, которая используется на разных уровнях нашей общественной жизни, а также принятие мер для ее защиты.

Для эффективного решения этих проблем, в первую очередь, необходимо рассмотреть законодательные системы защиты данных американских, европейских и других государств, которые, являясь частью права на неприкосновенность частной жизни, имеют одинаковую историческую основу.

LUSINE MINASYAN

Lawyer at the Legal Department of the
 Control Chamber of the Republic of Armenia

**THE RIGHT TO INVIOABILITY OF PRIVATE LIFE AS A HISTORICAL FOUNDATION
 FOR THE RIGHT TO PROTECTION OF PERSONAL DATA**

The development of technology and communication industry created new problems for the states, that is to define the role of personal information in the data store systems, which is used in the different levels of our social life, as well as to take measures for its protection.

For the effective solution of these problems first of all it is necessary to examine American, European and other states' data protection legal systems, which being part of the right to inviolability of private life had the same historic base.

ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Եվրոպական կրթական ակադեմիայի
 իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

**ՀՈԳԵԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ
 ՍԱՀԱՄԱՆԱՐԴԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ**

Հոդվածում տարբեր իրավաբանական ուժ ունեցող փաստաթղթերի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի ուսումնասիրության լույսի ներքո ներկայացվել են հոգեկան անձեռնմխելիության իրավունքի երաշխավորման կառուցակարգերին առնչվող մի շարք արդիական հիմնահարցեր: Անդրադարձ է կատարվել նաև նշված իրավունքի երաշխա-

վորման քաղաքացիաիրավական, վարչաիրավական և քրեաիրավական կառուցակարգերին: Բացի այդ, առանձին քննարկման առարկա են դարձվել հոգեկան խանգարումներ ունեցող անձանց հոգեկան անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

Իրականացված վերլուծության հիման վրա կատարվել են որոշ տեսական ընդհանրացումներ և ներկայացվել են գիտագործնական բնույթի մի շարք առաջարկություններ:

Հանգուցային բառեր՝ հոգեկան անձեռնմխելիության իրավունք, հոգեկան առողջություն, հաշմանդամություն ունեցող անձ, ոչ նյութական բարիք, վնասի հատուցում, հանրային իշխանություն

Սահմանադրական վերջին բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 25-րդ հոդվածով ուղղակիորեն ճանաչվեց հոգեկան անձեռնմխելիության իրավունքը, սակայն հոգեկան անձեռնմխելիության իրավունքի ճանաչումը բավարար չէ իրավունքը երաշխավորելու համար, անհրաժեշտ է նաև ամրագրել և իրականում կյանքի կոչել այդ իրավունքի երաշխավորման կառուցակարգերը՝ հաշվի առնելով Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջը, ըստ որի՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս, օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, և 81-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, ըստ որի՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում ՀՀ վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Հոգեկան անձեռնմխելիության երաշխավորումը ներառում է միջոցառումների ողջ համալիր, որն ուղղված է անհատի հոգեկան և բարոյական առողջությունը, մարդու գիտակցության մտավոր և կամային ոլորտները ոտնձգություններից պաշտպանելուն [1]: Գրականության մեջ արդարացիորեն նշվում է, որ անհատի իրավունքների և ազատությունների իրացման հիմնախնդիրը չի կարող դիտարկվել բացառապես ձևական-իրավաբանական տեսանկյունից: Այստեղ առանձնակի կարևորություն են ստանում քաղաքական, տնտեսական, բարոյահոգեբանական, կազմակերպչական, սոցիալ-հոգեբանական և այլ բնույթի գործոնները, որոնցով էլ մեծամասամբ պայմանավորված են իրավունքների և ազատությունների իրացման գործընթացը, արդյունքն ու արդյունավետությունը [2]:

Անձնական անձեռնմխելիության իրավունքի իրացման ապահովումը ներառում է այդ իրավունքի պահպանման և պաշտպանության, ինչպես նաև դրա երաշխավորման միջոցներ:

Հոգեկան անձեռնմխելիության իրավունքի իրացման երաշխավորման գործում պետությունն ունի առանցքային դեր, ինչին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Բրիտանական Կոլումբիայի վերաբնիչ դատարանի նախագահը, համաձայն չլինելով դատարանի դիրքո-

րոշման հետ, ըստ որի՝ թեև քրեական օրենսգրքի 241-րդ հոդվածի գործողությունը գրկում է մարդուն իր անձնական անձեռնմխելիության իրավունքից, այնուամենայնիվ, չի հակասում բարձրագույն արդարադատության սկզբունքներին, հանգել է հետևության, որ արգելքի ամրագրումով, որի հետևանքով անձի ֆիզիկական և հոգեկան տառապանքները երկարաձգվում են, պետությունն առերևույթ (*prima facie*) թույլ է տվել անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտում: Նրա կարծիքով, իրավունքի ցանկացած նորմ, որը ենթադրում է անորոշ ժամանակով մարդուն, որը շուտով մահանալու է, անիմաստ ֆիզիկական և հոգեկան տառապանքների պատճառով, որևէ դեպքում չի կարող դիտարկվել որպես արդարադատության բարձրագույն սկզբունքներին համապատասխանող [3]:

Այս գործի շրջանակներում որպես պատասխանող հանդես եկող պետությունը պնդել է, որ մասնավոր կյանքի իրավունքը չի կարող ներառել ուրիշի օգնությամբ մահանալու իրավունքը, քանի որ նման մոտեցումը կգոյացներ այն պաշտպանությունը, որը, ըստ հեղինակների մտադրության, պետք է տրամադրի Կոնվենցիան: Եվրոպական դատարանը գտնում է, որ իր հայեցողությամբ սեփական կյանքը կառուցելու ունակությունը կարող է ներառել նաև այնպիսի գործողություններ ձեռնարկելու հնարավորություն, որոնք համարվում են ֆիզիկապես և հոգեպես վնասակար կամ վտանգավոր այն անձանց համար, ովքեր դրանք իրականացնում են: Հարցն այն է, թե պետությունն ինչ չափով կարող է դիմել հարկադրանքի կամ քրեաիրավական միջոցների, որպեսզի մարդկանց պաշտպանի այն կենսառճի հետևանքներից, որը մարդիկ են ընտրել իրենց համար. խնդիրը քննարկվում է և՛ բարոյականության, և՛ իրավական կանոնակարգումների տեսանկյունից:

Նշված իրավունքին միջամտությունը հաճախ պետության կողմից մարդու մասնավոր և անձնական ոլորտ ներխուժում դիտարկելու պատճառով վեճերն ավելի են թեժանում: Մակայն, նույնիսկ այն դեպքերում, երբ այս կամ այն գործողությունն իրենից վտանգ է ներկայացնում մարդու առողջության կամ, հնարավոր է, կյանքի համար, կոնվենցիոն մարմինների պրակտիկայում ենթադրվում է, որ պետության կողմից հարկադրանքի կամ քրեաիրավական միջոցների ձեռնարկումն իրենից ներկայացնում է պետության կողմից դիմումատոհի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների իմաստով անձնական կյանքին միջամտություն և իշխանություններից պահանջում է արդարացնել նման միջամտությունը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթների տեսանկյունից: Դատարանը, գործերից մեկի [4] հանգամանքներից ելնելով, կրկնել է, որ իշխանությունները պարտականություն ունեն պաշտպանելու ազատությունից գրկված անձանց առողջությունը: Մասնավորապես՝ պարտավոր են հոգեկան հիվանդություն ունեցող անձի դեպքում վերաբերմունքը կամ պատիժը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի չափանիշներին համապատասխանությունը գնահատելիս հաշվի առնել նրանց խոցելիությունը և նրանց անընդունակությունը:

Հոգեկան հիվանդություն ունեցող անձի նկատմամբ վերաբերմունքը կարող է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի չափանիշներին չհամապատասխանել

մարդկային արժանապատվությունը պաշտպանելու տեսանկյունից, եթե նույնիսկ անձը չկարողանա կամ ունակ չլինի մատնանշելու որևէ հատուկ բացասական գործողություն: Դիմումատուի առողջության նկատմամբ մշտադիտարկման արդյունավետ միջոցի բացակայությունը, ինչպես նաև ուշացած կարգապահական միջոցների կիրառումը, որոնք կարող էին վտանգ ներկայացնել նրա ֆիզիկական և հոգեկան կայունության համար, չեն կարող համապատասխանել հոգեկան հիվանդություն ունեցող անձի նկատմամբ հարգանքից բխող չափանիշներին: Իր որոշումներից մեկում անդրադառնալով երկրից արտաքսման ժամանակ անձի հոգեկան անձեռնմխելիության խախտմանը՝ Դատարանը գտել է, որ գործի հանգամանքների շրջանակներում արտաքսումն էականորեն չի ազդում անձի հոգեկան անձեռնմխելիության վրա այն աստիճան, որ դիտարկվի Կոնվենցիայի 8-րդ հոդվածի լույսի ներքո: Եթե նույնիսկ ենթադրվի, որ նման իրավիճակում երկրից արտաքսելը միջամտություն է մասնավոր կյանքին, Դատարանը գտնում է, որ այն կարող է արդարացվել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆի պահանջների տեսանկյունից, մասնավորապես՝ օրենքով նախատեսված միջոց է, որը նպատակ է հետապնդում պաշտպանել պետության տնտեսական բարեկեցությունը և կանխել հանցագործությունները, ինչպես նաև այս նպատակներից ելնելով, անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում [5]:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի [6] «Անձի անձեռնմխելիությունը» վերտառությամբ 17-րդ հոդվածի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր անձ մյուսների հետ հավասար հիմունքներով ունի հարգանքի իրավունք իր ֆիզիկական և մտավոր անձեռնմխելիության նկատմամբ:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի կողմից ընդունվում է, որ «հոգեկան հիվանդություն» ունեցող անձինք (անվանվում են «հոգեւոցիալական հաշմանդամություն» ունեցող) հանդիսանում են Կոնվենցիայով ամրագրված իրավունքների կրողներ:

«Հոգեկան հիվանդություն» ունեցող բոլոր անձանց «հաշմանդամություն» ունեցող համարելու հարցը շարունակում է լինել գիտական բանավեճերի առարկա:

Ավելի շատ փիլիսոփայական և հասարակագիտական խնդիրներ են առաջ գալիս, երբ փորձ է արվում հստակեցնել, թե ինչ է նշանակում համատեղել հոգեկան առողջության և հաշմանդամության ոլորտները (և հոգեկան առողջության քաղաքականությունն ու հաշմանդամության քաղաքականությունը) [7]:

Նշված Կոնվենցիայի «Առողջությունը» վերտառությամբ 25-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները գիտակցում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն առողջապահական ամենաբարձր չափորոշիչներին հասնելու իրավունք՝ առանց հաշմանդամության պատճառով խտրականության: Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք մատչելի կերպով օգտվեն առողջապահական այնպիսի ծառայություններից, նաև՝ առողջության

վերականգնողական միջոցներից, որոնք հաշվի են առնում գենդերային առանձնահատկությունները:

Հոգեկան անձեռնմխելիության իրավունքի օբյեկտ է հանդիսանում պետության կողմից երաշխավորված՝ մարդու հոգեկան անվտանգությունը, որը ներառում է հանրային իշխանության մարմինների, դրա պաշտոնատար անձանց կամ այլ անձանց կողմից այդ իրավունքին միջամտելու արգելքը, կանխումը և դրա համար պատասխանատվությունը՝ բացառությամբ սահմանադրությամբ նախատեսված դեպքերի և կարգի: Հոգեկան անձեռնմխելիության իրավունքի կրող է հանդիսանում յուրաքանչյուր ոք՝ անկախ տարիքից, քաղաքացիությունից, ազգությունից կամ ցանկացած այլ հանգամանքից:

Քննարկվող իրավունքի իրացման երաշխավորումն ապահովվում է ոչ միայն սահմանադրական իրավունքի նորմերով, այլ նաև քրեական իրավունքի, քրեադատավարական իրավունքի, քաղաքացիական իրավունքի և վարչական իրավունքի նորմերով:

Քաղաքացիական իրավունքում հոգեկան անձեռնմխելիությունը դիտարկվում է որպես ոչ նյութական բարիք, որը մարդուն պատկանում է ծննդյան պահից:

Օրինակ՝ բարոյական վնասի փոխհատուցումը: Բարոյական վնասի փոխհատուցումը քաղաքացիական իրավունքների պաշտպանության ինքնուրույն միջոց է:

Բարոյական վնասի փոխհատուցման նորմեր նախատեսված են իրավունքի նաև այլ ճյուղերում: Բարոյական վնասի փոխհատուցումը չի կարելի նույնականացնել գույքային պատասխանատվության հետ, քանի որ փոխհատուցման նպատակը ոչ թե տուժողի դրամական կորուստների փոխհատուցումն է, այլ բարոյական վնասի հարթումը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է ոչ նյութական բարիքների հասկացությունը, ըստ որի՝ անձի կյանքը և առողջությունը, արժանապատվությունը, անձնական անձեռնմխելիությունը, պատիվն ու բարի անունը, գործարար համբավը, մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը, անձնական ու ընտանեկան կյանքի գաղտնիությունը, ազատ տեղաշարժվելու, բնակվելու և գտնվելու վայր ընտրելու իրավունքը, անվան իրավունքը, հեղինակության իրավունքն ու քաղաքացուն ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող այլ անձնական ոչ գույքային իրավունքները և ոչ նյութական բարիքներն անօտարելի են ու անփոխանցելի, իսկ նույն օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հասկացության համաձայն՝ օրենսգրքի իմաստով ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող նյութական կամ ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող կամ նրա անձնական գույքային կամ ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածը կարգավորում է ոչ գույքային վնասի հատուցման հիմքերի և կարգի հետ կապված իրավահարաբերությունները, մասնավորապես՝ նշված հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ ոչ իրավաչափ վարչարարու-

թյամբ ֆիզիկական անձի ազատությունը սահմանափակելու, նրա անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելու, նրա պատիվը, բարի համբավը կամ արժանապատվությունն արատավորելու միջոցով ոչ գույքային վնաս պատճառելու դեպքերում այդ անձն իրավունք ունի պահանջելու դրամական միջոցներով հատուցում կամ առաջացած հետևանքների վերացում՝ պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափով:

Անհրաժեշտ է նշել, որ հիշատակված իրավական նորմերում կիրառվում է «անձեռնմխելիություն» եզրույթը, ինչը համահունչ չէ Սահմանադրության տեսքստին, քանի որ Սահմանադրությունը չի նախատեսում անձնական անձեռնմխելիության իրավունք: Անձնական անձեռնմխելիության իրավունքի փոխարեն ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք նախատեսելը կբերի նրան, որ ժամանակի ընթացքում օրենսդրական զարգացումների և իրավակիրառ պրակտիկայի արդյունքում կհստակեցվի հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանները և բովանդակությունը կազմող իրավագործությունների շրջանակը: Ուստի, օրենսդրական փոփոխությունների միջոցով անհրաժեշտ է ամրագրել ոչ թե անձնական անձեռնմխելիության իրավունք, այլ հոգեկան անձեռնմխելիության իրավունք, իսկ գործընթացներն այնպես կարգավորել, որ օրենքը բավարարի իրավունքի գերակայության սկզբունքի մաս կազմող իրավական որոշակիության սկզբունքին:

Հոգեկան անձեռնմխելիության իրավունքի իրացման երաշխավորման գործընթացում առանցքային նշանակություն ունի այդ իրավունքի խախտման առավել հանրորեն վտանգավոր տեսակները որպես քրեորեն պատժելի արարքներ ամրագրելը:

Քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է օրենսգրքի նպատակը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը ծառայում է մարդու ֆիզիկական, հոգեկան, նյութական, էկոլոգիական և այլ անվտանգությունն ապահովելուն: 45-րդ հոդվածն էական երաշխիք է նախատեսում հոգեկան անձեռնմխելիության երաշխավորման տեսանկյունից, քանի որ հոգեկան հարկադրանքի հետևանքով իր գործողությունները (անգործությունը) ղեկավարելու կարողությունից զրկված անձի կողմից քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը չի համարվում հանցագործություն: Բացի այդ, հոգեկան անձեռնմխելիության իրավունքի տարբեր միջամտությունները կարող են տարբեր իրավական հետևանքներ առաջացնել քրեական իրավունքում: Մասնավորապես՝ եթե անձը հանցանքը կատարել է սպառնալիքի ազդեցության տակ, ապա դա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է:

Հոգեկան անձեռնմխելիության իրավունքի մաս կազմող հոգեկան առողջության հետ կապված հասարակական հարաբերությունները կարգավորվում են բժշկական իրավունքի նորմերի միջոցով: Մասնավորապես՝ «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի [9] նախաբանում նշվում է, որ օրենքը կարգավորում է մարդու հիմնարար անձնական բարիք համարվող հոգեկան առողջության, հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավունքների

պաշտպանության հետ կապված հարաբերությունները, կանոնակարգում է հոգեկան առողջության ոլորտում միջազգային իրավունքի նորմերով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայով և Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների ու ազատությունների իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծման գործընթացները: Ցանկանում ենք անդրադառնալ նշված օրենքի 3-րդ հոդվածում տեղ գտած հասկացություններից երկուսին, մասնավորապես՝ հոգեկան առողջությանը և հոգեկան առողջության պահպանմանը: Հոգեկան առողջությունը մարդու անօտարելի և անփոխանցելի ոչ նյութական բարիք է, որը ներառում է շրջակա միջավայրի համապատասխան ընկալումը, որոշումներ կայացնելու ու իրագործելու ունակությունը, կայուն հուզականության դրսևորումը և պահպանումը, իսկ հոգեկան առողջության պահպանումը մարդու հոգեկան առողջության ոլորտում հոգեկան խանգարումների կանխարգելումն է և այդ նպատակով համապատասխան աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը: Հոգեկան առողջության սահմանման մեջ ներառված իրավագործությունների շրջանակը համընկնում է հոգեկան անձեռնմխելիության իրավունքի իրավագործությունների շրջանակի հետ, չնայած որ հոգեկան առողջությունը հոգեկան անձեռնմխելիության իրավունքի բաղկացուցիչ մաս է, այլ ոչ թե համարժեք հասկացություն: Բացի այդ, հոգեկան առողջության պահպանումը հոգեկան առողջության ոլորտում հոգեկան խանգարումների կանխարգելումն է և այդ նպատակով համապատասխան աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, որի շրջանակներից դուրս է մնում հոգեկան առողջության վրա հոգեկան խանգարումներից բացի այլ ազդեցությունները հանրային իշխանության մարմինների կամ այլ անձանց կողմից:

Հետևաբար՝ տվյալ գործընթացի տեսանկյունից պետք է լինի ոչ թե հոգեկան առողջության պահպանում, այլ հոգեկան խանգարումների կանխարգելում:

Ամփոփելով իրականացված վերլուծությունը՝ գտնում ենք, որ հոգեկան անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ հարգանքը և պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են, որոնցից բխում են առնվազն հետևյալ պարտականությունները.

- հոգեկան անձեռնմխելիության իրավունքի նպատակն է ապահովել պետության կողմից երաշխավորված՝ մարդու հոգեկան անվտանգությունը, որը ներառում է հանրային իշխանության մարմինների, դրա պաշտոնատար անձանց կամ այլ անձանց կողմից այդ իրավունքին միջամտելու արգելքը, կանխումը և դրա համար պատասխանատվությունը՝ բացառությամբ սահմանադրությամբ նախատեսված դեպքերի և կարգի,

- հանրային իշխանության մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ հոգեկան անձեռնմխելիության բովանդակությունը կազմող իրավագործություններից որևէ մեկին միջամտելուց՝ բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված սահմանափակման դեպքերի, և այն չափով, ինչ չափով, որ թույլ է տալիս համաչափության սկզբունքը,

- հանրային իշխանությունը պարտավոր է արդյունավետ ընթացակարգեր և կառուցակարգեր ամրագրել, որոնք և օրենսդրական մակարդակում, և գործնականում կերաշխավորեն, որ ցանկա-ցած անձ ձեռնպահ մնա հոգեկան անձեռնմխելիության բովանդակու-թյունը կազմող իրավագործություններից որևէ մեկին միջամտելուց,

- հանրային իշխանությունը պարտավոր է իրավական արդյունավետ միջոցներ ստեղծել հոգեկան անձեռնմխելիության իրավունքի ոչ իրավաչափ միջամտությունը կասեցնելու, իսկ արդեն խախտված իրավունքի դեպքում՝ դրա արդյունավետ վերականգնումը և դրա արդյունքում պատճառված վնասի, ներառյալ՝ ոչ գույքային վնասի փոխհատուցումը երաշխավորելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կախված անձի անհատական պատմությունից ներոզ հրահրող գործոնը, այսինքն չլուծված կոնֆլիկտը, կամ փոխակերպված ապրումը պետք է փնտրել ինչպես մանկության այնպես էլ հասունության շրջափուլում, որի նորովի ապրումը կամ լուծման հնարավորության ելքը, արդեն իսկ նախապայման է լավացման: Ներոզների դրսևորումները կարող են նման լինել, բայց զարգացման իրավիճակը յուրովի: Հոգեթերապիայի արդյունավետությունը բարձր է լինում, երբ հաշվի առնելով այս ամենը ցուցաբերվում է յուրաքանչյուր այցելուին իր առանձնահատկություններին և պատմությանը բնորոշ թերապևտիկ ուղղություն և մեթոդ, ինչպես նաև, միառժամանակ կիրառվող մոտեցումները և ուղղությունները կոմբինացված են որևէ մեկի գերակշռությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հիվանդությունների միջազգային դասակարգում-10: Հոգեբանական և վարքային խանգարումների դասակարգում, կլինիկական նկարագրություն և ախտորոշման ցուցումներ.-Եր., Զանգակ-97, 2001.- 264 էջ
2. **Аарон Бек, А. Раш, Б. Шо, Г. Эмери** , Когнитивная терапия депрессии , 2003.- стр. 304
3. **Бурлачук Л. Ф., Кочарян А. С., Жидко М. Е.** Психотерапия: учебник для вузов.3-е изд. -СПб.: Питер ,2012. – 496 с
4. **Зигмунд Фрейд.** Введение в психоанализ: [перевод с немецкого]/– Москва: Издательство «Э», 2017.- 608 с.
5. **Карен Хорни,** Невротическая личность нашего времени: Издательство Академический Проект, 2009.- стр. 208
6. **Мясищев В. Н.** Некоторые проблемы нервно-психической гигиены в ближайшей семилетке. В кн.: Вопросы психиатрии и невропатологии, в. VI. Л., 1959. .- стр. 421
7. **Свядоц А.М.** - Неврозы и их лечение: Издание второе.: Издательство «Медицина» Москва: 1971.- стр. 301

ՆԱԻՐԱ ԱԿՕՍՅԱՆ

доктор психологических наук,
профессор

ԼԻԼԻՏ ԽԱՇԱՏՐՅԱՆ

ПСИХОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ ПРОБЛЕМЫ НЕВРОЗА И ПРИМЕНЕНИЯ ПСИХОТЕРАПЕВТИЧЕСКИХ НАПРАВЛЕНИЙ

В статье представлены и обсуждаются различные психологические интерпретации и механизмы невроза. Представлены и обсуждены более эффективные прикладные подходы к психотерапии.

NAIRA HAKOBYAN

International Scientific-Educational Center of the National Academy of Sciences

Doctor of Psychological Sciences, Professor

LILIT KHACHATRYAN

Psy-life Psychological Support Center

PSYCHOLOGICAL ANALYSIS OF THE PROBLEM OF NEUROSIS AND THE APPLICATION OF PSYCHOTHERAPEUTIC APPROACHES

The article presents and discusses various psychological interpretations and neurosis mechanisms. More effective applied psychotherapeutic approaches are introduced and analyzed.

ՄԵԼՍ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Խ. Աբովյանի անվ.ՀՊՄՀ հոգեբանության ամբիոն

ԼԻԼԻԹ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,

Խ. Աբովյանի անվ.ՀՊՄՀ հոգեբանության ամբիոն

ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Խ. Աբովյանի անվ.ՀՊՄՀ հոգեբանության ամբիոնի ասպիրանտ

**ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հոդվածում քննարկվում են կենսագործունեության անբարենպաստ պայմաններում սովորողների հոգեբանական անվտանգության համակարգերի հոգեֆիզիոլոգիական փոփոխությունների առանձնահատկությունները: Հետազոտական ճանապարհով բացահայտվել են անձի հոգեբանական անվտանգության ապահովման ֆունկցիոնալ կախվածության պատճառականությունները՝ անձի առողջական, հուզական, զգայաշարժական, հոգեկան աշխատունակության առանձնահատկություններից:

Հանգուցային բառեր՝ հոգեբանական անվտանգություն, ֆունկցիոնալ վիճակ, ֆունկցիոնալ համագործակցություն, հոգեկան աշխատունակություն, հոգեկան հավասարակշռություն:

Վերջին տասնամյակներում ՀՀ տեղի ունեցած սոցիալ-տնտեսական, քաղաքական փոփոխությունները, հարևանների հետ հարաբերությունների լարվածությունը, գործազրկությունն ու բազմաթիվ մարտահրավերներ ազգաբնակչության լայն զանգվածների, հատկապես սովորողների հոգեբանական անվտանգության ապահովվածության առումով հանդիսանում են լուրջ սպառնալիքներ: Հոգեբանական անվտանգության զգացումը անձի բազային պահանջունքներից մեկն է, նրա ամբողջականության պահպանման, հոգեկան առողջության ցուցանիշներից մեկը: Հոգեբանական անվտանգությունը անձի բազմակողմանի ապահովվածության, պաշտպանվածության զգացումն

է, կայուն մտահոգությունների, վախերի բացակայություն, ընդհանուր և հոգեկան առողջության օպտիմալ դրսևորում, գործունեության արդյունավետություն, երջանիկ կյանքի զգացում [1, էջ 57]: Հոգեբանական անվտանգությունը հոգեֆիզիոլոգիական փխրուն վիճակ է և ուղիղ կախվածություն ունի անձի հոգեկան առողջության բնութագրից: Ցանկացած իրադրությունում, առավել ևս անձի համար ճգնաժամային, արտակարգ իրավիճակներում հոգեկան առողջության հոգեֆիզիոլոգիական բնութագրերի փոփոխությունները պայմանավորված են զանազան վնասվածքների, իրադարձությունների, հիվանդությունների ազդեցություններով: Այդպիսի դրսևորումները գնահատվում են որպես հետվնասվածքային սթրեսային խանգարումներ (ՀՎՄԽ) Posttraumatic Stress Disorder (PTSD) [1, 4, 5]: Հարկ է նշել, որ ՀՎՄԽ-ների վտանգավորությունը դրանց թաքնված լինելու մեջ է, որը միջնորդավորված դրսևորվում է օրգանիզմի զգայական, ճանաչողական, ֆունկցիոնալ մակարդակներում: ՀՎՄԽ - ները անձի հոգեբանական անվտանգության ապահովվածության սուբյեկտիվ զգացման կորստի հիմնական պատճառներից մեկն են [1, 7]: Այդ երևույթները առավել ցայտուն դրսևորվում են սովորող պատանիների և երիտասարդների շրջանում:

Արցախյան հերոսամարտերից մինչ օրս հայտնի պատճառներով ՀՎՄԽ-ները դրսևորվում են սահմանամերձ գոտու, ինչպես նաև քաղաքաբնակ մարդկանց լայն զանգվածների շրջանում [1, 6, 10]: Հոգեբանական անվտանգության, առավել ևս սթրես գործոններին դիմակայման առումով՝ առանձնապես ապահովված չեն նաև սովորող պատանիներն ու երիտասարդները: ՀՀ տարբեր տարածաշրջաններից մայրաքաղաքի և կենտրոնական քաղաքների բուհերում սովորող պատանիների ու երիտասարդների մի մասը չի տիրապետում քաղաքային ապրելակերպին: Մյուս կողմից՝ քաղաքային վախերի պայմաններում նրանք մշտապես գտնվում են հոգեբանական լարվածության, անհարմարվածության, ուսումնական ու կենցաղային սթրեսի վիճակում [3, 8, 10]:

Ինչպես ցույց են տալիս մասնագիտական գրականության վերլուծություններն ու էքսպերտ հարցման արդյունքները, կենսագործունեության անբարենպաստ պայմաններում ապրող սովորողների հոգեբանական անվտանգության բնութագրերը գտնվում են դինամիկ փոփոխության վիճակում [2, 3, 5, 7]: Հաշվի առնելով նման պայմաններում սովորողների հոգեբանական անվտանգության սուբյեկտիվ զգացման իրողությունն ու հոգեֆիզիոլոգիական կառույցների համագործակցված դրսևորման անհրաժեշտությունը, նպատակ ենք դրել հետազոտել կենսագործունեության անբարենպաստ պայմաններում սովորողների անձի հոգեբանական անվտանգության համակարգի գործառնական փոփոխությունների առանձնահատկությունները:

Սովորողների հոգեբանական անվտանգության հիմնախնդրի ուսումնասիրման նկատմամբ ունեցել ենք համալիր մոտեցում՝ առաջնությունը տալով անձի առողջական, զգայաշարժական, հուզական, հոգեկան աշխատունակության և գործառութային այլ առանձնահատկությունների հետազոտմանը, որում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. կրթական համակարգի առանձնահատկությունների, առկա և հավանական սպառնալիքների, վտանգների, դրանց առանձնահատկությունների ուսումնասիրում, ազդեցության հոգեֆիզիոլոգիական հետևանքների բացահայտում,

2. մայրաքաղաքում և ՀՀ տարբեր շրջաններում ապրող սովորողների ապրելակերպին զուգակցվող իրական և հավանական վտանգների, սպառնալիքների, ընդհանուր և հոգեկան առողջության փոփոխությունների, օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակների ձևափոխման առանձնահատկությունների ուսումնասիրում:

Հետազոտությանը մասնակցել են ՀՀ Տավուշի մարզի տարբեր դպրոցներում սովորող 15-17 տարեկան ավագ դպրոցի 20 աշակերտներ, ինչպես նաև ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի 20 ուսանողներ: Ընտրված համակազմում ընդգրկված պատանիներն ու կազմել են հետազոտության հիմնական խումբը: Ստուգիչ խմբում ընդգրկվել են Երևանի դպրոցներում սովորող 20 աշակերտներ, ինչպես նաև ՀՊՄՀ-ի հոգեբանության ֆակուլտետում սովորող Երևանաբնակ 20 ուսանողներ: Խմբերում հավասարապես պահպանվել է տղաների և աղջիկների քանակությունը: Ընդհանուր առմամբ՝ հիմնական և ստուգիչ խմբերում ընդգրկվել են 80 սովորողներ:

Հետազոտության հիմնական առարկան սովորողների հոգեբանական տեղաշարժերի բնորոշ առանձնահատկություններն են՝ նրանց հոգեկան առողջության, օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների առանձնահատկությունները, (հոգեկան աշխատունակության, զգայաշարժողական կարողությունների կենտրոնացման հնարավորությունների, նյարդային գործընթացների աշխատունակության, և տազնապայնության դրսևորումները և այլն): Հետազոտությունները կազմակերպվել են տեղերում՝ դասերից հետո:

Սովորողների հոգեբանական անվտանգության հիմնախնդրի ուսումնասիրության հարցում իրենց նշանակալի տեղն ունեն տազնապայնության մակարդակի դրսևորումները [1, 9, 10]: Այսպիսի վիճակում սովորաբար հապաղում, հետին պլան են մղվում անձի կոգնիտիվ գործընթացները, գիտակցության ֆունկցիոնալ դրսևորումների արդյունավետությունը վերահսկող, ինքնակարգավորող ու կողմնորոշող հակազդումները:

Սովորողների տազնապայնության մակարդակի ուսումնասիրությունները իրականացվել են Չ.Դ. Սպիրերգեր, Յու.Լ. Հանինի մեթոդիկայի միջոցով [9, էջ՝ 221]: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ սահմանամերձ գոտու հիմնական խումբ հանդիսացող աշակերտների և ուսանողների իրավիճակային տազնապայն մակարդակը գտնվում է սանդղակի շատ բարձր մակարդակում: Այն համապատասխանաբար աշակերտների մոտ կազմում է՝ 60% (12 մարդ), իսկ ուսանողների խմբում՝ 65% (13 մարդ): Անձնային տազնապայնությունը աշակերտների մոտ կազմում է 55(11 մարդ), ուսանողների մոտ՝ 60% (12 մարդ):

Երևանաբնակ, ստուգիչ ստուգիչ խումբ հանդիսացող աշակերտների անձնային տազնապայնության միջին մակարդակը կազմում է 40% (8 մարդ), իրավիճակայինը՝ 45 % (9 մարդ): Ուսանողների խմբում անձնային տազնա-

պայնության մակարդակը կազմում է 40% (8 մարդ), իրավիճակայինը՝ 45% (9 մարդ): Համաձայն ստացված տվյալների՝ ստուգիչ խմբերում և՛ անձնային, և՛ իրատրական տագնապայնության ցուցանիշների գործակիցներում դիտարկվում է տագնապայնության միջին կամ չափավոր մակարդակ:

Սովորողների հոգեբանական անվտանգության բազմակողմանի բնութագիր են հանդիսանում հետվնասվածքային փոփոխությունների ցուցանիշները: Դրանք հաստատվում են անձի շարժունակության, գործողությունների հստակության, համագործակցության հոգեֆիզիոլոգիական չափումների արդյունքով: Շարժունակությունը անձի ընդհանուր և հոգեկան առողջության, ինչպես նաև տվյալ պահին նրա հոգեկան հնարավորությունների կարևոր բնութագրերից մեկն է: Պարզ շարժողական գործողությունների չափումները իրականացվել են գրաֆիկական տեսլիստ-թեստի միջոցով [9, էջ 528-530]:

Հետազոտության արդյունքների համեմատությունը ցույց է տալիս, որ հիմնական խմբի սովորողների սխալների աճի դինամիկան արտահայտվում է հետևյալ կերպ. Առաջին փորձի սխալները կազմում են $21 \pm 4,2$, հինգ փորձերի միջին արդյունքը կազմում է՝ $25 \pm 3,9$: Աշակերտների մոտ առաջին և հինգերորդ փորձերի ընթացքում կատարված սխալների միջին քանակությունը կազմում է՝ $15 \pm 2,2$ և $21 \pm 4,3$: Հիմնական խմբի ուսանող պատանիների հինգ փորձերի միջին արդյունքը կազմում է՝ $25 \pm 3,9$: Առաջին և հինգերորդ փորձերի ընթացքում կատարված սխալների քանակությունը ուսանողների մոտ կազմում է՝ $15 \pm 2,2$ և $21 \pm 4,3$:

Ստուգիչ խմբերի սխալների արտահայտվածությունը հետևյալն է. երևանաբնակ ուսանողների խմբում առաջին փորձից հետո գրանցվել է $12 \pm 2,2$ սխալ, հինգ փորձերի միջին սխալը կազմում է $11 \pm 2,5$: Արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ հենց թեստավորման երրորդ տարբերակում էլ ստուգիչ խմբի ուսանողները առավելապես աչքի են ընկնում իրենց կայունությամբ, մինչև վերջ հնարավորությունների պահպանման ունակությամբ: Ստացված արդյունքների հիման վրա կարելի է դատողություններ անել նաև սովորողների նյարդային գործընթացների տևական լարվածության, անձի հոգեկան ոլորտի աշխատունակության, օրգանիզմի հավասարակշռության պահպանման, ինչպես նաև գործունեության արդյունավետության մակարդակն ապահովող համակարգերի ֆունկցիոնալ համագործակցության հնարավորությունների վերաբերյալ (զգայական, կոորդինացնող, հուզական, նյարդային և այլն [2, 6, 9]: Ստացված տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ սահմանամերձ գոտու սովորողները պատասխանատու գործողությունների իրականացման, համարձակ վճիռների կայացման, արգելքների հաղթահարման, օրգանիզմի մոբիլիզացիոն կարողությունների ցուցադրման մեջ դրսևորում են զգուշավորություն, կաշկանդվածություն, առավելագույն հնարավորությունների ներդրման անկարողություն:

Հետազոտվող համակազմի հոգեֆիզիոլոգիական բնութագրերի այդպիսի արտահայտվածությունը մեկնաբանվում է նրանց միջավայրում գոյություն ունեցող տևական լարվածությամբ, բազմաթիվ վտանգների, սպառնալիքների գոյությամբ: Այսպիսի բնութագրերը համապատասխանում են Հ.Սեյլեի ընդ-

հանուր հարմարողական համախտանիշի սպառման փուլի հոգեֆիզիոլոգիական բնութագրերին [5, 6, 8]: Ինչպես վկայում են գրականության վերլուծության տվյալները, երկարատև այսպիսի վիճակը հանգեցնում է օրգանիզմի պահեստային հնարավորությունների աստիճանական անկման և արդյունքում ստեղծում հոգեֆիզիոլոգիական համակարգերի ֆունկցիոնալ հնարավորությունների սպառման վիճակ [1, 3, 8, 10]:

Հիմնական հետազոտական խմբերում ընդգրկված անձանց հոգեմարմնական փոփոխությունները անձի կառուցվածքում դրսևորվում են շարժումների համագործակցության, դրանց կառավարման ֆունկցիաների խանգարմամբ, շարժողական ու մոբիլիզացիոն կարողությունների ֆունկցիոնալ անկմամբ, հոգեկան աշխատունակության, ուշադրության ու հիշողության գործընթացների ակտիվության մակարդակների անկմամբ, սոցիալական շփումների նվազմամբ, մեղքի զգացումի, հուզական անկայունության, անվստահության, լարվածության, իմպուլսիվության, թշնամանքի, ագրեսիվության դրսևորումներով: Վերջիններս սովորողների համար հանդիսանում են առողջության ու կյանքի իմաստի վերաբերյալ ցածր ինքնագնահատականի ձևավորման հիմք, անձնական երջանկության պատկերացումների վերաբերյալ ինքնագնահատականի կորստի պատճառ:

Հետազոտության արդյունքում ձևակերպվել են հետևյալ եզրակացությունները.

- Հոգեբանական անվտանգության կորստի զգացումը դրսևորվում է սովորողների կողմից իրականության օբեկտիվ գնահատման անկարողությամբ, սեփական վախերի ակցենտավորմամբ և դրանցում հարմարվողականության ձգտմամբ (կոմֆորմիստական գծերի ձևավորում), կամ որպես միջավայրի սպառնալիքների բազմազանության հետապնդումից մշտական փախուստի միտմամբ:

- Սահմանամերձ գոտում ապրող սովորողների պայքարի անկարողությունն ու ինքնուրույնության կորստի արդյունքում ձևավորված օտարվածության ամրակայված զգացումը սովորողների մոտ արտահայտվում է որպես հոգեբանական անվտանգության կորստի վիճակ, որում օրգանիզմը իր ամբողջականության պահպանմանն ուղղված՝ ցուցաբերում է չնախատեսված հոգեֆիզիոլոգիական հակազդումների բազմազանություն:

Հոգեբանական անվտանգության կորստի վիճակում սովորողների կողմից իրականությունը գնահատվում է որպես կենսագործունեության համար խորթ միջավայր, որում ամեն ինչ կասկածելի է, որում նրանք իրեն զգում է օտարված:

- Կիրառական տեսանկյունից՝ սովորողների հոգեբանական անվտանգության հիմնախնդիրը ոչ միայն անձի իրադրական վիճակի նկատմամբ մասնագետների կողմից ցուցաբերվելիք միջամտության անհրաժեշտություն է, կամ սովորողների կողմից հոգեբանական անվտանգության կորստի սուբյեկտիվ զգացում, այլև նրանց կողմից սեփական օրգանիզմի հակազդումների փոփոխության, դրանց օբեկտիվ գնահատման, բացասական հոգեվի-

ճակների, սուրբեկտիվ զգացումների ինքնուրույն կարգավորման ու կառավարման կարողունակություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Մկրտումյան Մ. Պ.** Արտակարգ իրավիճակների հոգեբանության կանխարգելման և վերականգնողական հիմնախնդիրները: Երևան, 2008թ. 320էջ:
2. **Айпервуд М.М.** Полноценная жизнь инвалида.- М.: Педагогика,1991. -88с.
3. **Громбах С.М.** Школа и психическое здооевье учащихся.- М.: Медицина, 1988. - 272с .
4. **Кадыров Р.В.** Посттравматическое стрессовое расстройство /PTSD/. – СПб:Речь,2012. -448с.
5. **Калшед Д.** Внутренний мир травмы. М. Акад. Книг.,2007.-368с.
6. **Малкина-Пых И.Г.** Экстремальные ситуации.- М. Эксмо, 2006. -960с.
7. **Пятницкая, Е. В.** Психология травматического стресса : Учеб.пособие. — Балашов : Николаев, 2007. — 140 с.
8. **Раен А.А., Кудашов А.р., Баранов А.А.** Психология Адаптации личности.- СПб, 2006. -
9. **Райгородский Д.Я** Практическая психодиагностика: Методики и тесты.- Самара.2001. –с. 200-202
10. **Нардонэ Дж.** Страх, паника, фобия- М.: Психотерапия, 2008. 356 с.

МЕЛЬС МКРТУМЯН

Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна,
доктор психологических наук, профессор кафедры психологии

ЛИЛИТ МКРТУМЯН

Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна,
кандидат психологических наук, доцент кафедры психологии

ЛИЛИТ САРГСЯН

Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна,
аспирант кафедры психологии

ОСОБЕННОСТИ ФУНКЦИОНАЛЬНЫХ ИЗМЕНЕНИЙ СИСТЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ ПСИХОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ ЛИЧНОСТИ

В статье обсуждаются особенности психофизиологических изменений систем обеспечения психологической безопасности учащихся в неблагоприятных условиях жизнедеятельности. Экспериментальным путем выявлена специфика функциональных изменений систем обеспечения психологической безопасности в зависимости от состояния здоровья, эмоциональных особенностей, психической работоспособности личности.

MELS MKRTUMYAN

Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Chair of Psychology
Doctor of Psychological Sciences, Professor

LILIT MKRTUMYAN

Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Chair of Psychology
Candidate of Psychological Sciences, Associate Professor

LILIT SARGSYAN

Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Chair of Psychology
Postgraduate Student

FEATURES OF FUNCTIONAL CHANGES OF THE PERSON'S PSYCHOLOGICAL SECURITY ENSURING SYSTEM

The article discusses the features of psychophysiological system changes that provide psychological security of students in unfavorable conditions of life.

The specifics of functional changes in the systems that provide psychological security, mainly depend on the state of health, emotional characteristics, mental performance of the student's personality, are revealed experimentally.

ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ՊԿԱ, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ,

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱՐՏԱԳԱՂԹԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴՐԱՊՍԵՃԱՌՆԵՐԸ

Հոդվածի ուսումնասիրության կենտրոնում են արտագաղթի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները: Առանձնացվել են իրական ու հնարավոր արտագաղթողների հիմնական դրդապատճառները՝ պայմանավորված երեք խումբ (կենսական, սոցիալական, զարգացման) պահանջմունքներով: Արտագաղթելու մտադրություն ունեցող ուսանողների և արդեն մի քանի տարի արտագաղթաց ընտանիքների ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են արտագաղթի աճը խթանող հետևյալ սոցիալ-հոգեբանական գործոնները՝ բացասական (երկրից փախչելու) և դրական («ավետյաց երկրում» նոր կյանք սկսելու) զուգահեռ մոտիվացիան, էքզիստենցիալ միգրացիան, ընտանեկան սերտ կապերը, հոգեբանական արտագաղթը և տեղեկատվական ու կապի տեխնոլոգիաների զարգացումը:

Բանալի բառեր՝ արտագաղթ, դրդապատճառ, պահանջմունքներ, էքզիստենցիալ միգրացիա, ընտանեկան կապեր, մշակութային հարված, ադապտացիա:

Ըստ Միջազգային միգրացիային համակարգող տասնմեկերորդ հանդիպման նյութերի՝ միգրացիան համաշխարհային երևույթ է, որն աճում է՝ փոխելով տնտեսական, ժողովրդագրական, քաղաքական ու սոցիալական պայմանները և նպաստում է աղքատության նվազմանը [19]: Քսաներորդ դարի վերջը նշանավորվեց միգրացիայի հզոր ալիքով, ինչը պայմանավորված է գլոբալիզացիայով և մասամբ հետևանք է ապագադրության, նոր երկրների ձևավորմամբ, սահմանների բացմամբ, ինչպես նաև փոխադրամիջոցների զարգացմամբ: Աշխարհում միգրացիայի առաջատարն ԱՄՆ-ն է՝ երկրորդը՝ Ռուսաստանի Դաշնությունը: ԱՄՆ-ն աչքի է ընկնում ներգաղթով, Ռուսաստանում միգրացիոն հոսքերը գրեթե հավասարազոր են: Հայաստանը նույնպես ներգրավված է այդ գործընթացում, սակայն հիմնականում արտագաղթի տեսքով:

Վիճակագրական տվյալները փաստում են, որ արտագաղթը Հայաստանում ոչ միայն չի նվազում, այլ նաև տարեցտարի ավելանում է արտագաղթել ցանկացողների թիվը: Այսպես, ըստ Գեյլափի 2010-2012թթ. ուսումնասիրու-

թյան՝ Հայաստանի բնակչության 40%-ի մոտ առկա է արտագաղթելու ցանկություն, ինչն ամենաբարձրն է նախկին Խորհրդային Միության երկրների համեմատ, որտեղ կատարվել է սույն ուսումնասիրությունը (Օր.՝ Ռուսաստանում, Վրաստանում և Ադրբեջանում այդ ցուցանիշը 14% է) [18]: Մինչդեռ, 2006թ. ԱՊՀ-ում կատարած համեմատական ուսումնասիրությունների համաձայն, հինգ երկրների բնակիչներից ամենաքիչը հայաստանցիներն են ցանկություն հայտնել արտագաղթել, ինչպես՝ ժամանակավոր աշխատելու նպատակով (36,8%), այնպես էլ՝ մշտական բնակության (17%) [4]: Իսկ արդեն 2013թ. Հայկական Սոցիոլոգիական Ասոցիացիայի կողմից Երևանում անցկացրած սոցիոլոգիական հարցման մասնակիցների 46%-ը մտադրություն ունեն ընդմիջտ հեռանալ երկրից [15]: Հայաստանում հարցվողների կողմից նշված արտագաղթի պատճառները, բացի էթնիկականից, գրեթե նույնն են, ինչ Ռուսաստանում՝ [7, էջ 257-258]՝ սոցիալական, տնտեսական և քաղաքական: Կարծում ենք, այս ամենով հանդերձ արտագաղթի աճը պայմանավորված է սոցիալ-հոգեբանական գործոններով, որոնց դերն ու նշանակությունը թերագնահատված է:

Այսօր գերակշռում են արտագաղթի ուսումնասիրության ժողովրդագրական, տնտեսական, իրավական, պատմական և սոցիոլոգիական գիտական - մոտեցումները: Չթերագնահատելով վերջիններիս դերը, կարծում ենք, որ արտագաղթը լինելով նաև սոցիալ-հոգեբանական երևույթ, պետք է հոգեբանների ուշադրության կենտրոնում լինի: Հարցի հոգեբանական մոտեցումները հիմնականում սահմանափակվում են արդեն իսկ արտագաղթածների մշակութային հարվածի և նոր միջավայրում ադապտացիայի հիմնախնդիրներով, որոնք առավել քան ուսումնասիրված ու ներկայացված են բազմաթիվ գիտական մենագրություններում ու հազարավոր հոդվածներում [11]: Այս տեսանկյունից ուշագրավ է միգրացիայի վերաբերյալ ռուս գրականության մեջ լայն տարածում ստացած «արտագաղթի հոգեբանության», որպես գիտակարգի սահմանումը. «Արտագաղթի հոգեբանությունը հոգեբանական գիտության մի ճյուղ է, որը ուսումնասիրում է ինտեգրման և սոցիալ-հոգեբանական հարմարման կառուցակարգերը, ինչպես նաև օտար լեզվական ու սոցիալ-մշակութային միջավայրում մարդու անհատական տիպաբանությունը և անձնային հատկանիշների առանձնահատկությունները» [8]: Ակնհայտ է, որ այս սահմանումն առավել քան թերի է, որովհետև չի բացահայտում արտագաղթողների սոցիալ-հոգեբանական դրդապատճառները, ինչպես նաև վերջիններիս և ադապտացիայի միջև պատճառա-հետևանքային կապերը:

Կարծում ենք, արտագաղթի հոգեբանության առանցքային հիմնախնդիրներից պետք է լինի նախ և առաջ այն սոցիալ-հոգեբանական դրդապատճառների ու գործոնների ուսումնասիրությունը, որոնք նպաստում են արտագաղթելու ցանկությանը և հեշտացնում վերջինիս իրագործումը: Այդ նպատակով առաջարկում ենք արտագաղթի ուսումնասիրության մոտիվացիոն հայեցակարգ, որի համար մի կողմից հիմք են ծառայել մարդու պահանջմունքների և դրդապատճառների մասին հայտնի տեսությունները [5,6, 9,14], մյուս կողմից՝ արտագաղթելու պատճառների վերաբերյալ արտասահմանյան և հայրենա-

կան բազմաթիվ սոցիոլոգիական հետազոտությունների [1,2,5,10,18] արդյունքների վերլուծությունը:

Մոտիվացիայի հիմնահարցի վերաբերյալ տարբեր գիտնականների միջև առկա են տարաձայնություններ՝ կապված հիմնարար պահանջումների խմբերի քանակի (օր՝, Մասլոուի մոտ՝ 5-7, Մաքս-Նիֆի՝ 10, Ադելֆերի՝ 3), ինչպես նաև դրանց հիերարխիայի, կայունության և փոխազդեցության հետ: Մակայն ընդհանուր առմամբ մոտիվացիոն բոլոր տեսություններին միավորում է մարդու գործունեության պայմանավորվածությունը պահանջումների բավարարվածությամբ կամ անբավարարվածությամբ: Կարծում ենք արտագաղթողների պահանջումները կարելի է դասակարգել՝ հիմք ընդունելով Ադելֆերի ERG-մոդելը (Existence-գոյություն, Relatedness-կապվածություն, Growth-աճ) [9], որը նա առաջարկել է, պարզեցնելով Մասլոուի բուրգի հինգ մակարդակի աստիճանակարգը: Ընդհանրացնելով, առանձնացնում ենք պահանջումների երեք խումբ՝ կենսական, սոցիալական և զարգացման:

Սոցիոլոգիական ուսումնասիրություններից ստացված արդյունքների վերլուծությունը բացահայտում է, որ իրական և հնարավոր (potential) արտագաղթողների արտագաղթելու ցանկության հիմնական դրդապատճառները պայմանավորված են հենց վերոհիշյալ պահանջումների բավարարման հետ: Ինչպես ժամանակավոր, այնպես էլ ընդմիջտ հեռանալու մտադրություն ունեցող մարդկանց մոտ գերակշռում են կենսական պահանջումների անբավարարվածության դրդապատճառները (ըստ տարբեր հարցումների նրանց թիվը տատանվում է 55-57%) [1,2,5,18], ինչը արտահայտվում է աշխատանքային միգրացիայով: Իսկ սոցիալական և զարգացման պահանջումների բավարարման դրդապատճառները հաջորդում են իրար, սակայն ժամանակավոր մեկնել ցանկացողների համեմատ ընդմիջտ հեռանալու մտադրություն ունեցող մարդիկ ավելի շատ են նշում ինչպես սոցիալական հարաբերությունների արտասահմանում բնակվող բարեկամներին միանալու պահանջումները, ինչը արտահայտվում է «շղթայական» միգրացիայով (“chain migration”), այնպես էլ զարգացման շարժառիթները, ինչը արտահայտվում է «ուղեղների արտահոսքով» (“Brain drain”):

Հետաքրքիր, գրեթե հայելային հարաբերակցություն է դիտվում արտագաղթի հիմնական դրդապատճառների տոկոսային արտահայտվածության և Մասլոուի պահանջումների բուրգի հիերարխիաների միջև: Բոլորից շատ արտագաղթում են Մասլոուի բուրգի ամենամեծ հատվածը զբաղեցնող ստորին երկու մակարդակների պահանջումների անբավարարվածության պատճառով, այսինքն կենսական դրդապատճառներով: Միջանկյալ տոկոս են կազմում պատկանելության կամ սոցիալական դրդապատճառները, որոնք պայմանավորված են սիրո, ընկերության ընտանիքի, ինչպես նաև պատվի, հարգանքի և ճանաչման պահանջումների հետ և գտնվում են բուրգի միջնամասում: Վերջապես նվազագույն է զարգացման դրդապատճառներով արտագաղթողների թիվը, ովքեր ունեն ինքնաարտահայտման, ինքնահրականացման պահանջումներ՝ կապված ընդունակությունների և սեփական ուժերի

դրսևորման հետ, ինչը արտացոլված է բուրգի վերին ամենափոքր հատվածում:

Ամփոփելով հետազոտության այս փուլը, արտագաղթողներին պայմանականորեն բաժանում ենք երեք խմբերի և յուրաքանչյուրին տալիս մոտիվացիան բնորոշող համապատասխան անվանումը՝ ա/կենսական արտագաղթ(ողներ), բ/սոցիալական արտագաղթ(ողներ) և գ/զարգացման արտագաղթ(ողներ):

Կարևորելով կենսական պահանջմունքներով մոտիվացված արտագաղթողների հիմնախնդիրները՝ կարծում ենք որ դրանց լուծման առաքելությունը ընկած է հիմնականում տնտեսագետների և պետական կառույցների վրա: Իսկ հոգեբանական ուսումնասիրությունների կենտրոնում պետք է լինեն երկրորդ՝ սոցիալական և հատկապես երրորդ՝ զարգացման խմբերին պատկանող արտագաղթել ցանկացողները: Ինչպես հայտնի է, վերջիններիս թիվը կենսական արտագաղթողների համեմատ, շատ փոքր է, սակայն որակական առումով նրանց մեջ գերակշռում են ինչպես բարձր մասնագիտական որակավորում ունեցողները, այնպես էլ երիտասարդները, որոնց կորուստը երկրի համար կարող է ունենալ տնտեսական ու գիտա-կրթական, ինչպես նաև դեմոգրաֆիական անդառնալի բացասական հետևանքներ, ինչը սպառնում է ազային անվտանգությանը:

Ուստի մեր ուսումնասիրության թիրախ են դարձել զարգացման ու սոցիալական դրդապատճառներով պայմանավորված իրական և հնարավոր արտագաղթողները: Հետազոտության խնդիրն էր բացահայտել արտագաղթելուն նպաստող սոցիալ-հոգեբանական գործոնները: Այդ նպատակով սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունից գատ կիրառել ենք դիտման, հարցազրույցի և case study մեթոդները: Որպես ընտրանք հանդիսացել են արտագաղթելու մտադրություն ունեցող մագիստրատուրայում երկրորդ տարին սովորող 152 ուսանողներ և արդեն մի քանի տարի արարտագաղթած (Կանադա ու ԱՄՆ) 17 երիտասարդ ընտանիքներ (28 մեծահասակ և 25 անչափահաս), ովքեր հայրենիքում ապահովված են եղել բնակարանային լավ պայմաններով ու բարձր վարձատրվող աշխատանքով, ինչն արդեն իսկ բացառում է նրանց կենսական արտագաղթողների խմբին պատկանելը: Աշխատել են հիմնականում իրավաբանության, ֆինանսա-բանկային, բժշկության և համակարգչային ծրագրավորման բնագավառում: Երեք ընտանիք երկից մեկնել են 1988-1993 թվականներին, մյուսները՝ 2002-2009-ին և բոլորը արդեն դարձել են հյուրընկալված երկրի քաղաքացիներ:

Վերլուծելով և ամփոփելով հետազոտության արդյունքները՝ առանձնացրել ենք արտագաղթի աճը խթանող հետևյալ սոցիալ-հոգեբանական դրդապատճառները:

- Երկրից մեկնել ցանկացող ուսանողների 35% տոկոսը արտագաղթելը ժամանակավոր երևույթ են համարում: Արտագաղթած ընտանիքներից առաջինը մեկնածները, նույնպես համոզված են եղել, որ շուտով վերադառնալու են: Մարդիկ հեռանում էին Հայաստանից՝ այլ երկրներում կյանքի և մասնագիտական որակը բարձրացնելու, աշխատելու և գումարներ վաստակելու

և, տուն վերադառնալու նպատակով: Մակայն շատ հաճախ նրանք հաստատվում էին ընդունող երկրներում և հետագայում այնտեղ տեղափոխում նաև իրենց ընտանիքները: Ներկայումս միայն երկու գույգ են մտադիր վերադառնալ Հայաստան, այն էլ թոշակի անցնելուց հետո: Ինչպես նկատում է Անիսիան «Փախստականը մտածում է առաջին իսկ հնարավորության դեպքում վերադառնալու մասին, «ես կմեկնեմ այստեղից առաջին իսկ հնարավորության դեպքում»՝ չկասկածելով անգամ, որ արդեն արմատներ է ձգել նոր միջավայրում և աղապտացիայից աննկատ անցել է ինտեգրացիայի [3, էջ 115]:

- Արտագաղթի ցանկությունը պայմանավորված է բացասական «դուրսմղող» (երկրից փախչելու) և դրական «գրավիչ» («ավետյաց երկրում» նոր կյանք սկսելու) գույզահեռ մոտիվացիայով (pull and push), ինչը կարելի է բացատրել Դ. Մակքելանդի [5] ձեռքբերովի պահանջմունքների հայեցակարգով, որ բոլոր մարդիկ մոտիվացված են երկակի. մի կողմից անհաջողությունից խուսափելու ցանկությունն է, մյուս կողմից՝ հաջողության հասնելու: Այս տեանկյունից ուշագրավ է Ֆ Արնսայի կողմից արտագաղթողների սոցիալ-հոգեբանական դիմանակարի ներկայացումը: Նա գտնում է, որ յուրաքնչյուր մարդ գաղտնի երագում է ավետյաց երկրի մասին, որտեղ ոչինչ չի խանգարում լինել այնպիսին, ինչպիսին ինքն է իրեն համարում ու առանց խոչնդոտների զարգացնել անձնային նույնականությունը, իսկ արտագաղթը միակ ուղին է, որը թույլ է տալիս փախչել նախանշված ճակատագրից ու հնարավորություն տալիս ձեռքբերել նոր կյանք. «ի վերջո մարդն իրեն կարող է երջանիկ երևակայել այնտեղ, որտեղ ինքը չկա» [3, էջ 92-121]: Մեր հետազոտությունից պարզվեց նաև, որ դրական մոտիվացիայի դեպքում մարդիկ ավելի հեշտ են աղապտացվում ներգաղթած երկրում, քան բացասականի ժամանակ:

- Արտագաղթելու մոտիվացիան որոշ դեպքերում կարող է պայմանավորված լինել էքզիստենցիալ միգրացիայով: Գ. Մեդիսոնը հենվելով Հեյդեգերի «տանը չլինելու» գոյաբանական «ռեժիմի» վրա (existential “mode” of not-being-at-home) ներմուծել է էքզիստենցիալ միգրացիայի հասկացությունը [13]: Հարցազրույցի մեթոդով ուսումնասիրելով 20 կամավոր արտագաղթածների, որոնց տեղափոխությունը պայմանավորված չի եղել տնտեսական կամ քաղաքական շարժառիթներով, Մեդիսոնը եզրակացրել է, որ մարդիկ լքում են հայրենի տունը կյանքի հեռանկարների ընդլայման, ինքնաիրականացման, ինքնության ու նույնականացման, պատկանելիության և ազատության խնդիրները լուծելու համար, ինչպես նաև փախչում են ընտանեկան բարդ մթնոլորտից: Ուշագրավ է, որ մեր կողմից կազմակերպված քննարկման ժամանակ «ինչու եք ցանկանում հեռանալ երկրից հարցին գրեթե բոլորը ուսանողների պատասխաններում հնչում էր «հեռանկարի բացակայությունը»: Նույն պատկերն է արտացոլված 2013թ. հունիսին Հայկական Սոցիոլոգիական Ասոցիացիայի կողմից Երևանում իրականացված սոցիոլոգիական հարցման արդյունքներում, որտեղ արտագաղթելու մտադրություն ունեցող երիտասարդները (18-29 տարեկան) բոլորից շատ էին նշում հեռանկար չկա պատասխանը (34,4%) [15]:

- Մեզանում շատ է տարածված սոցիալական արտագաղթը, որը պայմանավորված է ընտանեկան և ազգակցական կապերի ամրությամբ, ինչը ունի պատմական արմատներ: Դարեր շարունակ հայ ժողովուրդը չունենալով պետականություն կառավարվել է օտար վարչախմբերի կողմից, որոնց բնականաբար չէր կարող վստահել, իսկ ազգապահպանության և էթնիկ նույնականության գործառույթը ստանձնել է բարդ ընդլայնված ընտանիքը: Այսօր ընտանեկան կապերի ամրությունը նպաստում է արտագաղթին, երբ գործում է դոմինոյի էֆեկտը, ընտանիքի մեկ անդամն իր հետևից տանում է մյուսներին: Այդ գործընթացը միգրացիայի մասնագետները անվանում է «շղթայական միգրացիա» (“chain migration”): Այս երևույթը շատ բնորոշ է նկարագրում Վայները իր «Գլոբալ միգրացիոն ճգնաժամ» աշխատության մեջ. «Եթե միգրացիայում կա որևէ օրենք, դա այն է, որ միգրացիայի հոսքը մեկ անգամ սկսվելով արագություն է հավաքում: Միգրատները հնարավորություն են տալիս արտագաղթելու իրենց ընկերներին, բարեկամներին՝ սովորեցնելով ինչպես դա անել, տեղափոխման համար միջոցներ տրամադրելով, ինչպես նաև օգնում են աշխատանք և տուն գտնելու գործում» [17, էջ 21–28]: Այս հանգամանքը շատ մտահոգիչ է Հայաստանի համար, քանի որ դեռևս 2007 թ. Հարցումների համաձայն մարդկանց 60%-ից ավելին ունեն բարեկամներ արտասահմանում [10]: 2007 թվականին երկքաղաքացիության իրավունքի մասին սահմանադրական փոփոխությունից և օրենքի ամրագրումից հետո, վերջինիս ջատագովները հավատացնում էին, որ մեծ թվով սփյուռքահայեր կօգտվեն այս նոր իրավունքից և շատերը կտեղափոխվեն Հայաստան: Մինչդեռ փոքր թվով սփյուռքահայեր են ընդունել Հայաստանի քաղաքացիություն և նրանցից քչերն են հաստատվել Հայաստանում (բացառությամբ պատերազմի պատճառով վերջերս ներգաղթած սիրիահայերի): Հակառակը, երկքաղաքացիության դրույթը «ռացիոնալիզացիայի» հոգեբանական պաշտպանական մեխանիզմի դեր է խաղում հայրենիքում չապրելը արդարացնելու համար. լքելով երկիրը, շատերը ասում են, որ իրենք չեն դավաճանել հայրենիքը, քանզի չեն հրաժարվել ՀՀ քաղաքացիությունից:

- Գլոբալիզացիայի և տեղեկատվական ու կապի տեխնոլոգիաների զարգացումը դարձել է արտագաղթի աճը խթանող կարևոր գործոն: Այն ոչ միայն հեշտացնում է արտագաղթելու գործընթացը, այլև նպաստում է արդեն իսկ արտագաղթածների սոցիալ-հոգեբանական ադապտացիային: 21-րդ դարի արտագաղթի պայմանները հեռու են Ջ. Քենեդու նկարագրածից «Ոչինչ այդպես զարմանալի չէ, ինչպիսին արտագաղթելու որոշումն է, երբ տարիների կուտակված զգացմունքներն ու մտորումները, ի վերջո, խրախուսում են ընտանիքին հրաժեշտ տալ համայնքին, որում ապրել է դարեր շարունակ, կտրել հին կապերը, հեռանալ ծանոթ վայրերից և վտանգավոր ծովով շտապել դեպի անհայտ երկիր» [12, էջ 4]: Ժամանակակից տեղեկատվական ու կապի տեխնոլոգիաների շնորհիվ արտագաղթողների համար չկա «անհայտ երկիր»: Արբանյակային հեռուստատեսությամբ և ուղիղ եթերով կամ համացանցային on-line ռեժիմով մենք տեղեկանում ենք ինչ է կատարվում աշխարհում: Արտագաղթելու մտադրություն ունեցող երիտասարդները համացանցում փնտ-

րում ու գտնում են իրենց պահանջմունքները բավարարելու համար համապատասխան երկիր և մանրամասն ծանոթանում իրենց հետաքրքրող բոլոր ոլորտների (տնտեսական, իրավական, մշակութային և այլն) առանձնահատկություններին: Այստեղ նկատել ենք հետաքրքիր մի երևույթ, երբ ֆիզիկական արտագաղթին նախորդում է հոգեբանականը, այսինքն՝ մարդն այլևս մասնակից չի դառնում սեփական երկրում տեղի ունեցող քաղաքական, մշակութային և այլ իրադարձություններին: Այստեղ հոգեբանական արտագաղթը կարծես պաշտպանիչ մեխանիզմի դեր է կատարում, հեշտացնելով հետագայում նոր միջավայրին հարմարվելը: Իսկ արդեն արտագաղթացների համար «հինկապերը» գրեթե չեն խզվում, պարզապես դրանք տեղափոխվում են վիրտուալ հաղորդացման դաշտ (skype, facebook): Լրատվական կայքերի և արբանյակային հեռուստատեսության միջոցով արտագաղթացները չեն հեռանում հայրենական իրադարձություններից և մշակութային նախասիրություններից: Այս համատեքստում շատ դիպուկ է արտահայտվել արտագաղթած հարցվողներից մեկը. «Միացնում ես հեռուստացույցը՝ նայում քո սիրելի հայկական սերիալը, լսում հայկական երաժշտություն. միացնում ես skype-ը՝ հաղորդակցվում հարազատների հետ..., սա Երևանն է այստեղ դու տանն ես»: Ակնհայտ է, որ տեղեկատվական ու կապի տեխնոլոգիաները մի կողմից օգնում են ավելի հեշտ հաղթահարել մշակութային հարվածը, մյուս կողմից նպաստում են հայրենիքի կարոտախտի նվազեցմանը: Արդյունքում մեղմանում է Գ. Տրիանդիսի [16] կողմից առաջադրած հինգ փուլերից կազմված (մեղրամիս, մշակութային հարված, ֆրուստրացիա, աղապտացիա և ինտեգրացիա) արտագաղթացների աղապտացիայի «Ս կորի» արտահայտվածությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի բնակչության թվի անկումը: www.depop.am
2. Հայաստանի երիտասարդության ազգային գեկույց: http://www.unfpa.am/sites/default/files/yeritasardneri_zekujc_2011.pdf
3. **Аинса Ф.** Реконструкция утопии.-Наследие- EditionUNESCO, Москва., 1999.
4. **Жакевич В. Д.** Оценка миграционного поведения и миграционных настроений населения в странах СНГ. //Философия и социальные науки – 2008/3, С. 76-81.
5. **Макклелланд Д.** Мотивация человека. - СПб.: Питер, 2007.
6. **Маслоу А.** Мотивация и личность. — СПб.: Питер, 2008.
7. **Платонов Ю.** Народы мира в зеркале геополитики. -СПб., С.-Петерб. ун-тет, 2000.
8. **Хрусталева Н. С.** Психология эмиграции (Социально-психологические и личностные проблемы / Автореф. дис. ...докт. психол. наук. -СПб., 1996.
9. **Alderfer, C. P.,** Existence, Relatedness, and Growth; Human Needs in Organizational Settings, New York: Free Press, 1972.
10. Armenia National Study October 27 – November 3, 2007. USAID.
11. Crossroads: The Psychology of Immigration in the New Century <http://www.apa.org/topics/immigration/report.aspx>
12. **Kennedy J.F.** A nation of immigrants. N.Y., Harper and Row, 1964.
13. **Madison G.** Existential Migration. //Existential Analysis,(2006)
14. **Max-Neef M.** Development and human needs. [http:// www. alastairmcintosh.com/general/resources/2007-manfred-max-neef-fundamental-human-needs.pdf](http://www.alastairmcintosh.com/general/resources/2007-manfred-max-neef-fundamental-human-needs.pdf)

15. Migration from Yerevan. <http://www.asa.sci.am/news.php>
16. **Triandis H.C.** Culture and social behavior. - N.Y., 1994.
17. **Weiner M.** Global Migration Crisis. - N.Y., Harper Collins, 1995.
18. http://www.gallup.com/poll/161591/desire-leave-fsu-ranges-widely-across-countries.aspx?utm_source=alert&utm_medium=email&utm_campaign=syndication&utm_content=morelink&utm_term=All+Gallup+Headlines+-+World
19. <http://www.un.org/esa/population/meetings/eleventhcoord2013/eleventhcoord2013.htm>

ГАЯНЕ АРУТЮНЯН

Академия государственного управления РА,
Национальная академия наук РА, Международный научно-образовательный центр,
кандидат психологических наук, доцент

СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ МОТИВЫ ЭМИГРАЦИИ

В статье рассматриваются социально-психологические особенности эмиграции. Основные мотивы реальной и потенциальной эмиграции были разделены на три группы, обусловленные потребностями (жизненно важные, социальные и развивающие). В результате исследования реальных и потенциальных эмигрантов выявлены следующие социально-психологические факторы роста эмиграции: желание эмигрировать обусловлено отрицательной (бегство) и положительной (на "землю обетованную", чтобы начать новую жизнь), параллельно действующей мотивацией (push&pull); экзистенциальная мотивация в поисках перспективы; физической миграции предшествует психологическая, которая позволяет легко адаптироваться к новой среде; прочность семейных уз способствует т.н. "цепной эмиграции", так как действует эффект домино, когда один из эмигрирующих членов семьи убеждает остальных следовать за ним; глобализация и развитие информационных и коммуникационных технологий (спутниковое ТВ, интернет, Skype, facebook); эмиграция рассматривается как временное решение: «Я уеду отсюда как можно скорее», говорят эмигранты, не подозревая, что укоренились в новой среде, а адаптация уже перешла в интеграцию.

GAYANE HARUTYUNYAN

PAA RA, ISEC NAS RA,
Candidate of Psychological Sciences

SOCIO-PSYCHOLOGICAL MOTIVES OF EMIGRATION

The article focuses on the socio-psychological peculiarities of emigration. The main motives for real and potential emigration were divided into three groups, conditioned by needs (vital, social and developmental).

The research on students who plan to emigrate and the emigrant's families identified the following growing socio-psychological factors of emigration: the desire of emigration is conditioned by the negative (escape) and positive ("Promised land," to start a new life) motivation (push and pull); the physical migration precedes the psychological, which makes it easy to adapt to a new environment; migration contributes to the strength of family ties, because there is a domino effect, i.e. one member of the family persuades others to follow him; the globalization and development of information and communication technologies (satellite TV, internet, skype, facebook); the emigration is considered as temporary issue: "I will leave this place as soon as possible," the emigrants say, unaware that they are rooted in the new environment, and adaptation has already moved into integration".

ՏԻԳՐԱՆ ԿԱՅՑԱԶՅԱՆ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ
Պրոֆ. Ա. Ա. Լալայանի անվան սպորտի մանկավարժության
և հոգեբանության ամբիոն
Հայցորդ

**ՄԱՐԶԻԿԻ ԱՆՁԻ ԱՆԱՀՍԱԿԱՆ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀՍԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄՊՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ**

Հողվածում ներկայացված է մի շարք հետազոտությունների արդյունքների վերլուծություններ, որոնք ցույց են տալիս, որ ոչ մի մարզումային մեթոդներ չեն կարող լինել արդյունավետ և չեն տա ցանկալի արդյունքներ, եթե հաշվի չառնվեն մարզիկի անձի անհատական առանձնահատկությունները: Մարզիկի գործունեությունը ընթանում է էքստրեմալ, բարդ իրավիճակներում, որոնք նպաստում են մարդկային օրգանիզմի ծայրահեղ հնարավորությունների արտահայտմանը: Այս պայմաններում աճում է մարդու գործունեության արդյունավետության կախվածությունը նրա նյարդային համակարգի և խառնվածքի անհատական հատկություններից:

***Բանալի բառեր՝** էքստրեմալ պայմաններ, անձ, անհատական առանձնահատկություններ, նյարդային համակարգ, դրդապատճառներ, ընթացք, արագություն:*

Մի շարք հետազոտությունների արդյունքների վերլուծությունը (Լ. Մ. Աբրիլին, 1976թ., Մ. Ս. Բրիլ, 1980թ., Բ. Մ. Տեպլով, 1998թ.) ցույց է տալիս, որ մարզումային մեթոդներից ոչ մեկը չի լինի արդյունավետ և չի տա ցանկալի արդյունքներ, եթե հաշվի չառնվեն մարզիկի անձի անհատական առանձնահատկությունները:

Պատրաստվածության անհատականացման կոնկրետ խնդիրը կայանում է մարզիկի բոլոր պոտենցիալ հնարավորությունները, անհատական պաշարները, ինչպես նաև, կոնկրետ իրավիճակում նրա բնավորության գծերը, խառնվածքը, հոգեկան իրավիճակները հաշվի առնելու անհրաժեշտության մեջ:

Ըստ որոշ մասնագետների կարծիքի (Ռ. Նայդիֆֆեր, 1976թ., Յու. Ա. Խաչատուրյան, 1978թ., Վ. Ս. Մերլին, 1986թ., Գ. Մ. Ավանեսյան, 2004թ.) հատուկ ուշադրության է արժանի ուսուցման անհատականացումը և անհատական որակների ու դրանց բնորոշ հատկանիշների վրա կենտրոնացված ուսուցումը և պատրաստումը: Այս կամ այն ուսուցման մեթոդի ընտրության ժամանակ հարկավոր է ելնել մարզվողների անհատական հատկությունների գնահատականից և այս կամ այն չափանիշների արտահայտման համապատասխան տիպի դիրքորոշումից [7,8]:

Սպորտի հոգեբանության տեսանկյունից մարզիկի գործունեությունը, որպես օրինակ, ընթանում է էքստրեմալ, անսովոր բարդ իրավիճակներում, որոնք նպաստում են մարդկային օրգանիզմի ծայրահեղ հնարավորությունների արտահայտմանը: Այս պայմաններում աճում է մարդու գործունեության

արդյունավետության կախվածությունը նրա նյարդային համակարգի և խառնվածքի անհատական հատկություններից [2,4,8]:

Դիտարկելով ինտեգրված անհատականության համակարգը՝ Վ. Ա. Մերլինը (1986թ.) այս մեծ համակարգի մակարդակներից առանձնացնում էր անհատական հոգեկան հատկությունների համակարգը, որի ենթահամակարգերն են հանդիսանում. **ա)** հոգեդինամիկ հատկությունները (խառնվածքի հատկությունները), **բ)** անձի հոգեկան հատկությունները: Բ. Ա. Վյատկինը (1978թ.), խառնվածք ասելով, հասկանում է. «մարդու հոգեկան հատկությունների անհատական-յուրօրինակ, հաստատուն ամբողջություն, որոնք որոշում են նրա հոգեկան գործունեության դինամիկան: Այս հատկությունները միանման արտահայտվում են տարբեր գործունեություններում՝ անկախ դրա բովանդակությունից, նպատակներից և դրդապատճառներից»: Հեղինակը դիրքորոշում է խառնվածքը որպես անձի հատկություններից մեկը, որն արտահայտվում է հոգեբանական գործընթացների դինամիկայում (դրանց ընթացքի արագության, հուզական գրգռվածության ուժի, ապրումների խորության, տևողության և դրանց արտաքին արտահայտման մեջ) [5,7,8]:

Հատուկ գրականության մեջ (Բ. Ա. Վյատկին, 1978թ., Վ. Մ. Մելնիկով, 1985թ.) առավել հաճախ հանդիպում է խառնվածքի տեսակների հետևյալ բնութագրումը. մելանխոլիկ խառնվածքը տարբերվում է հուզական ապրումների և բոլոր հոգեկան գործընթացների խորությամբ և դանդաղությունամբ, նա ինքնամիտ է և չփվող, թաքցնում է իր հույզերը և հեշտ խոցելի է: Այսպիսի մարդիկ իրենց գործողություններում համարձակ են, նրանք կենտրոնացած են միայն իրենց անձնական ապրումների վրա: Սանգվինիկի համար բնորոշ է հուզական վիճակի արագ փոփոխություն. նա արձագանքում է արտաքին գրգռիչներին, հեշտ է շփման մեջ մտնում այլ մարդկանց հետ:

Ուսումնասիրելով մարդիկների նյարդային համակարգի տիպաբանական առանձնահատկությունները՝ Ջ. Բ. Բիրյուկովան (1961թ./ (ի տարբերություն Բ. Պ. Պավլովի դասակարգման) առանձնացրել է հետևյալ տեսակները. **1)** ուժեղ, հավասարակշռված, շարժուն (կենդանի/, **2)** ուժեղ, հավասարակշռված, շարժուն (կենդանի/, **3)** ուժեղ, անհավասարակշռված, հարաբերականորեն շարժուն (անզուսպ), **4)** ուժեղ, հավասարակշռված, իներտ (հանգիստ), **5)** թույլ, շարժուն, **6)** թույլ, իներտ, **7)** միջանկյալ, շարժուն, **8)** միջանկյալ իներտ: Այս կերպ, ներկա ժամանակում խառնվածքի արտահայտումների պատճառ հանդիսացող նյարդային համակարգի հատկությունների և դրանց համակցությունների հավաքածուն նշանակալիորեն ընդլայնվել է [3,4,5]:

Սպորտի նյութի հիման վրա իրականացված հոգեբանական հետազոտություններում հաճախ դիտարկվում է խառնվածքի և անձի հատկությունների փոխհարաբերությունների հարցը: Սակայն դա հնարավոր է միայն անձի հատկությունները որոշակիորեն հասկանալու դեպքում: Լայն տարածում ունի անձի իմացությունը՝ որպես հոգեկան համակարգ, իսկ երբեմն էլ՝ որպես մարդու անհատականությունը և սոցիալական տիպը բնութագրող (Գ. Ջ. Այզենկ, 1968թ., Կ. Կ. Պլատոնով, 1986թ.) սոմատիկ և ֆիզիոլոգիական հատկություններ: Խառնվածքի հատկությունների նմանատիպ հասկացումը նույնպես

անհատի հատկություններ են, այդ պատճառով, ըստ Վ. Ս. Մերլինի (1986թ.), դրանց փոխկապակցման հարցն անհիմաստ է: Ճշգրիտ է միայն այն հարցը, թե ինչպես է խառնվածքը կապված անհատական առանձնահատկությունների մյուս կողմերի՝ բնավորության, դրդապատճառների, ընդունակությունների և այլնի հետ:

Միննույն ժամանակ արևմտյան հոգեբանության մեջ առավել տարածված է հայացքը հոգեդինամիկ հատկությունների վրա՝ որպես անձի հատկություններ: Որոշ հեղինակներ գտնում են, որ հենց հոգեդինամիկ հատկություններն են բնորոշում անձի մյուս հատկությունները և իրենց հարաբերակցությամբ էլ որոշում անձի տիպը: Այսպես, օրինակ, Գ. Այզենքը (1968թ.) որպես անձի տիպոլոգիական հիմք է ընդունում հոգեդինամիկ երեք հատկությունների հարաբերակցությունը. էքստրա-ինտրո-վերսիա, նեյրոտիզմ (էմոցիոնալ կայունություն) և պսիխոտիզմ (հակազուսման աստիճանը): Քանի որ հոգեդինամիկ հատկությունները ժառանգականորեն և մարմնակազմորեն պայմանավորված են մեկը մյուսով, այստեղից էլ բխում է, որ անձի բոլոր հատկությունները սկսած դիրքորոշումներից, բնավորության գծերից մինչև սոցիալական և քաղաքական համոզմունքները, որոշված են ժառանգականորեն և մարմնակազմորեն:

Ըստ Ռ. Կետտելի (1965թ.) հոգեդինամիկ հատկությունները հանդիսանում են անձի կառուցվածքի որոշող բազմաթիվ գործոններից միայն մեկը: Նրա կողմից առանձնացված անձի հատկությունների կամ գործոնների գրեթե բոլոր համախտանիշներում՝ որպես բաղադրիչներ, գոյություն ունեն նաև հոգեդինամիկ հատկություններ: Այսպես, A գործոնում՝ հուզական էքսպրեսիվություն, J գործոնում՝ հուզական հասունություն, H գործոնում՝ ռեակտիվություն և իմպուլսիվություն, F գործոնում՝ ճնշողականություն, ռեակտիվություն, սառնասրտություն: Բացի հոգեդինամիկ հատկություններից, յուրաքանչյուր գործոնում կան բազմաթիվ դրդապատճառային հատկություններ, որոնք նույնպես դիրքորոշում են համախտանիշային կառուցվածքը: Ի տարբերություն Այզենկի, Կետտելի մոտ խառնվածքի հատկությունները չեն հանդիսանում երկրորդ կարգի ընդհանրական գործոններ, այլ հանդես են գալիս որպես այն նույն կարգի պայմաններ, ինչպես և դրդապատճառայինները[7]:

Վ. Ս. Մերլինը (1986թ.) նշում է, որ եթե որևիցե դինամիկ, հոգեկան հատկություն առնչվում է օրգանիզմի որևիցե առանձին հատկության հետ, նշանակում է, որ այն կախված չէ գործունեության իրավիճակի բովանդակությունից, հետևաբար, հանդիսանում է խառնվածքի հատկություն: Դրա հետ մեկտեղ, խառնվածքի հատկությունների շարքին կարելի է դասել ուշադրության կենտրոնացվածությունը, հիշողության արագությունը, հոգնածությունը (Յու. Ե. Սոսնովիկովա, 1972թ., Վ. Ի. Ռոժդեստովենսկայա, 1980թ.) [4,8]:

Տիպաբանական հատկություններն անփոփոխ չեն. դրանք անկասկած կարող են փոփոխվել կյանքի պայմանների և գործունեության ազդեցությունից: Սակայն մի կողմից տիպաբանական հատկությունների փոփոխությունը, և մյուս կողմից կապերի նոր համակարգերի առաջացումը բոլորովին տարբեր գործընթացներ են: Դաստիարակության ուղիղ խնդիրը, եթե արտահայտել

այն ֆիզիոլոգիական տերմիններով, կապերի որոշակի համակարգերի առաջացումն է, իսկ նոր պայմանական կապերի առաջացման գործընթացում՝ որպես մարզումների արդյունք, տիպաբանական հատկությունների փոփոխությունը կարող է լինել այդ հիմնական խնդրի լուծման երկրորդային, ստացված արդյունք:

Դիտարկելով հուզականությունը որպես խառնվածքի կարևորագույն բաղկացուցիչ Ա. Ե. Օլշաննիկովան և Լ. Տ. Յամպոլսկին (1977թ.), Ա.Գ.Ստեփանյանը (2006թ.) հուզականության գլխավոր բնութագրումն են համարում մարդու մոտ գերակշռող հույզերի որակը: Հարկավոր է նշել, որ ընդունված չէ խառնվածքի բնորոշման մեջ ներդնել որակական հուզական բնութագրումները: Այսպես, Բ. Մ. Տեպլովը 1976թ. բնորոշում էր խառնվածքը՝ որպես «հոգեկան առանձնահատկությունների միասնություն, որոնք առաջին հերթին կապված են հուզական գրգռվածության, այսինքն՝ մի կողմից հույզերի առաջացման արագության և մյուս կողմից՝ դրանց ուժի հետ»: Ավելի ուշ նա տալիս է հետևյալ բնութագրումը. «Խառնվածք են անվանում մարդու անհատական առանձնահատկությունները, որոնք արտահայտվում են. **1)** հուզական գրգռվածության, **2)** հույզերը արտահայտելու շատ թե քիչ տենդենցի, **3)** մարդու շարժումների արագության, ընդհանուր շարժունակության մեջ»:

Խառնվածքի տիպերի հոգեբանական բնութագրման համար հետազոտողներն առանձնացնում են տարբեր հատկություններ: Այսպես, Ա. Վ. Պետրովսկին (1982թ.) նշում է, սենսիտիվությունը, ռեակտիվությունը, ակտիվությունը, ռեակտիվության և ակտիվության հարաբերակցությունը ռեակցիաների տեմպը, ճկունություն-կոպտությունը, էքստրա-ինտրո վերսիաները, հուզական գրգռվածությունը:

Բ. Ա. Վյատկինը (1978թ.) իր հետազոտություններում բացի այս հատկություններից նշում է նաև անհանգստությունը, իմպուլսիվությունը և հուզական կայունությունը: Միննույն ժամանակ Ա. Վ. Ռոդիոնովը (1979թ.) հուզական կայունությունը դասում է բնավորության տիպային հատկությունների շարքին, իսկ որպես խառնվածքի առավել նշանակալի հատկություն, դիտարկում է էքստրա-ինտրա վերսիան, ճկունություն-կոպտությունը, հուզական գրգռվածությունը, տագնապը, և ավելացնում է այնպիսի հատկություն, ինչպիսին է նյարդայնությունը [1,2,8]:

Այս կերպ, սպորտային գործունեության մեջ նյարդային համակարգի և խառնվածքի հատկությունները կարելի է համարել գործոն, որը որոշում է մարզիկների ձեռքբերումների մակարդակի վրա ազդող հոգեբանական սթրեսի ուղղվածությունն ու աստիճանը, այսինքն՝ դրանցից կախված է սթրեսի հանդեպ հանդուրժողականությունը: Կարելի է եզրահանգել, որ խառնվածքի հատկությունները մրցումների ընթացքում դիրքորոշում են մարզիկների անհատական սթրեսային շեմերը, պայմանավորում են հոգեկան վիճակների՝ այդ թվում, նաև իրավիճակային կայունության դինամիկան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Բաբայան Հ. Ա.** Հոգեբանական պատրաստության հիմնախնդիրները բարձր նվաճումների սպորտում. Ուս. ձեռնարկ, -Երևան 2007թ. 121 էջ

2. **Գեղամյան Վ. Ղ.** Հնդեբանական սպորտատության յուրահատկությունները քննարկում հնգ. գիտ. թեկնածուի ատենախոսություն 2016թ. 133 էջ
3. **Аболин Л. М.** Эмоциональная устойчивость и пути ее повышения //Вопросы психологии. 1989.-№ 4. с. 141-149.
4. **Мерлин В. С.** Очерк интегрального исследования индивидуальности. М. 1986. - 256 с.
5. **Рубинштейн Л. С.** Основы общей психологии -М., 1989.- 308с.
6. **Стамбулова Н. Б.** Психология спортивной карьеры, СПб. 1999. 368 с.
7. **Степанян А. Г.** Сравнительный анализ личностных качеств спортсмена в специфических условиях деятельности Дисс. кандидат. псих. Наук.- Ереван, 2006.

ՏԻԳՐԱՆ ԿԱԻՓԱԺՅԱՆ

Государственный Институт физической культуры и спорта Армении, кафедра педагогике и психологии спорта им. А. Лалаяна, соискатель

ՎՅԱԻՄՈՍՎՅԱԶ ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼՆՈՒ-ՓՍԻԽՈԼՈԳԻԿԵՍԻԿԻ ՕՍՈԵՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՊՈՐՏՄԱՆԱԿԻ ԵՎ ԷՖՖԵԿՏԻՎՆՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻՎՆՈՒ ԴԵՅԱԿԵՐՄԱՆ ԵՄ ՄԱՍԻՆ

В статье рассматриваются результаты исследований, которые указывают на то, что ни один из тренировочных методов не будет эффективным и не даст желаемых результатов, если не учтены индивидуальные психологические особенности личности спортсмена. Деятельность спортсмена протекает в экстремальных, сложных условиях, способствующих выявлению предельных возможностей человеческого организма. В этих условиях возрастает зависимость эффективности деятельности человека от индивидуальных свойств его нервной системы и темперамента.

TIGRAN KAIFAJYAN

Armenian State Institute of Physical Culture and Sport
Sport Pedagogy and Psychology after A. A. Lalayan, Applicant

INTERRELATION OF INDIVIDUAL-PSYCHOLOGICAL FEATURES OF THE SPORTSMAN AND EFFICIENCY OF SPORTS ACTIVITY

A list of analyses of the study results are presented in the article, which show, that training methods cannot be efficient and will not give desired results if the individual personal peculiarities of the sportsman are not taken into account. The activities of a sportsman are taking place in extreme, hard conditions, which contribute to the identification of the extreme capabilities of the human organism In these conditions, the dependence of the efficiency of human activities on the individual properties of the nervous system and temperament rises.

ԺՈՁԵՖԻՆԱ ԵՍՍԱՅԱՆ

ՀՀ ԳԱԱ, Գիտակրթական միջազգային կենտրոն,
Հնդեբանության ամբիոնի ասպիրանտ

ԱՆՁԻ ԿԱՐՇՐԱՏԻՊԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսավորվող 16A-5a08 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում

Հողվածում ներկայացված է սոցիալական կարծրատիպերի և դիրքորոշումների ուսումնասիրության փորձարարական տվյալներ: Մասնավորապես ուսումնասիրվել է սոցիալական կարծրատիպերի և դիրքորոշումների փոխկապակցվածությունը: Սոցիալական կարծրատիպերի և դիրքորոշումների հիմնախնդիրները ներկայացվել են փիլիսոփայության, սոցիոլոգիայի, հոգեբանության շրջանակներում:

Հանգուցային բառեր՝ սոցիալական կարծրատիպ, սոցիալ-հոգեբանական դիրքորոշումներ, ընկալում, հոգեբանական ազդեցություն:

20-րդ դարի ավարտը և 21-րդ դարի սկիզբը բնութագրվում է մարդկության մուտքով տեղեկատվական դարաշրջան: Փորձելով խուսափել տեղեկատվական քառսից, մարդկությունը նախընտրում է վերամշակել և փոխանցել սոցիալական տեղեկատվությունը դյուրացված՝ մասնավորապես սոցիալական կարծրատիպերի տեսքով, քանզի սոցիալական կարծրատիպերը անհատական և մասսայական գիտակցության կարևոր մասն են:

Կարծրատիպային մտածելակերպի և վարքի հիմնադրույթի հիմնադիրը ամերիկացի գիտնական, սոցիոլոգ, լրագրող *Ուոլտեր Լիպմանն (Walter Lippman)* է: Համաձայն Ու. Լիպմանի «Հասարակական կարծիք» (1922թ.) աշխատության, կարծրատիպերը կարգավորված, համակարգված, դետերմինացված «պատկերներ» են մարդու գիտակցության մեջ, որոնք բարդ սոցիալական օբյեկտների ընկալման հարցում խնայում են մարդկանց ջանքերը, պաշտպանելով նրանց արժեքները, դիրքերը և իրավունքները [3, 95-114]:

Յուրաքանչյուր անհատ իր կյանքի ընթացքում բազմաթիվ կարծրատիպային պատկերացումներ է ձեռք բերում այլ խմբերի և էթնոսների մասին: Հիմնական ուղիները հետևյալն են. 1. սեփական կենսափորձը, 2. ավագ սերնդի ստերեոտիպերի փոխանցումը հաջորդ սերնդին, 3. քարոզչությունը (պրոպագանդան), 4. գրականությունը՝ պատմական, գեղարվեստական և այլն: Մենք ընկալում ու մտապահում ենք ամենատարբեր ստերեոտիպեր մարդկանց, խմբերի և բազմաթիվ երևույթների մասին: Դրանք անցնում են մեր ենթագիտակցության մեջ, ամրապնդվում՝ նման ընկալումները կրկնվում են, և հետագայում կարող են ազդել մեր մտածելակերպի ու վարքի վրա՝ առանց նույնիսկ գիտակցվելու մեր կողմից: Շատ դեպքերում մեզ դրսից և ներսից կառավարում են ստերեոտիպերը, թեև այդ մասին սովորական պայմաններում մենք չգիտենք և չենք գիտակցում [2, 210-211]:

Դիրքորոշում եզրույթը առաջին անգամ կիրառել է գերմանացի հոգեբան *Լ. Լանգեն (L. Lange, 1888)*, սակայն ընդհանուր հոգեբանության մեջ դիրքորոշում հասկացության մասին տեսությունները հիմնվում են *Չ. Ն. Ուզնաձեի* և նրա դպրոցի բազմաթիվ փորձարարական հետազոտությունների վրա (1956):

Ըստ Ա.Ա. Մուրադյանի դիրքորոշումը պատկանում է անգիտակցականի ոլորտին և գոյություն ունի գաղտնի (լատենտ) ձևով, այն անհրաժեշտաբար ամրագրված չէ, այսինքն կայունությունը նրա հիմնական հատկանիշներից չէ (կան նաև դիֆուզ և դինամիկ դիրքորոշումներ): [1, էջ 102]

Իմի բերելով կարծրատիպերի և դիրքորոշումների վերաբերյալ գործնականում առկա հետազոտությունները, այնուամենայնիվ մեզ հետաքրքրեց կարծրատիպերի և սոցիալ-հոգեբանական դիրքորոշումների միջև առկա փոխկապակցվածությունը և փոխապայմանավորվածությունը:

Հետազոտության նպատակն էր ուսումնասիրել սոցիալական կարծրատիպերի կապը սոցիալ-հոգեբանական դիրքորոշումների հետ: Հետազոտության ժամանակ կիրառել ենք դիտման, գիտափորձի և թեստավորման մեթոդները: Առաջադրված նպատակին հասնելու համար հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդիկաները


➤ «Կարծրատիպային պատկերացումների արտահայտվածության մակարդակի ուսումնասիրման» հեղինակային հարցարանը,

➤ Օ. Ֆ. Պոտյոմկինայի «անձի սոցիալ-հոգեբանական դիրքորոշումների ախտորոշում մոտիվացիոն-պահանջմունքային ոլորտում» մեթոդիկան: [4]

Հետազոտություններն իրականացվել են «Ռ և Վ» ՍՊԸ շինանյութի մասնագիտացված խանութների ցանցում, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հոգեբանական դիտարանում, ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանում և «Այգ» հոգեբանական ծառայությունների կենտրոնում: Հետազոտությանը մասնակցել են 20-60 տարեկան կանայք և տղամարդիկ՝ ընդհանուր թվով 300 անձ, ովքեր ունեին տարբեր մասնագիտություններ:

Արդյունքների մշակում և վերլուծություն: «Կարծրատիպային պատկերացումների արտահայտվածության մակարդակի ուսումնասիրում» հեղինակային հարցարանի միջոցով ուսումնասիրել ենք անձի կարծրատիպայնության մակարդակը: Հետազոտվողներին ներկայացվել են առավել շատ տարածված կարծրատիպերը (մասնագիտական, տարիքային ու սեռադերային) և առաջարկվել է նշել այդ պնդումների հետ նրանց համաձայնության աստիճանը: Յուրաքանչյուր պնդում գնահատվում է 0-5 միավորով, որքան միավորների գումարը շատ է, այնքան կարծրատիպայնության մակարդակը բարձր է: Հարցարանի բովանդակային առանցքը կազմում են 30 պնդումներ: Կարծրատիպերն արտահայտվում են այնպիսի պատկերացումներում, ինչպիսիք են «Կանայք քաղաքականությունից ոչինչ չեն հասկանում», «Դեռահասների մեծամասնությունը ագրեսիվ են», «Բոլոր գործարարները ազահ են ու ժլատ» և այլն:

Հետազոտության արդյունքների վերլուծության համաձայն հետազոտվողների 22%-ը ունեն կարծրատիպայնության ցածր մակարդակ, 46%-ի մոտ նկատվում է կարծրատիպերի արտահայտվածության միջին, իսկ 32%-ի մոտ՝ բարձր մակարդակ: Հետազոտության տվյալները ներկայացված են զճապատկեր 1-ում:



Գծապատկեր 1. Կարծրատիպային պատկերացումների արտահայտվածության մակարդակի ուսումնասիրման թվային տվյալները (հետազոտվողների ընդհանուր խումբ) [n=300]


Օ. Ֆ. Պոտյոմկինայի «անձի սոցիալ-հոգեբանական դիրքորոշումների ախտորոշում մոտիվացիոն-պահանջմունքային ոլորտում» մեթոդիկան բաղկացած է 80 հարցերից: Առաջին մասը (40 հարց) ցույց է տալիս, թե ինչն է կյանքում կարևոր՝ ալտրոիզմ կամ էսասիություն, գործընթաց կամ արդյունք: Երկրորդ մասը (40 հարց) ուղղված է գնահատելու ազատության կամ իշխանության, աշխատանքի կամ գումարի կարևորությունը: Մեթոդիկայի նպատակն է կատարել սոցիալ-հոգեբանական դիրքորոշումների արտահայտվածության մակարդակի ուսումնասիրում: Տեսակներից յուրաքանչյուրի գերակշռումը ցույց է տալիս, թե մարդու համար, որն է ավելի կարևոր: Շատ կարևոր է ոչ միայն այն, թե տվյալ բնորոշումներից որն է գերակշռում, այն նաև նրանցից որն է ամենաքիչը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ներկայացվել է միջինացված տվյալներով: Համաձայն ստացված տվյալների դիրքորոշումը դեպի ալտրոիզմ և ազատություն գերակշռում է մյուս 6 դիրքորոշումների նկատմամբ, համապատասխանաբար՝ կողմնորոշում դեպի ալտրոիզմ՝ 7.6 միավոր, կողմնորոշում դեպի ազատություն՝ 7.1: Դիրքորոշումը դեպի ալտրոիզմ բնութագրվում է մարդու մոտիվացիայով դեպի ուրիշները, որի ժամանակ մարդը գործում է ի օգուտ դիմացինի: Այսպիսի դիրքորոշումը համարվում է արժեքավոր, իսկ անձը, ով տիրապետում է, արժանի է հարգանքի: Ազատության դիրքորոշում ունեցող մարդկիկ չեն հանդուրժում ոչ մի սահմանափակում և պատրաստ են շատ բան զոհել հանուն ազատության:

Հակառակ բևեռին անդրադառնալով կարող ենք նշել որ ամենաքիչ միավոր նկատվում է երկու դիրքորոշումների դեպքում, համապատասխանաբար դիրքորոշում դեպի էսասիություն՝ 2.1 միավոր, դիրքորոշում դեպի գումար 1.6 միավոր: Դեպի էսասիություն կողմնորոշում ունեցող մարդկանց հետաքրքրությունները միշտ չէ որ պայմանավորված են նյութական շահով,

պարզապես որոշում կայացնելիս նրանք հաշվի են առնում այն, թե ինչպես հետևանքները կանդրադառնան իրենց վրա անհատապես: Դեպի գումարը դիրքորոշում ունեցող անձանց համար կարևոր արժեք է հանդիսանում նյութական բարեկեցությունը: Երբ նման մարդկանց մոտ գումար չկա, նրանք մտածում են այն մասին, թե ինչպես ձեռք բերեն, իսկ երբ ունեն, ինչպես պահեն և կրկնապատկեն: Այսպիսի դիրքորոշում ունեցող մարդկան համար գումարը ինքն իրենով ունի արժեք, այլ ոչ թե պարզապես ինչ-որ բան ձեռք բերելու համար է:

Մյուս չորս դիրքորոշումների դեպքում միավորները գրեթե հավասար են, համապատասխանաբար կողմնորոշում դեպի գործընթաց և արդյունք՝ 5.8 միավոր, և կողմնորոշում դեպի աշխատանք և իշխանություն՝ 5.5 միավոր: Հետազոտության տվյալները ներկայացված են գծապատկեր 2-ում:



Գծապատկեր 2. «Անձի սոցիալ-հոգեբանական դիրքորոշումների ախտորոշում մոտիվացիոն-պահանջմունքային ոլորտում» ուսումնասիրման թվային տվյալները (հետազոտվողների ընդհանուր խումբ) [n=300]

Երկու մեթոդիկաների վերլուծության տվյալները համադրելով կարող ենք ներկայացնել սոցիալական կարծրատիպերի և սոցիալ-հոգեբանական դիրքորոշումների փոխկապակցվածությունը: Կարծրատիպայնության ցածր (22%) մակարդակ ունեցող անձանց մոտ գերակշռում էր կողմնորոշումը դեպի արդյունք (7.6) և ազատություն (7.1), կարծրատիպայնության միջին (46%) մակարդակ ունեցող անձանց մոտ դիրքորոշումը ուղղված էր դեպի գործընթաց (5.8), արդյունք (5.8), աշխատանք (5.5) և իշխանություն (5.5), իսկ կարծրատիպայնության բարձր (32%) մակարդակ ունեցող անձանց մոտ դիրքորոշումը ուղղված էր դեպի եսասիրություն (2.1) և գումար (1.6): Ստացված տվյալները ամփոփ ձևով ներկայացված են աղյուսակ 1-ում:

Կարծրատիպայնության մակարդակ	Սոցիալ-հոգեբանական դիրքորոշումներ
Ցածր 22%	Դիրքորոշում դեպի ավտորիզմ՝ 7.6 մ.
	Դիրքորոշում դեպի ազատություն՝ 7.1 մ.
Միջին 46%	Դիրքորոշում դեպի գործընթաց՝ 5.8 մ.
	Դիրքորոշում դեպի արդյունք՝ 5.8 մ.
	Դիրքորոշում դեպի աշխատանք՝ 5.5 մ.
	Դիրքորոշում դեպի իշխանություն՝ 5.5 մ.
Բարձր 32%	Դիրքորոշում դեպի եսասիրություն՝ 2.1 մ.
	Դիրքորոշում դեպի գումար՝ 1.6 մ.

Աղյուսակ 1. Սոցիալական կարծրատիպերի և սոցիալ-հոգեբանական դիրքորոշումների փոխկապակցվածության ուսումնասիրման թվային տվյալները (հետազոտվողների ընդհանուր խումբ) (n=300)

Ամփոփելով հետազոտության արդյունքները կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունները.

➤ Հետազոտվողների մեծամասնության մոտ նկատվում էր կարծրատիպայնացման միջին մակարդակը (46%), իսկ կարծրատիպայնության բարձր մակարդակը (32%) գերակշռում էր ցածրի (22%) նկատմամբ:

➤ Անձի սոցիալ-հոգեբանական դիրքորոշումները մոտիվացիոն-պահանջմունքային ոլորտում մեթոդիկայի վերլուծության համաձայն դիրքորոշումը դեպի ավտորիզմ և ազատություն գերակշռում էր մնացած վեց դիրքորոշումների նկատմամբ, իսկ դիրքորոշումը դեպի եսասիրություն և նյութական ձգտումներ ամենաքիչն էր դիտարկվում:

➤ Կարծրատիպայնության ցածր մակարդակ ունեցող մարդիկ դիրքորոշում ունեին դեպի ավտորիզմ և ազատություն, քանզի այն մարդիկ ովքեր ձգտում են գործել ի օգուտ ուրիշների, հաճախ մոռանալով իրենք իրենց մասին առավել քիչ են առաջնորդվում հասարակության կողմից վերագրվող կարծրատիպերով: Նույնը կարող ենք ասել նաև ազատության մասին, քանի որ կարծրատիպերը սահմանափակում են մարդուն իր գործողություններում և մտածելակերպում, իսկ նման դիրքորոշում ունեցող անձի համար ամենակարևոր արժեքը ազատ լինելն է, և այսպիսի մարդիկ չեն հանդուրժում սահմանափակումներ, քանզի դա նրանց մոտ հանգեցնում է հոգեբանական ճնշվածության, և դա է պատճառը որ նման մարդկանց մոտ կարծրատիպայնության մակարդակը ցածր է: Հակառակ կողմին անդրադառնալով նշենք որ կարծրատիպայնության բարձր մակարդակ ունեցող անձիք դիրքորոշում ունեին դեպի եսասիրություն, ինչպես նաև ձգտում դեպի նյութականը: Նման մարդիկ օժտված են եսասիրական նկրտումներով՝ նման մարդկանց մոտ պատկերացումները կարծրացած են, նրանք չեն ընդունում այլ կարծիքներ և տեսակետեր: Ամփոփելով կարող ենք ասել, որ պատկերացումների կարծրացած համակարգում, նրանք ցուցաբերում են այլակարծության նկատմամբ ցածր հանդուրժողականություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մուրադյան Ս. Ա., Ստերեոտիպի փիլիսոփայական իմաստը/Խմբ.՝ ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյան.-Երևան: Հայաստան, 1985.- 152 էջ:

2. Նալչաջյան Ա., Էթնիկական հոգեբանություն, Երևան, «Զանգակ-97»: 2001թ. 544էջ
 3. Липпман У. Общественное мнение /Пер. с англ. Т.В. Барчунова. Под ред. К.А. Левинсон, К.В. Петренко.- М.: Институт Фонда «Общественное мнение», 2004. — 384 с.

4. Методика диагностики социально-психологических установок личности в мотивационно-потребностной сфере О.Ф. Потемкиной // Практическая психодиагностика: Методики и тесты: Учебное пособие / Ред. и сост. Райгородский Д.Я. – Самара, 2001-641-648.

5. Узнաձե Դ. Ն. Психология установки . — СПб.: Питер, 2001.- 416 с.

6. Newstone M. Giles H. Social group and social stereotypes in intergroup communication: a Rev. and model of intergroup communication breakdown//Intergroup communication/Ed. By W.B. Gudykunst. Edward Arnold Limited, 1986. P. 10-26

ЖОЗЕФИНА ЕСАЯН

Национальная Академия наук РА,
 Международный научно-образовательный центр, аспирантка кафедры психологии

ВЗАИМОДЕЙСТВИЕ МЕЖДУ УРОВНЕМ СТЕРЕОТИПНОСТИ ЛИЧНОСТИ И СОЦИАЛЬНЫМИ УСТАНОВКАМИ

Исследование выполнено при финансовой поддержке Государственного комитета по науке МОН РА в рамках научного проекта № «16А-5а08»

В статье представлены экспериментальные данные по изучению социальных стереотипов и установок. В частности, были изучены взаимосвязи между социальными стереотипами и установками. Проблемы социальных стереотипов и установок были представлены в рамках философии, социологии, экономики, психологии.

ZHOZEFINA YESAYAN

International Scientific-Educational Center of NAS RA, Department of Psychology,
 PhD student

INTERACTION BETWEEN THE LEVEL OF STEREOTYPITY OF THE PERSON AND SOCIAL ATTITUDES

This work was supported by the RA MES State Committee of Science within the framework of the project № '16A-5a08'.

The article presents experimental data on the study of social stereotypes and attitudes, particularly, the relationship between social stereotypes and attitudes were studied. The problems of social stereotypes and attitudes were presented within the framework of philosophy, sociology, economics and psychology.

ԶԱՐՈՒՇԻ ՇԱՀԻՆՅԱՆ

Խ. Արոլյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի
 հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի ասիստենտ,
 հոգեբանական գիտությունների թեկնածու

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ՀՍՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

Փոփոխվող հասարակության պայմաններում անձնավորության առջև սոցիալ-հոգեբանական ադապտացիայի խնդիր է դրվում: Ակտիվ գործունեու-

թյուն ծավալելու նպատակով անհրաժեշտ է դառնում կանխատեսել մոտ կամ հեռու ապագան, կարգավորել հակասությունները և սոցիալական նորմերին համապատասխան վարքագիծ մշակել: Այդ պայմաններում առավել կարևոր նշանակություն է ստանում ինքնակառավարման հիմնախնդիրը:

Անձնավորության վարքի և գործունեության կարգավորման մեխանիզմների ձևավորումը սկսվում է մարդու կենսագործունեության ընթացքում վաղ տարիներից սկսած և շարունակվում է մարդու ամբողջ կյանքի ընթացքում: Հույզերի, անձնային հատկությունների, պահանջմունքների, նպատակների, դիրքորոշումների, արժեհամակարգի, իդեալների ձևավորման և դրանց կարգավորիչ գործառնությունների ընդլայնմանը զուգընթաց ինքնակառավարման համակարգը կատարելագործվում է, կառուցվածքը⁸ բարդանում:

Ինքնակառավարումը ինտեգրացված գործընթաց է, որը ենթադրում է անձի իմացական, հուզականային ոլորտների և անձնային հատկությունների, կառույցների համադրական գործունեություն:

Գիտական գրականության մեջ ինքնակառավարման հիմնախնդիրն ուսումնասիրված է տարբեր տեսանկյուններից, սակայն նրա առանձին բաղադրամասերի, անձնային հատկությունների և անձնային կառույցների համակարգային ուսումնասիրությունը հնարավորություն կտա բացահայտել նրա առանձին բաղադրամասերի համահարաբերակցությունը և նրանցից յուրաքանչյուրի գործառնությունը՝ ինքնակառավարման ընդհանուր գործընթացում:

Ինքնակառավարումը կարևորվում է, հատկապես, մարդու գործունեության լարվածության իրավիճակներում, երբ նա կանգնած է մի կողմից սեփական հուզական ոլորտի կարգավորման, մյուս կողմից՝ գործունեության ողջ ընթացքի վերահսկման և կառավարման խնդիրների առջև:

Այս պայմաններում առանձնակի նշանակություն է ստանում մի կողմից՝ ինքնակառավարման մեխանիզմների, մյուս կողմից՝ անձնային հատկությունների ուսումնասիրությունը և հոգեկան տարբեր վիճակներում դրանց համահարաբերակցման օրինաչափությունների բացահայտումը:

Այդ իսկ պատճառով հետաքրքիր էր ուսումնասիրել ինքնակառավարման առանձին բաղադրամասերի և անձնային հատկությունների համահարաբերակցության առանձնահատկությունները՝ հոգեկան տարբեր վիճակներում:

Մեր ուսումնասիրության նպատակն է եղել բացահայտել ինքնակառավարման բաղադրամասերի և անձնային հատկությունների համահարաբերակցային առանձնահատկությունները հարաբերական հանգստի և քննական լարվածության պայմաններում:

Ենթադրվում է, որ ինքնակառավարման բաղադրամասերը սերտ կապված են անձնային հատկությունների հետ և քննական լարվածության պայմաններում մասնակի փոփոխություններ են կրում: Հոգեկան լարվածության պայմաններում ինքնակառավարման տարբեր բաղադրամասերի արդյունավետությունը պայմանավորվում է որոշակի անձնային հատկություններով:

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են ՀՊՄՀ-ի Հոգեբանության և սոցիալական մանկավարժության ֆակուլտետի I և II կուրսի 109 ուսանող: Հետազոտական աշխատանքները կազմակերպվել են երկու փուլով՝ գիտա-

փորձեր հարաբերական հանգստի պայմաններում և քննական լարվածության պայմաններում:

Ինքնակառավարման բաղադրամասերը ուսումնասիրելու նպատակով օգտագործել ենք “Ինքնակառավարման ընդունակություն” մեթոդիկան (մշակված Մ. Ն. Պեյսախովի) [3, էջ 339-347] և Անձնավորության ուսումնասիրության ստանդարտացված բազմագործոն մեթոդիկան /MMPI/ [2] :

Այս փուլում կատարվել են ինքնակառավարման բաղադրամասերի ու անձնային հատկությունների հետազոտությունները հարաբերական հանգստի պայմաններում:

Ինքնակառավարման բաղադրամասերի և անձնային հատկությունների փորձարարական արդյունքների համահարաբերակցային վերլուծությունը ցույց է տալիս, որ բացասական կապ է գրանցվել ինքնակառավարման բաղադրամասի՝ հակասությունների վերլուծության $p < 0,05$ և հուզական անկայունության ($r = -0,191$), տագնապայնության ($r = -0,190$), ռիզիկոսության ($r = -0,189$) և $p < 0,01$ իմպուլսիվության ($r = -0,251$), միջև: Հակասությունների վերլուծության բաղադրամասի և իմպուլսիվության միջև բացասական կապը բացատրվում է այս տիպին բնորոշ վարքային, իմացական հատկություններով, վայրկենական մղումներով գործելու, հաճախ նրանց արարքները առաջ են ընկնում դատողություններից և գործողությունները կարգավորող իմացական գործընթացներից: Հակասությունների վերլուծության և ռիզիկոսության հետ բացասական կապը կարելի է բացատրել այս տիպին բնորոշ անսպասելի իրավիճակներում նրա անբավարար ճկունության, նպատակների անորոշությամբ, ինչը հանգեցնում է նրան, որ նա չի հասցնում մտածել, վերլուծել: Տագնապային մարդիկ նույնպես հակասություններ վերլուծելու ընդունակ չեն, քանի որ նրանց հատուկ է բարձր զգայունակությունը, անհանգստությունը, անվստահությունը, ուշադրության անկայունությունը: Դրական ամուր կապ է ստեղծվել $p < 0,01$ ինքնակառավարման բաղադրամասի հակասությունների վերլուծության և անհատականության միջև ($r = 0,251$), ինչը կարող ենք բացատրել այս տիպին բնորոշ վերացական-վերլուծական մտածողությամբ, մինիմալ ինֆորմացիայի հիման վրա վերստեղծման ընդունակությամբ: $P < 0,05$ ճշտության դրական կապեր են բացահայտվել հակասությունների վերլուծության բաղադրամասի, լավատեսության և ակտիվության ($r = 0,190$), սոցիալական ինտրովերսիայի ($r = 0,191$) միջև: Ինքնակառավարման հակասությունների վերլուծության բաղադրամասի և սոցիալական ինտրովերսիայի միջև անմիջական կապ կա, քանի որ այս տիպի մարդկանց հետաքրքրությունները ուղղված են ներքին ապրումների աշխարհ, նրանք ունեն վերլուծական մտածողություն: $P < 0,05$ հավաստիության բացասական կապ է ստեղծվել ինքնակառավարման կանխատեսման բաղադրամասի և հուզական անկայունության ($r = -0,191$), իմպուլսիվության ($r = -0,189$), տագնապայնության ($r = -0,192$) միջև: Կանխատեսման և հոռետեսության հետ բացասական կապը, մեր կարծիքով, պայմանավորված է նրանով, որ անձնային այս հատկությունն ունեցող մարդկանց մոտ առաջատար մոտիվացիոն ուղղվածությունն է անհաջողությունից խուսափելը: $p < 0,01$ ճշտության դրական կապեր են հաստատվել կան-

խատեսման և անհատականության ($r=0,254$), լավատեսության և ակտիվության ($r= 0,250$) և ըստ $p\leq 0,05$ ճշտության՝ սոցիալական ինտրովերսիայի ($r=0,192$) հետ: Կանխատեսման և անհատականության հետ դրական կապը վկայում է այն մասին, որ այս տիպը ունի վերլուծական մտածողություն, ինչը նպաստում է մինիմալ ինֆորմացիայի հիման վրա նպատակի պատկերի ստեղծմանը: Լավատեսության սանդղակը դրական կապով կապվել է կանխատեսման բաղադրամասի հետ, քանի որ այս տիպի մարդկանց մոտ գերակշռում է շրջապատող աշխարհի ուրախ ընկալումը, վստահությունը ապագայի նկատմամբ, սեփական երջանկության համոզվածությունը: Կանխատեսման և սոցիալական ինտրովերսիայի հետ դրական կապը պայմանավորված է այս տիպի վերլուծական մտածողության հետ: $P\leq 0,05$ հավաստիության բացասական կապ է ստեղծվել ինքնակառավարման նպատակադրման բաղադրամասի և հուզական անկայունության ($r = -0,190$), իմպուլսիվության ($r = -0,191$), տագնապայնության ($r = -0,190$) միջև: Դրական $p\leq 0,01$ սերտ կապեր են բացահայտվել նաև պլանավորման և լավատեսության ($r=0,251$) միջև: Պլանավորման և սոցիալական ինտրովերսիայի միջև գրանցվել է $p\leq 0,05$, երբ $r=0,194$ կապ: Ինքնակառավարման պլանավորման բաղադրամասի դրական կապը լավատեսության հետ պայմանավորված է վերջինիս ակտիվության բարձր մակարդակով, դրական ինքնագնահատականի, ապագայի նկատմամբ վստահությամբ: Պլանավորման և սոցիալական ինտրովերսիայի հետ, դրական կապը պայմանավորվում նրանով, որ ինտրովերտները վերլուծող են, պլանավորող, սթրեսի նկատմամբ դիմացկուն:

Անձնային հատկությունների համահարաբերակցային վերլուծության ընթացքում բացասական $p\leq 0,01$ ճշտության կապեր գրանցվեցին ինքնակառավարման հաջողության գնահատման չափանիշների, ներոտիկ գերվերահսկողության ($r= - 0,250$) միջև: $P\leq 0,05$ ճշտության բացասական կապեր են գրանցվել հուզական անկայունության ($r= -0,189$), իմպուլսիվության ($r = -0,193$) տագնապայնության հետ ($r= - 0,193$): Հաջողության գնահատման չափանիշների հետ բացասական կապերը ներոտիկ գերվերահսկողության սանդղակի հետ կարելի է բացատրել նրանով, որ նրանց մոտ հիմնական խնդիրը ինքնաբերականության ճնշումն է, ակտիվ ինքնաիրացման զսպումը, անտարբերությունը որոշումներ ընդունելու մեջ, որը զուգակցվում է լուրջ պատասխանատվությունից խուսափելու միտման հետ, քանի որ կարող է չհաղթահարել այն: Հոռետեսության և հաջողության գնահատման չափանիշների միջև բացասական կապը կարելի է բացատրել այս տիպի հոռետես հատկությամբ անհաջողությունից խուսափելու ուղղվածության շարժառիթավորվածությամբ, ինքնաիրացումից հրաժարումն է ինքնապաշտպանված լինելու նկատառումով: Ինքնակառավարման հաջողության գնահատման չափանիշների բաղադրամասի բացասական կապը հուզական անկայունության, տագնապայնության հետ կարելի է բացատրել նրանով, որ այս տիպը տագնապային է, անվստահ, նրա հոգեկանը աններդաշնակ է, ինքնակառավարման խնդիրներ ունի: Դրական կապ է ստեղծվել ինքնակառավարման հաջողության գնահատման չափանիշների բաղադրամասի լավատեսության և ակտիվության միջև ($r=0,187$): Հա-

վաստիության $p \leq 0,01$ մակարդակի դրական կապ է ստեղծվել որակի գնահատման չափանիշների և անհատականության միջև, երբ $r=0,249$: Հաջողության գնահատման չափանիշների բաղադրամասի լավատեսության և ակտիվության և անհատականության հետ պայմանավորված է նրանով, որ նրանք ունեն հաջողության մոտիվացիայի բարձր մակարդակ, շարժողական ակտիվություն, կենսասիրության բարձր մակարդակ: Անհատականության /Ես-ի արտահայտվածություն/ հետ դրական կապը բացատրվում է նրանով, որ նրանք էլ ակտիվ են, այս անձինք ունեն վերլուծական մտածողություն, հայացքների և մղումների յուրատիպություն: Ինքնակառավարման որոշման ընդունման բաղադրամասի հետ $p \leq 0,05$ հավաստիության բացասական կապեր են ստեղծվել ներքոտիկ գերվերահսկողության ($r = -0,191$), հուզական անկայունության ($r = -0,194$), իմպուլսիվության ($r = -0,189$), տագնապայնության ($r = -0,189$) միջև: Որոշման ընդունման բաղադրամասի բացասական կապը ներքոտիկ գերվերահսկողության հետ կարելի է բացատրել, որ ներքոտիկ անձինք ունեն դժվար են որոշումներ ընդունում, պատասխանատվությունից խուսափում են, նրանց մոտ լարվածությունը վերածվում է հիվանդագին հակազդման: Հուզական անկայունության, իմպուլսիվության անձնային հատկությամբ մարդկանց բնորոշ է հույզերի անկայունություն, անկայուն ինքնագնահատական: Որոշման ընդունման և տագնապայնության հետ բացասական կապը ակնհայտ է, քանի որ այս տիպին բնորոշ է բարձր զգայունակություն, հոգեկան աններդաշնակություն, անվճռականություն, անվստահություն: $P \leq 0,01$ ուժեղ բացասական կապ է ստեղծվել որոշման ընդունման և տագնապայնության միջև, երբ $r = -0,189$, միջև և $p \leq 0,05$ ճշտության^a որոշման ընդունման և անհատականության ($r = -0,190$), լավատեսության և ակտիվության ($r = -0,191$) միջև: Ինքնակառավարման^a որոշման ընդունման բաղադրամասը դրական կապով կապվել է լավատեսության և ակտիվության և անհատականության հետ, ինչը պայմանավորված է նրանով, որ օպտիմիստները լավատես են, ինքնավստահ, ակտիվ, ունեն հաջողության հասնելու բարձր մոտիվացիա: Անհատականության հետ դրական կապը կարելի է բացատրել նրանով, որ այս տիպը ունի վերացական-վերլուծական մտածողություն և այս տիպի մարդկանց հատուկ է որոշումներ ընդունելու ժամանակ սուբյեկտիվ ընտրության ազատության պահանջումները: Ինքնակառավարման ինքնավերահսկման բաղադրամասի հետ $p \leq 0,05$ հավաստիության բացասական կապեր են ստեղծվել ներքոտիկ գերվերահսկողության ($r = -0,189$), հուզական անկայունության ($r = -0,191$), իմպուլսիվության ($r = -0,189$), տագնապայնության ($r = -0,188$) միջև: Ուժեղ կապեր են հաստատվել $p \leq 0,01$ ինքնավերահսկման և անհատականության ($r = 0,251$) և սոցիալական ինտրովերսիայի ($r = 0,254$) միջև: Լավատեսության և ակտիվության միջև $p \leq 0,05$ գրանցվել է դրական կապ $r = 0,193$ միջև: Ինքնակառավարման շտկման բաղադրամասի հետ $p \leq 0,05$ հավաստիության բացասական կապեր են ստեղծվել հուզական անկայունության ($r = -0,193$), իմպուլսիվության ($r = -0,192$), տագնապայնության ($r = -0,187$) միջև: Ինքնավերահսկման, շտկման կապը հուզական անկայունության, տագնապայնության, իմպուլսիվության հետ բացասական կապերը ակնհայտ են, քանի որ այս տի-

պի մարդկանց բնորոշ է բարձր զգայունակությունը, հոգեկան աններդաշնակությունը, անվճռականությունը, անվստահությունը: Ինքնակառավարման շտկման բաղադրամասը $p \leq 0,01$ դրական կապով կապված է անձնային հատկությունների՝ անհատականության ($r = 0,254$) և սոցիալական իտրովերսիայի ($r = 0,252$), ըստ $p \leq 0,05$ ճշտության՝ լավատեսության և ակտիվության ($r = 0,189$) միջև: Ինքնակառավարման ինքնավերահսկման և շտկման բաղադրամասերը դրական կապով կապված են հաստատել անհատականության հետ, ինչը վկայում է այն մասին, որ նրանք ունեն վերլուծական մտածողություն, հակվածություն դատողությունների նկատմամբ գերակշռում է զգացմունքների և ակտիվության նկատմամբ: Լավատեսության և ակտիվության հետ կապը պայմանավորված է անձնավորության այս տիպի ակտիվությամբ, բարձր տրամադրությամբ, ինքնավստահությամբ, դրական ինքնագնահատականով, այս տիպի մարդիկ հուզական բռնկումները հեշտությամբ են հաղթահարում: Ինքնավերահսկման և շտկման կապը սոցիալական ինտրովերսիայի հետ բացատրվում է նրանով, որ ինտրովերսիայի միտքը ճկուն է ոչ թե արագության հաշվին, այլ խորը և մանրակրկիտ վերլուծելու հաշվին:

Փորձարարական մասի այս փուլում կատարվել են ինքնակառավարման բաղադրամասերի ու անձնային հատկությունների հետազոտությունները քննական լարվածության պայմաններում, որին մասնկացել են ՀՊՄՀ-ի Հոգեբանության և սոց. մանկավարժության ֆակուլտետի երրորդ և չորրորդ կուրսի թվով 109 փորձարկվող:

Ինքնակառավարման և անձնային հատկությունների տվյալների համահարաբերակցային վերլուծության արդյունքում պարզվել է, որ $p \leq 0,01$ հավաստիության բացասական կապեր են հաստատվել ինքնակառավարման և իմպուլսիվության ($r = -0,254$), տազնապայնության ($r = -0,251$), ռիզիդության ($r = -0,253$) միջև: $P \leq 0,05$ հավաստիության բացասական կապ է հաստատվել ինքնակառավարման հակասությունների վերլուծության բաղադրամասի, հուզական անկայունության ($r = -0,192$) միջև: Դա կարելի է բացատրել նրանով, որ այս անձնային հատկություն ունեցող մարդկանց մտածողությունը և ռացիոնալությունը զուգակցվում են անսպասելի իրավիճակներում նրա անբավարար ճկունության և այլ գործունեության փոխանցելու դժվարությունների հետ: Ռիզիդությունը բնութագրվում է որպես իրավիճակին համապատասխան վարքը փոփոխելու, սեփական գործողությունների ծրագիրը իրավիճակին արագ կերպով համապատասխանելու անկարողություն և բնական է, որ նման իրավիճակում հակասությունների վերլուծությունը դժվարությամբ կկատարվի:

$P \leq 0,05$ ճշտության դրական կապ է բացահայտվել անհատականության ($r = 0,193$) և լավատեսության և ակտիվության միջև ($r = 0,190$): Հակասությունների վերլուծության և անհատականության սանդղակի հետ դրական կապը վկայում է այն մասին, որ այս տիպի մարդկանց բնորոշ է մտածողության վերացական, վերլուծական մտածողությունը: Հակասությունների վերլուծության և լավատեսության ու ակտիվության միջև դրական կապը կարելի է բացատրել նրանով, որ անձնային այս հատկությունն ունեցող մարդկանց մոտ միշտ գերիշխում է բարձր տրամադրությունը, ակտիվությունը, հաջողության

շարժառիթավորման բարձր մակարդակը, սթրեսի ժամանակ ավելի է ուժեղանում ակտիվությունը:

Կանխատեսման բաղադրամասը $p \leq 0,05$ հավաստիության բացասական կապով կապվել է հոռետեսության ($r = -0,189$) և ռիզիդության ($r = -0,190$) հետ:

Ինքնակառավարման կանխատեսման բաղադրամասի և հոռետեսության, ռիզիդության հետ բացասական կապը ակնհայտ է, քանի որ հոռետեսների մոտ լարվածության պայմաններում շրջափակվում է նրանց ակտիվությունը, հոգեբանական ինքնաիրացումից հրաժարումը պաշտպանական մեխանիզմ է դառնում: Ռիզիդության հետ բացասական կապը պայմանավորված է նյարդային գործընթացների ոչ շարժունությամբ:

Հոգեբանության մեջ ռիզիդությունը դիտարկվում է որպես անհատական հոգեբանական առանձնահատկություն և բնորոշվում է որպես իրավիճակի պահանջներին համապատասխան գործունեության պլանը, վարքը փոխելու անկարողություն, անընդունակություն [1]: Ռիզիդ մարդը չի կարողանում փոխել վարքը, հարմարեցնել իրավիճակին, առաջին իսկ ռեակցիան է տալիս, իսկ ձկուն մարդու մոտ հակազդումը լինում է խնդիրը ինտելեկտի միջոցով կարգավորվելուց հետո միայն:

Մեր ուսումնասիրության արդյունքների համահարաբերակցային վերլուծության արդյունքում $p \leq 0,05$ հավաստիության դրական կապեր են բացահայտվել նաև ինքնակառավարման կանխատեսման բաղադրամասի և անհատականության ($r = 0,190$), լավատեսության և ակտիվության միջև ($r = 0,193$):

Նպատակադրման ցուցանիշը՝ $p \leq 0,01$ նշանակությամբ կապվել է անհատականության հետ ($r = 0,253$), լավատեսության և ակտիվության ($r = 0,191$) և սոցիալական ինտրովերսիայի հետ ($r = 0,194$), կապերն արտահայտվել են $p \leq 0,05$ մակարդակում:

Ինքնակառավարման՝ նպատակադրման, կանխատեսման բաղադրամասերի, և անհատականության դրական կապվածությունը պետք է բացատրել նրանով, որ այս տիպի մոտ գերիշխում է վերլուծական մտածողությունը: Լավատեսության և ակտիվության հետ դրական կապը պայմանավորված է ինդիվիդուալիստի՝ ակտիվությամբ, ինքնավստահությամբ, հաջողության մոտիվացիայի բարձր մակարդակով, ապագայի նկատմամբ վստահությամբ, ինչը թույլ է տալիս նրան կանխատեսել, նպատակներ դնել: Նպատակադրման և սոցիալական ինտրովերսիայի հետ դրական կապը կարելի է բացատրել նրանով, որ այս տիպին բնորոշ է ակտիվության ցածր դրսևորում, նրանց միտքը ձկուն է ոչ թե արագության, այլ երկար և խորը վերլուծելու շնորհիվ: Պլանավորումը $p \leq 0,01$ ճշտությամբ բացասական կապով կապվել է ներոտիկ գերվերահսկողության ($r = -0,250$), դրական կապով՝ անհատականության հետ ($r = 0,251$): Պլանավորման և ներոտիկ վերահսկողության բացասական կապը կարելի է բացատրել նրանով, որ հոգեկան լարվածության պայմաններում ներոտիկների մոտ հուզական լարվածությունը վերածվում է հիվանդագին հակազդման, ինչը թուլացնում է ինքնակառավարման մեջ պլանավորման գործընթացը: $P \leq 0,05$ հավաստիության դրական կապեր են բացահայտվել նաև ինքնակառավարման^a պլանավորման և լավատեսության և ակտիվության

($r=0,188$) և սոցիալական ինտրովերսիայի միջև ($r=0,190$): Ինքնակառավարման պլանավորման բաղադրամասի և լավատեսության ու ակտիվության հետ դրական կապը ակնհայտ է, քանի որ եթե մարդը ակտիվ է, ինքնավստահ, հաջողության նկատմամբ դրական տրամադրվածություն ունի, ապա կկարողանա սեփական վարքը պլանավորել և կառավարել: Պլանավորման սանդղակի և սոցիալական ինտրովերսիայի դրական կապը վկայում է այն մասին, որ ընդհանրապես ինտրովերսները հավասարակշռված են, հակված են վերլուծելու և պլանավորելու:

Հաջողության գնահատման չափանիշները $p \leq 0,01$ ուժգնությամբ կապվել են անհատականության ($r= 0,250$) և $p \leq 0,05$ ճշտությամբ լավատեսության և ակտիվության ($r=0,194$) և սոցիալական ինտրովերսիայի հետ ($r=0,190$): Ինքնակառավարման հաջողության գնահատման չափանիշների բաղադրամասի հետ անհատականության և սոցիալական ինտրովերսիայի դրական ուժեղ կապերը պայմանավորված են նրանով, որ այս տիպի մարդկանց մոտ գերակայում է մտածողության վերացական-վերլուծական ոճը, քանի որ անհատականությունն այնքան արտահայտված է, որ այս տիպի մարդկանց հատուկ է որոշումների ընդունման ժամանակ սուբյեկտիվ ընտրության մեջ ազատ լինելու պահանջմունքը:

$P \leq 0,01$ ճշտության բացասական կապեր են հաստատվել որոշման ընդունման բաղադրամասի և ներոտիկ գերվերահսկողության ($r= -0,253$), հոռետեսության ($r= -0,252$), սոցիալական ինտրովերսիայի ($r= -0,251$), $p \leq 0,05$ ճշտության բացասական կապ է հաստատվել իմպուլսիվության ($r= -0,190$) և դրական կապ լավատեսության և ակտիվության ($r=0,191$) միջև: Ինքնակառավարման որոշման ընդունման բաղադրամասի և ներոտիկ վերահսկողության, հոռետեսության, սոցիալական ինտրովերսիայի, իմպուլսիվության անձնային հատկությունների հետ բացասական կապը կարելի է բացատրել նրանով, որ հոգեկան լարվածության պայմաններում ներոտիկների կողմից հուզական լարվածությունը վերածվում է հիվանդագին հակազդման, հոռետեսների մոտ լարվածության պայմաններում դրսևորվում է ակտիվության շրջափակում, իմպուլսիվ վարքին բնորոշ շուտափույթ որոշումների ընդունում:

Որոշման ընդունման և լավատեսության ու ակտիվության հետ դրական կապը պետք է բացատրել այն փաստով, որ լավատես և ակտիվ մարդիկ ինքնավստահ են, ունեն օբյեկտիվ ինքնագնահատական, վստահություն ապագայի նկատմամբ:

$P \leq 0,05$ հավաստիության դրական կապեր են բացահայտվել ինքնակառավարման ինքնավերահսկման բաղադրամասի և անհատականության ($r=0,191$) և լավատեսության ու ակտիվության ($r= 0, 192$) միջև: Ինքնակառավարումը $p \leq 0,01$ հուսալիության կապի մեջ է սոցիալական ինտրովերսիայի հետ ($r= 0,250$):

Ինքնակառավարման շտկման բաղադրամասի հետ դրական կապերի մեջ են անձնային հատկությունները՝ անհատականության ($r=0,190$), լավատեսությունն և ակտիվությունը ($r=0,189$), և սոցիալական ինտրովերսիան ($r=0,193$): Անձնային հատկություններից անհատականությանը /ինդիվիդուալիզմին/

բնորոշ է հայացքների անկախություն, որոշումների ընդունման ժամանակ սուբյեկտիվ ընտրություն, վարքի վերահսկում, ինչը բնորոշ է ինքնակառավարման ինքնավերահսկման և շտկման բաղադրամասերին: Ինքնավերահսկման և շտկման բաղադրամասերի կապը լավատեսության և ակտիվության հետ կարելի է բացատրել նրանով, որ այս տիպի մարդիկ լավատես են, ակտիվ, ունեն պրոբլեմների մերժման հզոր պաշտպանական մեխանիզմ: Սոցիալական ինտրովերսիան ինքնավերահսկման և շտկման հետ դրական կապի մեջ է, քանի որ ինտրովերտները լարվածության պայմաններում կայուն են և վերլուծական մտածողություն ունեն:

Ինչպես տեսնում ենք, ներոտիկ գերվերահսկողության անձնային հատկությունը երկու հոգեվիճակներում էլ գտնվում է ցածր և միջին մակարդակներում: Այս հատկությանը բնորոշ է ակտիվ ինքնաիրականացման զսպումը, անտարբերություն որոշումներ ընդունելու մեջ, գերպատասխանատվությունը զուգակցվում է լուրջ պատասխանատվությունից խուսափելու միտման հետ, քանի որ կարող է չհաղթահարել այն: Մտացված տվյալները վկայում են այն մասին, որ տվյալ տարիքային խմբին այս հատկությունները բնորոշ չեն: Ներոտիկ գերվերահսկողության այսպիսի տվյալները համապատասխանում են նյարդային անկայունության սանդղակի տվյալներին, այսինքն հարաբերական հանգստի պայմաններում չափավոր բարձր անկայունության ցուցանիշ ունեցել են փորձարկվողների 1%-ը, MMPI մեթոդիկայում ներոտիկ գերվերահսկողությունն արտահայտված է եղել 2%: Գերլարվածներ չկան, քանի որ գերլարվածությունը բնորոշ է նյարդային անկայունությանը:

Մեր ստացած արդյունքներից երևում է, որ հիմնականում գերակայում են ցածր և միջին ցուցանիշները: Հռեոտեսությունը կայուն հիմնային հատկություն է, սակայն լարվածության պայմաններում նկատվում է ցածր ցուցանիշի փոփոխություն: Այս հատկությունը տվյալ տարիքային խմբին բնորոշ չէ: Հիմնականում գերակշռում են ցածր ցուցանիշները, ընդ որում՝ տատանումը քիչ է: Ամենայն հավանականությամբ, այս հատկությունը դրսևորվում է անհաջող քննություն տալու վախից: Այստեղ ոչ թե հատկությունն է փոխվում, այլ փոխվում է դրսևորման ձևը:

Այստեղ, հիմնականում տվյալները գտնվում են միջին և բարձր մակարդակներում: Հուզական անկայունությունը միջին մակարդակում է գտնվում: Այս տարիքային խմբին հուզական անկայունությունը բնորոշ է, քանի որ պատանին դեռևս հույզերի կարգավորման խնդիր ունի:

Իմպուլսիվությունը հիմնականում երկու հոգեվիճակում էլ նկատվում են միջին տվյալների գերակայություն, սակայն հոգեկան լարվածության պայմաններում միջին տվյալը աճում է, ինչը օրինաչափ է:

Ընդհանրապես, ռիզիկոյությանը բնորոշ է անսպասելի իրավիճակներում անբավարար ճկունությունը, այլ գործունեության փոխանցվելու դժվարությունները, դիրքորոշումների ասթենիկությունը, նպատակների անորոշությունը: Փորձարկվողների այս խմբում ռիզիկոյությունը կարելի է բնորոշել որպես հանդարտություն, քանի որ այս տարիքային խումբը ռիզիկո չէ:

Արդյունքները ցույց են տալիս, որ հիմնականում արտահայտվել է ցածր և միջին տազնապայնության մակարդակ: Հոգեկան լարվածության պայմաններում տազնապայնությունը շատ քիչ փոփոխություններ է կրում: Այս փաստը բացատրվում է նրանով, որ տազնապայնությունը անձնային հատկություն է:

Այս հատկությունը կայուն է: Յուրաքանչյուր անհատականություն Ես-ի ամբողջ կառույցն է: Արդյունքներից երևում է, որ հիմնականում միջին և ցածր ցուցանիշները գերակշռում են, բարձր ցուցանիշներ արտահայտված չէ, քանի որ տարիքային այս խմբում վառ անհատականություններ դեռևս չեն ձևավորված:

Լավատեսությունը և ակտիվությունը ցուցանիշները հիմնականում արտահայտվել են միջին և բարձր միջակայքում: Հոգեկան լարվածության պայմաններում միջին ցուցանիշը նվազել է: Այս տվյալները կարելի է բացատրել այն հանգամանքով, որ լավատեսական հատկությունը բնորոշ է վաղ պատանեկությանը:

Սոցիալական ինտրովերսիան երկու հոգեվիճակում էլ միջին մակարդակում է արտահայտվել: Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ ինտրովերտները լարվածության պայմաններում կայուն են:

Հետազոտության ընթացքում բացահայտվել են ինքնակառավարման առանձին բաղադրամասերի արդյունավետությունը պայմանավորող անձնային հատկություններն և դրանց փոխհարաբերությունը՝ քննական լարվածության պայմաններում:

Փաստորեն մեր արդյունքները վկայում են այն մասին, որ կան հատկություններ, որոնք հիմնային հատկություններ են և ենթակա չեն փոփոխությունների, սակայն կոնկրետ իրադրության մեջ փոխվում է նրանց արդյունավետությունը, որովհետև ակտիվանում է մարդու հուզական ոլորտը, խանգարում գործունեության արդյունավետությանը:

Այսպիսով, կատարված ուսումնասիրության արդյունքներից կարելի է եզրակացնել, որ անձնային տազնապայնությունը, իմպուլսիվությունը, ռիզիկոսությունը, հուզական անկայունությունը խանգարում են իմացական բարդ գործընթացների իրականացմանը, հուզական ինքնավերահսկմանը, դրանով իսկ՝ ինքնակառավարման գործընթացին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Большой психологический словарь, под ред. Б.Г. Мещерякова, В.П. Зинченко, 3-ое изд., – СПб: Прайм –ЕВРОЗНАК, 2006, 672с.
2. **Собчик Л.Н.**, Стандартизированный многофакторный метод исследования личности, СМЛ, СПб, 2001, 219с.
3. **Столяренко Л. Д.** Основы психологии. Практикум, Ростов-на-Дону, 2006, 704 с.

ՀԱՐԱՆԱԳՐԱԿ

Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна, кафедра теории и истории психологии, ассистент, кандидат психологических наук

ВЗАИМОДЕЙСТВИЕ ЛИЧНОСТНЫХ КАЧЕСТВ И САМОРЕГУЛЯЦИИ В РАЗНЫХ ПСИХИЧЕСКИХ СИТУАЦИЯХ

В статье исследованы корреляционные особенности компонентов саморегуляции и выражения личностных качеств в различных психических состояниях. Исследование

показало связь и взаимодействие между личностными качествами компонентами саморегуляции. Согласно полученным результатам при психической напряженности личностная тревожность, ригидность, импульсивность, эмоциональная неустойчивость мешают компонентам саморегуляции.

ZARUHI SHAHINYAN

Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan,
Chair of Psychology

Theory and History, Assistant, Candidate of Psychological sciences

INTERACTION OF PERSONAL PECULIARITIES AND SELF-REGULATION IN DIFFERENT PSYCHOLOGICAL SITUATIONS

The article studies correlational peculiarities of emotional components of self-regulation and expression of personal peculiarities in different psychological situations. The study has revealed the interaction between personal peculiarities and self-regulation components. According to the results, personal anxiety, rigidity, impulsiveness, emotional instability interfere self-regulation components during physiological stress.

СЕДА МУСАЕЛЯН

Российско-Армянский (Славянский) университет, кафедра психологии, аспирант

ЭКЗИСТЕНЦИАЛЬНАЯ ПРОБЛЕМА ЛИЧНОСТИ В ОТНОШЕНИИ ПСИХОСОМАТИЧЕСКИХ НАРУШЕНИЙ КАК ФАКТОР ЗДОРОВЬЯ

В данной статье проведён обзор становления экзистенциальной проблемы и категории смысложизненных ориентаций, определены здоровье и психическое здоровье, а также психосоматическое нарушение, приведены результаты исследования отношения к здоровью и болезни и их связи со смысложизненными ориентациями личности.

Ключевые слова: *психосоматические нарушения, смысложизненные ориентации, экзистенциальная проблема, здоровье*

Проблема возникновения, течения и коррекции психосоматических нарушений находится в центре внимания не только медицины, но и современной психологии. Заболевания, возникающие как психосоматические нарушения, являются причиной смерти во всём мире. По данным ВОЗ, около 30% смертей в мире происходит по причине сердечно-сосудистых заболеваний, причём большая часть из этого числа приходится на ишемическую болезнь сердца, традиционно относящуюся к психосоматическим заболеваниям. Второе место по причине смертности занимает хронические обструктивные болезни лёгких, одной из которых является психосоматическая болезнь бронхиальная астма.[7] Для определения рисков и своевременного предотвращения психосоматических нарушений современная психология обращает внимание на особенности личности людей, имеющих психосоматические нарушения. Подобные нарушения значительно затрудняют адаптацию личности в современных условиях, требующих включённости человека в различные виды деятельности и социальные контакты. Часто в подобных условиях требуется чрезмерное

напряжение, в результате чего подключаются психогенные факторы, усложняющие процессы адаптации и приводящие к возникновению психосоматических нарушений. Вероятность возникновения и эффективность процесса коррекции психосоматических нарушений может быть связана с смысложизненными ориентациями человека, его отношением к болезни и здоровью.

Актуальность проблемы заключается в том, что в современном динамически развивающемся обществе особенно актуален вопрос адаптации, имеющей личностный, субъективный характер и связанный с экзистенциальной проблемой личности в отношении болезни и здоровья. Поэтому становится необходимым изучение экзистенциальной проблемы в отношении психосоматических нарушений и здоровья.

Целью исследования является изучение экзистенциальной проблемы отношения к психосоматическим нарушениям как фактор здоровья.

В первой половине XXв. в Европе возникло экзистенциальное направление психологии в противовес детерминистскому и объективному анализу человека и его психики на фоне развития экзистенциальной философии, привлекающей интерес к психологии и психиатрии. Представителями нового течения стали Ясперс, Босс, Бисвангер, Франкл и др. После Второй мировой войны идеи экзистенциализма распространились и в США. С точки зрения экзистенциализма (от лат. *existere*-выделяться, появляться) человек является конкретно и специфически осознающим уникальность своего бытия в конкретный момент времени и пространства, динамически развивающимся существом. Начиная с Кьеркегора, Хайдеггера, Ясперса, философы, а затем и психологи изучали проблемы смысла жизни, поиска смысла жизни и смерти, проблемы жизненного пути и другие, названные экзистенциальными проблемами. Так, Франкл определял психическое здоровье и гармонию между составляющими человеческого естества через смысл и ответственность, сосредоточение на объективной задаче. Психическому здоровью Франкл противопоставляет экзистенциальный вакуум, переживание отсутствия смысла жизни, следствиями которого являются депрессия, наркомания или агрессия, названные Франклом невротической триадой. Ролло Мей построил свою модель терапии на основе идеи активного участия личности в своей жизни. Примечательно, что эту идею он вывел из попытки сформировать отношение к собственной болезни как части своего бытия в противовес пассивной и беспомощной позиции.

Проблема смысла жизни рассматривалась с точки зрения взаимоотношения индивида с обществом в работах Бердяева, Кареева, Соловьёва и др. В работах А.Н.Леонтьева, Петровского и Рубинштейна смысл жизни определяется как структурный элемент деятельности, в свою очередь, представляющей в качестве способа существования человека в мире. Поэтому смысл жизни представляется смыслом социальной деятельности и нравственной самореализацией личности. Асмолов, Братусь и др. понимают смысл жизни как внутрличностный феномен и структурный элемент сознания. В таком понимании смысл жизни становится психологическим способом переживания жизни. Чудновский

рассматривает смысл жизни как присвоенную извне и ставшую целью жизни ценность высшего порядка, служению которой он может посвятить всю свою жизнь. [5, с. 215].

Наиболее разработанное определение категории «смысл» дал Леонтьев, определив смысл как отношение субъекта и объекта действительности, выделяющее объект в жизни субъекта и воплощающее объект в личностных структурах, которые регулируют поведение субъекта. [3, с. 114].

Леонтьев показал взаимосвязь категорий личность, смысл и деятельность, введя в 1947 г. понятие «личностный смысл» – индивидуализированное отражение отношения личности к объектам, ради которых развёртывается деятельность, значение знаний о мире, понятиях, умениях, действиях, нормах, ценностях и идеалах.[1] Он также предложил иерархию уровней смысловой регуляции жизнедеятельности личности. Первый иерархический уровень образуют личностные смыслы и смысловые установки конкретной деятельности, второй уровень представлен мотивами, смысловыми конструктами и диспозициями, высший уровень представляют смыслообразующие по отношению ко всем остальным структурам ценности. Леонтьев также ввёл термин «смысловые ориентации» и разделил их на два уровня: уровень общих смысловых ориентаций представляют потребности, личностные ценности, смысл жизни и самоотношение, мировоззрение, позволяющие осуществлять процесс свободного выбора и саморефлексии в изменении смысловых ориентаций. Второй, смысловой уровень – это содержательная сторона отношений личности с миром, производящая смысловую ориентацию в процессе реализации отношений личности с миром. Сознательный выбор наивысшей жизненной ценности, смысла жизни, формируется под воздействием различных как индивидуально-личностных, так и социально обусловленных факторов. В свою очередь, смысл жизни определяет формирование смысложизненных ориентаций как системы подчинённых основному смыслу мотивационных тенденций. Таким образом, смысл жизни и смысложизненные ориентации и ценности находятся во взаимосвязи и взаимодействуют как части смысло-ценностной структуры, формирование которой основывается на потребностях, ценностях и ориентациях нижестоящего уровня. Последние, в свою очередь, испытывают влияние главенствующего смысла в этой динамической системе. Вектор в становлении данной системы задают смысложизненные ориентации личности, направленность личности на достижение смысла жизни. Этот вектор определяет деятельность личности и в конечном итоге влияет на отношения личности с миром, его характер, поведение и т.д. Важно отметить, что смысложизненные ориентации представляют собой структуру, состоящую из множества смыслов, и не исчерпывается одной целью или смыслом. Чудновский отмечал, что смысложизненные ориентации указывают на высокий уровень сформированности направленности личности, т.е. структуры личности, центральное место в которой занимает мотив поиска смысла существования.

Как видно из данного обзора, экзистенциальный взгляд на человека уделяет особое внимание здоровью личности. ВОЗ определяет здоровье как состояние полного физического, душевного и социального благополучия, а не только отсутствие болезней. Психическое здоровье является неотъемлемой частью здоровья и определяется как состояние благополучия, позволяющее человеку реализовывать свои способности, противостоять жизненным стрессам, продуктивно работать и функционировать как элемент общества. Психическое здоровье определяется не только биологическими и психологическими, но и социальными факторами. Так, например, социально-экономический фактор может быть фактором риска для психического здоровья. Фактические данные связывают психическое здоровья также с уровнем образования и показателем достатка. По данным ВОЗ, плохое здоровье связано с социальными изменениями, стрессовыми условиями, социальным отчуждением и т.д.[7]

Психосоматические заболевания – группа болезненных состояний, образующихся на основе взаимодействия психологических и физиологических факторов.[4]

Для проведения исследования была определена выборка из 60 человек, 30 из которых в возрасте 18-35 и 30-старше 35 лет. Среди участников анкетирования 10 студентов, 30 человек, имеющих высшее образование и 20 человек, не имеющих высшего образования.

Была разработана следующая анкета:

1. Как вы оцениваете уровень здоровья среди населения Армении? Как часто встречаются нарушения здоровья?

а) часто б) редко в) затрудняюсь ответить

2. Как Вы считаете, каковы в значительной степени причины возникновения заболеваний в Армении?

а) психологические причины (стресс, напряжение, депрессия, тревожность и др.)

б) социально-экономические причины(отсутствие работы, низкий уровень обеспеченности, недоступность медицинских услуг и др.)

в) другие (отметить)

3. Какие нарушения, связанные со здоровьем, наиболее распространены в Армении?

а) нарушения физического здоровья

б) нарушения психического здоровья

4. Какие меры будут способствовать решению проблем со здоровьем?

а) повышение уровня жизни(финансового, социально-экономического)

б) проведение психологического консультирования, терапии по снижению стресса, тревожности и т.д.

в) другое

5. Считаете ли вы, что достижение высокого уровня психического здоровья связано с внутренними смыслами и ценностями человека?

а) да б) нет в) затрудняюсь ответить

На первый вопрос, касающийся распространённости нарушений здоровья среди жителей Армении, 75% отметили частые нарушения, 17%- редкие, и 8% затруднились дать ответ. Значительных различий мнений по возрасту не обнаружено, как среди более молодых, так и среди более взрослых респондентов чаще отмечалась большая распространённость нарушений здоровья.

Причинами возникновения нарушений здоровья 50% респондентов отметили психологические, 33%- социально-экономические и 17%- другие, в числе которых неправильное питание, малоподвижность и отсутствие культуры профилактических мероприятий. Примечательно, что среди респондентов моложе 35 лет в два раза чаще отмечались психологические причины, чем среди более старших респондентов (20 и 10 соответственно), в то время как более старшие респонденты почти в три раза чаще отмечали социально-экономические причины (12 и 5 соответственно). Сопоставление ответов с уровнем образования респондентов показывает, что студенты (50%) и люди с высшим образованием (60%) гораздо чаще, чем не имеющие высшего образования (25%), отмечают психологические причины возникновения нарушений здоровья, в то время как большинство респондентов, не имеющих высшего образования, отмечали социально-экономические причины (60%). Из ответов респондентов обозначается не только понимание психологических причин возникновения нарушений здоровья, но и неосведомлённость многих респондентов, не имеющих высшего образования, о воздействии психологических причин на здоровье.

В статье обсуждаются негативные воздействия и последствия стрессов, указываются способы устранения.

ANAHIT GHAZARYAN

Vanadsor State University, Candidate of Psychological Sciences,
Associate Professor

THE CAUSES AND ELIMINATING WAYS OF STUDENTS' ACADEMIC STRESS

This article discusses the negative causes and consequences of students' academic stress and gives the ways of eliminating it. The relevance and importance of the article is conditioned by the above mentioned issues.

ՌՈԶԱԼԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արցախի պետական համալսարանի դասախոս, հայցորդ

**ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆՄԱՆ ՏԵՄԱԿԱՆ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Հոդվածում ներկայացված է հոգեբանական անվտանգության տեսական մեկնաբանությունների համատեքստը: Անվտանգության բոլոր դրսևորումների առանցքում մարդն է, չնայած սպառնալիքների ծանրակշիռ մասնաբաժինը հենց մարդածին նկարագիր ունի: Դիտարկվել են անվտանգության հիմնային ու առաջնային գործոնները: Որպես անվտանգության ոլորտներ են առանձնացվել սոցիալական, մասնագիտական նաև հասարակության ինտելեկտուալ ոլորտները, որոնց մասին ճիշտ պատկերացումն անհրաժեշտ է հասարակության հոգևոր անվտանգության դիմագիծն ուրվագծելու համար:

Բանալի բառեր՝ անձ, հոգեբանական անվտանգություն, աղապտացում, կայունություն, սոցիալական պատասխանատվություն, բազային պահանջ-մոնիթինգ, ինքնահաստատում

Աշխարհաքաղաքական զարգացումների և հասարակության շեշտակի փոխակերպումների, մշակութային տոտալ և մասսայական հարձակումների մեր օրերում հոգեբանական անվտանգության հարցը սրությամբ է դրվում, քանի որ անմիջապես առնչվում է մարդկանց հոգեկան առողջության, անձնային ամբողջականության զգացման հետ: Հոգեբանական անվտանգությունը լինելով մարդու և հասարակության զարգացման անհրաժեշտ պայման, իրագործվում է սոցիալական փոխազդեցությունների, համատեղ գործունեության, կյանքի և շրջակա միջավայրի հարմարման, գործողությունների որոշակի հարաբերակցության միջոցով:

Հոգեբանական անվտանգությունը կապված է հոգեկանի անվտանգության հետ, որից ածանցվում է անձի անհատական ամբողջականությունը, հոգեկան առողջության և հոգևոր աշխարհի պաշտպանությունը: Ավելին, մարդու հոգեբանական անվտանգությունը կարելի դիտարկել որպես նրա կյանքի պայմանների զարգացման մակարդակի նշաձող: Այսինքն՝ հոգեբանական ան-

վտանգությունը փոխադարձ և օրինաչափ կապի մեջ է հոգեկան վիճակների ու գործընթացների հետ: Հոգեբանական անվտանգությունը հոգեկանի ապահովությունն է, անձնային ամբողջականության, հոգեկան առողջության և հոգևոր կառույցի պաշտպանությունը¹: Հեղինակները (Ս. Կ. Ռոշինը և Վ. Ա. Մոսնինը) հոգեբանական անվտանգության սահմանումը ձևակերպել են որպես հանրային գիտակցության պայման, որի դեպքում ողջ հասարակությունը և յուրաքանչյուր անհատ, ներկա կյանքի որակը ընկալում են որպես ադեկվատ և հուսալի², քանի որ հենց այդ հուսալիությունն է ապահովում անձի՝ ժամանակի պահանջներն ու գործողությունները և երաշխավորում ապագայի կայունությունը:

Գիտական գրականության մեջ անվտանգությունը դիտարկվում է ինքնաիրականացման իրողությունների փոխադարձ կապի կոնտեքստում: Այս առումով հիշատակության արժանի են հումանիստական հոգեբանության առանձին հեղինակների մոտեցումներ: Ի. Ա. Բաևան համարում է նաև. «...անձի կարողությունների իրականացում, հայացք դեպի կենսական դժվարությունները, փորձությունները, նրա կարևորությունն ու նշանակալիությունը հատկանշող միջոցների ամբողջություն»³: Հոգեբանական անվտանգությունը մարդու կարողությունների ու անձնային պոտենցիալի իրացման գործընթաց է, հետևապես այն ապահովում է նաև ինքնաիրացման գործընթացում: Ինքնաիրացումը և ճիշտ ինքնահաստատումը սկզբունքորեն կապ ունեն անվտանգության սոցիալական երաշխիքի հետ:

Հոգեբանական անվտանգությունը կառուցված է երկու ասպեկտների վրա՝ անձի և միջավայրի հոգեբանական անվտանգություն⁴, իսկ մարդկային անվտանգությունը որոշվում է երեք գործոններով՝ մարդկային, շրջակա միջավայրի և պաշտպանվածության: Առաջին երկուսը համարվում են հիմնական ու առաջնային: Մարդկային գործոնը՝ մարդու տարբեր պատասխաններն են սպառնացող վտանգին: Միջավայրը՝ ավանդաբար բաժանվում է ֆիզիկականի ու սոցիալականի: Այսօր սոցիալական միջավայրի ներգործությունը շատ ավելի արդիական է անվտանգության համատեքստում դիտարկելը, չնայած ֆիզիկական միջավայրի՝ որպես անվտանգության գործոնի դերը ևս կարելի է համարել օրակարգային:

¹ **Герасимов В. Д.**, Угрозы информационно-психологической безопасности личности и их основные источники, Шуйский филиал Ивановского Государственного университета Шуя, Россия, <https://cyberleninka.ru/article/c/psihologiya>

² **Рощин С.К., Соснин В.А.**, Психологическая безопасность: новый подход к безопасности человека, общества и государства//Российский монитор. 1995. № 6; Общая теория безопасности (актуальные методологические и социально-политические проблемы). — М., 1994.

³ **Баева И. А.**, Психологическая защищенность и психологическая безопасность современного человека: доклад на конф. «Психолог и общество: диалог о взаимодействии». Москва, 12 февраля 2008 г. [Электронный ресурс]. Режим доступа www.web.ruscenter.ru/conf2/baeva.doc, էջ 8:

⁴ Обеспечение психологической безопасности в образовательном учреждении: практическое руководство/ под ред. И. А. Баевой. СПб.: Речь, 2006. 288 с.

Անվտանգության կամ պաշտպանվածության գործոնը՝ դրանք գործիքներ են, որոնք մարդիկ օգտագործում են տազնապային և վտանգավոր իրավիճակներում պաշտպանվելու համար: Դրանք կարող են լինել ֆիզիկական և հոգեբանական (հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ)¹:

Ֆ. Կ. Մուգուլովը «անվտանգության» անվանակարգում կարևորում է սոցիալական և նյութական բաղադրիչները՝ դիտելով դրանք երեք տարբեր ապակետներով. անվտանգություն-նպատակ, անվտանգություն-նորմա, անվտանգություն-իրավիճակ:

Անվտանգությունը որպես թիրախ համընկնում է հասարակության կայուն զարգացման նպատակի հետ, քանի որ առանց անվտանգության ապահովման զարգացման և աճի մասին խոսք չի կարող լինել: Եթե անվտանգությունը դիտարկենք որպես սոցիալական նորմ, ապա հստակ կարող ենք ասել, որ այն սոցիալական արժեք է ներկայացնում, որը վաղուց է ինտեգրված անհատական և ազգային գիտակցության մեջ: Անվտանգության սոցիալական կարգավիճակը հնարավոր է դարձնում անվտանգության քանակական գնահատականի փաստացի մակարդակը՝ արդեն իսկ մշակված որակական չափանիշների հիման վրա, որոնք էլ սահմանում են անվտանգության մշակած նշանողի հիմնական ընդունելի սահմանները²:

Անվտանգության ոլորտին կարելի է դասել նաև հասարակության ինտելեկտուալ կյանքը: Ռուս գիտնական Լոմոնոսովը՝ որպես անվտանգության ապահովման գլոբալ հարց է դիտարկում հասարակության ինտելեկտուալ կյանքը: Նույնիսկ արտաքին տնտեսական առանցքում մտավոր կամ ինտելեկտուալ, գիտական և մշակութային աղքատությունը հանգեցնում են հասարակության տնտեսական և հոգևոր ունայնացմանը, ինչ-որ կերպ ապահովելով անվտանգությունը որոշ ոլորտներում, սակայն կտրուկ խափանելով այն մյուսներում: Խոշոր տերություններին օգնում է մնալ միասնական, միմիայն, հայրենասիրությունը, տնտեսական հետաքրքրությունը, մտավոր և ստեղծագործական ներուժը³: Ուղեղների արտահոսքի՝ որպես անվտանգության համակարգի առանցքային կողմի մասին հարցը ռազմավարական է և այն պետք է դիտել օրակարգային: Եթե գրանցվում է ինտելեկտուալ արտահոսք, ապա անվտանգությունը խոցելի վիճակում է:

Կտրուկ աճող սպառնալիքների պատճառով անձի անվտանգության մարտահրավերները ձեռք են բերել որակապես նոր կառուցվածք: Նրանք դարձել են նոր դարաշրջանի, XXI դարի լուրջ ու հրատապ խնդիր:

¹Анасов В. Д., Лепский В. Е., Исходные послылки проблематики информационно-психологической безопасности// Проблемы информационно-психологической безопасности. М.: Институт психологии РАН, 1996. с. 7-11.

² Безопасность личности: система понятий, основные виды и психологические характеристики Т.И. Ежеская <http://www.monographies.ru/ru/book/section?id=4560>, էջ 2:

³ Նույն տեղը՝ էջ 23:

Այսպիսով, առաջարկում ենք հոգեբանական անվտանգությունը այսուհետ ներդրել, որպես անձի բազային պահանջմունք՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անձի ֆիզիկական անվտանգությունը մտնում է բազային պահանջմունքների շարքը ու անմիջապես փոխկապակցված է հոգեբանական անվտանգության հետ, առանց որի համակարգված չի դառնում մյուսի գործունեությունը:

Կարող ենք եզրահանգել, որ անձի հոգեբանական անվտանգությունն ապահովող բաղադրիչներին նշանակալիությունը պայմանավորվում է սոցիալական միջավայրով, գործունեությամբ և կյանքի հանդեպ ունեցած պահանջներով, և որ ամենաեականն է այն իմաստավորվում և կարևորվում է գործունեության մեջ (ուսումնական, աշխատանքային, մասնագիտական), անձնային և միջանձնային հարաբերությունների համապատասխան ենթատեքստում:

Ժամանակակից հասարակության համար հոգեբանական անվտանգության հիմնահարցի արդիականությունը պայմանավորված է անձի, միջավայրի և հասարակության անվտանգության պահպանման մակարդակներով: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հոգեբանական անվտանգության հետազոտումը անձնային և մասնագիտական մակարդակներում, որտեղ կարևորում ենք բավարարվածությունը կյանքից, վստահությունը ապագայի հանդեպ, հետաքրքրությունները, պաշտպանվածությունը, դրդապատճառային ոլորտի առանձնահատկությունները¹:

Մեր կարծիքով, համատարած գլոբալիզացիան ինքնին սպառնալիք է հանդիսանում ոչ միայն հոգեբանական, այլ նաև ազգային անվտանգության համատեքստում:

Ավելորդ չէ նշել, որ ՄԱԿ-ի սպառնալիքների, մարտահրավերների և փոփոխության բարձր մակարդակի խմբի 2005թ. «Առավել անվտանգ աշխարհ. մեր ընդհանուր պատասխանատվությունը», A/59/565 զեկույցում թվարկված են այն վեց հիմնական սպառնալիքը, որոնց կանխամաբ պետք է զբաղվի համաշխարհային հանրությունը՝ ինչպես ներկայում, այնպես էլ ապագայում: Դրանք են՝

- ✓ պետությունների միջև պատերազմները,
- ✓ բռնությունը երկրների ներսում, այդ թվում՝ քաղաքացիական պատերազմները, մարդու իրավունքների զանգվածային խախտումները և ցեղասպանությունը,
- ✓ աղքատությունը, վարակիչ հիվանդությունները և բնապահպանական քայքայումը,
- ✓ միջուկային, ռադիոգիտական, քիմիական և կենսաբանական զենքը,
- ✓ սահաբեկչությունը,
- ✓ կազմակերպված վերազգային հանցավորությունը²:

¹Агузумцян Р. В., Мурадян Е. Б., Психологическая безопасность личности и причинная обусловленность депрессии// Современные проблемы прикладной психологии. Межвузовский сборник научных статей. Ереван, 2007

² Միացյալ ազգերի կազմակերպության պաշտոնական կայք. www.un.org/secureworld/report.pdf

Հետաքրքիրն այն է, որ անվտանգության բոլոր եղանակների կենտրոնում մարդն է: Մարդն է, նախ և առաջ, տառապում տարբեր տեսակի սպառնալիքներից: Մակայն, միևնույն ժամանակ, այդ սպառնալիքների ծանրակշիռ մասնաբաժինը հենց մարդածին նկարագիր ունի: Աշխարհում ներկա պահին տիրող լարվածության պատճառով ոչ-ոք իրեն անվտանգ կամ պաշտպանված չի զգում: Այս իրավիճակը չի խոսում պետության թուլության կամ անկարողության մասին: Խնդիրն այստեղ առավելապես համամարդկային է: Վտանգներն ու սպառնալիքները ամենուր են, դրանք մեր իրականության անբաժանելի մասն են: Յուրաքանչյուր մարդ միայն մասնակի կարող է ապահովել իր անձնական անվտանգությունը՝ գործելով օրենքի սահմաններում և չանտեսելով հասարակության և պետության շահերը:

Ելնելով հասարակության կենսագործունեության առանձնահատկություններից կարելի է առանձնացնել անվտանգության հետևյալ տեսակները՝

- ✓ քաղաքական անվտանգություն,
- ✓ տնտեսական անվտանգություն,
- ✓ սոցիալական անվտանգություն,
- ✓ հոգևոր անվտանգություն,
- ✓ տեղեկատվական անվտանգություն,
- ✓ ռազմական անվտանգություն,
- ✓ բնապահպանական անվտանգություն,
- ✓ գիտատեխնիկական անվտանգություն,
- ✓ էներգետիկ անվտանգություն,
- ✓ իրավական անվտանգություն և այլն¹:

Անձի և ընդհանրապես հասարակության մեջ հոգեբանական անվտանգության զգացման ապահովող և լարվածությունը թուլացնող լավագույն տարբերակներից մեկն՝ ադապտացիան է, ադապտացվել նշանակում է հարմարվել, իսկ հարմարված անձը ունենում է տազնապայնության՝ ցածր և սթրեսակայունության բարձր մակարդակներ:

Ադապտացումը ժամանակակից կյանքի թելադրած պայմաններին, առօրյա կենցաղային խնդիրներին, մասնագիտական դժվարություններին, աշխատանքային ռեժիմին և այլն, այս ամենի հետ միասնական քայլելը, վկայում է նաև անձնային հասունության ու սոցիալական պատասխանատվության մասին: Իսկ եթե անձի սոցիալական պատասխանատվությունը բարձր մակարդակի է, ունի զարգացած «գեր-ես»՝ «սուպեր էգո», անձնապես հասունացած է և ադապտացված, ապա նա հոգեպես ավելի կայուն է ու անկոտրում, հոգեբանական առումով ավելի ուժեղ:

Անվտանգությունը որպես գիտական կատեգորիա օբյեկտի նկատմամբ մեկնաբանվում է ինչպես օբյեկտի որոշակի վիճակ, որը անբաժան է նրանից իր ողջ կյանքի ընթացքում, այնպես էլ իրավիճակային և մշտական անվտանգության վիճակ: Այն բնորոշվում է որպես օբյեկտի շահերի անվտանգության

¹ Экономическая и национальная безопасность /под ред. Е.А. Олейникова/. М., 2005. с. 18.

ապահովման մակարդակ, որին բնորոշ է վտանգը կանխելու և հաղթահարելու մեթոդների ու միջոցների բավարար պայմանների առկայությունը: Անվտանգությունը բնորոշվում է որպես օբյեկտի ստաբիլության և կայունության որակական երաշխիք, որը նպաստում է օբյեկտի, հասարակության զարգացման ու աճի նպաստավոր պայմանների ստեղծմանը: Չնայած խնդրո առարկայի տեսական սահմանումները ամբողջական պատկերացում են տալիս անվտանգության կատեգորիայի մասին, այնուհանդերձ գործնական ուսումնասիրությունները ևս կարևոր են մի շարք խնդիրների սպառիչ լուծումների և ճիշտ կանխատեսումների համար:

Մենք ունենք հոգեբանական անվտանգության խնդիր հատկապես ինքնության ու արժեքների համակարգին առնչվող մի շարք հարցերում, ուստի անվտանգության մեխանիզմների սպառնալիքներն ու հնարավորությունները հասկանալն ու պարզաբանելը ոչ միայն տեսական, այլև պրակտիկ ուսումնասիրության խնդիր է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Միացյալ ազգերի կազմակերպության պաշտոնական կայք. www.un.org/secureworld/report.pdf
2. **Агузумцяң Р. В., Мурадяң Е. Б.** Психологичвская безопасность личности и причинная обусловленность депрессии// Современные проблемы прикладной психологии. Межвузовский сборник научных статей. -Ереван, 2007.
3. **Анасов В. Д., Лепский В. Е.** Исходные посылки проблематики информационно-психологической безопасности// Проблемы информационно-психологической безопасности. -М.: Институт психологии РАН, 1996. -с. 7-11.
4. **Баева И. А.,** Психологическая защищенность и психологическая безопасность современного человека/ доклад на конф. «Психолог иобщество: диалог о взаимодействии». Москва, 12 февраля 2008 г.[Электронный ресурс]. Режим доступа www.web.ruscenter.ru/conf2/baeva.doc, էջ 8:
5. Обеспечение психологической безопасности в образовательном учреждении: Практическое руководство/ Под ред. И. А. Баевой. -СПб.: Речь,2006. -288 с.
6. **Колесникова Т. И.** Психологический мир личности и его безопасность. —М.: Изд-во Владос-пресс, 2001. - 176 с. (Психология безопасности и успеха).ISBN 5-305-00013-0., էջ 6-7:
7. **Костина Л. М.,** Психологическая безопасность личности: подходы, компоненты/ Преимственность психологической науки в России: традиции и инновации: Сборник материалов Международной научно-практической конференции, посвященной 215-летию РГПУ им. А. И. Герцена, /rustudent.com/psihologicheskaya-bezopasnostlichnosti-podhodyi-komp.../, 2012.
8. Экономическая и национальная безопасность /под ред. Е.А. Олейникова/. -М., 2005. - 18.

РОЗАЛИЯ АРУТЮНЯН

Арцахский государственный университет, преподаватель, соискатель

КОНТЕКСТ ТЕОРЕТИЧЕСКОГО КОММЕНТАРИЯ К ОПРЕДЕЛЕНИЮ ПСИХОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ

В статье представлен контекст теоретического комментария психологической безопасности. Стержнем всех проявлений безопасности является человек, несмотря на

то, что значительная часть угроз имеет именно человеческое начало. Были рассмотрены основные и первичные факторы безопасности. Были выделены следующие сферы безопасности: социальная, профессиональная, а также интеллектуальная сферы общества. Правильное представление данных сфер необходимо для определения образа духовной безопасности общества.

ROZALIA HARUTYUNYAN

Artsakh State University

Lecturer, Applicant

THE CONTEXT OF THE THEORETICAL COMMENTARY TO THE DETERMINATION OF PSYCHOLOGICAL SECURITY

The article presents the context of the theoretical comments of psychological security. The core of all manifestations of security is the human being, despite the fact that a significant part of the threats are of human origin. The main and primary safety factors were considered. The following spheres of society were identified: social, professional, and intellectual. Proper representation of these spheres is necessary to determine the image of the spiritual security of society.

ԱՐՄԻՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հայ – ռուսական (սլավոնական) համալսարանի դասախոս,
հոգեբանական գիտությունների թեկնածու

**ՆԵՐՈՒՏԱՆԵԿԱՆ ԱՌՏԱԾԻՆ ԴԵՐԵՐԻ ԵՎ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ
ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԵՐՆ ԸՆՏԱՆԵԿՈՒՄ**

Սույն հոդվածում քննարկվում են ներընտանեկան ախտածին դերերի և ճգնաժամերի դրսևորման փուլերը ընտանիքում, ախտածին – պաթոգեն դերային փոխհարաբերությունները:

***Հանգուցային բառեր և արտահայտություններ.** ախտածին դերեր, ամուսնալուծություններ, ճգնաժամեր, ճգնաժամերի դրսևորման փուլեր, ընտանեկան և սոցիալական դերեր:*

Ընտանեկան փոխհարաբերություններում տիրող փոխադարձ անհանդուրժողականությունը, տարաձայնություններն ու անվստահությունը ծնում են բախումնային բարդ իրավիճակներ, որոնք քայքայիչ ազդեցություն են ունենում ընտանիքի վրա:

Այդ ազդեցության քայքայիչ բնույթն առավել ակնառու կերպով է երևում այն ժամանակ, երբ բախումնային իրավիճակներն առավել խորանալով դառնում են ճգնաժամային, իսկ ճգնաժամը բախումների բարձրագույն աստիճանն է:

Կարելի է ենթադրել, որ բախումը ճգնաժամի է վերածվում այն ժամանակ՝

1. երբ հակասության մեջ գտնվող պահանջմունքները կամ սպասումները ակտիվորեն հակադրվում, բախվում են իրար

2. երբ դրանք, որպես բախումների իրական և շոշափելի բաղադրամասեր, անհամատեղելի են

3. երբ բացասական հույզերը շատ ուժեղ և իռացիոնալ են դառնում, որի հետևանքով կողմերի վարքին հաղորդվել է իմպուլսային և ագրեսիվ բնույթ

4. երբ բախվող կողմերը հասկանում են, որ իրենք որպես անձնավորություններ անհամատեղելի են: Բազմաթիվ են այն ընտանիքները, որոնք իրենց գոյության ժամանակահատվածում մեկ կամ մի քանի անգամ հայտնվում են ճգնաժամային իրավիճակներում: Այդ առումով պատահական չէ, որ ժամանակակից ընտանիքի հոգեբանության բնագավառում ճգնաժամերի ուսումնասիրությանը մեծ նշանակություն է տրվում: Ընտանիքի (ներընտանեկան) փոխհարաբերությունների ընթացքում ճգնաժամային իրավիճակները կարող ենք համալրել նաև հետևյալ դրույթներով՝

- ամուսինների միջև ճգնաժամ կարող է ծագել միմյանց հանդեպ ունեցած պահանջմունքների և սպասումների շուրջ երկկողմ հիասթափության և անբավարարվածության արդյունքում

- բախումներն ու ճգնաժամերն էլ ավելի սուր և տառապալից են լինում, երբ դրանք ծագում են մեկից ավելի պահանջմունքների չբավարարված մնալու հետևանքով: Հետևաբար այստեղ կարող ենք խոսել տարբեր բարդության բախումների և ճգնաժամերի մասին, քանի որ, սկզբունքորեն, որքան ցածր է բախման բարդության աստիճանը, այնքան ավելի հեշտ է մեղմել կամ լուծել այն: Բարդ բախումները, որոնք ընդգրկում են չբավարարված երկու կամ ավելի պահանջմունքներ և դերային սպասումներ, շատ դժվար է լուծել

- ճգնաժամն էլ ավելի բարդ է դառնում, երբ դրանում ընդգրկվում են ոչ միայն հիմնական գործող անձինք (տվյալ դեպքում ամուսինները), այլև նրանց ռեֆերենտային խմբերը (օրինակ՝ ծնողների ընտանիքները).

- ներընտանեկան ճգնաժամը բարդ և ավերիչ է դառնում, երբ նրանում ընդգրկվում են նաև ընտանիքի այլ անդամներ, հատկապես երեխաները, այսինքն, երբ ընտանիքը տրոհվում է հակառակորդ խմբերի[10, էջ 266-268]: Գիտնականներ Պլզակը և Ս. Կրատոխվիլը ամուսինների փոխհարաբերություններում առանձնացնում են «ճգնաժամային» որակվող երկու իրադրություն. «Առաջինը» վրա է հասնում ամուսնական կյանքի 3-րդից 7-րդ տարիների միջև ընկած ժամանակահատվածում: Բարենպաստ ընթացք ունենալու դեպքում այդ փուլը տևում է մինչև մեկ տարի: Ճգնաժամի առաջացմանը նպաստում են հետևյալ գործոնները՝ ռոմանտիկ տրամադրությունների անհետացումը, սիրահարվածության փուլի և հետագա կյանքում ամուսնու վարքի մեծ տարբերությունը, ամենատարբեր հայացքների և տեսակետների առաջ գալը և դրանց վերաբերյալ համաձայնության հասնելու անհնարիությունը, ամուսինների փոխհարաբերություններում բացասական հույզերի գերակշռությունը, հայացքների ու վարքի բախումները և մշտական հոգեբանական լարվածությունը:

Նմանօրինակ ճգնաժամային վիճակը մեղմելու նպատակով Պլզակն ու Կրատոխվիլը ամուսիններին առաջարկում են ավելի քիչ խոսել միմյանց հետ, ավելի հաճախ մասնագիտական կամ չեզոք հարցեր քննարկել, ժամանակավորապես դադարեցնել սեռական հարաբերությունները, ռոմանտիկ սիրո նշաններ չդրսևորել, չխոսել նույնիսկ երեխաների դաստիարակության մասին և

այլն: «Երկրորդը» վրա է հասնում ամուսնական կյանքի 17-րդ և 25-րդ տարիների միջև ընկած ժամանակահատվածում: Այդ ճգնաժամը կարող է տևել մեկ տարուց մինչև մի քանի տարի: Այն, ըստ նշված հեղինակների, ավելի մակերեսային բնույթ ունի, քան նախորդը: Այդ ճգնաժամը սկսվում է մոտավորապես այն նույն ժամանակ, երբ ամուսինները սկսում են զգալ, որ ծերանում են, և տազնապներ ու վախեր են ունենում, նրանց մոտ մարմնական հիվանդությունների ախտանշաններ են ի հայտ գալիս: Ինչպե՞ս մեղմել այս ճգնաժամը. Պլզակը և Կրատոխվիլը ամուսիններին խորհուրդ են տալիս հետևողականորեն խուսափել ծերացման հետ կապված խնդիրների մասին խոսելուց, մասնակցել տարբեր կոլեկտիվ միջոցառումների, որոնցից են՝ բարեկամներին այցի գնալը, զբոսաշրջությունը, մշակութային կենտրոններ այցելելը և այլն: Խորհուրդ է տրվում նաև ամուսնական անհավատարմության դեպքում ևս հանդուրժող լինել, քանի որ այդ տարիքում հրապուրվածությունն, ըստ հեղինակների, արագորեն թուլանում է [9, էջ 9-23]:

Ելնելով այս իրողությունից՝ առաջարկվում է տարբերակել ճգնաժամի առնվազն երկու մակարդակ.

- պարզ ճգնաժամ, որը հետևանք է միայն մեկ բախման զարգացման
- բարդ (համալիր) ճգնաժամ, երբ ամուսինների փոխհարաբերություններում սրվել, խորացել և ճգնաժամի բնույթ են ստացել միաժամանակ մեկից ավելի բախումներ: Բարդ ճգնաժամերը ևս ունեն տարբեր ենթահամակարգեր կախված այն բանից, թե քանի բախում և անհամաձայնություն է ծագել կողմերի միջև: Երբ ընտանիքում ծագում է ճգնաժամը հաղթահարելու ցանկությունը, լուծման երկու հիմնական ուղի է առաջանում՝
 - բաժանվել միմյանցից, հեռանալ ինչպես տարածականորեն, այնպես էլ հոգեբանորեն և վերացնել բախումները. դա ընտանիքի լուծարման, տրոհման ուղին է,
 - գտնել այնպիսի կառուցողական լուծում, որը թույլ կտա անցնել ընտանեկան կյանքի նոր և ավելի արդյունավետ փուլի: Լուծման առաջին ձևը հանգեցնում է ամուսնալուծության, իսկ երկրորդը թույլ է տալիս, որ ընտանիքը պահպանի ամբողջականությունը և շարունակի իր կյանքի ուղին: Ջ. Հեյլին, Է. Գ. Էյդեմիլերը և Վ. Վ. Յուստիցկիսը առաջ են քաշել մի տեսակետ, ըստ որի ընտանեկան ճգնաժամերը լինում են 2 տեսակ՝ նորմատիվ և ոչ նորմատիվ [10, էջ 273-284]:

Նորմատիվ ճգնաժամերի մասին պատկերացումը առաջադրվել է՝ ելնելով ընտանեկան կյանքի պարբերաշրջանի մասին պատկերացումից, որը ժամանակակից ընտանիքի հոգեբանության մեջ ընտանիքի կյանքի ուղին է սկսած ամուսնության ձևակերպման, գրանցման պահից, մինչև ընտանիքի վերջնական տրոհումը՝ ամուսիններից մեկի կամ երկուսի մահը, ինչպես նաև զավակների հեռանալը և սեփական ընտանիքներ ստեղծելը: Ըստ հեղինակների՝ ճգնաժամերը նորմատիվ են համարվում, քանի որ ծագում են օրինաչափորեն՝ որպես ընտանեկան կյանքի «նորմեր», դրանում դիտվող բնականոն երևույթներ:

Ոչ նորմատիվ ընտանեկան ճգնաժամեր. ինչպես անհատները, այնպես էլ սոցիալական խմբերը, այդ թվում նաև ընտանիքը, գտնվում են բազմաթիվ արտաքին գործոնների ազդեցության տակ: Դրանցից մի քանիսը անձին և խմբին կարող են հասցնել այնպիսի ճգնաժամային վիճակի, որը պայմանավորված չէ տարիքային զարգացման փուլերով: Այդպիսի վիճակներին տրվել է «ոչ նորմատիվ ճգնաժամեր» անվանումը: Սրանց առանձնահատկությունն այն է, որ եթե հիշյալ արտաքին գործոնները բացակայեն (իսկ դրանք կարող էին և չլինել), ապա անձը կամ խումբը ճգնաժամային վիճակում չեն հայտնվի: Օրինակ, եթե երկրում, անկախ տվյալ ընտանեկան խմբից, տնտեսական ճգնաժամ է սկսվել, և ընտանիքի նյութական պահանջումները սկսում են վատ բավարարվել, ապա առաջ է գալիս ընտանեկան ճգնաժամ, որը ոչ նորմատիվ է, այսինքն՝ ընտանիքի կյանքի տվյալ փուլի հետ այն գրեթե կամ ուղղակի ոչ մի կապ չունի:

Հիմնական նորմատիվ ճգնաժամեր. սրանց նկարագրությունը տվել է ամերիկյան ընտանիքաբան Ջ. Հեյլին [9, էջ 340-367]: Նա, ինչպես է. Էրիքսոնը, ճգնաժամեր է համարել անհատի զարգացման և կյանքի ճանապարհի ողջ ընթացքում [9, էջ 214-308]: Ընտանիքի կյանքի ընթացքում Ջ. Հեյլին և մյուս հեղինակներն առանձնացնում էին 7 փուլ և հետևաբար նույնքան էլ ճգնաժամ [10, էջ 278-281].

- Առաջինը ամուսնական պարտականությունների ընդունման փուլն է և համապատասխան ճգնաժամը: Սա այն փուլն է, երբ երիտասարդ ամուսինները սկսում են հարմարվել միմյանց:

- Երկրորդ փուլը սկսվում է առաջնեկի ծննդյան օրվանից, երբ ամուսինները պետք է արդեն ծնողների (հոր և մոր) դերեր ստանձնեն և կատարեն:

- Երրորդ փուլը սկսվում է այն պահից, երբ երեխան սկսում է մուտք գործել ընտանիքից դուրս գտնվող սոցիալական համակարգեր, մասնավորապես՝ մանկապարտեզ, դպրոց և այլն:

- Չորրորդ փուլն սկսվում է այն ժամանակ, երբ երեխան անցնում է իր տարիքային զարգացման դեռահասության փուլին:

- Հինգերորդ փուլի հիմնական առանձնահատկությունն այն է, որ գավակը թողնում է ընտանիքը՝ բուհ է ընդունվում, բանակ է զորակոչվում և այլն:

- Վեցերորդ փուլում ամուսինները հիմնականում մենակ են մնում, քանզի կատարվում է դերերի վերաբաշխում նրանք պատրաստվում են կենսաթոշակի անցնել:

- Վերջին՝ յոթերորդ փուլում ամուսիններից մեկը վախճանվում է, և փաստորեն ընտանիքը վերանում է որպես այդպիսին: **Ոչ նորմատիվ ճգնաժամեր են.** կրկնամուսնությունը (նորից՝ երկրորդ և ավելի անգամ ամուսնանալը), ամուսնական անհավատարմությունը, ամուսնալուծությունը, ընտանիքի որևէ անդամի ծանր հիվանդությունը, արյունապղծությունը, ընտանիքի անդամի մահը: Այժմ անդրադառնանք ճգնաժամերի և դերային բախումների կիզակետում առաջացող ախտածին-պաթոգեն դերերին: Ախտածին (պաթոգեն) են ընտանիքի անդամների կատարած այն դերերը, որոնք ախտաբանական գծեր, հակումներ և սպասումներ են առաջ բերում կամ հենց կատարող-

ների, կամ ընտանիքի մյուս անդամների, կամ էլ՝ ինչպես առաջինների, այնպես էլ երկրորդների մեջ: Ախտածին դերերի գոյությունը ցույց է տալիս, թե ինչպիսի սերտ միջդերային կապեր կան ընտանիքի անդամների միջև [10, էջ 299-300]: Ընտանեկան ախտածին դերերի բացահայտման և ուսումնասիրության գործում առաջին լուրջ ներդրումները կատարել են Ֆ. Բարկերը և Ն. Ռիխտերը [10, էջ 29-296]: Ախտածին դերերի բնույթը ճիշտ հասկանալու համար պետք է հիշել դերերի տեսության հիմնարար դրույթները, մասնավորապես այն, որ գոյություն ունեն ոչ միայն պայմանական (պաշտոնական, կոնվենցիոնալ), այլ նաև միջանձնային ոչ պաշտոնական կարգավիճակներ և դերեր: Ընտանիքում պաշտոնական են այն դերերը, որոնք պայմանավորված են օրենքներով, ավանդույթներով և բարոյական նորմերով (ամուսինների, ծնողների և զավակների դերեր): Միջանձնային կամ պաշտոնական դերերից են, օրինակ, սոցիոմետրական դերերը, ընտանիքի առավել սիրված անդամի և «քավության նոխազի» դերերը, նաև դերեր, որոնք առաջանում են միջանձնային հարաբերությունների ընթացքում և պաշտոնապես չեն կարգավորվում: Հարկ է նշել, որ նորմալ համարվող դերերն ու դրանց նորմալ կատարումն ունեն հետևյալ պահանջները.

- Ներընտանեկան դերերը միասին պետք է կազմեն մեկ ամբողջական համակարգ և չպետք է հանգեցնեն ո՛չ միջդերային և ո՛չ էլ ներդերային բախումների, իսկ եթե, այդուհանդերձ, բախումներն անխուսափելի են, ապա պետք է հնարավորինս շտապ հարթվեն:

- Ներընտանեկան դերեր կատարելու միջոցով ընտանիքի յուրաքանչյուր անդամ պետք է կարողանա բավարարել իր հիմնական պահանջումները, օրինակ, տղամարդը (ամուսինը) իր կնոջ հանդեպ ունի պարտականություններ, բայց ունի նաև իրավունքներ. նա ակնկալում է հարգալից վերաբերմունք, սեր, սեռական պահանջումների բավարարում և այլն:

- Ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի դերը պետք է համապատասխանի նրա ֆիզիկական և հոգեբանական հնարավորություններին: Օրինակ՝ չի կարելի դեռևս երեխա համարվող անդամի (հատկապես կրտսեր դպրոցականի) ուսերին դնել ընտանիքի գլխավորի և ապրուստ հայթայթողի հիմնական դերը, քանի որ նմանատիպ դերը հարիր չէ նրա ֆիզիկական և հոգեկան կերտվածքին: Եթե ընտանիքի անդամներից մեկը սոցիալական այդ խմբում մեկ կամ մի քանի դեր է կատարում, ապա դրանք իրենց տեսակով և կատարման որակով պետք է կարողանան բավարարել ոչ միայն տվյալ դերակատարի, այլև ընտանիքի մյուս անդամների պահանջումները: Բոլոր նմանօրինակ պահանջումներն էլ կարող են նորմալ կերպով չբավարարվել, և արդյունքում պարզվում է, որ ընտանիքներում առաջանում են ախտածին դերեր և, իհարկե, նաև ախտածին դերային բախումներ: Այստեղ բնական է դիտվում այն, որ ընտանիքի ախտահարված դերերով անդամները «ձգտում» են ախտածին դարձնել նաև մյուս անդամների դերերը և, ընդհանրապես, դերերի ողջ համակարգը: Նման վարքագծի պատճառները հիմնականում հետևյալներն են [10, էջ 303-312]. սեփական՝ անձի դրական բարձր ինքնագնահատականը պահպանելու ցանկություն՝ չնայած ունեցած թերություն-

ներին, այնպիսի պահանջումներին բավարարում, որոնք հակասում են անձի ինչպես սեռական, այնպես էլ ողջ ընտանիքի բարոյական սկզբունքներին: Հաշվի առնելով բերված փաստարկները՝ փորձենք վերլուծել բուն ախտածին դերերն այն տեսքով, ինչ տեսքով որ դրանք բացահայտվել ու ներկայացվել են վերոնշյալ հոգեբանների աշխատություններում:

1. Անձի կողմից կատարվող դերն ախտածին է իր համար, բայց հոգեբանորեն և այլ առումներով օգտակար է ընտանիքի մյուս անդամների համար: Օրինակ՝ «ընտանիքի տառապյալ անդամի» դերը, ով անմնացորդ նվիրվում է ընտանիքի շահերին և զոհաբերում է իր անձը: Սա կամավոր ինքնազոհաբերման դեպքն է:

2. Ընտանիքում ուղղակի կամ անուղղակի կերպով մեկ անդամի մղում են կատարել այնպիսի դեր, որը նրա կատարողի(ստանձնողի) վրա ախտածին ազդեցություն է գործում: Օրինակ՝ ընտանիքի «քավության նոխազի» դերը, որի կատարողը բոլոր դժգոհների ագրեսիայի զոհն է դառնում:

3. Լինում են նաև դեպքեր, երբ ընտանիքի անդամն այնպիսի դեր է կատարում, որն ախտածին է մյուս անդամների համար, մինչդեռ իր համար ախտածին չէ: Ընտանիքում ախտածին դերերի և համապատասխան ախտածին փոխհարաբերությունների ծագումը պատահական չէ: Պարզվում է, որ որոշ ընտանիքներում, օրինակ, ախտածին «քավության նոխազի» դերը ծագում է այն պատճառով, որ նրա անդամները սթրեսների են ենթարկվում, խիստ ագրեսիվ ու չարացած են, և նրանց այնպիսի օբյեկտներ են պետք, որոնց վրա կարող են լիցքաթափել իրենց բարկությունը: Ելնելով վերոնշյալից՝ շատ մասնագետներ եկել են այն եզրակացության, որ եթե որևէ ընտանիքում հիվանդ մարդ կա, ապա այդ հիվանդության պատճառը հասկանալու համար պետք է ուսումնասիրել ընտանիքն ամբողջությամբ, իսկ հաճախ էլ՝ բուժել ոչ միայն նրան, այլև ընտանիքն ամբողջությամբ: Սա ցույց է տալիս, որ ընտանիքն իսկապես կարող է ախտածին լինել իր անդամի համար, և որ հիվանդությունների պատճառները պետք է փնտրել հենց ընտանիքում, նրա ախտածին դերերում և ախտածին միջդերային հարաբերություններում: Հոգեբանները պարզել են, որ այնպիսի խանգարումներ, ինչպիսիք են ներդրողները և փսիխոպաթիաները, ակոհոլիզմն ու թմրամոլությունը, սուր աֆեկտիվ հակազդումները և այլն, կարող են բացահայտվել ընտանիքում, ախտածին դերերի առկայությամբ: Հ. Ռիխտերը գտնում է, որ ընտանիքն այնպես կարող է փոխել իր հարաբերությունները շրջապատի՝ ազգականների, հարևանների և այլոց հետ, որ դրա հետևանքով ախտածին դերերի ծագումն անխուսափելի կլինի: Ըստ այդմ՝ Ռիխտերը ընտանիքները բնութագրում է հետևյալ ձևակերպումներով [12, էջ 29-35, 20, էջ 305-312]: **«Ընտանիք-բերդ»**, որտեղ կենտրոնական դիրք է զբաղում նյարդային և հոգեկան խանգարումներ կամ պարանոյալ հակումներ ունեցող անձը: **«Հակասեքսուալ գաղափարախոսություն դավանող ընտանիք»**, որը ձևավորվում է սեռական թուլություն ունեցող անդամի ազդեցության տակ: **«Ընտանիք-հանգստյան տուն»**, երբ ախտածին դերը դրսևորվում է ընտանիք - սոցիալական միջավայր հարաբերությունների խախտման պայման-

ներում: «Ընտանիք-թատրոն», որը ձևավորվում է անդամներից մեկի՝ իր բարձր ինքնագնահատական իրականացնելու հակվածության հետևանքով:

Է. Էյդեմիլլերն ու Վ. Յուստիցկիսը առաջադրել են մի վարկած, որը դեռևս լիովին հիմնավորված չէ: Նրանք ենթադրում են, որ ախտածին դերեր ծագում են այն ընտանիքներում, որոնց անդամները նախապես որոշ պատկերացումներ ունեն այդ դերերի մասին, թեև դրանք իրենց ընտանիքներում մինչ այդ չեն եղել: Սակայն հեղինակները հստակ ապացույցներ չեն բերում: Ենթադրվում է, որ լիովին հնարավոր է, որ ընտանիքի անդամները կարող են նույնիսկ զերծ մնալ այդ դերը (դերերը) կատարելուց անգամ այն դեպքերում, եթե նույնիսկ ընտանիքի որոշ անդամներ նրանց վրա ուժեղ ճնշում գործադրեն: Օրինակ՝ նույն «հիվանդապահի», նույն «խնամողի» դերերը, որոնց կատարման անհրաժեշտությունն անձը կարող է զգալ, սակայն չկատարել՝ ելնելով դերի բնույթի վերաբերյալ սեփական պատկերացումներից: Որոշ մշակութային միջավայրում ապրողների համար նման վարքագիծը կարող է եսասիրության և դաժանության մասին վկայել, սակայն հոգեբանորեն այն կարելի է բացատրելի համարել: Նման փաստերը վկայում են, որ մարդիկ, որոշակի նորմերի ենթարկվելով, հաճախ ստիպված են լինում այնպիսի սթրեսածին դերեր ստանձնել, որոնք, օրինակ, նրանց կարող են զրկել մասնագիտական գործունեության բնագավառում հաջողությունների հասնելու հնարավորությունից: Սա կարող է հենց ախտածին լինել [10, էջ 311-312]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ադոյան Ա. Գ.** Միրո և ընտանիքի էվոլյուցիան: Գիրք I. - Եր.: Հայաստան, 1967. - 723 էջ:
2. **Ադոյան Ա. Գ.** Միրո և ընտանիքի էվոլյուցիան: Գիրք II. - Եր.: Հայաստան, 1972. - 797 էջ:
3. **Աբգումանյան Ա. Ս.** Անբարենպաստ ընտանիքի երեխայի ես-ի դրսևորումների հոգեբանական յուրատիպությունը սոցիալականացման վաղ շրջանում // Հոգեբանությունը և կյանքը. - Եր.: Զանգակ-97, 2002. - №2. - էջ 37-45:
4. **Գևորգյան Ս. Ա.** Հայ ավանդական ընտանիքի էթնոհոգեբանական և էթնոմանկավարժական ակունքները // Հոգեբանությունը և կյանքը. - Եր.: Զանգակ-97, 2001. - №2. - էջ 12-21:
5. Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրք: ՀՀ պաշտոնական տեղեկագիր. - Եր. : Տիգրան Մեծ, 2008. - 216 էջ:
6. **Հարությունյան Ն.** Ընտանիքի դերային համակարգը սոցիալական հոգեբանության համատեքստում // Հոգեբանությունը և կյանքը. - Եր.: Զանգակ-97, 2008. - №1-2. - էջ 66-71:
7. **Նալչաջյան Ա. Ա.** Անձ, խմբային սոցիալականացում և հոգեբանական հարմարում. - Եր. : ՀՀ ԳԱԱ հրատ., 1968. - 132 էջ:
8. **Նալչաջյան Ա. Ա.** Ընտանիքի սոցիալական հոգեբանություն. ակնարկներ ծնողների և մանկավարժների համար. - Եր., 1992. - 231 էջ:
9. **Մեղրակյան Ս. Ա.** Ընտանիքի հոգեբանության խնդիրներին դերային մոտեցման էությունը // Հոգեբանությունը և կյանքը. - Եր. : Զանգակ-97, 2010. - 9-23 էջ:
10. **Մեղրակյան Ս. Ա.** Ընտանիքի հոգեբանություն (մեթոդաբանական վերլուծություն). - Եր. : Ուրարտու համալսարան, 2010. - 465 էջ:

11. **Սեդրակյան Ս. Ա.** Հնտանիքի սոցիալ-հոգեբանական ուսումնասիրության ժամանակակից հիմնախնդիրները // Հոգեբանությունը և կյանքը. - Եր.: Ջանգալ-97, 2008. - №3-4. - էջ 11-19:

12. **Андреева Т. В.** Семейная психология. - СПб : Речь, 2004. - 244 с.

АРМИНЕ МУРАДЯН

Российско-Армянский (Славянский) университет,
кафедра психологии, преподаватель, кандидат психологических наук

**ВЛИЯНИЕ ПАТОГЕННЫХ РОЛЕЙ И КРИЗИСОВ НА ВНУТРИСЕМЕЙНЫЕ
ВЗАИМООТНОШЕНИЕ**

В данной статье анализируются этапы взаимодействия внутрисемейных патогенных ролей и кризисов и влияний патогенных ролей на внутрисемейные взаимоотношения.

ARMINE MURADYAN

Russian – Armenian University
Department of Psychology, Lecturer, Candidate of Psychological Sciences

**REPRESENTATION OF THE FAMILY OF GROWING CHILDREN
FROM COMPLETE AND INCOMPLETE FAMILIES**

This article deals with the family notion from the standpoint of children from complete and incomplete families. “The Family Kinetic Image” and “Incomplete Sentences” methodologies were chosen as a research method.

ԱՐՄԻՆԵ ՄՐԱԴՅԱՆ

Արցախի պետական համալսարանի դասախոս

**ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՈՏՈՒ ԲՆՈՒԹՅԱԳՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈՆՖ-
ԼԻԿՏՈԳԵՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ**

Ժամանակակից գրականության մեջ գոյություն ունեն կոնֆլիկտի բազմաթիվ դասակարգումներ: Ըստ մի շարք հետազոտողների (Ա.Գ.Զորավոմիսլով, Ռ.Դարենդորֆ)՝ գոյություն ունի կոնֆլիկտների հետևյալ դասակարգումը. ներանձնային կոնֆլիկտներ, միջանձնային կոնֆլիկտներ, խմբային կոնֆլիկտներ, հիմնարկային (ինստիտուցիոնալ) կոնֆլիկտներ, կոնֆլիկտներ մշակույթների միջև և միջպետական կոնֆլիկտներ:

Բանալի բառեր՝ կոնֆլիկտ, սահմանամերձ գոտի, զինված բախում, պատերազմ, հոգեկան վիճակ, արատակարգ պայմաններ

Վերջինս միջազգային կոնֆլիկտի տարատեսակներից է, որի սուբյեկտներն են հակամարտող պետությունները կամ պետական կազմավորումները (օրինակ՝ չճանաչված պետությունները): Միջազգային կոնֆլիկտների սուբյեկտներն են հանդիսանում առավելապես պետությունները:

Ըստ այդմ առանձնացնում են.

- **միջպետական կոնֆլիկտներ,**
- **ազգային-ազատագրական կոնֆլիկտներ,**
- **ներքին միջազգայնացված կոնֆլիկտներ:**

Միջազգային կոնֆլիկտը կրում է սոցիալական բնույթ:

Սոցիալական կոնֆլիկտները բնութագրվում են սոցիալական սուբյեկտների (անձերի, խմբերի, կոլեկտիվների, շարժումների, պետությունների) հակամարտությամբ և պայմանավորված են վերոնշյալ սուբյեկտների միջև տեղ գտած հակասություններով:

Կախված հակամարտող կողմերի շահերի առաջնահերթությունից՝ տարբերում են կոնֆլիկտի հետևյալ տեսակները՝ գաղափարախոսական, միջպետական, տնտեսական, տարածքային և կրոնական կոնֆլիկտներ [1]:

Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության օրինակով կարելի է փաստել, որ միջպետական բացահայտ կոնֆլիկտները ուղեկցվում են սահմանային լարվածությամբ, ուժակոծությամբ և լոկալ (տեղային) ռազմական ընդհարումներով:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ զինված բախումները (կոնֆլիկտները) մշտական սպառնալիք են ժամանակակից հասարակության համար: Զինված բախումների (կոնֆլիկտների) տեսական ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգել այն մտքին, որ պատերազմներից առավելապես տուժում ու խեղվում է սահմանամերձ գոտու բնակչությունը:

«Սահմանային գոտի» հասկացությունը, Հայաստանի Հանրապետության պետական սահմանի մասին օրենքի 21 հոդվածի համաձայն, պետական սահմանագծից Հայաստանի Հանրապետության տարածքի խորքը մինչև 5 կմ լայնությամբ ծավալվող տարածքն է: Իսկ սահմանային գոտու մի մասը, որը հարում է պետական սահմանին մինչև 1 կմ լայնությամբ, կոչվում է սահմանային շերտ [2]:

«Սահմանամերձ գոտի» տերմինն օրենքում ամրագրված չէ, սակայն լայն կիրառություն ունի:

Պարզելու համար, թե սահմանամերձ գոտին կարելի է արդյոք դիտարկել որպես սոցիալական կոնֆլիկտոգեն միջավայր, և հոգեբանական ինչ օրինաչափություններ են ընկած ռազմական կոնֆլիկտների առաջացման և զարգացման հիմքում, ծանոթանանք «կոնֆլիկտ» հասկացությանը՝ որպես սոցիալ-հոգեբանական երևույթի:

«Կոնֆլիկտ» հասկացությունը ծագել է լատիներեն «conflictus» բառից, որը բառացիորեն նշանակում է «բախում, լուրջ տարաձայնություն, վեճ»: Առօրյա կյանքում այն օգտագործվում է ինչպես տարբեր ենթատեքստերում, այնպես էլ փոխաբերական առումով: Առավել տարածված սահմանման համաձայն՝ կոնֆլիկտն այն սոցիալական իրավիճակն է, երբ երկու և ավելի կողմեր փորձում են հետամուտ լինել իրենց հակադիր շահերին կամ անհամատեղելի նպատակներին: Պետք է հիշել, որ կոնֆլիկտը հասարակական հարաբերությունների անհերքելի փաստերից է և սոցիալական փոփոխությունների շարժիչ ուժը: Կոնֆլիկտները կարող են կատարել ինչպես դրական, այնպես էլ բացասական գործառույթներ: Հիմնական կոնֆլիկտաբանական միջամտությունների մասին պատկերացում կազմելու համար բավական է անդրադառնալ ամերիկյան կոնֆլիկտաբան Հ. Ասեֆայի կողմից առաջարկված կոնֆլիկտների պարզագույն դասակարգմանը: Այստեղ կոնֆլիկտը տիպաբանված է երկու հիմնական առանցքների շուրջ՝ նպատակներ և վարքագիծ, իսկ կոնֆլիկ-

տային իրավիճակների տիպերն առանձնացված են այդ երկու տարրերի հարաբերակցության հիման վրա:

Իրավիճակ՝ **«Կոնֆլիկտ չկա»:** Առաջին հայացքից թվում է, թե այս իրավիճակը առավել նախընտրելի է, սակայն հայտնի է, որ ցանկացած խաղաղ հասարակություն, լինելով դինամիկ և փոփոխվող, այս կամ այն չափով պետք է հակված լինի որոշակի կոնֆլիկտների: Կոնֆլիկտների իսպառ բացակայությունը նույնպես վտանգավոր է:

Թաքնված (լատենտ) կոնֆլիկտ: Այստեղ առկա է հակասություն, որը դեռևս արտահայտված չէ, և հնարավոր է՝ պահանջվեն հատուկ միջոցառումներ՝ այն վերհանելու համար:

Մակերեսային կոնֆլիկտ: Այս դեպքում պետք չէ փնտրել խորը արմատներ, քանի որ հակասությունը մակերեսային է և կարող է վերանալ հաղորդակցությունների կարգավորման հետ մեկտեղ:

Բացահայտ կոնֆլիկտ: Այս տիպի կոնֆլիկտներում առկա են ինչպես մակերեսային դրսևորումներ, այնպես էլ խորը արմատներ, սա բարդ իրավիճակ է [3]:

Ինքնին հակասությունների առկայությունը ոչ միշտ է տանում կոնֆլիկտի: Կոնֆլիկտի զարգացման համար կողմերը պետք է գիտակցեն, որ իրենց շահերն ու նպատակները անհամատեղելի են, ինչպես նաև ունենան կողմնորոշվածություն դեպի հակասությունների լուծման կոնֆլիկտային ուղիները: Ավելին, օբյեկտիվորեն կողմերի նպատակները և շահերը կարող են չհակասել, բայց եթե դրանք ընկալվում են որպես փոխբացառող, ապա դա կարող է իր հետ բերել կոնֆլիկտի ծագման հավանականություն: Այսպիսով, կոնֆլիկտը կարելի է սահմանել նաև որպես ընկալվող շահերի բախում՝ հաշվի առնելով այն, որ ցանկացած դեպքում կոնֆլիկտում կողմերը միմյանց շահերը ընդունում են որպես փոխհակասող՝ անկախ այն բանից, թե ինչպիսին են դրանք իրականում:

Նույնկերպ կոնֆլիկտի մասնակիցները կարող են ունենալ շահերի օբյեկտիվ խոր տարբերություններ, բայց, այնուամենայնիվ, չընդունեն, որ այդպիսիք գոյություն ունեն և գործեն՝ առաջնորդվելով իրականության նկատմամբ սեփական հայացքներով՝ խուսափելով ակնհայտ առճակատումից: Գործնականում կարող է պատահել նաև այնպես, որ շահերի իրական կոնֆլիկտը մերժվի, իսկ իրականում գոյություն չունեցող կոնֆլիկտը ընկալվի որպես իրական կոնֆլիկտ: Իր ծայրահեղ արտահայտության մեջ իրականության և դրա ընկալման անհամապատասխանությունը կարող է ոչ միայն ծնել կոնֆլիկտներ, այլև ստեղծել բազմաթիվ դժվարություններ դրանց կարգավորման հարցում:

Կոնֆլիկտի հոգեբանական տիրույթը ներկայացված է 2 մակարդակներով՝

1. զգացմունքային մակարդակ (դրական զգացմունքներն են՝ ուրախություն, հրճվանք, և բացասական զգացմունքներն են՝ վախ, սարսափ)

2. ճանաչողական մակարդակ (կոգնիտիվ), որը իր հերթին ներկայացված է 3 բաղադրիչներով՝

- ընտրովի ընկալում

- ընտրովի վերհիշում կամ մտաբերում
- անհատական կամ խմբային սոցիալական ինքնություն:

Ընտրովի ընկալումը մի գործընթաց է, երբ դեպքերը, իրադարձություններն ու դեմքերը տվյալ սուբյեկտի կողմից ըմբռնվում և մեկնաբանվում են յուրահատուկ ձևով՝ ելնելով տվյալ խմբի դրական կերպարի հաստատման կամ ամրապնդման սկզբունքից: Դրան համապատասխան՝ ընդունվում է միայն այն ինֆորմացիան, որը նպաստում է տվյալ խմբի մասին դրական ձևավորմանը, և ցանկացած ինֆորմացիա, որն ինչ-որ չափով կարող է սպառնալ դրական կերպարին, մերժվում է:

Ընտրովի վերհիշումը կամ մտաբերումը՝ որպես երևույթ, շատ մոտ է ընտրովի ընկալմանը, սակայն վերաբերում է դեպքերին, դեմքերին և իրադարձություններին, որոնք տեղի են ունեցել անցյալում: Իրադարձությունը, որը ծանր հետք է թողել տվյալ խմբի վրա, ստացել է «ընտրված տրավմա» անվանումը: Վերջինս սոցիալ-հոգեբանական երևույթ է, որը կարող է դառնալ տվյալ խմբի ինքնության տարրերից մեկը:

Անհատական, կամ խմբային սոցիալական ինքնությունն անձի կամ խմբի պատկանելիությունն է որևէ այլ խմբի: Հենց նշված ինքնության միջոցով և ազդեցությամբ է մարդը ձևավորում իր վերաբերմունքը և դիրքորոշումն արտաքին միջավայրից ստացվող ինֆորմացիայի վերաբերյալ [4]:

Արցախի սահմանամերձ բնակավայրերում անցկացված ուսումնասիրությունները և դիտարկումները թույլ են տալիս ենթադրել, որ հակամարտող (կոնֆլիկտող) կողմերից առնվազն մեկին հատուկ է կարծրատիպային ընկալումները հակառակ կողմի և իրականության վերաբերյալ: Առավել ծայրահեղ պայմաններում կարծրատիպերն ի հայտ են գալիս մասսայական գիտակցման մակարդակում: Դրանք նշանակալի աստիճանով ստեղծվում և ամրապնդվում են զանգվածային տեղեկատվության միջոցով:

Կարծրատիպային ընկալումը ներառում է.

- հուզական հայեցակետ (հակառակորդ կողմի նկատմամբ թշնամանքի զգացում, վախ, կասկածամտություն)

- ճանաչողական (կոգնիտիվ) հայեցակետ (ինֆորմացիայի պարզեցման ձգտում, ծայրահեղ ընտրողականություն), այսինքն՝ ընդունվում է միայն այն ինֆորմացիան, որը համաձայնության մեջ է գտնվում առկա կարծրատիպերի հետ [4]:

Լոկալ ռազմական ընդհարումների և սահմանային լարվածության հանրանկարում սահմանամերձ գոտու բնակչության մոտ ձևավորվում է այն զգացումը, որ հակառակորդ կողմն ունի գործողությունների ընտրության մեջ մեծ ազատություն: Այդ իսկ պատճառով նրանց մոտ սեփական կողմի գործողությունները ընկալվում են որպես պատասխան՝ ստիպողական բնույթ ունեցող, այն դեպքում, երբ հակառակորդ կողմի գործողությունները ընդունվում են որպես դրդիչ, նենգ և սպառնացող:

Զիզմունդ Ֆրեյդը իր աշխատանքներում բազմիցս անդրադարձել է անձի և հասարակության հարաբերություններին՝ դրանք որակելով որպես կոնֆլիկ-

տային, քանզի հասարակությունը մշտապես ճնշում է մարդու մի շարք բնագոյների դրսևորումը [5]:

Հետևաբար խմբային և միջանձնային կոնֆլիկտները կարող են հիմք հանդիսանալ նաև ներանձնային կոնֆլիկտների ձևավորման համար: Ընդ որում, այս գործընթացը կարող է ունենալ նաև հակադարձ ուղղությամբ զարգանալու միտում: Կոնֆլիկտները մշտապես ուղեկցել են մարդկությանը, քանզի մարդիկ իրենց վարքը համապատասխանեցնում են իրենց հաճույքների սկզբունքներին և օժտված են բնածին ագրեսիվությամբ: Հարկ է նշել, որ հասարակության մեջ տեղ գտնող հակասությունները և կոնֆլիկտները խթան են հանդիսանում այդ նույն հասարակության զարգացման համար: Ուստի, մարդկության ծագմանն ու զարգացմանը ուղեկցել են կոնֆլիկտներն ու վեճերը: Յեղերի, տոհմերի, պետությունների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև պատերազմները տեղի են ունեցել պատմական բոլոր ժամանակաշրջաններում: Առաջին և Երկրորդ համաշխարհային, ապա «սառը» պատերազմները եկան ապացուցելու բռնի կոնֆլիկտների կանխարգելման և դրանց դեմ միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը: Այսօր մարդկությունը, խորապես մտահոգված լինելով կոնֆլիկտների հետևանքներով, փորձում է մշակել համապարփակ գիտական մոտեցում կոնֆլիկտների վերլուծության, լուծման և կարգավորման ուղղությամբ:

Վեսելին քոլեջի կողմից անցկացված ուսումնասիրությունների համաձայն՝ Ք.ա. 3600 թվականից առ 2011թ. աշխարհում տեղի են ունեցել ավելի քան 14600 պատերազմներ, որոնց արդյունքում զոհվել է ավելի քան 3 միլիարդ մարդ: Համեմատության համար՝ Երկրի բնակչությունը 2011թ. կազմել է 7 միլիարդ: Մարդկության պատմությունը գրանցել և արձանագրել է խաղաղության ընդամենը 292 տարի, բայց այս ամենին զուգընթաց՝ առկա են հիմնավոր կասկածներ, որ որոշ զինված հակամարտություններ չեն գրանցվել:

Ըստ ամերիկյան հետազոտող Բարբարա Էրենտեյխի՝ որպեսզի հնարավոր լինի պատերազմել, մարդկային հասարակությունը պետք է օժտված լինի մեկ կարևորագույն հոգեբանական բաղադրիչով՝ ագրեսիվությամբ, ինչը կարող է պայմանավորված լինել գենետիկորեն [6]:

Սահմանամերձ գոտու բնակչության համար կոնֆլիկտները մեծ մասամբ կապված են սահմանային միջադեպերի, լոկալ ռազմական ընդհարումների, ռմբակոծությունների հետ: Նրանք, ովքեր պատերազմի արհավիրքներից խեղվում, վնասվում և ծանր կորուստ են կրում, ինքնաբերաբար իրենց դասում են տուժածների խմբին: Վերոնշյալ խումբը կարող է օտարվել հասարակությունից, երևելի դարձնել իր հիասթափությունը, դժգոհությունը, անհավատարմությունը: Ընդ որում, նմանատիպ միտում կարող է նկատվել ինչպես խաղաղ բնակչության, այնպես էլ զինվորականների շարքերում: Սակայն, այս ամենին զուգընթաց, երկար ժամանակ ապրելով ու գործելով նմանատիպ պայմաններում, սահմանամերձ գոտու բնակչության մոտ կարող են ձևավորվել ներքին դիմադրողականություն և կայունություն, դժվար, կյանքի համար վտանգ ներկայացնող պայմաններում արդյունավետ գործելու հատկություն:

2016թ. ապրիլ ամսին Ադրբեջանի կողմից սանձազերծված քառօրյա պատերազմն ու սահմանային հետագա լարվածությունը եկել են փաստելու, որ ամենատուր ձևով մարդիկ գիտակցում են իրենց սերն ու պատասխանատվությունը հարազատների ու հայրենիքի հանդեպ հենց կյանքի համար վտանգ ներկայացնող, էսկալացիոն իրավիճակներում: Կարելի է ենթադրել, որ սրված հարաբերությունները հարթելու համար մարդիկ սկսում են աշխատել համատեղ՝ փոխադարձ ընդունելի լուծումներ գտնելու համար:

Երկրագնդի բնակչության մեծ մասը հավանաբար բացասական կարծիք ունի պատերազմների և ռազմական կոնֆլիկտների մասին: Այնուամենայնիվ մենք ականատեսն ենք այն իրողության, որ պատմությունների, գրքերի ու ֆիլմերի լավագույն հերոսները պատերազմներում հաղթած խիզախ ու միաժամանակ վայրենաբար կովող մարտիկներն են:

Սահմանամերձ գոտու բնակչության համար կոնֆլիկտները հոգեկան ցնցումների հիմնական աղբյուրն են: Ըստ այդմ, զինված բախումների հետևանքով ձևավորված սթրես-գործոնների ազդեցությունը սահմանամերձ գոտու բնակչության հոգեկան ու հուզական վիճակների վրա արժանի է հատուկ ուշադրության:

«Արտակարգ պայմաններում անձի հոգեկան վիճակներ», «հոգեկան լարվածություն», «սթրեսային վիճակ» հասկացությունների զարգացման գործում, զգալի ներդրում ունեն Յու. Ա. Գոլովախը, Վ. Ի. Լեբեդևան և Ա. Ա. Նալչաջյանը:

Ներկայումս ակտիվորեն ուսումնասիրվում են ռազմական գործողությունների արդյունքում երևան եկած սթրեսի հոգեբանական հետևանքները (Մ. Ե. Ջելենով, Ե. Օ. Լազերնայա, Ա. Վ. Տիմչենկո): Դժվար իրավիճակներում սահմանամերձ գոտու բնակչության հոգեկան վիճակների ուսումնասիրության գործում առանձնակի տեղ ունեն Ե. Պ. Կրինչիկի, Ա. Ի. Մեչետովի, Ն. Վ. Ռեխտինի և Բ. Ա. Սմիրնովի աշխատանքները: Այնուամենայնիվ, քիչ են հետազոտված մարդու հոգեկան հակազդումները այնպիսի սթրես-գործոններին, որոնց առաջացումը պայմանավորված է՝ անմիջականորեն զինված բախումների գոտում բնակվելու փաստով, անձի հանդեպ բռնության գործադրմամբ և կյանքի համար վտանգ ներկայացնող այլ դեպքերի ազդեցությամբ (մարդկային կորուստներ, հաշմանդամություն, տևական ումբակոծություններ և այլն):

Կյանքի համար վտանգ ներկայացնող պայմաններում հոգեկան ամենատարածված վիճակներից է հուզական լարվածությունը: Որոշ հեղինակներ, այն նույնացնում են սթրեսի հետ, որը պայմանավորված է վերջինիս անորոշ մեկնաբանությամբ: Զինված բախումների պայմաններում հոգեկան լարվածություն կարող է առաջանալ տեղեկատվության պակասի, անորոշության, կյանքի արժեքների և առաջնահերթությունների փոփոխության, արտակարգ իրավիճակների և այլ դեպքերի հետևանքով: Երկար ժամանակ բնակվելով հակամարտության գոտում ու կրելով բացասական գործոնների ազդեցությունը՝ մի շարք որակներ կարող են ձևափոխվել, և առաջին հերթին փոխակերպվում է անձի արժե-գաղափարական ոլորտը: Մարդու համար առաջնահերթ

են դառնում կյանքի որոշակի փուլում կարևորված արժեքների պահպանումը և նորերի հիմնումը, վերջիններիս կործանման դեպքում [7]:

Այսպիսով, կարելի է անվիճարկելի համարել այն փաստը, որ մարդկանց երկարաժամկետ առկայությունը կյանքի համար վտանգ ներկայացնող պայմաններում, որոնք կապված են զինված բախումների հետ, կարող է խոչընդոտել հասարակության մեջ անձի ներգրավմանը և պահանջել ընտելացմանն ուղղված միջոցառումներ:

Ումանք հակված են այն տեսակետին, որ մարդիկ ի ծնե օժտված են կռվելու, պատերազմելու բնագործ: Մակայն ռազմական ընդհարումները և կոնֆլիկտները իրենցից չափազանց բարդ կոլեկտիվ գործունեություն են ներկայացնում, ուստի չեն կարող պայմանավորված լինել միայն պատերազմելու բնածին հակմամբ: Մարտերում զինվորների դրսևորած դաժանությունն ու բռնությունը կարելի է դիտարկել միայն որպես ռազմական կոնֆլիկտի բաղադրիչ, որին նախորդում է ռազմական գործողություններին նախապատրաստվելու փուլը (սպառազինության ու տեխնիկայի ձեռք բերումը, զորավարժությունների անցկացումը, զինվորականների մեջ համապատասխան ունակությունների ձևավորումն ու կատարելագործումը և այլն) [6]:

Հետևաբար, «սպանելու բնագործ» մասին վարկածը, որի ջատագովներն են մի շարք հեղինակավոր մարդաբաններ (անթրոպոլոգներ) ոչ այնքան սխալ է, որքան անտեղի: Բավականին դժվար է ստիպել մարդկանց պատերազմել: Վերջին հարյուրամյակի ընթացքում արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ մարդիկ, պատերազմներից փախչելով, բռնում էին գաղթի ճանապարհը՝ թողնելով իրենց հայրենիքը, անդամահատում էին ցուցամատները, հոգեկան հիվանդություններ և խելագարություններ ձևացնում: Փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ համապատասխան զինվորական պատրաստություն անցնելուց հետո, սպանությունը և դրանից բխող դաժանությունը մարդկանց համար չեն կարող դառնալ սովորական:

ԱՄՆ-ի բանակի պաշտոնաթող գնդապետ Դեյվիդ Գրոսսմանն իր «Պատերազմին հասարակությանը նախապատրաստելու հոգեբանական գինը» գրքում հիմնավորապես վերահաստատում է այն թեզը, ըստ որի՝ յուրաքանչյուր բանակի ռազմական ուսուցման գլխավոր խնդիրը եղել և մնում է նախ և առաջ զինվորի բարոյականային հատկանիշների ձևավորումը, հակառակորդին ոչնչացնելու հոգեբանական արգելքների հաղթահարումը [6]:

Նրանք, ովքեր ուսումնասիրում են միջպետական ռազմական կոնֆլիկտները անաչառ և արդարամիտ, նկատել են, որ պատերազմները ունեն վարակիչ հիվանդության նման տարածվելու միտում: Այդ միտումը ստացել է «համաճարակային մոդել» անվանումը: Ակնհայտ է, որ զինված բախումը հիվանդության ախտանիշ կամ մանրէների զարգացման արդյունք չէ, բայց աշխարհագրորեն այն, իրոք տարածվում է՝ համաճարակի սկզբունքի համաձայն: Այն կարող է տարածվել նաև ժամանակի մեջ, քանզի կողմերի կրած կորուստները հրահրում են պատժիչ նոր զինված բախումներ: Որպես օրինակ կարելի է դիտարկել Առաջին համաշխարհային պատերազմը, որը տարածվել

է ակնթարթորեն և ապա «վերարտադրվել» Երկրորդ համաշխարհային պատերազմի տեսքով :

Ըստ հոլանդացի սոցիոլոգ Հենկ Հոուվելինգի՝ պատերազմի պատճառներից մեկը հենց պատերազմն է [6]:

Պատերազմները խթան են հանդիսանում ռազմատենչ հասարակությունների ձևավորման համար, որոնք իրենց հերթին վտանգավոր և անկայուն են դարձնում աշխարհում այլ հասարակությունների իրավիճակը: Այսպիսի պայմաններում գոյության պահպանման համար վերջիններս նույնպես հանգում են ռազմական դիրքորոշմանը:

Ուստի կարելի է եզրակացնել, որ պատերազմը ծնում է նոր պատերազմ, և այդ գործընթացում ձևավորվում է մարդկային հասարակությունը, որը ստիպված մասնակցում է զինված բախումներին: Մարդկանց վերաբերմունքը պատերազմին բավականին բարդ է, այն չի կարելի բացատրել միայն մարդու կովել ցանկանալու հակմամբ: Զինված կոնֆլիկտները իրենց դրոշմն են դնում հասարակության վրա՝ պահանջելով պահպանել երկու հիմնական առանձնահատկություններ

1. պետք է ունենալ պատերազմելու համար վարժված տղամարդկանց խումբ
2. ունենալ միջոցներ վերոգրված խմբի սպառազինման համար:

Գրականության վերլուծությունը և սեփական դիտարկումները թույլ են տալիս հանգել այն մտքին, որ սահմանամերձ գոտու բնակչությունը շատ հաճախ ներգրավվում է զինված կոնֆլիկտներին, դա, հավանաբար, պայմանավորված է այն իրողությամբ, որ զինված բախումները խթանում են ռազմատենչ հասարակությունների ձևավորումը, որոնք իրենց հերթին վտանգում են այլոց գոյության հարցը՝ ստիպելով նրանց անմասն չմնալ զինված ընդհարումներից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **А. Г. Зсравомыслов.** Социология конфликта: Учебное пособие для студентов ВУЗ-ов.- 3-изд. доп и мер. – М.: Аспект-Пресс, 1996.-317с.
2. www.sns.am
3. **Ա.Մելքոնյան,** Կոնֆլիկտ, Կոնֆլիկտների կարգավորում: «Նվազ կարծրատիպեր, առավել վստահություն խաղաղ լուծումների համար» ծրագիր:
4. **Volkan V.,** «Chosen trauma: Unresolved mourning» Chapter 3 N.Y., 1997, 47-48
5. **Ալբերտ Նալչաջյան,** Հոգեբանության հիմունքներ, Երևան 1997, էջ 13
6. **Б. Эренрайх** Гендерные исследования. 2004.-N10.-64,65
7. **Рядинская Е. Н.** Особенности психологических состояний человека, проживающего в зоне вооруженного конфликта, в контексте трансформаций смыслозначимых стратегий в постконфликтный период//Журнал Психология и правос. 196-200

ԱՐԱԿ ՓԻՐՅԱՆ

Արцахский государственный университет, преподаватель

ХАРАКТЕРИСТИКА ПРИГРАНИЧНОЙ ЗОНЫ КАК СОЦИАЛЬНО-КОНФЛИКТОЛОГИЧЕСКОЙ СРЕДЫ

Исследование литературы и собственные наблюдения позволяют предположить, что население приграничных зон часто участвует в вооруженных конфликтах, это связано с тем, что вооруженные столкновения способствуют формированию воюющих обществ,

что, в свою очередь, ставит под угрозу существование других людей, делая неизбежным их участие в вооруженных столкновениях.

ARAYIK FIRYAN

Artsakh State University, Lecturer

BORDER ZONE CHARACTERISTICS AS A SOCIAL CONFLICT AREA

Literature study and own observations suggest that border population is often involved in armed conflicts due to the fact that armed clashes contribute to the formation of warring societies, which, in their turn threaten livelihoods of people forcing them not to stay away from armed clashes.

ԳՍՅԱՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայցորդ

**ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԱԳ
ՆԱԽԱՊՐՈՑԱԿԱՆԻ ԿՈՂՆԻՑԻՍՅԻ ԴՐՄԵՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Տվյալ հոդվածում ներկայացվել է արմատացող կարծրատիպերի ձևավորմանը նպաստող մի շարք գործոններ, որոնք ունենում են դեստրուկտիվ ազդեցություն ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կոգնիտիվ դրսևորումներին:

Բանալի բառեր՝ Կոգնիցիա, կարծրատիպ, դեստրուկտիվ, օնտոգենեզ, կոգնիտիվ մենտալիտետ, կոգնիտիվ դրսևորումներ:

Կոգնիցիա բառը լատինական ծագում ունի և թարգմանաբար նշանակում է իմացություն, մտածողություն: Այն արտաքին աշխարհից ստացված ինֆորմացիան է, որը մշակվելով մարդկային ուղեղում՝ վերածվում է սցենարների, ֆրեյմերի (հիշողության մեջ պահպանված պատկերացումների փոխկապակցումն է), մտածողության ուրույն կառույցների: Ինչպես նշում է Ու. Նայսերը. «Կոգնիցիան կապված է իմացական բոլոր գործընթացների հետ. սենսորային տվյալները մուտք գործելով ուղեղ՝ անմիջապես տեղակայվում, խառնվում, տարածվում, ձևափոխվում, հստակեցվում, ամրագրվում, զարգանում, պահպանվում և կիրառվում են» [1]:

Կոգնիցիա ասելով՝ հասկանում ենք անձի՝ տվյալ դեպքում ավագ նախադպրոցականի իմացական գործընթացների փոխկապակցված, նպատակաուղղված, շարժուն ամբողջությունը, որը ներկայանում է համոզմունքների, գաղափարների, դատողությունների և ընդհանուր տրամաբանական մտածողության տեսքով: Այն սաղմնավորվում և ձևավորվում է մանուկ տարիքից և սկսում է արմատանալ ավագ նախադպրոցական տարիքում, երբ սկսում է ձևավորվել տրամաբանական մտածողությունը: Իհարկե այս տարիքում դեռևս չի արմատացել տրամաբանական մտածողությունը (12 տ.), երեխաները չունեն մեծ կյանքի փորձ, այնուհանդերձ նրանք արդեն տարբերակում են միջավայրում տեղի ունեցող երևույթների նշանակալիությունը և կարևորու-

թյունը: Նրանք կարողանում են տարանջատել «հեղինակություններին», ովքեր իրենց լավ կամ վատ ներգործությամբ ձևավորում են անհատական դիրքորոշում և վերաբերմունք շրջապատի նկատմամբ, ինչը կոգնիտիվ մտածողության հենակետային տարր է:

1. Մշակույթի ազդեցությունը երեխայի կոգնիտիվ դրսևորումներում

Երեխաները, մուտք գործելով նախադպրոցական հաստատություն, արդեն ունեն իրենց ուրույն՝ ընտանեկան միջավայրում ձևավորված մտածելակերպի կոնցեպտները, որոնք էլ գերակա են լինելու կոգնիտիվ դրսևորումներում: Սա մենք կանվանենք ընտանեկան մենտալիտետ, որն անմիջականորեն բխում է ազգայինից:

Յուրաքանչյուր ազգ ունի իր «մենտալիտետը», որն արդյունք է որոշակի ժամանակաշրջանի, պատմության, մշակույթի, տնտեսության, աշխարհագրական տարածքի, գաղափարների և ավանդույթների: «Մենտալիտետը» բնութագրում է որոշակի ինտեգրում ունեցող մարդկանց համախումբ, ովքեր ունեն միևնույն մշակույթը, ինչը թույլ է տալիս նկարագրել շրջապատող աշխարհից իրենց զգացածի և տեսածի յուրահասկությունը՝ ի ցույց դնելով առանձնահատուկ վերաբերմունք երևույթների նկատմամբ [2]:

Երեխան լինելով ընտանիքի, ինչպես նաև տվյալ ազգի ներկայացուցիչ՝ անմիջականորեն դառնում է տվյալ միջավայրին և ժամանակահատվածին բնորոշ մտածողության կրողը: Ըստ տարիքային առանձնահատկությունների՝ բոլոր երկրների երեխաները իրար նման են, նրանք ծնվում են՝ որպես աշխարհի քաղաքացի, սակայն ըստ գենետիկ նախադրյալների, անձնային որակների, ազգային պատկանելության, սոցիալական միջավայրի, կոնկրետ ժամանակահատվածի, աշխարհագրական դիրքի՝ տարբերվում են միմյանցից:

Զորեղ է մշակույթի ներգործությունը երեխայի վրա: Նախակրթարաններում երեխաները իրենց ստացած տեղեկույթը կարողանում են ի ցույց դնել կոգնիտիվ դրսևորումների՝ վարքի և խոսքի միջոցով: Ավագ նախադպրոցականը ունի ձևավորված խոսք, ինչի օգնությամբ կարողանում է արտահայտել իր մտքերը: Սակայն լինում են դեպքեր, երբ երեխան չի ցանկանում խոսել կամ դժվարանում է շարադրել իր մտածածը, նման դեպքերում օպտիմալ է երեխաների հետ աշխատել նկարչության, ծեփակերտման, խաղային և թատերականացման եղանակով, որոնք պատկերացում կտան երեխայի կոգնիցիայի մասին. Ժ. Պիաժեն հավաստում է, որ երեխայի կողմից պատկերված նկարները նրա հոգու հիերոգլիֆներն են [4]:

Ըստ Վիգոտսկու՝ [3] մարդն իր օնտոգենեզում յուրացնում է մշակույթի բոլոր արժեքները, որոնք իմացական գործընթացների բարձր ֆունկցիաներ են: Նա նշում է նաև իմացական գործընթացների բնական ֆունկցիաների մասին, որոնք պայմանավորված են մարդու հոգեֆիզիոլոգիական ապարատով: Բոլոր իմացական գործընթացների էլեմենտար երևույթները բնական են (օր. եթե ըմբռնումը բխում է զգայությունից, ապա բնական ֆունկցիա է, իսկ եթե այն իմաստավորվում է բառերով, ապա բարձր ֆունկցիա է): Ավագ նախադպրոցական տարիքի երեխան, յուրացնելով մշակութային արժեքները, դրսևորում

է դրան համապատասխան վարք և դիրքորոշում: Գործի դնելով կամային ուղորտը՝ նա փորձում է համապատասխանել տվյալ միջավայրին՝ հարմարեցնելով իր ներքին պատկերացումները և մղումները արտաքին աշխարհին:

Ավագ նախադպրոցականը (4,5 - 6 տ.) արդեն ունի ձևավորված «ես» («ես» կոնցեպցիա, 3 տ.), պատկերացում և վերաբերմունք սեփական անձի հանդեպ, ինչպես նաև շրջապատին հարմարվելու փորձ: Երեխայի «ես»-ի կարևորությունը՝ էզոցենտրիզմը [4], հարմարվելով նոր ժամանակահատվածին (3-4 տ.) և միջավայրին՝ քայլ է կատարում սոցիալիզացիայի նոր՝ առավել մասշտաբային փուլ, որն էլ ինքնին երեխայի մոտ ձևավորում և արմատացնում է կոգնիտիվ նոր առանձնահատկություններ: Նա հարաբերությունների ավելի լայն շրջանակում դառնում է անհատականորեն յուրահատուկ, բայց միևնույն ժամանակ տվյալ հասարակական միջավայրին ներդաշնակող մասնիկ: Երեխան գիտակցում է արդեն, որ ինքը և՛ յուրահատուկ է, և՛ միևնույն ժամանակ նման է իր տարեկիցներին: Նա կարող է կարևորել իր «ես»-ը՝ հարգելով կամ չհարգելով մյուս երեխայի «ես»-ը: Այս դաշտում երեխայի մոտ ձևավորվում է «հավասարը հավասարին» պատկերացումը, որը հարաբերությունների կայացման շատ կարևոր և որոշիչ գործոն է:

Ցանկալի է, որ երեխան նախադպրոցական հաստատություն հաճախի երեք տարեկանից, քանի որ եթե նա ավելի ուշ միանա արդեն ձևավորված խմբին, հարմարման գործընթացը կլինի դժվար:

Նախադպրոցական տարիքի երեխան ձեռք է բերում կյանքի կարևոր մի փորձ ևս. նա իր ընտանիքի անդամներին արդեն սկսում է բացահայտել մեկ այլ տեսանկյունից: Եթե կյանքի առաջին տարիներին նրա համար ծնողն էր համարվում հեղինակություն, ապա նոր միջավայրում ի հայտ են գալիս նոր հեղինակություններ: Այստեղ խառնվում են դիրքորոշումները, և երեխան, նոր իրավիճակում հայտնվելով, էլքեր է գտնում, որոնք էլ դառնում են կոգնիտիվ նորագոյացություններ: Երեխան կարող է կարևորել

- ծնողներին,
- հասկակիցներին,
- դաստիարակին,
- ծնողներին, դաստիարակին,
- ինքն իրեն:

Ավագ նախադպրոցականի նոր հարաբերությունների ստեղծման և կոգնիտիվ նորագոյացության հիմք է դառնում նաև երեխա-օտար մեծահասակ (դաստիարակ) փոխգործունեությունը: Շատ հաճախ կարելի է լսել ծնողի արտահայտած միտքն այն մասին, որ երեխայի համար շատ կարևոր է դաստիարակի կարծիքը, խոսքը: Դաստիարակի մի փոքրիկ գովեստն ավելի նշանակալից է, քան ծնողի գովեստների շարքը: Երեխայի անձի բնականոն զարգացման համար կարևոր է մանկավարժի կոմպետենտությունը և ծնողի լայնախոհությունը, քանի որ այս տարիքում են ձևավորվում դիստրուկտիվ կարծրատիպերը: Ծնողի և երեխայի փոխհարաբերությունների առողջ, անկաշկանդ և ջերմ լինելը նպաստում է կոնստրուկտիվ մտածողության ձևա-

վորմանը: Երեխաները լինում են լինում են ինքնաբավ, դիմակայող և ճկուն հարաբերությունների մեջ:

Ավագ նախադպրոցականի մոտ ձևավորված կոգնիցիան կարող է դառնալ և՛ բնականոն դիրքորոշում կամ առողջ մտածելակերպ, և՛ կարծրատիպ՝ աղավաղված մտածողության արդյունք, որը հետագայում դառնում է բարդույթ, վնասում նրան ողջ կյանքի ընթացքում:

Ջ. Ս. Բեկը [5] կազմեց կոգնիտիվ աղավաղումների հետևյալ ցուցակը՝

1. Մտածողության ձև՝ «ամեն ինչ կամ ոչինչ», որտեղ մարդը առաջնորդվում է «կամ-կամ»-ի սկզբունքով, ամբողջական իրավիճակը մասնատում է:

2. Դրամատիզացում՝ ապագայի կանխագուշակում միայն նեգատիվ երանգներով:

3. Պոզիտիվ պահերի անտեսում՝ պոզիտիվ զգացողությունները հաշվի չառնելով:

4. Էմոցիոնալ փաստարկումներ՝ հիմք ընդունել կանխագագումը՝ հաշվի չառնելով փաստերը, որոնք հակառակն են ապացուցում:

5. Պիտակներ կպցնել՝ անընդմեջ պիտակավորել ինքն իրեն և այլ մարդկանց:

6. Ուռճացնել (նսեմացնել, պակասեցնել) վատը և չնկատել լավ իրադարձությունները:

7. Մենտալ գտում-կենտրոնանալ ոչ պոզիտիվ, այլ նեգատիվ ինֆորմացիային:

8. Մտքեր կարդալ- անհիմն հավատ /պնդում/, որ կարդում է կամ գիտի ուրիշի մտքերը:

9. Գերընդհանրացում-սահմանափակ տվյալներով՝ լայնածավալ նեգատիվ պահանջմունքների վերհանում:

10. Անհատականացում (պերսոնալիզացիա)- չարդարացված վերաբերմունք ինքն իր հանդեպ՝ այլ մարդկանց վարվելակերպի պատճառով:

11. Կտրուկ պնդումների կիրառում - անփոփոխ և անհիմն պնդում պարտադիր վարքագծի վերաբերյալ իր և ուրիշների համար, ինչն արտացոլվում է «պետք է», «պարտավոր է» արտահայտություններում:

12. Թունելային ուղղություն - իրավիճակում միայն նեգատիվ ասպեկտներ տեսնելու ունակություն:

Այս ամենը երեխայի մոտ կարող է ձևավորվել նրա համար հեղինակություն հանդիսացող անձանց՝ ծնողի, տարեկիցների, մանկավարժի բացթողումների, սխալ վերաբերմունքի, անտարբերության հետևանքով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Reed St. R. Cognition. Theory and Application. 4-th ed. San Diego: Brooks. – 1996.
2. **Агеев В. С.** Межгрупповое взаимодействие. М., 1990.
3. **Выготский Л. С.** Психология развития человека-М.: Изд-во Смысл, 2005.
4. **Пиже Жан.** Избранное психологические труды.- М. 1995.
5. **Джудит Бек.** Когнитивная терапия.- М., 2006.

ԴԵՂԵՄԱՐԳԱՐԻԱՆ

Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна, соискатель

ФОРМИРОВАНИЕ СТЕРЕОТИПОВ И ВЛИЯНИЕ НА КОГНИТИВНЫЕ ПРОЯВЛЕНИЯ У ДЕТЕЙ СТАРШЕГО ДОШКОЛЬНОГО ВОЗРАСТА

В данной статье представлены факторы способствующие формированию укоренившихся стереотипов, которые имеют деструктивное влияние на когнитивные проявления у детей старшего дошкольного возраста.

GAYANE MARGARYAN

Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Applicant

FORMATION OF STEREOTYPES AND THEIR INFLUENCE ON COGNITIVE MANIFESTATIONS AMONG OLDER PRE-SCHOOL AGE CHILDREN

This article presents factors contributing to the formation of entrenched stereotypes that have destructive effects on cognitive manifestations on children of older preschool age are presented.

ՇՈՎԻՆԱԸ ՆԵՐՄԻՍՅԱՆ

Գործնական հոգեբանության և սոցիալագիայի
«ՈՒՐԱՐՏՈՒ» համալսարանի հայցորդ

ՍԵՆՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է սեռական աններդաշնակության ազդեցությունն ամուսինների փոխհարաբերությունների վրա: Այն բավականին մեծ ազդեցություն ունի մարդու գործունեության վրա և դրա լիարժեքությունը կարող է դառնալ էներգիայի և ստեղծագործական ներշնչանքի անսպառ աղբյուր, երաշխիք⁸ բարձր տրամադրություն: Երիտասարդների մի զգալի մասն ամուսնանալով չի տիրապետում ամուսնական կյանքի հոգեւեռական հիմքերին: Լիովին արդարացված է, երբ ժամանակակից կյանքը պահանջում է որպեսզի սեռական դաստիարակությունը դրվի որակապես նոր հարթության վրա: Այս ամենին տիրապետող գույգերը կարող են հասնել ամուսնական ներդաշնակության: Ինտիմ ամուսնական հարաբերություններն ամուսիններին կապող ամենակարևոր գործոնը չեն: Բայց ինչպես սխալ կլինեք առաջնային դերը հարաբերություններում դրան տալն, այնպես էլ հերքել դրա կարևորությունը:

Բանալի բառեր՝ սեռական կյանք, աններդաշնակություն, ընտանիք, ամուսնություն, բախում:

Մասնագիտական գրականության մեջ տարածված է այն սահմանումն, ըստ որի ընտանիքը դա կնոջ և տղամարդու կամավոր միությունն է, որը կազմվում է ազատ ընտրությամբ և համապատասխան օրենսդրությամբ [1, էջ 29]: Գաղտնիք չէ, որ ընտանիքի միջուկը վերջին հաշվով հենց ընտանեկան սերտ կապն է: Ամուսնությունը հակառակ սեռերի միջև կոնկրետ փոխհարաբերություն է, որը հիմնված լինելով սիրո և հարգանքի վրա կարող է ուղեկցել նրանց ողջ համատեղ կյանքի ընթացքում:

Այս առումով կարծում ենք միանգամայն իրավացի է Ա. Մարգարյանը երբ գրում է, որ «ամուսնական կյանքը բարդ «դիվանագիտություն» է և եթե այդ

դիվանագիտությունը լավ է տարվում, ապա ընտանիքները լինում են երջանիկ և ամուր» [2, էջ 19]:

Ընտանիքի առաջնային գործառույթներն են՝ ընտանիքի կայունությունը, սերնդի վերարտադրությունն, երեխաների դաստիարակությունն, ընտանիքի անդամների կենցաղի և ազատ ժամանակի կազմակերպումն, ընտանիքի ծեր անդամների խնամքը և այլն:

Մարդկությանը և գիտական շրջանակներին միշտ հուզել է այս կապի խնդիրը (ամուսնու և կնոջ): Այսպես, օրինակ Ջաջեպինն [4, էջ 5] իր աշխատության մեջ նշում է, որ «լիիրավ կերպով այն (ընտանեկան խնդիրներ.- Ն. Մ.) կարելի է վերագրել կյանքի «հավիտենական» հարցերին»: Իսկ առավել ևս մեր օրերում ամուսնական հարաբերություններն էլ ավելի խոցելի են դարձել այն առումով, որ ընտանիքի մոդելն է ենթարկվում փոփոխության:

Եթե ամուսինները կարողանան խելացիորեն համադրել իրենց գործողությունները, հնարավորինս զուգակցել միմյանց ճաշակները, պահանջումներն ու սպասելիքները, հետաքրքրություններն ու ցանկությունները, բախումներից խուսափելու նրանց հնարավորություններն էականորեն կմեծանան: Սակայն թող չստեղծվի այն տպավորությունն, որ դրան հասնելը հեշտ գործ է:

Կասկածից վեր է, որ կինը և տղամարդը տարբեր հոգեբանական համակարգեր ունեն, և նրանցից յուրաքանչյուրն ունի իր պատկերացումներն ու ընկալումներն ընտանիքի վերաբերյալ: Ուստի մեծ են այն հարթությունները, որտեղ կինն ու տղամարդը կարող են հակասություններ և բախումներ ունենալ: Այսպես ընտանիքներից յուրաքանչյուրը տարբեր է արձագանքում առաջացած դժվարություններին: Բայց նաև պարտադիր չէ, որ հակասությունն առաջանա բոլոր հարցերում: Նույն խնդիրը որոշ ընտանիքներում ամուսինների հարաբերությունների վրա ոչ մի հետք կարող է չթողել, իսկ մյուսում կարող է պատճառ դառնալ ընտանիքի քայքայման:

Թերևս բախումների համար ամենալուրջ և հիմնական պատճառներն են կարող ենք համարել՝ երիտասարդների անլուրջ վերաբերմունքն ամուսնական կյանքին, սոցիալական վատ պայմաններն, անպտղությունը, սեռական աններդաշնակությունը:

Առաջին հերթին փորձենք պարզաբանել սեռական աններդաշնակության ազդեցությունն ընտանեկան բախումների վրա:

Ամուսնական փոխհարաբերությունների առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ ամուսինները խիստ մտերմիկ կապի մեջ են գտնվում, այդ թվում և, բնականաբար՝ սեռական:

Կարծում ենք անչափ դժվար է չհամաձայնվել Ս. Սեդրակյանի այն պնդման հետ, ըստ որի «ինտիմության (մտերմության, մտերմիկ հարաբերությունների) առաջացումն ընտանիքի անդամների փոխադարձ հարմարվածության ավելի խոր աստիճանի հոգեբանական դրսևորումներից մեկն է, գուցե թե ամենագլխավորը» [5, էջ 220]:

Սեռական կյանքն օրգանիզմի բնական գործառույթ է: Այն բավականին մեծ ազդեցություն ունի մարդու գործունեության վրա և դրա լիարժեքությունը կա-

րող է դառնալ էներգիային ստեղծագործական ներշնչանքի անսպառ աղբյուր, երաշխիք⁸ բարձր տրամադրություն: Դրան հակառակ, ինչպես իրավացիորեն նշում են Ե.Միրաքյանը և Բ. Խանդամիրյանը «Ֆիզիկական և մտավոր լարվածությունը, զանազան հոգսերը, հոգնածությունը, վատ ինքնազգացողությունն անխուսափելիորեն անդրադառնում են տղամարդու և կնոջ հոգեբանության, զգացմունքի և հույզերի վրա՝ անտրամադրվածություն առաջացնելով սեռական մերձեցման հանդեպ» [3, էջ 8]:

Այսպիսով, դժվար չէ կռահել, որ սեռական աններդաշնակությունը դա հետևանք է ամուսինների միջև հոգեբանական, էմոցիոնալ և ֆիզիկական անբավարարվածության: Այլ կերպ ասած, սեռական աններդաշնակությունը ամուսինների ինտիմ հարաբերություններում տարբեր տեսակի անհամաձայնություններն են:

Խոսելով գույզի անհամատեղելիության և սեռական աններդաշնակության մասին, հարկ է հատկապես ուշադրություն դարձնել այն փաստին, որ դրանք գործում են մեկ ընդհանուր շղթայի մեջ, մեկի առկայությունը բերում է գրեթե միշտ մյուսի առաջացման:

Ընտանեկան բախումների, և որպես դրանց հետևանք ճգնաժամերի և ամուսնալուծությունների պատճառներն ուսումնասիրող բավականին զգալի թվով գիտնականներ, մեծ նշանակություն են տալիս սեռական անբավարարվածության գործոնին: Հավելենք որ դրանում մեծ տեղ ունեն սեռական կյանքին անպատրաստ լինելն և անտեղյակությունն:

Ավելի կոնկրետացնելով մեր միտքը նշենք սոցիոլոգների կատարած հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդների մի զգալի մասն ամուսնանալով չի տիրապետում ամուսնական կյանքի հոգեւեռական հիմքերին: Հետևությունն այն է, որ ամուսնանալուց առաջ երիտասարդ գույզը պետք է հնարավորինս տեղեկացված լինի ամուսնական կյանքի ինչպես ֆիզիոլոգիական, այնպես էլ հոգեբանական պահանջներին: Բացի այդ ընտանիքում բոլոր հարցերը պետք է շոշափվեն և դրվեն կայուն հիմքերի վրա, այդ թվում՝ և սեռական հարաբերությունների հարցը, քանի որ դա, ինչպես արդեն նշել ենք, մարդու բնական պահանջ է:

Անգամ երբ ամուսինների մոտ բացի սեռական անբավարարվածության խնդրի այլ խնդիրներ չեն առաջանում, ապա միևնույն է այն կուտակվելով, վաղ թե ուշ հանգեցնելու է բախման: Սեռական աններդաշնակությունը լարվածություն է առաջացնում ամուսինների հարաբերություններում, և ամեն մի դժվարությունը ուղեկցվում է վեճերով: Աստիճանաբար վեճերը կարող են դառնալ նրանց առօրյայի մի մասն՝ ի վերջո հանգեցնելով բախման, իսկ ավելի ուշ՝ ճգնաժամի: Հաճախ ամուսինները հայտնվելով նման իրավիճակում չեն կարողանում հասկանալ, թե ի՞նչն է ընկած իրենց բախման հիմքում:

Հարկ ենք համարում ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ սիրո զգացմունքը չի կարելի նույնացնել սեռական պահանջմունքների հետ: Բավական է հիշել թեկուզ այն հանգամանք, որ «...սեռական պահանջմունքի բավարարման համար չի պահանջվում ամուսնանալ և ընտանիք ստեղծել» [1 էջ 39]: Հեզելը նշում է, որ սիրո պահանջմունքի բավարարումն իր հետ բերում է

և՛ մեկը, և՛ մյուսը: Մյուս կողմից, հայրության (մայրության) պահանջմունքի անմիջական աղբյուրը ևս ինքը՝ սեռական պահանջմունքն չէ, այլ անհատական սեռական սիրո պահանջմունքը, որն, իր հերթին, հարստանում և ուժգնանում է երեխաների նկատմամբ տածած մայրական և հայրական սիրով [6, էջ 202]:

Մեկ անգամ ևս շեշտենք, որ այն բախումներն, որոնք առաջացել են անձերի անհամապատասխանության հետևանքով, ժամանակի ընթացքում ազդում են նաև ամուսինների ինտիմ հարաբերությունների վրա, և հակառակն՝ աններդաշնակ ինտիմ հարաբերություններն են ազդում, որպեսզի անհամապատասխանություններ առաջանան գրեթե մնացած բոլոր հարցերում: Հարցի պատասխանը չի կարող սպառիչ լինել, եթե մենք, թեկուզ ընդհանուր գծերով չանդրադառնանք նաև սեռական անբավարարվածության մեջ այնպիսի օբեկտիվ գործոնի, ինչպիսին կարող է լինել բնական անհամատեղելիությունը (ֆրիգիդիզմ, իմպոտենցիա, վազինիզմ, գենիտալգիա, ֆիզիկական հատկանիշների անհամապատասխանություն, ֆիզոլոգիական խանգարումներ):

Ելնելով վերը նշվածից, ամուսինների սեռական աններդաշնակությունը կարող ենք բաժանել երկու տիպի՝ ֆիզիոլոգիական և հոգեբանական:

Ֆիզիոլոգիականը -ֆրիգիդիզմի, իմպոտենցիաի, վազինիզմի, գենիտալգիաի, ֆիզիկական հատկանիշների անհամապատասխանություն, ֆիզոլոգիական խանգարումների դեպքում առաջացած աններդաշնակությունն է:

Հոգեբանականը – խառնվածքի, ակտիվության, նախասիրության և այլնի հետևանքով առաջացած աններդաշնակությունն է:

Եթե հոգեբանական տիպի աններդաշնակության դեպքերում լուծումներ գտնելը շատ ավելի հավանական է ու բազմազան, ապա ֆիզիոլոգիականի դեպքում վիճակը շատ ավելի բարդ է, քանզի նման դեպքերում խնդրի լուծումը դուրս է այլևս գույգերի վերահսկողությունից և դրա կարգավորումը գրեթե անհնար է առանց համապատասխան ոլորտի մասնագետների միջամտության:

Սեռական կյանքի անբավարարվածությունը կարող է հանգեցնել ներքոնշյալ առաջացմանը՝ կրկին հանգեցնելով բախումների: Այս ամենից հնարավոր էր խուսափել, եթե ամուսինները կարողանան հասկանալ միմյանց, հաշվի առնեն միմյանց ցանկություններն ու հնարավորությունները, ֆիզոլոգիական և հոգեբանական առանձնահատկությունները: Նման դեպքերում արդարացի կլինեն ամուսինների կողմից փոխզիջումային լուծումների փնտրտուքը, քանի որ միմյանց պահանջմունքները հասկանալն ու հարգելն երջանիկ ամուսնության հիմքերից մեկն է:

Եթե կինը տառապում է ամուսնական աններդաշնակությունից, ապա սկսում է մտածել, որ ամուսինը չի սիրում իրեն, քանի որ բավականաչափ քնքուշ չէ իր նկատմամբ: Կինը ամուսնու կողմից քնքշանքի, ջերմ խոսքերի և սիրո զգացումի արտահայտության է սպասում ոչ միայն մերձեցման պահին, այլ նաև ողջ օրվա ընթացքում: Կինը չի ուզում հասկանալ այն պարզ ճշմարտությունն, որ տղամարդու սերը տարբերվում է կնոջ սիրուց: Երբ սեռական կյանքը տառապանք է դառնում կնոջ համար, և դրա հիմքի վրա կնոջ մոտ

առաջանում է բացասական վերաբերմունք ամուսնական կյանքի սեռական կողմի նկատմամբ, կոնֆլիկտի հավանականությունը կտրուկ աճում է, և շատ կանայք նման դեպքերում հակվում են ամուսնալուծության:

Ասվածից կարծում ենք միանգամայն պարզ է դառնում թե ինչու է կյանքը պահանջում որպեսզի սեռական դաստիարակությունը դրվի որակապես նոր հարթության վրա: Այս ամենին տիրապետող գույգերը կարող են հասնել ամուսնական ներդաշնակության:

Ինչպես մնացած բոլոր խնդիրներն ընտանիքում, այնպես էլ սեռական հարաբերությունների աններդաշնակությունն ունի յուրահատկություններ՝ առաջացնել նոր խնդիրներ: Կնոջ անբավարարվածությունը կարող է տանել անհավատարմության, իսկ ամուսնու մոտ կարող է ի հայտ գալ հակում ալկահոլի նկատմամբ: Եվ հենց առաջացած նման խնդիրներն էլ հաճախ պատճառ են դառնում ընտանիքի քայքայման:

Նման աններդաշնակությունն ուղեկցվում է միմյանց հետ իրենց զգացողությունները և ապրումները կիսելու անկարողությամբ, դիմացինի թերագնահատմամբ: Նմանատիպ հարաբերություններն աստիճանաբար տանում են ամուսնական գույգի օտարացմանը:

Մեծ թվով մասնագետներ կարծում են, որ ֆիզոլոգիական անհամատեղելիությունը, բնականոն սեռական կյանքի անկանոնությունը և դրան տիրապետել չկարողանալը չափազանց տարածված պատճառ է շատ ընտանիքների քայքայման և ամուսնալուծությունների համար:

Ինտիմ ամուսնական հարաբերություններն ամուսիններին կապող ամենակարևոր գործոնը չեն: Բայց ինչպես սխալ կլիներ առաջնային դերը հարաբերություններում դրան տալն, այնպես էլ հերքել դրա կարևորությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Խարչեկ Ա. Գ., Մացկովսկի Մ. Ս.**, Ժամանակակից ընտանիքը և նրա պրոբլեմները, Երևան, 1982, էջ 29, 39:
2. **Սարգսյան Ա. Հ.**, Սիրո, ամուսնության և ընտանիքի սոցիալ-բարոյական պրոբլեմները, Երևան, 1981, էջ 19:
3. **Միրաքյան Մ. Ե., Խանդամիրյան Բ. Ն.**, Առողջ ամուսնություն, առողջ ընտանիք, Երևան, 1983, էջ 8:
4. **Զացեյին Վ.**, Ամուսնական կյանքի մասին, Երևան, 1981, էջ 5:
5. **Մեդրակյան Մ. Ա.**, Ընտանիքի հոգեբանություն, Երևան, 2010, էջ 220:
6. **Гегель Ф.**, т. 7, с. 202.

ЦОВИНАР НЕРСИСЯН

Университет практической психологии и социологии "Урарту"

ПРОБЛЕМЫ СЕКСУАЛЬНОЙ ЖИЗНИ В КОНТЕКСТЕ СУПРУЖЕСКИХ ВЗАИМООТНОШЕНИЙ

Сделана попытка выяснить влияние сексуальной дисгормонии на взаимоотношения супругов. Она имеет довольно большое влияние на деятельность человека и их полноценность может стать источником энергии и творческого вдохновения. Часть молодежи, вступая в брак, не владеет основами психосексуальной супружеской жизни.

Полностью оправдано, что современная жизнь требует того, чтобы сексуальное воспитание было поставлено на совершенно новый уровень. Супруги, владеющие этим знанием, могут достигнуть сексуальной гармонии. Интимные супружеские отношения не самый важный фактор, связывающий супругов. Было бы ошибочно уделять им первостепенную роль, как и отрицать их важность.

TSOVINAR NERSISYAN

"Urartu" University of Practical Psychology and Sociology PhD student

**THE PROBLEM OF SEXUAL RELATIONS WITHIN THE CONTEXT
SPOUSAL RELATIONSHIPS**

Let's clarify the impact of sexual disharmony on the couple's relationship. It has a pretty big impact on human function and its completeness may become an inexhaustible source of energy and creative inspiration and guarantee of a good mood. A considerable part of young people by getting married do not know the psychosexual basics of marriage.

Fully justified is the fact that modern life requires that sexual education was at a whole new level. Spouses owning this can achieve sexual harmony.

Intimate marital relations are not the most important factor binding spouses. But it would be wrong, both to give it a primary role in relations and to deny its importance.

ՄԱՐԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Հոգեբանական գիտությունների թեկնածու,
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի հոգեբանության ամբիոնի դոցենտ

**ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ
ԹՈՐԱՆՄԻ ՍԵԹՈՂԻԿԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ**

Հոդվածը նվիրված է աշակերտների երևակայության առանձնահատկությունների հետազոտմանը: Թորանսի մեթոդիկայի միջոցով ուսումնասիրվել են աշակերտների ստեղծագործական երևակայության արագությունը, ճկունությունը, ինքնատիպությունը և նոր գաղափարները մանրակրկիտ վերամշակելու ունակությունը: Կատարվել է աղջիկների և տղաների երևակայության յուրահատկությունների համեմատական վերլուծություն: Իրականացվել է ձևավորող գիտափորձ՝ պարզելու համար, թե ինչքանով է արտաքին ներգործությունը նպաստում երևակայության գործընթացների ակտիվացմանը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ստեղծագործական երևակայություն, երևակայության ճկունություն, արագություն, ինքնատիպություն, նոր գաղափարների վերամշակում, ձևավորող գիտափորձ:

Երևակայությունը հոգեկան գործունեություն է, մտային այնպիսի իրավիճակների, պատկերացումների ստեղծում, որոնք նախկինում իրականում չեն եղել, չեն ընկալվել մարդու կողմից: Գոյություն ունեն երևակայության մի շարք բնորոշումներ: Երևակայությունը նախկինում նմանը չունեցող պատկերներ ստեղծելու մարդկային գիտակցության ունակությունն է [6]: Երևակա-

յությունը մարդու խորասուզվելն է իր ներաշխարհի և այնտեղ պատկերներ, կերպարներ և պատկերացումներ ստեղծելը [3]: Երևակայությունը հիշողության մեջ կուտակված մտապատկերների հետ կատարվող իմացական գործընթաց է, որի շնորհիվ ստացվում են որակապես նոր պատկերներ կամ հիշողության մտապատկերների նոր, ինքնատիպ զուգորդություններ [2]:

Երևակայությունը մարդու կյանքում մեծ դեր ունի: Երևակայության շնորհիվ մարդը մտովի կարող է տեղափոխվել տարբեր աշխարհներ՝ ապագա, անցյալ, և վերադառնալ ներկա: Լինում են իրավիճակներ, երբ մարդը երևակայորեն իր առջև որևէ նպատակ է դնում և այն իրագործելու համար որոշակի աշխատանք է կատարում. այդ ընթացքում նա պատկերացնում է բոլոր փոփոխությունները, որոնք տեղի են ունենալու:

Երեխայի երևակայությունը զարգանում է նրա տարիքին զուգընթաց: Այն հասկապես լավ է զարգանում 5-15 տարեկանում: Եթե այս ժամանակահատվածում երևակայության զարգացումը հապաղում է, հետագայում նրա ակտիվությունը նվազում է, և արդյունքում նվազում են նաև մարդու ստեղծագործական մտածողության հնարավորությունները, մարում է հետաքրքրությունը արվեստի և գիտության նկատմամբ: Ցանկացած ստեղծագործական աշխատանք իրականանում է երևակայության շնորհիվ: Երևակայության զարգացումը սերտորեն կապված է երեխայի հետաքրքրությունների շրջանակի ընդլայնման և հետաքրքրասիրության զարգացման հետ: Յուրաքանչյուր հոգեպես առողջ երեխա հետաքրքրասեր է, ունի ակտիվ երևակայություն: Հարց է ծագում՝ ինչպե՞ս զարգացնել երեխայի երևակայությունը: Քանի որ մարդու երևակայությունը սերտորեն կապված է մտածողության հետ, իսկ միտքն ու պատկերն անբաժանելի են, ուստի այն ամենը, ինչը նպաստում է մտածողության զարգացմանը, օգտակար է նաև երևակայության համար: Երևակայությունը երեխաների մոտ պետք է զարգացնել վաղ տարիքից, դա կարելի է իրականացնել ակտիվացնող խաղերի, վարժությունների միջոցով:

Միջին դասարաններում աշակերտների երևակայության զարգացման մակարդակը բացահայտելու, աղջիկների և տղաների երևակայության համեմատական վերլուծություն կատարելու նպատակով անց ենք կացրել հետազոտություն: Հետազոտության ընտրանքը Վայքի թիվ 2 միջնակարգ դպրոցի 7բ և 7գ դասարանցիներն են: Հետազոտությունը մասնակցել են 48 աշակերտներ: Հետազոտությունը տևել է 2 ամիս:

Հետազոտության ընթացքում կիրառել ենք դիտման, գիտափորձի, թեստավորման և անկախ փորձագետների գնահատման մեթոդները:

Թորանսի՝ ստեղծագործական երևակայության մակարդակն ուսումնասիրող մեթոդիկայի [5] մոդելային մարտկոցների կրճատ տարբերակն «Ավարտիր նկարը» առաջադրանքն է: Այս թեստը կարող է օգտագործվել երեխաների ստեղծագործական երևակայությունը հետազոտելու համար՝ սկսած նախադպրոցականից (5-6տ.) մինչև ավագ դպրոցական տարիք (17-18տ.): Աշակերտները թեստի պատասխանները ներկայացնում են նկարների տեսքով և դրանց վերաբերյալ շարադրանքով:

Թեստավորմանը նախապատրաստելիս հետազոտողը պետք է խուսափի «թեստ», «քննություն», «ստուգում» բառերի կիրառումից: Անհրաժեշտության դեպքում խորհուրդ է տրվում օգտագործել «վարժություն», «նկար», «պատկեր» հասկացությունները: Թեստավորման ընթացքում անթույլատրելի է տագնապային իրավիճակի ստեղծումը. անհրաժեշտ է ձևավորել ջերմ, հարմարավետ, վստահելի մթնոլորտ, խթանել երեխաների՝ այլընտրանքային պատասխաններ որոնելու և գտնելու ունակությունը: Թեստավորումը պետք է անցկացնել կլանող և հրապուրիչ խաղի տեսքով: Դա կարևոր է վստահելի և օբյեկտիվ արդյունքներ ստանալու համար:

Չի կարելի թեստավորումն անցկացնել մեծ խմբերում: Խմբի օպտիմալ քանակը 15-35 մարդն է, այսինքն՝ մեկ դասարանից ոչ ավելի: Թեստի լրացումը տևում է 15-20 րոպե:

Նախքան թեստավորումը հետազոտողը պետք է երեխաներին բացատրի, թե նրանք ինչ են կատարելու, նրանց մոտ հետաքրքրություն առաջացնի առաջադրանքների նկատմամբ: Տրվում է հետևյալ հրահանգավորումը. «Երեխաներ, Դուք մեծ հաճույք կստանաք կատարվելիք աշխատանքից: Այն Ձեզ կօգնի իմանալ, թե ինչքանով եք կարողանում ստեղծել նորը և լուծել տարբեր խնդիրներ: Անհրաժեշտ կլինի ակտիվացնել Ձեր ողջ երևակայությունը և մտածելու ունակությունը»:

Թեստի՝ կրկնակի անգամ անցկացման անհրաժեշտությունը հետազոտողը բացատրում է հետևյալ կերպ. «Մենք ցանկանում ենք իմանալ, ինչպես են փոխվել ձեր ընդունակությունները, երևակայությունը և խնդիրների լուծման ունակությունը: Դուք գիտեք, որ մենք ժամանակ առ ժամանակ չափում ենք մեր հասակը և քաշը, որպեսզի հասկանանք՝ ինչքանով ենք մեծացել: Նույնը կատարում ենք այս դեպքում, որպեսզի հասկանանք՝ ինչքանով են փոխվել Ձեր ընդունակությունները»:

Թորանսի մեթոդիկայի առաջադրանքների կատարումից առաջ տրվում է սույն հրահանգը. «Նկարված են անավարտ պատկերներ: Եթե դրանց ավելացնեք լրացուցիչ գծեր, Ձեզ մոտ կստացվեն հետաքրքիր առարկաներ կամ դրվագային նկարներ: Փորձեք մտածել այնպիսի պատկեր կամ պատմություն, որը ոչ ոք չի կարող մտածել: Յուրաքանչյուր պատկերի համար մտածեք հետաքրքիր անվանում»:

Եթե երեխաները հրահանգից հետո հարցեր չեն տալիս, կարելի է անցնել առաջադրանքի կատարմանը: Եթե հարցեր են լինում, անհրաժեշտ է հրահանգը կրկնել ավելի հասկանալի լեզվով: Առաջադրանքը սկսելուց 15 րոպե անց այն դադարեցվում է, և թերթիկները հավաքվում են:

Թորանսի մեթոդիկայի միջոցով բացահայտվում են երևակայության 4 բաղկացուցիչներ՝ *ստեղծագործական երևակայության արագությունը կամ արդյունավետությունը, ճկունությունը, ինքնատիպությունը և նոր գաղափարների մանրամասն վերամշակումը*:

Հետազոտության ընթացքում իրականացրել ենք ձևավորող գիտափորձ: Առաջին փուլում Թորանսի մեթոդիկան անցկացվել է երկու դասարաններում. հետազոտվել և համեմատվել են արդյունքները: Վերլուծությունը հնարավոր

րինս օբյեկտիվ դարձնելու նպատակով երկու դասարանների տվյալները համեմատել են 2 անկախ փորձագետներ: Առավել լավ արդյունքներ գրանցած դասարանը մեր կողմից դիտարկվել է որպես ստուգողական, իսկ մյուսը՝ փորձարարական դասարան: Երկրորդ փուլում կատարել ենք ձևավորող աշխատանք. փորձարարական դասարանի հետ անց ենք կացրել երևակայությունը զարգացնող խաղեր և վարժություններ, որոնց միջոցով փորձել ենք ակտիվացնել ու խթանել աշակերտների երևակայությունը: Ստուգողական դասարանում ոչինչ չենք արել: Մեկուկես ամիս անց նույն թեստը կրկնակի անգամ անցկացվել է երկու դասարաններում: Այնուհետև մշակել և համեմատել ենք դասարանների տվյալները:

Այժմ մեկնաբանենք հետազոտության արդյունքները:

Միջին տարիքի դպրոցականների մոտ ամենաբարձր ցուցանիշներ գրանցվել են «ստեղծագործական երևակայության արագություն կամ արդյունավետություն» սանդղակում, այսինքն՝ երեխաներն արագորեն են նոր պատկերներ և գաղափարներ առաջադրում: Հավելենք, որ ստեղծագործականության արագությունը կամ սահունությունը ստեղծագործական մտածողության համար էական կամ առանցքային նշանակություն չունի: Երևակայության արագության միջին արժեքը աղջիկների մոտ 7.9 է, իսկ տղաների մոտ՝ 8.2:

Մյուս ցուցանիշը *երևակայության ճկունությունն* է: Այն գնահատում է երեխաների գաղափարների բազմազանությունը՝ մի խնդրից մյուսին անցնելու ընդունակությունը: Եթե երեխաները ճկունության ցածր ցուցանիշ են ունենում, դա վկայում է նրանց մտածողության ռիզիկոյան, կարծրացածության, տեղեկացվածության ցածր մակարդակի, ինտելեկտուալ ներուժի սահմանափակության և ցածր մոտիվացիայի մասին: Հետազոտությունը ցույց տվեց, որ դպրոցականների մոտ բավական բարձր է երևակայության ճկունության աստիճանը: Երևակայության ճկունության միջին արժեքը աղջիկների և տղաների մոտ համապատասխանաբար 7.1 և 7.3 է:

Երևակայության ինքնատիպությունը նոր գաղափարներ առաջադրելու ունակությունն է, այսինքն՝ պարզունակ և համընդհանուր ընդունելություն գտած գաղափարներից տարբերվող գաղափարների ներկայացումը: Այս ցուցանիշի ուժեղ դրսևորումը խոսում է ինտելեկտուալ մեծ ակտիվության առկայության և անհետաքրքիր, ակնհայտ, հեշտ պատասխաններից խուսափելու ունակության մասին:

Համաձայն հետազոտության արդյունքների՝ երեխաների մոտ երևակայության ինքնատիպությունն (օրիգինալություն) ունի միջինից բարձր դրսևորումներ, սակայն զիջում է երևակայության ճկունությանը: Երևակայության ինքնատիպության միջին արժեքն աղջիկների մոտ 3.7 է, տղաների մոտ՝ 7.1: Տղաների երևակայության ինքնատիպության ցուցանիշը կրկնակի անգամ գերազանցում է աղջիկներին:

Նոր պատկերների, գաղափարների մանրամասն վերամշակումը բնութագրական է բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներին, ովքեր կառուցողական և գյուտարարական ունակություններ ունեն: Աշխատանքի բնույթից կախված՝ այս ցուցանիշը կարող է ստեղծագործական գործունեության մեջ մի


դեպքում առավելության, այլ դեպքում՝ սահմանափակության հանգեցնել: Արդյունքները վկայում են, որ դպրոցականների մոտ նոր գաղափարների վերամշակումն ունի դրսևորման միջին մակարդակ և զիջում է երևակայության մյուս բոլոր ցուցանիշներին: Հատկանշական է, որ այս ցուցանիշը ևս տղաների մոտ ավելի ուժեղ է դրսևորվում: Երևակայական պատկերների մշակվածության միջին արժեքը աղջիկների մոտ 6.1 է, տղաների մոտ՝ 7.2:

Նախնական թեստավորման տվյալների համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ ստեղծագործական երևակայության անխտիր բոլոր ցուցանիշներով միջին դպրոցական տարիքի տղաների արդյունքներն ավելի բարձր են, քան աղջիկներինը:

Ինչպես արդեն նշել ենք, հետազոտությունն անց է կացվել 2 զուգահեռ դասարաններում: Հաշվարկված ցուցանիշները ներկայացված են նկար 1-ում:

Ինչպես նշել ենք, մեր կողմից վերլուծված տվյալների հուսալիությունն ապահովելու նկատառումով չմշակված, առաջնային նյութը տրվել է 2 անկախ փորձագետների, ովքեր նույնպես համեմատել են դասարանների տվյալները: Նրանց կատարած արձանագրությունները համընկել են մեր վերլուծության հետ:

Ստացված տվյալներից ելնելով՝ 7բ-ն, որտեղ ցուցանիշներն ավելի բարձր են, դարձրինք ստուգողական դասարան, իսկ 7բ-ն՝ փորձարարական:



Նկար 1. Ստեղծագործական երևակայության միջին ցուցանիշները՝ նախքան ձևավորող գիտափորձը

Փորձարարական դասարանում պարբերաբար կիրառել ենք երևակայությունը զարգացնող խաղեր և վարժություններ [1, 4]: Յուրաքանչյուր հանդիպմանը ներառել ենք 2-3 վարժություն:

Մեկուկես ամիս անց՝ հետազոտության երկրորդ փուլում, ձևավորող գիտափորձի արդյունքները ստուգելու նպատակով կատարել ենք կրկնակի թեստավորում՝ մեկ անգամ ևս անցկացնելով Թորանսի մեթոդիկան: Ստացված տվյալները արտացոլված են աղյուսակ 1-ում:

Փորձարարական և ստուգողական խմբերում ստեղծագործական երևակայության միջին ցուցանիշների համեմատությունը ձևավորող գիտափորձից առաջ և հետո

Աղյուսակ 1

Ստեղծագործական երևակայության բաղկացուցիչներ	Ստուգողական դասարանի միջին ցուցանիշներ՝ նախքան ձևավորող գիտափորձը	Ստուգողական դասարանի միջին ցուցանիշները՝ ձևավորող գիտափորձից հետո	Փորձարարական դասարանի միջին ցուցանիշները՝ նախքան ձևավորող գիտափորձը	Փորձարարական դասարանի միջին ցուցանիշները՝ ձևավորող գիտափորձից հետո
Ստեղծագործական երևակայության արագություն	8.22	8.6	7.85	9.0
Երևակայության ճկունություն	7.04	7.7	7.07	8.6
Երևակայության ինքնատիպություն	5.73	5.42	5.57	7.8
Նոր պատկերների մանրամասն վերաբերում	5.41	5.4	5.22	6.4

Միանգամայն ակներև է, որ երևակայությունը զարգացնող վարժությունների և խաղերի կիրառումը ձևավորող ներգործություն է ունեցել երեխաների ստեղծագործական ճանաչողության վրա: Փորձարարական դասարանի աշակերտների ստեղծագործականության բոլոր ցուցանիշներում աճ է արձանագրվել՝ ակնհայտորեն գերազանցելով ստուգողական դասարանի համանման արդյունքներին: Ի դեպ, ստուգողական դասարանում գիտափորձից առաջ և հետո ցուցանիշների էական փոփոխություն չի գրանցվել՝ փոքր-ինչ աճել են երևակայության արագության և ճկունության դրսևորման մակարդակները և նվազել է երևակայության ինքնատիպությունը: Այսպիսով, ձևավոր-

րող գիտափորձն էապես խթանել և ակտիվացրել է երեխաների ստեղծագործական երևակայությունը:

Հետաքրքրական են աղջիկների և տղաների երևակայության ցուցանիշների տարբերությունները ձևավորող գիտափորձից առաջ և հետո: Եթե գիտափորձից առաջ տղաների ստեղծագործական երևակայության բոլոր ցուցանիշներն ավելի բարձր էին, ապա գիտափորձից հետո ունենք հետևյալ պատկերը (տես աղյուսակ 2):

Աղջիկների և տղաների ստեղծագործական երևակայության միջին ցուցանիշների համեմատությունը գիտափորձից առաջ և հետո

Աղյուսակ 2

Ստեղծագործական երևակայության բաղկացուցիչներ	Աղջիկների ցուցանիշները՝ նախքան ձևավորող գիտափորձը	Տղաների ցուցանիշները՝ նախքան ձևավորող գիտափորձը	Աղջիկների ցուցանիշները՝ ձևավորող գիտափորձից հետո	Տղաների ցուցանիշները՝ ձևավորող գիտափորձից հետո
Ստեղծագործական երևակայության արագություն	7.9	8.2	9.4	8.6
Երևակայության ճկունություն	7.1	7.3	8.3	9.0
Երևակայության ինքնատիպություն	3.7	7.1	7.2	6.3
Նոր պատկերների, գաղափարների մանրամասն վերամշակում	6.1	7.2	7.4	7.3

Ստեղծագործական երևակայության արագության միջինացված ցուցանիշն աղջիկների մոտ 9.4 է, տղաների մոտ՝ 8.6, երևակայության ճկունությունը համապատասխանաբար՝ 8.3 և 9.0, ինքնատիպությունը՝ 7.2 և 6.3, նոր պատկերների մշակվածությունը՝ 7.4 և 7.3:

Փաստորեն, ձևավորող գիտափորձի արդյունքում աղջիկները, ում երևակայության դրսևորումներն էապես զիջում էին տղաների ցուցանիշներին, ստեղծագործականության ավելի բարձր մակարդակ արձանագրեցին:

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները:

- Երեխաների մոտ ամենից ուժեղ դրսևորվում է երևակայության արագությունը և ճկունությունը: Երևակայության ինքնատիպության ու նոր գաղափարների մանրամասն վերամշակման ցուցանիշները միջին արտահայտվածություն ունեն:

- Միջին դպրոցական տարիքի տղաների ստեղծագործական երևակայությունն ավելի լավ է զարգացած, քան աղջիկներինը: Տղաների երևակայության ինքնատիպությունը կրկնակի անգամ գերազանցում է աղջիկներին:

- Երևակայությունը զարգացնող վարժությունների կիրառումն աղջիկների վրա ավելի մեծ ներգործություն է ունենում, քան տղաների վրա: Այն մեծապես խթանում է աղջիկների ստեղծագործականությունը՝ գերազանցելով տղաների ցուցանիշները:

- Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ միջին դպրոցական տարիքում աշակերտների երևակայության զարգացմանը նպաստում է արտաքին ներգործությունը: Երևակայությունը զարգացնող խաղերի և վարժությունների միջոցով կարելի է ակտիվացնել երեխաների երևակայությունը, խթանել ստեղծագործական երևակայության արագության, ճկունության և ստեղծվող պատկերների ինքնատիպության ունակության զարգացումը:

- Դասաժամերին ժամանակ առ ժամանակ երևակայությունը զարգացնող վարժություններ կարող են կատարել մանկավարժները՝ դրանց տրամադրելով 4-5 րոպե:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հոգեբանական խաղեր և վարժություններ: Ձեռնարկ դաստիարակների, մանկավարժների և հոգեբանների համար/ Կազմ.՝ Թ. Հարությունյան, Հ. Կարապետյան, Ա. Ենգիբարյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ. Ստեփանյան: Եր.: Ասողիկ, 2014, 144 էջ:

2. **Ա. Նալչաջյան**, Հոգեբանության հիմունքներ: Եր.: Հոգեբան, 1997:

3. **Козлов Н. И.** Как определить уровень развития своего воображения. [Электронный ресурс]. Режим доступа: <http://nkozlov.ru/library/samorazvit/d4147/#.Wb-hVXV97VM>. 25.09.2017.

4. **Овчарова Р. В.** Практическая психология в начальной школе, М.: Просвещение, 1996.

5. Сборник психологических тестов. Часть II: Пособие /Сост. Е. Е. Миронова. Мн.: Женский институт ЭНВИЛА, 2006. 146 с.

6. Философия: Энциклопедический словарь. Под ред. А. А. Ивина. М., 2004.

ՄԻԿԱԵԼՅԱՆ ՄԱՐԻՆԵ

Доцент кафедры психологии Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна, кафедра психологии, кандидат психологических наук, доцент

ИЗУЧЕНИЕ ВОООБРАЖЕНИЯ ШКОЛЬНИКОВ С ПОМОЩЬЮ МЕТОДИКИ ТОРРАНСА

Статья посвящена исследованию особенностей воображения школьников. По методике Торранса изучены продуктивность, гибкость, оригинальность творческого воображения и умение вырабатывать новые идеи. Проведен сравнительный анализ особенностей воображения девочек и мальчиков. Разработан формирующий эксперимент для определения механизма внешнего влияния на активизацию процессов творческого воображения.

ՄԻԿԱԵԼՅԱՆ ՄԱՐԻՆԵ

Candidate of Psychological Sciences Kh. Abovyan Armenian State Pedagogical University, Associate Professor at the Chair of Psychology

THE STUDY OF PUPIL IMAGINATION VIA THE TORRANCE TECHNIQUE

The article is devoted to the study of the peculiarities of schoolchildren's imagination. The productivity, flexibility, originality and elaboration of the creative imagination are studied with the help of the Torrance method. A comparative analysis of the imagination peculiarities of girls and boys is conducted. A formative experiment has been carried out in order to reveal how much external influence promotes the activation of creative imagination processes.

МИЛАНА ПЕТРОСОВА

Российско - Армянский университет, преподаватель
Директор Центра Позитивной Психотерапии «Позитум»
Президент Армянской Ассоциации Позитивной Психотерапии

ЛИЧНОСТНЫЕ ОСОБЕННОСТИ СТУДЕНТОВ, ОПРЕДЕЛЯЮЩИЕ ИХ ГОТОВНОСТЬ К СЕМЕЙНОЙ ЖИЗНИ

Аннотация. В статье проведен анализ теоретических источников по проблеме готовности молодежи к семейной жизни по личностным особенностям определяющим их готовность к семейной жизни. Целью исследования является изучение личностных особенностей студентов, определяющие их готовность к семейной жизни.

Определены задачи: анализ теоретической литературы, проведение эмпирического исследования, интерпретация результатов и сделаны соответствующие выводы.

Представлены результаты эмпирического исследования, выявляющие предположение о существовании взаимосвязи психологической готовности и личностных особенностей студентов.

Ключевые слова: *готовность к семейной жизни, черты личности, студенческий период.*

Личность-это внутренняя психологическая среда человека, и именно личность адаптируется как к своим имеющимся особенностям, так и к внешним проблематичным ситуациям, в число которых входят и конфликты. Не лишне упомянуть здесь, что в систему личности входят темперамент и характер, способности, установки и чувства, самосознание, ценностные ориентации и мотивы поведения, представления о мире и другие составляющие. Они составляют психологическую систему личности, которая является результатом длительного возрастного развития, социализации и адаптации.

При рассмотрении психологической готовности через призму условий прочной семьи, Мацковский М.С. и Харчев А.Г. отмечали следующие условия:

- взаимное желание понимания, которое развивается в детстве и направлено на улучшение интересов любимого человека;
- акцентирование внимания на другом человеке и психологической готовности понять его, как себя самого, проявляется в желании и способности наблюдать, видеть, уважать, понимать те особенности, привычки, предпочтения, которые присущи любимому человеку;

- открытость как желание раскрыть свои мысли и чувства, для обсуждения трудностей и ошибок;
- умение не перекладывать ответственность за свои поступки, сохранять определенный уровень самокритичности;
- установка личности на совместное создание уюта дома;
- внутренняя установка, направленная на овладение домоводческими навыками и умениями; способность и желание проектировать реалистичную модель будущей семьи; общие представления о морально-психологическом климате семьи;
- моральные качества: ответственность, честность, верность, доброта, смирение, человечность, чувство долга перед своим мужем (женой), семьей, детьми;
- осознание и принятие необходимости сбалансировать социальные и семейные обязанности. [6]

Этап обучения в вузе совпадает с этапом молодости, который предусматривает комплексное развитие черт личности (работы Ананьева Б.Г.[1], Дмитриева А.В.[2], Петровского А.В.[5], Ковалева С.В.[4], и т.д.). Характерной чертой нравственного развития в этом возрасте является упрочнение сознательных мотивов. Намного более высокие качества, необходимые в полной мере в студенческом возрасте - самостоятельность, целеустремленность, настойчивость, решительность, умение владеть собой, инициатива. Растет интерес к проблемам морали (образ жизни, любовь, цели, преданность, долг и т.д.). Студенческий период - наиважнейший этап в формировании и развитии личности. Это стадия активного становления эстетических и нравственных чувств, наращивание интеллектуального потенциала, стабилизация характера и др. Отличительной чертой развития личности в данном возрасте является усиление осознанных мотивов поведения. Определенно укрепляются качества - решительность, целеустремленность, инициатива, настойчивость, самостоятельность, способность владеть собой. Завершая этап обучения у молодых людей начинается этап самостоятельной жизни. Вступая на стадию социальной зрелости он должен обладать сформированным и устойчивым самоконтролем, который обеспечит адекватное психическое отражение внутреннего мира и объективной реальности, одобренное поведение в разных сферах жизни.

Особое внимание В.Н. Дружинин уделяет личностной зрелости юношей и девушек, которые решили вступить в брак. У зрелой личности есть четыре «кита», четыре базовых составляющих, на основе которых группируются многие другие: 1) терпимость; 2) ответственность; 3) саморазвитие; 4) позитивное отношение к миру, позитивное мышление, (этот аспект присутствует во всех остальных) [3 с. 135].

1. Терпимость - это необходимая составляющая зрелости личности. В структуре общего феномена терпимости выделяется два основных вида: 1) диспозиционная терпимость 2) сенсуальная терпимость личности.

2. Ответственность - другая важная составляющая, которая является атрибутом зрелого поступка личности. Вся жизнь состоит из поступков, в

общем, жизнь можно рассматривать как некий сложный поступок. Известный ученый-гуманист двадцатого века Э. Фромм отмечал, что забота, уважение, ответственность, и знание – является совокупностью особенностей зрелой личности. На ответственный поступок способен только человек, осознающий свою неповторимость и единственность.

Формирование чувства ответственности напрямую связано с предоставлением личностью свободы выбора при принятии решений. Вопрос относительно меры свободы решается с учетом возрастных и других конкретных обстоятельств и особенностей. Однако сам принцип остается неизменным. В то же время тезис о том, что невозможно признавать человека свободным, не признавая его ответственным, нуждается в обязательном дополнении обратного характера: невозможно признать человека ответственным, не признавая его свободным.

Формирование чувства ответственности идет вместе с развитием независимости личности, самоконтролем и обеспечением свободы принятия самостоятельных решений, касательно самого себя. Самоконтроль – обязательный признак самосознания человека. Он сопровождает все психические явления, которые присущи человеку, включая как врожденные психофизиологические механизмы, а также сложные виды деятельности и принятие важных решений. Такой самоконтроль – результат воспитания и самовоспитания личности, которые основаны на знании эстетических, нравственных, а также правовых норм.


3. Саморазвитие. Потребность в самоактуализации, саморазвитии – базовая составляющая зрелой личности. Идея самореализации и саморазвития является основополагающей или, в крайнем случае, особо важной для многих современных теорий о развитии личности. В гуманистической психологии ей уделено ведущее место, как одному из мощнейших и активно развивающихся направлений современной психологической теории и практики. Важное место идея о «самости» (самосовершенствование, саморазвитие, самореализация) уделяется в акмеологии. Желание и стремление саморазвиваться – не навязчивая идея относительно достижения абсолютного идеала. Идеальным быть сложно, и вряд ли это нужно. В плоскости обыденного сознания следует согласиться с мыслью: сложно быть идеальным, однако сложно жить с идеальным человеком.

4. Позитивное отношение к миру и позитивное мышление.

Проходя различные стадии в развитии, человек включается в новые отношения с людьми, по-новому понимает и осознает смысл жизни. Цель исследования заключается в исследовании личностных особенностей студентов, определяющих их готовность к семейной жизни.

Мы провели эмпирическое исследование, в котором принимали участие 100 студентов, 50 женского пола, 50 мужского пола второго, третьего, четвертого курсов, направлений «Психология» и «Прикладная математика». Гипотеза исследования: мы предполагаем, что у студентов с высокой готов-

ностью к семейной жизни наблюдаются высокие показатели по самоконтролю, привязанности и эмоциональной устойчивости. Методика исследования: «Тест-карта оценки готовности к семейной жизни» Юнда И. Ф., Методика Пятифакторный личностный опросник (Авторы Р. МакКрае, П. Коста). По мнению авторов этой методики на основе факторного анализа пяти независимых переменных, таких как нейротизм, экстраверсия, открытость опыту, сотрудничество, добросовестность, вполне достаточно для адекватного описания психологического портрета личности. Выявлены данные по методике «Тест карта оценки готовности к семейной жизни» Юнда И. Ф., из которых следует, что 73% респондента набрали от 70-120 баллов, что свидетельствует о достаточной подготовленности к семейной жизни 27% респондента набрали от 22-70 баллов, что говорит о удовлетворительной подготовке к семейной жизни, низкие показатели - меньше 22 баллов - 0 респондентов. Мы выделили группу студентов с высокой готовностью к семейной жизни. По результатам 2 методики получены данные, которые отражены в диаграмме.



1. Высокие показатели по экстраверсии 61,6% говорит о том, что участникам присущи такие черты личности как: активность, доминирование, общительность, поиск впечатлений, привлечение внимания.

2. Наибольшие показатели по привязанности 76,71%, присущи такие черты личности как теплота, сотрудничество, доверчивость, понимание, уважение других.

3. Наибольшие показатели по самоконтролю 75,34%: присущи такие черты личности как аккуратность, настойчивость, ответственность, самоконтроль поведения, предусмотрительность

4. Высокие показатели по эмоциональной неустойчивости: 56,16% присущи такие черты личности как беззаботность, расслабленность, эмоциональная комфортность, самодостаточность, эмоциональная стабильность

5. Высокие показатели по экспрессивности 75,34% присущи такие черты личности как :любопытство, любознательность, артистичность, сенситивность, пластичность.

Выводы: При сравнении группы имеющие хорошую подготовленность к семейной жизни вывилось, что у этих студентов имеются высокие показатели по вторичным признакам: экстраверсия, самоконтроль, привязанность, эмоциональная неустойчивость, экспрессивность.

Высокие показатели по фактору привязанность определяют позитивной отношении к людям, избегают разногласий, не любят конкуренции, предпочитают сотрудничество.

Главным содержанием фактора-самоконтроль является волевая регуляция поведения, имеются такие черты личности как добросовестность, ответственность, обязательность, точность и аккуратность. В деятельности достигают высоких результатов. Высокая добросовестность и сознательность сочетаются с хорошим самоконтролем, со стремлением к утверждению общепринятых ценностей, иногда в ущерб себе. Гипотеза частично подтверждена.

ЛИТЕРАТУРА

1. **Ананьев, Б. Г.** Избранные психологические труды Текст.: в 2-х т. /Ананьев Б. Г.: М. 1980. - т.1. - 232. с.
2. **Дмитриева, М. А.** Формирование ценностного отношения к семье у старших школьников Текст.: дис. канд. психол. наук / Дмитриева Марина Александровна. — Ростов н/Д, 1999. — 169 с.
3. **Дружинин В. Н.** Психология семьи Текст. Изд. 3-е, перераб. и дополн. -СПб.: Питер, 2008. - 176 с. - ISBN 978-5-469-00131-7.
4. **Ковалев С.В.** Психология современной семьи. Кн. для учителя. - М.: Просвещение, 1988.
5. **Петровский А.В.** Личность .Деятельность. Коллектив М.1992
6. **Харчев А.Г., Мацковский М.С.** Современная семья и её проблемы. -М.: Юрист, 1993

ՄԻԼԱՆԱ ՊԵՏՐՈՍՈՎՍԿԻ

Ռուս - Հայկական համալսարան, դասախոս,
“Պոզիտում” պոզիտիվ հոգեթերապիայի կենտրոնի տնօրեն
**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ,
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՆՁՆԱՅԻՆ ԱՌԱՂԱՆՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ամփոփում. Հոդվածում կատարված է՝ երիտասարդության պատրաստվածությունը ընտանեկան կյանքի ըստ անձնային առանձնահատկությունների մասին տեսական աղբյուրների վերլուծությունը

Հետազոտության նպատակն է. ուսումնասիրել ուսանողների՝ ընտանեկան կյանքի պատրաստվածությունը որոշող, անհատական առանձնահատկությունները:

Որոշված են հետևյալ խնդիրները. Տեսական գրականության վերլուծության իրականացում, էմպիրիկ հետազոտության իրականացում, հետազոտության արդյունքների մեկնաբանություն, համապատասխան եզրակացությունների իրականացում:

Ներկայացված են. էմպիրիկ հետազոտությունների արդյունքները բացահայտող, ուսանողների անձնային առանձնահատկությունների և հոգեբանական պատրաստվածության փախկապակցվածության գոյության մասին ենթադրությունը:

Բանալի բառեր. *ընտանեկան կյանքին պատրաստվածություն, անձի հատկանիշները, ուսանողական շրջան:*

PETROSOVA MILANA
PERSONAL CHARACTERISTICS OF STUDENTS DETERMINING THEIR
READINESS FOR A FAMILY LIFE

Annotation: This article analyzes theoretical sources on the problem of young people's readiness for a family life, as well as personal characteristics determining their readiness for a family life. The main goal is to study the personal characteristics of students determining their readiness for a family life. The task-analysis of theoretical literature, realization of empirical research, the interpretation of the results are determined, and corresponding interrelations of psychological readiness and personal characteristics of the students are executed. The results of empirical studies, revealing the supposition of the existence of interrelation between psychological readiness and personal characteristics of the students are presented.

Key words: readiness for family life, personality traits, student period.

ՆԱԻՐԱ ՀԱԿՈՐՅԱՆ

հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՆՆԱ ԽԱՉՍՏՐՅԱՆ

հոգեբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի
հոգեբանության ամբիոնի դասախոս

ՆԱԻՆԵ ՎԱՐՊԱՆՅԱՆ

բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի դոցենտ,
կրթության որակի ապահովման բաժնի պետ

ՇԱՆԹ ԲԱԳՐԱՅԱՆ

«Կիրառական տնտեսագիտության ազգային կենտրոն»-ի հետազոտող

**ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՄԱՐԳԻՆԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Հոդվածում ներկայացվում է այլեթնիկ միջավայրում միգրանտների ինքնության ճգնաժամի առաջացման և հաղթահարման երևույթը էթնոմշակութային մարզինալության համատեքստում: Քննության են դրվում էթնոմարզինալիների շրջանում նկատվող էթնիկական և այլեթնիկական դերերի խանգարումները և այլեթնիկ միջավայրում սոցիալականացման յուրահատկությունները: Էթնոմարզինալության երևույթը դիտարկվում է ինքնության ճգնաժամի պայմաններում որպես անձի ադապտացիայի գործընթաց: Որպես հետազոտության առարկա՝ դիտարկվել են Ադրբեջանից Հայաստան ներգաղթած փախստականները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ մարզինալություն, ինքնության ճգնաժամ, էթնիկ դեր, էթնիկ միջավայր, Ես-կոնցեպցիա

Այլեթնիկ միջավայրում էթնոկրի մշակութային սոցիալականացման բնութագրիչ կողմերից մեկն այն է, որ նրա մոտ բացակայում է իր էթնոկիրների հետ հոգեբանական նույնացումը, այսինքն՝ իր ազգի մշակութի, լեզվի, դիրքորոշումների, ակնկալվող հակազդումների, հայացքների համակարգի

ակտիվ ներքնայնացումը, որը խաթարում է անձի էթնիկական ես-պատկերի հասունացումն ու զարգացումը՝ հանգեցնելով ինքնության ճգնաժամի:

Օտար երկրներում իր կենսագործունեությունը ծավալող անհատը նոր միջավայրի ազդեցությամբ աստիճանաբար ձեռք է բերում նոր դիրքորոշումներ, համոզմունքներ, արժեքներ ու սպասումներ, որոնք նրա հոգեկանում առաջ են բերում լարվածություններ ու կոնֆլիկտներ: Անձը կամա, թե ակամա ստիպված է լինում կատարել միաժամանակ երկու դեր, այսինքն՝ թե՛ իր էթնիկական հանրությանի և թե՛ տվյալ հասարակության անդամի դերերը, որոնք հաճախ անհամատեղելի են լինում: Եթե անձը կարողանում է էթնիկական և այլէթնիկական դերերը ճիշտ համադրել, ապա լուրջ կոնֆլիկտներ չեն առաջանում իր և տվյալ էթնումշակույթի ներկայացուցիչների միջև [5, էջ 170]: Հնարավոր է այնպիսի մարզինալ վիճակ, երբ մարզինալը կոնֆլիկտի մեջ չի գտնվում հասարակության հետ և չի ունենում ներքին երկփեղկվածություն: Օրինակ, դա տեղի է ունենում այն դեպքում, երբ անհատը մանկությունից հարմարված է ապրել երկու մշակույթների սահմանագծում, բայց ընդունում է իր խմբի արժեքները, ապրում է իր խմբի նորմերով [7, էջ 151-152]:

Հակառակ դեպքում անհատն ընկնում է կոնֆլիկտային վիճակների մեջ, որն էլ խորը, հիմնականում՝ բացասական հետք է թողնում նրա հոգեկան աշխարհի վրա: Անձի երկակի դերերը կարող են իրագործվել առանց լուրջ կոնֆլիկտների այն դեպքում, երբ կոնֆլիկտային հարաբերությունների մեջ մտնող դերերը, իրագործվելով տարբեր սոցիալական իրականություններում, միմյանց չեն հատվում: Իսկ եթե ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ անհրաժեշտ է ընտրություն կատարել էթնիկական ու այլէթնիկական դերերից որևէ մեկի ակտիվ դերակատարման միջև կամ առաջնություն տալ դրանցից մեկին, ապա կոնֆլիկտը, որպես կանոն, լուծվում է անհատի՝ տվյալ ժամանակահատվածի կենսագործունեության համար կարևորություն ներկայացնող դերակատարման օգտին: Նմանատիպ կոնֆլիկտային իրավիճակներում հայտնված էթնումարզինալ անհատն անընդհատ ունենում է էթնիկական ու այլէթնիկական դերերի խանգարումներ, դժվար կողմնորոշման և վարքի փոխզիջողական ձևերի բացակայություն:

Սովորաբար անձը չի կարող երկար ժամանակ գտնվել մարզինալ վիճակի անկայուն պայմաններում: Ամեն անգամ երկընտրանքի առջև չկանգնելու համար նա պետք է կայացնի վերջնական որոշում այն մասին, թե որ մշակութային խմբին է ինքն իրեն նույնացնում, որ խմբի արժեքներով է առաջնորդվում: Որպես կանոն՝ առաջնությունը տրվում է գերիշխող էթնիկական խմբին: Սովորաբար մարզինալ վիճակում գտնվող անձինք ձգտում են միավորվել կամ ներառվել խմբերի, հանրույթների մեջ: Դա բնական երևույթ է, որովհետև

ա) խումբը հնարավորություն է տալիս բավարարելու մարդու կարևոր սոցիալական, ազգային և հոգեբանական պահանջումները,

բ) միավորումը հնարավորություն է տալիս լուծելու այնպիսի խնդիրներ, որոնք միայնակ հնարավոր չէ լուծել,

գ) խմբի միջոցով ձեռք է բերվում անհրաժեշտ ինֆորմացիա կենսագործունեության համար,

դ) խմբի մեջ անձն իրեն անվտանգ ու ապահով է զգում,

ե) խմբին անդամագրումը նպաստում է դրական սոցիալական նույնության ձևավորմանը, որը դառնում է Ես-կոնցեպցիայի անբաժանելի մասը:

Մարզինալ կարգավիճակը ենթադրում է դեզադապտացիա, ինքնության փլուզում և ընդհանուր հոգեկան ճգնաժամ: Հոգեբանական դեզադապտացիայի կարևոր կողմերից մեկը ինքնության ճգնաժամի առկայությունն է:

Ինքնության ճգնաժամի հետևանքով փոխվում է անձը, որը այլևս կարծես թե ինքն իրեն չի ճանաչում: Փոփոխություններ են տեղի ունենում անձի կառուցվածքում. խախտվում է Ես-կոնցեպցիայի միասնությունը: Բռնագաղթածների շրջանում ինքնության ճգնաժամն առաջանում է՝ կապված ինչպես գաղթի պատճառների, այնպես էլ մշակութային շոկի և նոր միջավայրում ադապտացիայի գործընթացների հետ: Այդ իրադարձությունները խարխլում են ինքնության հիմքերը. տեղի է ունենում սոցիալականացման ընթացքում ձևավորված աշխարհի պատկերի, համոզմունքների, պատկերացումների, դիրքորոշումների, հարաբերությունների ձևափոխություն: Որպես կանոն՝ ինքնության ձևափոխությունը բռնագաղթածների շրջանում սկսվում է մինչև բռնագաղթը: Մարդը, որը ականատես է եղել կամ իր մաշկի վրա զգացել է ջարդերի սարսափն ու մղձավանջը, տեսել է անկառավարելի ամբոխի գազանություններն ու դաժանությունները, մերձավորների տանջանքներն ու սպանությունները, բնականաբար, այդ ամենից հետո պետք է փոխի իր պատկերացումներն աշխարհի և մարդկանց մասին: Այդպիսի վիճակում նրան կարող է մտահոգել միայն մեկ հարց՝ ժամ առաջ ցանկացած գնով փախչել «դժոխքից», փրկել իր և հարազատների կյանքը: Նրա համար այլևս նշանակություն չունի, թե որտեղ կհայտնվի:

Սակայն հայտնվելով նոր, այդ թվում՝ սեփական էթնիկ միջավայրում, միգրանտը որոշ ժամանակ անց ապրում է ինքնության նոր ճգնաժամ, որի հետևանքները անհամեմատ ծանր, ցավազին ու անտանելի են: Սկզբնական փուլում նրան թվում է, թե ինքը եկել է յուրայինների մոտ, որոնք նրան կընդունեն սիրալիք, կարեկից կլինեն իրեն, կապահովեն բնականաբար, ապրուստով և աշխատանքով: Որպես կանոն՝ վերաբնակության սկզբում տեղաբնակները նորեկներին ընդունում են որպես յուրայինների, որոնց հետ տեղի է ունեցել ողբերգություն: Օրինակ՝ 1988-ից հետո, երբ շարունակվում էր Ղարաբաղյան պատերազմը, «Մենք – նրանք» հակադրության մեջ փախստականները, բնականաբար, մտնում էին «Մենք»-ի մեջ: Փախստականներից շատերն այդ տարիներին նույնիսկ ներգրավվեցին ռազմական գործողությունների մեջ:

Նոր միջավայրում միգրանտների ադապտացիան դժվար է ընթանում այն պատճառով, որ նրանց մեծ մասը չի տիրապետում ազգային արժեքներին՝ լեզվին, մշակույթին, սովորույթներին, ավանդույթներին, քանզի նրանց սոցիալականացման գործընթացն ընթացել էր տարբեր տարածքներում, տարբեր սոցիոմշակութային միջավայրերում: Ինչպես նշեցինք, նրանց մի

մասը կամ արդեն փոխել էր իր էթնիկական նույնությունը կամ գտնվում էր դրա ճանապարհին: Նոր միջավայրում անխուսափելի պետք է լինեին երկու սոցիոմշակութային համակարգերի բախումը: Միգրանտները սկսում են իրենց գործունեությունը ծավալել երկու տարբեր մշակութային դիրքորոշումների և արժեքային համակարգերի սահմանագծում, այսինքն՝ դառնում են կրկնակի մարզինալներ [6, էջ 18]:

Այդ ճգնաժամը վերաբերում է ինքնության բոլոր բաղկացուցիչներին, հատկապես՝ քաղաքացիական, էթնոմշակութային, գենդերային, ընտանեկան, մասնագիտական և տարիքային կողմերին: Փախստականի կարգավիճակի յուրահատկությունն այն է, որ նա այլևս ոչ մի երկրի քաղաքացի չէ: Եթե նա ստանում է փախստականի կարգավիճակ, ապա ձեռք է բերում որոշակի իրավունքներ, որոնք դրականորեն են ազդում նրա հետագա ադապտացիայի վրա: Իսկ եթե այդպիսի կարգավիճակ չի ստանում, ապա խրվում է մարզինալության ճահճի մեջ: Միայն այն զգացողությունը, որը ինքն օրենքից դուրս է, պետության քաղաքացի չէ, փախստականի ներսում առաջացնում է անպաշտպանության, իրավազրկության, անօգնականության ու անզորության զգացում: Դա նշանակում է, որ ուրիշները նրա հետ կարող են վարվել այնպես, ինչպես ցանկանում են, որովհետև ինքը չունի ոչ բողոքելու, ոչ պահանջելու իրավունք: Նման պայմաններում մարդը կորցնում է իր ինքնավստահությունը, հավատն այլ մարդկանց հանդեպ, ընկնում է մարդու ինքնագնահատականի ու հավակնությունների աստիճանը: Մշտական անվստահությունը ծնում է ֆոբիական բազմաթիվ վիճակներ, առաջացնում հոգեմարմնական խախտումներ: Աշխարհը նրան թվում է իմաստագուրկ, կյանքը՝ անիմաստ [3, էջ 65]:

Ինքնության ճգնաժամն ուղեկցվում է՝

- ա) իր սպասումների, սեփական կարողությունների իրականացման անհնարիությամբ,
- բ) ցածր ինքնագնահատականով,
- գ) կյանքի դժվարությունների առջև կապիտուլյացիայով, որն ուղեկցվում է անհեռանկարայնության զգացումով, ինքնասպանության մասին մտքերով,
- դ) ինքնաքննադատությամբ, մեղքի զգացումով,
- ե) սոցիալական ինքնության փլուզմամբ,
- զ) ճնշվածության, միայնության, օտարվածության ու անզորության զգացումով [4, էջ 21]:

Փոփոխությունների է ենթարկվում նաև ինքնության մշակութային կողմը: Միգրանտը հայտնվում է նոր էթնոմշակութային միջավայրում, որի նորմերը, ավանդույթները և արժեքները նրան այնքան էլ հարազատ չեն: Ապրելով այլէթնիկ միջավայրում նա տարիների ընթացքում յուրացրել էր գերիշխող էթնոսի մշակութային արժեքներն ու սովորույթները: Նոր միջավայրում նա կանգնում է արժեքային կողմնորոշումները փոխելու խնդրի առջև: Նրա մշակութային ինքնության որոշ կողմեր ծաղր ու ծանակի են ենթարկվում տեղաբնակների կողմից: Դրա հետևանքով փախստականը յուրայինների շրջանում իրեն օտար է զգում: Կորցնելով կապը նախկին մշակութային

միջավայրի հետ և չկարողանալով արագորեն յուրացնել նոր արժեքներն ու նորմերը՝ փախստականը ապրում է ներքին խռովք, հուսախաբություն: Նրան թվում է, թե ինքը «իր տեղում չէ»: Նման դեպքում նրա էմոցիոնալ վիճակը բնութագրվում է երազկոտությամբ, թախիծով, դատարկությամբ, լքվածությամբ, մեղանխույզիկ հակումներով: Նման վիճակի խորացման դեպքում առաջանում է օտարվածություն. նա իրեն խորթ է զգում նոր միջավայրում, չի կարողանում ինքնահաստատվել, իրականացնել իր կարողությունները: Նա հանգում է այն մտքին, որ ինքը ոչինչ չի կարող փոխել: Առավել ծանր են լինում մասնագիտական նույնության փոփոխության հետևանքները: Նրանցից շատերը չեն կարողանում աշխատել՝ ըստ իրենց մասնագիտության: Տվյալ դեպքում կարևոր դեր է խաղում ոչ միայն տեղաբնակների կողմից իրականացվող խտրականությունը, այլև այն հանգամանքը, որ պարզապես աշխատելու տեղ չի լինում: Մշակութային ինքնության փոփոխության հետ փոխվում են հաճախ նաև գենդերային դերերը: Այլ խոսքով, մարզինալ անձը ընկնում է մշակութային շոկի մեջ, որին, ըստ Կ. Օբերգի, բնորոշ են հետևյալ կողմերը.

ա) անհրաժեշտ հոգեբանական ադապտացիայի հասնելու համար գործադրած ջանքերի հետևանքով առաջացած լարվածությունը,

բ) կորստի և զրկվածության (բարեկամների, կարգավիճակի, սեփականության և մասնագիտության) զգացմունք,

գ) մերժվածության զգացմունք,

դ) դերերի, դերային սպասումների, արժեքների, զգացմունքների ինքնանույնացման խախտում,

ե) մշակութային տարբերությունների գիտակցման արդյունքում անսպասելի տագնապի, ատելության, զզվանքի առկայություն,

զ) նոր միջավայրին չհարմարվելու հետևանքով անլիարժեքության զգացմունք:

Մշակութային շոկի ախտանիշներից են՝ ուժերի անկում, անքնություն, տագնապի զգացում, անձկություն, ախորժակի կորուստ կամ, ընդհակառակը, ուտելու անզուսպ ցանկություն, միաժամանակ կասկածամիտ վերաբերմունք ուտելիքի, ջրի որակի նկատմամբ, հակակրանքի զգացում անձանոթ ու խորթ իրերի հանդեպ, օտարների մարմնին դիպչելուց զզվանք, ինքնավստահության կորուստ, կայուն ջղազրգիռ հոգեվիճակ: Կ.Ա. Նալչաջյանը նշում է, որ իր ինքնահաստատումը կորցրած, իրադրության վրա որևէ վերահսկողություն չունեցող մարդը, որն իրեն մի տեսակ հողից կտրված ու օդի մեջ կախված է զգում, կարող է ագրեսիվության ու կատաղության նոպաներ ունենալ, և դրա հիմնական թիրախը կարող են դառնալ իրեն հակադրվող տեղաբնակները, կամ այն մարդիկ, ովքեր պատճառ են դարձել, որ վերջինս լքի իր երկիրն ու միջավայրը [2, էջ 16]:

Բռնագաղթի, դրան ուղեկցվող մշակութային շոկի ժամանակ փախստականները ստանում են տարաբնույթ հոգեմարմնական վնասվածքներ (տրավմաներ): Գ. Շահվերդյանն առանձնացնում է հետևյալ՝ առավել տարածված վնասվածքները.

- բռնությունը, հանկարծակի և կոպիտ միջամտությունը անձնական կյանքին, որն ուղեկցվում է նախնական շոկով, վախով, ապակողմնորոշվածությամբ, ոչ ադեկվատ մտքերով և գործողություններով,

- անարդարության սուր զգացում և տեղի ունեցած դեպքերի և երևույթների իմաստի չընկալում, իրավիճակը գնահատելու անկարողություն,

- տան կորուստ, որը, օրինակ, հայի համար ունի հոգեբանական մեծ նշանակություն: Ավանդաբար հայի գիտակցության մեջ համաշխարհային կարգը կառուցված է «տուն» հասկացության վրա: Փախստականները տան կորուստը սուբյեկտիվորեն երկակի ձևով են ապրում. մի կողմից նրանք գիտակցում են հողի, երկրի, արմատների անվերադարձ կորուստը, մյուս կողմից՝ ուրախ են այն բանի համար, որ հայտնվել են պատմական հայրենիքում,

- ունեցվածքի կորուստ. մարդը սովորաբար իրեն նույնացնում է իր սեփականության հետ, ինչի հետևանքով վերջինիս կորստով կարծես թե նա կորցնում է իր ինքնության մի մասը, որն էլ իր հետքն է թողնում նոր միջավայրում ադապտացիայի ընթացքի վրա,

- մեղքի զգացում այն բանի համար, որ ֆիզիկական սպառնալիքի տակ չեն կարողացել հետաքրքրվել ազգակիցների ու մերձավորների ճակատագրով, ինքնամեղադրանք, որ չեն եղել վճռական, հաշվենկատ, որ ժամանակին չեն տեղափոխվել և այլն,

- գայրութ ու հոգեկան խռովք, որն ուղղված է ինչպես աղբբեջանցիների (իրենց նկատմամբ ցուցաբերած անմարդկային վերաբերմունքի համար), այնպես էլ հայաստաբնակ հայերի դեմ (որ դարաբաղյան շարժման սկզբում հաշվի չէին առել իրենց վիճակը): Այս տրավմաների հետևանքներից են հոգեմարմնական տարբեր հիվանդություններ՝ գլխացավ, մկանացավ, ֆիզիկական դիսկոնֆորտ, ներոզներ, գրգռվածություն, ագրեսիվություն և այլն [9, էջ 129-130]:

Փախստականների ադապտացիան հեշտացնելու գործում անչափ կարևոր է համակողմանի հոգեբանական օգնության ցուցաբերումը: Փախստականները տևական լարվածության, զրկանքների, գերհոգնածության, հոգեմարմնական վնասվածքների պատճառով կարիք ունեն բազմակողմանի օգնության: Ուստի՝ ճիշտ, գիտականորեն կազմակերպված հոգեբանական օգնությունը կարող է թեթևացնել փախստականների հոգեվիճակը, մեղմել սոցիալ-հոգեբանական ադապտացիայի հետ կապված դժվարությունները: Դրա համար հոգեբանական օգնությունը պետք է ուղղված լինի փախստականների ներքին ռեսուրսների ակտիվացմանը, ինքնաօգնության արդյունավետ եղանակների ուսուցմանը, ճգնաժամային վիճակների, հետտրավմատիկական սթրեսների, տարբեր հանգամանքների պատճառով առաջացած սոցիալական ինֆանտիլիզմի հաղթահարմանը:

Հոգեբանական օգնությունը պետք է լինի համակողմանի, ընդգրկի բոլոր այն խնդիրները և ոլորտները, որոնք անհրաժեշտ և բավարար են իրականացնելու արդյունավետ սոցիալ-հոգեբանական ադապտացիա, պետք է հաշվի առնի մարզինալացման գործընթացի տարբեր փուլերի առանձնահատկությունները: Չպետք է փախստականների ադապտացիան դիտել որ-

պես վարքի պարզ հարմարեցման դեպք: Օրինակ, եթե հոգեբանը ուշադրություն դարձնի միայն անձի ներքին աշխարհի կարգավորման խնդիրներին և աչքաթող անի միջանձնային հարաբերությունների կամ սոցիոմշակութային ադապտացիային առնչվող հարցերին, ապա նա հազիվ թե հասնի լիարժեք արդյունքի:

Հոգեբանական օգնությունը պետք է ընդգրկել հետևյալ ոլորտները՝

ա) անձնային մակարդակ. օգնություն ցուցաբերելու համար նախ և առաջ հարկավոր է ծանոթանալ անձի անհատական բնութագրերի, նրա բնավորության, խառնվածքի, վարքագծի դիտարկելի գծերի, հոգետիպի, վերահսկողության լոկուսի, ինքնագնահատականի, սոցիալական փորձի, սեռատարիքային առանձնահատկություններին,

բ) միջանձնային մակարդակ. հարկավոր է պարզել առանձին անձանց հաղորդակցվելու, ուրիշների հետ կապեր ու հարաբերություններ հաստատելու ունակություններն ու ցանկությունները, ցույց տալ նրանց իրական կարողությունները, մատնանշել այն դիրքորոշումներն ու վարքագծային ձևերը, որոնք նա ի վիճակի է ընդունելու և իրագործելու միջանձնային հարաբերությունների կարգավորմանը, միմյանց միջև հաղորդակցության դրական կողմնորոշումների ձևավորմանը,

գ) սոցիոմշակութային մակարդակ. հոգեբանի օգնությամբ փախստականը պետք է գիտակցի հին և նոր սոցիոմշակութային արժեհամակարգերի տարբերություններն ու ընդհանրությունները: Հարկ է նշել, որ սովորաբար իրավամբ շեշտը դրվում է փախստականների մշակութային սոցիալականացման վրա: Բայց միայն փախստականների հետ աշխատելով հնարավոր չէ լուծել բոլոր հարցերը. այդ աշխատանքի մեջ հարկավոր է ընդգրկել նաև տեղաբնակներին՝ նրանց նույնպես ցույց տալով հոգեբանական օգնություն:

Հոգեբանական օգնության ժամանակ կիրառվում են մի շարք մոդելներ, որոնք իրարից տարբերվում են՝ ըստ ուսուցման մեթոդների, ըստ ուսուցման բովանդակության և ըստ ոլորտների (կոգնիտիվ, էմոցիոնալ, վարքագծային): Այլ խոսքով, փախստականներին հոգեբանական օգնություն ցուցաբերելիս անհրաժեշտ է կիրառել բոլոր այն միջոցները և ձևերը, որոնք կարող են արդյունավետ լինել: Հոգեբանը իրավունք ունի աշխատել ցանկացած հարացույցի շրջանակներում և օգտագործել հոգեբանական խորհրդատվության, հոգեկորեկցիայի և հոգեթերապեուտիկ այն մեթոդները, որոնց տիրապետում և կիրառում է՝ փոխգործելով մյուս այցելուների հետ: Բայց, դրա հետ միասին, չափազանց կարևոր է հոգեբանի հումանիստական ուղղվածությունը [8, էջ 78]:

Միգրանտների, մասնավորապես՝ փախստականների հետ աշխատելիս նպատակահարմար է կիրառել հումանիստական հոգեբանության շրջանակներում մշակված մեթոդները: Դա հատկապես կարևոր է ինքնության ճգնաժամի հաղթահարման հետ կապված խնդիրները լուծելու համար: Հոգեբանի խնդիրն է օգնել փախստականին՝ իրեն վերգտնել, իր փլուզված ինքնության բեկորներից կազմել մի օրգանական ամբողջություն: Պետք է օգնել նրան իմաստավորելու տեղի ունեցածը, հասկանալու, թե ինչ է կատար-

վել իր հետ, ինչպիսի փոփոխություններ են տեղի ունեցել, ինչպես է ուզում ինքը կառուցել իր հետագա կյանքը, դրա համար ինչից սկսել, ինչը թողնել անցյալում և ինչը պահել ապագայի համար:

Չոգեբանի խնդիրներից է նաև օգնել՝ կարգավորելու միջանձնային հարաբերությունները, կապեր հաստատելու տեղաբնակների հետ, մեղմելու նրանց միջև առկա անվստահության ու խորթության զգացմունքները: Գ. Ու. Սոլդատովան և Լ. Ա. Շայգերովան մշակել են հանդուրժողականության և դրական փոխգործողության տրենինգներ, որոնց հիմնական նպատակներն են՝

ա) սեփական արժանապատվության զգացմունքի և ուրիշների արժանապատվությունը հարգելու ունակության զարգացում,

բ) ինքնավերլուծության, ինքնաճանաչողության կարողության զարգացում,

գ) դրական վերաբերմունքի ձևավորում թե՛ սեփական և թե՛ ուրիշ խմբերի նկատմամբ,

դ) կոնֆլիկտային իրավիճակներից կառուցողական եղանակներով դուրս գալու, սեփական զգացումները և ապրումները առանց կոնֆլիկտների ու բռնության դրսևորելու ձևերի ուսուցանումը,

ե) սոցիալական ընկալունակության, սոցիալական երևակայության, վստահության, էմպատիայի, կարեկցանքի, ապրումակցման զարգացում, ուրիշ մարդկանց լսելու ունակություն,

զ) սոցիալական կապերը ամրապնդող հաղորդակցական հմտությունների կատարելագործում,

է) միջանձնային հարաբերություններում հանդուրժողականության ուսուցանում [8, էջ 78-79]:

Փախստականի գլխավոր խնդիրը նոր տեղում հարմարվելն է, որն անհնարին է առանց դրացիական կապեր և հարաբերություններ հաստատելու տվյալ միջավայրի մարդկանց հետ: Գոյություն ունեն մի շարք գործոններ (արժեքային կողմնորոշումների ու դիրքորոշումների, վարքագծի ձևերի, կենցաղային սովորույթների ու ավանդույթների, սոցիալ-հոգեբանական փորձի տարբերությունները), որոնք խանգարում են նորաբնակների և հնաբնակների միջև փոխըմբռնման մթնոլորտ ստեղծելու համար: Այս գործում չափազանց մեծ է ոչ միայն պետության կողմից տարվող ճկուն քաղաքականության, հատուկ ծրագրերի իրականացման, այլև բարենպաստ հասարակական կարծիքի ձևավորման դերը:

Ի տարբերություն սոցիոմշակութային հմտությունների ավանդական թրենինգների խնդիրների, Սոլդատովան և Շայգերովան ուշադրություն են դարձնում նաև հետևյալ խնդիրներին. թրենինգի մասնակիցներին սովորեցնել հոգեկարգավորման, նյարդային լարվածության լիցքաթափման եղանակներին, ֆունկցիոնալ վիճակի բարելավմանը, վստահության մթնոլորտի պայմաններում հնարավորություն տալ նրանց հասնելու անձնային աճի, գիտակցելու սեփական խնդիրները և փնտրելու դրանց լուծման եղանակները, օգնելու տազնապալիության, անվստահության իջեցմանը, հաղթահարելու աշխարհի նկատմամբ անվստահության զգացմունքը և այլն [8, էջ 79]:

Նորաբնակների և տեղաբնակների հարաբերությունները կարգավորելու համար կարևոր դեր են կատարում թրենինգները, որոնց խնդիրն է ցույց տալ, թե «ինչպես» պետք է կարգավորվի միջանձնային հարաբերությունները, «ինչպես» նորաբնակը կարող է յուրացնել նոր մշակույթի նորմերը, արժեքները և դերային կառուցվածքները: Սոցիոմշակութային տրենինգը կոչված է լուծելու երկու խնդիր՝

ա) ծանոթացնելու սոցիոմշակութային, կենցաղային տարբերություններին և միջանձնային հարաբերություններին: Դրա համար հարկավոր է խաղարկել այնպիսի վիճակ, որում ինչ-որ բան տարբեր կերպ է կատարվում համեմատվող մշակույթներում,

բ) եղած գիտելիքները կարողանալ կիրառել նոր պայմաններում, որը հնարավոր է, եթե անձը ծանոթ է նոր միջավայրի մշակույթի ու կենցաղի բնորոշ գծերին:

Միգրանտներին հոգեբանական օգնությունը կազմակերպելու համար կարևոր է նաև հաշվի առնել թե՛ նրանց և թե՛ տեղաբնակների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները: Այն դեպքում, երբ միգրանտները պատկանում են տեղաբնակների հետ նույն էթնիկ միջավայրին, ապա որքան էլ սոցիոմշակութային արժեքներով նրանք իրարից տարբերվեն, միևնույն է, այն գիտակցումը, որ նրանք պատկանում են նույն էթնիկական խմբին, եղել են նույն պետության քաղաքացիներ, անհամեմատ ավելի պետք է թեթևացնի մշակութային դեգադապտացիայի փուլի հաղթահարումը: Այս դեպքում կարևոր է դառնում նոր կամ նորացված էթնիկական նույնության ձեռք բերման խնդիրը: Ինչպես նկատեցինք, տարեթնիկ միջավայրում լինելով էթնոմարգինալներ, միգրանտների մեծ մասի էթնիկական նույնությունը մարգինալ բնույթ ունեւ: Հաստատվելով իրենց հարազատ էթնիկ միջավայրում, նրանք հանկարծ պարզում են, որ իրենց նույնության էթնիկական կողմերը բավարար չեն տվյալ էթնիկական խմբում լիարժեքորեն ինտեգրվելու համար: Փախստականների այն մասը, ովքեր վերաբնակվում են սեփական էթնիկական միջավայրում, սակայն հանդես են գալիս փախստականի սոցիալական կարգավիճակով, հաճախ բավարար ջանքեր չեն թափում էթնիկական նույնության ձեռք բերման ուղղությամբ, ինչի արդյունքում հանդիպում են մեծ դժվարությունների: Բանը ոչ թե հնարավորությունների, այլև ցանկության բացակայության մեջ է: Այդ նույն մարդիկ նույն պայմաններում հաջողությամբ սովորում են օտար լեզուներ, ձեռք բերում այլազգիների հետ հաղորդակցվելու հմտություններ և այլն: Ի դեպ, դա վերաբերում է ոչ միայն փախստականներին, այլև տեղաբնակներին: Այլ խոսքով՝ այստեղ դրսևորվում է էթնոհոգեբանական բացասական գծերից ու դիրքորոշումներից մեկը, երբ սեփական արժեքների թերագնահատման ու անտեսման ճանապարհով նախապատվությունը տրվում է օտար արժեքներին: Սա մի վտանգավոր դիրքորոշում է, որը դարերի ընթացքում ծանր հարվածներ է հասցրել էթնիկական ինքնության պահպանմանը: Եթե այլէթնիկ միջավայրում այդպիսի դիրքորոշումը որոշ իմաստով դրական դեր է խաղում սոցիոմշակութային ադապտացիայի գործում, ապա միաէթնիկ միջավայրում դա իրեն չի կարող

արդարացնել: Փախստականը, որը չի ցանկանում սովորել մայրենի լեզուն, որը պետական միակ լեզուն է, զրկում է իրեն հասարակական, սոցիալական կառուցվածքների ու գործունեության մեջ ներառվելու, մյուսների հետ լիարժեք հաղորդակցվելու հնարավորությունից, այսինքն՝ իր մարզինալ վիճակը հաղթահարելու իրական հնարավորությունից: Բնականաբար, նման դեպքում նա չի կարող վայելել տեղաբնակների հարգանքը և չի կարող խուսափել տհաճ, անցանկալի բախումներից:

Նորաբնակների և տեղաբնակների միջև պետք է հաստատել հոգեբանական համատեղելիության ու փոխադարձ վստահության մթնոլորտ: Դրա համար նպատակահարմար է օգտագործել խմբային հոգեվերականգնման աջակցության ձևը: Դրա առավելությունը, ինչպես նկատում է Մ.Պ. Մկրտումյանը, այն է, որ ստեղծվում է հետադարձ կապի հնարավորություն և ընդհանուր խնդիրներ ու ապրումներ ունեցող մարդկանց միջև փոխադարձ օգնություն ու կարեկցանք: Փոխադարձաբար միմյանց օժանդակությունը, հոգեկան և ֆիզիկական հավասարակշռությունը վերականգնման խիստ կարևոր նպաստավոր պայման է ստեղծում ընդգրկված յուրաքանչյուր անդամի համար: Խմբային պարապմունքների ժամանակ իրականանում է ուրիշների հոգեկան արժեքների դրսևորումների և պահանջումների ընդունում, գիտակցելով, որ ինքը նրանցից ոչնչով չի տարբերվում, և ամենակարևորը՝ ինքը միայնակ չէ, և որ իր հոգեկանի տարբեր դրսևորումներն էլ համապատասխանաբար ընդունվում են՝ որպես օրինաչափություն և նորմալ խմբի մյուս անդամների կողմից: Խմբում մարդը ուրիշների կողմից իրեն զգում է ո՛չ խորթացած, այլ, ընդհակառակը, ընդունվող և ընդունող, վայելում է հարգանք, վստահում ուրիշներին, ստանում անհրաժեշտ աջակցություն և աջակցում է ուրիշներին [1, էջ 52]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միգրանտների դեզադապտացիայի հիմնական պատճառներից մեկը սոցիոմշակութային տարբերություններն են կամ նրանց և տեղաբնակների միջև առկա մշակութային հեռավորությունը, հարկավոր է հոգեբանական օգնությունը այնպես կազմակերպել, որ միգրանտները առանց ներքին ու արտաքին կոնֆլիկտների կարողանան յուրացնել նոր սոցիոմշակութային արժեքները և ըստ այդմ էլ՝ նորմալ հարաբերություններ հաստատել տեղաբնակների հետ: Տվյալ դեպքում հոգեբանական օգնության առաջին քայլը պետք է ունենա ճանաչողական և կողմնորոշող բնույթ: Նորաբնակը պետք է գիտելիքներ ձեռք բերի ինչպես տվյալ երկրի, ժողովրդի պատմության և մշակույթի, այնպես էլ բնակություն հաստատած վայրի բնակչության սոցիոմշակութային առանձնահատկությունների մասին: Նոր միջավայրում կողմնորոշվելու համար նա պետք է որոշակի պատկերացում ունենա իր շրջապատի մարդկանց կենցաղային սովորույթների ու ավանդույթների մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Մկրտումյան Մ. Պ.**, Արտակարգ պայմաններում անձի հոգեբանական վերականգնման տեխնիկան: Կիրառական հոգեբանություն, Երևան, 1997
2. **Նալչաջյան Կ. Ա.**, Արտագաղթ և մշակութային շոկ, «Հոգեբանությունը և կյանքը», Երևան, 2000

3. **Дерманова И. Б.**, Типы социально-психологической адаптации и комплекс неполноценности. "Вестник Санкт-Петербургского университета". Серия 6. Вып. 1,(6)
4. **Гозман Л. Я.**, Психология перехода, "Вопросы философии", 1970, номер 5
5. **Кон И.**, Люди и роли. "Новый мир", 1970, номер 12
6. **Налчаджян А. А.**, Социально-психическая адаптация личности (формы, механизмы и стратегии). Ереван. 1988
7. **Платонов Ю. П.**, Этническая психология. СПб, "Речь", 2001
8. **Солдатова Г. У., Шейгерова Л. А.** Психологическая адаптация вынужденных мигрантов. "Психологический журнал", 2002, т. 23, номер 4
9. **Шавердян Г. М.**, Травматический стресс: Психические расстройства и развитие личности. Ереван. Зангак-97, 1998

НАИРА АКОПЯН

доктор психологических наук, профессор

АННА ХАЧАТРЯН

кандидат психологических наук НАН РА,

Международный научно – образовательный центр, преподаватель кафедры психологии

НАРИНЕ ВАРДАНЯН

кандидат филологических наук НАН РА,

доцент Международного научно-образовательного центра,

заведующая отделом обеспечения качества образования

ШАНТ БАГРАТЯН

Научный сотрудник Национального центра прикладной экономики

**КРИЗИС ИДЕНТИЧНОСТИ МИГРАНТОВ В КОНТЕКСТЕ ЭТНОКУЛЬТУРНОЙ
МАРГИНАЛЬНОСТИ**

В статье представлен феномен появления и преодоления кризиса идентичности мигрантов в новой этнической среде в контексте этнокультурной маргинальности. Рассмотрены наблюдающиеся в поведении этномаргиналов нарушения этнических и межэтнических ролей и особенности социализации в новой этнической среде. Явление этномаргинальности наблюдается в условиях кризиса идентичности в качестве процесса адаптации личности.

NAIRA AKOPYAN

Doctor of Psychological Sciences, Professor

ANNA KHACHATRYAN

PhD of Psychological Sciences

International Scientific-Educational Center of the National Academy of Sciences of the RA

Lecturer of Psychology

NARINE VARDANYAN

International Scientific-Educational Center of the National Academy of Sciences of the RA,

Head of the Quality Assurance Department, PhD of Philological Sciences, Associate professor

SHANT BAGRATYAN

Researcher at the National Center for Applied Economics

MIGRANTS' IDENTITY CRISIS IN THE CONTEXT OF ETHNO-CULTURAL MARGINALITY

The article introduces the phenomenon of emergence and overcoming of the migrants' identity crisis in the new ethnic environment in the context of ethno-cultural marginality. Disorders of ethnic and interethnic roles observed in ethno-marginals' behavior and the peculiarities of socialization in the new ethnic environment are examined. The phenomenon of ethno-marginality is observed in conditions of identity crisis as a process of personality adaptation.

Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոն,
Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվա հասարակագիտական համալսարան,
Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՆԻ ՇԱՀԻՆՅԱՆ

Որակի ապահովման և բարեփոխումների կենտրոնի համակարգող,
Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվա հասարակագիտական համալսարան,
Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի դասախոս և հայցորդ

ՄԱՍԻՆՄԱՍԻՆ ԱԶԼՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԴԻՄՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԳԻՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀՀ ԲՈՒՀԵՐՈՒՄ

Հոդվածում դիտարկվում են ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրները, ակադեմիական անազնվության դրսևորումներն ու կանխարգելման մանկավարժագիտական մոտեցումները ՀՀ բուհերում: Ակադեմիական ազնվության պահպանումը սույն հոդվածում քննարկվում է հատկապես ուսումնառող-դասավանդող ներգործության, բուհերի հիմնական շահակիցների ակադեմիական վարքի դրսևորումների, կրթության որակի ապահովման և ակադեմիական ազնվության մշակույթի զարգացման տեսանկյուններից:

Հանգուցային բառեր՝ ակադեմիական ազնվություն, ակադեմիական ամբողջականություն (ինտեգրատիվություն), գրագողություն, կրթության որակ, ակադեմիական ազնվության պահպանման մշակույթ, մտավոր սեփականության կրթություն:

Բարձրագույն կրթության որակի և մասնագիտական պատրաստվածության նկատմամբ կրթության ու աշխատանքային շուկաների պահանջների բազմազանեցման և աճի առկա միտումը ՀՀ բուհերին պարտադրում է այնպիսի փոփոխությունների իրականացման անհրաժեշտություն, որոնք ազդում են ոչ միայն կրթության բովանդակության, այլ նաև բուհերում ձևավորված արժեհամակարգի, նրանց շահակիցների վարքի և բարձրագույն կրթության նկատմամբ նրանց վերաբերմունքի վրա: ՀՀ բուհերին առաջադրված պահանջների բավարարումը գլխավորապես պայմանավորված է բուհերի առանցքային շահակիցներով, քանի որ վերջիններիս մասնագիտական գործունեությամբ ու ակադեմիական վարքի դրսևորումներով են ձևավորվում, արմատավորվում և փոփոխվում ինստիտուցիոնալ արժեքահամակարգերը: Մակայն որքան էլ բուհական արժեհամակարգերը ձևավորող ու փոփոխող գործոնները և բարձրագույն կրթության համակարգում առկա խնդիրները պայմանավորված լինեն ազգային ու ինստիտուցիոնալ առանձնահատկություններով, այդուհանդերձ, բարձրագույն կրթության որակի շարունակական բարելավման առկա զլոբալ միտումների համատեքստում ակադեմիական հանրությունը, ոլորտի

մասնագետներն ու փորձագետները շարունակաբար մատնանշում են դրանց լուծման հրատապությունը, առաջադրում լուծման ուղիներ, որոնք, սակայն, մի շարք ՀՀ բուհերում դեռևս շարունակում են մնալ չլուծված: ՀՀ բուհական միջավայրում ակադեմիական օրինակելի վարքի, մասնավորապես ակադեմիական ազնվության պահպանման սկզբունքայնությունն ու դրա մասնավոր օրինակելի դրսևորումների ամրապնդումն ըստ էության հիմք են հանդիսանում ուսումնառողների մտավոր գործունեության զարգացման, նրանց ստեղծագործական աշխատանքի խթանման և գիտելիքի ստեղծման ու տարածման համար, հետևապես ՀՀ բուհերը նույնպես անմասն չեն մնում այդ կրթական և ուսումնադաստիարակչական գործընթացներից: Հաշվի առնելով այն, որ մասնավորապես ակադեմիական ազնվության պահպանմանն առնչվող հիմնախնդիրները լայնորեն տարածված են նաև ՀՀ բուհերում, սույն հոդվածում վեր են հանվում ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրները, ակադեմիական անազնվության դրսևորումներն ու կանխարգելման մանկավարժագիտական մոտեցումները ՀՀ բուհերի գործունեության շրջանակում:

Մասնագիտական գրականության և կրթության ոլորտի արդի հիմնախնդիրների ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ տարբեր երկրների ուսումնական հաստատություններում ակադեմիական ազնվության պահպանումը խոչընդոտող խնդիրները զարգացում են ապրում վերջին քսանամյակում: Մասնավորապես տեղեկատվության արագընթաց շարժն ու փոխանցումը նպաստում են ոչ միայն ակադեմիական ազնվության խախտման դրսևորումների ընդլայնմանը, այլ նաև ակադեմիական անազնվության ձևերի բազմազանեցմանը [1, էջ 2]: Միջազգային փորձը փաստում է, որ ակադեմիական ազնվության պահպանման հիմնահարցն արդիական է ինչպես միջազգային առաջատար բուհերում, այնպես էլ միայն վերջին տարիներին բարձրագույն կրթության համաշխարհային զարգացումներին միայն վերջին տարիներին ինտեգրված բուհերում: Սակայն բուհերում ակադեմիական ազնվության և ավելի լայն առումով ակադեմիական ամբողջականության կամ ինտեգրատիվության պահպանման լայն տարածում ունեցող խնդիրը հատկապես խորքային է և առավել դժվար հաղթահարելի զարգացող երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության բուհերում: Սա գլխավորապես պայմանավորված է այն փաստով, որ զարգացող երկրների բուհերն ազգային մակարդակում առկա սոցիալ-տնտեսական խնդիրների անմիջական և բացասական ազդեցությունը կրելու տեսանկյունից ավելի խոցելի են: Հատկանշական է նաև, որ կրթական բարեփոխումները զգալիորեն դժվարեցնող սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնցից են, օրինակ, արտագաղթի բարձր ցուցանիշներն ու դրանով պայմանավորված դիմորդների և ուսանողների թվի նվազումը, ուղեղների արտահոսքը, բուհերի թերֆինանսավորումը, սոցիալական կտրուկ շերտավորումների արդյունքում դիմորդների և ուսանողների վճարունակության ցածր մակարդակը, ազգային մակարդակում զբաղվածության և մասնագիտական զարգացման սահմանափակ հնարավորությունները, չեն նվազեցնում բարձրագույն կրթության հանդեպ հասարակական պա-

հանջարկը: Այդուհանդերձ, սոցիալ-տնտեսական նման խնդիրների առկայության պայմաններում կրթության և աշխատանքային շուկաների կայուն զարգացման հեռանկարների բացակայությունը կամ սակավությունը բուհերին ստիպում են առաջնահերթորեն լուծել գոյատևմանը և ավելի լավատեսական մոտեցման դեպքում՝ մրցունակության ձեռքբերմանն առնչվող խնդիրները:

ՀՀ ներկայիս բարձրագույն կրթության համատեքստում ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրներով զբաղվում են ինչպես բուհերը, այնպես էլ հետազոտական կենտրոններ, կրթության ոլորտի առաջատար մասնագետներ ու փորձագետներ: Ակադեմիական ազնվության խախտման դրսևորումների ուսումնասիրման աշխատանքների արդյունքները հետազոտողների, ոլորտի մասնագետների և առհասարակ ակադեմիական հանրության շրջանում լուրջ մտահոգություններ են առաջացրել, քանի որ ակադեմիական ազնվության պահպանումը որպես կրթության որակի բարելավման կարևոր նախապայման դիտարկելու և այն որպես առաջնահերթություն սահմանելու հեռանկարը դեռևս մի շարք ՀՀ բուհերում չի հասունացել և ներբուհական որակի մշակույթի բաղադրիչ դեռևս չի դարձել: Ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրների լուծման ուղղությամբ առաջադրվել են տարբեր առաջարկություններ, սակայն տեսական և գործնական հարթակների էական խզումը դեռևս բուհերի կառավարիչների և մանկավարժագիտական գործունեություն ծավալող մասնագետների համար շարունակում է մնալ որպես արդիական հիմնախնդիր:

Ազգային և արտասահմանյան բուհերի գործունեության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ակադեմիական ազնվության դրսևորումներն էական իմաստային տարբերություններ չունեն, քանի որ դրանց հիմքում ընկած է էթիկայի համամարդկային այնպիսի սկզբունքների պահպանումը, ինչպիսիք են ազնվությունը, թափանցիկությունը, վստահությունը, հարգանքը, հավասարությունը, ճշմարտացիությունը և այլն [7]: Այդ սկզբունքների հիման վրա կենսագործունեության յուրաքանչյուր ոլորտում կամ համատեքստում մշակվում և ավելացվում են ազգային, պետական կամ հասարակության առանձնահատկություններն արտացոլող դրույթներ: Մանկավարժագիտության տեսանկյունից նույնպես այս սկզբունքների վրա են հիմնվում ուսումնական, կրթական ու դաստիարակչական բոլոր գործընթացները, և դրանք հավասարապես վերաբերում են ն՝ դասավանդողներին, և՛ ուսումնառողներին: Այդ սկզբունքների վրա են հիմնվում նաև մասնագիտական կրթության որակի ապահովման ժամանակակից մոտեցումները և առաջատար բուհերի կազմակերպական մշակույթի բարելավման ուղենիշներն ու ներքին կանոնակարգերը:

Միջազգային առաջատար փորձի վրա հիմնված ժամանակակից մոտեցումների համաձայն՝ բուհերն ակադեմիական ազնվությանն առնչվող կանոնակարգեր մշակելիս, մեր կարծիքով, պետք է հիմնվեն հետևյալ հիմնարար սկզբունքների վրա [9]՝

- հավասարություն, արդարություն և խտրականության բացակայություն,

- հաշվետվողականություն, հրապարակայնություն և անկախություն (ինքնավարություն),
- գիտահետազոտական գործունեության էթիկայի և ակադեմիական ազնվության կանոնների պահպանում,
- քննադատական վերլուծություն և այլոց տեսակետների նկատմամբ հարգանք,
- ուսումնական հաստատության արժեքների և ռեսուրսների պահպանման նկատմամբ պատասխանատվություն և հանձնառություն,
- գիտելիքի և տեղեկության ազատ ու բաց օգտագործում,
- միջազգային գործընկերների հետ բարիդրացիական հարաբերություններ և գործընկերների հանդեպ ազնիվ վերաբերմունք:

Բուհերում ակադեմիական ազնվության պահպանման վերաբերյալ քաղաքականության (ինստիտուցիոնալ ռազմավարություն և դրանից բխող մարտավարություններ, էթիկայի մշակված կանոններ, ընթացակարգեր, ուղեցույցներ և այլն) առկայությունը կարևոր նախապայման է ակադեմիական ամբողջականությունն ապահովելու և ակադեմիական անազնվության դեպքերը կանխելու համար: Ակադեմիական ամբողջականության կամ ներառականության ապահովումը ենթադրում է, որ ակադեմիական ազնվության մշակույթը ներառում է այդ մշակույթը ձևավորող բոլոր առանցքային շահակիցներին և ձևավորվում է վերջիններիս համագործակցությամբ [13, էջեր 180-183]: Կարևոր է նշել, որ մանկավարժական բազմաբնույթ գործունեության համատեքստում ակադեմիական ամբողջականությունը նաև բարձրագույն կրթության արդիականացման կարևոր սկզբունքներից է, քանի որ անձի ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացներն ընթանում են ամբողջական ու միասնական համակարգում՝ թելադրելով ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման ամբողջական մոտեցման կիրառում [4, էջ 6]: Շեշտադրելով դասավանդող-ուսումնառող ներգործության և համագործակցության կառուցողական բնույթի կարևորությունն ակադեմիական ազնվության ապահովման խնդրում՝ պետք է նշել, որ ուսումնական գործընթացում ակադեմիական բարենպաստ միջավայրի և ակադեմիական ազնվության պահպանումը խրախուսող դասավանդողների դերը որոշիչ է պայմանավորված նաև դասավանդող-ուսումնառող փոխադարձ կապի անմիջականությամբ: Ակադեմիական գործունեության շրջանակում մի կողմից ուսումնառողի՝ որպես առանցքային շահակցի ակադեմիական ազնվության պահպանման կանոններին հետևելու պարտավորության կատարումը, մյուս կողմից՝ դասավանդողի՝ որպես մանկավարժի և ուղղորդողի հանձնառությունն ակադեմիական ազնվության մշակույթը ներառական են դարձնում:

Դասավանդող-ուսումնառող փոխազդեցության ամրապնդման խնդրին բարձրագույն կրթության ոլորտի մասնագետներն ու մանկավարժներն անդրադառնում են ինչպես ուսումնառողներին, այնպես էլ դասավանդողներին առաջադրվող պահանջների կամ սկզբունքների պահպանման տեսանկյունից, որոնց համաձայն՝ ցանկացած դասավանդող պետք է [13, էջ 182]՝

- մեծ կարևորություն և նշանակություն տա ակադեմիական ազնվության պահպանման խնդրին.
 - քաջալերի ուսումնառողներին, որպեսզի նրանք հանձն առնեն ակադեմիական ազնվության պահպանման պարտավորությունը.
 - խրախուսի ուսումնառողների սերը դեպի ուսումնառություն.
 - խթանի լսարանում փոխվստահության մթնոլորտի ստեղծումն ու ամրապնդումը.
 - արդարացիորեն և անաչառորեն գնահատի ուսանողների գիտելիքները, ներուժն ու դրա դրսևորման կարողությունը.
 - հնարավորինս նվազեցնի ուսանողների կողմից ակադեմիական անազնվության դրսևորման հնարավորությունները.
 - ակադեմիական ազնվության խախտման դեպքում անպայման լուծում տա խնդրին:
- Այլոց մտավոր սեփականության և առհասարակ մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ հարգանքի դրսևորումը դիտվում է որպես անձի ինտեգրատիվ բնութագիր, որն արտահայտվում է անձի ճանաչողության (իրավունքի ու էթիկայի նորմերի պահպանման գիտելիքներ և իմացություն) և գործունեության (իրավունքի և էթիկայի նորմերի պահպանմանն ուղղված արարքներ կամ վարք) առանձնահատկություններով [14, էջ 77]: Նշված երկու հիմնական փոխկապակցված բաղադրիչների հավասարակշռման արդյունքում բարձրանում է ուսումնառողների՝ անաչառությանը և ակադեմիական ազնվության ապահովմանը նպաստող բարենպաստ միջավայր ստեղծելու պատասխանատվությունը: Ուսումնառողների ակադեմիական գործունեության տեսանկյունից հարկ է նշել, որ ակադեմիական ազնվության պահպանման վրա միջավայրի ազդեցությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես [12]՝
- որքանով է ակադեմիական ազնվությանն առնչվող կանոնակարգը կամ ուղեցույցը տվյալ բուհի կազմակերպական մշակույթի մաս կազմում,
 - որքան խիստ են ակադեմիական ազնվության պահպանման կանոններն ու դրանց խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցները,
 - որքանով է բուհի աշխատակազմը խրախուսում և աջակցում ուսումնառողներին,
 - ինչպիսի ակադեմիական միջավայրում են ընթանում ուսումնառության գործընթացները (փոխադարձ վստահության, անաչառության, մրցունակության աստիճանը, ուսանողակենտրոն մոտեցման կիրառման արդյունավետությունը և այլն),
 - ինչպես են դասավանդողներն արձագանքում ակադեմիական անազնվության դեպքերին,
 - ինչպես են համակուրսեցիները վերաբերվում ակադեմիական ազնվության կանոնները խախտող ուսումնառողին (օրինակ՝ գրագողություն կատարող ուսանողին),

- արդյոք ուսումնառողները իրենց համարում են տվյալ բուհի ակադեմիական հանրության լիարժեք անդամ և կրում են արդյոք այդ հանրությանն առաջադրված կանոնների պահպանման պատասխանատվությունը,

- արդյոք դասընթացներն անցկացվում են մեծ լսարանային պայմաններում և համապատասխան վերահսողության ներքո և այլն:

Բուհերում ակադեմիական անազնվության բարձր ցուցանիշների հիմքում ընկած ամենաընդհանուր պատճառներից են ուսումնառողների՝ ցածր գնահատական չստանալու և բարձր առաջադիմություն ցուցաբերելու ձգտումը և ծնողների, դասավանդողների ու համակուրսեցիների կողմից ճնշված լինելու վախը [8, 11]: Ի լրումն վերոնշյալ գործոնների, ՀՀ բուհերում առկա են նաև երբեմն ոչ ակնհայտ և խորքային պատճառներ, որոնք ըստ էության դժվարեցնում են բուհերում ակադեմիական անազնվության դեպքերը կանխելուն ուղղված գործողությունների իրականացումը: Մասնավորապես, հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ բուհերի բյուջեի մեծ մասը գոյանում է ուսման վարձերից, ուսանողների թվի ապահովումը դառնում է բուհերի առաջնային խնդիրներից մեկը: Հետևաբար, ՀՀ բուհերը երբեմն հակված են ուսման վարձ վճարող ուսանողների նկատմամբ հնարավորինս մեղմացնել պատժամիջոցների կիրառումը՝ կանխելով կամ նվազեցնելով ուսանողների բուհից դուրս մնալու հավանականությունը [5, էջեր 139-141]: Ուրեմն, բուհերի պետական ֆինանսավորման ցածր մակարդակը և առհասարակ ներբուհական ֆինանսական կառավարման մեխանիզմներն ու ոչ կայուն ֆինանսական ներհոսքերը նույնպես էական ազդեցություն ունեն բուհերում ակադեմիական ազնվության պահպանման և դրան առնչվող որոշումների կայացման վրա, թեև այդ գործոնների բացասական ազդեցությունը ոչ միշտ է անմիջապես ակնհայտ դառնում:

Ակադեմիական ազնվության պահպանումը և դրա խախտման դրսևորումները բուհական միջավայրում որոշակիացնելու նպատակով հարկ է առանձնացնել նաև մի քանի հիմնական հասկացություններ, որոնք բնորոշ են բոլոր բուհերի ակադեմիական և գիտահետազոտական գործունեություն ծավալող շահակիցների գործունեությանը: Կրթության համատեքստում *ակադեմիական ազնվությունը* լայն իմաստով կարելի է սահմանել որպես մի շարք այնպիսի սկզբունքների համալիր, որոնցից են էթիկայի համամարդկային արժեքների պահպանումն ու էթիկայի նորմերի կիրառումը, ազնիվ ձևով գիտական գիտելիքի ձեռքբերումը, օգտագործումն ու տարածումը, ակադեմիական բարենպաստ միջավայր ստեղծող և ակադեմիական ազատությունը խթանող վարքի դրսևորումն ու պահպանումն ուսումնական հաստատությունների հիմնական շահակիցների կողմից [7]: Ակադեմիական ազնվությունը նեղ իմաստով վարչարարության հիմնարար սկզբունքներից է, որը ենթադրում է կազմակերպությունների գործունեության շրջանակում ընդունված արժեքների, սկզբունքների ու նորմերի պահպանում և շարունակական կիրառում՝ դրանք հանրությանը լավագույնս ծառայեցնելու և հանրային շահերը պաշտպանելու համար: Ակադեմիական ազնվությունը հանրությանը որակյալ ու մատչելի կրթություն ապահովելն է, իսկ անհատի մակարդակով՝ ակադեմիական և էթիկայի նորմերի պահանջները բավարարելու պատրաստակա-

մությունը [5, էջ 26]: Ընդհանուր առմամբ, ակադեմիական ազնվությունը դիտվում է որպես նաև ուսումնական հաստատության առանցքային շահակիցների այնպիսի վարքի դրսևորում, որը դրական է ազդում կրթության համակարգի ու ակադեմիական միջավայրի արդյունավետության վրա և բարձրացնում է կրթության և ուսումնական հաստատության հանդեպ հանրային վստահությունը: Մասնավորապես արևմտյան երկրների բուհերում ակադեմիական ազնվության խախտման և առնչվող երևույթների ուսումնասիրություններից դուրս բերված ամենաշատ կիրառվող հասկացություններից են *խարդախությունը (cheating behavior)*, *ակադեմիական անբարեխիղճ վարքը (academic misconduct)*, *գրագողությունը (plagiarism)* [1, էջեր 2-7], *ակադեմիական ամբողջականության կամ ինտեգրատիվության (academic integrity) խախտումը* և այլն: Բարձրագույն կրթության համակարգում անազնվության հիմնական ձևերի կամ դրսևորումների շարքում դասվում են կոռուպցիան, կեղծ դիպլոմներ տալը, կրթության ոլորտի քաղաքականացված լինելը, գրագողությունը և ակադեմիական անազնվության այլ մասնավոր դեպքեր:

Թեև միջազգային համատեքստում ակադեմիական անազնվությունը տարբեր կերպ է սահմանվում, և դրա դրսևորումները՝ պայմանավորված կրթության ազգային համակարգերի ու հանրության ընկալումների առանձնահատկություններով, նույնպես տարբեր են, այդուամենայնիվ, այդ սահմանումներն ու դրսևորումներն ունեն համընդհանուր բնույթ և մինևույն հասկացական հենքը: Հետևապես, ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրը կարող է հավասարապես վերագրվել նաև ՀՀ բուհերի ուսումնական, կրթական ու գիտահետազոտական գործունեությանը:

Ակադեմիական ազնվությունը՝ որպես մտավոր սեփականության կրթության կազմակերպման ու կրթության որակի ապահովման կարևոր նախապայման, ինչպես նաև ակադեմիական մշակույթի անքակտելի բաղադրիչ, ներառում է ֆորմալ և ոչ ֆորմալ տարրեր: Ակադեմիական ազնվության ֆորմալ տարրերը բուհական համակարգում դրսևորվում են մտավոր սեփականության պահպանմանը (հատկապես հեղինակային իրավունքի պահպանմանը), ակադեմիական ազատությանն ու ազնվությանն առնչվող քաղաքականության որդեգրմամբ, դրանից բխող՝ ինստիտուցիոնալ մակարդակում կիրառվող կանոնակարգերի, ռազմավարությունների և ընթացակարգերի առկայությամբ [1, էջ 6], ինչպես նաև ակադեմիական անազնվության դեպքերի կանխարգելման մեխանիզմների, պատժամիջոցների և զսպման այլ լծակների արդյունավետ կիրառմամբ: Ֆորմալ տարրեր պարունակող ակադեմիական մշակույթի ամրապնդման ու բարելավման պարտադիր նախապայման է բարձրագույն կրթության ոլորտի ուղղակի և անուղղակի շահակիցների իրավահարաբերությունների հավասարակշռության ու համագործակցության ապահովումը: Ակադեմիական ազնվության ոչ ֆորմալ տարրեր կամ դրսևորումներ կարող են լինել, օրինակ, բուհերի ներքին շահակիցների, մասնավորապես դասախոսների, գիտաշխատողների և ուսումնառողների պատշաճ պատկերացումներն ակադեմիական ազնվության ու դրա դրսևորումների վերաբերյալ, հեղինակային իրավունքին առնչվող օրենսդրական դաշտի վե-

րաբերյալ նրանց իրազեկվածության բավարար կամ բարձր մակարդակը, ոչ ֆորմալ կամ լրացուցիչ դասընթացներին ու վերապատրաստումներին ուսումնառողների և դասավանդողների շարունակական մասնակցությունը և այլն: Ընդհանուր առմամբ, ակադեմիական ազնվությունն արտացոլում է և՛ ազգային կարգավորման մեխանիզմները (օրինակ՝ օրենսդրությունն ու համապատասխան օրենսդրական դրույթները), և՛ ուսումնական հաստատությունների արժեքներն ու նորմերը, որոնք կիրառվում են բուհերի դասախոսների և ուսումնառողների կողմից այս կամ այն վարքի դրսևորման ժամանակ [1, էջ 6]: Ակադեմիական ազնվության ֆորմալացումն ավելի վերահսկելի է դարձնում բուհական միջավայրում ակադեմիական անազնվության դեպքերի բացահայտումը և էապես նվազեցնում է գրագողության խնդրին կամայական կամ հատվածային լուծում տալու հավանականությունը: Ֆորմալացումը ենթադրում է բուհի կողմից մշակված ու առանցքային շահակիցների կողմից ընդունված հստակ քաղաքականության և դրանից բխող այնպիսի կանոնակարգերի ու ընթացակարգերի առկայություն, որոնց կիրառումը պարտադիր է բուհի վարչական ու պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնառողների համար [14, էջ 72]: Միննույն ժամանակ սա չի ենթադրում, որ բուհերի կողմից հստակ մշակված քաղաքականությունն ու ռազմավարությունների առկայությունը բոլոր դեպքերում և լիարժեքորեն ապահովում է նաև դրանց արդյունավետ կիրառումը գործնական դաշտում: Ավելին, չձևակերպված արժեքները, որոնք խորապես ամրապնդվել են տվյալ կազմակերպական մշակույթում, կարող են երբեմն ավելի ուժեղ ազդեցություն ունենալ բուհերի շահակիցների վարքի ու գործունեության վրա, քան հստակ ամրագրված ու հռչակված արժեքները [3, էջ 438]: Այդուհանդերձ, ակադեմիական ազնվության պահպանման մշակույթի ֆորմալացումն էապես կարող է ազդել ակադեմիական ազնվության պահպանման ոչ ֆորմալ տարրերի ձևավորման վրա՝ այդ գործընթացի մշակութայնացման վաղ փուլում նախ պարտադրելով ակադեմիական որոշակի վարքի կանոնների պահպանում բուհի ներքին շահակիցների կողմից, իսկ այնուհետև կայունացնելով և զարգացնելով այդ մշակույթով պայմանավորված արժեհամակարգը:

ՀՀ բուհերի գործունեության շրջանակում ակադեմիական անազնվությանն առնչվող ուսումնասիրություններ կատարած մասնագետների մի խումբ գտնում է, որ ակադեմիական ազնվության պահպանման կանոնների կամ սկզբունքների եզակի խախտումները չպետք է որակել որպես ինստիտուցիոնալ խնդիր, քանի որ ակադեմիական ազնվության խախտումը հատկորոշվում է վերջինիս համակարգային ու պարբերական բնույթով [5, էջ 28]: Այս դիրքորոշումը թերևս հիմնավորվում է նաև ակադեմիական ազնվության խախտումների բացասական ազդեցության լայն շրջանակով, այսինքն՝ խախտումը դառնում է էական, էթե այն զգալի ազդեցություն ունի բարձրագույն կրթության համակարգի հիմնական շահակիցների վրա: Մա ևս մեկ անգամ փաստում է ակադեմիական ազնվության՝ ակադեմիական մշակույթի և կրթության որակի համակարգի բաղկացուցիչ տարր հանդիսանալու հանգամանքն ու ներառական բնույթը: Մակայն մյուս կողմից, հատկապես ուսումնառողների շրջանում

ակադեմիական անպատշաճ վարքի անհատական դրսևորումների անտեսումը խնդրի զարգացման, այլ ուսումնառողներին այդ շրջանակում ընդգրկելու և ակադեմիական ազնվության դեպքերի մասսայականացման միտում կարող է առաջացնել՝ վտանգելով կրթության որակը և ուսումնառության գործընթացի արդյունավետությունը: Ավելին, մանկավարժական ավանդական և ժամանակակից մոտեցումները պահանջում են անձի մտավոր զարգացման ու դաստիարակության գործընթացներում առաջացող խնդիրներին անհատական մոտեցման ցուցաբերում, որը մի կողմից կամրապնդի ուսումնառողի մասնագիտական կարողությունները զարգացնելու ներունակությունը, մյուս կողմից կխթանի անձի գիտական աշխարհայացքի և մասնագիտական դիրքորոշումների ձևավորման ու զարգացման ճիշտ ընթացքը:

ՀՀ բուհերում ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրները և դրանց վերաբերյալ ակադեմիական հանրության պատշաճ ընկալումների ձևավորումը հաճախ են ուսումնասիրության ենթարկվել ազգային ակադեմիական հանրության ու ոլորտի մասնագետների կողմից: ՀՀ-ում ակադեմիական ազնվության դրսևորումները խոչընդոտող դրոշմապատճառները տարաբնույթ են և հիմնականում արմատացած: Ակադեմիական ազնվության խախտմանն առնչվող խնդիրների արդյունավետ գործնական քայլերի կիրառման անհրաժեշտությունը հատկապես ակներև դարձավ Բոլոնիայի գործընթացին ՀՀ-ի ինտեգրմամբ (2005թ.), որով սկիզբ դրվեց ՀՀ-ում բարձրագույն կրթության կառուցվածքային բարեփոխումների շրջադարձային փուլի [2, էջեր 32-33]: Բոլոնիայի գործընթացին ՀՀ անդամակցությամբ պայմանավորված բարեփոխումների շրջադարձային փուլը ՀՀ-ին պարտավորեցրեց ձեռնամուխ լինել բարձրագույն կրթության ոլորտում համակարգային վերափոխումներին, համապատասխանել միջազգային չափանիշներին, առաջնահերթությունը տալ մատուցվող կրթության որակի ու արդյունավետության ապահովմանը և խթանել ակադեմիական ազնվության սկզբունքների արմատավորումն ազգային մակարդակում: Ուստի, բարձրագույն կրթության որակի ապահովման կարևոր բաղադրիչ հանդիսացող ակադեմիական ազնվության ամրապնդման վերաարժևորման խնդիրը ստեղծեց լուծման առավել արդյունավետ ուղիների որոնման անհրաժեշտություն:

Կրթության կառավարման և գիտամանկավարժական տեսանկյուններից ՀՀ բարձրագույն կրթության համակարգում ակադեմիական ազնվության խնդրի և կրթության որակի ապահովման միջև կապի սերտացման անհրաժեշտությունը հիմնավորվում է մի շարք արդի խնդիրներով, որոնցից են [6, էջեր 15-21].

- դասավանդողների և ուսումնառողների ստեղծագործական ներուժի իրացման ցածր մակարդակը.
- ուսումնական գործընթացի արդյունքների գնահատման գիտամեթոդական հիմունքների մշակվածության ոչ բավարար մակարդակը.
- ուսումնական գործընթացի յուրաքանչյուր մասնակցի ստեղծագործական ունակությունների բացահայտման հնարավորությունների ըն-

ձեռնման և դրա կառավարման ձևերի ներդրման ոչ բարձր արդյունավետությունը.

– մանկավարժական տեխնոլոգիաների մշակվածության և ներդրման ոչ բավարար մակարդակը.

– ուսումնառողների և շրջանավարտների մասնագիտական իրազեկություններին ուղղված մանկավարժական ու տեղեկատվական տեխնոլոգիաների մշակվածության ոչ բավարար մակարդակը.

– բուհերի մանկավարժական և գիտամանկավարժական կադրերին ներկայացվող պահանջների բարձր մակարդակը և նրանց մասնագիտական ոչ բավարար որակները.

– ուսումնական գործընթացների որակի ապահովման խնդիրներին առնչվող հիմնարար գիտական հետազոտությունների սակավությունը կամ բացակայությունը և ուսանողների գնահատման մանկավարժական մեթոդների մշակվածության ոչ բավարար աստիճանը:

Բուհերում ակադեմիական ազնվության պահպանման կանոնների ձևավորման, պահպանման, տարածման և վերահսկման գործընթացների արդյունավետությունն անմիջականորեն պայմանավորված է որոշակի գործոնների ազդեցությամբ, որոնք հիմնականում լինում են անհատական և համատեքստային կամ միջավայրային: Անհատական գործոններից են ուսումնառողի սեռը, տարիքը, միջին որակական գնահատականը, արտալսարանային աշխատանքներում ներգրավվածությունը և այլն: Միջավայրային գործոններից են ակադեմիական անազնվության վարքի խմբային դրսևորումները, ուսանողների խմբի կողմից ակադեմիական անազնվության դատապարտումը, ակադեմիական անազնվության դեպքերի կանխարգելման միջոցների կամ պատիժների ընդունելի խստությունը և այլն: Մասնագիտական ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ միջավայրային կամ համատեքստային գործոններն ավելի մեծ ազդեցություն ունեն ակադեմիական անազնվության դրսևորումների վրա, քան անհատական գործոնները [10, 12]: Սա ևս մեկ անգամ շեշտադրում է ակադեմիական ազնվության՝ որպես ակադեմիական մշակույթի ներառական բնույթը, որը ենթադրում է ոչ թե անհատ ուսումնառողների ու դասավանդողների, այլ բուհի շահակիցների զգալի մասի կողմից ազնվության կանոնների պահպանում և հետևողականության ցուցաբերում: Միջավայրային գործոնների մեծ ազդեցությունը պայմանավորված է նաև ակադեմիական ազնվության (որպես ակադեմիական մշակույթի) ֆորմալ տարրերի առկայությամբ, քանի որ բուհի կողմից մշակված ֆորմալ քաղաքականությունը, դրանից բխող ռազմավարությունները, ընթացակարգերը, ներքին կանոնակարգերը և ուղեցույցներն ինստիտուցիոնալ մակարդակով վերահսկելի են դարձնում ակադեմիական անազնվության դեպքերը՝ էապես նվազեցնելով դրանց կամայական և ոչ լիարժեք լուծում տալու հնարավորությունները:

Ակադեմիական ազնվության պարբերական խախտման դեպքերը կործանարար ազդեցություն ունեն ոչ միայն այն պատճառով, որ դրանք այլոց իրավունքների, ներառյալ մտավոր սեփականության իրավունքների (ակադեմիական համատեքստում՝ հատկապես հեղինակային իրավունքի) ոտնահա-

րում են համարվում, այլ նաև այն պատճառով, որ դրանց պարբերական բնույթն ակադեմիական անընդունելի վարքի մշակութայնացման միտում է ստեղծում՝ լայն առումով խոչընդոտելով գիտելիքահենք հասարակության առաջընթացն ու միջազգային հարթակում մրցունակ կադրերի պատրաստումը և խաթարելով ինստիտուցիոնալ մակարդակում մտավոր սեփականության կրթության կազմակերպման հիմքերը, իսկ նեղ իմաստով՝ ակադեմիական ոչ պատշաճ վարք դրսևորող անձի մտավոր, ստեղծագործական և մասնագիտական արդյունավետ գործունեության զարգացումը: Բացի այդ, գիտական մոտեցումների կիրառմամբ և ակադեմիական գրագիտության կանոնների պահպանմամբ գիտելիքի ձեռքբերումը, օգտագործումը և նոր գիտելիքի ստեղծումն ուսումնառողների մեջ դաստիարակում են մի շարք այնպիսի կարևոր անձնական ու մասնագիտական որակներ, ինչպիսիք են ազնվությունը, պատասխանատվության զգացումը, այլոց իրավունքների նկատմամբ հարգանքի դրսևորումը, վերլուծական-քննադատական մտքի զարգացումը, գիտելիքի պատշաճ յուրացումը, ուսումնառության ընթացքում տեղեկույթի արդյունավետ օգտագործումը, գիտելիքի ձեռքբերման պատշաճ ձևերի և ըստ ունակությունների ու կարողությունների՝ ուսումնառության սեփական մեթոդների մշակումը և այլն:

Այսպիսով, ակադեմիական ազնվության պահպանման հիմնահարցը պահանջում է համալիր մոտեցում, որը ներառում է համամարդկային սկզբունքների, ազգային օրենսդրական համապատասխան դրույթների և միջազգային չափանիշների պահպանումը, բուհերի հստակ քաղաքականության ու դիրքորոշման կիրառումն իրենց հիմնական շահակիցների կողմից ակադեմիական ազնվության պահպանման և դրա խախտման դեպքերի կարգավորման նկատմամբ, դասավանդող-ուսումնառող համագործակցության արդյունավետության ապահովումը, ուսուցման այլընտրանքային մոտեցումների և մանկավարժական արդի մեթոդների կիրառումը, կազմակերպության ներքին մշակույթի ֆորմալ և ոչ ֆորմալ տարրերի արդյունավետ համադրումն ու հավասարակշռումը, կրթության բովանդակության և ուսումնառության ձևերի շարունակական բարելավումը, օրինակելի ակադեմիական վարքի արմատավորումն ու արժեհամակարգի ամրապնդումը: Ակնհայտ է դառնում, որ ակադեմիական բարենպաստ միջավայրի ապահովումն ու ակադեմիական ազնվության պահպանումը թելադրում են մի կողմից պետական և ինստիտուցիոնալ (բուհական) մակարդակներում առկա խթանիչ լծակների գործադրում, մյուս կողմից՝ բուհի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնառողների այնպիսի օրինակելի ակադեմիական վարքի դրսևորումներ, որոնք կհավասարակշռեն անձի համակողմանի զարգացումն ու մասնագիտական որակների ձեռքբերումը և ինստիտուցիոնալ զարգացմանն ուղղված գործընթացները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Անտոյան Զ.**, Ակադեմիական անազնվության դրսևորումները ՀՀ բուհական համակարգում: Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան, 2013, <http://www.osf.am/wp-content/uploads/2013/12/Kristine-Antoyan-policy-paper.pdf> (10.05.2017):

2. Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում: Զեկույց, Երևան, Փրինթինգոն, 2012, https://erasmusplus.am/home/wpcontent/uploads/2017/03/Bologna-Reforms-in-Armenia_Report_20121.pdf (04.01.2018):
3. **Խաչատրյան Ռ., Կարաբեկյան Ս., Բուդաղյան Ա., Պասպյան Ա.** և ուրիշներ, Մարդկային ռեսուրսների կառավարումը բարձրագույն ուսումնական հաստատություններում: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Լինգվա, 2015:
4. **Հարությունյան Ն., Գրիգորյան Ա.,** Կրթության զարգացման և որակավորման խնդիրները // Մանկավարժական միտք (1-2), Տաթև գիտակրթական համալիր, 5-11, 2013, [http://www.zangak.am/pdf/mankavarj-2013\(1-2\).pdf](http://www.zangak.am/pdf/mankavarj-2013(1-2).pdf) (15.01.2018):
5. **Միլվանովիչ Մ.** (համահեղինակներ՝ Մեներիկ Ի., Ավետիսյան Մ., Խավանսկա Տ.), Կոռուպցիայի դեմ պայքարը և բարեվարքության արմատավորումը Հայաստանի կրթական ոլորտում, 2015, http://www.osf.am/wp-content/uploads/2016/01/Integrity-report_final_arm_12.11.2015.pdf (15.12.2017):
6. **Պետրոսյան Հ.,** Մասնագիտական կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման մանկավարժական տեխնոլոգիաներ (տեսություն և պրակտիկա): Մենագրություն, Երևան, «ԱՆ-ՋՈՆ» հրատ., 2010:
7. **Սմիթ Յ.,** Բարձրագույն ուսումնական հաստատություններում (բուհ-եր) դերակատարների էթիկայի կանոնագիրք, Եվրոպայի Խորհրդի «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգերում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագիր, 2016, http://ysu.am/uploaded/CodesofEthics_IanSmith_ARM_01.30.2016.pdf (28.11.2017):
8. **Crown, D. F. & Spiller, M. S.** (1998). Learning from the Literature: A Review of Empirical Research. *Journal of Business Ethics*, 17, 683-700.
9. International Association of Universities (2012). Observatory Magna Charta Universitatum, IAU-MCO Guidelines for an Institutional Code of Ethics in Higher Education: https://www.iau-aiu.net/IMG/pdf/ethics_guidelines_finaldef_08.02.13.pdf (03.03.2017).
10. **McCabe, D. L. & Trevino, L. K.** (1993). Academic Dishonesty: Honor Codes and Other Contextual Influences. *Journal of Higher Education*, 64(5), 522-538.
11. **McCabe, D. L. & Trevino, L. K.** (2002). Honesty and Honor Codes. Washington: *Academe*, 88(1), 37- 41.
12. **McCabe, D. L. & Trevino, L. K.** (1997). Individual and Contextual Influences on Academic Dishonesty: A Multicampus Investigation. *Research in Higher Education*, 38(3), 379-396.
13. **Scanlan C. L.** (2006). Strategies to Promote a Climate of Academic Integrity and Minimize Student Cheating and Plagiarism. NJ.: *Journal of Allied Health*, 35(3), 179-185.
14. **Самохвалова Е.** Управление интеллектуальной собственностью вуза. Высшее образование в России // Научно-педагогический журнал Министерства образования и науки Российской Федерации. Н11/07.с. 72-77

ГАЙК ПЕТРОСЯН

Երևանский государственный университет языков и социальных наук
им. В. Я. Брюсова, кафедра педагогики и методики преподавания языков,
Доктор педагогических наук,
профессор

АНИ ШАГИНЯН

Ереванский государственный университет языков и социальных наук
им. В. Я. Брюсова, преподаватель и соискатель кафедры управления и планирования
образования, координатор центра обеспечения качества и реформ

**ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ АКАДЕМИЧЕСКОЙ ЧЕСТНОСТИ
И ПЕДАГОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ИХ РЕШЕНИЮ В ВЫСШИХ УЧЕБНЫХ
ЗАВЕДЕНИЯХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

В статье рассматриваются основные вопросы обеспечения академической интеграции (целостности), академической честности, выявления академической нечестности и педагогические подходы к их решению в высших учебных заведениях Республики Армения. Вопросы, связанные с обеспечением академической честности, в данной статье рассматриваются в контексте важности взаимодействия студентов и преподавателей в образовательных процессах, академического поведения основных стейкхолдеров вуза, обеспечения качества образования и приобщения к культуре академической честности в вузах.

HAՅԿ PETROSYAN

Yerevan Brusov State University of Languages and Social Sciences
Chair of Pedagogy and Language Teaching Methodology,
Doctor of Pedagogical Sciences, Professor

ANI SHAHINYAN

Yerevan Brusov State University of Languages and Social Sciences
Center for Quality Assurance and Reforms, Coordinator
Chair on Education Management and Planning, Lecturer, Applicant

**PROBLEMS OF ACADEMIC HONESTY ASSURANCE AND PEDAGOGICAL APPROACHES
TO THEIR SOLUTIONS AT RA HIGHER EDUCATION INSTITUTIONS**

The current article touches upon the core problems of academic integrity, academic honesty, manifestations of academic dishonesty and pedagogical solutions to the problems at higher education institutions of the Republic of Armenia (RA HEIs). The article especially elaborates on the importance of student-teacher interaction in educational process, enhancement of decent academic behavior of main stakeholders of HEIs, assurance of education quality as well as "culturalization" of academic honesty at RA HEIs.

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երևանի պետական համալսարան, ռումանագերմանական Ֆակուլտետ,
անգլերեն լեզվի և գրականության ամբիոն, հայցորդ

**ՄԵԴԻԱԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԱՆՀԱՏԻ
ՄԵԴԻԱԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ**

Մեդիաիրազեկության խնդիրը արդեն երկար ժամանակ է բավականին խորը հիմք ունի արևմուտքի զարգացող երկրներում և ավելի արդիական է դառնում մեր երկրում: Հաջողված աշխատանքի համար քիչ է ունենալ միայն զարգացած տեխնոլոգիաներ, անհրաժեշտ է նաև սովորեցնել մարդկանց աշխատել դրանց հետ, օգտագործել պրակտիկայում և ստեղծագործ ձևով օգտա-

գործել ստացված տեղեկատվությունը: Հոդվածում ներկայացված է «Մեդիաիրազեկություն» եզրույթի բնութագիրը, անհատի մեդիաիրազեկության զարգացման հնարավորությունները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ մեդիաիրազեկություն, մեդիակրթություն, մեդիաիրազեկության տեսական հիմքեր, անհատի մեդիաիրազեկության զարգացում.

21-րդ դարում գիտահետազոտական սրընթաց զարգացման, գլոբալիզացիայի և միջազգայնացման, դասավանդման նոր տեխնոլոգիաների, մուլտիմեդիական կրթական մոդելների կիրառման պայմաններում առաջանում է համընդհանուր տարածք, այն է՝ նոր կրթական միջավայր ստեղծելու պահանջ:

Միջազգայնացման և համաշխարհային քաղաքակրթության մասնիկ կազմելն, անհրաժեշտություն են դարձել մարդկային գործունեության բազմաթիվ ոլորտներում անձնակենտրոն, ինքնուրույն, ստեղծագործական, քննադատական մտածողության զարգացման և կրթական գործընթացներ կազմակերպելու համար:

Տեղեկատվական տեխնոլոգիաների, հեռահաղորդակցական միջոցների, մեդիայի նման կայծակնային զարգացումն ենթադրում է ուսուցման դրվածքի և բովանդակության վերանայում: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը այժմ թևակոխում է նոր դարաշրջան, հաշվի առնելով համաշխարհային կրթական միտումները, ՀՀ-ը 2005թ.-ից միացել է Բոլոնիայի գործընթացին, որն ակնկալում է մի շարք բարեփոխումներ, այդ թվում ուսուցումը դարձնել ավելի հասանելի հանրությանը: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների, հեռահաղորդակցության միջոցների կիրառումը հեռավար ուսուցման գործընթացում հնարավորություն է տալիս դուրս գալ լսարանային նեղ շրջանակներից և կապ ստեղծել դասավանդողի (դասախոսի) և սովորողի (ուսանողի) միջև, ինչպես նաև հաղորդել տեղեկատվություն՝ էլ-փոստի, հեռաֆաքսի, աուդիոկոնֆերանսի, համակարգչային կոնֆերանսի, տեսկոնֆերանսի և այլոց միջոցով:

Այսօր, նորագույն հեռավար տեխնոլոգիաների հնարավորություններն ավելի ու ավելի են մեծանում, նոր սերունդն ձգտում է ստանալ որակյալ կրթություն տանից, ինչպես նաև անընդմեջ աճող ֆինանսական դժվարություններն, որն ունի բարձրագույն կրթական համակարգն, մեզ ստիպում է վերադառնալ հեռավար ուսուցման տեսակի ընդլայնման: Բարձրագույն ուսուցման այս ձևն համարվում է անփոխարինելի մարդկանց համար, ովքեր ստիպված են համատեղել ուսումն աշխատանքի հետ: Առանց որևէ կասկածի հեռավար ուսուցումն ունի ինքնուրույն գոյատևման իրավունք:

21-րդ դարում մասմեդիայի տարածած տեղեկատվությունը հասկանալն ու ճիշտ օգտագործելը համարվում է գրագիտության աստիճան: Սահմանելով «Մեդիաիրազեկություն» եզրույթը նեղ և լայն իմաստներով, անհրաժեշտ է առանձնացնել մեդիաիրազեկության հետևյալ բնութագիրը՝ «մեդիաիրազեկությունը, տեղեկատվությունը վերլուծելու և ըստ պահանջի կիրառելու ունակությունն է: Այն նպաստում է ուսանողների ստեղծագործական, քննադատա-

կան մտածողության զարգացմանը: Առաջին հերթին մեդիաիրազեկությունը նկարագրում է ընդհանուր ունակություն, որը կապված է մեդիայի բոլոր տեսակների հետ, այնպիսիք ինչպիսին է կարողությունը ճիշտ ուղղորդվելու մեդիա ոլորտում: Հիմնական գաղափարը կոմպետենտ մտեցման կայանում է նրանում, որ գլխավոր արդյունքը կրթության ոչ թե առանձին գիտելիքներն, կարողություններն ու հմտություններն են, այլ մարդու արդյունավետ և բեղմնավոր գործունեության կարողությունները տարբեր նշանակալի իրավիճակներում: Այս մտեցումն ենթադրում է մարդու պահանջների ձևավորում, գիտելիքների անըդմեջ համալրում ու թարմացում, հմտությունների և կարողությունների կատարելագործում, դրանց ամրապնդումն ու վերածումը կոմպետենցիայի, որոնք ձևավորվում են գործունեության ընթացքում, հանուն հետագա մասնագիտական գործունեության: Այսօր, գոյություն ունեն բազմաթիվ տերմիններ կապված մեդիաիրազեկության հետ, դրանք են՝ մեդիակոմպետենտություն, մեդիաիրազեկություն, մեդիագիտություն, մեդիակրթություն և այլն, սակայն բոլորն էլ տարբեր ուսումնասիրություններում օգտագործվում են որպես հոմանիշներ: Այսպիսով, հնարավոր է մեդիաիրազեկությունը դիտարկել, որպես կրթության կարևորագույն, պրոֆեսիոնալ գործունեության, մասնագետի անհատական ինտերակտիվ որակի, տեղեկատվության հետ աշխատելու կարողության մի մաս, որը իր մեջ կնդգրկի տեղեկատվության որոնումը, հավաքագրումը, մեդիա լեզվի, մեդիատեղեկատվության համապատասխան գնահատումը, վերլուծումը, վերարտադրումն ու մեդիահաղորդակցությունը փոխանցելու կարողությունը:

Մեդիաիրազեկության զարգացման գործընթացում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև անհատի մեդիաիրազեկության դասակարգմանը, առանձնացված ամերիկացի մեդիաուսուցիչներ՝ Ս. Ջ. Բարանի, Վ. Վեբերի, Ը. Կյուբի, Ջ. Պոտերի, Ն. Ի. Գենդինի կողմից.

- Ունակություն և պատրաստակամություն ջանք թափելու մեդիատեքստի բովանդակությունը ընկալելի և հասկանալի դարձնելու համար,
- Ունակություն տարանջատելու էմոցիոնալ և փաստարկված արձագանքն ընկալման ժամանակ, որպեսզի համապատասխանաբար ձևով գործել,
- Մեդիատեքստի բովանդակության վերաբերյալ կոմպետենտ մտածողության զարգացումը,
- Ժանրերի պայմանական գիտելիքն և ունակություն տարանջատելու դրանց սինթեզը (մեկտեղումը),
- Մեդիատեքստի մասին քննադատական մտածելու ունակությունն, անկախ այն բանից, թե որքան ազդեցիկ են դրանց աղբյուրները,
- Մեփական մեդիատեքստի մշակում, հաշվի առնելով ստեղծագործ հնարավորությունները, տնտեսական, քաղաքական, տեխնիկական, սոցիալական պայմանները, որոնք կապված են մեդիա ապրանքի հետ:

Այսպիսով, ժամանակակից տեղեկատվական հանրության մեջ ցանկացած ոլորտի մասնագետի համար տեղեկատվական տեխնոլոգիաների հետ շփման և մեդիա ոլորտի մասին գիտելիքը համարվում է առաջնային կոմպետենցիաներից: Ինչպես փորձը ցույց է տալիս, գործատուն աշխատանքի ընդուն-

ման ժամանակ առավել ուշադրություն է դարձնում, ոչ միայն փաստացի/ֆորմալ բնույթի մասնակիցներին՝ դիպլոմի գնահատական, ռեզյումեում տվյալներ, երաշխավորագիր, աշխատանքային փորձ և այլն, այլև մասնագիտական կոմպլետենցիաների ձևավորմանը: Հետևաբար, գիտելիքը անհատի մեդիաիրազեկության ձևավորման և զարգացման մասին արդիական է և կիրառելի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Baran, S.J.** (2002). Introduction to Mass Communication. Boston, New York: McGraw Hill, pp 57-58
2. **Dabrowska, A.J.** (2013). Digital future Media and Art Information Literacy Competencies Catalogue, Warsaw: The Modern Poland Foundation, p.19
3. **Veber, V.** (2002). Media Literacy portfolio. Information Science and Education, № 1 p.41-45
4. **Potter, W.J.** (2001). Media Literacy. Thousand Oaks, London: Sage Publication, p. 18
5. **Саникова, С.В. Письменный Е.В.** Ключевые компетенции личности в контексте болонского процесса.- ЧГПУ, ЧЮИМВД ПЭ РФ, УДК 378.1 ББК 4484(0)
6. **Мастерман Л.** Обучение языку средств массовой информации.-1993- с. 22-23, 31-32
7. **Федоров А.В.** Развитие медиакомпетентности и критического мышления студентов педагогического вуза. -М.: Изд-во МОО ВППЮНЕСКО «Информация для всех», 2007
8. <https://cyberleninka.ru/article/v/mediakompetentnost-i-elektronnoe-obuchenie-problemy-zadachi-puti-resheniya>
9. [file:///C:/Users/USER_1/Desktop/Book%202015%20%D0%A4%D0%B5%D0%B4%D0%BE%D1%80%D0%BE%D0%B2%20Textbook%20ME%20HistoryTheory%20US%20\(1\).pdf](file:///C:/Users/USER_1/Desktop/Book%202015%20%D0%A4%D0%B5%D0%B4%D0%BE%D1%80%D0%BE%D0%B2%20Textbook%20ME%20HistoryTheory%20US%20(1).pdf)

МАРГАРИТА ПЕТРОСЯН

Ереванский государственный университет,
романо-германский факультет, кафедра английского языка и литературы,
соискатель

ТЕОРЕТИЧЕСКИЕ ОСНОВЫ МЕДИАКОМПЕТЕНТНОСТИ И РАЗВИТИЕ МЕДИАКОМПЕТЕНТНОСТИ ЛИЧНОСТИ

Проблема медиаобразования имеет глубокие корни для развивающихся стран на Западе и становится все более актуальной в нашей стране. Для успешной работы недостаточно иметь только современные технологии, важно также научить людей работать с ними, использовать на практике и использовать креативно полученную информацию. В статье представлено описание термина «медиакомпетентность», возможности развития медиакомпетентности личности.

MARGARITA PETROSYAN

Yerevan State University, The faculty of Romance and Germanic Philology,
Chair of English Philology, Applicant

THORETICAL BASES OF MEDIA COMPETENCY AND ITS DEVELOPMENT IN AN INDIVIDUAL

The problem of media competency has deep roots in eastern developing countries and it becomes more and more up-to-date in our country. For successful work it is not enough to

have only modern technologies, it is also important to teach people to work with them, to use them in practice and creatively use the received information. The article presents the definition of the term “Media competency”, the development possibilities of media competency in individuals.

ԼՈՒՄԻՆԵ ՄԱՐՈՒՔՅԱՆ

Հովհ. Թումանյանի անվան Վանաձորի պետական համալսարանի
մանկավարժության ամբիոնի ասիստենտ,
մանկավարժական գիտությունների թեկնածու

ԲԱՐՈՑԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԿՈՆՖՈՒՑԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ



Հողվածում վերլուծության է ենթարկվել Կոնֆուցիոսի բարոյական սկզբունքները: Շեշտվում է կոնֆուցիականության արժեհամակարգի հիմնարար դաստիարակչական առանձնահատկությունը՝ օրինակով դաստիարակելը: Մարդկանց վարքը կարգավորող նորմերի, սկզբունքների և կանոնների ամբողջությունը բարոյականությունն է համարվում, որն էլ փոփոխում է մադկային հասարակությունը: Թեև բարոյական դաստիարակությունը ի կարելի դիտել որպես հատուկ դաստիարակչական գործընթաց, սակայն լինելով գիտակցական ոլորտ, բարոյական օրենքները մարդկանց վարքը կարգավորելու գործառույթ են կատարում:

Այսպիսով, բարոյական մշակույթը, որպես մարդկության գործունեության արդյունք, դառնում է մարդու հոգեկանի և հասարակության մեջ նրա ինքնաիրացման գործընթաց: Այսօր էլ դաստիարակությունը կարելի և ճիշտ է խթանել օրինակով:

Հանգուցային բառեր. *Կոնֆուցիականություն, օրինակով դաստիարակություն, արժեհամակարգ, վարքականոն, բարոյական մշակույթ, հասարակական գիտակցություն:*

Կոնֆուցիոսի անունը Չինաստանի հոգևոր և մշակութային միասնության խորհրդանիշն է, թեև կենդանության օրոք նա հաջողություններ չունեցավ: Մահվանից միայն հարյուրամյակներ հետո նրա ուսմունքը գաղափարախոսական իխշող ուղղություն դարձավ Չինաստանում: Բնականաբար կոնֆուցիականության սկզբնավորումը նույնպես կապվում է նրա անվան հետ:

Նա Չինաստանի առաջին մեծ մտածողն է, հին հույն փիլիսոփաներՊյութագորասի (շուրջ 580-500 թթ. մթա) և Հերակլիտի (544-483թթ. մթա) ժամանակակիցը:

Կոնֆուցիոսի հավաստի կենսագրությունը չկա: Նրա ամենահայտնի կենսագիր Սի-մա-Ցիան, որը պատմագրության մեջ ճանաչված է որպես չինական Հերոդոտ, նրա ամբողջական կենսագրությունը գրել է առաջին դարում, այսինքն Կոնֆուցիոսի մահվանից ավելի քան չորս հարյուր տարի հետո: Ուստի այդ կենսագրության մեջ այսօր դժվար է իրարից զանազանել իրական ու առասպելական փաստերը:

«Մարդը ծնվում է առաքինի կամ սրիկա», «Ուրեմն դաստիարակության ուժն ու հնարավորությունները մարդու՝ ինչպես մտավոր, այնպես էլ բարոյական զարգացման գործում խիստ սահմանափակ են»: Այս երկու գաղափարները հանգուցալուծումներ չեն, այլ դեպի նույն նպատակը տանող ուղիներ: Այս երկու ուղիներն էլ տարբեր կողմերից մեզ տանում են Հին Չինաստան:

«Բոլոր մարդիկ մոտ են իրար իրենց բնությամբ, իսկ իրարից հեռանում են դաստիարակության ընթացքում» [2, էջ 26],- ասում է Կոնֆուցիոսը: Մակայն Կոնֆուցիոսը մարդկանց բաժանում է «ազնիվների» և «ստորիների», և անգամ երկինքը դա փոխել չի կարող:

Հին չինական գաղափարախոսության պատմության մեջ կարևոր տեղ է զբաղում կոնֆուցիականության բարոյաքաղաքական ուսմունքը, որի հիմնադիրը եղել է Կոնֆուցիոսը (մ.թ.ա. 551-479): Նա լուրջ ավանդ է ներդրել չինական մշակույթի զարգացման մեջ: Նրանից է շարունակվում մտքի աննախադեպ ծաղկման ժամանակաշրջանը Չինաստանում: Շրջելով ողջ Չինաստանով՝ իր մտքերն ու գիտելիքները, փիլիսոփայությունն ու ուսմունքը փոխանցում էր իր աշակերտներին: Նա քարոզում էր մարդկայնություն ու բարոյականություն, սեր և գիտելիք [1; էջ 24-25]:

Կողմնակից էր ավանդական կրոնական գաղափարներին, որոնց համաձայն երկինքը, որպես գերագույն աստվածություն, մարդուն թելադրում է իր կամքը:

Կոնֆուցիոսի փիլիսոփայության կենտրոնում դաստիարակության խնդիրն է՝ «Ուսմունքն առանց խորհրդածության անօգուտ է, իսկ խորհրդածությունն առանց ուսմունքի դատարկ բան է»:

Կոնֆուցիոսի փիլիսոփայության մեջ մարդը, նրա բարոյական կատարելագործումը և դաստիարակությունը հասարակության կառավարման հիմնախնդիրներից կարևոր տեղ են զբաղեցնում: Նա գտնում է, որ վարչաիրամա-

յական կառավարումը անընդունելի է ու անբարո: Հասարակության կառավարման հիմնական ձևը բարոյական օրենքներով ու սովորույթներով կառավարումն է: Նրա կարծիքով «Յուրաքանչյուր մարդ պետք է զբաղեցնի երկնքի կողմից սահմանված իր տեղը, տիրակալը միշտ պետք է տիրակալ լինի, ծառան՝ ծառա, հայրը՝ հայր, որդին՝ որդի: Եթե ժողովրդի մեջ անբավարար է հավատը տիրակալի և նրա մերձավորների նկատմամբ, ապա պետությունը կայուն լինել չի կարող: Ամեն մարդ պիտի իր գործը իմանա, կատարի այն, ինչը ամենից լավ գիտի»: Դրա համար անհրաժեշտ է ղեկավարման ուղեցույց վերցնել հներից եկած ավանդույթները, կարգուկանոնը և հավատալ դրանց:

Ինչպես նշում է Կոնֆուցիոսը. «Բարձրագույն գիտելիքը բնածին գիտելիքն է, ցածրը՝ իմաստունների ձեռք բերածը, իսկ ամենաստորինը՝ դժվարությունների հաղթահարման արդյունքում ձեռքբերված գիտելիքը»:

Կոնֆուցիականությունը բոլոր ժամանակներում արժեքային դարձավ և մտավ հասարակական կյանքի տարբեր ոլորտներ. *կորպորատիվ կառավարման համակարգում կոնֆուցիականությունը բարձրարժեք մակարդակ է, մանկավարժության մեջ այն բարոյահոգեբանական արժեք է և ունի հաղորդակցական գործառույթ* [3; էջ 34-35]:

Փիլիսոփայության մեջ կոնֆուցիականությունը նախորդել է Արիստոտելին՝ իր «ոսկե միջինով», Սոկրատեսին՝ «Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ» իր հետևյալ փիլիսոփայությամբ. «Մարդը պետք է ասի և սովորեցնի այն, ինչ ինքը գիտի, իսկ եթե դեռ չգիտի, պետք է խոստովանի, որ չգիտի»:

Իսկ մեր թվականության 10-13-րդ դարերում կոնֆուցիականությունը նոր փուլ ապրում՝ հանձին գաղափարի նորացման: Այդ ժամանակաշրջանում մշակվեց *ուսմունքի գոյաբանական կարգավիճակը՝ ուսմունքը ճանաչողության և մարդու բնույթի մասին*:

Կոնֆուցիոսի համար դաստիարակությունը ամենից առաջ օրինակով դաստիարակելն է, այն թեև պասիվ, համր դաստիարակություն է, բայց ավելի խոսուն ու հզոր: «Կառավարեք ժողովրդին արժանապատվությամբ, և նա կլինի հնազանդ: Երբ դուք ինքներդ դրա օրինակը տաք, նա կլինի հավատարիմ»:

Կոնֆուցիականությունը իրեն հաստատել է բոլոր ժամանակներում, այն օժտված է առաջադիմական կողմերով և կարող է ժամանակակից հնչեղություն ստանալ [4; էջ 216]: Բոլոր ժամանակների համար արդիաշունչ է. «կառավարել նշանակում է բարի գործ կատարել և յուրաքանչյուր մարդու, պետության մեջ տալ այն տեղը, որին նա արժանի է»: Բոլոր ժամանակներում բարձրարժեք է համարվել արդարությունը. առանց արդարության չի լինի ցանկալի խաղաղությունը, պետության գոյությունը անհնարին կդառնա. «Եթե բարձրացնենք արդարներին, իսկ անհնազանդներից հեռու մնանք, ժողովուրդը հնազանդ կլինի, և ընդհակառակն, եթե անազնիվները պատվի արժանանան, իսկ արդարները մերժվեն, ժողովուրդը հնազանդ չի լինի»:

Սոցիալականան հավասարությունը «երկնային կամքի հետ» կապող մտածողը երկրի վրա արարության հորդոր է անում:

Կոնֆուցիոսի դպրոցը Չինաստանի պատմության մեջ իր բնույթով առաջին մասնավոր, բայց և ժողովրդական դպրոցն էր: Ասում են՝ նա ունեցել է է-

ընթ հազար աշակերտ, որոնցից ամենահայտնիները յոթանասուններկուսն են: Նրան անվանել են տասը հազար սերունդների ուսուցիչ:

Բարոյական սկզբունքներից էլնելով և այդ արժեքների քարոզման մեջ հասնելով բարձրագույն գաղափարների՝ կոնֆուցիականությունը դարձել է պետական դոկտրինա, և այսօր կոնֆուցիականությունն դավանողների թիվն աշխարհում հինգսիսիսիսից ավելի է: Կոնֆուցիոսի ուսմունքի մեջ առանցքային նշանակություն ունեն *Շենի՝ բարոյական հիմքի, Լիի՝ հանրային կյանքի, Իի՝ պարտքի, Սիի՝ հավատարմության մասին գաղափարները* [1; էջ 138]:

Մարդկային վարքի հիմքը Կոնֆուցիոսի կարծիքով նրա դիրքն է ընտանիքում և հասարակության մեջ: Չէ՞որ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում մարդկանց վարքը կարգավորող նորմերի, սկզբունքների և կանոնների ամբողջությունը *բարոյականությունն* է: Դա է փոփոխում մարդկային հասարակությունը: «Ով ղեկավարվում է բարոյական օրենքներով, նրան կարելի է նմանեցնել բևեռային աստղի, որ մշտապես իր տեղում է, իսկ մյուսները խոնարհաբար շրջապատում են նրան», - ասում է Կոնֆուցիոսը, ապա շարունակում. «Եթե ժողովուրդը ղեկավարվի բարոյական օրենքներով և կարգապահությունն ամրապնդվի ընդունված ծեսերի և արարողությունների պահպանության ճանապարհով, ապա նա ոչ միայն խիղճը չի կորցնի, այլև կունենա ամոթի զգացում և կարգը կպահի գիտակցաբար»:

Բարոյական դաստիարակությունը չի կարելի առանձնացնել որպես հստակ դաստիարակչական գործընթաց, այն հասարակական գիտակցական այն ոլորտներից է, որը կյանքի բոլոր բնագավառներում մարդկանց վարքը կարգավորելու գործառույթ է կատարում, դառնում է վարքականոն: Այս առիթով Կոնֆուցիոսն ասում է. «Ով բարոյականություն չունի, աղքատության մեջ երկար ապրել չի կարող: Նա նաև ուրախության մեջ չի կարող երկար ապրել»: «Եթե բոլորը ձգտեն Բարուն, ապա Չարը ոչինչ չէր ունենա անելու: Ուրեմն, ով իրոք ասում է չարը, գործում է բարոյականության և վարքի օրենքներով»:

Երբ աշակերտը հարցրեց, թե ով է համարվել բարոյական պահվածքի տեր, ուսուցիչը պատասխանեց՝ նա, ով իրագործում է *հինգ հիմնական սկզբունքները՝ քաղաքավարություն, մեծահոգություն, անկեղծություն, եռանդ և բարություն* [1; էջ 30]:

Սակայն Կոնֆուցիոսը չի բավարարվում միայն բարոյական խրատներով, նա նաև կոչում է սեփական վարքը խրատների համաձայն բարեփոխել:

Անձի բարոյական կերպարը ամբողջացնող խնդիրներից է համոզմունքների ձևավորումը. «Ամուր կամք և բարձր բարոյականություն ունեցող մարդը երբեք չի փորձի իր կյանքը փրկել սեփական համոզմունքների գնով: Նա պատրաստ է անգամ իր կյանքը տալ հանուն այդ համոզմունքների» [1, էջ 122]:

Կոնֆուցիոսը տեսնում է արարքի ներքին կողմը՝ իմաստը, նպատակը: Ըստ նրա՝ մարդը առաքինի է միայն այն դեպքում, երբ վարքագծի այդ եղանակը հանդիսանում է նրա բնավորության մշտական գիծը:

Այսպիսով բարոյական մշակույթը, լինելով մարդկային հասարակարգի և գործունեության արդյունք, դառնում է մարդու հոգեկանի էական կողմը: *Կոն-*

Ֆուցիականությունը գլխավորապես ուղղված է մարդու և հասարակության բարոյական կատարելագործման խնդրին:

Որպես եզրակացություն նշեմ, որ Կոնֆուցիականությունը փորձել էմ կապել ընդհանրապես մանկավարժության և մասնակի դաստիարակության հետ: Արժևորելով ու գնահատելով դաստիարակության դերը բարոյական արժեքների հիմնավորմամբ, օրինակով ու կիրառությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Կոնֆուցիուս**- Ջրույցներ (թարգմ. առաջաբանը և ծանոթագր. Ա. Առաքելյանի), ԵՊՀ, Եր., Երևանի համալս. հրատ., 1991, 164 էջ:
2. **Հակոբյան Ս. Մ.** Փիլիսոփայության դասընթաց, Եր., Զանգակ-97, 2005թ. 408 էջ:
3. Փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ, Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1979, 964 էջ:
4. Փիլիսոփայական բառարան, Եր., «Հայաստան» հրատարակչություն, 1975, 468 էջ:

ЛУСИНЕ МАРУКЯН

Ванадзорский государственный университет имени Ов. Туманяна,
кафедра педагогики, кандидат педагогических наук, ассистент

НРАВСТВЕННЫЕ ЦЕННОСТИ В КОНФУЦИАНСТВЕ

В статье рассмотрены нравственные принципы Конфуция. Ставится акцент на оценивании особенностей воспитательной системы - воспитывать на примере. Целостность упорядочивания норм, принципов и правил человеческого поведения считается нравственным, она же подвергает человеческое общество изменениям. Несмотря на то, что нравственное воспитание не рассматривается как специальный воспитательный процесс, являясь сознательной средой, нравственные правила упорядочивают человеческое поведение.

Таким образом, нравственная культура как результат человеческой деятельности становится процессом человеческой психики и самореализации человека в обществе. И сегодня воспитание нужно и правильнее стимулировать на примере.

LUSINE MARUKYAN

Vanadzor State University after Hovh. Toumanyan
Chair of Pedagogy, Assistant
Candidate of Pedagogical Sciences

MORAL VALUES IN CONFUCIANISM

Confucius' moral values have been analyzed in this article. The basic educational peculiarity in Confucian system of values, i.e. education through examples, is emphasized here. The combination of the norms, principles and rules regulating people's behavior is called morality which changes human society. Though moral education can be taken as a special educational process, being a conscious sphere, moral laws perform the function of regulating people's behavior.

So, moral culture, as a result of human activity, becomes a process of self-realization in one's inner world and in society. Nowadays one had better educate a person through examples.

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ
Ա. Ա. Լալայանի անվան սպորտի մանկավարժության և
հոգեբանության ամբիոնի դասախոս

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐՍՅԻ ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ՄԱՐԶՉԻ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հողվածում փորձ է արվել բացահայտել ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներին, մարզիչներին և Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի 4-րդ կուրսի ուսանողների մանկավարժական առավել առաջնային ընդունակությունները: Ուսումնասիրվել են հաղորդակցական և լսելու ընդունակությունների զարգացվածության մակարդակն ու դրսևորման առանձնահատկությունները:

Բանալի բառեր՝ Մանկավարժական ընդունակություն, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ, մարզիչ, ուսանող, համեմատական վերլուծություն:

Ֆիզիկական կուլտուրան և սպորտային գործունեությունը մեծ պահանջներ են ներկայացնում մանկավարժ-մասնագետի պատրաստության տարբեր կողմերին՝ մանկավարժական տակտ, հետաքրքրություն մասնագիտության հանդեպ, ընդհանուր և հատուկ գիտելիքներ, սեր երեխաների հանդեպ, հեղինակություն, ինչպես նաև ֆիզիկական և այլ պատրաստության ձևերի զարգացվածության բարձր մակարդակ:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասնագետների պատրաստության գործընթացում առավել կարևորվում են մանկավարժական ընդունակությունների դերն ու նշանակությունը: Դրանք՝ որպես մանկավարժի անձի կարևոր առանձնահատկությունների ամբողջություն, հանդիսանում են մասնագիտական գործունեության արդյունավետությունն ապահովող կարևոր բաղադրամասեր:

Մանկավարժական ընդունակությունների հիմնահարցերը մեծ տեղ են գտել տարբեր մասնագետների աշխատություններում դեռևս անցյալ դարի 70-ական թվականներից մինչև մեր օրերը [2, 3, 4 և ուրիշներ], սակայն նրանց հետազոտություններում սակավաթիվ են ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի և մարզչի մանկավարժական ընդունակությունների հիմնախնդիրների վերաբերյալ ուսումնասիրությունները:

Այս տեսանկյունից արդիական են հետազոտությունները՝ կապված ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի և մարզչի մանկավարժական ընդունակությունների առաջատար բաղադրամասերին, ինչպես նաև միտված են դրանց զարգացման առանձնահատկությունների բացահայտմանը:

Որպես մանկավարժական ընդունակությունների բաղադրիչներ, տվյալ գործունեության արդյունավետության բարձրացմանը նպաստող գործոնների բազմամյա ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք հետևյալ դասակարգումներին, որ առաջնայիններից են համարվում հաղորդակցական և լսելու ընդունակությունները:


Հետազոտության նպատակն է՝ բացահայտել Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի (ՀՖԿՍՊԻ) 4-րդ կուրսի ուսանողների, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների և մարզիչ-մանկավարժների հաղորդակցական և լսելու ընդունակությունների դրսևորման յուրահատկություններն ու զարգացման դինամիկան:

Հետազոտության մեթոդները: Հետազոտություններն իրականացվել են սոցիոլոգիական հարցման, դիտումների, հարցազրույցի, թեստերի և մաթեմատիկական-վիճակագրական վերլուծության մեթոդների կիրառմամբ:

Հետազոտական գործընթացում ընդգրկվել են ՀՖԿՍՊԻ-ի 4-րդ կուրսի 30 ուսանող-մասնագետներ և տարբեր տարիների մանկավարժական ստաժ ունեցող ֆիզիկական կուլտուրայի 60 ուսուցիչներ, մարզիչ-մանկավարժներ:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը վկայում է, որ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների, մարզիչների և ՀՖԿՍՊԻ-ի 4-րդ կուրսի ապագա մասնագետների լսելու և հաղորդակցական ընդունակությունները գտնվում են զարգացվածության տարբեր մակարդակներում:

Այսպես, ուսումնասիրելով և համեմատական վերլուծության ենթարկելով հաղորդակցական ընդունակության ցուցանիշները՝ բացահայտվեց, որ հետազոտված ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների 10 %-ի հաղորդակցական ընդունակության զարգացվածության աստիճանը գտնվում է միջին մակարդակում: Գրեթե նույն պատկերն է մարզիչների մոտ. նրանց 14%-ը դրսևորել է ընդունակության զարգացվածության միջին մակարդակ (տես գծապատկեր 1):



Գծապատկեր 1.

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների, մարզիչների և 4-րդ կուրսի ուսանողների հաղորդակցական ընդունակության ցուցանիշների համեմատական բնութագիրը

Ինչպես երևում է գծապատկեր 1-ում ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների 56 %-ը և մարզիչների 58 %-ը ունեն հաղորդակցական ընդունակության զարգացվածության բարձր մակարդակ, այս ցուցանիշը դրսևորվել է հիմնականում վեց տարի և ավել աշխատանքային փորձ ունեցող մասնագետների մոտ: Սակայն այլ է պատկերը ՀՖԿՍՊԻ-ի 4-րդ կուրսի ուսանողների մոտ: Ի տարբերություն ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների և մարզիչների՝


նրանց մոտ հաղորդակցական ընդունակությունների զարգացվածությունը գտնվում է ցածր մակարդակում՝ կազմելով 40%: Այստեղից ակնհայտ է դառնում այն փաստը, որ հաղորդակցական ընդունակության զարգացվածության աստիճանը էականորեն պայմանավորված է աշխատանքային փորձով և տվյալ մասնագիտության յուրահատկություններով (ակտիվ շփումը աշակերտների, կոլեկտիվի անդամների, մարզիկների, մարզիչների, մրցավարների, ծնողերի հետ, վարժությունների, հնարքների և տարբեր մասնագիտական գործողությունների բացատրում, սպորտլանդիաների, մրցումների կազմակերպում և մասնակցում և այլն):

Հետազոտված ցուցանիշների շարքում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում լսելու ընդունակության ուսումնասիրումը. այն հավաստի համահարաբերակցական կապ է դրսևորել հաղորդակցական ընդունակության ցուցանիշի հետ:

Լսելու ընդունակության ցուցանիշի վերլուծությունից պարզվել է, որ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների 45%-ը դրսևորել է բավարար, 38 %-ը՝ լավ, իսկ մարզիչների մոտ գրանցվել է հետևյալ ցուցանիշները՝ 40% միջին, 52%՝ լավ: Ցուցանիշների նման տարբերությունը խոսում է այն մասին, որ մարզչական գործունեությունը ի տարբերություն ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների գործունեության ունի էական ազդեցություն լսելու ընդունակության զարգացման գործում՝ պայմանավորված տվյալ գործունեության յուրահատկություններով (տես գծապատկեր 2):

Գծապատկեր 2.

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների, մարզիչների և 4-րդ կուրսի ուսանողների լսելու ընդունակության ցուցանիշների համեմատական բնութագիրը



Ըսկ ինչպես երևում է գծապատկեր 2-ում ՀՖԿՍՊԻ-ի 4-րդ կուրսի ուսանողների հետազոտված նույն ցուցանիշը իր զարգացվածության աստիճանով գերազանցում է թե ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների և թե մարզիչների ցուցանիշներին, ինչը փաստում է, որ հետազոտված ուսանողները, որոնցից մեծամասնությունը նաև մարզիկներ են կարողանում են տիրապետել լսելու կարողությանը:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների, մարզիչների և ՀՖԿՍՊԻ-ի 4-րդ կուրսի ուսանողների շրջանում կատարված հետազոտության արդյունքում բացահայտվեց, որ հաղորդակցական ընդունակությունները զարգանում և ձևավորվում են հիմնականում մանկավարժական փորձի և մասնագիտական ակտիվ գործունեության արդյունքում՝ պայմանավորված տվյալ մասնագիտության յուրահատկություններով:

Ինչ վերաբերվում է լսելու ընդունակությանը, ապա կարելի է արձանագրել, որ 4-րդ կուրսի ուսանողների տվյալ ցուցանիշը գտնվում է լավ մակարդակում՝ գերազանցելով ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների և մարզիչների ցուցանիշին, ինչը պայմանավորված է ուսումնական, մարզական և մրցակցային ակտիվ գործունեությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Արզաքանյան Ս. Ս.** Մանկավարժական ընդունակությունների զարգացման առանձնահատկությունները ֆիզկուլտուրային և սպորտային գործունեության ընթացքում / Սպորտային մանկավարժական գիտություն 43—րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան- 2016, էջ 47-51
2. **Լալայան Ա. Ա.** Ֆիզիկական դաստիարակության ուսուցիչ.- Եր., - 1969. -180 էջ
3. **Ղազարյան Ֆ. Գ.** – Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության դիդակտիկայի հիմունքները. – Երևան.- «Հեղինակային հրատարակություն».- 2009. -111 էջ
4. **Держач А. А., Исаев А. А.** Педагогическое мастерство тренера.-М. Физкультура и спорт. 1981, 374 с.

СОНА АРЗАКАНЯН

Государственный институт физической культуры и спорта Армении,
кафедра педагогики и психологии спорта им. А. Лалаяна, преподаватель

ОСОБЕННОСТИ РАЗВИТИЯ ПЕДАГОГИЧЕСКИХ СПОСОБНОСТЕЙ УЧИТЕЛЯ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ И ТРЕНЕРА

В статье предпринята попытка выявить наиболее важные педагогические способности учителя физической культуры, тренера и студентов 4-х курсов института физической культуры и спорта Армении. Исследован уровень и проявление коммуникативных способностей, а также способность слушать.

SONA ARZAKANYAN

Armenian State Institute of Physical Culture and Sport
Department of Sports Pedagogy and Psychology after A. A. Lalayan, Lecturer

FEATURES OF DEVELOPMENT OF PEDAGOGICAL ABILITIES OF THE TEACHER OF PHYSICAL TRAINING AND COACH

The article attempts to reveal the main and most important pedagogical abilities of the teacher of physical training, coach and the 4th year students of the Institute of Physical Culture and Sport of Armenia The level and manifestation of communicative abilities, as well as the ability to listen, were studied.

**ԿՐՏՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

Հոդվածում քննարկվում են կրտսեր դպրոցականների հիշողության առանձնահատկությունները, տեսակները և հիշողության կարևոր դերն աշակերտի ուսումնական գործընթացում, որը նպաստում է ուսման արդյունավետության բարձրացմանը:

Հանգուցային բառեր՝ կրտսեր դպրոցական, հիշողություն, հիշողության գործընթացներ, անձնային որակներ, ուսման արդյունավետություն:

Համակարգված ուսուցումն սկսվում է դպրոցի տարրական դասարաններից: Այդ առումով ուսուցիչը մեծ առաքելություն ունի, քանի որ իրեն է վստահված աճող սերնդի կրթության ու դաստիարակության գործը:

Դպրոցական կյանքի առաջին տարիները լի են նոր տպավորություններով, նոր գիտելիքներով ու սպասումներով: Երեխան դառնում է դպրոցական, սա այնպիսի ժամանակաշրջան է, երբ նա իր մեջ միաժամանակ կրում է և՛ նախադպրոցականի, և՛ դպրոցականի զծեր: Այս տարիքն ունի զարգացման թաքուն հնարավորություններ, որոնք պետք է ուսուցիչը բացահայտի ու զարգացնի:

Դպրոցական կյանքի առաջին տարիներին երեխան ադապտացվում է դպրոցին՝ իր համար նոր միջավայրին ու կենսակերպին: Հոգեկան շատ որակների հիմքը դրվում է կրտսեր դպրոցական տարիքում: Երեխայի վարքն աստիճանաբար բարդանում է, հարստանում է մտածելակերպը, զարգանում են հոգեկան գործընթացները, մասնավորապես ուշադրությունն ու հիշողությունը, որոնք նպաստում են գիտելիքների ձեռքբերմանը, կենսափորձի հարստացմանն ու համալրմանը:

Հիշողությունն ապահովում է անձնավորության ամբողջականությունը և տեղին է հիշատակել Ս. Ռուբինշտեյնի հետևյալ միտքը. «Առանց հիշողության մենք կլինեինք լոկ ակնթարթի էակներ: Մեր անցյալը ապագայի համար մեռած կլինեք: Ներկան, ընթանալով, անհետ կկորչեր անցյալում: Չէին լինի ոչ անցյալի վրա հիմնվածը, ոչ էլ հմտությունները, անհնարին կդառնար ուսումը, որն անցնում է մեր ողջ կյանքի միջով և մեզ դարձնում է այն, ինչ որ ենք» [2, էջ 179]: Միտքը առավել քան խոսուն է:

Հոդվածի նպատակն է պարզել.

ա) կրտսեր դպրոցականների հիշողության առանձնահատկությունները

բ) հիշողության որ տեսակներն են գերիշխուն այդ տարիքում

գ) այն օպտիմալ ուղիները, հնարներն ու մեթոդները, որոնք կզարգացնեն աշակերտի հիշողությունը և կնպաստեն մյուս հոգեկան պրոցեսների զարգացմանը:

Իսկ ի՞նչ է հիշողությունը. հիշողությունը ընկալված ինֆորմացիայի մտապահման, հոգեկանում պահպանելու և հետագայում վերարտադրելու երևույթն է [2, էջ 179]: Հիշողությունը մասնակցում է կրտսեր դպրոցականի

կյանքի և գործունեության բոլոր ոլորտներին, այդ իսկ պատճառով ուսուցիչը այն պետք է զարգացնի տարբեր հնարներով ու միջոցներով, որպեսզի ապահովի ինֆորմացիայի ձեռքբերումը, յուրացումը և հետագա գիտելիքների ու հմտությունների հարստացումը: Հիշողության մեջ տարբերում ենք հետևյալ գործընթացները. մտապահում, պահպանում, վերարտադրում և մոռացում: Տարբերում ենք նաև հետևյալ տեսակները, որոնք առանձնացվում են ըստ հետևյալ չափանիշների.

1. ըստ գործունեության բնույթի հիշողությունը լինում է շարժողական, պատկերային և բառա-տրամաբանական

2. ըստ գործունեության նպատակների բնույթի. կամածին և ոչ կամածին

3. ըստ նյութի պահպանման տևողության. երկարատև, կարճատև և օպերատիվ:

Ուսուցիչը պետք է լավ իմանա իր աշակերտի հոգեկան գործընթացները, անհատական առանձնահատկությունները, իմանա, որ եթե նախադպրոցական տարիքում գերիշխում էր հուզական հիշողությունը կապված մուլտֆիլմերի, հեքիաթի հերոսների կամ իրենց խաղերի հետ, ապա կրտսեր դպրոցականի հիշողությունն ավելի իմաստավորված է, նրանց հիշողության հիմքում ընկած է հասկացումը: Աշակերտը արդեն իմաստային կապեր է հաստատում նյութը մտապահելու համար, ձգտում է կանխամտածված մտապահել ուսումնական նյութը, քանի որ իրեն ներկայացվում են նոր պահանջներ ու պարտականություններ և ինքը պարտավոր է դրանք հիշելու վերարտադրել:

Ուսումնասիրվող նյութի սիստեմատիկ կապակցումը անցյալում յուրացրած գիտելիքների հետ նպաստում է անցածի ամրապնդմանը, կանխում է մոռացումը, ակտիվացնում սովորողի հիշողությունը, մտածողությունը [1, էջ 215]:

Փորձառու ուսուցիչը աստիճանաբար մեծացնում է սովորողների ինքնուրույնությունը, նրանց հետաքրքրությունը, որը նպաստում է ուսումնական նյութը ընկալելու: Նոր նյութը ընկալելու և հիշելու համար ուսուցիչը աշակերտներին հանձնարարում է նախկին նյութը կրկնել և կապել նորի հետ, կիրառում է տարբեր հնարներ ու մեթոդներ՝ հիշողությունը և մյուս հոգեկան գործընթացներն ու առանձնահատկությունները զարգացնելու համար:

Թեև դա այնքան էլ հեշտ չէ, սակայն ուսուցիչը քաջ գիտակցում է, որ ուսման արդյունավետությունը մի շարք գործոններից բացի, կախված է նաև հիշողությունից, (մնեմիկական, հիշողական) խնդրի բնույթը ըմբռնելուց և մտապահման ու վերարտադրության հնարներին ու եղանկներին տիրապետելուց: Սկզբնական շրջանում կրտսեր դպրոցականները օգտագործում են մտապահման պարզ եղանակներ, մի քանի անգամ կրկնում են նյութը, հետո դրանք բաժանում են մասերի, որոնք հաճախ ոչ մի իմաստային կապ չեն ունենում: Նրանց մտապահումը կատարվում է ճանաչման հիման վրա: Օրինակ, առաջին դասարանցին կարող է տեսողությամբ ընկալել տեքստը և իրեն թվա, որ արդեն գիտի, քանի որ այն իրեն արդեն ծանոթ է: Սակայն դա այդպես չէ և երեխան ունենում է հիասթափություն, իրեն թվում է, որ արդարացի չեն վարվում իր հետ ու ճիշտ չեն գնահատում կամ կարծում է, թե ինքը անընդուն

նակ է: Փորձառու ուսուցիչը, որպեսզի իր հետագա աշխատանքները ճիշտ և արդյունավետ կառուցի, պետք է օժտված լինի ոչ միայն մասնագիտական, այլև անձնային համապատասխան որակներով ու կարողություններով, ոչ միայն պետք է սիրի իր մասնագիտությունն ու երեխաներին, այլև կարողանա նյութը մատուցել դրական հույզերով, վառ տպավորություններով հագեցած, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ առաջին դասարանի ուսումնական տարվա սկզբում աշակերտների մոտ դեռևս գերիշխում է ոչ կամաձին հիշողությունը և երեխան հիշում է հատկապես այն, ինչը հեշտ և արագ է մտապահվում կամ որը հետաքրքիր է իրեն ու հուզականորեն հագեցած: Նշանակում է, հիշելուն նպաստում են նաև դրական հույզերն ու զգացմունքները, որոնք մեծ ազդեցություն են ունենում մտապահման արագության և տևականության վրա: Նյութը լավ հիշելու համար պետք է դրա հիմքում ընկած լինի հասկացումը: Պետք է նյութը բաժանել մասերի, վերլուծել: Պետք է երբեմն մատուցվող նյութը կիսատ թողնել հաջորդ օրը շարունակել, քանի որ ըստ Ջեյգարնիկի, կիսատ մնացած գործը լավ է հիշվում: Գիտակցված և իմաստավորված մտապահման, ինչպես նաև ինքնավերահսկողության հնարների ձևավորմանը զուգընթաց երկրորդ և ավելի բարձր դասարաններում կամաձին հիշողությունը արդեն բավական զարգացած է ու արդյունավետ: Աստիճանաբար տեղի է ունենում ոչ միայն հիշողության, այլև հոգեկան տարբեր որակների ու կողմերի վերակառուցում ու բարդացում: Աշակերտներին պետք է աստիճանաբար սովորեցնել ինքնուրույն աշխատել, քանի որ «ուսումնական տեքստերի վրա աշխատելու հնարների ձևավորումը «լավ հիշողություն» զարգացնելու արդյունավետ ուղիներից է» [3, էջ 115]:

Ուսուցիչների ուշադրությունից չպետք է վրիպի նաև այն հանգամանքը, որ ուսման արդյունավետության վրա էականորեն ազդում է նաև ուսուցչի անձը, նրա մասնագիտական կարողությունները, անձնային որակները, խոսքի արտահայտչականությունը...: Կրտսեր դպրոցականները հուզականորեն հագեցած խոսքի միջոցով արտահայտած տեղեկությունները ավելի արագ և լավ են մտապահում, քան ակնառու-պատկերավոր տվյալները: Դա ևս տարիքային առանձնահատկություն է, որը չպետք է անտեսվի, թեև ակնառու-պատկերավոր մտապահումը նույնպես կարևոր է զարգացնել: Իհարկե կան շատ հնարներ ու միջոցներ, որոնց չենք անդրադառնալու, սակայն յուրաքանչյուր ուսուցիչ պետք է մշակի իր մոտեցումները տվյալ դասարանին և տվյալ աշակերտին համապատասխան, պետք է հաշվի առնի նաև աշակերտների հիշողության անհատական տարբերությունները՝ մտապահման արագությունը, ամրությունը, վերատադրելու պատրաստակամությունը: Միտքը պարզելու համար նշենք, որ մտապահման արագությունը որոշվում է այն կրկնությունների թվով, որոնք այս կամ աշակերտի մոտ անհրաժեշտ են նյութի որոշակի ծավալ մտապահելու համար: Ամրությունը որոշվում է սովորած նյութի մտապահման և մոռացման արագության միջոցով: Իսկ հիշողության պատրաստակամությունը որոշվում է նրանով, թե պահանջված պահին ինչպիսի հեշտությամբ ու արագությամբ է աշակերտը կարողանում հիշել, մտաբերել անհրաժեշտ նյութը:

Ուսուցիչը պետք է հաշվի առնի աշակերտների հիշողության անհատական տարբերությունները, նրանց մոտ զարգացնի հիշողության տարբեր տեսակները, քանի որ այդ է պահանջում ուսումնական նյութի բազմազանությունը: Յուրաքանչյուր ուսուցիչ սովորողների հիշողության և ընդհանուր զարգացման համար պետք է ստեղծի նպաստավոր բարոյա- հոգեբանական և մանկավարժական պայմաններ ու մթնոլորտ և ապահովի աշակերտների անձնային աճն ու հոգեկան առողջությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ա. Բայան**, Մանկավարժական հոգեբանության հարցեր, Լույս, Երևան, 1983. 456 էջ
2. **Ա. Նալչաջյան**, Հոգեբանության հիմունքներ, «Հոգեբան» հր. Երևան, 1997 թ., էջ 648
3. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Ա. Պետրովսկու խմբ., Եր. 1977 թ., 400 էջ

АЙКУИ ХАНУМЯН

Ванадзорская школа N25 им. В. Амбарцумяна, педагог

ОСОБЕННОСТИ И ПУТИ РАЗВИТИЯ ПАМЯТИ УЧАЩИХСЯ МЛАДШИХ КЛАССОВ

В статье обсуждаются особенности, виды и важная роль памяти в процессе обеспечения эффективности обучения.

HA YKUMI KHANUMYAN

Vanadzor basic school #25 named after V. Hambardzumyan, Teacher

MEMORY PECULIARITIES OF JUNIOR SCHOOLCHILDREN AND WAYS OF DEVELOPING THEM

The article comprises the peculiarities of schoolchildren memory, their kinds and the importance of their memory which can be effective for them in schooling.

ՌԻՄԱ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Վանաձորի Վ. Համբարձումյանի անվ. թիվ 25 հիմնական դպրոցի մանկավարժ

**ՁԱՆԼԻԿ ԵՐԵՄՅՑԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿՐՏՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ**

Հոդվածում քննարկվում են ձախլիկ երեխայի նկատմամբ ձևավորված կարծրատիպերի առկայությունը և դրանց վերացման անհրաժեշտությունը, նրանց ֆիզիոլոգիական ու հոգեբանական առանձնահատկությունների, ինչպես նաև նրանց հետ աշխատելու հնարների ու միջոցների իմացությունը:

Բանալի բառեր՝ ձախլիկ երեխա, կարծրատիպեր, մանկավարժական խնդիր, դպրոց, ուսուցիչ:

Ժամանակակից հասարակության մեջ, մարդկային գործունեության բազմաբնույթ ոլորտներում իր ուրույն տեղն է զբաղեցնում կրթությունը, մասնավորապես՝ դպրոցը: Դպրոց են հաճախում տարբեր ընդունակություններով ու խնդիրներով, տարբեր դիրքորոշումներով ու հնարավորություններով երեխաներ: Ուսուցիչը կոչված է նրանց կրթելու, ուսուցանելու և հետագա կյանքին նախապատրաստելու: Թեև նրա աշխատանքը դժվար է և պատասխանատու, բայց այն ավելի է բարդանում, երբ դասարանում լինում են սահմանա-

փակ կարողություններով, տարբեր խնդիրներով, դանդաղաշարժ կամ ձախլիկ երեխաներ, որոնց հետ առանձնահատուկ աշխատանք է պահանջվում:

Մինչև վերջին տարիները ձախլիկությունը համարվում էր բարդ մանկավարժական խնդիր, թեև այսօր էլ այն իսպառ չի վերացել: Ծնողները, մանկավարժները գտնում են, որ անհրաժեշտ է համապատասխան քայլեր ձեռնարկել, որպեսզի երեխայի մոտ գերիշխի աջ ձեռքը: Այս պարագայում անտեսում են երեխայի անհատական առանձնահատկությունները, հնարավորությունները և դրանց թողած բացասական ազդեցությունն ու հետևանքները:

Հոդվածի նպատակն է պարզել.

ա) ձախլիկ երեխայի անհատական-հոգեբանական առանձնահատկությունները

բ) ձախլիկության հետ կապված դժվարությունների հաղթահարման հնարավոր ուղիները:

Խնդիրն է.

ա) ուսումնասիրել ուսուցչի դերն ու նշանակությունը ձախլիկ երեխայի ուսումնական գործընթացում

բ) ուսումնասիրել ձախլիկության հետ կապված դժվարություններն ու խոչընդոտները:

Բազմաթիվ փաստեր վկայում են, որ ձախլիկների մոտ ներդններն ու նյարդային խանգարումներն ավելի հաճախ են հանդիպում, քան աջլիկների մոտ: Նյարդային խանգարումների առաջացման պատճառներից մեկն այն է, որ ձախլիկներին ստիպում են գործողություններ կատարել, նկարել, գրել աջ ձեռքով, թեև ձախլիկները փորձում են դրանք կատարել այն ձեռքով, որը նրանց ավելի հարմար է: Նախկինում դա իսկապես լուրջ խնդիր էր համարվում, սակայն այսօր էլ դպրոցներում աշխատող ոչ բոլոր ուսուցիչներն են, որ կարողանում են ձախլիկ երեխաների հետ համապատասխան աշխատանք կատարել, չստիպել, որ գրեն աջ ձեռքով և անհարկի լարվածություն, նյարդայնություն ու սթրեսներ չստեղծեն: Չէ՞ որ դա խաթարում է նրանց հոգեկան անդորրը, ազդում է վարքի, հուզական ոլորտի և ուսման արդյունավետության վրա:

Պետք է իմանալ, որ մարդկության 10%-ը ձախլիկներ են և այն հիմնականում փոխանցվում է ժառանգաբար: Ձախլիկությունը թերություն չէ, այն պայմանավորված է գլխուղեղի կիսագնդերի ֆունկցիայով: Եթե աջլիկների մոտ առավել զարգացած է ձախ կիսագունդը, ապա ձախլիկների մոտ աջ կիսագունդը: Փորձառու ուսուցիչը ծնողներին և երեխաներին կծանոթացնի ներքոհիշյալ տվյալները, կնվազեցնի ծնողների անհանգստությունը, կփորձի բացահայտել երեխայի ներուժը, կրերի փաստեր, որ ձախլիկների մեջ քիչ չեն հաջողակ և տաղանդավոր մարդիկ ու դրա համար պետք է ճիշտ և համալիր, համաձայնեցված կազմակերպել աշխատանքները: Օրինակ. MENSA-ի (բարձր IQ ունեցող մարդկանց կազմակերպություն) անդամների 20%-ը ձախլիկ են:

Բռնցքամարտում ոսկե մեդալ ստացածների 40% - ը ձախլիկներ են:

MacBook-ը ստեղծած 5 մարդկանցից 4-ը ձախլիկ են և այլն [4]:

Այդ հանգամանքը և այլ գործոններ ևս պետք է հաշվի առնեն և՛ ծնողները, և՛ ուսուցիչները: Մանկության տարիներին ծնողները և դաստիարակները միշտ չէ որ ուշադրություն են դարձնում, թե հատկապես ո՞ր ձեռքով է երեխան գործողություններ կատարում և ո՞ր ձեռքն է առաջատար: 3-5 տարեկանում դա ավելի նկատելի է դառնում ուշադիր ծնողի համար, քանի որ այդ տարիքում երեխան սկսում է նոր գործողություններ ու նոր հմտություններ սովորել (նկարել, գրել...): Բնականաբար ծնողներն իրենց երեխաներին սովորեցնում են աշխատել աջ ձեռքով: Չախլիկությունը հատկապես վառ է դրսևորվում տարրական դասարաններում, երբ աշակերտները սկսում են գրավոր հանձնարարություններ կատարել և ձախլիկների խնդիրը դառնում է ակնհայտ: Նրանք դպրոցական կյանքին ավելի դանդաղ ու դժվար են հարմարվում, քան իրենց աջիկ հասակակիցները:

Ուսուցիչը մինչ աշխատանքները սկսելը պետք է նախապես իմանա, թե արդյո՞ք իր դասարանում կան ձախլիկ երեխաներ կամ ինքը պարզի, թե ո՞րն է իր աշակերտի առաջատար ձեռքը, որպեսզի ճիշտ օգտագործի նրա անհատական առանձնահատկությունները և խուսափի հետագա հնարավոր բարդություններից: Դրա համար կարելի է կիրառել տարբեր մեթոդիկաներ «ձեռքերի մասնակցության գնահատումը» տարբեր գործողություններում, օրինակ՝ ծափահարության թեստ, ձեռքերը խաչել կրծքի վրա՝ «Նապոլեոնի դիրք», մատերի հանգուցում՝ թե որ ձեռքի մատն է վերևում, կամ մի իր գցել և տեսնել, թե երեխան ո՞ր ձեռքով է օղից բռնում, խնդրել երեխային ցույց տալ, թե ինչպես է ջրում ծաղիկները, բացում պայուսակը կամ դարակը և այլն: Յուրաքանչյուր հանձնարարության մեջ ուսուցիչը պետք է ուշադիր լինի, թե որ ձեռքով է ավելի հաճախ ու վարժ աշխատում երեխան, թե ո՞ր ձեռքն է առաջատար: Ուսուցչի աշխատանքը արդեն իսկ բարդ է ու պատասխանատու, բայց այն ավելի է բարդանում, երբ հանդիպում է «թաքնված ձախլիկության»: Խոսքը վերաբերվում է այն երեխաներին, որոնց ծնողները ձախլիկ երեխային մանկության տարիներին ստիպել են աջ ձեռքով գործողություններ կատարել, իսկ դպրոց հաճախելիս, երբ նկատել են, որ իրենց երեխան նախընտրում է ձախ ձեռքով գործողություններ կատարել, ձգտել են ուղղել այդ կարծեցյալ «թերությունը» և խուսափել հետագա բարդություններից: Կենցաղում «թաքնված ձախլիկությունը» հիմնականում չի ազդում գործողությունների արդյունավետության վրա, սակայն դպրոցում, հատկապես գրելիս, նկարելիս, ձեռքի աշխատանքի ժամերին այդ երեխաները կարող են հանդիպել լուրջ դժվարությունների ու անհարմարությունների: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է մինչ դպրոց գնալը նախապես որոշել, թե երեխայի որ ձեռքն է առաջատար:

Ուսուցչի գործն ավելի է բարդանում այն դեպքում, երբ աշակերտը ազատ գործողություններ է կատարում երկու ձեռքով և նույն արդյունքն է ցույց տալիս: Այդ դեպքում հնարավոր են հետևյալ տարբերակները.

1. *Վառ արտահայտված կենցաղային ձախլիկություն*, բայց միաժամանակ լավ նկարում ու գրում են և՛ աջ, և՛ ձախ ձեռքով: Սովորաբար այդ երե-

խաները ձախլիկ են, սակայն ծնողները վաղ տարիքից նրանց սովորեցրել են գործողություններ կատարել աջ ձեռքով:

2. *Վառ արտահայտված կենցաղային աջլիկություն*, բայց նկարում ու գրում են ձախ ձեռքով: Ձախ ձեռքով գրելը կամ նկարելը կարող է պայմանավորված լինել աջ ձեռքի վնասվածքով, ֆունկցիայի խախտմամբ կամ այլ պատճառով: Նման դեպքերում անհրաժեշտ է երեխային սովորեցնել աջ ձեռքով գրել, նկարել և գործողություններ կատարել:

Ձախլիկների գրելու ձևը և դրվածքը տարբեր է: Նրանց հարմար չէ և՛ աջակողմյան, և ձախակողմյան թեքությունը, քանի որ նա ձեռքով ծածկում է աշխատող ձեռքի տողը: Դրա համար նա ձեռքը պետք է այնպես դնի, որ տողը չծածկի և այն բաց լինի: Խորհուրդ է տրվում տետրի աջակողմյան թեքությունը կամ ուղիղ գրելու ձևը: Սովորաբար, ձախլիկ երեխան, ինքն է ընտրում տառերի գրելու իրեն հարմար ձևը: Ի տարբերություն աջլիկների, նրանք շրջանը գծում են ձախից դեպի աջ և վերևից ներքև, իսկ տառերը կտրտված են, միացված են ուղիղ կարճ գծերով և չի կարելի նրանցից պահանջել գրել կապակցված: Նրանց պետք է նստեցնել պատուհանի մոտ այնպես, որ լույսը ձախից ընկնի: Այդ դիրքով նա չի խանգարում կողքը նստած աշակերտին:

Իհարկե փորձառու ուսուցիչը ձախլիկ երեխաների հետ աշխատելիս իր պրակտիկայի ընթացքում բացի վերը նշվածներից, կգտնի և կմշակի էլի նպատակահարմար եղանակներ, սակայն մի հանգամանք ևս նշենք, որ ձախլիկ երեխային օգնելիս, տառեր սովորեցնելիս, ոչ թե պետք է սովորականի նման կողքը կանգնել, ձեռքը բռնել և ուղղություն տալ, այլ կանգնել և դիմացից օգնել:

Ուսուցիչը պետք է իմանա, որ ձախլիկների աջ կիսագունդն է ավելի զանգացած, որ նրանք ունեն ավելի բարձր ստեղծագործական ներուժ և այդ հանգամանքը օգտագործի ի նպաստ աշակերտի:

Արդի ժամանակաշրջանում ժամանակակից ծրագրերը միտված են ավելի զարգացնելու տրամաբանությունը, որի համար պատասխանատու է ձախ կիսագունդը: Նշանակում է, ուսուցիչը պետք է հաշվի առնի այդ հանգամանքը, ճիշտ ուղիներ գտնի նրանց հետ աշխատելու, հաշվի առնի նրանց բնորոշ յուրահատկությունները և ոչ միայն չվնասի, այլ ի օգուտ աշակերտի լուծի այդ խնդիրը:

Կարևոր է, որ ուսուցիչն իմանա ձախլիկների հետևյալ յուրահատկությունները և իր աշխատանքում չանտեսի դրանք.

ա) տեսողական և շարժողական կոորդինացիայի ցածր ունակություն, որի պատճառով էլ դժվարանում են հերթականությունը ճիշտ պահել, տողը ճիշտ պահել, գրաֆիկները ճիշտ արտագծել, որ նրանք ունեն վատ ձեռագիր և այլն,

բ) ունեն տարածական և տեսողական հիշողության ցածր մակարդակ, այդ իսկ պատճառով գրավորի ժամանակ ունենում են տառաբացթողումներ, հաճախ շփոթում են իրար նման տառերը, աջն ու ձախը,

գ) ունեն ինֆորմացիայի մշակման ինքնատիպ տարբերակ,

դ) ունեն հիշողության ցածր մակարդակ, խոսքային խանգարումներ, ցածր աշխատունակություն,

ե) շուտ են հոգնում,

զ) բարձր զգայունակություն և այլն:

Հմուտ և համբերատար ուսուցիչը, ով լավ գիտի ձախակների առանձնահատկությունները, ճիշտ կկազմակերպի իր աշխատանքները, որպեսզի ուսումնական ու հոգեբանական սթրեսների չենթարկի: Նա բարձր պահանջներ չի ներկայացնի և ճիշտ կօգտագործի ձախակ երեխայի հնարավորություններն ու կարողությունները և անհրաժեշտության դեպքում կհամագործակցի ծնողների, լոգոպեդի, դպրոցի հոգեբանի հետ: Հատկապես ձախակ առաջին դասարանցիներն ունեն ծնողների, ուսուցչի, դպրոցի հոգեբանի ուշադրության և աջակցության կարիքը: Վերոնշյալները հիմնավորելու համար կարելի է հիշատակել նաև աշխարհահռչակ ձախակներից մի քանիսին՝ Հուլիոս Կեսար, Բեթհոլմեն, Վ. Մոցարտ, Չապլին, Պելե և այլոք [3]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Л. М. Фридман, К. Н. Волков**, Психологическая наука-учителю, Москва, Просвещение, 1985, 224ст.
2. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Ա. Պետրովսկու խմբ., Եր. 1977թ., էջ 400
3. Համացանց <https://life.panorama.am>
4. armday.am

РИМА ГУКАСЯН

Ванадзорская школа N25 им. В. Амбарцумяна, педагог

ОСОБЕННОСТИ РАБОТЫ С ЛЕВШОЙ В МЛАДШЕМ ШКОЛЬНОМ ВОЗРАСТЕ

В статье обсуждаются стереотипы отношения к левше, необходимость их устранения, знание физиологических и психологических особенностей детей-левшей, а также знание приемов работы с ними.

RIMA GHUKASYAN

Vanadzor Basic school #25 named after V. Hambardzumyan, Armenian Language Teacher

PECULIARITIES OF WORKING WITH LEFT-HANDED CHILDREN OF THE JUNIOR SCHOOL AGE

The article discusses the stereotypes formed in relation to the left-handed children, the need to alleviate them, knowledge of specific physiological and psychological particularities of left-handed children, as well as knowledge of techniques to work with them.

ՆԱՐԻՆԵ ՎԱՐՊԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի կրթության որակի
ապահովման բաժնի ղեկավար
ԱՆԳԵԼԻՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ
Սոցիոլոգ, մագիստրոս

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՇԱՀԱԿԻՑ ԴԻՏԱՆԿՑՈՒՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՑԱՆ ԲՈՒՀԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Բարձրագույն կրթության մեջ որակը բազմաչափ, բազմամակարդակ և դինամիկ հասկացություն է: Կրթության որակի վերաբերյալ պաշտոնական և ոչ պաշտոնական փաստաթղթերի ուսումնասիրությունը և շահառու խմբերի հետ իրականացրած հարցումները ցույց են տալիս, որ սոցիալական տարբեր խմբեր ունեն կրթության որակի վերաբերյալ տարբեր ընկալումներ և տալիս են տարբեր մեկնաբանություններ: Սակայն տարբեր շահառու խմբեր **կրթական կարիք** և **կրթության որակ** հասկացությունների վերաբերյալ ունեն տարբեր ընկալումներ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ կրթության որակ, որակի գնահատում, գնահատման չափանիշներ, աշխատաշուկա, շահակիցներ:

Բարձրագույն կրթության համակարգում կրթության որակին առնչվող հիմնախնդիրների բացահայտման նպատակով մեր կողմից իրականացվել է որակական սոցիոլոգիական հետազոտություն Երևան քաղաքում գործող պետական և ոչ պետական բուհերի մագիստրատուրայում սովորող ուսանողների շրջանում: Հետազոտության նպատակն է եղել՝ բացահայտել մագիստրատուրայում սովորող ուսանողների կրթական պահանջմունքները կրթության որակի ապահովման համատեքստում: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ «կրթության որակ» հասկացության շուրջ շահառուների շրջանում կա թյուրըմբռնում: կրթության քաղաքականություն մշակողները տալիս են կրթության որակի այլ սահմանում, ուսանողները՝ այլ, գործատուները՝ այլ:

Ուսանողների կողմից կրթության որակի գնահատումը այլընտրանքային և նորարարական մեթոդ է ինչպես բարձրագույն կրթության համակարգում կրթության որակի չափման, այնպես էլ կրթական բարեփոխումների իրականացման արդյունավետության գնահատման գործում: Բուհի դիտանկյունից այն կարող է ծառայել ինչպես կրթական վերջնարդյունքների իրականացումը չափելու գործիք, այնպես էլ սահմանված վերջնարդյունքներին հասնելու գործում առկա խնդիրների և դրանց կարգավորման հնարավոր եղանակների բացահայտման մեթոդ: Այժմյան կրթությունը առավել ակնառու կողմնորոշված է դեպի ապագա մասնագետի «անձի ազատ զարգացմանը», ստեղծագործ նա-

խաձեռնողականությանը, ինքնուրույնությանը, մրցունակությանը, շարժունակությանը¹:

Կրթությունը, կապված լինելով անձի զարգացման և հետևաբար ինքնաիրացման պահանջմունքների հետ, որպես սոցիալական ինստիտուտ, միտված է բավարարելու անձի կրթական պահանջմունքները, որոնք սերտորեն կապված են ինչպես անձի բազային, այնպես էլ այլ սոցիալական պահանջմունքների հետ:

Կրթական պահանջմունքի բավարարումը շահառուների շրջանում ձևավորում է ակնկալիքների համակարգ և՛ բուհի գործունեության վերջնարդյունքի, և՛ գործընթացի նկատմամբ: Մյուս կողմից, ինչպես ցանկացած ինստիտուտի, այնպես էլ կրթական ինստիտուտի գործունեության վերաբերյալ շահառուներն ունեն որոշակի պատկերացումներ: Հենց այս պատկերացումների և ակնկալիքների հիման վրա էլ ձևավորում են շահառուների (այդ թվում՝ ուսանողների) գնահատականները և գոհունակությունը:

Այսօր կրթության բնագավառի գերխնդիրը կրթության որակն է. «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2016-2025 թվականների պետական ծրագրով» սահմանվում է, որ մասնագիտական կրթության ոլորտում հիմնական գերակայությունը կրթության որակի բարձրացումն է: Որպես նպատակ և վերջնարդյունք սահմանվում է, որ անհրաժեշտ է «մինչև 2025 թվականը զգալիորեն ավելացնել մասնագիտական կարողություններ ունեցող երիտասարդների և մեծահասակների թիվը՝ վերջիններիս համար արժանապատիվ աշխատանք գտնելու, գործազրկությունը նվազեցնելու և գործարարությունը խթանելու նպատակով»²:

Կրթությունը կապված է հասարակական կյանքի բոլոր ոլորտների հետ: Ըստ այդմ՝ կրթության ինստիտուտի իրականացրած գործառնությունները ծառայում են ոչ միայն մեկ սոցիալական ինստիտուտի գործառնմանը, այլ նաև հասարակությանը: Այս համատեքստում մեծապես կարևորվում է բարձրագույն կրթության որակը, որն անմիջականորեն կապված է և իր ազդեցություն է թողնում ինչպես կրթական ինստիտուտի, այնպես էլ հասարակության կենսագործունեության համար կարևոր նշանակություն ունեցող այլ ինստիտուտների, այդ թվում՝ տնտեսության, առողջապահության, արդյունաբերության, գյուղատնտեսության զարգացման վրա: Այսինքն՝ մասնագիտական կրթության որակը պետության զարգացման և գործառնման կարևոր ցուցիչներից մեկն է: Կրթության որակը, որպես սոցիալական և մանկավարժական համակարգ, նկարագրվում է այնպիսի ցուցանիշների միջոցով, որոնք բնութագրում են գործունեության վերջնական արդյունքը:

Կրթության որակի սահմանման, հետազոտման և դրա բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման գործընթացում նախ և առաջ բախվում

¹ Տե՛ս <http://en.unesco.org/events/23rd-ordinary-session-international-bioethics-committee-ibs-and-joint-session-ibc-and>, ըստ 9.06.2016:

² Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2016-2025 թվականների պետական ծրագիր, էջ 11:

ենք կրթության որակ հասկացության սահմանման և տարբեր շահառուների կողմից դրա ընկալումների տարբերությունների հետ:

Բարձրագույն կրթության մեջ որակը բազմաչափ, բազմամակարդակ և դինամիկ հասկացություն է: Կրթության որակի վերաբերյալ պաշտոնական և ոչ պաշտոնական փաստաթղթերի ուսումնասիրությունը և շահառու խմբերի հետ իրականացրած հարցումները ցույց են տալիս, որ սոցիալական տարբեր խմբեր ունեն կրթության որակի վերաբերյալ տարբեր ընկալումներ և տալիս են տարբեր մեկնաբանություններ:

Մասնագիտական գրականության մեջ որակի ապահովման գործունեության շրջանակը որոշվում է մասնագիտական կրթության համակարգի կառուցվածքով և չափերով: Որակի կառավարումը, բարելավումը, վերահսկումը և գնահատումը որակի ապահովման գործընթացի իրականացման երաշխիքներն են: Ուսումնական հաստատության տրամադրած կրթությունը որակով է այնքանով, որքանով համապատասխանում է իր առջև դրված նպատակ(ներ)ին: Առավել որակով է համարվում այն հաստատությունը, որը հստակ է սահմանում իր նպատակը և արդյունավետորեն իրականացնում այն: Նպատակը կարող է լինել սպառողի, շահառուների խմբերի կարիքները բավարարելը: Սակայն տարբեր շահառու խմբեր **կրթական կարիք** և **կրթության որակ** հասկացությունների վերաբերյալ ունեն տարբեր ընկալումներ:

Բարձրագույն կրթության համակարգում կրթության որակին առնչվող հիմնախնդիրների բացահայտման նպատակով մեր կողմից իրականացվել է որակական սոցիոլոգիական հետազոտություն Երևան քաղաքում գործող պետական և ոչ պետական բուհերի մագիստրատուրայում սովորող ուսանողների շրջանում: Հետազոտության նպատակն է եղել՝ բացահայտել մագիստրատուրայում սովորող ուսանողների կրթական պահանջմունքները կրթության որակի ապահովման համատեքստում: Հետազոտությունը իրականացվել է ֆոկուս խմբային քննարկման և խորին հարցազրույցի մեթոդների կիրառմամբ, որոնց մասնակցել են պետական և ոչ պետական բուհերի մագիստրատուրայի առկա և հեռակա համակարգում սովորող ուսանողները: Տեղեկատվության ամբողջականության ապահովման նպատակով խորին հարցազրույցներ են իրականացվել նաև գործատուների և դասախոսների հետ:

Մեր կողմից ուսանողների շրջանում իրականացված որակական հարցումները ցույց են տալիս, որ ուսանողները դժվարանում են սահմանել կրթության որակի ապահովման հիմնական բաղադրիչները և բարձրագույն կրթության որակը անմիջականորեն կապում են «բարձրակ մասնագետ» հասկացության հետ՝ նշելով, որ որակյալ կարող է համարվել այն կրթությունը, որի արդյունքում բուհը ավարտում են որակյալ մասնագետներ: Սակայն «որակյալ մասնագետ» հասկացության մեկնաբանությունները հաճախ մակերեսային և չգիտակցված բնույթ են կրում:

Ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ շահառուները կրթության որակի սահմանման հիմնական բաղադրիչ են նշում «կիրառելի գիտելիքի և հմտությունների տիրապետումը»: Ընդ որում, նման տեսակետն առաջ է գալիս միայն քննարկումների արդյունքում, և կարծես թե առավել շատ ձևավորվում

է քննարկման ժամանակ, և ոչ թե արդեն ձևավորված տեսակետ տ է քննարկվող թեմայի վերաբերյալ:

Հարկ է նշել, որ այս դեպքում ևս քննարկումների ժամանակ հարցվողները կանգնում էին փակուղու առաջ, երբ փորձում էին սահմանել կամ բացատրել, թե որն է համարվում կիրառելի գիտելիք, իսկ որը՝ ոչ:

Հետաքրքրական է, որ արդյունքում մեկ ինստիտուտի գործունեության որակի գնահատումը շահառուները կապում են մեկ այլ ինստիտուտում ներգրավված լինելու հանգամանքով (տվյալ դեպքում՝ աշխատաշուկան որպես սոցիալական ինստիտուտ): Այս փաստը ևս մեկ անգամ ցույց է տալիս կրթական ինստիտուտի դերը այլ ինստիտուտների զարգացման գործում և բուհ-աշխատաշուկա ինստիտուտների փոխկապվածությունը:

Կրթության որակ հասկացության սահմանման դժվարությունը, մեր համոզմամբ, կապված է ստացված կրթությունից ակնկալիքների և գործընթացի իրականացման վերաբերյալ ոչ հստակ պատկերացումների հետ: Այսինքն՝ ուսանողները ոչ միշտ են հստակ պատկերացնում, թե վերջնարդյունքում ինչ է ուսուցումը, բարձրագույն կրթությունը, և ինչպիսի միավորներով է անհրաժեշտ չափել դրա որակն ու արդյունավետությունը:

Տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների, անհատների կողմից իրականացված հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ շահառուների շրջանում ավարտական վկայականի առկայությունն առավել շատ է կարևորվում, քան կրթության բովանդակությունը:

«Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն» գեկույցի համաձայն՝ շատ դասախոսների և ուսանողների, ինչպես և լայն հասարակության գերակշռող մեծամասնության համար բարձրագույն կրթության դիպլոմը գնահատվում է գլխավորապես որպես ծառայողական առաջխաղացման հնարավորություն տվող մի վկայական կամ փաստաթուղթ, այլ ոչ թե որպես բարձրագույն կրթության և գիտելիքների մասին վկայող փաստ: Բարձրագույն կրթության դիպլոմ կարելի է ստանալ նույնիսկ առանց մեծ ջանքերի. երբեմն ոչ թե կաշառք, այլ պարզապես սովորական ուսման վարձ վճարելը լրիվ բավական է՝ հաշվի առնելով այն փաստը, որ բարձրագույն ուսումնական հաստատությունները գոյատևում են այս վարձերից գոյացած միջոցներով, ուստի, որպես կանոն, կրթական համակարգից դուրս չեն թողնում ուսանողներին¹:

Այս դիրքորոշումը վերահաստատվում է նաև ուսանողների հետ իրականացված ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ, որոնց ժամանակ հաճախ հանդիպում էին այնպիսի գնահատականներ, ինչպիսիք են «...դիպլոմ ստանաս, մնացածը կարևոր չէ», «...հիմա ո՞վ է նայում ինչ մասնագետ ես, կարևորը դիպլոմ ունենաս», «...սովորելու տարիներին ավելի շատ ջանք ենք թափում դիպլոմ ստանալու համար, քան գիտելիք» և այլն:

¹ Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն, ըստ http://www.osf.am/wp-content/uploads/2013/10/OSF_HE_report_ARM.pdf կայքի:

Այսպիսով՝ կրթության որակի գնահատման մեթոդների քննարկման և շահառուների կողմից գնահատականների վերլուծման ժամանակ կարևոր է ոչ միայն դառնում օբյեկտիվ և չափելի միավորների սահմանումը, այլ նաև գնահատողի կրթության արժեհամակարգի, կրթական փորձի (առաջադիմություն, ուսումնառություն այլ կրթական հաստատություններում և այլն) և այլ գործոնների բացահայտումը, որոնք ուղղակիորեն և անուղղակիորեն ազդում են որակի գնահատման գործընթացի վրա:

Ուսանողների շրջանում կրթության որակի վերաբերյալ գնատահականները և դիրքորոշումները ոչ միշտ են հիմնված սեփական փորձի կամ փաստացի տվյալների վրա: Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ դրանք առավել շատ պրոյեկտիվ բնույթ են կրում: Մասնավորապես, առկա և հեռակա համակարգերում սովորող ուսանողները հետ իրականացված քննարկումները ցույց են տալիս, որ կրթության որակը փոխվում է կախված այն հանգամանքից՝ ուսանողներն առկա համակարգում են սովորում, թե հեռակա, սակայն մանրամասնող, ճշտող հարցերի կիրառման արդյունքում պարզ է դառնում, որ նման կարծիքների ձևավորումը հիմնականում հիմնված է ոչ թե սեփական փորձի վրա, այլ ձևավորվում է ռեֆերենտ խմբերի և սոցիալական կապիտալի կարծիքների հիման վրա:

Գործատուների և դասախոսների շրջանում իրականացված հարցումների տվյալները ցույց են տալիս, որ վերջիններս որևէ էական տարբերություն չեն նշում առկա և հեռակա համակարգում սովորող ուսանողների գիտելիքների և հմտությունների վերաբերյալ: Մինչդեռ հեռակա համակարգում սովորող ուսանողները նշում են, որ տարածված կարծիք կա այ մասին, որ իրենց ստացած կրթության որակն առավել ցածր է, քանի որ դասախոսները բավարար ուշադրություն չեն դարձնում ուսանողների կողմից նյութի ամբողջական սերտմանը, դրան նպաստում է նաև այն, որ ամբողջ ծրագրի սերտման համար ուսանողներն ունեն շատ քիչ ժամանակ, իսկ այն ամիսներին, երբ դասերի չեն հաճախում, առհասարակ ոչինչ չեն անում: Հետաքրքրական է, որ ուսանողները տվյալ համատեքստում տողատակով, հաճախ՝ չգիտակցված, որպես կրթության որակի ապահովման տարր՝ նշում են դասախոսների հետևողական մոտեցումը՝ ուսանողների նյութի ամբողջական սերտման գործում, սակայն քննարկումների ժամանակ բարձրաձայնում են, որ առավել կարևոր է նյութի մատուցման ձևը, հասանելիությունը: Նշվում է, որ դասախոսը պետք է մոտիվացնի ուսանողին սովորել, այլ ոչ թե «ստիպի»:

Սեփական փորձի կամ փաստացի տվյալների վրա հիմնականում չեն հիմնվում նաև այն մոտեցումները, որոնց միջոցով ուսանողները փորձում են մեկնաբանել կրթության որակի վերաբերյալ իրենց ցածր գնահատականները կամ կրթության որակից գոհունակության ցածր մակարդակը:

Ըստ «դժգոհ» ուսանողների՝ դասավանդվող գիտելիքները հնացած են և չեն համապատասխանում այժմյան աշխատաշուկայի պահանջներին: Մակայն հարցման արդյունքները ցույց են տալիս, որ այն ուսանողները, ովքեր սովորելուն զուգահեռ մասնագիտական աշխատանք են իրականացնում, առավել հակված են բարձր գնահատել կրթության որակը, քան այն ուսանողները, ով-

քեր ոչ մասնագիտական աշխատանք են իրականացնում, կամ առհասարակ չեն աշխատում:

Մասնագիտական աշխատանք իրականացնող ուսանողները նշում են, որ աշխատանքի մեջ կիրառում են ուսուցման ընթացքում ստացած հմտությունները և գիտելիքները: Մեր կողմից անցկացված հարցումները վկայում են, որ այս ուսանողները բարձր են գնահատել կրթության որակը իրենց բուհերում: Հարցվողները նշում են, որ աշխատանքի ընթացքում առավել հստակ են պատկերացնում ստացված գիտելիքների և հմտությունների անհրաժեշտությունը:

Նույն միտումը առկա է նաև առաջադիմության և կրթության որակից գոհունակության մակարդակի միջև կապի հարցում: Բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներն առավել հակված են բարձր գնահատել կրթության որակը, քան ցածր առաջադիմություն ունեցողները: Մեր կարծիքով՝ կրթության որակի գնահատման վրա մեծապես ազդում են ուսանողների արժեքահավասար գր, փորձը և հասարակության շրջանում տարածված դիրքորոշումները կրթության գործընթացի, ստացված գիտելիքների կիրառելիության և աշխատաշուկայի վերաբերյալ: Կրթության որակի գնահատման չափանիշները, որոնք ներկայացվում են ուսանողների կողմից, առավել ընդհարական բնույթ են կրում և հիմնականում ուսումնառության բուն գործընթացին անմիջականորեն չեն վերաբերում:

Ուսանողների և գործատուների կարծիքով՝ բուհերում դասավանդվող գիտելիքներն ունեն տեսական բնույթ, բավարար չեն գործնական դասընթացները, որոնք կնպաստեն գործնական հմտությունների ձեռքբերմանը: Մյուս կողմից, ուսումնական պրակտիկաները պատշաճ մակարդակով չեն կազմակերպվում և հնարավորություն չեն տալիս ուսանողների շրջանում զարգացնել պրակտիկ հմտություններ:

Ըստ հետազոտության տվյալների՝ կրթության որակի բարձրացման նպատակով անհրաժեշտ է ուսումնական ծրագրերում հնարավորինս ավելացնել և զարգացնել գործնական առաջադրանքների հատվածը: Մշակել և իրականացնել ուսումնական պրակտիկաների զարգացման նոր ծրագրեր, որոնք առավել կսերտացնեն գործատու-բուհ կապը: Գործատուները նշում են, որ առավել շատ շահագրգռված կլինեն համագործակցել բուհերի հետ պրակտիկաների անցկացման հարցում, այն պարագայում, եթե վստահ լինեն, որ ուսանողները, մուտք գործելով կազմակերպություն, ոչ միայն չեն խանգարի կազմակերպության բնականոն գործունեությանը, այլ նաև կնպաստեն և իրենց ստացած գիտելիքներն ինչ-որ չափով կներդնեն կազմակերպության գործունեության մեջ: Սակայն գործատուների գնահատմամբ ուսանողները խուսափում են հանձնարարված առաջադրանքը կատարելուց՝ այն հաճախ որակելով «շահագործում»:

Գործատուները՝ որպես կրթության որակի չափանիշ են նշում աշխատանքային պարտականությունների արդյունավետ իրականացման հմտությունների և գիտելիքների առկայությունը շրջանավարտների մոտ: Մասնավորապես նշում են, որ կրթության որակի բարձրացման նպատակով անհրաժեշտ է

ուսանողների մոտ ձևավորել պատրաստի ալգորիթմ չունեցող բարդ գործողություններ կատարելու ունակություն: Գործատուների շրջանում իրականացված հետազոտությունների տվյալները ցույց են տալիս, որ ավարտական վկայականը կրթության որակի և անհրաժեշտ գիտելիքների առկայության երաշխիք չէ: Ըստ նրանց գնահատման՝ ՀՀ-ում կրթության ոլորտը դեռ չի հասել այն զարգացվածության աստճանին, որ միայն ավարտական վկայականի առկայության դեպքում գործատուն վստահ կարողանա աշխատանքի հրավիրել շրջանավարտներին: Ըստ հարցման մասնակիցների կանխատեսումների՝ այդպիսի ցուցանիշ մեր երկրում դեռևս շատ երկար ժամանակ բուռն չի կարող ապահովել: Նման իրավիճակի ձևավորման վրա ազդում է ինչպես կրթական համակարգը, որպես ինքնուրույն միավոր, այնպես էլ երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, հասարակության մշակութային և արժեհամակարգային առանձնահատկությունները և այլն:

Այսպիսով՝ կրթության որակից ուսանողների գոհունակության չափման մեթոդաբանության մշակման ժամանակ, մեր կարծիքով, անհրաժեշտ է հաշվի առնել, որ կրթության որակի բուն շահառուների շրջանում դեռևս հստակ պատկերացում ձևավորված չէ «կրթության որակ» հասկացության սահմանման և դրա բաղադրիչ տարրերի վերաբերյալ:

Ընդհանրացնելով՝ կարելի է ասել, որ «կրթության որակ» հասկացության շուրջ շահառուների շրջանում կա թյուրըմբռնում. կրթության քաղաքականություն մշակողները տալիս են կրթության որակի հետևյալ մեկնաբանությունը՝ համապատասխանություն պետական կրթական չափորոշիչներին: Ուսանողները կրթության որակը ներկայացնում են որպես համապատասխանություն աշխատաշուկայի պահանջներին, դասախոսները՝ դասապրոցեսի արդյունավետությունն են սովորաբար համարում կրթության որակի երաշխիք, իսկ գործատուները՝ հանձնարարությունների կամ աշխատանքային պարտականությունների կատարման արագությունը և արդյունավետությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բարձրագույն և հետբուհական կրթության մասին ՀՀ օրենքը
2. Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2016-2025 թվականների պետական ծրագիր
3. Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր
4. Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն, ըստ http://www.osf.am/wpcontent/uploads/2013/10/OSF_HE_report_ARM.pdf կայքի:
5. Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում, <http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf>
6. Զալցբուրգյան սկզբունքներ. իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում, <http://www.anqa.am>
7. www.anqa.am

НАРИНЕ ВАРДАНЯН

Национальная академия наук РА, Международный научно-образовательный центр,
заведующая отделом обеспечения качества образования,
кандидат филологических наук, доцент

АНГЕЛИНА МАКАРЯН

Социолог, магистр

**ОЦЕНКА КАЧЕСТВА ОБРАЗОВАНИЯ С ТОЧКИ ЗРЕНИЯ ПОТРЕБИТЕЛЕЙ
НА ПРИМЕРЕ ВУЗОВ АРМЕНИИ**

Оценка студентами качества образования - это альтернативный и новаторский метод как при оценке качества в системе высшего образования, так и с точки зрения оценки эффективности образовательных реформ.

Однако на сегодняшний день среди бенефициаров (заинтересованных лиц) налицо непонимание понятия «качество образования»: авторы политики образования формулируют качество образования как соответствие государственным образовательным стандартам. Студенты представляют качество образования как соответствие требованиям рынка труда, преподаватели по большей части понимают под гарантией качества образования эффективность учебного процесса, а работодатели – скорость и эффективность выполнения служебных обязательств.

NARINE VARDANYAN

International Scientific-Educational Center of NAS RA

Head of the QA Department

Candidate of Philological Sciences, Associate Professor

ANGELINA MAKARYAN

Sociologist, MA

**ASSESSMENT OF EDUCATION QUALITY FROM THE STEAKHOLDER'S STANDPOINT ON
THE EXAMPLE OF ARMENIAN UNIVERSITIES**

Students' assessment of education quality is an alternative and innovative method both in assessing quality in the higher education system and in assessing the effectiveness of educational reforms.

However, nowadays, there is a misunderstanding of the concept of "quality of education" among the stakeholders: education policy authors formulate the quality of education as compliance with state educational standards.

Students represent the quality of education as meeting the requirements of the labor market, educators under the education quality guarantee mostly understand the effectiveness of the educational process, and employers - the speed and effectiveness of performance of service obligations.

ԱՍՏԴԻՎ ԱՎԵՏԻՍՅԱԼ

ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՏՐՅԱԼ

ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի ասպիրանտ

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՎԱԶԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝
ԸՆՏՐԱԶԱՆԳՎԱԾԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Քաղաքական տեխնոլոգիաների գործիքակազմում քաղաքական գովազդը ուրույն և կարևոր տեղ է գրավում: Վաղուց արդեն քաղաքական գովազդը ժողովրդավարական երկրներում նախընտրական ու հետընտրական շրջանների անբաժանելի մասն է: Այն հստակ ձևավորված է, ակտիվորեն ու շատ տեղին գործառնում է, սակայն վերջին տարիներին քաղաքական գովազդն աչքի է ընկնում բազում և նորարարական յուրահատկություններով ու դրսևորումներով: Ցանկացած գովազդային արշավ, մեծ հաշվով, նպատակաուղղված է որոշակի իմիջի, այլ կերպ ասած գեղեցիկ փաթեթավորման ու բրենդի ձևավորման, որը քաղաքական տեխնոլոգիաների գործիքակազմում աչքի է ընկնում իրեն բնորոշ մի շարք օրինաչափություններով և առանձնահատկություններով:

Հանգուցային բառեր՝ գովազդային տեխնոլոգիաներ, քաղաքական տեխնոլոգիաներ, գովազդ, քաղաքական գովազդ, հեռուստատեսային գովազդ, քաղաքականություն, մեդիա, ՁԼՄ, սոցիալական մեդիա, հոգեբանական ներազդում, ընտրություններ, ընտրողներ, քվե

Ժամանակակից քաղաքական տեխնոլոգիաների շարքում առանձնահատուկ և թեկնածուների՝ հաղթանակի հասնելու ճանապարհին անփոխարինելի, կարևոր տեղ է գրավում քաղաքական գովազդը: Քաղաքական գործիչների, կուսակցությունների և նրանց մասին հանրությանը տեղեկացնող, ընտրագանգվածի վրա հստակ ազդեցություն թողնող, վերաբերմունք և դիրքորոշում ձևավորող գովազդը վերջին տասնամյակների ընթացքում լայն թափով մուտք է գործել քաղաքական հարաբերությունների և ընտրապայքարի տիրույթ: Ըստ էության՝ քաղաքական գովազդը վաղուց արդեն որոշիչ գործոն է ոչ միայն նախընտրական պայքարի փուլում, այլև տարբեր քաղաքական գործընթացներում և գաղափարների, ծրագրերի առաջնական ժամանակ՝ հարկ եղած դեպքում ցանկալի վերաբերմունք և հանրային աջակցություն ձևավորելու համար:

Բիզնեսում սեփական ապրանքներն ու ծառայությունները շուկայում հաջողությամբ իրացնելու համար նախնառաջ պետք է տեղեկացնել այդ մասին բոլոր հավանական գնորդներին: Ամերիկյան գովազդային շուկայում վաղուց հայտնի ասույթ է ձևավորվել, որի համաձայն՝ «Վարել բիզնեսն առանց գո-

վազդի նույնն է, թե աչքով անել աղջկան մթության մեջ. դուք գիտեք, որ սիրահետում եք նրան, իսկ նա՝ ոչ»¹: Գովազդը հրավիրում է հանրության ուշադրությունն ապրանքի վրա, ընդգծում դրա շահավետ կողմերն ու մատնանշում, թե ինչ պահանջմունքներ կարող է այն բավարարել: Գովազդի վերջնարդյունքը հաշվի առնելով՝ հստակեցվում է դրա կիրարկման շուկան, վերլուծելով վերջինի առանձնահատկությունները՝ ձևակերպվում է ուղերձը, մեդիապլանը և բյուջեն: Գրեթե նույնպիսի օրենքներ ու կանոններ են գործում քաղաքական գովազդում: Առաջիններից մեկն այս նմանությունը մատնանշել է ֆրանսիացի սոցիոլոգ Գյուստավ Լեբոնն ավելի քան մեկ դար առաջ՝ «Ձանգվածների հոգեբանություն» աշխատությունում²: Տարիներ առաջ, երբ Աֆրիկայի հյուսիսը Ֆրանսիայի գերիշխանության տակ էր, ֆրանսիացիներն իրենց գաղութների ներքին կյանքը կարգի բերելու համար որոշեցին այնտեղ կիրառել իրենց օրենքների պարզեցված տարբերակը՝ դա ներկայացնելով որպես լավագույն լուծում տեղական խնդիրների: Տեղի ժողովրդին սվեցին ընտրությամբ իշխանություն ձևավորելու հնարավորություն, հույս ունենալով, որ այդ կերպ կվերանան ներքաղաքական լարվածությունները, միմիայն արժանավորները կստանձնեն հպատակ երկրի ղեկավարումը, տնտեսությունն էլ կաճի. դրա շնորհիվ իրենք և քիչ հոգս կունենան, և շատ նյութական օգուտներ: Մակայն ընդամենը մի որոշ ժամանակ անց ֆրանսիացիներն ակնհայտ զարմանքով պարզեցին, որ ներմուծած իրենց օրենքներն ուղղակի ոչինչ են. ոչ միայն չեն նպաստել երկրի կայունացմանը, այլև նկատվում է քաղաքական կրքերի առավել շիկացում, ժողովրդի ահավոր այլասերում, պետությունը քայքայվում է ու կանգնում կործանման վտանգի առջև³: Մինչև այսօր շատ քաղաքագետների, քաղաքական տեխնոլոգիաներ ուսումնասիրողների և քաղաքական խորհրդատվությամբ զբաղվող ընկերությունների շրջանում տիրապետող է մնում այն մոտեցումը, որ քաղաքական դերակատարների վերաբերյալ գովազդը կենսունակ է մեծապես ժողովրդավարական ավանդույթ և հարուստ քաղաքական մշակույթ ունեցող երկրներում: Պատճառն ակնհայտ է. ժողովրդավարական հասարակություններում առկա գաղափարական պայքարը, ընտրողների՝ քաղաքական գործընթացի մասնակից լինելու մշակույթը, քաղաքական համակարգի արդյունավետ կիրարկումը և բազմաթիվ այլ գործոններ հարմարավետ հենք են քաղաքական տեխնոլոգիաների գործիքակազմում կարևոր և նպատակային գործառույթ իրականացնող քաղաքական գովազդային արշավներ իրականացնելու համար:

Գովազդի պատրաստմամբ զբաղվող մասնագետները գիտեն, որ այն նախաառաջ հրավիրում է ուշադրություն, առաջացնում է հետաքրքրություն և ցանկություն, մղում է գործողության՝ ապրանքի գնման: Գովազդի դասական բանաձևը կարճ հապավում է՝ AIDA՝ attention - ուշադրություն, interest - հե-

¹ **Britt S.H., Boyd Jr. H.W.**, Marketing Management and Administrative Action, McGraw-Hill Companies, 1973, pp. 38

² **Le Bon G.**, The Crowd. A Study of the popular mind, Batoche Books, Kitchener, 2001, pp. 7-13

³ **Պեյսանյան Ա.**, Մի՛ տարեք մարդկանց ընտրությունների, հասանելի է՝ [http://www.tert.am/am/news/2016/04/18/arm/1993759]

տաքքրություն, desire - ցանկություն և action - գործողություն¹: Ներկայում ավելացել է ևս մեկ կարևոր տարր՝ M-ը՝ motive – շարժառիթ: Այն ներկայացվում է որպես AIMDA բանաձև:

Ընտրողների մտքի և գիտակցության վրա ազդելիս AIMDA բանաձևման որոշ բաղադրիչներ կարող են չգործառնվել: Խնդրի էությունն այլ է. մշակելով ցանկացած գովազդային նախագիծ՝ քաղաքական խորհրդատուն ձգտում է մտապահել այս բանաձևման բոլոր հինգ տարրերը այնպես, որ թեկնածուի գովազդը մեծ ուշադրություն գրավի, հետաքրքրություն առաջացնի, կապված լինի ընտրողների պահանջմունքների հետ: Քաղաքական խորհրդատուները և գովազդով զբաղվող մասնագետները մշտապես փորձում են ընտրողների շրջանում ստեղծել վառ տպավորություն՝ գրավիչ ու դրական լույսի ներքո ներկայացնելով քաղաքական ուժին, թեկնածուին, կուսակցությանը:

Քաղաքական դերակատարի կամ գործընթացի վրա քաղաքական գովազդի հոգեբանական ներգործության համատեքստում առաջին օղակը ուշադրություն հրավիրելն է: Որպեսզի հանրույթը՝ քաղաքական գովազդի հասցեատերը, ընկալի, իմաստավորի և մտապահի իրեն ուղղված գովազդը, անհրաժեշտ է ճանաչելիության ստեղծում: Եթե թեկնածուն գործող և ազդեցություն ունեցող գործիչ է, օրինակ՝ երկրի նախագահը, ապա ստեղծվող գովազդն առանձնակի ուշադրության հրավիրում չի պահանջում: Առաջնահերթություն է նորության կամ յուրահատկության ներկայացումը:

Քաղաքական գովազդում, ընդգծելով թեկնածուի յուրահատկությունը, տարբերակման մեթոդով առանձնացնում ենք նրան մրցակիցներից: Ամենահեշտ ուղին այն է, որ ավելացվեն գովազդի ծավալն ու կրկնման հաճախականությունը: Այսօրվա գովազդային շուկան, սակայն, խիստ մրցակցային է, չափից խոշոր ներդրումներ և ֆինանսական ռեսուրսներ է խլում: Գովազդի արդյունավետությունը բարձրացնելու համար պահանջվում է հոգեբանական օրինաչափությունների լավ իմացություն: Գովազդի բովանդակությունը հստակ է և խիստ թիրախային՝ պայմանավորված լսարանի սեռային, տարիքային, մասնագիտական առանձնահատկություններով:

Հարկ է հաշվի առնել, որ մի շարք գործոններ կարող են բարձրացնել նաև «ակամա ուշադրության» ինտենսիվությունը²՝ գովազդի նորությունը, արտասովորությունը, որոշակիորեն մատուցման ոճը, բուն ասելիքի էությունը և կարևորությունը ընտրողի համար: Թեկնածուի գովազդը ստեղծվում է հնարավորինս ինքնատիպ, անսովոր, հրապուրիչ: Այս համատեքստում գովազդային հոլովակները նախնառաջ միտված են հանրույթի ուշադրությունը գրավելուն՝ ակտիվացնելով դրա պարզագույն ձևը՝ կողմնորոշման ռեֆլեքսը: Ըստ ռուս հոգեբան Լև Վեկերի՝ մարդկանց հոգեբանության կարևոր տարրերից մեկը ուշադրության գրավման կանոնավոր-կամավոր մեթոդն է: Եթե մարդը կամավոր իր ուշադրությունը հրավիրում է ինչ-որ երևույթի վրա, ապա նա ազդվել է գովազդից: Մինչև դրան հասնելը նախ ակամա ուշադրությունն է առա-

¹ Ավետիսյան Ա. Շ., Հանրային կապեր, դասախոսություններ, Անտարես հրատ., Երևան, 2008, էջ 18:

² Комарова Т.К., Психология внимания, Гродно, 2002, стр. 12

ջին պլան մղվում¹: Մրցակցության սկզբունքները, գրված և չգրված «խաղի կանոններով» պայքարը հասարակության գործառնության գրեթե բոլոր ոլորտներում առկա են: Այս համատեքստում յուրաքանչյուր կողմի համար կարող է գոյություն ունենալ սեփական կարիքներից բխող մեկ կամ մի քանի առաջնային նպատակ: Ամեն գնով հաղթել, զբաղեցնել ազդեցիկ դիրքեր, սեփական անձը նաև որոշակի ընդունելի «բրենդ» դարձնել, ընտրվել և որոշումներ կայացնողի պաշտոն զբաղեցնել. սա ստիպում է պայքարել նպատակներին հասնելու համար: Քաղաքականությունում հաղթելը մեծ ազդեցության և իշխանության ոլորտ է ապահովում, ինչն ավելի մրցակցային է դարձնում այն, հետևաբար հանուն ցանկալի հաղթանակի քաղաքական դերակատարները պատրաստ են բավականաչափ նյութական միջոցներ վատնել՝ դա զուտ ներդրում համարելով: Քաղաքական գործիչներից շատերը հաղթանակը պատկերացնում են քաղաքական պայքարի թույլատրելի, իրավական առումով ոչ խոցելի մեթոդներով ու միջոցներով: Չնայած դրան հաճախ գործի է դրվում և ոչ թույլատրելի գործիքակազմը: Այդ թվում՝ ոչ թույլատրելի մեթոդները կիրառվում են քաղաքական գովազդում՝ որպես մրցակցին հակազդում: Թե ուր կթեքվի անտեսանելի կշեռքի նժարը քվեարկության ժամանակ թեկնածուների միջև պայքարի համատեքստում արժանիին որոշելիս, կախված է նրանից, թե ընտրողի գիտակցության, ինչպես նաև ենթագիտակցության վրա ազդող որ փաստարկներն ավելի ուժեղ կլինեն: Գովազդի միջոցով հանրության ուղղորդել տալով ընտրության հնարավորություն, լավագույն լուծումն է:

Գովազդային արշավ իրականացնելու համար այսօր մեծ ֆինանսական ռեսուրսներ են ծախսվում, զարգանում է քաղաքական տեխնոլոգիաների գործիքակազմը, իսկ յուրաքանչյուր գործիք կարող է կիրառվել այնպես, ինչպես ցանկանում է այն իրացնել դրա կիրառողը: Անհրաժեշտ ընտրության մղող գործոններից կարող են լինել լրացուցիչ դրական տեղեկությունները թեկնածուի մասին քարոզարշավի վերջին օրերին, իրավիճակի «տեսանելի» կանխատեսումը ընտրողների համար, մեծամասնության «դիրքորոշման» ներկայացումը և այլն: Այս ամենը կարող է բովանդակային տեղ գրավել քաղաքական գովազդում՝ ստիպելով ընտրողին որոշում կայացնել ամեննին էլ ոչ ինքնակամ:

Ընտրազանգվածի վրա քաղաքական գովազդի միջոցով հոգեբանական ներազդման համար հատուկ մեթոդներ կան, որոնք ակտիվորեն գործի են դնում քաղաքական գործիչների և կուսակցությունների նախընտրական փուլը պլանավորած մասնագետները: Նախընտրական պայքարում հոգեբանական ներազդման համար գործի դրվող մեթոդները սովորաբար իրենց ցանկալի արդյունքն են բերում այնպիսի հասարակություններում, որտեղ մեծամասնություն են կազմում այն ընտրողները, ովքեր զինված չեն հակազդող գիտելիքներով կամ էլ չունեն քաղաքականության և հոգեբանության մասին որոշակի գիտելիքներ: Այս դեպքում հեշտ է նրանց ենթարկել հոգեբանական մանիպուլյա-

¹ Веккер Л.М., Психика и реальность: Единая теория психических процессов, Смысл, Москва, 1998, стр. 435-441

ցիայի: Մա չափազանց ակտիվ կիրառում է ստացել ամբողջ աշխարհում՝ ներթափանցելով նաև Հայաստան:

Երբ XX դարում տեղեկատվության տարածման համար ստեղծվեցին նոր միջոցներ և ընտրազանգվածի գիտակցությունը հնարավորինս մանիպուլյացիայի ենթարկելու և կառավարելու գործիքներ, ինչպես օրինակ՝ հեռուստատեսությունը և համացանցը, մշակվեց քաղաքական տեխնոլոգիաների նոր ուղի ավելի ժամանակակից գործիքակազմ, որը համակարգում է ընտրողների գիտակցությունը: Արդի ժամանակահատվածում մանիպուլյատորների առաջադրանքն է քաղաքացիների հայացքների, կարծիքների փոխելը, և սա արվում է ինչպես նկատելի՝ գիտակցաբար, այնպես էլ աննկատ ճանապարհով: Տեսաբան, սոցիոլոգ Վ. Շեյնովը հիմնավորում է, որ մարդկանց վրա հոգեբանական ներազդման մեթոդները բազմաբնույթ են. նշյալ մեթոդները հեշտությամբ ունենում են ցանկալի արդյունք, եթե դրանք գործի են դրվում ճիշտ ուղղությամբ, որոնցից է, օրինակ, **հայտնիության գործոնը**, այսինքն՝ թեկնածուն պետք է լինի որոշակի չափով ճանաչված, որով նա ընտրողի համար ստեղծում է թվացյալ «բարեկամի» կերպար և այդպես ապահովում ցանկալի «մտերմիկ» կապ ընտրազանգվածի հետ¹: Մա լիովին հեշտացնում է ընտրողների գործը վերջնական կողմնորոշման և քվեարկության համար:

Քաղաքական գովազդի վերջին տարիների ուսումնասիրությունները ցույց են տվել ընտրազանգվածի վրա հոգեբանական ներազդման մեթոդների ազդեցիվ կիրառում, որոնք քաղաքական գործիչներն ակտիվ գործի դնելով, կարողանում են և՛ ներազդել, և՛ ուղղորդել մարդկանց որոշակի քայլերի իրագործման: Գովազդային գործակալությունների, PR մենեջերների և իմիջմեյքերների կողմից կարևորվում են կոնկրետ տարածքում ապրող մարդկանց տարիքային խմբերը, սոցիալական կարգավիճակը, մասնագիտական խմբավորումը, հետաքրքրությունները և այլն²: Մեզմենտավորում և համապատասխան առանձնացումներ անելով՝ մասնագետներն առավել արդյունավետ են ազդում ընտրողների վերջնական որոշման վրա:

Մասնագիտական գրականության մեջ այսօր բազմաթիվ են քաղաքական գովազդի հաջողված ու թեկնածուների հաղթանակն արձանագրած օրինակները, որոնք առանձնանում են բովանդակային ընդհանրություններով և իրենց ձևային տարբերություններով: Այս առումով տեղին է հասկանալ, թե քաղաքական ուժի կողմից ընտրված կարգախոսը որքան հաճախ է նշվում գովազդում կամ ինչպես է այն կապվում թեկնածուի անձին, քաղաքական ծրագրերին ու հանրույթի նպատակներին: Օրինակ՝ 2016 թվականի ԱՄՆ-ի նախագահական ընտրություններում հանրապետականների ներկայացուցիչ Դոնալդ Թրամփի կարգախոսը՝ «*Make America great again*» (հայ.՝ Ամերիկան նորից հզոր դարձնել) քաղաքական փորձագետների կարծիքով ունեցավ մեծ ազդեցություն ընտրազանգվածի վրա: Այն պատկանում էր ԱՄՆ պատմության մեջ հարգանք ունեցող քաղաքական գործչի՝ 40-րդ նախագահ Ռոնալդ Ռեգանի

¹ Шейнов В. П., Манипулирование сознанием, Минск: Харвест, 2010, стр. 115-121.

² Зазыкин В.Г., Психологические аспекты избирательного процесса, Москва, 2002, стр. 75-91.

նին: Մարդկանց մոտ ստեղծվեց որոշակի վստահություն դեպի թեկնածու թրամփր:

Թիրախավորված քաղաքական գովազդ և մշակված քաղաքական իմիջ ունենալուց զատ կարևորվում է տեղեկատվական իրադարձությունների ստեղծումը՝ թեկնածուների գործունեության լուսաբանում ապահովելու համար: Այստեղ հիմնական գործը կատարում է մեդիան: Չանգվածային լրատվության միջոցների՝ հեռուստատեսության, ռադիոյի, թերթերի, լրատվական կայքերի միջոցով, թեկնածուից կերտվում է այնպիսի կերպար, որ ընտրազանգվածի համար ստեղծվի տպավորություն, թե տվյալ քաղաքական թեկնածուն ընտրողներից մեկին է, ժողովրդականություն վայելող ներկայացուցիչ:

Ընտրապայքարում այսօր կարևորվում է ինչպե՛ս քաղաքական գովազդի, այնպե՛ս էլ հակագովազդի դերը: Քաղաքական գովազդն իր բովանդակությամբ ընտրողին թեկնածուի ներկայության մասին հիշեցնող գործառնություն է իրականացնում: Գովազդային հոլովակները, տեղեկատվական թերթիկները, վահանակները, պաստառները, օրացույցները, թերթերը և ամսագրերը, լոգոտիպեր պարունակող ցանկացած ատրիբուտ տվյալ կուսակցության և գաղափարների տարածմանն են միտված¹:

Ընտրապայքարում քաղաքական գովազդն ունի զլորբալ նշանակություն՝ գրավել ընտրազանգվածի ուշադրությունը և բերել նորություն: Քաղաքական գովազդը, որպես քաղաքական տեխնոլոգիա, շատ է կիրառել ԱՄՆ 44-րդ նախագահ Բարակ Օբաման, որի նախընտրական թիմը մեծապես դասական կոմերցիոն գովազդի ոճով էր ներկայացնում թեկնածուին: Օբամայի յուրաքանչյուր ելույթի հիմքում ընկած էր հանրային պահանջունքների խորը հետազոտություն. արդյունքում կարողացավ իմանալ ընտրազանգվածի մեծամասնության առաջնային ցանկությունների, կարիքների ու պահանջների մասին: Քաղաքական մարկետինգի և քաղաքական հանրային կապերի սերտ համագործակցության արդյունքում ստեղծվեց Օբամայի հաղթանակող կերպարը, ինչը հանգեցրեց նրան, որ վերջինս կարողացավ ազդել ոչ միայն ընտրազանգվածի, այլև ամերիկյան հիմնական քաղաքական ուժերի՝ դեմոկրատների և հանրապետականների վրա: Օբամային հաջողվեց գովազդային հնարքի միջոցով կոտրել բազմաթիվ կարծրատիպեր և փոխել մեծամասնության դիրքորոշումը: 2008թ. ընտրական գործընթացի ժամանակ Օբաման ընդհանրապես չէր խոսում, թե ինչ փոփոխություններ կանի, եթե հաղթի ընտրապայքարում կամ առաջ անցնի դեմոկրատական կուսակցության իր մրցակիցներից, այլ հիմնականում կենտրոնացել էր սեփական անձի վրա. նա միշտ պատմում էր իր մասին: Այսպես կոչված անձնական storytelling-ի՝ պատումի միջոցով նա հանդես եկավ հանրային առաջ ու դարձավ հայտնի որպես «թեկնածու, որը մեզնից մեկն է»²: Ելույթների ժամանակ Օբաման հանդես էր գալիս և՛ որպես զերազանց հռետոր, և՛ որպես համարձակ քաղաքական գործիչ: Քաղաքական

¹ Тургаева А.С., Хренова А.Е., Политология: Учебное пособие, СПб.: Питер, 2005, стр. 494-500

² ԱՄՆ-ի 2008 թ.-ի նախագահական ընտրությունների թեկնածու Բարակ Օբամայի քաղաքական գովազդը՝ վերագրված Defining Moment (Կարևորելով պահը), հասանելի է՝ <https://youtu.be/vjvkRFGGgGw>

գովազդի տված հանրային ազդեցությունը հնարավորություն տվեց Օրամային ստանալու շատերի աջակցությունը:

Քաղաքական հակագովազդի ցայտուն և տիպիկ օրինակներ են արձանագրվել 2016 թվականին՝ ԱՄՆ նախագահական ընտրություններում: Դոնալդ Թրամփի և Հիլարի Քլինթոնի նախընտրական թիմերի կողմից միմյանց դեմ ստեղծված վճարովի գովազդային հոլովակներում յուրաքանչյուր կողմը շեշտ էր դնում մյուսին ոչնչացնելու վրա: Բացահայտ ներկայացվում էր, թե ամերիկացիները ում և ինչու են պատրաստվում ընտրել, թե արդյոք նշյալ թեկնածուն արժանի է ստանալու վստահություն կամ ընտրողի քվե: Յուրաքանչյուրի հակագովազդային տեսահոլովակում, որոնք հիմնականում 25-35 վրկ տևողություն ունեն, առկա են համապատասխան «փաստեր», որոնք ամուր հիմք են ներկայացվում քաղաքական գործչին սևացնելու համար: Հիլարի Քլինթոնի թիմի կողմից ստեղծվել էին մրցակցի՝ Թրամփի արտահայտած մտքերի դեմ ուղղված հակագովազդներ: Դրանք գերազանցում էին մի քանի տասնյակը: Գովազդային հոլովակներն ավելի էին սրում ընտրական պայքարը: 30 վրկ տևողությամբ գովազդներից մեկում Թրամփը ասում է. «Եթե ես անգամ կրակ բացեմ ինչ-որ մեկի վրա, միևնույն է ես ոչ մի ձայն չեմ կորցնի»: Ուշագրավ է, որ այսպիսի գովազդը եթեր է հեռարձակվել ավելին քան 15,000 անգամ՝ տեղ ունենալով տարբեր հեռուստաընկերություններում¹: Միացյալ Նահանգներում 2016 թվականին կայացած նախագահական ընտրություններն առանձնահատուկ էին և աչքի ընկան քաղաքական գովազդի, մրցակիցների՝ միմյանց հասցեին հնչեցված ատելության խոսքի առատ կիրառությամբ: Երկու հիմնական թեկնածուներն ակնհայտորեն անընդհատ փորձում էին հանրային առաջ միմյանց սևացնել՝ իրար դեմ ծառայեցնելով քաղաքական գովազդային հոլովակներ:

Մեկ այլ նմանատիպ հակագովազդ, որ կոչվում է «Մեր երեխաները դիտում են ինչպիսի՞ նախագահի կտեսնեն նրանք», մեծ տարածում գտավ սոցիալական մեդիայի օգտատերերի շրջանակում: Այստեղ թեկնածուներից մեկը՝ Քլինթոնը փորձում է խայտառակ անել Թրամփին՝ հասարակության առջև հիմնավոր սևացնելով նրա՝ հավանական նախագահ լինելու տարբերակը²: Մեկ ուրիշում էլ, որ կոչվում է «Հայելիներ» և տեղադրված է հենց Հիլարի Քլինթոնի YouTube-ի էջում՝ ունենալով ավելի քան 5,5 միլիոնից ավելի դիտում, Թրամփը խիստ անվայելուչ, չափազանց բացասական մտքեր է արտահայտում հիմնականում կանանց մասին³: Կան նաև այլ գովազդային հոլովակներ, որտեղ Քլինթոնի մրցակիցը վատ կերպով է արտահայտվում աֆրոամերիկա-

¹ **Bykowicz J.**, Trump condemns Clinton's 'nasty' ads — but they're mostly his own words, հրապարակվել է՝ սեպտեմբերի 30, 2016թ., հասանելի է՝ [<http://www.businessinsider.com/clinton-ads-use-trump-words-against-him-2016-9>]

² **Merica D.**, New Clinton ad shows girls looking in mirror as Trump insults women, CNN, հրապարակվել է՝ սեպտեմբերի 23, 2016թ., հասանելի է՝ [<https://edition.cnn.com/2016/09/23/politics/hillary-clinton-donald-trump-women-ad/index.html>].

³ ԱՄՆ-ի նախագահի թեկնածու Հիլարի Քլինթոնի թիմի պատրաստած քաղաքական գովազդը՝ Mirrors (հայելի), որտեղ մրցակիցը՝ Դոնալդ Թրամփը, ներկայացվում է ոչ որպես նախագահության արժանի անձ: Հասանելի է՝ [<https://youtu.be/vHGPbl-werw>].

ցիներ, մեքսիկացիների մասին՝ վերջիններիս կոչելով ոչ իրական ամերիկացիներ, այլ հանցագործներ, բռնաբարոյներ ու մեծապես անկարգություններ ստեղծող մարդիկ:

Թրամփի դեմ ուղղված մի այլ քաղաքական հակազդվազ, ըստ «*Huffingtonpost*»-ի, ուղղված է ավելի շուտ հենց իր՝ Քլինթոնի դեմ¹: Քաղաքական գովազդում Քլինթոնը խոսում է Ամերիկայի ժողովրդի գործազրկությունից, ամերիկացիների իրական կարիքների մասին՝ մոռանալով այն մասին, որ ինքն է բավականին երկար տարիներ կատարել պետական ծառայություն, և ոչ թե Դոնալդ Թրամփը:

Օրինակներից ընդհանրացնելով՝ քաղաքական գովազդը որպես գործիք ներազդում է մարդկանց քաղաքական որոշումների վրա, ուղղված է որոշակի խմբերի, այն ունի միտում՝ փոխելու մարդկանց վերաբերմունքը կամ քաղաքական դիրքորոշումը: Քաղաքական գովազդն իր էությունը կարող է վիզուալ պատկերի և ոչ միայն խոսքի միջոցով ազդել մարդկանց գիտակցության վրա: Քաղաքական գովազդը կարող է հիմնված լինել և՛ ռացիոնալ, և՛ էմոցիոնալ դաշտի վրա. երկուսն էլ ունենում են արդյունավետ ազդեցություն: Թեկնածուի նկատմամբ դրական վերաբերմունք ապահովելու համար նախևառաջ ուսումնասիրվում է լսարանի հետաքրքրությունը: Այդ պատճառով մինչև քաղաքական պայքարի մեջ մտնելը կատարվում է ուսումնասիրություն՝ որոշելու հանրության պահանջներն ու ցանկությունները, վեր հանելու հանրային խնդիրները, փորձելու տալ կամ բանաձևել հնարավոր լուծումներ: Միայն նախնական պլանավորում և առավելագույն իրատեսական լուծումներ ունենալու պարագայում հավանական է հաջողության հասնել քաղաքականությունում:

Քաղաքական գովազդ է համարվում թեկնածուի կողմից լսարանին նպատակաուղղված ցանկացած քայլ՝ ընտրական գվածի հետ շփումը, իմիջի ձևավորման ընթացքը, բանավեճերը մրցակիցների հետ, տարբեր բնույթի հանրային արշավների մասնակցությունը: Քաղաքական գովազդի հիմքում ընկած է անհատի կառուցվածքային բացահայտման նպատակը: Այս համատեքստում հեշտ է շփոթել այն քաղաքական քարոզչության (ֆր.՝ propagande, անգլ.՝ propaganda) կամ ենթաքարոզչության (լատ.՝ agitatio) հետ, քանի որ դրանցից որոշակի տարբեր քաղաքական գովազդը պարունակում է: Քաղաքական քարոզչությունը, նպատակն է սկզբունքների և գաղափարախոսությունների տարածումը, իսկ ենթաքարոզչությունն ուղղված է որոշակի համոզմունքների հաստատմանը և այն կոչ է անում, մղում է հստակ քայլեր ձեռնարկելու:

Ընտրական գվածին մանիպուլյացիայի ենթարկելու մեթոդներից է **քաղաքական թեկնածուների միջև քաղաքական գովազդում զուգահեռներ անցկացնելը**: Ժողովրդավարական երկրներում հաճախ է պատահում, որ նախընտրական պայքարում դեբատներ՝ քաղաքական բանավեճեր են անցկացվում, որի ընթացքում մրցակից թեկնածուները մեկը մյուսի մասին ասում է ամբողջ

¹ **Zombeck R.**, New Clinton Ad Is More Anti-Hillary Than Anti-Trump, հրապարակվել է՝ մայիսի 27, 2016թ., հասանելի է՝ [https://www.huffingtonpost.com/richard-zombeck/new-clinton-ad-is-more-an_b_10163002.html].

«Ճշմարտությունը», շատ դեպքերում էլ անում խիստ համարձակ հայտարարություններ, ինչպես, օրինակ՝ 2016 թվականի ԱՄՆ նախագահական ընտրություններում երկու գլխավոր թեկնածուներ Դոնալդ Թրամփի և Հիլարի Բլինթոնի հեռուստատեսային դեբատների ժամանակ: Դրանք միշտ սկանդալային բնույթ էին կրում, և Թրամփը բանավեճերի ժամանակ բազմիցս սպառնում էր Բլինթոնին՝ ընտրվելու դեպքում նրան բանտախուց է նետելու¹: Այսպիսի վարքը շատ դեպքերում կարող է մրցակից թեկնածուին հանել հոգեբանական հավասարակշռությունից: Նման իրավիճակներն անխուսափելի էին քաղաքական ուղի անցած, խիստ հավասարակշռված քաղաքական գործչի տպավորություն, իմիջ ստեղծած ԱՄՆ նախկին պետքարտուղարի և առաջին տիկնոջ համար:

Բանկային համակարգի և տնտեսության փոխադարձ կապը բավական նշանակալի է: Բանկային ոլորտը կախում ունենալով տնտեսությունից, իր հերթին, էական ազդեցություն ունի վերջինիս զարգացման վրա: Հետևաբար, բանկային համակարգի զարգացման կայունությունը համարվում է մակրոտնտեսական կայունության անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման: Ավելին, բանկային ոլորտի ֆինանսական կայունությունը կարող է դրական գնահատվել միայն այն դեպքում, երբ դրա միջոցով հնարավոր է հասնել պետության կողմից նախանշված մակրոտնտեսական ցուցանիշներին:

Տնտեսությունից բխող և բանկային ոլորտի վրա ազդող գործոնները հիմնականում ընկած են համախառն ներքին արդյունքի շարժընթացի, բնակչության եկամուտների ու զբաղվածության մակարդակի հիմքում: 2008 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ցույց տվեց, որ բանկերը կարող են ոչ միայն արագացնել տնտեսական զարգացումը, այլ նաև խաթարել տնտեսական հավասարակշռությունը, պատճառ հանդիսանալով ճգնաժամային երևույթների առաջացման համար: Ավելին, բանկային ոլորտի կայուն զարգացման համար կարևոր է հաշվի առնել նաև դրա փոխկապվածությունը ապրանքների ու ծառայությունների, անշարժ գույքի շուկաների, ինչպես նաև ֆինանսական շուկայի այնպիսի կարևորագույն հատվածների հետ, ինչպիսիք են դրամական և ֆոնդային շուկաները: Ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո անհրաժեշտ է ուշադրությամբ հետևել անշարժ գույքի շուկայում գործարար ակտիվությանը, ֆոնդային շուկայում դասիչների տատանումներին, արտասահմանյան կապիտալի շարժին և կառուցվածքին (օրինակ, բազմաթիվ երկրների համար վտանգավոր ցուցանիշ կարող է համար-

վում ՀՆԱ-ի 10%-ը գերազանցող արտասահմանյան կապիտալի ներդրումների տարեկան ներհոսքը):

Բանկային համակարգում հավասարակշռության խախտման ու ճգնաժամային երևույթների ծագման տեսանկյունից շուկայի յուրաքանչյուր ոլորտի և հատվածի գնահատման համար անհրաժեշտ է մշակել ցուցանիշների համախումբ, որոնց շեղումը նախանշված սահմանային արժեքներից կարևոր ազդանշան կհանդիսանա շուկայի կարգավորիչների և նրա ինստիտուտների համար՝ կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկման համար: Այդպիսի ցուցանիշներ կարող են հանդիսանալ տղաճի մակարդակը, արտաքին տնտեսական կոնյուկտուրայի տատանումների հետևանքով պետական բյուջեի դրամական հոսքերի փոփոխականությունները, տնտեսության մեջ իրական տոկոսադրույքների բարձր մակարդակը, ազգաբնակչության խնայողությունների ցածր մակարդակը և այլն: Որպես ճգնաժամի ազդանշան կարող է լինել նաև պետության կախվածությունը արտաքին և ներքին փոխառություններից (դրանք, այսպես կոչված, պետության ներքին և արտաքին լծակներն են լներիջ), ներքին պարտքի գումարի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը, մասնավոր հատվածի ու պետության ներքին պարտքի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը: Ազգային և համաշխարհային տնտեսությունների մակարդակներով տնտեսական համակարգի տարրերի փոխկապվածության խորն ըմբռնումը, ինչպես նաև դրանց ցուցանիշային գնահատումը թույլ է տալիս պատկերացում ունենալ համակարգային ռիսկերի ծագման մասին, հետևաբար և ձեռնարկել ճգնաժամը կանխարգելող միջոցառումներ:

Հայաստանում թեև ֆինանսատնտեսական ճգնաժամը տնտեսության վրա ազդեցություն ունեցավ այլ ուղիներով և բանկային համակարգը զերծ մնաց խոշոր ցնցումներից, սակայն այնուամենայնիվ բանկերը ևս ունեցան զգալի կորուստներ՝ կապված տնտեսական անկման, գործարարների և ազգաբնակչության դրամական հոսքերի նվազման ու վճարունակության խնդիրների հետ: Հետևաբար, տնտեսության և ֆինանսական հոսքերի զրոբալացման պայմաններում ճգնաժամային երևույթների հակազդելու տեսանկյունից մեծապես կարևորվում է բանկային համակարգի կայունության ամրապանդումը: Պետք է փաստել, որ չնայած համաշխարհային տնտեսության մեջ ճգնաժամերի առաջացման հաճախականությանը, ներկայումս ոչ մի երկրում դեռևս չի ձևավորվել բանկային համակարգում ճգնաժամերի կանխարգելման և դրա կայուն զարգացումն ապահովող համընդհանուր մոդել: Այս առումով, կարծում ենք, որ Հայաստանի բանկային համակարգի համար առավել նպատակահարմար կլինի կայուն զարգացման մոդելի կիրառումը, որի նպատակն է՝ կանխարգելել բանկային կապիտալի գործունեության անհավասարությունը և անարդյունավետությունը: Բանկային համակարգի կայունությունն ենթադրում է նախևառաջ դրա զարգացումը որպես հասարակական նշանակության կառույցի, որը պետք է ապահովի հասարակության պահանջմունքներին համապատասխան գործունեության վերարտադրության ընդլայնում՝ ինչպես քանակական, այնպես էլ որակական առումով:

Բանկային համակարգի զարգացման կայունությունը կարելի է բնութագրել մի շարք հատկանիշներով, մասնավորապես՝

- քանակական և որակական չափանիշներով գործունեության ընդլայնում,

- գործունեության բոլոր ուղղությունների և տարրերի հավասարակշռված զարգացում, որն ուղեկցվում է ներդրումային պորտֆելի դիվերսիֆիկացմամբ և տնտեսական տարբեր ռիսկերի նվազեցմամբ,

- երկարաժամկետ կայուն զարգացում ինչպես ամբողջ համակարգի, այնպես էլ առանձին բանկային հաստատությունների համար:

Որպես Հայաստանի բանկային համակարգի կայուն զարգացման չափորոշիչներ կարող են սահմանվել հետևյալները.

- որպես հասարակական կարևոր նշանակության կառույցի բնույթի պահպանումը և ամրապնդումը,

- կուտակային կապիտալի արդյունավետ բաշխումը և անխափան շրջանառության ապահովումը,

- կայունության (հավասարակշռության) պահպանումը ներքին և արտաքին բացասական ազդակների ու ցնցումների դեպքում,

- ռիսկերի ճշգրիտ գնահատման և արդյունավետ կառավարման հնարավորությունը,

- անհամաչափությունների ինքնաճշգրտման, դրանց սահմանափակման և վերացման հնարավորությունը:

Տվյալ չափորոշիչները թույլ են տալիս սահմանել բանկային համակարգի զարգացումը գնահատող ցուցանիշները մակրոմակարդակում, որոշել զարգացման ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև գնահատել այն համակարգային ռիսկերը, որոնց հետ բախվում են առևտրային բանկերը իրենց գործունեության ժամանակ:

Բանկային համակարգի կայունության գնահատման ցուցանիշների մեջ կարելի է առանձնացնել 3 համախումբ: Առաջին համախումբը բացահայտում է այն ցուցանիշները, որոնց միջոցով բնութագրվում են բանկային համակարգին բնորոշ գործառնությունների իրականացումը: Երկրորդ համախմբի միջոցով գնահատվում են այն գործընթացները, որոնք կապված են տնտեսվարող սուբյեկտներին կանխիկ, ինչպես նաև անկանխիկ դրամական միջոցներով ապահովման հետ: Ցուցանիշների երրորդ համախումբը վերաբերվում է բանկային ոլորտի կոնկրետ բնութագրիչներին:

Հայաստանի բանկային համակարգի ներկայիս իրավիճակի վերլուծության, առկա խնդիրների և զարգացման ուղղությունների ուսումնասիրությունների հիման վրա առաջարկվում է մշակել մեր հանրապետության բանկային համակարգի կայուն զարգացման օպտիմալ մոդել՝ բաղկացած հետևյալ հիմնական բաղադրիչներից.

- ինստիտուցիոնալ,
- ենթակառուցվածքային,
- կարգավորող,
- գործառութային /ֆունկցիոնալ/:

I. Ինստիտուցիոնալ բաղադրիչը ներառում է բանկային ու վարկային հաստատությունների համակարգը: Վերջինիս արդիականացումը պետք է ապահովի ունիվերսալ և մասնագիտացված վարկային հաստատությունների միջև օպտիմալ հարաբերակցությունը, մասնագիտացված (ներդրումային բանկեր և զարգացման բանկեր) բանկային և այլ ֆինանսական կազմակերպությունների շրջանակի ընդլայնումը, որոնք աշխատում են ինչպես ամբողջ հանրապետության, այնպես էլ հանրապետության առանձին տարածաշրջանային մակարդակներում:

Ինստիտուցիոնալ զարգացման կարևոր ուղղություն է համարվում փոքր վարկային հաստատությունների հատվածի ձևավորումը (քաղաքային վարկային միություններ, վարկային ընկերակցություններ, փոխադարձ վարկերի միություններ և այլն), ինչը հնարավորություն կտա մատուցել ավանդային, վարկային և հաշվարկային ծառայություններ ցածր եկամուտ ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձանց, անհատ ձեռներեցներին ու վարկային համակարգի միջոցով նրանց դրամական խնայողություններն ուղղել տնտեսության իրական հատված:

Վերջին հաշվով, բանկային համակարգի ինստիտուցիոնալ զարգացումը կապված է տարածաշրջանային մակարդակով կայուն և արդիական բանկային համակարգի ձևավորման հետ, որը հնարավորություն կընձեռնի լիովին բավարարել հասարակության պահանջումները բանկային ծառայությունների լայն տեսականու հանդեպ:

II. Ենթակառուցվածքային բաղադրիչը ներառում է բանկի գործունեության նորմատիվ-իրավական բազան, ինչպես նաև գիտավերլուծական ապահովումը:

Տվյալ բաղադրիչի արդիականացման համար անհրաժեշտ է կատարելագործել բանկային համակարգի իրավիճակի ուսումնասիրությունները, բանկային օրենսդրության ոլորտում կիրառել նորարարական մեթոդներ, այդ թվում՝ մշակել նոր նորմատիվ ակտեր կամ փոփոխել գործողները: Ենթակառուցվածքային բաղադրիչը պետք է շոշափի տնտեսության կայուն զարգացմանը նպաստող դրամավարկային քաղաքականության և բանկային արդյունավետ վերահսկողության հիմնական ուղղությունները: Մասնավորապես, դրամավարկային քաղաքականության ոլորտում անհրաժեշտ է շեշտադրում կատարել այնպիսի հայեցակարգի վրա, որը հիմնված կլինի հիմնական մակրոտնտեսական նպատակներին հասնելու ուղղությամբ Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից կիրառվող մեթոդների արդյունավետության գնահատման վրա:

Ինչ վերաբերվում է բանկային վերահսկողության արդյունավետության բարձրացմանը, ապա կարծում ենք, վերջինս հնարավոր է ապահովել հետևյալ միջոցառումների շնորհիվ.

- վերահսկողության իրավական և մեթոդաբանական բազայի հետագա զարգացում,
- վերահսկողության իրականացման ընթացքում ձևապաշտության (ֆորմալիզմի) բացառում,

- անանցյալ գործիքների կիրառման հետ կապված ռիսկերի կառավարման մասով բանկային հաստատություններին ներկայացվող պրոդենցիալ նորմերի և պահանջների վերանայում,

- հեռակա և տեղային վերահսկողության իրականացման բարելավում՝ հաշվի առնելով բանկային ոլորտում առաջացող խնդիրների փոփոխությունը,

- բանկային գործունեության որակի ստանդարտների սահմանման գործընթացի արագացում,

- կենտրոնական բանկի վերլուծաբանների արհեստավարժության նկատմամբ պահանջների խստացում :

IV. Գործառության /ֆունկցիոնալ/ բաղադրիչը ներառում է բանկային ծառայությունները, կիրառվող տեխնոլոգիաները և կառավարման համակարգը: Այս ոլորտում կարծում ենք նպատակահարմար կլինի՝

- ընդլայնել բանկային ծառայությունների տեսականին (քանակական և որակական առումով), ինչպես նաև ապահովել դրա զարգացումը՝ տնտեսական զարգացման խնդիրներին, հաճախորդների տարբեր խմբերի պահանջմունքներին, ինչպես նաև միջազգային չափանիշներին համահունչ:

- արդիականացնել բանկային տեխնոլոգիաները՝ կիրառելով ժամանակակից թվային տեխնոլոգիաներ:

Որպես գործառության զարգացման ուղղություններ կարող են հանդիսանալ՝

1. վարկավորման մեթոդների և գործիքների արդյունավետության բարձրացումը ինչպես բանկի և հաճախորդների, այնպես էլ տնտեսական զարգացման տեսանկյունից,

2. կառավարման համար որակյալ տեղեկատվական բազայի ձևավորումը՝ բանկային համակարգի կայունության ամրապնդման համատեքստում,

3. տեղեկատվության հավաքագրման ավտոմատացումը,

4. վարկային բյուրոների և վարկանիշային կազմակերպությունների գործունեության և նրանց կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը:

Բնական է, որ բանկային համակարգի կայունությունն առնչվում է ինչպես առանձին բանկային ինստիտուտների տնտեսական կայունությանը (հատկապես դրա հիմնական բաղադրիչ հանդիսացող ֆինսանսական կայունության), այնպես էլ կայունության այլ ձևերին (քաղաքական, գործառնական, կադրային, կազմակերպչական կայունություն): Կարևոր է ընդգծել, որ կայունության ձևերի համակարգում դրանցից յուրաքանչյուրն ունի իր ուրույն դերկատարումը և եթե որևէ մեկի նշանակությունը թերագնահատվի, ապա բանկի գործունեության որոշակի փուլում այն կհանգեցնի կայունության խաթարման կամ առնվազն զարգացման գործընթացի հապաղման: Հետևաբար, բանկային համակարգի կայուն զարգացման ուղղության ընտրության ժամանակ կարևոր է ընրություն կատարել ոչ թե կայունության առանձին ձևերի միջև, այլև ապահովել համալիր կայունություն՝ բոլոր հիմնական ուղղություններով:

Բանկային համակարգի կայունության ամրապնդման հեռանակարային զարգացման ծրագրի հաջորդ կարևոր բաղկացուցիչը բանկի ակտիվների որակի բարձրացումն է և դրանց ռիսկայնության նվազեցումը: Բարձր ռիսկայնության պատճառներից մեկը բազմաթիվ բանկերի ձգտումն է՝ ապահովել ակտիվների արագ աճ: Ըստ բանկային ոլորտի զարգացման կանոնների, ակտիվների արագ աճը հաճախակի ուղեկցվում է ռիսկերի կառավարման որակի անկմամբ, ինչն էլ իր հերթին հանգեցնում է ակտիվների որակի անկման: Բանկային ոլորտի զարգացման վրա ակտիվների արագ աճի բացասական ազդեցությունն արտահայտվում է որոշակի ժամանակահատվածի ընթացքում. սկզբնական շրջանում շահույթի աճի տեմպերը բավականին բարձր են, այնուհետև նկատվում է նվազման միտում: Այս ամենի պատճառը ռիսկերի անտեսումն է կամ դրանց սխալ գնահատումը, ինչի արդյունքում կարող են առաջանալ կորուստներ:

Ներկայիս պայմաններում առևտրային բանկերի վարկային պորտֆելի բարձր ռիսկայնության պատճառ կարող է հանդիսանալ տնտեսության իրական հատվածի անբարենպաստ իրավիճակը, որին բնորոշ է արտադրության անկումը, ձեռնարկությունների ծանր ֆինանսական վիճակը, գործազրկության աճը և այլ խնդիրներ: Նման պայմաններում, տնտեսության վարկավորման աճը մի կողմից ռիսկային է, բայց, մյուս կողմից էլ, այն խիստ անհրաժեշտ է մեր հանրապետությունում տնտեսական աճի խթանման համար: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է մշակել տնտեսությունը ճգնաժամից դուրս բերելուն ուղղված վարկավորման կազմակերպման նոր մոտեցումներ: Դա պետք է հնարավորություն ընձեռի ոչ միայն թոթափել տնտեսական անկումը, այլ նաև ֆինանսապես աջակցել տնտեսության արդիականացմանը և կայուն զարգացմանը: Այս առումով, նախևառաջ անհրաժեշտ է վերացնել տնտեսության իրական հատվածի վարկավորման հարցում առևտրային բանկերի ցուցաբերած պասիվությունը: Այս խնդրի լուծումը պահանջում է համալիր միջոցառումների իրականացումը, մասնավորապես.

- ✓ Կենտրոնական բանկի գլխավոր նպատակի վերանայում՝ գնաճի զսպման փոխարեն սահմանելով կայուն տնտեսական աճի ապահովումը,
- ✓ առևտրային բանկերի գործունեության նոր ոլորտների սահմանում՝ օրենսդրական համապատասխան փոփոխությունների հիման վրա,
- ✓ վերաֆինանսավորման համակարգի վերանայում ,
- ✓ առևտրային բանկերի համար՝ հաճախորդների հետ փոխգործակցության նոր մոտեցումների մշակում,
- ✓ ներբանկային վարքագծի կանոնների սահմանման գործընթացում առևտրային բանկերի միությունների դերակատարման ընդլայնում:

Եթե ներկայիս իրավիճակը դիտարկենք որպես արտաքին խորը ու հիմնարար բնույթի գործոնների ազդեցության հետևանք, ապա պետք է նշել նաև մի շարք ներքին բացասական գործոնների առկայությունը, որոնք կապված են Հայաստանի տնտեսության ոչ բավարար զարգացման մակարդակի, կառուցվածքային անհամամասնությունների և դեռևս զարգացման փուլում գտնվող ողջ ֆինանսական ոլորտի հետ:

Հայտնի է, որ ցանկացած երկրում բանկային ոլորտի զարգացման հիմնա-
րար գործոններից մեկն է հանդիսանում տնտեսության և նրա առանձին
ոլորտների վիճակը: Ընդ որում, հենց այդ գործոնով են որոշվում բանկային
ռեսուրսների ձևավորման քանակական և որակական չափորոշիչները, այդ
ռեսուրսների տեղաբաշխման ոլորտը, բանկի ակտիվային պորտֆելի որակը,
ներդրումների շահութաբերությունը, այսինքն, ընդհանուր առմամբ, բանկերի
ֆինանսական կայունությունը: Միննույն ժամանակ, հարկ է նշել, բանկային
համակարգն իր հերթին կարևոր դերակատարում ունի տնտեսական մեթոդ-
ներով տնտեսության իրական հատվածի աջակցության և զարգացման գոր-
ծընթացում: Ներկայումս, Հայաստանում բացակայում է առևտրային բանկերի
կողմից տնտեսության արդիականացման և տարածաշրջանների զարգացման
ուղղությամբ համալիր ծրագիր: Բացի այդ, ԿԲ կողմից իրականացվող դրա-
մավարկային քաղաքականությունն անմիջականորեն ներառված չէ տնտե-
սական աճի խթանման և տնտեսության կառուցվածքային բարեփոխումների
իրականացման գործընթացի մեջ: Շուկայական բարեփոխումների ողջ ժամա-
նակահատվածում Հայաստանի Կենտրոնական բանկի դրամավարկային քա-
ղաքականությունն ուղղված է եղել միայն գնաճի կայունության ապահովմա-
նը¹: Բայց անգամ զարգացած երկրներում տնտեսական աճին խթանելու հա-
մար կենտրոնական բանկերն իրենց դրամավարկային քաղաքականության
մեջ ներառում են տնտեսական աճին միտված հստակ նպատակներ: Մասնա-
վորապես, Եվրոպական կետրոնական բանկը դրամավարկային քաղաքակա-
նության խնդիր է համարում ոչ միայն գների կայունության ապահովումը², այլ
նաև տնտեսական աճին խթանումը, ԱՄՆ ԴՊՀ-ն՝ առավելագույն զբաղվա-
ծության ապահովումը և միայն դրանից հետո գների կայունությունը³:

Բանկային համակարգի կայունության ամրապնդման տեսանկյունից
ներկայումս կարևորվում է, որպեսզի բանկային համակարգն ավելի ակտիվ
մասնակցություն ցուցաբերի տնտեսության կառուցվածքային բարեփոխում-
ների գործընթացում՝ մշակելով իրական հատվածի զարգացման և ար-
դիականացման համալիր ծրագիր: Ընդ որում, շուկայական մեխանիզմները,
այդ թվում՝ դրամավարկային քաղաքականության գործիքները, պետք է նե-
րառված լինեն տվյալ ծրագրի իրականացմանն ուղղված միջոցառումների
ցանկի մեջ:

Առևտրային բանկերի կողմից տնտեսության իրական հատվածի վարկա-
վորման խթանման խնդիրը լիովին չի կարող լուծվել վերջիններիս ներգրա-
ված միջոցների և Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման մեխանիզմի
միջոցով: Տնտեսության իրական հատվածում ներդրումները խթանելու ուղ-
ղությամբ կարևոր խնդիր է հանդիսանում բանկերում երկարաժամկետ ռե-
սուրսների ձևավորման արդյունավետ և մշտապես գործող մեխանիզմի ձևա-
վորումը: Փաստացիորեն, նշված խնդիրը շարունակում է չլուծված մնալ՝
չնայած այն հանգամանքին, որ այդ ռեսուրսներն անհրաժեշտ են տնտեսու-

¹ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք//www.arlis.am

² <https://www.ecb.europa.eu/home/html/index.en.html>

³ <https://www.federalreserve.gov/monetarypolicy.htm>

թյանը: Նման իրավիճակում նպատակահարմար կլինի, որպեսզի տնտեսության ֆինանսավորման ուղղությամբ հիմնական բեռն իրենց վրա վերցնեն մասնագիտացված ներդրումային բանկերը:

Ներկայումս գործող «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն առևտրային բանկերը չի թույլատրվում անմիջականորեն ներդրումներ կատարել տնտեսության մեջ¹: Տվյալ պարագայում տնտեսության իրական հատվածի ֆինանսավորման հիմնական աղբյուրը բիզնեսի գծով տրամադրվող վարկերն են, որոնք բավական բարձր տոկոսադրույքներ ունեն, ինչը բնականաբար կասկածի տակ է դնում դրանց տնտեսական արյունավետությունը: Առևտրային կազմակերպությունները վարկեր են ներգրավում սեփական ֆինանսական միջոցների բացակայության պատճառով՝ դրա դիմաց գրավադրելով կազմակերպության և դրա սեփականատերերի գույքը: Տնտեսական գործունեության ընթացքում ձևավորված դրամական հոսքերը ուղղվում են վարկի մայր գումարի և տոկոսադրույքների մարմանը և կազմակերպությունն ի վերջո կհայտնվի ավելի վատ ֆինանսական իրավիճակում: Նման պայմաններում հնարավոր են վարկի մարումների գծով ուշացումներ կամ ընդհանրապես դրանց դադարեցում, ինչն արդեն բացասաբար կազդի բանկի ֆինանսական կայունության վրա:

Տնտեսական զարգացման համաշխարհային փորձը վկայում է, որ բանկային համակարգի և տնտեսության իրական հատվածի համընթաց զարգացման համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտացված բանկային կառույցներ, որպեսզի առավել լիարժեք ու արդյունավետ կերպով իրականացվեն տնտեսության ֆինանսավորման գործառույթները: Առաջին հերթին, դրանց շարքում պետք է առանձնացնել ներդրումային և զարգացման բանկերը, որոնք կարող են գործել ինչպես հանրապետական, այնպես էլ տարածաշրջանային մակարդակներում:

Կարծում ենք, որ ներդրումային բանկերի ստեղծումը և զարգացումը մեր հանրապետությունում կնպաստի տնտեսության իրական հատվածում ներդրումների խթանմանը, արժեթղթերի շուկայի զարգացմանը և կայուն տնտեսական աճի ապահովմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի բանկային համակարգի կայունության ամրապնդմանը և զարգացմանը: Հայաստանում տնտեսության զարգացման և ներդրումների խթանման տեսանկյունից կարևորվում է նաև ներդրումային բանկերի զարգացման տարածաշրջանային ուղղվածությունը: Հանրապետության տարածաշրջաններում ներդրումային բանկերը կարող են դառնալ տարածաշրջանային բանկային համակարգի անբաժանելի մաս՝ ապահովելով տարածաշրջանային մակարդակով տնտեսական զարգացման ծրագրերի իրականացումը և հանրապետության մարզերի տնտեսությունների արդիականացումը:

Ներկայումս, բանկային համակարգի կայունության ոլորտում հնարավոր խնդիրների ծագման և ռիսկայնության աճի ամենատարածված պատճառներից մեկն էլ հանդիսանում է կառավարման ցածր որակը:

¹ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք//www.arlis.am

Կառավարման որակի բարձրացման խնդիրը պետք չէ համարել միայն բանկի գործադիր ղեկավարության պարտականությունը: Բանկի կառավարման գործընթացում բարձրագույն ղեկավարության աշխատանքի կազմակերպման հարցում մեծ դերակատարում ունեն նաև բաժնետերերը և մասնակիցները, վերջիններիս նպատակները, ինչպես նաև բարձրագույն ղեկավարության աշխատանքի վրա նրանց ունեցած ազդեցության չափը: Այդ առումով որպես միջնաժամկետ և երկարաժամկետ բնույթի միջոցառում պետք է նշել բանկերի միության կողմից բանկային գործունեության որակի ստանդարտների մշակումը, որոնք թույլ կտան համապատասխան իրավական հիմք ստեղծել բանկի ղեկավարության և բաժնետերերի շահերի բախումների կարգավորման համար:

Հայաստանի բանկային համակարգի կայունության ամրապնդման և առևտրային բանկերի կառավարման որակի բարձրացման նպատակով, կարծում ենք, նպատակահարմար կլինի մշակել նաև բանկի կորպորատիվ կառավարման միասնական ստանդարտներ, որոնց հիման վրա բանկերում կձևավորվեն կորպորատիվ վարքագծի և կորպորատիվ էթիկայի կանոններ: Վերջիններիս միջոցով առավել արդյունավետ կերպով կկանոնակարգվեն առևտրային բանկերի գործունեության զարգացմամբ շահագրգիռ բոլոր կողմերի (բաժնետերեր, բանկի ղեկավարություն, բանկի աշխատակիցներ, հաճախորդներ, վերահսկող մարմին) միջև հարաբերությունները: Պետք է նշել, որ նմանատիպ ստանդարտների ներդրման անհրաժեշտության մասին է նշված նաև Բազելյան կոմիտեի մշակած ուղեցույցներում¹:

Ներկայումս, բանկային կառույցներում կառավարման ցածր որակի տարբեր դրսևորումները կանխարգելելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր բանկում մշակել և հաստատել հակաճգնաժամային միջոցառումների ծրագիր, որը կապահովի նման պայմաններում բանկի ղեկավարության կողմից համապատասխան միջոցառումների մշակման և իրականացման հստակ կանոնակարգումը և թափանցիկությունը: Նման միջոցառումներ կարող են համարվել՝

- բանկի հիմնական կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքի խիստ կոորդինացումը,
- բանկի դրամական հոսքերի թափանցիկության ապահովումը,
- օրական կտրվածքով տեղեկատվական հոսքերի կոորդինացումը և իրավիճակի փոփոխության վերահսկումը,
- բարձրագույն ղեկավարությանը ամենօրյա տեղեկատվության տրամադրումը, վերջիններիս կողմից էլ՝ բաժնետերերին,
- շուկայական դիրքերի մասով բանկի դիրքորոշման ամենօրյա հստակեցումը,
- շուկայում ձևավորված տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվների և պասիվների միջև անհավասարակշռության

¹ BCBS-Strengthening the resilience of the banking sector

հնարավորինս կրճատումը և նրանց տարանջատման ամենօրյա վերահսկողությունը,

- իրավիճակի սցենարային վերլուծության իրականացումը:

Բանկային համակարգի կենտրոնացված կառավարման համակարգի հիմնական թերությունը բանկային ռիսկերի համալիր կառավարման բացակայությունն է, ինչը որոշակիորեն պայմանավորված է նաև բանկային օրենսդրության և պրուդենցիալ նորմերի ու պահանջների անկատարությամբ: Կենտրոնական բանկն այս ուղղությամբ կարևոր անելիքներ ունի՝ կապված հեռակա և անմիջական վերահսկողական արդյունավետ մեխանիզմների ձևավորման հետ, որը թույլ կտա ժամանակին բացահայտել խնդրահարույց բանկերը, ինչպես նաև նրանց գործունեության համապատասխան խնդրահարույց ոլորտները: Ներկայումս վերահսկողության ոչ բավարար արդյունավետության պատճառը դրա ձևական կիրառումն է և գրագետ վերլուծաբանների կադրային ներուժի անբավարարությունը: Որպես կանոն, բանկի ֆինանսական կայունության վերլուծությունը և գնահատումը կապված է ոչ թե բանկերում իրական և խորքային խնդիրների բացահայտման հետ, այլև ԿԲ կողմից սահմանված նորմատիվային ցուցանիշների մակարդակի որոշման և գնահատման հետ՝ պահանջվող սահմանային արժեքներին դրանց համապատասխանությունն որոշելու նպատակով: Տվյալ խնդիրը հնարավոր է լուծել՝ ստեղծելով մշտական հիմունքներով գործող բանկային վերլուծաբանների խումբ, որոնք մանրակրկիտ կվերլուծեն և կգնահատեն բանկի ֆինանսական իրավիճակը:

Ամփոփելով պետք է նշել, որ Հայաստանի բանկային համակարգը ոչ լիարժեք կերպով է համապատասխանում տնտեսության կայուն զարգացման նպատակներին, որն էլ ի վերջո բացասաբար է անդրադառնում վերջինիս երկարատև կայունության վրա: Վերոհիշյալ միջոցառումների իրականացումը, կարծում ենք, կամրապնդի Հայաստանի բանկային համակարգի կայունությունը, միաժամանակ նպաստելով նաև հանրապետության տնտեսության կայուն զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք//www.arlis.am
2. «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք//www.arlis.am
3. BCBS-Strengthening the resilience of the banking sector
4. <https://www.ecb.europa.eu/home/html/index.en.html>
5. <https://www.federalreserve.gov/monetarypolicy.htm>

РАФИК АРУТЮНЯН

Экономист

СПОСОБЫ ПОВЫШЕНИЯ СТАБИЛЬНОСТИ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ РА

Банковская система РА не в полной мере соответствует целям устойчивого развития экономики. Это негативно отражается на долгосрочной устойчивости экономики. В данной статье рассматриваются пути укрепления стабильности банковской системы Армении, которые одновременно будут способствовать устойчивому развитию экономики страны.

RAFIK HARUTYUNYAN
Economist

WAYS TO IMPROVE THE FINANCIAL SYSTEM STABILITY
OF THE REPUBLIC OF ARMENIA

The banking system of Armenia is inadequate for the sustainable development of the economy, which, after all, adversely affects its long-term sustainability. This article examines the ways of strengthening the stability of the Armenian banking system, which will also contribute to the sustainable development of the Armenian economy.

ՀԱՅԿ ԱՆՏՈՆՅԱՆ

ՀՀ Կառավարության աշխատակազմի
«Տեղեկատվության և վերլուծության կենտրոն»,
վերլուծությունների ծառայության վերլուծաբան,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ասպիրանտ

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ
ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՍՈՒԲՅԵԿՏ**

Ռազմական անվտանգության էության, նրա կառուցվածքաբովանդակային և գործառնության կողմերի ըմբռնումը, ինչպես նաև ռազմական անվտանգության ապահովման հետ կապված խնդիրների գործնական լուծումներն անհնար է իրականացնել առանց նրա սուբյեկտների բնույթն ըմբռնելու: Ընդունելով ռազմական անվտանգության ապահովման տիրույթում պետության գլխավոր և որոշիչ դերը, պետք է մատնանշել, որ դրա լիարժեք ապահովման հնարավոր է հասնել միայն պետական բոլոր մարմինների և ինստիտուտների նպատակամղված գործունեության արդյունքում: Որպես ռազմական անվտանգության ապահովման տարածքային ենթահամակարգ է հանդես գալիս տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգը, որոնք պետական վերադաս մարմինների համադասամբ մասնակցում են պետության պաշտպանության կազմակերպմանը:

Հանգուցային բառեր՝ ռազմական անվտանգություն, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգեր, ռազմական անվտանգության ապահովման սուբյեկտներ:

Պետության ռազմական անվտանգությունը նրա ազգային անվտանգության կարևորագույն ենթահամակարգերից մեկն է: Ընդհանրական առումով այն բնութագրվում է որպես պետության ազգային շահերի պաշտպանվածություն ռազմական բնույթի սպառնալիքներից: Ինստիտուցիոնալ պլանում ռազմական անվտանգության հիմնական նպատակն է պետության տարածքային ամբողջականության զինված պաշտպանությունը, անկախության և ինքնիշխանության ապահովումը, հասարակական և պետական կառույցի

կայունության համար ռազմական երաշխիքների ստեղծումը, իրավակարգի պահպանությունը, քաղաքական և քրեական խմբերի ահաբեկչական գործողությունների կանխումը¹:

Հուսալի պաշտպանությունը և ռազմական անվտանգության ապահովումը պատմականորեն դառնում են ավելի ու ավելի բարդ խնդիր, ինչը պահանջում է նյութական, հոգևոր ու մարդկային ուժերի ներգրավում, հասարակության տարբեր ոլորտների ինտեգրում: Դրանով զբաղվում է ոչ միայն պետության ռազմական բնագավառի հատուկ մասնագիտացված հատվածը, այլև պետական իշխանության հաստատությունները՝ համադասելով և ուղղորդելով հասարակության ջանքերը²:

Պետության ռազմական անվտանգության ապահովումը որոշակի սուբյեկտների միջև իրավահարաբերությունների ամբողջություն է, որոնք կարգավորվում են որոշակի իրավական նորմերի հիմքով և հնարավորություն են տալիս հստակեցնելու, թե ինչպես պետք է գործառնեն տվյալ սուբյեկտները ռազմական անվտանգության ապահովման գործընթացում³: Հետևաբար, ռազմական անվտանգության էության, նրա կառուցվածքա-բովանդակային և գործառնության կողմերի ըմբռնումը, ինչպես նաև ռազմական անվտանգության ապահովման հետ կապված խնդիրների գործնական լուծումներն անհնար է իրականացնել առանց նրա սուբյեկտների բնույթն ըմբռնելու: Այդ սուբյեկտների որոշարկումը կարևոր է նաև պետության ռազմական սպառնալիքներով պայմանավորված ազգային շահերի պաշտպանության քաղաքական նպատակաուղղվածությունը հասկանալու, ռազմական անվտանգության ապահովման խնդիրների հետ կապված քաղաքական դեկավարության հայացքների կոնցեպտուալ ձևակերպումներն ըմբռնելու տեսանկյունից:

Ըստ էության, ռազմական անվտանգության ապահովման սուբյեկտներ կարող ենք համարել պետական իշխանության այն մարմինները, ուժերը և միջոցները, որոնք իրագործելով քաղաքական, իրավական, կազմակերպական, տնտեսական, ռազմական և այլ բնույթի միջոցառումներ՝ միտված են պաշտպանելու անհատին, հասարակությանը և պետությանը ռազմական բնույթի սպառնալիքներից⁴: Ռազմական անվտանգության ֆենոմենի առանձնահատկությունները, նրա ապահովման խնդիրների որոշումը թույլ է տալիս առանձ-

¹ Տե՛ս **Лутовинов В. И., Хмара Ю. Н.** Военная безопасность государства: Концептуальные основы и современное российское видение // Социум и власть. 2015. N2 (52) с. 70.

² Տե՛ս **Քոթանջյան Հ. Ս.**, Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները: ՀՀ ՊՆ Դ. Կանսայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, Երև., 2010 թ., էջ 503.

³ Տե՛ս **Стрекозов В. Г., Кудашкин А. В.**, Военное право: Учебник Военный университет, Академия военных наук. Москва, 2004. С. 54. <https://view.officeapps.live.com/op/view.aspx?src=http://www.voennpravo.ru/assets/upload/file/files/vp2004.doc> [հասանելի էր 10.10.2017]

⁴ Տե՛ս **Фатеев К. В.** Обеспечение военной безопасности Российской Федерации: теория и практика правового регулирования.- М., 2005 - <https://refdb.ru/look/2690215-p14.html> [հասանելի էր 10.10.2017]

նացնել ռազմական անվտանգության ապահովման¹ սուբյեկտների երկու խումբ, որոնք միմյանց հետ կապված են *մասի և ամբողջի հարաբերությամբ*:

Ռազմական անվտանգության ապահովման սուբյեկտներին առաջին խումբը, որն իր մեջ ներառում է դրա ապահովման ողջ ինստիտուցիոնալ համալիրը, **պետությունն** է: Պետության սուբյեկտայնությունը հիմնված է նրա յուրահատուկ բնույթով և տեղով հասարակության քաղաքական համակարգում: Լինելով քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտը, տիրապետելով որոշակի տարածքում բարձրագույն իշխանությանը, որի որոշումները ենթակա են ողջ բնակչության կողմից պարտադիր կատարմանը և չգտնվելով ոչ մի վերապետական իշխանության ներքո, պետությունը, այս պարագայում, բախվում է բոլոր խնդիրներն ինքնուրույն որոշելու անհրաժեշտությանը²: Պետությունը ոչ միայն ազգային շահերի կրողն է, այլև իր քաղաքացիների անվտանգության ապահովման հիմնական գործիքը, տարբեր կարգի վտանգներից և սպառնալիքներից նրանց երաշխավորված պաշտպանը³:

Պետության քաղաքական ղեկավարությունն ընդունում է անհրաժեշտ որոշումներ, կազմակերպում, ղեկավարում և ուղղորդում է բոլոր պետական մարմինների գործունեությունը, տնտեսական, ուժային կառույցները, հասարակական կառույցները և բնակչությանը պետության ռազմական անվտանգության ապահովման համար: Հիմնվելով իր քաղաքական, տնտեսական, ժողովրդագրական և ռազմական հնարավորությունների վրա, ելնելով ներքին և արտաքին քաղաքականության այլ սուբյեկտների փոխհարաբերությունից, հաշվի առնելով ռազմական սպառնալիքների բնույթը՝ պետությունը սահմանում է իր այս կամ այն մոտեցումը ռազմական անվտանգության վերաբերյալ, այս ոլորտում իր քաղաքականության բովանդակությունը և նպատակաուղղվածությունը, ռազմական սպառնալիքներին հակազդման մեխանիզմները⁴:

Ընդունելով ռազմական անվտանգության ապահովման տիրույթում պետության գլխավոր և որոշիչ դերը, պետք է ընդունենք սակայն, որ ռազմական անվտանգության լիարժեք ապահովման հնարավոր է հասնել միայն պետական բոլոր մարմինների և ինստիտուտների նպատակամղված գործունեության արդյունքում: Այս ոլորտում իրականացնելով իր գործունեությունը՝ պետությունը գործակցում է նաև ներքին քաղաքականության այլ սուբյեկտների հետ, ձգտելով ապահովել անվտանգային լիարժեք միջավայր: Այս առումով

¹ Որպես այդպիսին տարբերվում են ռազմական անվտանգության համակարգը և ռազմական անվտանգության ապահովման համակարգը: Առաջինը դիտարկվում է որպես գործառնման համակարգ, որում արտացոլվում են շահերի և ռազմական սպառնալիքների փոխգործունեությունը, իսկ երկրորդը՝ մարմինների, ուժերի, միջոցների, տարբեր կազմակերպությունների կազմակերպված համակարգ է, որը կոչված է որոշակի գործողություններով ապահովելու դրա գործառնումը:

² Տե՛ս Քաղաքագիտություն: Ուսումնական ձեռնարկ, Երևանի պետ. համալսարան, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2006, էջ 266.

³ Տե՛ս **Барабин В. В.** Военно-политическая деятельность государства в системе национальной безопасности: Социально-философский анализ/ Дис. док. филос. наук.-М., 1999.- с. 42.

⁴ Տե՛ս **Голубев В. И., Пусько В. С.** Современная концепция безопасности и проблемы ее реализации., Военный университет. -М., 1996.- с. 23

անվտանգության գործադիր ոլորտում գործող պետական մարմինները, ներառյալ՝ անվտանգության ապահովման ուժերն ու միջոցները, կազմում են Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման համակարգը¹: Այսպես, ՀՀ-ում անվտանգության ապահովման քաղաքականությունն իրականացվում է պետական իշխանության մարմինների համակարգի, հատուկ պետական հաստատությունների, պատասխանատու անձանց հատուկ շրջանակի կողմից: Այդ մարմինները, ինստիտուտները, պատասխանատու անձինք էլ կազմում են ռազմական անվտանգության ապահովման սուբյեկտների **երկրորդ խումբը**:

Վերը նշված սուբյեկտները պետական համակարգի բաղադրիչներն են՝ անմիջականորեն ներգրավված ռազմական ոլորտի անվտանգության ապահովման համակարգում: Այս դեպքում, ռազմական անվտանգության ապահովման յուրաքանչյուր սուբյեկտ իրագործում է սպեցիֆիկ, միայն իրեն հատուկ գործառնությունները, իսկ նրանց բոլորի գործունեությունն ուղղորդում, կոորդինացնում և ղեկավարում է պետությունը: Առանձին անձանց, կազմակերպությունների, ինստիտուտների կողմից ռազմական անվտանգության ապահովման սուբյեկտայնությունը դրսևորվում է պետության, քաղաքական իշխանության հետ նրանց իրավահարաբերություններով: Այդ հարաբերությունների բովանդակությունը պետության՝ որպես ռազմական անվտանգության ապահովման հիմնական սուբյեկտի՝ վերոնշյալ սուբյեկտներին սպեցիֆիկ լիազորություններով օժտելն է: Այսպես, օրինակ, պաշտպանության նախարարը ռազմական անվտանգության ապահովող սուբյեկտ է ոչ թե որպես անձ, այլ որպես պետական պաշտոնատար մարմին՝ օժտված որոշակի պետական գործունեության լիազորություններով՝ ապահովելու համար պետության ռազմական անվտանգությունը, որը բնորոշ չէ շատ այլ անձանց:

Պետության ներքին քաղաքականությունը բաղկացած է գործունեության տարբեր բնագավառներից, որոնցից յուրաքանչյուրը մի բարդ համակարգ է, և այդ բոլոր համակարգերը, որոնց թվում նաև ռազմական անվտանգության ապահովման համակարգի կառուցվածքային գործունեությունն ուսումնասիրվում է նաև տարածքային հատույթով: Պետությունն իր տարածքային կառավարման պարտականություններն իրականացնելու համար կատարում է պետական տարածքի դիֆերենցում, շրջանացում, ձևավորում է **տարածքային կառավարման կառուցվածքը**²: ՀՀ-ն ունիտար պետություն է, ուստի ներքին բաժանումն էլ վարչատարածքային է:

Այսպես, 1995թ. ՀՀ Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքներ» գլխում տեղական ինքնակառավարման վերաբերյալ հիմնադրությունների ամրագրումը վկայում է հիշյալ ինստիտուտի իրավական մեծ արժեքի ու նշանակության մասին, որով այն դիտարկվում է որպես սահմանադրաիրա-

¹ Տե՛ս **Քոթանջյան Հ. Մ.**, Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, Եր., 2010 թ., էջ 545.

² Տե՛ս **Վալեայան Ա. Լ., Վալեայան Լ. Հ.**, Քաղաքական աշխարհագրություն, Եր., ԵՊՀ հրատ., 2005, էջեր 317-318

վական հիմնարար ինստիտուտների և սկզբունքների ողջ համակարգի կարևոր բաղադրիչ: Ինչ վերաբերում է տարածքային կառավարման մոդելին, ապա դրա բնութագրիչները ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված են ընդհանուր գծերով¹:

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգը որպես պետական կազմակերպվածքի տարածքային մարմիններ իրենց առանձնահատուկ դերն ունեն ՀՀ-ի ռազմական քաղաքականության տիրույթում: Նրանք հանդիսանում են ռազմական անվտանգության ապահովման տարածքային ենթահամակարգը²:

ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները ռազմական անվտանգության ապահովման նպատակով իրենց իրավասությունների և տարածքի սահմաններում պլանավորում, կազմակերպում և իրագործում են.

1. Պաշտպանության և ռազմական անվտանգության ոլորտի օրենսդրության իրագործումը: Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի պաշտպանական ոլորտի գործունեության իրավական հիմքերը արտացոլված են ռազմական և մունիցիպալ իրավունքի նորմատիվային փաստաթղթերում:

Տեղական իշխանությունների գործունեությունն այս ուղղությամբ ամենից առաջ պաշտպանության ոլորտի օրենսդրական և այլ իրավական ակտերի համապատասխանեցումն ու կիրարկումն է: Ռազմական անվտանգության ապահովմանը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցության իրավական հիմքերն ամրագրված են «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Պաշտպանության մասին», «Ձորահավաքային պատրաստության և զորահավաքի մասին», «Պաշտպանության մասին», «Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին», «Պաշտպանության նպատակով տրանսպորտային միջոցների օգտագործման մասին» և «Զինապարտության մասին» ՀՀ օրենքներով: Բացի դրանից «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» մեջ նշված են ներքին անվտանգության նպատակները: Դրանք ընդհանուր գծերով առնչվում են նաև տարածքային կառավարմանը՝ կառավարման արդյունավետության բարձրացում, ժողովրդավարական արժեքների արմատավորում, տնտեսական աճի ապահովմանն ուղղված քայլերի ձեռնարկում³: «ՀՀ Ռազմական դոկտրին»-ը բովանդակում է ՀՀ ռազմական ան-

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), 27.11.2005

² Ըստ դասակարգման տարբերվում են ռազմական անվտանգության ապահովման հետևյալ ենթահամակարգերը՝ 1/պետական (հանրապետական) ապահովման ենթահամակարգ, 2/տարածքային ապահովման ենթահամակարգ, 3/գործառնության (ֆունկցիոնալ) ապահովման ենթահամակարգ, 4/պետության ռազմական կազմակերպվածքը որպես ռազմական անվտանգության անմիջական ապահովման ենթահամակարգ: Ավելի հանգամանորեն տե՛ս **Фареев К. В.** Обеспечение военной безопасности Российской Федерации: Теория и практика правового регулирования. - М., 2005 - <https://refdb.ru/look/2690215-p14.html> [հասանելի էր 10.10.2017]

³ Տե՛ս *ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն*, ՆՀ-37-Ն ՀՀ նախագահի հրամանագիր, 2007 թ. փետրվարի 7, Երևան

վտանգության ապահովման հայեցակարգային հիմքերը: ՀՀ պաշտպանունակության ամրապնդման, ինքնիշխանության, տարածքային ամբողջականության ապահովման, սահմանների անձեռնմխելիության ապահովման¹ մասով լուրջ հանձնառություն է վերապահված տեղական իշխանության մարմիններին:

Պաշտպանության վերաբերյալ օրենսդրական ակտերից հետևում է, որ պետության կողմից տարվող պաշտպանական քաղաքականության ոլորտը պետական մարմինների և տեղական իշխանության մարմինների փոխհարաբերությունների առանցքում է և տեղական իշխանությունները իրականացնում են պաշտպանության ոլորտի իրենց վերապահված լիազորությունները: Այս մարմինները իրականացնելով այն առաջադրանքները, որոնք իջեցվում են բարձրագույն իշխանության մարմինների կողմից, փաստացիորեն, աջակցություն են ցուցաբերում այդ մարմիններին տարածքային և տեղական մակարդակում իրենց գործառույթների իրականացման համար, ինչն ավելի արդյունավետ է դարձնում այդ քաղաքականության իրականացումը, նպաստում են պետական գործառույթների իրականացման ժողովրդավարացմանը²:

2. Մասնակցությունը ՀՀ ՁՈՒ-ի բարոյահոգեբանական, տեխնիկական և թիկունքային ապահովման համակարգին: ՀՀ ՁՈՒ-ում բարոյահոգեբանական ապահովման համակարգի զարգացման համար պետական և ռազմական կառավարման տարբեր մակարդակներում և օղակներում իրականացվում են համալիր միջոցառումներ՝ ուղղված ՁՈՒ-ի անձնակազմի բարոյահոգեբանական կայունության ամրապնդմանը: Այս համատեքստում տարածքային կառավարման մարմինները աջակցություն են ցուցաբերում զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանության կազմակերպմանը, միջնորդում են պետական իշխանության մարմինների, հասարակական և կրոնական կազմակերպությունների հետ զորամիավորումների և այլ գործերի՝ դաստիարակչական աշխատանքի մարմինների փոխգործությանը, զորամիավորումներում (զորամասերում) բարոյահոգեբանական ապահովման միջոցառումների անցկացմանը, առաջադրված խնդիրների կատարման նկատմամբ հսկողությունը և այլն:

Ներկայումս ՀՀ ՁՈՒ-ի անվտանգության ապահովման կարևոր գործոններից է ժամանակակից մարտունակ սպառազինության և տեխնիկայի ձեռքբերումը, նորոգման աշխատանքների կազմակերպումը: ՀՀ ՁՈՒ-ի **տեխնիկական ապահովման** հարցը լուծվում է պետության տնտեսական հնարավորությունների համակողմանի հաշվառմամբ: Տեխնիկական ապահովման համակարգի հիմնական գործունեությունը պետք է նպատակաուղղված լինի համապատասխան տնտեսական և նորմատիվ-իրավական հիմքերի ստեղծմանը,

¹ Տե՛ս ՀՀ ռազմական դոկտրին, ՆՀ-308-Ն ՀՀ նախագահի հրամանագիր, 2007 թ. դեկտեմբերի 25, Երևան

² Տե՛ս **Руссков С. В.** Организационно-правовые основы оборонной деятельности органов местного самоуправления в Российской Федерации/ Автореф. дис. юрид. наук. -М., 1999 - <http://law.edu.ru/book/book.asp?bookID=1231989> - [հասանելի էր 10.10.2017]

գերակա ուղղությունների որոշմանը¹: Պաշտպանական պլանում տեխնիկական պլանավորման գործունեությունը աղերսվում է նաև տարածքային իշխանության մարմինների գործունեության հետ կապված որոշակի ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից պետական պաշտոնական պահանջների կատարմամբ, իրենց տարածքներում տեղակայված գորմասերին և գորամիավորումներին աջակցությունը թե՛ տնտեսական, թե՛ տեխնիկական վերանորոգելու համար անհրաժեշտ որակյալ մասնագետների ապահովման առումով, որպեսզի ռազմական տեխնիկական մշտապես գտնվի մարտական անհրաժեշտ պատրաստության վիճակում:

Թիկունքի կառավարումը գորքերի կառավարման բաղկացուցիչ մասն է: Այն գորամիավորումների, հրամանատարների ու շտաբների, թիկունքի հրամանատարության, գորատեսակների ու ծառայությունների, ինչպես նաև պետական կառավարման մարմինների գործունեությունն է՝ նպատակաուղղված թիկունքի մարտական պատրաստության պահպանմանը, թիկունքի պատրաստմանը խաղաղ և պատերազմական ժամանակ գորքերի ապահովմանը, առաջադրված խնդիրների կատարման ժամանակ թիկունքի կառավարմանը²: Այս առումով տեղական իշխանությունների դերը հաղորդակցության ուղիների և տրանսպորտային միջոցների զարգացած ցանցի ստեղծումն է, որի միջոցով իրականացվում է գորքերի նյութական միջոցներով ապահովումը, վիրավորների, հիվանդների և վնասված տեխնիկայի տարահանումը և այլ աշխատանքներ:

3. Տարածքային ամբողջականության ապահովումը: Այն ցանկացած պետության կարևորագույն արտաքին գործառնություններից է: ՀՀ-ի պաշտպանության և տարածքային ամբողջականության ապահովումն ենթադրում է պաշտպանության ոլորտում քաղաքական, դիվանագիտական, տնտեսական, ռազմական, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների համալիր: Որպես կանոն, այս հարցերի օրենսդրական առավել մանրամասն սահմանումը և դրա հիմքով միջոցառումների կազմակերպումը պայմանավորված է տվյալ պետության կայացման և զարգացման աստիճանով, պատմաիրավական ավանդույթներով, առկա ռեսուրսներով, քաղաքաշխարհագրական բնութագրիչներով և այլ գործոններով³: ՀՀ-ի դեպքում լուրջ սպառնալիք է սահմանային ոչ մեծ հատվածում հակառակորդի կողմից ռազմավարական պաշտպանության հանկարծակի ճեղքումը ու հետագա առաջխաղացումը:

ՀՀ-ում պետական իշխանության տարածքային և տեղական մարմինները տարածքային պաշտպանության իրականացման համար վերադաս պետական մարմինների հետ համաձայնեցված և փոխկապակցված ձևով մասնակ-

¹ Տե՛ս **Խաչատուրով Ցու. Գ.**, Ռազմական գործողությունների օպերատիվ, բարոյահոգեբանական, տեխնիկական և թիկունքային ապահովման հիմունքները. ՀՀ ՁՈՒ-ի ապահովման համակարգի կատարելագործման հիմնական ուղղությունները, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, հմ. 4 (65), 2010, էջեր՝ 14-17

² Տե՛ս նույն տեղում էջեր՝ 18-19

³ Տե՛ս **Քոչարյան Տ. Տ.**, Հայաստանի Հանրապետության զինվորական իրավունք: Ուսումնամեթոդական ձեռնարկ-ուղեցույց, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն, 2011 թ., էջ 18

ցում են պետական միջոցառումների համախմբին, որոնք իրականացվում են պետական սահմանի հատվածների, կարևոր օբյեկտների ու հաղորդակցության ուղիների, բնակչության պաշտպանության, հակառակորդի տարբեր մակարդակների հատուկ գործողությունների կանխման, ինչպես նաև տեղերում ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանը մասնակցելու նպատակով: Այդ պաշտպանությունը իրականացվում է տարածքային-գոտիական սկզբունքով և ներառում է աշխարհագրի արագ կազմավորվող (տարածքային սկզբունքով) ստորաբաժանումներ: Տեղերում այդ ստորաբաժանումներն արդեն ենթարկվում են ՏՊ տեղական (գոտիական) պետին, իսկ օպերատիվ առումով՝ այն գորամիավորման հրամանատարությանը, որի պատասխանատվության գոտում է գտնվում տվյալ ստորաբաժանումը¹:

4. Ձորահավաքային պատրաստության միջոցառումների իրականացումը:

Բավականին կարևոր են տարածքային կառավարման մարմինների դերակատարումը գորահավաքային առաջադրանքների կատարման ասպարեզում: Առաջին հերթին դա վերաբերում է միջոցառումներին, որոնք միտված են ՀՀ պետական կառավարման տարածքային մարմինների տնտեսական պլանների փոխակերպմանը ռազմական ժամանակաշրջանին համապատասխան՝ պետական և գորահավաքային պահուստների հավաքագրման պահանջներով պայմանավորված:

ՀՀ ՁՈԻ բոլոր համալիր հավաքագրումները, ըստ օրենսդրության, իրականացվում է գործադիր իշխանության տարածքային և տեղական մարմինների կողմից: Այդ մարմինները պարտավոր են տնտեսական համալիրի աշխատանքային ռեսուրսների ապահովումից գատ կառավարել, ինչպես նաև վերահսկել, որպեսզի իրենց իրավասության տարածքներում ՁՈԻ համար մարդկային ռեսուրսների հավաքագրման նախապատրաստումը և իրականացումը պատշաճ ձևով իրականացվի²: «Ձորահավաքի տարածքային սկզբունքը նպատակահարմար է կիրառել այն պատճառով, որ ներկայումս սպառնագին և պատերազմի սկզբնական շրջանները խիստ կրճատվել են և հարձակման ենթարկված երկրները չեն հասցնում իրականացնել արտատարածքային սկզբունքով գորահավաքն ու գորքերի ծավալումը մինչև գլխավոր ուժերի մարտի բռնվելը, իսկ որոշ դեպքերում, երբ պետությունը չունի համապատասխան ռազմավարական տարածք, անգամ մինչև երկրի ռազմակալումը»³:

Ձորակոչման և գորահավաքային աշխատանքների իրականացման հարցում ռազմական կառավարման տարածքային մարմինները զինվորական կո-

¹ Տե՛ս **Խաչատուրով Յու. Գ.**, *Պաշտպանությանը պետության և նրա զինված ուժերի պատրաստման որոշ հարցեր*, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, հմ. 3 (61), 2009, էջ 17

² Տե՛ս **Тарараев В. Г.** *Особенности комплектования ВС РФ мобилизационными людскими ресурсами в современных социально-экономических условиях*// «Военная мысль».- 2005.- № 1 <http://militaryarticle.ru/voennaya-mysl/2005-vm/9577-osobennosti-komplektovaniya-vs-rf-mobilizacionnymi> -[հասանելի էր 10.10.2017]

³ Տե՛ս **Քոթանջյան Հ. Ս., Մարտիրոսով Լ. Ա., Մարտիրոսյան Տ. Ռ., Չիլինգարյան Դ. Ս.**, *Հայաստանի Հանրապետության պաշտպանական դոկտրինի մշակման որոշ հարցեր*, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, հմ. 1 (51), 2007, էջեր 27-28.

միասարիատներն են: Նրանք լինելով կապող օղակ զորամասերի, պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների ու կազմակերպությունների միջև, էական ազդեցություն են գործում մոբիլիզացիոն պլանով ծավալվող զորամասերի զորահավաքային պատրաստության որակի վրա¹:

5. Աջակցությունը ռազմա-սոցիալական ոլորտի քաղաքականության իրականացմանը: Մեծ է տեղական կառավարման մարմինների դերը ռազմական անվտանգության ապահովման համակարգի սոցիալական հատվածի զարգացման հարցում²: ՀՀ-ում իրականացվող պաշտպանական բարեփոխումների շրջանակում վերջին շրջանում հատուկ ուշադրություն է դարձվում զինծառայողների սոցիալական պաշտպանության մակարդակի բարձրացմանը: Ռազմական կազմակերպվածքի արդյունավետությունն զգալի չափով պայմանավորված է նրանով, թե որքանով է պետությունը կատարում իր պարտականությունները կապված զինծառայողների նյութական և սոցիալական ապահովման երաշխիքների, պահեստագոր արձակվածներին քաղաքացիական պայմաններում աշխատանքին հարմարմանը նպաստելը, բանակ-հասարակություն կապի ամրապնդման ուղղությամբ և այլն: Այս ուղղությամբ տարվող պլանաչափ աշխատանքներն իրականացվում են պետական և տեղական կառավարման մարմինների համադասմամբ: Ինչպես վերը նշվեց, զինվորա-սոցիալական աշխատանքը ՋՌԻ-ի բարոյահոգեբանական ապահովման համակարգի կարևոր բաղադրիչներից մեկն է, քանի որ զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական խնդիրների լուծումը նրանց արժանապատիվ կեցության էական պայմանն է, որն էլ իր հերթին հիմքային նախադրյալ է կյանքի համար հավանական մեծ վտանգ պարունակող զինվորական ծառայության բարոյական և հոգեբանական շարժառիթավորման³: Այս առումով տեղական իշխանության մարմինները տարածքային զբաղվածության կենտրոնների հետ աշխատանքներ են տանում զինծառայողների, նրանց ընտանիքի անդամների վերապատրաստման, սոցիալական և մասնագիտական հարմարեցման և աշխատանքով ապահովելու, նրանց համար ընտանեկան հանգստի լիարժեք տեղերի և սոցիալթեթիների հատկացման, դպրոցներում, մանկապարտեզներում, ճամբարներում պետպատվերով նախատեսված անհրաժեշտ քանակությամբ տեղերի բաշխման ուղղությամբ և այլն:

Ընդհանրացնելով վերն ասվածը կարող ենք առանձնացնել մի շարք հիմնապայմաններ, որոնք հնարավորություն են տալիս պետական իշխանության տարածքային մարմինների համակարգը դիտարկել որպես ռազմական անվտանգության ապահովման սուբյեկտ:

¹ Տե՛ս **Հարությունյան Ա. Թ.**, *ՀՀ զինվորական կոմիսարիատների զորահավաքային աշխատանքը և դրա կատարելագործման ուղիները*. «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, հմ. 4 (22), 1999, էջեր՝ 19-21

² Տե՛ս **Корякин В. М.** *Военно-социальная политика России* // «Военная мысль».- 2003, № 2 - <http://militaryarticle.ru/nezavisimoe-voennoe-obozrenie/nvo-2003/16824-voenno-socialnaja-politika-rossii> [հասանելի էր 10.10.2017]

³ Ավելի հանգամանորեն տե՛ս Պաշտպանական բարեփոխումներ. Զինվորական-սոցիալական ոլորտի զարգացում, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, հմ. 4 (62), 2009

- հնարավորությունն ակտիվորեն ազդելու ռազմական անվտանգության ապահովման գործընթացի վրա և այդ համակարգի առավել արդյունավետ գործառնման ամրապնդումը
 - հանդիսանալ կապող օղակ ռազմական կառավարման տարբեր մակարդակների և օղակների մարմինների միջև՝ ամրապնդելով համակարգի ամբողջականությունը
 - տարածքային մակարդակում ռազմական սպառնալիքների և վտանգների ծագման պարագայում համալիր միջոցառումներով դրանց չեզոքացումը:
- Այսպիսով, պետական վերադաս և տեղական իշխանության մարմինները ռազմական անվտանգության ապահովման տիրույթում միմյանց հետ կապված են դիալեկտիկական կապով: Սա նախնառաջ պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ռազմական անվտանգության ապահովման համակարգը ոչ գծային և բարդ կառավարման օբյեկտ է, որի մեջ մտնում են որակապես տարբեր, միմյանց հետ փոխկապակցված տարբեր և այս համատեքստում մեր կողմից քննարկվող հիմնահարցը բացառություն չէ: Այդ համակարգի մեջ մտնող յուրաքանչյուր տարր դիտարկվում է որպես ամբողջի մաս, որպես ինքնուրույն ենթահամարգ, որի «վարքը» կարևոր նշանակություն ունի ամբողջ համակարգի գործառնման համար: Ընդունելով այն հանգամանքը, որ ռազմական անվտանգության ապահովումը «Կենտրոնի բացառիկ իրավասությունն է», բայց և այնպես, այդ քաղաքականության իրացումը տեղերում է կատարվում և հենց տեղական իշխանության մարմինների գործառնումից է նաև կախված այդ քաղաքականության արդյունավետությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, ՆՀ-37-Ն ՀՀ նախագահի հրամանագիր, 2007թ. փետրվարի 7, Երևան
2. ՀՀ ռազմական դոկտրին, ՆՀ-308-Ն ՀՀ նախագահի հրամանագիր, 2007թ. դեկտեմբերի 25, Երևան
3. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), 27.11.2005
4. **Քոթանջյան Հ. Ս.**, Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները: ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, Եր., 2010թ.
5. **Քոչարյան Ս. Տ.**, Հայաստանի Հանրապետության զինվորական իրավունք: Ուսումնա-մեթոդական ձեռնարկ-ուղեցույց, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն, 2011թ
6. **Վալեսյան Ա. Լ., Վալեսյան Լ. Հ.**, Քաղաքական աշխարհագրություն, Եր., ԵՊՀ հրատ., 2005
7. Քաղաքագիտություն: Ուսումնական ձեռնարկ, Երևանի պետ. համալսարան, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2006
8. **Голубев В. И., Пусько В. С.**, Современная концепция безопасности и проблемы ее реализации., Военный университет , -М., 1996
9. **Лутовинов В. И., Хмара Ю. Н.** Военная безопасность государства: концептуальные основы и современное российское видение // Социум и власть. 2015.- N 2 (52)

10. **Խաչատրյան Յու. Գ.**, Պաշտպանությանը պետության և նրա զինված ուժերի պատրաստման որոշ հարցեր, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, հմ. 3 (61), 2009
11. **Խաչատրյան Յու. Գ.**, Ռազմական գործողությունների օպերատիվ, բարոյահոգեբանական, տեխնիկական և թիկունքային ապահովման հիմունքները. ՀՀ ՁՈՒ-ի ապահովման համակարգի կատարելագործման հիմնական ուղղությունները, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, հմ. 4 (65), 2010
12. **Հարությունյան Ա. Թ.**, ՀՀ զինվորական կոմիսարիատների գորահավաքային աշխատանքը և դրա կատարելագործման ուղիները. «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, հմ. 4 (22), 1999
13. Պաշտպանական բարեփոխումներ. Զինվորական-սոցիալական ոլորտի զարգացում, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, հմ. 4 (62), 2009
14. **Քոթանջյան Հ. Ս., Մարտիրոսով Լ. Ա., Մարտիրոսյան Տ. Ռ., Զիլինգարյան Դ. Ս.**, Հայաստանի Հանրապետության պաշտպանական դոկտրինի մշակման որոշ հարցեր, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, հմ. 1 (51), 2007
15. **Барабин В. В.** Военно-политическая деятельность государства в системе национальной безопасности: Социально-философский анализ/ Дис. док. филос. наук.- М., 1999
16. **Корякин В. М.** Военно-социальная политика России. Военная мысль- 2003- № 2 -<http://militaryarticle.ru/nezavisimoe-voennoe-obozrenie/nvo-2003/16824-voenno-socialnaja-politika-rossii> [հասանելի էր 10.10.2017]
17. **Руссков С. В.** Организационно-правовые основы оборонной деятельности органов местного самоуправления в Российской Федерации, Автореф. дис. юрид. наук. - М., 1999 -<http://law.edu.ru/book/book.asp?bookID=1231989> [հասանելի էր 10.10.2017]
18. **Стрекозов В. Г., Кудашкин А. В.** Военное право: Учебник Военный университет, Академия военных наук, М.- 2004. с. 54.- <https://view.officeapps.live.com/op/view.aspx?src=http://www.voennpravo.ru/assets/upload/files/vp2004.doc> [հասանելի էր 10.10.2017]
19. **Тарараев В. Г.** Особенности комплектования ВС РФ мобилизационными людскими ресурсами в современных социально-экономических условиях Военная мысль.- 2005. № 1-<http://militaryarticle.ru/voennaya-mysl/2005-vm/9577-osobennosti-komplektovaniya-vs-rf-mobilizacionnymi> -[հասանելի էր 10.10.2017]
20. **Фатеев К. В.** Обеспечение военной безопасности Российской Федерации: теория и практика правового регулирования.- М., 2005. - <https://refdb.ru/look/2690215-r14.html> [հասանելի էր 10.10.2017]

ԱՅԿ ԱՆՏՈՆՅԱՆ

"Центр информации и аналитики" ГНКО правительства администрации РА, аналитик
аналитической службы, аспирант НИУО МО РА

СИСТЕМА ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ КАК СУБЪЕКТ ОБЕСПЕЧЕНИЯ ВОЕННОЙ БЕЗОПАСНОСТИ РА

Понимание сущности военной безопасности, ее структурно-контекстуальных и деятельностных аспектов, а также практические решения вопросов, связанных с военной безопасностью, невозможно реализовать, не понимая природы его субъектов в этой сфере. Принимая во внимание основную и решающую роль государства в области военной безопасности, следует отметить, что его полного обеспечения можно достигнуть только путем координированной деятельности со всеми государственными органами и институтами. В качестве территориальной подсистемы военной безопасности Республики Армения служит система территориального управления и органов местного самоуп-

правления, которые участвуют в организации государственной обороны в соответствии с вышестоящими органами.

HAYK ANTONYAN

"Information and Analytic Center" SNCO of the "RA Government Staff",
Analyst at analytical services, NDRU, MoD, RA, Postgraduate

**TERRITORIAL ADMINISTRATION AS A SUBJECT OF MILITARY
SECURITY OF THE RA**

Understanding the nature of military security, its structural-contextual and activity-related aspects as well as practical solutions for issues related to military security cannot be implemented without understanding the nature of its subjects in this sphere. Considering the main and decisive role of the state in the field of military security it should be noted that it is possible to achieve full security only by the coordinated activities of all the state bodies and institutions. As a territorial subsystem of military security of the Republic of Armenia serves the system of territorial administration and local self-government bodies that are involved in the organization of public defense in accordance with higher authorities.

ՄԻՔԱՅԵԼ ՍՈՂՈՍՈՆՅԱՆ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
նախագահի տեղակալ,
Հայաստանի ազգային ազրարային համալսարանի հայցորդ

**ԳՆԱԳՈՑԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Գինը և գնակազմավորումը հանդիսանում են շուկայական տնտեսության պայմաններում արտադրության կազմակերպման և դրանից ստացվող արդյունքի արդարացի բաշխման հիմնական կառուցակարգերից մեկը: Ազատ մրցակցության պարագայում գնագոյացումը կատարվում է պահանջարկի և առաջարկի հիման վրա, իսկ մենաշնորհի պայմաններում գինը սահմանում է վաճառողը: Բնական մենաշնորհի ժամանակ այդ մեթոդներից ոչ մեկը չի կիրառվում, այլ գործում է պետական ակտիվ վերահսկողությամբ գնագոյացման ուրույն մեխանիզմ:

Հոդվածում համակողմանիորեն քննարկվում են բնական մենաշնորհի պայմաններում գնակազմավորման կառուցակարգերը, առանձնակի ուշադրություն է դարձվում գնագոյացման մեթոդների վրա (թվով 7 մեթոդ), բացահայտվում են դրանցից յուրաքանչյուրի առավելություններն ու թերությունները:

Բանալի բառեր` բնական մենաշնորհ, գին, սակագին, գնագոյացում, ծախսեր, գնագոյացման մեթոդ, շուկա, ապրանք, ծառայություն:

Ցանկացած երկրի տնտեսություն զարգանում է իրեն բնորոշ ապրանքային արտադրության օրենքներով, օրինաչափություններով և ձևերով: Դրանց ուսումնասիրություններն առանձին ժամանակահատվածներում հնարավորություն են տալիս բացահայտել այդ ժամանակաշրջանի առանձնահատ-

կությունները, տնտեսական երևույթների վրա ազդող գործոնների փոփոխականները¹, որտեղ առանձնահատուկ ուշադրության են արժանի գնագոյացման խնդիրները:

Գնագոյացման կազմակերպման գործընթացը գնահատելու և հիմնական գործառույթների ազդեցությունը բացահայտելու նպատակով անհրաժեշտ է վեր հանել առաջին հերթին դրա հիմնական մեթոդները: Հարկ է նշել, որ գների մակարդակի վրա ազդող փոփոխականների և գները կազմավորող ծախսերի ուսումնասիրությունը կատարվում է ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդներով: Ինդուկտիվ մեթոդի կիրառման դեպքում ուսումնասիրվում, վերլուծվում են գների մակարդակի վրա ազդող փոփոխականները, դրանց ծախսումների մակարդակը և արդյունքների հիման վրա կատարվում են ընդհանրացումներ, վեր են հանվում հիմնական օրինաչափությունները և սկզբունքները: Իսկ դեդուկտիվ մեթոդի կիրառման պարագայում գների մակարդակի փոփոխությունները և գները կազմավորող ծախսերը վերլուծելիս, կիրառվում են գնագոյացման գործընթացին վերաբերող ընդհանրացումներով, սկզբունքներով և տեսություններով, որից հետո դրանք հիմնավորում են անհրաժեշտ փաստերով²: Ընդհանուր առմամբ, գնագոյացման կազմակերպման մեջ ամենահիմնավոր մոտեցումը ծախսային մեթոդի կիրառությունն է: Դրա առաջին հիմնական պահանջն այն է, որ ձեռնարկության, կազմակերպության արտադրական գործունեության արդյունք հանդիսացող արտադրանքի կամ ծառայության իրացման գները, որոնք կարգավորվում են պահանջարկի և ստաջարկի հարաբերակցությամբ, գերազանցեն արտադրանքի (ծառայության) ինքնարժեքին³: Գնագոյացման ծախսային մեթոդի պահանջներից է նաև, որ արտադրանքի իրացումից ստացվող հասույթը պետք է երաշխավորի կազմակերպության աշխատողների և պետության շահերի համատեղում:

Ազգային տնտեսության յուրաքանչյուր հատվածին, արտադրության կազմակերպման ձևին բնորոշ են դրանց կառավարման սկզբունքներին գնագոյացման յուրահատուկ մեթոդներ: Այսպես՝ բնական մենաշնորհի գործառնության կառուցակարգի յուրահատկությունն արտահայտվում է արտադրանքի (ծառայության) գնագոյացման իրեն բնորոշ մեթոդներով: Նախ, բնական մենաշնորհի, որպես շուկայական տնտեսության մենաշնորհային կառուցվածքի և ուղղահաս ինտեգրվածության բաղադրիչի մասի կառուցվածքի, բնորոշ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նրա կողմից կիրառվում է գնային խտրականության, որի համաձայն՝ ապրանքի վաճառքը տարբեր խմբի սպառողներին իրականացվում է տարբեր

¹ **Ваздник А.С.** Цены и ценообразование: Учебное пособие.- 2-ое изд. перераб. и доп. -М.: ЮРАИТ, Высшее образование, 2010. с. 29-30

² **Բաղդասարյան Գ.Վ., Բաղդասարյան Ա.Գ.**, Գնագոյացումը շուկայական տնտեսության պայմաններում: Ուսումնական ձեռնարկ / Գ.Վ. Բաղդասարյան, ՀՊՏՀ, Եր., Տնտեսագետ, 2012, էջ 70-71

³ *Цены и ценообразование / под ред. В.Е.Есипова. -5-е изд.-М.,Спб,Минск: 2008. - с. 156.*

գներով, ընդ որում գների տարբերակումը պայամանավորված չէ արտադրության ծախքերի տարբերություններով¹:

Գնային խտրականության առաջին աստիճանի (կատարյալ գնային խտրականություն) դեպքում մոնոպոլիստը յուրաքանչյուր գնորդին ապրանքը վաճառում է դրա պահուստային գնով, այն մաքսիմալ գնով, որի համար գնորդը համաձայն է վճարել: Այսպիսով, սպառողի ամբողջ «ավելցուկը» յուրացնում է մոնոպոլիստը: Նման գնային խտրականությունը գործնականում քիչ է հանդիպում:

Երկրորդ խմբի գնային խտրականությունը ենթադրում է գների տարբեր մեծությունների սահմանում կախված արտադրանքի գնորդների քանակից: Մեծ ծավալների արտադրանքի գնման դեպքում գնորդների համար սահմանվում է առավել ցածր գին յուրաքանչյուր միավորի դիմաց: Հաճախ գնային երկրորդ խմբի խտրականությունը կիրառվում է տարատեսակ գնային զեղչերի ձևերով:

Այսպես, օրինակ, ՀՀ կառավարության 2016թ. նոյեմբերի 3-ին N1118-Ն և N1122-Ն որոշումների համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշեց² սահմանել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից՝

1) ՀՀ կառավարության 2016թ. նոյեմբերի 3-ի N1122-Ն որոշման համաձայն սոցիալապես անապահով ընտանիքների սպառողներին վաճարվող յուրաքանչյուր հազար մ³ բնական գազի սակագինը տարեկան՝

ա. մինչև 600մ³ բնական գազի 1մ³ համար 100 դրամ ներառյալ ԱԱՀ,

բ. 600 մ³ գերազանցող բնական գազի 1մ³ համար 139 դրամ՝ ներառյալ ԱԱՀ

2) գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսություններին վաճառվող յուրաքանչյուր 1000մ³ բնական գազի՝

ա. յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման բանաձևը՝ նոյեմբերի 1-ից մարտի 31-ը՝

$$P_2=212 * E$$

Որտեղ՝

P₂-ն գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսություններին վաճառվող բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (դրամ/մ³)՝ ներառյալ ԱԱՀ,

E-ն յուրաքանչյուր հաշվետու ամսվա նախորդող ամսվա 25-ին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքն է:

Երրորդ աստիճանի գնային խտրականության պարագայում մենաշնորհը արտադրանքը տարբեր գնորդներին վաճառում է պահանջարկի տարատեսակ առաձգականության գներով: Այսպիսով, ոչ թե տեղի է ունենում

¹ Курс экономической теории / Под ред. Чепурина М.Н., Кисилевой Е.А., - Киров: АСА, 2002.- с. 138-188

² ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշում N 333-Ն, 25-ը նոյեմբերի 2016թ., Եր. // <http://www.arlis.am>

գների տարբերակում, այլ ըստ շուկայի հատվածավորմանը (սեզոնային)՝ գնորդների բաժանում ըստ խմբերի՝ կախված նրանց գնողունակության հնարավորություններից: Մտեղծվում են «հարուստ» և «էժան» շուկաներ:

«Հարուստ» շուկաներում պահանջարկը բնորոշվում է ցածր առաձգականությամբ, ինչը հնարավորություն է տալիս մենաշնորհին ավելացնել հասույթի չափը գների բարձրացման հաշվին: «էժան» շուկաներում պահանջարկը կրում է բարձր առաձգականություն, որը հնարավորություն է տալիս ցածր գների միջոցով ավելի շատ ապրանք վաճառել, դրանով իսկ ավելացնել հասույթի ընդհանուր ծավալը:

Հետևաբար, մենաշնորհը, կիրառելով գնային խտրականություն, պետք է կարողանա տարբերակել իր շուկան՝ կողմնորոշվելով գնային առաձգականությամբ դեպի առանձին սպառողների պահանջարկի բավարարմանը:

Բնական մենաշնորհի ապրանքի (ծառայության) գնագոյացումը ենթադրում է կիրառել հետևյալ մեթոդները՝

- երկբաղադրամասային սակագին,
- գնագոյացում սահմանային ծախսերով,
- գնագոյացում ծանրաբեռնավածության գագաթնակետային (պիկ)

ծախսերով,

- խաչաձև սուբսիդավորում,
- արդարացի գնագոյացում,
- սահմանային գների սահմանում,
- գնագոյացում եկամուտների սահմանափակման միջոցով,
- խթանող սակագնային մեթոդը:

Սակագինը համարվում է ֆիրմայի ծառայության արժեքի հաշվարկման ալգորիթմը:

Բնական մենաշնորհի արտադրանքի ծառայության գնագոյացման այս կամ այն մեթոդի ընտրությունը հանդիսանում է պետության բացառիկ իրավունքը, քանզի այն ազդում է բնական մենաշնորհի և համապատասխանաբար երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա:

Երկբաղադրամասային սակագինն իրենից ներկայացնում է գնագոյացման համակարգ, որի դեքում սպառողները վճարում են սպասարկման իրավունքի ձեռք բերման, իսկ այնուհետև վճարում յուրաքանչյուր միավոր ռեսուրսի սպառման դիմաց: Նման սակագին կարող են կիրառվել, օրինակ, հեռախոսային կապի ծառայության մատուցման կամ էլ էլեկտրաէներգիայի ապահովման պարագայում: Այսպես, հեռախոսային ընկերությունները մատուցում են ծառայություն ֆիքսված սակագնով քաղաքային ցանցի, իսկ միջքաղաքային կապի օգտագործման համար կատարվում են լրացուցիչ վճարումներ:

Ֆիքսված վճարում կատարվում է էլեկտրացանցին միանալու համար, այնուհետև վճարվում է էլեկտրական հաշվիչի ցուցմունքին համապատասխան: Ֆիքսված եկամուտը ֆիրմային հնարավորություն է տալիս փոխհատուցել իր ծախսերը նույնիսկ այն դեպքում, երբ փոփոխական ծախսերը հավասար է սահմանային ծախսերին:

Մասնագիտական գրականությունում սակագնի ֆիքսված մասը կոչվում են «վճար մուտքի համար», իսկ փոփոխունը՝ «վճար օգտագործման դիմաց»:

Սակայն այդ մեթոդի կիրառությունը կարող է հիմնախնդիրներ առաջացնել ֆիրմայի վարքագծի մեջ, որն արտահայտվում է ֆիքսված վճարումների բարձրացմամբ և բերում է բնական մենաշնորհի դիրքի չարաշահմանը:

Տեղեկատվության անբավարարության և ոչ հստակ ներկայացման պարագայում, մեթոդի ընտրության հիմնախնդիրը, կապված արտադրանքի կամ ծառայության արտադրողի ու սպառողի գործունեությունների համակարգման անհրաժեշտության հետ, առաջացնում են բարդություններ ֆիքսված վճարումների ընտրության միջոցի հետ, եթե սպառողներն ունեն տարբեր նախընտրություններ և վճարունակություններ¹:

Սակագնի ֆիքսված բաղադրիչի ավելացումը բնական մենաշնորհին տալիս է լրացուցիչ կորուստներ, քանի որ սպառողների մի մասը, պատրաստ լինելով վճարել ծառայության դիմաց մինիմալ գնով, կհրաժարվեն տվյալ ծառայությունից: Սակայն, սպառողների վերջնական որոշումը կախված կլինի առաջարկվող ծառայության պահանջարկի առաձգականությունից:

Երկբաղադրիչ սակագնի մեթոդի կիրառությունը խնդիրներ է առաջացնում այս կամ այն ծախսերի վերագրումը սակագնի ֆիքսված և (կամ) փոփոխական հատվածների համար: Այս հարցի լուծմանը չկա միասնական մոտեցում: Այսպես, օրինակ, ԱՄՆ-ում հաստատուն կապիտալ ծախսերը վերագրում են սակագնի ֆիքսված մասին, իսկ Մեծ Բրիտանիայում՝ փոփոխման մասին²:

Մեր կարծիքով, այդ հարցին պետք է ցուցաբերել տարբերակված մոտեցում, կախված մատուցվող ծառայության բնույթից և ոլորտի գործառնությունից: Այն ոլորտներում, որտեղ արտադրանքի (ծառայության) ինքնարժեքի մեջ մեծ է հաստատուն ծախսերի տեսակարար կշիռը (ամորտիզացիոն հատկացումները), ճիշտ կլինի դրանք վերագրել ֆիքսված ծախսերին, ինչը կխթանի հիմնական կապիտալի առավել արդյունավետ օգտագործմանը՝ օրինակ, հեռահաղորդակցություն, կապ, երկաթուղային տրանսպորտ, ջրմատակարարում և ջրահեռացում: Իսկ այն ոլորտներում որտեղ բարձր է հումքի, նյութերի, վառելիքի, հիմնական աշխատավարձի ծախսերի տեսակարար կշիռը՝ վերագրել փոփոխուն ծախսերին (էլեկտրաէներգիայի, գազամատակարարման ոլորտները):

Գնագոյացում սահմանային ծախսերով մեթոդը համարվում է արդյունավետ գնագոյացում մենաշնորհի շահույթի մաքսիմալացման տեսանկյունից: Որպես կանոն, սպառողական ավելցուկի առաջացման հետևանքով գնի իջեցումը մինչև սահմանային ծախսերի մակարդակը, կրճատում է բնական մենաշնորհի շահույթի մեծությունը: Բնական

¹ **Шаститко А.Е.** Альтернативные формы экономической организации в условиях естественной монополии Бюро экон. анализа - М.: ТЕИС, 2000.- с. 24-28

² **Королькова Е.И.** Естественная монополия: Регулирование и конкуренция. - Лекция 1: Регулирование и естественная монополия // Экономический журнал Высшей школы экономики. - 2000. N 2, - с. 14

մենաշնորհի սուբսիդավորումը բերում է հասարակության կենսագործունեության բարձրացմանը, հետևաբար սուբսիդավորումն անհրաժեշտություն է նրա գործունեության համար:

Գնագոյացման տվյալ մեթոդի կիրառության արդյունավետությունը դեռևս վիճելի է, քանզի պետական սուբսիդիաների տրամադրումը կարող է արհեստականորեն բարձրացվել: Տեղեկատվության ասիմետրիկ բաշխումը «բնական մենաշնորհ - պետություն» կապի միջև նույնպես մեծացնում է կարգավորող մարմինների կողմից ժամանակն ու ծախսերը տեղեկություն ստանալու բնական մենաշնորհի ծախսերի վերաբերյալ: Պետության կողմից ծախսերի փոխհատուցման երաշխավորումը սուբսիդիայի ձևով թուլացնում է խթանները բնական մենաշնորհի ծախսերի մինիմալացման հարցում: Պետական մենաշնորհի գործունեության սուբսիդավորումը նույնպես ուղեկցվում է հարկային բեռի մեծացումով և իր հետ բերում է վարչարարական ծախսերի վերաբաշխմանը պետական բյուջեի միջոցների հաշվին:

Գնագոյացում ծանրաբեռնավածության գազաթնակետային (պիկ) ծախսերով:

Բնական մենաշնորհի արտադրանքի (ծառայության) հանդեպ պահանջարկը կարող է տատանվել տարվա, սեզոնի, շաբաթվա և օրվա ընթացքում, հիմնականում աշխատաժամանակի, բնակչության կողմից զանգվածային պահանջարկի մեծացման՝ կապված այս կամ այն համատարած միջոցառումների հետ (ամանորյա տոնակատարություն): Հատկապես էլեկտրաէներգիայի և գազի հանդեպ պահանջարկը մեծանում է ձմեռվա ընթացքում: Գազաթնակետային ծախսերով գնագոյացումը նպատակ ունի խթանել բնական մենաշնորհին ստեղծել լրացուցիչ արտադրական հզորություններ՝ պահանջարկի գազաթնակետային ծավալի բավարարման համար:

Բնական մենաշնորհի հաստատուն ծախսերն ամբողջությամբ վճարում է սպառողը գազաթնակետային ծանրաբեռնվածության ժամանակահատվածում: Հայկական շուկաներում նման դեպքեր գրանցվում են ավիափոխադրումների զանգվածային մեծացման, դեպի ծովափնյա քաղաքներ, երկաթուղային տոմսերի արժեքները ամառվա սեզոնի ընթացքում: Ոչ գազաթնակետային ծանրաբեռնվածության ժամանակահատվածում սպառողների համար գինը հավասար է միջին փոփոխուն ծախսերին, քանի որ հզորության այլընտրանքային գինը այդ ընթացքում հավասար է գրոյի:

Գազաթնակետային ծախսերի մեթոդով գնագոյացումը կապված է գնային խտրականության երրորդ աստիճանի հետ: Սպառողին առաջարկում են սակագների ցուցակ, որի համաձայն արտադրանքի կամ ծառայության գինը կախված է սպասարկման հուսալիությունից: Օրինակ, սպառողը կարող է ընտրել հարմարավետ, բայց թանկ, ոչ հարմարավետ ավելի էժան տոմս երթևեկության ընթացքում:

Մակայն այս դեպքում նույնպես առաջանում է բնական մենաշնորհի գործառնության պետական սուբսիդավորման անհրաժեշտություն, հատկապես այն ճյուղում, որոնք ունեն սոցիալական նշանակություն: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում այդպիսիներն են համարվում բնակչու-

թյան սոցիալական անապահով խավին գազի և էլեկտրաէներգիայի սակագների մի մասի պետական սուբսիդավորումը: Այս մեթոդը նույնպես կարող է բերել ռեսուրսների անարդյունավետ բաշխմանը, ինչպես նաև խրախուսել վարչական անարդյունավետ որոշումների կայացմանը և մեծացնել վարչական որոշումների ընդունման ծախսերը:

Այսպիսով, սահմանային ծախսերի և ծանրաբեռնվածության գազաթնակետային մեթոդներով գնագոյացումը պահանջում է կառավարության կողմից մշակել համալիր միջոցառումներ, ինչը հնարավորություն կտա մինիմալացնել արտադրողի վարքագծի օպորտունիստական ծախսերը և արդյունավետ կառավարել խաչաձև սուբսիդավորման կառուցակարգը:

Խաչաձև սուբսիդավորման միջոցով պետությունը լուծում է բնակչության մի խմբի հաշվին մյուս խմբի համար բնական մենաշնորհի արտադրանքի (ծառայության) ծախսերի ֆինանսավորման խնդիրները: Խաչաձև սուբսիդավորումը հնարավորություն է տալիս լուծել վերը նշված երկու մեթոդներով առաջացած խնդիրները: Սպառողների մի խումբ վճարում է արտադրության ծախքերից ցածր գին, իսկ մյուս խումբը փոխհատուցում է բնական մենաշնորհին առավել բարձր գին վճարելով:

Խաչաձև սուբսիդավորման մեթոդի թերությունը, տնտեսության վրա արդյունքի վերաբաշխման ազդեցության հետ միասին հանդիսանում է վտանգը անբարեխիղճ մրցակիցների կողմից բնական արգելքների բացակայության պատճառով սուբսիդավորվող շուկայի հատվածի նվաճումը:

Արդարացի գնագոյացում է կոչվում այն մեթոդը, որի դեպքում արտադրանքի (ծառայության) գինը սահմանվում է միջին ծախքերի մակարդակին համապատասխան: Տնտեսագիտության տեսության մեջ գնագոյացման այդ մեթոդը կոչվում է «վատագույն այլընտրանքից լավագույնը»¹:

Արդարացի գնագոյացման սահմանումը նպատակ ունի մաքսիմալացնել սպառողական օգուտը բնական մենաշնորհի անկորուստ գործառնության պայմաններում:

Բնական մենաշնորհի արտադրանքի (ծառայության) գինը սահմանվում է այն մակարդակով, որպեսզի բնական մենաշնորհի արտադրության ծավալը հավասար լինի դրա հանդեպ պահանջարկի մեծությանը:

Այդ դեպքում բնական մենաշնորհը կարող է ստանալ նորմալ շահույթ: Արդարացի գնագոյացման արդյունքը հանդիսանում է հանրային կենսագործունեության բարձրացումը, անկախ նրանից, որ բնական մենաշնորհի արտադրանքի գինը համարվում է սահմանային ծախքերից բարձր: Տվյալ պարագայում չի պահանջվում պետության կողմից միջամտություն բնական մենաշնորհի գործունեությանը սուբսիդավորման ձևով ռեսուրսների վերաբաշխմանը, ինչը հնարավորություն է տալիս նման գործունեության խնդիրների լուծում ինքնուրույն:

Մակայն առանձին խնդիրներ, կապված սահմանային ծախքերի միջոցով գնագոյացման հետ, բնորոշ է նաև արդարացի գնագոյացմանը: Այն նույնպես

¹ *Стиллиц Дж.Ю.* Экономика государственного сектора. - М.: Инфра, 1997, -с. 181

ուղղեցվում է բնական մենաշնորհի ծախսերի իրական մակարդակի վերաբերյալ տեղեկատվության ասիմետրիկ բաշխմանը, որն էլ խթանում է հաշվետվությունում արհեստականորեն բարձրացնել ծախսերի մակարդակը:

Արդյունքում աճում են գործառնական (տրանսակցիոն) ծախքերը՝ պայմանավորված կարգավորող կողմի աղավաղմամբ, հակված իրական տեղեկատվության թաքցնելուն և չչափվող ծախսերի նվազեցմանը գործունեության իրականացում (արտադրվող արտադրանքի որակի նվազման հաշվին)¹:

Արդարացի գնագոյացումը ենթադրում է արտադրանքի (ծառայության) գնի մշտական ճշգրտում՝ կապված պահանջարկի և ծախսերի հաճախակի փոփոխման հետ, որի վրա էականորեն ազդում են արտաքին միջավայրը, ինչպես նաև երկրի ընդհանուր քաղաքական ու տնտեսական իրավիճակները: Գների հաճախակի ճշգրտումը նվազեցնում է բնական մենաշնորհի արտադրության ծախքերի կրճատմանն ուղղված տեխնիկական կատարելագործման միջոցառումների արդյունավետությունը:

Այսպիսով, արդարացի գնագոյացման մեթոդը, խթանելով հանրային կենսագործունեության բարձրացմանը, այդուհանդերձ բնորոշվում է տեղեկատվության զգալի չափով ասիմետրիկ ու անորոշ բաշխմամբ և պահպանում է բարձր հավանականությունը կառավարչական լուծումների ոչ ճիշտ լուծումների ընդունմանը, արտադրության ծախքերի կրճատման խթանմանը և վերադիր ծախսերի մեծացմանը:

Սահմանային գնի մեթոդն առաջին անգամ կիրառվել է Մեծ Բրիտանիայում: Բնական մենաշնորհի արտադրանքի (ծառայության) սահմանային գնի սահմանումը կոչում են նաև խթանող կարգավորում: Բնական մենաշնորհի տնտեսական շահույթը կախված չէ ծախսերի չափից, դրանով իսկ խթանվում է տեխնոլոգիայի կատարելագործումը և արդյունավետ արտադրության կազմակերպումը:

Պետական կարգավորման մարմինները սահմանում են բնական մենաշնորհի արտադրանքի (ծառայության) գնի վերին սահմանը: Սահմանային սակագնի հաշվարկման բանաձևը ենթադրում է նախորդ բազիսային ժամանակաշրջանի գնի ճշգրտում՝ հաշվի առնելով սպառողական գների ինդեքսը (համաթիվը)՝ հասնելով ադապտացիայի (հարմարեցման) գործակիցը՝

$$P_1 = P_{ov} (CPI - X), CPI > X$$

որտեղ՝

P_1 - ընթացիկ ժամանակաշրջանի սահմանային գինն է

P_{ov} - բազիսային ժամանակաշրջանի սահմանային գինն է

CPI - սպառողական գների ինդեքսը

X - ադապտացիայի գործակիցը:

Գնագոյացման տվյալ մեթոդը կոչում են նաև $RPI-X$ մեթոդ: Պրակտիկայում սպառողական գների ինդեքսի փոխարեն օգտագործում են նաև ՀՆԱ-ի

¹ **Шасгитко А.Е.** Альтернативные формы экономической организации в условиях естественной монополии, Бюро экон. Анализа.- М.: ТЕИС, 2000.- с. 35

(համախառն ներքին արդյունք) դեֆլյատորի գործակից, որն ավելի լայն հասկացողություն է, ընդգրկում է ոչ միայն սպառողական ապրանքների (ծառայությունների), այլ նաև արտադրության գործոնների գների փոփոխությունը:

Որպես կանոն, սահմանային գների վերանայումը իրականացվում է 4-5 տարվա ընթացքում և դրա տևողությունը հստակ ֆիքսվում է:

Գնագոյացման այդ մեթոդի առավելությունները հանդիսանում են՝

- սոցիալ-կոդմնորոշվող ուղղվածության պետական կարգավորումը, քանի որ կարգավորման օբյեկտ հանդիսանում է բնական մենաշնորհի արտադրանքը (ծառայությունը)՝ ցուցանիշ, որն ունի էական նշանակություն սպառողի համար,

- սակագնի կառուցվածքի հստակ սահմանում, ինչը հեշտացնում է դրա ձևավորման գործընթացը և վերահսկողությունը,

- ադապտացիայի գործակցի ճիշտ սահմանման դեպքում բնական մենաշնորհի գործունեության արդյունավետության խթանումը:

Սահմանային գնով գնագոյացման մեթոդը պահանջում է պետական կառավարման զարգացած ինստիտուտների առկայություն, որոնք ունակ են ապահովել բնական մենաշնորհի գնի ձևավորման գործընթացի օբյեկտիվությունը:

Բնական մենաշնորհի գնակազմավորման կարգավորումը, ենթադրում է, որ այն ոչ միայն պետք է փոխհատուցի արտադրանքի (ծառայության) ծախսերը, այլ նաև ստանա շահույթ, առնվազն կապիտալի այլընտրանքային կիրառման չափով:

Բնական մենաշնորհի արտադրանքի (ծառայության) գնագոյացման այլընտրանքային մեթոդ է համարվում եկամուտների սահմանափակման միջոցով գնագոյացման մեթոդը: Այդ մեթոդն առաջին անգամ կիրառվել է ԱՄՆ-ում: Շահութաբերության նորմայի սահմանների նախապես որոշումը բերում է գների նվազեցմանը և արտադրանքի (ծառայության) արտադրության ծավալի աճին: Բնական մենաշնորհի կոդմից արտադրանքի (ծառայության) գինը սահմանվում է միջին ծախքերի մակարդակին հավասար և բաղկացած է երեք բաղադրիչներից՝ ընթացիկ ծախսեր, ինվեստիցիաներ և շահութաբերության նորմա: Շահութաբերության նորման սահմանվում է բնական մենաշնորհի գործունեության արդյունքների վերլուծության փորձաքննության հիման վրա, որն արտացոլում է բնական մենաշնորհի ծախսերը բազիսային ժանամակաշրջանում, ինչպես նաև հաշվի է առնում այն, որ կարգավորող մարմինը չի տիրապետում ամբողջ տեղեկատվությունը բնական մենաշնորհի իրական ծախսերի վերաբերյալ:

Բնական մենաշնորհի շահութաբերության նորմայի կարգավորումը բերում է ռեսուրսների համաչափության օգտագործման փոփոխմանը: Գերադասելի է համարվում արտադրության կապիտալատար մեթոդի կիրառությունը, ինչն ուղեկցում է միջին ծախքերի մեծացմանը՝ հնարավոր նվազագույն ծախսերի մակարդակի հանդեպ: Այդ երևույթը տնտեսագիտության մեջ ստացել է «Ավերչ – Ջոնսոնի էֆեկտ» անունը:

Ավերչը և Լ. Ջոնսոնը դեռևս 1962թ. իրենց «Ֆիրմայի վարքագիծը սահմանափակման միջոցով կարգավորման պայմաններում»¹ աշխատության մեջ ցույց են տվել ռեսուրսների բաշխան վրա շահութաբերության նորմայի սահմանափակող գործոնի ազդեցությունը: Նման սահմանափակող գործոնի ազդեցության հետևանքով, ֆիրման նախապատվությունը տալիս է առավել կապիտալատար տեխնոլոգիաների օգտագործմանը, քան արտադրության ծախքերի կրճատմանը:

Այսպիսով, եկամտաբերության ներմայի սահմանափակումը խթաններ է ստեղծում բնական մենաշնորհի արտադրության ծավալների մեծացմանը կապիտալ ներդրումների օգտագործման հաշվին, այլ ոչ թե տեխնոլոգիաների կատարելագործման, ինչը հնարավորություն է տալիս ավելացնել շահույթի ընդհանուր գումարն ավելի արագ, քան օգտագործվող կապիտալի եկամտաբերության միջոցով:

Բնական մենաշնորհի արտադրանքի (ծառայության) արտադրության պարագայում ինչքան ճկուն է աշխատանք գործոնի փոխարինումը կապիտալով, ինչպես նաև որքան ցածր է պահանջարկի առաձգականությունը, այնքան ուժեղ է «Ավերչ – Ջոնսոնի էֆեկտը»: Աշխատանք գործոնի կապիտալով փոխարինման բարձր ճկունությունը տանում է արտադրության տեխնոլոգիայի փոփոխությանը, իսկ պահանջարկի ցածր գնային առաձգականությունը նպաստում է միավոր արտադրանքի (ծառայության) աճող ծախսերի տեղափոխումը սպառողի վրա:

Աղյուսակում բերվում է բնական մենաշնորհի արտադրանքի գնագոյացման մեթոդների համեմատական վերլուծություն:

Աղյուսակ

Բնական մենաշնորհի արտադրանքի (ծառայության) գնագոյացման մեթոդները

ՄԵԹՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԵԹՈՂԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՄԵԹՈՂԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1. Երկբաղադրիչ սակագին	Գնի սահմանումը սահմանային ծախքերի մակարդակին համապատասխան	- ֆիրմայի վարքագծի համաձայնողական հնարավորություն՝ ֆիքսված վճարումների ավելացում, որը բերում է իշխող դիրքի չարաշահմանը - սակագնի որոշակի մասին ծախսերի վերագրման բարդությունը
2. գնագոյացում սահմանային ծախքերով	Հանրային կենսամակարդակի աճ սուբսիդավորման վերաբաշխման հետևանքով	- բնական մենաշնորհի ծախսերի մինիմալացման խթանների նվազում - կառավարչական անարդյունավետ որոշումների ընդունման խթանում - հարկային բեռի բարձրացում և վարչական ծախսերի մեծացում

¹ **Averch. H., Jonson L.**, Behavior of the Firm under Regulatory Constraint. American Economic Review, 1962, N 52, p. 1052-1062

3. գնագոյացում ծանրաբեռնվածության գագաթնակետային ծախսերով	Հզորությունների ստեղծում գագաթնակետային պահանջարկի բավարարման համար	Պահանջարկի և առաջարկի ռացիոնալության խնդիրներ, ինչպես նաև գնային խտրականության կիրառում:
4. խաչաձև սուբսիդավորում	Բնական մենաշնորհի արտադրանքի (ծառայության) ձեռք բերման հնարավորություն սպառողների բոլոր խմբերի կողմից	- շուկայի գրավման վտանգ, մուտք էական արգելքների բացակայության պատճառով - եկամտի վերաբաշխման էֆեկտ
5. արդարացի գնագոյացում	- սպառողական օգուտի մաքսիմալացում - բնական մենաշնորհի անկորուստ գործունեություն - հանրային կենսամակարդակի գուտ օգուտին հասնելը	- ծախսերի վերաբերյալ տեղեկատվության անհամաչափ բաշխում - ծախսերի հաշվետու մակարդակի հնարավորության բարձրացում - գործառնական ծախսերի մեծացում - արտաքին միջավայրի փոփոխության պատճառով գների հաճախակի ճշգրտման անհրաժեշտություն
6. սահմանային գներ	- կարգավորման օբյեկտ հանդիսանում է գինը, - տնտեսական շահույթը կախված չէ ծախսերից, ինչը խթանում է տեխնոլոգիայի կատարելագործմանը և արդյունավետ արտադրության կազմակերպմանը	- պետական մարմինների համաձայնողականության վարքագծի հնարավորություն - սակագնի վերանայման ժամկետի խափանման հնարավորություն
7. եկամտաբերության նորմայի սահմանափակում	- ծախսերի սահմանում միջին մակարդակի վրա - բերում է գների նվազմանը և արտադրության ծավալների մեծացմանը:	-կապիտալատար արտադրությունների ծավալի մեծացման նախապատվություն -արտադրության կատարելագործման խթանների նվազում - նախկին ժամանակաշրջանի ծախսերի արտացոլում, բերելով ծախսերի հաշվառման խնդիրների առաջացմանը:

Բնական մենաշնորհի արտադրանքի (ծառայության) գնագոյացման կառուցակարգի անհրաժեշտ բաղադրիչ է հանդիսանում պետությունը, որն իրականացնում է պետական կարգավորում և ընդունում է որոշում կոնկրետ մեթոդի օգտագործման նպատակահարմարության մասին: Հաճախ կիրառում են համալիր մեթոդ, օրինակ, երկբաղադրիչ սակագին և սահմանային գներ

կամ երկրադարիչ սակագին ու եկամտաբերության սահմանափակ նորման և այլն:

Այսպիսով, վերլուծելով բնական մենաշնորհի գործառնությունների կառուցակարգերի յուրահատկությունը դրսևորվում է պետական կամ խառը սեփականության գերակայությամբ, բնական մենաշնորհի արտադրանքի (մատուցվող ծառայության) գնագոյացման մեթոդներով, տեղեկատվության ասիմետրիայով և այլն, ինչն էլ հիմք է տալիս փաստելու, որ պետությունը հանդիսանում է բնական մենաշնորհի անհրաժեշտ բաղադրիչի մաս:

МИКАЭЛ СОГОМОНЯН

Заместитель председателя комиссии по регулированию общественных услуг
Республики Армения,
соискатель Национального аграрного университета Армении

**ПРОБЛЕМЫ ЦЕНООБРАЗОВАНИЯ
В УСЛОВИЯХ ЕСТЕСТВЕННОЙ МОНОПОЛИИ**

В условиях рыночной экономики цена и ценообразование являются одним из основных механизмов организации производства и справедливого распределения получаемого продукта. При свободной конкуренции ценообразование осуществляется на основе спроса и предложения, а в условиях монополии продавец устанавливает цену. При естественной монополии эти методы не применяются, а действует активное вмешательство государства, под его контролем применяется особый механизм ценообразования. В статье анализируются механизмы ценообразования в условиях естественной монополии, уделяя особое внимание на методы ценообразования (7 методов), а также раскрываются положительные и отрицательные стороны этих методов.

MIKAYEL SOGHOMONYAN

Public Services Regulatory Commission of the RA, Vice-Chairman,
Armenian National Agrarian University,
Postgraduate student

**THE PROBLEMS OF PRICING IN NATURAL
MONOPOLY CONDITIONS**

In a market economy, the price and the pricing are one of the main mechanisms for organizing production and a fair distribution of the product. With free competition, the pricing is carried out on the basis of demand and supply, and in the monopoly conditions the seller sets the price. In natural monopoly, these methods are not applied, but there is active government involvement and specific pricing mechanism is applied under its control. The article analyzes the mechanisms of pricing in natural monopoly conditions, paying particular attention to pricing methods (7 methods), and also reveals the positive and negative aspects of these methods.

**ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ՝
ՈՐՊԵՍ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻ**

Հոդվածում ներկայացված է բյուջետավորման գործընթացի ավտոմատացման անհրաժեշտությունը առևտրային բանկերում, դրա դերը կառավարչական ռեսուրսների արդյունավետ օգտագործման ընթացքում: Բյուջետավորման ավտոմատացումը հանդիսանում է յուրաքանչյուր առևտրային բանկի հնարավորությունը կարճ ժամանակահատվածում արձագանքելու արդի շուկայական մրցակցային պայմաններին և օպերացիոն որոշումների կայացմանը:

Հանգուցային բառեր՝ Բյուջետավորում, առևտրային բանկ, ավտոմատացում, բյուջետային կառավարում, օպերացիոն կառավարում:

Արդի պայմաններում բանկերում բյուջետավորումը ավելի բարդ գործընթաց է, քան եկամուտների և ծախսերի մանրամասն պլանի կառուցումը: Այս բարդությունը հաճախ պատճառ է հանդիսանում բյուջետային կառավարումը՝ որպես օպերացիոն կառավարման արդյունավետ գործիք համարելուն:

Տեսաբանները հաճախ են բյուջետավորումը համարում բանկերի կառավարչական համակարգի քառասյին իրավիճակի կարգավորման միջոց[1], սակայն բյուջետավորման բարդությունը հաճախ է ետ պահում բանկերին դրա կիրառությունից: Բյուջետային կառավարումը ենթադրում է որակյալ կադրերի ներգրավվածություն, մասնակցային սկզբունքի կիրառություն, մի քանի սցենարների զարգացում, դրանց անընդմեջ փոփոխություններ և այլն, որոնք բարդ են համարվում և ժամանակատար:

Ներկայիս պայմաններում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետևանքով այս ոլորտում ևս կան քառսը կարգավորելու հնարավորություններ բյուջետավորման գործընթացը ավտոմատացնելու միջոցով: Բազմաթիվ SS կազմակերպություններ ստեղծել են ծրագրեր, որոնք թույլ են տալիս ոչ միայն ավելի ճշգրիտ, արժանահավատ բյուջեներ ստանալ՝ բացառելով մարդկային գործոնի բացթողումները, այլև կրճատել այն ժամանակը, որը ծախսվում էր բյուջեներ կազմելու համար:

Բյուջետավորման գործընթացի ավտոմատացումը դարձնում է այս կառավարչական գործիքը առավել ճկուն, արդյունավետ և ֆորմալ:

Բյուջետավորման գործընթացի ավտոմատացման ժամանակ հետևյալ գործողությունները պետք է հստակ իրականացվեն.

Տերմինների սահմանում:

Բյուջետային կառավարումը կառավարման տեխնոլոգիա է, որի հիմքում ընկած է պարտականությունների և պատասխանատվության բաշխում ար-

դյունքի ստացման համար բյուջետային համակարգին համապատասխան, որը կազմվում, կատարվում, վերլուծվում և ուղղվում է բյուջետավորման գործընթացի ընթացքում:

Մյուս կողմից, բյուջետային կառավարումը կարելի է բնութագրել որպես բանկի տնտեսական գործունեության արտացոլումը և մոդելավորումը: Բյուջետային կառավարման հիմնական խնդիրը կազմակերպության աշխատանքի արդյունավետության բարձրացումն է: Դրան հնարավոր է հասնել թափանցիկ գործունեության, կառավարելիության բարձր մակարդակի, իրացվելիության աճի, կանխատեսման և բանկի ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքի վրա ազդելու հնարավորության առկայության միջոցով:

Բյուջետավորման կմախքի ձևավորում:

Բոլոր գործընթացները, որոնք ավտոմատացվելու են, ենթակա են հստակեցման, առանձնացման, թեսթավորման և փաստաթղթավորման: Այսինքն՝ պետք է հստակեցնել մեթոդաբանությունը, որն էլ հենց բյուջետավորման կմախքն է: [1]

Բյուջետային կառավարման մեթոդաբանության հստակեցման համար պետք է սահմանենք դրա հիմնական բաղադրիչները.

Թիրախային KPI: Այն ցուցանիշներն են, որոնց պետք է հասնել բյուջետային ժամանակահատվածի ընթացքում: Որպես կանոն, դրանք սահմանվում են սեփականատերերի կամ տնօրինության կողմից, ովքեր բյուջետային կոմիտեի անդամ են:

Ֆինանսական կառուցվածք: Ֆինանսական կառուցվածքը ենթադրում է կազմակերպության կառուցվածքում ֆինանսական պատասխանատվության կամ հաշվառման կենտրոնների առանձնացումը:

Բյուջետային կառուցվածք: Բյուջետային կառուցվածքը բյուջեների համակարգ է, որին համապատասխան կատարվում է պլանավորումը և կազմակերպության ողջ գործունեության հաշվառումը:

Հաշվարկային մոդել: Բյուջեի հոդվածների և ցուցանիշների հաշվարկման ալգորիթմների նկարագրությունն է, որը արտահայտում է հոդվածների միջև փոխկապվածությունը, բյուջեի ձևավորման հաջորդականությունը, ֆինանսական արդյունքի և ֆինանսական վիճակի սահմանման սխեմայի ներկայացումը:

Բյուջետային կառավարման ռեգլամենտ: Ռեգլամենտը ենթադրում է բյուջեի նպատակադրման, բյուջետային գործընթացների ցիկլի ձևավորման, համապատասխան անձանց կողմից համաձայնեցման և հաստատման գործընթացը ֆինանսական կառուցվածքի բոլոր մակարդակներում, փաստացի տվյալների մուտքագրումը և բյուջեի վերանայումը:

Համաշխարհային լավագույն փորձի ուսումնասիրությունը կարող է մեծապես նպաստել մեթոդաբանության մշակման գործին, քանի որ այն ավելի քիչ ժամանակ և ռեսուրսներ է պահանջում, քան զրոյական մակարդակից բյուջետավորման գործընթացի մեթոդաբանության մշակումը: [1]

Բազմաթիվ SS կազմակերպություններ առաջարկում են իրենց կողմից մշակված ծրագրեր, որոնց մեծամասնությունը առաջարկում է բյուջետային

կառավարում քանկերում և ֆինանսական կազմակերպություններում Oracle Hyperion Planning բազայի հիման վրա, որը ներառում է բանկի բյուջետային պլանավորման մոդելը, պրոեկտի ստանդարտ փաստաթղթերի ձևանմուշները մեթոդաբանությանը և ռեգլամենտին համապատասխան:

Oracle Hyperion Financial Planning ծրագիրը համարվում է աշխարհում լավագույններից մեկը բյուջետային կառավարման խնդիրների լուծման տեսանկյունից: Այս գործիքը իր կիրառելիության և արդյունավետության բարձր մակարդակը բազմաթիվ անգամներ ապացուցել է նաև ՌԴ ֆինանսական համակարգում: Բյուջետային գործընթացը սկսվում է նախորդ ժամանակաշրջանի փաստացի տվյալների մուտքագրմամբ:

Այս ծրագիրը անդրադառնում է բյուջետային կառավարման բոլոր հիմնական տարրերին, որոնք բնորոշ են ֆինանսական կազմակերպություններին.

- ✓ Տոկոսային եկամուտների և ծախսերի մոդելավորումը, պարտքի մարման գրաֆիկի ձևավորումը՝ հիմնվելով բանկային պրոդուկտի պարամետրերի, միջնորդավճարների վրա և հաշվի առնելով ռիսկերը,

- ✓ ոչ տոկոսային ծախսերի, պահուստների և պարտադիր վճարների, հարկային բազայի և հարկերի մոդելավորումը,

- ✓ ոչ գործառնական ծախսերի բաշխման բազմաստիճան ալգորիթմների իրականացումը,

- ✓ բյուջետային հոդվածների լիմիտավորումը ըստ ծախսային կենտրոնների,

- ✓ ընթացիկ ակտիվների և պասիվների պակասորդի կառավարումը,

- ✓ բյուջեի կատարման վերահսկողությունը /գործոնային, ըստ դասակարգման, տեղեկատվության մշակման և վերլուծության վիճակագրական մեթոդների կիրառում/,

- ✓ GAP վերլուծությունը /տոկոսային և իրացվելիության/,

- ✓ KPI ցուցանիշների հաշվարկը ըստ ստորաբաժանումների և ողջ բանկի համար:

Բյուջետավորման հիմքում ընկած է տրանսֆերային գնագոյացման տեսությունը՝ ներքին ֆինանսավորման մեթոդաբանությունը, որը ենթադրում է, որ բանկը միջոցները ներգրավման և տեղաբաշխման ժամանակ վաճառում կամ գնում է կենտրոնական ֆոնդից:

Այսպիսի ծրագրերի օգտագործողները կարող են իրականացնել հետևյալ առաջադրանքները՝

- ✓ ընդհանուր բանկի և առանձին շահույթի կենտրոնների թիրախային ցուցանիշների սահմանումը,

- ✓ թիրախային ցուցանիշների՝ շահույթի կենտրոններ ուղղորդումը և բյուջետային գործընթացի սկսելու վերաբերյալ համապատասխան ստորաբաժանումների տեղեկացումը,

- ✓ պլանային տվյալների և հիմնական գործունեության բյուջեի ձևավորում,

- ✓ բյուջեի համաձայնեցում,

- ✓ ծախսերի տեղայնացում ըստ շահույթի կենտրոնների, բյուջեների կոնսոլիդացիա և բանկի ամբողջական բյուջեի ձևավորում,
 - ✓ թիրախային ցուցանիշներին հասնելու գնահատում, բյուջեի վերանայում անհրաժեշտության դեպքում,
 - ✓ փաստացի տվյալների բեռնավորում,
 - ✓ պլան-փաստացի վերլուծություն,
 - ✓ բյուջեի կատարողականի կանխատեսում,
 - ✓ ամենամսյա և/կամ եռամսյակային վերանայումներ՝ սահող բյուջե:
- Այսպիսի ծրագրային լուծումը ներառում է հետևյալ ծրագրային տարրերը, որոնք ապահովում են բյուջետավորման ողջ գործընթացի ավտոմատացումը.
- ✓ *Oracle Hyperion Planning* – web-տեխնոլոգիաների օգտագործման միջոցով բյուջետային պլանավորման գործընթացի ավտոմատացման և կենտրոնացման ծրագրային պրոդուկտ,
 - ✓ *Oracle Hyperion BI+: Web Analysis u Financial Reporting* – հաշվետվությունների ձևավորում և վերլուծություն,
 - ✓ *Oracle Hyperion Smart View for Office Toolkit* – MS Office հետ ինտեգրացման ծրագրեր,
 - ✓ *Oracle Hyperion Shared Services* – անվտանգության և հասանելիության կառավարման կենտրոնացման մոդուլ: [2]

Վերոշարադրյալից կարելի է ընդգծել, որ շուկայական արագ փոփոխվող արդի պայմաններում մրցակցային առավելություն վաստակելու բանկերի ջանքերը կարդարանան, եթե բանկերի ռեսուրսները առավել արդյունավետ օգտագործելու համար բյուջետային կառավարումը կիրառվի որպես օպերացիոն կառավարման գործիք, որն էլ կիրառործվի, եթե բյուջետավորման համակարգը հստակ կառուցված և ավտոմատացված լինի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ю.Михаловская, А.Ленская, С.Рассадин** Бюджетное управление в банке: Автоматизируем хаос.- 2012.
2. http://www.lanit-consulting.ru/products/oracle/indust_sol/credit/

ЛИАНА АРУТЮНЯН

Российско -Армянский (славянский) университет,
соискатель кафедры управления, бизнеса и туризма

**НЕОБХОДИМОСТЬ АВТОМАТИЗАЦИИ ПРОЦЕССА БЮДЖЕТИРОВАНИЯ В
КОММЕРЧЕСКИХ БАНКАХ КАК ПУТЬ К ЭФФЕКТИВНОМУ ИСПОЛЬЗОВАНИЮ
УПРАВЛЕНЧЕСКИХ РЕСУРСОВ**

В статье представлена необходимость автоматизации процесса бюджетирования в коммерческих банках, ее роль в эффективном использовании управленческих ресурсов. Автоматизация бюджетирования это способность каждого коммерческого банка реагировать на текущие рыночные конкурентные условия и оперативные решения за короткий промежуток времени.

LIANA HARUTYUNYAN
Armenian-Russian University
Department of Management, Business and Tourism,
PhD student

**THE NECESSITY OF AUTOMATION OF THE BUDGETING PROCESS
IN COMMERCIAL BANKS AS THE EFFICIENT USE
OF MANAGEMENT RESOURCES**

The article presents the necessity of automation of the budgeting process in commercial banks, its role in the effective use of managerial resources. Budgeting automation is the ability of each commercial bank to respond to current market competitive conditions and operational decisions in a short period of time.

ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Տնտեսության
կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետ
Ասպիրանտուրա 2-րդ կուրս

**ՎԵՐԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՑՐԱԾ ՀԵՌԱՆՎԱՐՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏ ԵԿՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ ԶԱՐԳԱՑՈՂ
ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Տնտեսական մրցակցության և նոր տեխնոլոգիաների վրա հիմնվելով՝ վերազգայնացումը առաջացրել է հզոր տնտեսական զարգացում և խթանել համաշխարհային արժեքի ստեղծման գործընթացի բարելավումը՝ ՏՀՏ և տրանսպորտային համակարգերում տեխնոլոգիական առաջընթացի միջոցով: Տեխնոլոգիական նորարարությունների շնորհիվ համաշխարհային արժեքների ստեղծման համակարգերը արագորեն զարգանում են, ինչը հանգեցնում է տարբեր տնտեսություններում մեծ վերափոխումների՝ ստեղծելով որոշակի էական ազդեցություններ տնտեսության, շրջակա միջավայրի և հասարակական ոլորտներում:

***Բանալի բառեր:** Վերազգայնացում, համաշխարհային մարտահրավերներ, վերազգայնացման ազդեցություն, զարգացող երկրներ, կայուն զարգացում, մրցունակություն:*

Վերազգայնացումը իր բերած բազմաթիվ դրական արդյունքներից բացի ստեղծում է նաև բազմաթիվ մարտահրավերներ ոչ միայն տնտեսական, այլ նաև հասարակական և բնապահպանական ոլորտներում: Առավել սուր խնդիրներից են՝

Անհավասար բաշխում: Առանցքային մարտահրավեր է արժեքի ստեղծումը և դրա հավասար բաշխումը մարդկան մեջ: Անհրաժեշտ է բարելավել աղքատության մեջ կամ դրա շեմին մոտ ապրող միլիարդավոր մարդկանց կյանքի որակը: Ներկայումս գոյություն ունեցող գերակա մոտեցումը այն է, որ միայն ՀՆԱ ավելացումը կարող է լուծել այս խնդիրը, սակայն այս մոտեցումը կարող է հանգեցնել ռեսուրսների սպառման ծավալի անցմանը թույլատրելի բոլոր

սահմաններից, ինչը կրթի բնապահպանական անդառնալի աղետների: Սա մեզ բերում է հաջորդ խնդրին:

Ռեսուրսների արդյունավետ օգտագործում: Արդյունաբերական հեղաշրջումից հետո առաջին անգամ համաշխարհային տնտեսությունը հանգել է կարևոր չվերականգնվող ռեսուրսների պակասին: 2008թ.-ին, ժամանակակից արդյունաբերական համալիրի հիմք հանդիսացող 89 հանքային ռեսուրսներից 63-ի պաշարները համարխարհային մակարդակով խիստ սակավ են դարձել՝ հանգեցնելով գների կտրուկ աճի:

Այսպիսով, վերազգայնացումը պետք է անցում կատարի միայն խիստ մրցակցության վրա հիմնված տնտեսական զարգացման հարացույցից դեպի նոր մրցակցային և կարգավորվող վերազգայնացումը՝ տնտեսական զարգացումից բացի հոգ տանելով նաև հասարակության և շրջակա միջավայրի պահպանման մասին:

Վերազգայնացման մյուս կարևոր մարտահրավերների շարքին են պատկանում.

Հատուկ տնտեսական ազդեցություններ վաղ արդյունաբերական երկրների վրա: Վերազգայնացման հետևանքով աշխարհում օրեցօր ավելանում է գլոբալ մրցակցությունը, ինչը ստիպում է ընկերություններին մտածել ծախսերի նվազեցման մասին՝ շուկայում դիրքերի բարելավման, իսկ երբեմն նաև պահպանման համար: Մեր օրերում վաղ արդյունաբերական երկրներում հիմնադրված ընկերությունների կողմից կիրառվող ծախսերի նվազեցման ամենահաջողված գործիքներից մեկը նոր արդյունաբերական երկրներին աշխատանքի արտապատվիրակումն է:

Այս պատճառով վաղ արդյունաբերական երկրներում գործազուրկների թիվը աճում է մանավանդ աշխատատար և ցածր որակավորում պահանջող ոլորտներում: Վաղ արդյունաբերական երկրներում գործազրկության մակարդակի վրա անուղղակի ազդեցություն ունի նաև արտադրական շղթայի այլ գործընթացների արտապատվիկաումը, օրինակ՝ նոր տեխնոլոգիաների զարգացումը: Սակայն վաղ արդյունաբերական երկրներում նկատվում է աշխատատեղերի թվի աճ բարձր տեխնոլոգիական և ծառայությունների ոլորտներում:

ՏՀԶԿ գնահատմամբ ծառայությունների ոլորտում ավելացված աշխատատեղերի քանակը գերազանցում է արդյունաբերական ոլորտում կորցրած աշխատատեղերի քանակին: Բարձրագույն կրթություն և հատուկ որակավորում պահանջող աշխատանքի շուկայում նկատվում է աշխատավարձերի մակարդակի բարձրացում մինչ ծացր որակավորման աշխատանքի շուկայում այդ մակարդակը նվազում է:

Հատուկ տնտեսական ազդեցություններ նոր արդյունաբերական երկրների վրա: Աշխատատար ոլորտների տեղափոխումը նոր զարգացող երկրներ և տեխնոլոգիաների միջազգային շարժունակության ավելացումը հանգեցրեցին այս երկրներում տնտեսական աճի տեմպերի արագ ավելացմանը և դրանց տնտեսությունների արդյունաբերականացման մակարդակի աճին:

Կտրուկ աճ հատկապես տեղի ունեցավ BRICS-ի երկրներում՝ Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան, Չինաստան և Հարավ Աֆրիկյան Հանրապետություն: Վաղ և նոր արդյունաբերական երկրներում աշխատուժի թանկացումը և արտադրական ռեսուրսների գնի բարձրացումը հանգեցրեց այնպիսի երկրների տնտեսական զարգացման արագ աճին և միջազգային շուկայում դերի բարձրացմանը, ինչպիսիք են՝ Բանգլադեշը, Եգիպտոսը, Ինդոնեզիան, Իրանը, Վիետնամը, Պակիստանը և Ֆիլիպինները: Իսկ այսպես կոչված «Ասիական Վագրերը» (Հոնգ Կոնգ, Հարավային Կորեա, Թայվան, Սինգապուր) դարձել են սպառողական ապրանքների շուկայի առաջատարները:

Աշխատատեղերը այս երկրներում հիմնականում ստեղծվել են վաղ արդյունաբերական երկրների ընկերությունների կողմից աշխատանքի արտապատվիրակման շնորհիվ: Աշխատատեղերի ավելացմանը զուգահեռ բարձրացել է նաև աշխատանքային պայմանների որակը, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ միջազգային ընկերությունները իրենց հետ բերում են նաև աշխատանքի որակի բարձր ստանդարտները և աշխատակիցներին վճարում են ավելի շատ քան տեղական ընկերությունները: Այնուամենայնիվ, նոր արդյունաբերական երկրներում դեռևս գոյություն ունեն երեխաների աշխատանքը, ժամանակակից ստրկությունը և ցածր աշխատավարձի դիմաց երկար աշխատանքային ժամերով աշխատանքը:

Վերազգայնացումը բացասական հետևանքներից են նաև հումքից կախված երկրներում անկայունության ավելացումը և սպեկուլյատիվ ֆինանսական «փուչիկների» հանդեպ չպաշտպանված լինելը, ինչպես նաև միջազգային խոշոր ընկերությունների և տեղական ընկերությունների միջև ոչ հավասար մրցակցությունը:

Աշխարհի մակարդակով վերազգայնացումը նպաստել է միջին խավի ավելացմանը, բայց միաժամանակ նաև ավելացել է հասարակության տարբեր խավերի միջև անհավասարությունը: Ծայրահեղ աղքատ վիճակում ապրող մարդկանց թիվը ավելացել է մանավանդ Հարավային Ասիայի և Աֆրիկյան Սահարայի շրջաններում: 2011 թվականին աշխարհի ամենաաղքատ երկրները ավելի աղքատ էին քան 1980 թվականի ամենաաղքատ երկրները: Այնուամենայնիվ կյանքի որակի հարցում տեղի են ունեցել որոշակի բարեփոխումներ: Օրինակ՝ զգալի նվազել է երեխաների շրջանում մահացության մակարդակը, կյանքի սպասվելիք տևողությունը նոր արդյունաբերական երկրներում աճել է մինչև 65 տարեկանը՝ ինչը, ամեն դեպքում, 10 տարով քիչ է քան վաղ արդյունաբերական երկրներում, իսկ կրթվածության մակարդակը 1970թ.-ից 10 տոկոս աճ է գրանցել ամբողջ աշխարհում: Քաղաքական տեսանկյունից ավելացել է ժողովրդավարականորեն կառավարվող երկրներում ապրող մարդկանց տեսակարար կշիռը աշխարհի ամբողջ բնակչության մեջ, և ավելի ու ավելի շատ երկրներ են սկսել կիրառել հասարակական իրավունքները:

Աճող մտահոգություն: Աշխարհում աճում է վերազգայնացման բռնած ուղղու վերաբերյալ մտահոգությունը: Էվանսն այն դիտում է որպես լիբերալիզմի ձախողում և պնդում. *«անհրաժեշտ է ավելի արդարացի մարդկային*

կարողությունների զարգացում և շրջակա միջավայրի պահպանում»: Միացյալ Ազգերի Կազմակերպության կողմից մշակված գեկույցում նշվում է. *«միջազգային հարաբերություններում ներկայումս գերիշխող ֆինանսներով առաջնորդվող վերազգայնացումը պետք է փոխարինվի զարգացմանը ուղղված վերազգայնացման մոդելով»:*

Որոշ հեղինակներ պնդում են, որ կարգավորվող և կառուցողական վերազգայնացումը միակ ուղին է «արդար» հավասարության հասնելու համար, ինչը, սակայն, նշանակում է, որ հասարակության կողմից ընդունված ժամանակակից աշխարհայացքը պետք է փոխվի: Մասնավորապես՝ աշխարհը պետք է հրաժարվի անընդհատ զարգացման և նյութական բարգավաճման գաղափարներից և անցնի կայունության և հավասարության վրա հիմնված մոդելին: Առաջարկվող նոր հարացույցը, որը կոչվում է «Մրցակցային կայուն վերազգայնացում», պետք է վերազգայնացման գործընթացներին միաժամանակ ինտեգրի և՛ տնտեսական աճը և՛ կայուն զարգացումը՝ միաժամանակ գործելով տարբեր շահառուների շահերից էլնելով: Մրցակցային կայուն վերազգայնացումը խթանում է կայուն զարգացումը ինչպես վաղ, այնպես էլ նոր արդյունաբերական երկրներում՝ միաժամանակ պահպանելով մրցակցությունը:

Վերազգայնացման և մրցունակությունը սերտ կապված են: Մրցակցային կայուն վերազգայնացման հայեցակարգում մրցունակությունը առանցքային դեր ունի և համարվում է վերազգայնացման շարժիչ ուժը: Այն պետք է խորքային ուսումնասիրել՝ հասկանալու համար, թե որտեղ, երբ և ինչպես պետք գործել լուծելու համար վերազգայնացման առաջացրած խնդիրները և քայլեր ձեռնարկելու կայունության ապահովման համար: Այսքանից կարելի է եզրակացնել, որ կայուն մրցակցությունը իրենից ներկայացնում է ինստիտուտների, քաղաքականությունների և գործոնների ամբողջություն, որը երկարաժամկետում երկիրը դարձնում է արդյունավետ՝ միաժամանակ ապահովելով հասարակական և բնապահպանական կայունություն:

Մրցունակությունը կարելի է սահմանել որպես. *«ընկերության կամ պետության ունակություն մրցունակ գնով առաջարկելու տեղական և համաշխարհային շուկաներում ընդունված ստանդարտներին համապատասխան ապրանքներ և ծառայություններ և դրանց արտադրության ընթացքում ծախսված ռեսուրսների դիմաց ապահովելու խելամիտ հասույթ»:*

Լայն իմաստով մրցունակությունը կարելի է համարել շուկայական հաջողություն երկրի կամ ճյուղի մակարդակով:

Մրցունակություն երկրի մակարդակով: Երկրի մակարդակով մրցակցությունը առաջին անգամ ներկայացրել է Մայքլ Պորտերը իր ազգերի մրցակցային առավելությունների մասին աշխատանքների մեջ: Պորտերը ազգերի մրցունակություն հիմքում դնում էր ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման մեջ նրանց արդյունավետությունը: Համաշխարհային Տնտեսական Ֆորումի «Գլոբալ Մրցունակության հաշվետվության» մեջ մրցունակությունը սահմանվում է որպես. *«ինստիտուտների, քաղաքականությունների և գործոնների ամբողջություն, որը որոշում է երկրի արդյունավետության մակարդակը»:* Համաշխարհային Տնտեսական Ֆորումի հավաստ-

մամբ առևտրի միջոցով աշխարհին բաց լինելը, ներդրումները կամ ֆինանսական հոսքերը և մարդկանց շարժունակությունը էական գործոններ են մրցունակության համար: Համաշխարհային Տնտեսական Ֆորումի տարեկան Գլոբալ Մրցունակության հաշվետվությունը հաշվարկում է 140 երկրների մրցակցային միջավայրը, ինչը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել այդ երկրներում արտադրողականություն և առաջընթաց ապահովող շարժիչ ուժերի մասին:

Մրցունակություն ճյուղի մակարդակով: Մրցունակությունը ճյուղի մակարդակով կարելի է համարել համեմատական հայեցակարգ, որը իրենից ներկայացնում է այդ ճյուղի ներկայացուցչի (ընկերություն, համալսարան, դերասան և այլն) ունակությունը բավարարելու պահանջարկը ավելի լավ քան մյուսները: Տեխնոլոգիաների արագ զարգացումը և վերագգայնացումը մեծացնում են գոյություն ունեցող մրցակցային ճնշումը ընկերությունների վրա և ձևափոխում այն միջավայրը, որտեղ վերջիններս ծավալում են իրենց գործունեությունը: Ավելի ազատ և գլոբալ աշխարհում այս տենդենցը բերում է ընկերությունների հնարավորությունների ավելացմանը, սակայն միաժամանակ այն մեծ մարտահրավեր է դարձել փոքր և միջին կազմակերպությունների համար: Ժամանակակից համաշխարհային զարգացման հետևանքով աշխարհում ուժեղացել է մրցակցությունը և ավելացել է շուկայի մասնակիցների թիվը:

Ամփոփելով քննարկվող հարցերը կարելի է առանձնացնել հետևյալ համաշխարհային հիմնախնդիրները:

Սոցիալ-տնտեսական անհավասարություն: ՏՀԶԿ անդամ երկրների բնակչության ամենահարուստ 10 տոկոսի և նույն երկրներում ապրող բնակչության ամենաաղքատ 10 տոկոսի միջև եկամտի մակարդակի տարբերությունը հասել է պատմական ամենաբարձր մակարդակին: Որոշ հետազոտություններ պնդում են, որ 62 մարդ ունի նույնքան, ինչ աշխարհի բնակչության կեսը: Անհավասարություն գոյություն ունի նաև սեռերի միջև՝ միջինում կանայք նույն աշխատանքի համար 16 տոկոսով քիչ են վարձատրվում:

Կառուցվածքային գործազրկություն: Կառուցվածքային գործազրկության ավելացումը հանգեցնում է բռնության ռիսկի մեծացմանը, որը կարող է տարածվել տեղային մակարդակից և դառնալ համաշխարհային մակարդակի խնդիրը՝ ազդելով համաշխարհային տնտեսության և հասարակական կայունության վրա:

Միգրացիա և տեղահանում: Ամբողջ աշխարհում միգրացիայի և տեղահանումների քանակը հասելի աննախադեպ մակարդակի: 2015 թվականին պատերազմի կամ բռնության պատճառով ամբողջ աշխարհում տեղահանվել է մոտ 40.8 միլիոն մարդ: Տեղահանված մարդկանց թիվը վերջին 15 տարիների ընթացքում կրկնապատկվել է: Տեղահանվածների մոտ երեք քառորդը հիմնականում Աֆրիկայից, Մերձավոր Արևելքից և Հարավային Ամերիկայից են:

Ուրբանիզացիա: Մյուս կարևոր գլոբալ հիմնախնդիր ուրբանիզացիայի մակարդակի արագ աճը և ամբողջ աշխարհում քաղաքային բնակչության թվի ավելացումն է, որը մասնավորապես ազդում է Աֆրիայի և Ասիայի երկրների վրա: Կանխատեսվում է, որ մինչև 2050 թվականը քաղաքային բնակչության

աճի մեկ երրորդ մասը բաժին է ընկնելու միայն Հնդկաստանին, Չինաստանին և Նիգերիային:

Շրջակա միջավայրի քայքայում: Այսօր բնական ռեսուրսների սպառում 50 տոկոսով գերազանցում է դրանք վերականգնելու մեր մոլորակի կարողությունները: Կանխատեսվում է, որ 2030 թվականին ջրի օգտագործման պահանջը ամբողջ աշխարհում ավելանալու է 40 տոկոսով: Սա պայմանավորված է լինելու սննդի արտադրության և էներգիայի ստեղծման համար օգտագործվող ջրի ծավալի ավելացմամբ: Ջրով ապահովվածությունը առանցքային նշանակություն ունի էներգիայով և սննդով ապահովվածության գործընթացում, ինչպես նաև կարևոր դեր է խաղում կլիմայական կայունության ապահովման գործում: Շրջակա միջավայրի մեկ այլ կարևոր խնդիր է **տեսակների վերացումը**: Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի կենդանի մոլորակի ինդեքսի համաձայն ողնաշարավոր կենդանիների պոպուլացիան վերջին 40 տարում է անգամ նվազել է:

Եթե վաղ և նոր արդյունաբերական երկրները շարունակեն զարգանալ ներկայումս գոյություն ունեցող գերակա մոտեցումների հիման վրա, ապա շատ շուտով համաշխարհային զարգացումը կգերազանվի բոլոր ընդունելի տնտեսական, հասարակական և շրջակա միջավայրի սահմանները: Համաշխարհային մրցակցության և համագործակցության դինամիկան պետք է այնպես կազմակերպվի, որպեսզի հնարավոր լինի զարգացնել այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք ամբողջ աշխարհում թույլ կտան ապահովել կայուն և խելամիտ սպառման մակարդակ:

Ռեսուրսների սահմանափակության, շարունակական աճի և հարստության անհամաչափ բաշխվածության պարագայում՝ համաշխարհային մակարդակով կայուն վերազգայանցման ապահովումը դարձել է աճող և առանցքային մտահոգություն, ինչպես նաև մարտահրավեր ամբողջ մարդկության գոյատևման և ապագա զարգացման համար: Այսպիսով, կայուն զարգացումը պետք է միաժամանակ ապահովի մադրկային կյանքի տնտեսական, հասարակական, բնապահպանական և տեխնոլոգիական ասպեկտները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **D.K. Elms, P. Low** (Eds.), Global value chains in a changing world, World Trade Organization (WTO), WTO Publications, Switzerland, 2013.
2. **W.E. Rees**, Avoiding collapse: An agenda for sustainable degrowth and relocalizing the economy, Canadian Centre for Policy alternatives, 2014.
3. **R. Baldwin, J. Harrigan**, Zeros, quality, and space: Trade theory and trade evidence, American Economic Journal: Microeconomics 3.2, 2011.
4. **J. Huwart, L. Verdier**, Economic Globalisation: Origins and consequences, OECD Publishing, Paris, 2013.
5. **P. Evans**, Is an alternative Globalization possible? Politics and Society, Vol. 36, No. 2, pp. 271-305. 2008.
6. United Nations Conference on Trade and Development (UNCTAD), Trade and Development Report 2015, United Nations (UN), New York and Geneva, 2015.
7. **K. Schwab, X. Sala-i-Martin**, Global Competitiveness Report 2014-2015, World Economic Forum, Switzerland, 2015.

8. **M.E. Porter**, Competitive advantage of nations: creating and sustaining superior performance, Simon and Schuster, 2011.

АРМАН ВАРДАНЯН

Армянский Государственный Экономический университет, факультет экономического регулирования и международных экономических отношений
Аспирант

**ПЕРСПЕКТИВЫ И СВЯЗАННЫЕ С НИМИ ОПАСНОСТИ ГЛОБАЛИЗАЦИИ
ДЛЯ РАЗВИВАЮЩИХСЯ СТРАН**

Основываясь на экономической конкуренции и новых технологиях, глобализация привела к сильному экономическому развитию и содействовала развитию процессов создания мировой ценности посредством технологического продвижения в ИКТ и транспортных системах. Благодаря технологическим инновациям мировые ценности быстро развиваются, что приводит к крупным преобразованиям в разных странах, что создает значительные последствия для экономики, окружающей среды и для общественных сфер.

ARMAN VARDANYAN

Armenian State University of Economics, Faculty of Economic Development and International Economic Relations
Postgraduate 2nd year

**PROSPECTS AND ASSOCIATED CHALLENGES CREATED BY GLOBALIZATION
IN DEVELOPING COUNTRIES**

Based on economic competition and new technologies, globalization resulted a strong economic development and stimulated the development of world value creation process through technological advancement in ICT and transport systems. Thanks to technological innovations, world-class values are rapidly developing, leading to major transformation of different economies and creating some significant impacts on the economy, the environment, and the public spheres.

ՋԱՎԵՆ ՄԿՐՏՅԱՆ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի մագիստրանտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ
ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հայաստանի տնտեսության կայուն զարգացման համատեքստում կարևորվում է նաև մետաղական ռեսուրսների արդյունավետ արդյունահանումը, եթե հաշվի առնենք, որ արդի պայմաններում վերջիններս շահագործվում են էքստենսիվ եղանակով, ընդ որում արդյունահանման տեմպերը զգալիորեն գերազանցում են պաշարների հայտնաբերման տեմպերին: Մետաղական ռեսուրսների շահագործումը նման եղանակով խախտում է սերունդների իրավահավասարության կայուն զարգացման հիմնարար սկզբունքը և կայունության պայմանը:

***Բանալի բառեր.** Տնտեսական աճ, հանքաարդյունաբերության զարգացում, հումքային ուղղվածություն, օգտակար հանածոներ, էկոլոգիական գործոն*

Տնտեսության կայուն զարգացման հայեցակարգի ձևավորմանն ու մշակմանը մեծապես նպաստել է Հռոմի ակումբի շրջանակներում անցկացված հետազոտական գործունեությունը: Այս բնագավառում մեծ խթան հանդիսացավ աղմկահարույց մի աշխատանք՝ «Աճի սահմանները», որում մեծ ուշադրություն էր դարձվում գլոբալ էկոլոգիական խնդիրներին¹: Կայուն զարգացման վրա հիմնված տնտեսական առաջընթացի պոտենցիալը ենթադրում է ավելի մեծ որակական փոփոխություններ, քան միայն քանակական ցուցանիշների ավելացման վրա հիմնված տնտեսական աճի դեպքում: Իրական տնտեսական առաջընթացը դա այն առաջընթացն է, որն իրականացվում է ոչ թե շրջակա միջավայրի հաշվին, այլ ընդհակառակը, տնտեսական գործունեության և տարբեր մակարդակների կենսաքիմիական ցիկլերի ու մարդկանց ողջ վարքագծի համաձայնեցման ու տնտեսական համակարգի փակ գլոբալ կենսապահովման միջավայրի համակարգում դրանց ամբողջությամբ ներգրավելու միջոցով: Այսպիսով, եթե տնտեսական աճը հիմնված է միայն քանակական ցուցանիշների վրա, ապա վերջապես բերում է ինքնաքայքայման և այդ կերպ դառնում է «անկայուն»:

1992թ. հունիսին Ռիո դե Ժանեյրոյում տեղի ունեցավ Շրջակա միջավայրի և զարգացման հարցերով ՄԱԿ-ի վեհաժողովը, որտեղ որոշում ընդունվեց միջազգային հանրության զարգացման ուղու փոփոխության մասին: 179 երկրների կառավարությունների ղեկավարների այսպիսի աննախադեպ որոշումը պայմանավորված էր գլոբալ էկոլոգիական վիճակի վատթարացմամբ և դրա դինամիկայի վերլուծության հիման վրա գլոբալ աղետի կանխատեսմամբ, որը կարող է սկսվել արդեն 21-րդ դարում և հանգեցնել մոլորակի կյանքի վախճանին: Բնապահպանական բնույթի խնդիրների շարքում, որոնք համաձայն ՄԱԿ-ի շրջակա միջավայրի զարգացման ծրագրի (UNSD) հրապարակած «Գլոբալ էկոլոգիական հեռանկար» զեկույցի 21-րդ դարում կդառնան ամենահիմնականը, նշված են. կլիմայի փոփոխությունը՝ ջերմոցային գազերի արտանետման արդյունքում, խմելու ջրի անբավարարությունը և դրա աղտոտումը, անտառների վերացումը և անապատացումը, կենսաբազմազանության կրճատումը, բնակչության թվաքանակի աճը, մթնոլորտի աղտոտումը, օզոնային շերտի քայքայումը և այլն: Այս բնապահպանական հիմնախնդիրներից յուրաքանչյուրն ըստ զեկույցի կարող է հանգեցնել մարդկության և կենսոլորտի վախճանին, եթե շարունակվի քաղաքակրթության նման տարերային զարգացումը:

Տնտեսության կայուն զարգացումը պետք է իր մեջ ներառի երկու կարևոր չափանիշ. առաջինը՝ ցանկացած ծրագիր իրականացնելիս պետք է դրանք դիտարկվեն դինամիկայի մեջ, երկրորդ՝ այսօրվա մեր զարգացումները

¹ Медоуз Д. Х., Медоуз Д. Л., Рандерс Й., Беренс III. В. Пределы роста /Пер. С англ. Предисловие Г.А. Ягудина. -М.: Изд-во МГУ-1991-208 с.

չպետք է ապահովվեն ապագա սերունդների պաշարները նվազեցնելու հաշվին:

Կայուն զարգացումը սոցիալ-տնտեսական մեկնաբանությամբ օրինաչափ է բնորոշվել որպես արտադրական հնարավորությունների շահագործում այնպիսի մակարդակով, որը ծայրահեղ դեպքում չի բերում դրանց կրճատմանը, իսկ հաջորդող սերունդները կարող են դրանք օգտագործել ոչ նվազ արդյունավետությամբ քան նախորդները:

Ներկա և հաջորդող սերունդների համար պետք է երաշխավորվեն հավասար մեկնարկային պայմաններ պահանջումների բավարարման հնարավորության առումով: Այդ նպատակով անհրաժեշտ է ռացիոնալ բնօգտագործման տնտեսական նոր կառուցակարգի ձևավորում՝ կայուն զարգացման հայեցակարգի շրջանակներում, որը կներառի հետևյալ հիմնական դրույթները՝

- մետաղական ռեսուրսների արդարացի բաշխում սերունդների միջև,
- հավասար պայմաններ մետաղական ռեսուրսներից օգտվելու համար, այդ ռեսուրսներից ստացած եկամուտների արդարացի վերաբաշխում հասարակության բոլոր անդամների միջև,
- մետաղական ռեսուրսների արտադրության և սպառման սահմանափակում՝ հաշվի առնելով ապագա սերունդների շահերը,
- մետաղական ռեսուրսների համալիր և առավել լրիվ օգտագործում, թափոնները նվազագույնի հասցնելու պայմաններում,
- շրջակա միջավայրի վրա մարդածին բացասական ազդեցությունների սահմանային արժեքների չգերազանցում և էկոլոգիական ռիսկի առավելագույն նվազեցում,
- մետաղական ռեսուրսների արդյունահանման գործընթացում շրջակա միջավայրին հասցված վնասի փոխհատացում,
- մետաղական ռեսուրսների օգտագործման բնագավառում պետական և հասարակական աջակցության ցուցաբերում:

Հարկ է նկատել, որ վերոհիշյալ դրույթների իրագործման մեծ մասի կտրվածքով Հայաստանն ունի լուրջ հիմնախնդիրներ: Ժամանակակից բնապահպանական խնդիրները, որոնք ներկայումս գտնվում են հանրության ուշադրության կենտրոնում և որոնց հիման վրա կյանքի են կոչել կայուն զարգացման հայեցակարգը, որոշ չափով պայմանավորված են տնտեսագիտական մտքի զարգացման առանձնահատկություններով: Պետք է փաստել, որ ոչ տնտեսագիտության դասական դպրոցի ներկայացուցիչները և ոչ էլ հետագա տնտեսագիտական դպրոցները, տնտեսության զարգացման գործում էկոլոգիական սահմանափակումներին մեծ նշանակություն չէին տալիս: Եվ միայն 20-րդ դարի 70-ական թվականներից, երբ ամբողջ աշխարհում կտրուկ սրվեցին էկոլոգիական խնդիրները, տնտեսագիտության առջև խնդիր դրվեց իմաստավորել առաջացած էկոլոգիա-տնտեսական զարգացման միտումները և մշակել սկզբունքորեն նոր զարգացման հայեցակարգ:

Կայուն զարգացման հայեցակարգն առաջացավ 3 հիմնական տեսակետների միավորումից. տնտեսական, սոցիալական և էկոլոգիական: Տնտեսական

բաղադրիչը հիմնվում է եկամտի սահմանման վրա, որը ձևակերպել է Ջ.Խիսկը, «Իրական կյանքում եկամտի սահմանների որոշումը նպատակ ունի ցույց տալ մարդկանց, թե որքան կարող են օգտագործել, այդպիսով սակայն չլինել աղքատ»: Կարևոր է նշել, որ տնտեսական մոտեցումը առանցքային դերակատարում ունի կայուն զարգացման հայեցակարգի մեջ:

Կայուն զարգացման սոցիալական բաղադրիչը միտված է սոցիալական և մշակութային հավասարակշռության պահպանմանը: Գլոբալ մասշտաբով ցանկալի է պահպանել մշակութային կապիտալը և ավելի լիարժեք օգտագործել կայուն զարգացման փորձը: Կայուն զարգացման հասնելու համար ժամանակակից հասարակությունը պետք է ստեղծի որոշումների կայացման արդյունավետ համակարգ, հաշվի առնելով պատմական փորձը և խրախուսելով դրանց բազմազանությունը: Պետք է նշել, որ կայուն զարգացման հայեցակարգի սոցիալական բաղադրիչի զարգացումը հանդիսացավ ապագա սերունդների իրավունքների պահպանման հիմնաքարը:

Կայուն զարգացման հայեցակարգի էկոլոգիական բաղադրիչը կոչված է ապահովելու կենսաբանական և ֆիզիկական կայունությունը: Տվյալ դեպքում առանձնակի ուշադրություն է դարձվում այդպիսի համակարգերի փոփոխությունների հնարավորության ապահովմանը, այլ ոչ թե վերջիններիս պահպանմանը որևէ իդեալական կայուն վիճակում:

Անդրադառնալով Հայաստանի լեռնամետալուրգիական արդյունաբերության զարգացման առանձնահատկություններին, հարկ է նշել, որ այն պայմանավորված է առաջին հերթին հանքահումքային ներուժով և այդ պատճառով ոլորտի կայուն զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրության համար ելակետային է համարվում առկա ներուժի հիմնավորումը:

Մեր հանրապետության մետաղական օգտակար հանածոների թվում առկա են 7 պղնձամոլիբդենային, 4 պղնձի, 14 ոսկու և ոսկի-բազմամետաղային, 2 բազմամետաղային, 2 երկաթահանքային և 1 ալյումինա-հանքային հանքավայրեր¹: Բացի գնահատված և պետական հաշվեկշռում գրանցված հանքավայրերից՝ ՀՀ տարածքում հայտնաբերված են նաև տարբեր մետաղների 115 երևակումներ:

Հայաստանի հանքարդյունաբերության ճյուղի մասնաբաժինը ՀՆԱ-ում 2016թ.-ին կազմել է 16.7%²: Հարկ է նկատել, որ ճգնաժամից հետո այս ճյուղն արագ վերականգնվեց և արդեն 2011թ.-ին գերազանցեց նախաճգնաժամային մակարդակը 15.4%-ով: Արդյունաբերության նշված աճն էապես պայմանավորված էր ճգնաժամից հետո համաշխարհային պահանջարկի վերականգնմամբ, մետաղների գների էական աճով, ինչպես նաև լեռնամետալուրգիական ոլորտի ընկերությունների կողմից հանքաքարի հանույթի ծավալների ավելացմամբ: Ինչ վերաբերում է 2016թ.-ին, ապա այստեղ 2015թ.-ի համեմատ արդյունաբերության աճը կազմել է 2.45%³:

¹ www.minenergy.am

² www.armstat.am

³ www.armstat.am

2016թ.-ի արդյունաբերության աճին մեծապես նպաստել է և բավականին մեծ տեղ է զբաղեցրել մետալուրգիական և հանքարդյունաբերական արտադրանքը, այսինքն՝ լեռնամետալուրգիական արդյունաբերությունը՝ կազմելով արդյունաբերական արտադրանքի շուրջ 28.5%-ը: Ընդ որում լեռնամետալուրգիական արտադրանքի նշված ծավալի մեջ 17.9%-ը կազմում է հանքարդյունաբերական արտադրանքը, իսկ մնացած 10.6%-ը կազմում է մետալուրգիական արտադրանքը: 2016թ.-ին լեռնամետալուրգիական արդյունաբերության արտադրանքը կազմել է 409.032,9 մլն. դրամ (ՀՆԱ-ի 8.07%-ը), որն աճել է նախորդ տարվա հետ համեմատած 9.4%-ով, այդ թվում՝ հանքարդյունաբերական արտադրանքը կազմել է 256.481,4 մլն դրամ (ՀՆԱ-ի 5.06%), որը աճել է նախորդ տարվա նկատմամբ 16.2%-ով, իսկ մետալուրգիական արտադրանքը կազմել է 152.551,5 մլն դրամ (ՀՆԱ-ի 3.01%), որը նվազել է նախորդ տարվա նկատմամբ 0.5 %-ով:

Արտահանման կառուցվածքում մեծ տեղ են զբաղեցնում լեռնամետալուրգիական հումքը, կիսաարտադրանքները, ինչը բերում է այն եզրակացությանը, որ Հայաստանը միջազգային շուկայում շարունակում է մնալ հանքահումքային կցորդի դերում, որի շարունակական լինելու պարագայում կմեծանա տնտեսական աճի անկայունությունը մեր հանրապետությունում: Համաշխարհային լեռնամետալուրգիայի ճյուղում Հայաստանի մասնաբաժինը 2016թ. ունեցել է հետևյալ պատկերը. օգտակար հանածոների արտադրության ծավալներով աշխարհում զբաղեցնում է 131-րդ տեղը՝ արտադրելով 281 հազ. տոննա արտադրանք, իսկ արժեքային արտահայտությամբ 105-րդ տեղը՝ թողարկված արտադրանքի 704 մլն ԱՄՆ դոլլար արժեքով (0.02% աշխարհի կտրվածքով): Հանքային հումքի համաշխարհային արտադրության մեջ Հայաստանը ամենամեծ մասնաբաժինն ունի մոլիբդենի գծով՝ 2% կամ 5771 տոննա (համաշխարհային արտադրությունը մոլիբդենի գծով կազմել է 279.309 տոննա), 2-րդ տեղում պղինձն է՝ 0.46% կամ 95.088 տոննա (համաշխարհային արտադրությունը պղնձի գծով կազմել է 20.417.159 տոննա), ոսկու մասով համապատասխան ցուցանիշը կազմել է 0.09% կամ 3000 կգ (համաշխարհային արտադրությունը ոսկու գծով կազմել է 3.214.063կգ):

Նշենք, որ Հայաստանի լեռնամետալուրգիական ճյուղի կայուն զարգացումը պահանջում է մեծածավալ կապիտալ ներդրումներ՝ պայմանավորված վերջինիս տեխնոլոգիական առանձնահատկություններով և ժամանակակից սակավաթափոն բարձրաժեք տեխնոլոգիաների կիրառման անհաժեշտությամբ:

Համաշխարհային գլոբալ զարգացումների համատեքստում Հայաստանը կարող է այս ոլորտում պատշաճ մրցունակության մակարդակ ապահովել հստակ մշակված և ամբողջական շրջայով գործող տնտեսական զարգացման նոր քաղաքականության շնորհիվ:

Հայաստանում լեռնամետալուրգիական արտադրանքի արտադրության ավարտուն փուլերի բացակայությունը այն պատճառներից մեկն է, որի հետևանքով ոլորտի ձեռնարկությունները արագ ու հեշտ ճանապարհով

եկամուտներ ապահովելու նպատակով դիմում են զարգացման էքստենսիվ ձևերին: Ուսումնասիրությունները վկայում են, որ յուրաքանչյուր մեկ տոննա հանույթի ենթարկված հանքաքարի միայն 2%-ն է վերածվում արտադրանքի, իսկ մնացած 98%-ը հանդիսանում են թափոնները կամ այսպես կոչված «պոչանքները»: Երկաթաքարերի հանքավայրերից թափոնակույտեր են հեռացվում դուրս բերված ապարների մոտ 90%-ի չափով, իսկ պղնձամոլիբդենային, ոսկեբեր և մի շարք այլ հանքավայրերից՝ ավելի քան 99%¹: Հանրապետության տարածքում առկա են օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ընթացքում առաջացող թափոնների կուտակման 15 պոչամբարներ, որոնցում կուտակված պոչհանքները կազմում են շուրջ 220 մլն մ³ և զբաղեցնում են մոտ 1400 Հա ընդհանուր մակերես: Մասնագետների կարծիքով՝ ծանր մետաղները, աստիճանաբար կուտակվելով մարդկանց օրգանիզմում, կարող են հանգեցնել գենետիկական լուրջ շեղումների, հիվանդությունների աճի և կյանքի որակի անկման: Հայաստանում տնտեսական աճի կայուն զարգացման մոդելին անցումը պահանջում է էկոլոգիական գործոնը ներառել հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշների համակարգում²: Գլոբալ և ազգային մակարդակներով զարգացման վիճակը և դինամիկան բնութագրելու համար անհրաժեշտ են համալիր և ընդհանրացված ցուցանիշներ: Այսպես, Համաշխարհային բանկի մասնագետների կողմից առաջարկվել և հաշվարկվել է կայուն զարգացման ճշգրտված գուտ խնայողությունների ինտեգրալ ցուցիչ (ANS), որը ազգային խնայողությունների կուտակման իրական արագությունն է՝ բնական ռեսուրսների հյուծումը և շրջակա միջավայրի աղտոտումներից էկոլոգիա-տնտեսական վնասը համապատասխան ձևով հաշվառելուց հետո: Ներկայումս ՀՀ տնտեսության անկայուն մոդելից կայուն մոդելին անցումը հնարավոր է շարունակական հիմնավորված տնտեսական քաղաքականության իրականացման արդյունքում: Լեռնամետալուրգիական արդյունաբերության գործոնով ՀՀ կայուն տնտեսական աճը գործնականում հնարավոր է ապահովել ճշգրիտ հաշվարկված, գիտականորեն հիմնավորված տնտեսական ծրագրերով և համապատասխան տնտեսական մեխանիզմներով:

Վերոգրյալից ելնելով, Հայաստանում լեռնամետալուրգիական արդյունաբերության մասնաբաժնի մեծացումը ՀՆԱ-ում չպետք է հիմնած լինի ճյուղի էքստենսիվ զարգացման վրա՝ հանքաքարի հանույթի ծավալների աճով, այլ ընդհակառակը, արդյունահանման նվազող տեմպերի պարագայում տնտեսության և լեռնամետալուրգիական արդյունաբերության զարգացում պետք է ապահովել երկրի ներսում վերամշակման լրիվ շղթայով անցած, մրցունակ և բարձրարժեք վերջնարտադրանքի արտադրությամբ: Այդ նպատակի իրագործման համար անհրաժեշտ է կառուցել մետալուրգիական գործարաններ և արտադրել վերջնարտադրանք, որը կհանգեցնի

¹ www.mnp.am

² **Ավագյան Հ. Ա.** Հայաստանի հանքահումքային ռեսուրսները. Օգտագործման արդի վիճակը և արդյունավետության բարձրացման ուղիները, Երևան 2011, 274 էջ

տնտեսության կայուն զարգացմանը, քանզի կբացվեն նոր աշխատատեղեր, կավելանան հարկային մուտքերը, կզարգանան այլ գիտատար ճյուղերը, քանի որ գործարաններ կացուցելու համար անհրաժեշտ է նաև գիտատար ճյուղերի «օժանդակությունը»:

ՀՀ կառավարության կողմից որպես գերակա ուղղություններ հայտարարված գիտելիքահենք տնտեսության ամրապնդումը, տուրիզմի զարգացումը, ծառայությունների ոլորտի դիվերսիֆիկացիան կարող են բերել աշխատանքի և կապիտալի մասնաբաժինների մեծացմանը և ռեսուրսի մասնաբաժնի փոքրացմանը ՀՆԱ-ում: Սակայն, միայն տնտեսական ցուցանիշների դրական դինամիկան դեռևս բավարար չէ ցանկալի արդյունքի ապահովման համար: Անհրաժեշտ է չնոռանալ պոչամբարներում առկա հումքի մասին, քանի որ պոչամբարները ըստ էության հանդիսանում են տեխնածին հանքավայրեր և այնտեղ առկա է մեծ քանակությամբ տարբեր տեսակի բնական ռեսուրսներ: Եթե պոչամբարներում առկա հումքը վերամշակվի, ապա դրանով զարկ կտրվի տնտեսության լեռնամետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացմանը՝ 3 բաղադրիչների տեսանկյունից:

Ամփոփելով պետք է նշել, որ ներկայումս ՀՀ տնտեսական աճի տեխնածին մոդելը պետք է փոխարինել կայուն զարգացման մոդելով, որտեղ կնվազի տնտեսության և արդյունաբերության կախումը լեռնամետալուրգիական արդյունաբերությունից, ինչպես նաև կփոքրանա ոլորտի ահռելի բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Այդպիսի զարգացում ապահովելու համար անհրաժեշտ է դիմել տարբեր տնտեսական մեխանիզմների և այդ ուղղությամբ հիմնավորված քայլեր իրականացնել: Տնտեսության և լեռնամետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացում պետք է ապահովել երկրի ներսում վերամշակման լրիվ շղթան անցած մրցունակ և բարձրարժեք վերջնարտադրանքի արտադրության թողարկման հաշվին, ինչի համար անհրաժեշտ է հանրապետությունում մոտ ապագայում հիմնել մետալուրգիական գործարաններ և վերջնարտադրանք թողարկել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ավագյան Հ. Ա.** Հայաստանի հանքահումքային ռեսուրսները. Օգտագործման արդի վիճակը և արդյունավետության բարձրացման ուղիները Երևան 2011, 274 էջ
2. **Медоуз Д.Х., Медоуз Д.Л., Рандерс Й., Беренс Ш.В.** Пределы роста/Пер. С англ. Предисловие Г.А.Ягудина.-М.: Изд-во МГУ-1991-208с.
3. www.minenergy.am
4. www.armstat.am
5. www.mnp.am

ЗАВЕН МКРТЧЯН

Магистрант Армянского национального политехнического института

ПРОБЛЕМЫ СТАБИЛЬНОГО РАЗВИТИЯ ГОРНОДОБЫВАЮЩЕЙ ПРОМЫШЛЕННОСТИ В РА

В настоящее время техногенная модель экономического роста Республики Армения должна заменена моделью устойчивого развития, в которой также будет затронута зависимость от экономики и промышленности от горнодобывающей промышленности,

но огромное негативное воздействие на окружающую среду сократится. Для обеспечения такого развития необходимо применять различные экономические механизмы и предпринимать обоснованные действия в этом направлении.

Ключевые слова: *Экономический рост, развитие горнодобывающей промышленности, сырьевая ориентация, полезные ископаемые, экологический фактор.*

ZAVEN MKRTCHYAN

Student of Master's Program
of the Armenian National Polytechnic Institute

PROBLEMS OF STABLE DEVELOPMENT OF MINING INDUSTRY IN RA

At present, the technogenic model of the economic growth of the Republic of Armenia should be replaced by the model of sustainable development, which will also affect the dependence of the economy and industry from the mining industry, but the huge negative impact on the environment will be reduced. To ensure such development, it is necessary to apply various economic mechanisms and take reasonable steps in this direction.

Keywords: *Economic growth, development of the mining industry, raw materials orientation, minerals, environmental factor.*

ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

GOHAR GRIGORYAN

International Scientific-Educational Center of NAS RA
Head of the Chair of Foreign Languages,
Candidate of Philological Sciences, Associate Professor

ALEKSANDR KHACHATRYAN

Master of International Relations
International Scientific-Educational Center of NAS RA

"That wasn't English she was speaking it was the language of diplomacy."

Kevin Hearne

**THE ROLE OF THE ENGLISH LANGUAGE IN DIPLOMACY
AND MODERN WORLD**

Since ancient times there have been many systems of international relations that have existed in our world. From classical times to nowadays, the only principle for all states has been power and influence on other states. Power centers have been changing all the time but the main instrument, which connects all the parts and supplements the system is communication. Communication itself has its own indivisible component - language. In different times, periods of history and international relations, different languages were used.

Keywords – *English, diplomacy, modern world, communications, the role of English.*

The Greeks and Trojans communicated with each other in Greek in the Iliad, then Greek and Latin became the languages of the classical empires, with Greek surviving as the language of official correspondence in Rome and Byzantium. Latin has survived in Europe to these days as the language of the Roman Catholic Church but the rise of vernacular languages in the Middle Ages fragmented linguistic unity, even though Newton wrote his Principia in Latin as late as 1687. English and French in particular increased their influence through their empires and French became the common language of much of educated Europe.¹ French was considered the language of classical diplomacy starting from 16-17th centuries and the buds of the English language blossomed after the Treaty of Versailles, which was written in English as well as in French, the dominant language used in diplomacy at that time. Periodical changes occurred because of the wars and struggle for states' power and hegemony in the regions, continents and in the world. The beginning of 20th century and the whole 20th century is known as the rise of the US power that was to

¹Diplomacy and the English language- <https://www.diplotaxis.com/ingles/>

boost the international status of English worldwide through American cultural and financial influence in the world. It led to “soft power” concept firstly used by Joseph Nye, which includes the language factor as well. The first step was the US financial power, in particular the fact that the dollar replaced the pound as the world’s leading reserve, as the United States joined World War II after the war had started. Before joining the war, the United States served as the Allies’ main proprietor of weapons, supplies and other goods. Collecting much of its payment in gold, by the end of the war, the United States had owned the vast majority of the world’s gold. This precluded a return to the gold standard by all of the countries that had depleted their gold reserves. And finally, in 1944, delegates from 44 Allied countries met in Bretton Wood, New Hampshire, to come up with a system to manage a foreign exchange that would not put any country at a disadvantage. It was decided that the world’s currencies could not be linked to gold, but they could be linked to the U.S. dollar, which was linked to gold.¹ After World War II, Great Britain and the US started to spread and increase the role of the English language in international relations, bilateral and multilateral cooperation, which led to «internalization» of the English language.

What do we have today? Approximately 430 million people speak English as their first language. More than half of these (255 million) live in the United States, followed by some 60 million in the United Kingdom (Great Britain being the language's historical homeland). Estimates that include second language speakers vary greatly, from roughly 1 to 1.5 billion.²

When we are talking about the "language of diplomacy", we should mention some points, which are typical to that category. It should be used by the representatives of a group of governments for the convenience of discussion without interpreters and for the transaction of diplomatic business in a common language. Taking into consideration the regional, ethnic, cultural factors of using a language during negotiations between states or daily communication, however, we should mention that English is the main language of global communication, negotiations, correspondence and cooperation. In Armenian reality, the English language has been increasing its popularity as well. It has become one of the main foreign languages taught at schools, universities and other educational institutions.

The use of English has been growing since Armenia's independence in 1991. From year to year, more people tend to learn the English language. In contrast to the last decades, the number of Armenian schools teaching English has grown gradually. According to a 2012 poll, 40% of Armenians have basic knowledge of English with only 4% having advanced proficiency of English, 16% intermediate and 20% beginner level. However, English is more preferable for Armenians than Russian.

¹ How the U.S. Dollar Became the World's Reserve Currency - <https://www.investopedia.com/articles/forex-currencies/092316/how-us-dollar-became-worlds-reserve-currency.asp>

² English as the Native Language- <https://www.quora.com/How-many-people-in-the-world-speak-English-either-as-a-first-or-second-language>

50% of Armenians think that English should be taught in public secondary schools compared to 44% preferring Russian.¹

In 2002 CNN started broadcasting on regular basis in Armenia. In 1991 the American University of Armenia was established, an affiliate of the University of California, where the all majors are taught in English.² Within the framework of soft power, British Council is also represented in Armenia. The British Council promotes a wider knowledge of the UK and the English language, encourages cultural, scientific, technological, educational understanding and organizes different kinds of activities, events, seminars in Armenia.

Talking about Europe, it's important to mention that Europe is rapidly becoming a top region to find study programs in English, even in countries where English is not the native language. If you're an EU citizen, you can obtain a free university education – with all your lectures taught in English – in around half of all European countries, including Denmark, Austria, Norway and Greece.

English makes a significant contribution to a sustainable global development. It makes trade easier between countries that do not share a common language. It is used as a language of convenience, facilitating dialogue and building trust where an understanding of diverse positions is crucial – notably in peacekeeping and conflict resolution, where security forces and other uniformed services increasingly speak to each other in English.³ We can easily say that “English” is a brand that is used by leading countries in the world in order to spread their influence and achieve their goals. Moreover, the advantage of knowing English opens every door for young people; it enables access to the largest and extensive resources, opportunities and to an incredible amount of information, which may not otherwise be available. In addition, the process of westernization led to a platform where most of the content produced on the internet is in English, many of the world's top films, books and music are published and produced in English. Since English is the language of science and technology, English speakers have more opportunities to work with others in these fields and to share ideas and innovations. People who speak English have more job opportunities and businesses need employees who can communicate fluently with English-speaking partners and clients. Thanks to globalization and open borders, English also makes our trips easier for orientation in new countries, getting new relationships and for understanding new cultures, traditions.⁴

English exists in the world today as a means of international communication as a way for people from different social groups to communicate with each other and to fulfil this function it would seem that variation in the language needs to be curtailed to a certain extent. That is to say, if the language becomes too diverse it will not

¹ Bunter, Michael A. G. (2002). *The Promotion and Licensing of Petroleum Prospective Acreage*. The Hague: Kluwer Law International. p. 316. ISBN 90-411-1712-1.

² "About AUA". The American University of Armenia. Retrieved September 29, 2012.

³ The English language is perhaps the United Kingdom's greatest... - <https://www.britishcouncil.org/sites/default/files/english-effect-report-v2.pdf>

⁴ Importance of English - <https://effortlessenglishclub.com/importance-of-english>

remain mutually comprehensible across different social groups. Therefore, we have two impulses at work that are seemingly incompatible, or perhaps even in conflict, and the question we are faced with is how to render them as consistent, as both being part of the existence of a single entity we call 'English'. This is one of the central issues in the English language studies today – and it is a very modern issue because it has come about as a direct result of the unprecedented position that English now occupies in the world: as a language with global scope which is implicated in the history and present-day existence of societies all around the world.¹

As for diplomacy, it is necessary for diplomats to have language skills for the effective conduct of diplomatic work such as negotiations, persuasion, presentation, and communication with the entire world. Diplomats must be careful about the formulations they use. Especially preparing a written text they should be sensitive enough as the already sent out text cannot be softened or corrected, whereas in the conversation – if the reaction of the interlocuter is negative, further oral explanations may follow. Both the written and the spoken languages require the mastering of concepts and skills and need to consider message and context. Language is as important today as it was to the first envoys and negotiators. The choice of the right words is extremely important in diplomacy. Through the centuries a very carefully balanced, restrained, moderate vocabulary has been developed, ensuring a particular way of refined control over nuances in the meaning of words – both when agreeing with one's interlocuter as well as in rejecting his view. Nowadays technology is continuously shaping certain aspects of language and diplomacy, which is day-by-day involving new tools for communication and interpretation. Diplomats have to use right words, at the right time and in the right place during their official mission.

In the current system of international relations, we should mention the role of the UN, which consists of over fifty distinct organs and specialized agencies, as well as many regional and functional commissions, standing committees and other organizations. What is important here is that English is one of the six official languages within all of these structures. The language plays an official or working role in the proceedings of most other major international political gatherings, in all parts of the world such as ASAN(Association of South-East Asian Nations), the Council of Europe, the EU(European Union) and NATO(North Atlantic Treaty Organization). It is considered that we live in Yalta-Potsdam system of International relations were at the beginning, we saw two geopolitical players, in particular, the USA and the Soviet Union. Since then the role of the English language thanks to the US' foreign policy and the basis of the EU's establishment has become more demanded. After the collapse of the Soviet Union, the main English-speaking countries which are the main developed countries tried to spread and increase the

¹ English in the world today- <http://www.open.edu/openlearn/languages/english-language/english-the-world-today/content-section-17>

role of the English language not only politics and diplomacy but in every field of our society. The concept of “soft power” started to be used by Great Britain and other English-speaking countries as well, through their diplomatic missions, cultural centres, youth organization, etc.

As for the future, we can exactly state that the main language of international diplomatic and daily communications is and will be English as it involves all the world population including China whose language is considered as the main concurrent of being «lingua franca» after 50 years.

REFERENCES

1. **Bill Bryson**. Mother Tongue: The Story of the English Language. Penguin, 2009.
2. **Bunter, Michael A. G.** (2002). The Promotion and Licensing of Petroleum Prospective Acreage. The Hague: Kluwer Law International. p. 316. ISBN 90-411-1712-1.
3. **Carter, R.** (1988a) “Directions in the teaching and study of English stylistics”
4. **Crystal, D.** The language that took over the world. Retrieved December 15, 2006
5. **David Crystal**. Evolving English: One Language, Many Voices. The British Library Publishing Division, 2010.
6. Diplomacy and the English language- <https://www.diplotaxis.com/ingles/>
7. English as the Native Language- <https://www.quora.com/How-many-people-in-the-world-speak-English-either-as-a-first-or-second-language>
8. English in the world today- <http://www.open.edu/openlearn/languages/english-language/english-the-world-today/content-section-17>
9. **Graddol, D.** The future of English. London: The British Council.
10. How the U.S. Dollar Became the World's Reserve Currency - <https://www.investopedia.com/articles/forex-currencies/092316/how-us-dollar-became-worlds-reserve-currency.asp>
11. **Wallraff, Barbara**. 2000. What global language? Atlantic Monthly, November, 52–66.
12. **Сущинский И.И.** Деловая корреспонденция на английском языке М.: Эксмо, 2010.
13. 1999. The decline of the native speaker. In David Graddol and Ulrike H. Meinhof (eds.), English in a changing world. AILA Review 13, 57–68.
14. **Odehnalová, Jana**. The reading about English-speaking Countries. Práh: Praha, 2004. ISBN 80-7252-095-4.
15. **Melvyn Bragg**. The Adventure of English. Sceptre, 2004
16. "About AUA". The American University of Armenia. Retrieved September 29, 2012. Web-link: <http://aua.am/about-aua/>
17. The English language is perhaps the United Kingdom's greatest - <https://www.britishcouncil.org/sites/default/files/english-effect-report-v2.pdf>
18. Importance of English - <https://effortlessenglishclub.com/importance-of-english>

ГОАР ГРИГОРЯН

Международный научно-образовательный центр НАН РА
Заведующая кафедрой иностранных языков, кандидат филологических наук, доцент

АЛЕКСАНДР ХАЧАТРЯН

Международный научно-образовательный центр НАН РА
Магистр Международных Отношений

АНГЛИЙСКИЙ КАК ЯЗЫК ДИПЛОМАТИИ В СОВРЕМЕННОМ МИРЕ

В Статье анализируется роль английского языка как языка дипломатии и коммуникации в современном мире. Помимо истории развития и распространения английского языка, в статье также рассматриваются преимущества знания и обучения английскому языку, а также те факторы, которые вывели английский язык на мировой уровень.

ԳՈՂԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն,
Օտար լեզուների ամբիոնի վարիչ, բանասիրական
գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱԼԵՔՍԱՆԴԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն
Միջազգային հարաբերությունների մագիստրոս

ԱՆԳԼԵՐԵՆԸ՝ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇՆԱՐԶԻ ԼԵԶՈՒ

Հոդվածում անգլերենը վերլուծվում է որպես դիվանագիտության և ժամանակակից հաղորդակցության լեզու: Անգլերենի զարգացման և տարածման պատմությունից բացի հոդվածում դիտարկվում են նաև անգլերեն լեզվի իմացության և այն սովորելու առավելությունները: Անդրադարձ է կատարված նաև այն գործոններին, որոնց շնորհիվ անգլերենը դարձավ աշխարհի ամենատարածված լեզուն:

ԻՐԻՆԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Երևանի պետական համալսարանի սփյուռքագիտության ամբիոնի հայցորդ

ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ Մ, Դ, Ն ՀՈՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Առկայացման քերականական կարգը բնորոշ է առարկայության գաղափար ունեցող բառերին. ուստի այն գոյականի քերականական հատկանիշ է: Մ, դ, ն ձևայինները կամ հոդերը առկայացման կարգի արտահայտության միջոցներ են, քերականական մասնիկներ: Հոդերը գուրկ են բառային իմաստից. նրանք ունեն գուտ քերականական իմաստներ: Մ, դ, ն հոդերը լեզվի զարգացման ընթացքում իմաստագործառական տարբեր նկարագիր ունեն:

Բանալի բառեր՝ առկայացման քերականական կարգ, գոյական, ցուցական, ստացական, դիմորոշ, գրաբար, միջին հայերեն, արևելահայերեն, արևմտահայերեն, հոդ:

Առկայացման քերականական կարգը ձևավորվել է լեզվի զարգացման ընթացքում: Այն բնորոշ է առարկայության գաղափար ունեցող բառերին: **Մ, դ, ն** ձևայինները կամ հոդերը առկայացման կարգի արտահայտության միջոցներ են, քերականական մասնիկներ: Նրանք լեզվի զարգացման ընթացքում իմաստագործառական տարբեր նկարագիր ունեն:

Որոշյալ հոդը իմաստային առումով իր ձևավորման ընթացքում անմիջականորեն կապվում է ցուցական և անձնական դերանուններին, ուստի գրաբարում որոշիչ հոդերն են **ս, դ, ն**, որոնք համապատասխանում են **ես, դու, նա** կամ **այս, այդ, այն** դերանուններին: **Մ**-ն ցույց է տալիս, որ բառը կապ ունի առաջին դեմքի կամ խոսողի հետ, **դ**-ն՝ երկրորդ դեմքի կամ խոսակցի հետ և

Ն-ն՝ երրորդ դեմքի հետ: **Մ, ղ, ն** հոդերը՝ իբրև դերանվանական արմատական միավորներ, լեզվի զարգացման ընթացքում իմաստային առումով նույն բնութագիրը չունեն:

Գրաբարում *գիրքս* ոչ միայն նշանակում է *իմ գիրքը*, այլև *այս գիրքը*. ավելին՝ **ս, ղ, ն** հոդերը *այս, այդ, այն* դերանունների հետադաս գործառնությունի դեպքում համապատասխանաբար դրվում են գոյականի վրա՝ հոլովման հարացույցում ունենալով իրենց որոշակի կանոնավորված գործածությունը. Օր.՝ ուղղ. - տունս այս/ տունքս այստքիկ, հայց. - (զ)տունս այս/(զ)տունս(ս) զայստսիկ, սեռ. - տանս այստքիկ/ տանցս այստցիկ, տր. - տանս այսմիկ/տանս այստցիկ, բաց. - ի տանէս յայսմանէ/ ի տանցս յայստցիկ, յայսցանէ, գործ.- տամբս այստիկ/տամբքս այստքիք, ներգ. - ի տանս յայսմիկ/ի տունս յայստսիկ:

Մ, ղ, ն հոդերի մեջ նախապես ամուր նստած են եղել դիմային և տարածականության իմաստները միասին, այսինքն՝ *դուստրս*՝ ցույց է տվել, որ առարկան խոսողի դիրքում է (ես՝ դուստրս), նաև տարածականորեն մոտ է առաջին դեմքին, ինչպես *դուստրս = դուստրք*, որ ինձ մոտ է տարածականորեն: «Հնագույն հայերենում այս առումները իրարից խիստ հեռացած չէին, ինչպես այդ նկատում ենք նոր հայերենում»¹:

Մ, ղ, ն հոդերի՝ ցուցական իմաստով գործածությունը գրաբարում, ինչպես նշվեց, անմիջականորեն կապվում է *այս, այդ, այն* դերանունների հետ, բայց դրանք բացարձակապես չպիտի նույնացնել: Ցուցական դերանունը բառային միավոր է, որին բնորոշ են քերականական հատկանիշներ՝ թվի, հոլովի կարգը՝ գրաբարում լեզվի զարգացման ընթացքում՝ սկսած միջին հայերենից, *այս, այդ, այն* դերանունները կորցնում են այդ հատկանիշները, բայց *սա, դա, նա* ցուցականները պահպանում են, օրինակ՝ գրաբար՝ *սա, տրա, սմա* և այլն, միջին հայերեն՝ *սա, սարա* և այլն, նոր գրական հայերեն՝ *սա, սրա, սրան* և այլն:

Մ, ղ, ն հոդերը գուրկ են բառային իմաստից. նրանք ունեն գուտ քերականական իմաստներ: Նրանց մեջ ընդհանուրը ցուցականության իմաստն է, որը գրաբարում նաև անպայման ենթադրում է որոշյալության իմաստը: Ցուցական դերանվան հետ գոյականը որոշյալ է գործածվում նաև միջին և նոր գրական հայերեններում, բայց չի բացառվում նաև նշված դերանունների հետ գոյականի անորոշ գործառնություն, օրինակ՝ *Այդ գիշերը դարձավ հիշարժան: Այդ գիշեր ցուրտ էր*:

Լեզվի զարգացման ընթացքում **ս, ղ, ն** հոդերից **ն**-ի մեջ ամրակայվեց որոշյալության իմաստը, իսկ **ս, ղ** հոդերի մեջ՝ ստացականության և դիմորոշության: Նոր գրական հայերենում ցուցականության իմաստով նրանց գործառնություն քիչ և մասնակի դրսևորումներ ունի, օրինակ՝ *Օրերս վերադարձավ գործուղումից*:

«Ստացական իմաստավորումը հասցրեց այն բանին, որ ցուցական առումը իր մայրամուտն ապրեց նաև **ս, ղ** հոդերի մեջ, մանավանդ սա վերաբերում է **դ**-ին»²:

¹ Պետրոսյան Հ., Ակնարկներ պատմական ձևաբանության, Հոդային կարգ, Եր., 1976, էջ 30:

² Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 31-32:

Յուցական առումը՝ իբրև հոդային կարգի ենթակարգ, առարկայի առկայացումն է, որի միջոցով արտահայտվում է՝

1. առարկայի հարաբերակցումը I, II, III դեմքերին,

2. առարկայի տարածական-դիրքային հատկանիշը. *ս* - I դեմքին մոտ, *դ* - II դեմքին մոտ, *ն* - III դեմքին մոտ (նախորդ գլխում բերել ենք վիպասանական հայերենի լավագույն օրինակը, որը գրավոր և բանավոր-խոսակցական լեզվի հատկանիշներն է ներկայացնում. տալ *գպատանիդ* /տալ քեզ մոտ գտնվող պատանուն):

Գրաբարում ցուցական առման արտահայտության ձևաբանական միջոցներ են *ս*, *դ*, *ն* հոդերը, որոնք իբրև այդպիսին մասամբ պահպանվել են նաև միջին հայերենում: Նոր հայերենում այս իմաստով հիմնականում գործածվում է *ս* հոդը, օրինակ՝ «*Սշխարհս* բանտ է, մենք բանտարկյալ (աշխարհս = այս աշխարհը)», «*Մարդս* երկդիմի էակ է՝ լի դրական և բացասական հատկանիշներով»:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ *ս*-ն ցուցական իմաստով առանձին, մասնակի դեպքերում է գործածվում (վերջերս, օրերս, ներկայումս, վերջինս, ամսույս, դարույս և այլն), պիտի համաձայնել այն կարծիքին, որ «Յուցական առումը հայերենում վերացման ուղու վրա գտնվող հոդային ենթակարգ է»¹:

Հոդային կարգի ենթակարգերից դիմորոշ առումը նույնպես արտահայտվում է *ս*, *դ*, *ն* հոդերի միջոցով:

Քերականություններում ամրակայված այն միտքը, որ առկայացման դրսևորումներից ամենանախնականը ցուցական առումն է՝ կոնկրետացնելով հայերենի համար, պիտի նշել, որ դրան զուգահեռ *ս*, *դ*, *ն* հոդերը միաժամանակ արտահայտել են դիմայնության իմաստը: Դիմայնություն ասելով՝ հասկանում ենք խոսողի և խոսակցի հարաբերությունը: Առաջին դեմքի դեպքում ունենք խոսող՝ *ես*՝ *աշակերտս*, երկրորդ դեմքում ունենք խոսակից, *դու*՝ *աշակերտդ*, երրորդ դեմքի դեպքում՝ նրանց բացառում, այսինքն՝ ոչ խոսող, ոչ խոսակից՝ *նա*՝ *աշակերտը*: «Եվ քանի որ երրորդ դեմքը առնչվում է նաև իրի գաղափարի հետ, և որ խոսողության ակտը ընթանում է միայն խոսողի և խոսակցի միջև, ուստի դիմայնության գաղափարն ավելի հստակ է արտահայտված առաջին և երկրորդ դեմքերի մեջ»²:

Պիտի համաձայնել Հ. Պետրոսյանի այն դիտարկմանը, որ դիմայնությունը ավելի լայն արտահայտություն ունի, օրինակ՝ կոչականի միջոցով ևս արտահայտվում է խոսակիցը (Արա՛մ, լսի՛ր, խնդրում եմ): Մյուս կողմից *ս*, *դ*, *ն* հոդերը, լինելով բազմիմաստ, արտահայտում են նաև ստացական և ցուցական իմաստներ, ուստի՝ «Բուն դիմորոշ առումն այն է, երբ *ս*, *դ*, *ն* հոդերի տվյալ կիրառության մեջ գերիշխում է հենց դիմային հարաբերության ասպեկտը՝ մնացածի բացառումով: Բացի որոշյալ առումից, մնացած առումները չեն բա-

¹ Պետրոսյան Հ., Ակնարկներ պատմական ձևաբանության, Հոդային կարգ, էջ 32: Մանրամասն տե՛ս Աղաջանյան Ջ., Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, էջ 228:

² Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 33:

ցառում դիմայնության երանգը, մինչդեռ դիմորոշ առման դեպքում՝ մնացածները համարյա բացառված են»¹:

Մ, դ հոդերը, արտահայտելով առաջին և երկրորդ դեմքի իմաստներ, դրվում են անձ ցույց տվող բառերի վրա, քանի որ խոսողը և խոսակիցը անձեր են, ուստի դիմառնությունը կարելի է կոչել նաև *անձնառություն*։ «այս առումը հայերենում պահպանվել է միայն անձ ցույց տվող բառերի հոդառության մեջ»²:

Հետևաբար **ս, ղ** հոդերը դիմորոշ իմաստով գործածվում են հոլովական հարացույցի բոլոր միավորների հետ:

Գոյականը դիմային իմաստ ձեռք է բերում հոդի միջոցով: Հոդերը, դրվելով գոյականի վրա, դիմորոշ իմաստ տալով գոյականին, ցույց են տալիս խոսող, խոսակից կամ մի երրորդ անձ կամ իր (խսկ առաջին և երկրորդ դեմքերի դեպքում իրը բացառվում է): Դիմորոշ հոդ ունեցող գոյականները սովորաբար գործածվում են համապատասխան դեմք արտահայտող դերանունների հետ. ես՝ աշակերտս, մենք՝ աշակերտներս, դու՝ աշակերտդ, դուք՝ աշակերտներդ: Երրորդ դեմքում արդեն ունենք դիմային թույլ իմաստ (չենք ասում՝ նա՝ աշակերտը, նրանք՝ աշակերտները): Համակարծիք ենք Հ. Պետրոսյանի այն դիտարկմանը, որ ի հակադրություն **ս, ղ** հոդերի՝ **և**-ն աստիճանաբար կորցրել է դիմորոշության իմաստը, և նրա մեջ ամրակայվել է որոշյալության իմաստը. «Դիմորոշ առման այն իմաստը, որ այս կամ այն չափով արտահայտվում էր գրաբարյան **և** հոդի մեջ, նոր հայերենում, կարելի է ասել, չքացել է: **Ն**-ն (և **ք**-ն) որոշյալ առման ցուցիչ է, և միայն այն դեպքում, երբ նա ունի ստացական (կամ ցուցական) արժեք, պահպանում է նաև դիմայնության երանգը»³:

Ստացական առման իմաստով գործառնություն ևս հոդերը ունեն հարաբերակցություն դիմայնության հետ: **Մ, դ**, մասամբ նաև **և** հոդերը ցույց են տալիս պատկանելություն համապատասխան դեմքերի հարաբերակցությամբ, այսինքն՝ *գիրքս* նշանակում է գիրքը, որ պատկանում է առաջին դեմքին, *գիրքդ* նշանակում է գիրքը, որ պատկանում է երկրորդ դեմքին, *գիրքը* նշանակում է գիրքը, որ պատկանում է երրորդ դեմքին, որ ոչ խոսողն է, ոչ խոսակիցը: Հոգնակի թվի դեպքում բառը հոդից առաջ, անկախ միավանկ կամ բազմավանկ լինելուց, ստանում է **ներ** հոգնակերտը՝ գիրք + ներ + ս = մեր գրքերը, գիրքներդ = գիրք + ներ + դ = ձեր գրքերը: Երրորդ դեմքի դեպքում ունենք ստացական իմաստի արտահայտման ոչ թե հոդային ձև (գրքերը կամ գրքները), այլ դերանվան գործառնությո գոյականի հետ՝ նրա (նրանց) գրքերը: Արևմտահայերենում հոգնակի թվում ստացականության իմաստի արտահայտման համար հիմնականում հոդից առաջ գործածվում է *նի* ձևությոը՝ գրքեր + նի + ս = մեր գրքերը:

Այսպիսով, առկայացման կարգի (հոդային կարգ) ենթակարգ հանդիսացող ցուցական, դիմորոշ և ստացական իմաստներով **ս, ղ, և** հոդերի դրսևորումնե-

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

³ Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 37:

ըը որոշակի փոփոխություններ են կրել լեզվի զարգացման ընթացքում. գրաբարում **ս, ղ, ն** հոդերի մեջ ցուցականության իմաստը խիստ արտահայտելի է, ինչը ավելի թուլանում է միջին հայերենում: Դիմայնության իմաստը արտահայտելու համար նրանց գործածությունը գլխավորապես ուղեկցվում է համապատասխան դեմքի դերանվամբ. ես՝ աշակերտս, մենք՝ աշակերտներս, դու՝ աշակերտդ, դուք՝ աշակերտներդ, երրորդ դեմքում *նա (նրանք)* դերանվան գործածությունը պարտադիր չէ՝ աշակերտը (հմմտ նա՝ աշակերտը), աշակերտները (նրանք՝ աշակերտները): Ստացական իմաստը ավելի շատ ամրակայվում է **ս, ղ** հոդերի մեջ: Ցուցականության իմաստը նոր գրական հայերենում **ս** (մասամբ **դ**) հոդի միջոցով ունի բացառիկ դրսևորումներ:

Ս, ղ, ն հոդերի վերաիմաստավորումը Հ. Աճառյանը համարում է օտար ազդեցության արդյունք. «Ստացական հոդը ուրեմն մի տեսակ պահանջ էր դառնում հայերենի մեջ՝ տիրող լեզուների ազդեցությամբ: Եվ որովհետև հայերենի մեջ էլ հաճախ դիմորոշ հոդը ստացական էր հասկացվում, ուստի դիմորոշ հոդը շեղվեց իր գծից և դարձավ ստացական»¹: Ըստ Մ. Ասատրյանի լեզուն ինքն է կարգավորում իր համակարգը, որտեղ յուրաքանչյուր նոր իմաստ կամ ձև, պատճառաբանված անհրաժեշտություն լինելով, պիտի դրսևորվեր լեզվում արդեն եղած միավորների հենքի վրա: Այսպես **ս, ղ, ն** հոդերը, ձևավորված լինելով դերանվանական համարժեք արմատներից և ուղղակիորեն կապված լինելով *այս, այդ, այն* դերանունների հետ, ցուցական իմաստին զուգահեռ ունեցել են դիմային նշանակություն՝ ցույց տալով տարածականորեն առարկայի կամ անձի հարաբերակցությունը խոսողին, խոսակցին կամ նրանց բացառմամբ՝ երրորդ անձի:

Ստացական իմաստով գործածվում են հիմնականում **ս, ղ** հոդերը. միջին հայերենում և արևմտահայերենում նրանք կարող են հանդես գալ դերանվան հետ (իմ գիրքս), իսկ արևելահայերենում նման գործածությունը թույլատրելի չէ (իմ գիրքը կամ գիրքս):

Ինչպես տեսանք, **ս, ղ, ն** հոդերը բազմիմաստ են հայերենի զարգացման բոլոր շրջաններում: Գ. Ջահուկյանը դրանք անվանում է առկայացական հոդեր. նրանք «որոշում են անունների հարաբերությունը դեպի հարաբերակցողները և հարաբերակցումը, ցույց տալիս, որ խոսողը որոշում է այդ անունների նշանակած առարկաները (կամ հենց իրենք անունները) ըստ հաղորդակցողներին ծանոթ լինելու աստիճանի կամ հաղորդակցողների հետ ունեցած առնչության: Նկատի ունենալով, որ այս բոլոր վերջամասնիկներին հատուկ է որոշելու, անմիջականացնելու իմաստը, դրանք կարելի է կոչել առկայացական հոդեր»²:

Ս, ղ, ն հոդերի ցուցական իմաստը դրսևորվել է ըստ եռաշարք դիմային հարաբերակցության, մյուս կողմից՝ գրաբարում հատուկ անունները, բնության եզակի առարկաները որոշիչ հոդ չէին ստանում, այլ հոդառու էին «այնպիսի բառեր, որ կարիք էին գգում կոնկրետ նշանակությամբ գործածվելու ... և

¹ Աճառյան Հ., Լիակատար քերականություն, էջ 986:

² Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, էջ 139:

որոնք հաճախ այդ ֆունկցիայի համար օգտագործում էին ցուցական *այս, այդ, այն* դերանունները: Հետևապես հոդերի կիրառության հիմքում ընկած է եղել ոչ թե ընդհանրապես կոնկրետության կամ հայտնիության հատկանիշը, այլ ցուցական դերանունների իմաստային ու կիրառական նշանակություններին հարաբերակից՝ տարածական-դիրքային հարաբերությամբ կոնկրետացնելու հատկանիշը¹:

Ս, դ, ն հոդերը անմիջականորեն կապվում են *ս, դ, ն* դերանվանական հիմք հանդիսացող միավորների հետ: Ըստ Մեյեի՝ նրանք ձևավորել են նաև *այս, այդ, այն* և *սա, դա, նա* դերանունների *ay*-ի հավելումով՝ սկզբից և վերջից. *so+ay = սա, *do+ay = դա, *no+ay = նա և *ay+so = այս, *ay+do = այդ, *ay+no = այն²:

Հ. Պեդերսընը, Տոմսոնը³ և այլք *ս, դ, ն* հոդերը առաջացած են համարում *այս, այդ, այն* դերանուններից: Հ. Աճառյանը պաշտպանում է Մեյեի մոտեցումը՝ *ն* հոդի առաջացումը կապելով հնիս. no (այն) դերանվան հետ:

Ը-ն ձևավորվել է ավելի ուշ և չի եղել գրաբարում ու միջին հայերենում: Այն ավելի շատ հանդես է եկել բանավոր խոսքում, հետո ամրակայվել գրավորում: Ըստ Ա. Այտընյանի՝ նրա առաջին արտահայտությունը եղել է 13-րդ դարի վիմաքար մի արձանագրության մեջ⁴: *Ը* հոդի ձևավորումը, ինչպես արդեն նշվել է վերը, կապվում է *ն* որոշիչ հոդին նախորդող *ը*-ի (օրինակ՝ ձուկն, երկիրն, ձուկ + ըն, երկիր + ըն) շեշտված արտասանության հետ, որի արդյունքում *ն*-ն ընկել է: Այս իրողությունը ավելի ընդգծված արտահայտություն է ունեցել բարբառներում և բանավոր խոսակցական լեզվում, ապա նոր ամրակայվել նոր գրական հայերենում, քանի որ տեսական գրականությունը չի վկայում *ը*-ի՝ իբրև որոշիչ հոդի, գործառույթի բնագրային որևէ օրինակ մինչև վաղ աշխարհագրագրությունը: *Ն* և *ը* հոդերը որոշյալի իմաստի արտահայտման դիրքային տարբերակներ են:

Ձևավորված լինելով ցուցականության իմաստի հիմքի վրա՝ ժամանակի ընթացքում *ս, դ, ն* հոդերը աստիճանաբար ցուցականության իմաստի արտահայտման գործառույթը չեն ամրակայում, որի վառ ապացույցն է *ս* և *դ* հոդերի՝ այդ իմաստով նոր գրական հայերենում շատ սահմանափակ գործածությունը:

Ս, դ, ն հոդերը գրաբարում ունենին ցուցական իմաստ. ստացական ու դիմորոշ իմաստները նրանցում խիստ արտահայտված չէին: Դիմորոշ իմաստը շատ ավելի ընդգծված է դիմավոր բայերի հետ գործառույթում, որը տարածված իրողություն էր գրաբարում: Օրինակ՝ «Ոչ չարագոյն ևս է քան զոր *գրեցաքդ*, զԱստուած ի խաչ եղեալ ի մարդկանէ քարոզեն, և գնոյն մեռեալ և թաղեալ, և ապա յարուցեալ և վերացեալ յերկինս» (Եղ, 54):

Միջին հայերենում տարածված է *ս* և *դ* հոդերի գործածությունը ստացական իմաստով: Ինչպես՝ «Իսկ երկրորդ **հաստուածիս** դիցուք զլուխ զլուսաւո-

¹ Պեդերսյան Հ., Որոշյալի ու անորոշի, անձի ու իրի առումները հայերենում, էջ 33:
² Meillet A., Esquisse d'une grammaire de l'armenien classique, Venne, 1903, էջ 62:
³ Պեդերսըն Ն., Հին հայերենի ցուցական դերանունները, էջ 57, Томсон А., Историческая грамматика современного армянского языка, г. Тифлис, 1890, էջ 165:
⁴ Տե՛ս Այտընյան Ա., Քննական քերականություն, էջ 168:

րիչս կողմանցն Ադուանից որպէս զագգայնոց և զհաւատակցաց մերոյ» (ԿԳՊՀ, 192): Շատ հաճախ էլ **ս** և **դ** հոդերը կիրառվում են առաջին և երկրորդ դեմքերի դերանունների սեռականի ձևերի հետ՝ ստացականության իմաստը առավել շեշտելու նպատակով: Նման գործառույթը հատկապէս տարածված է չափածո խոսքում:

Առկայացման կարգի ենթակարգերը՝ ցուցական, ստացական և դիմորոշ, որոշյալի իմաստը ներառում են՝ անկախ այն բանից, թե նրանք ցույց են տալիս դիմային, ցուցական, թե ստացական իմաստներ: Արևմտահայերենում ամբակայվում են **ս**, **դ**, **ն** հոդերի այն գործածությունները, որոնք բնորոշ էին միջին հայերենին:

Արևմտահայերենում **ս**, **դ**, **ն** հոդերը ունեն բազմիմաստ գործառույթ: **Ն**-ն ունի որոշյալության իմաստ, որի արտահայտման համար գործածվում է նաև **ը** հոդը: Ստացական իմաստով գործածվում են **ս**, **դ** հոդերը: Օրինակ՝ «Քսան տարուան կարօսու առի, բայց դեռ շան պէս կը գղջամ հին յամառութեանս համար» (ՄԹԹ, 58):

Ստացական հոդ ստանում են բոլոր հոլովները, օրինակ՝ «Դուն անկողինէդ մի՛ շարժիր» (ՄԹԹ, 58), «Ձեռքովս կը զատեմ լաւագոյնները ու կը բերեմ» (ՄԹԹ, 23): Հոգնակի ուղղականի դեպքում հոգնակերտից հետո դրվում է **նի** ձևային իբրև ստացականության հոգնակի թվի արտահայտության միավոր, ինչը չի վերաբերում թեք հոլովներին: Համեմատենք՝ «Տուներնիս հրապարակ տեղ է, շուտով կը հաւաքոին գիւղացիները, կէս ժամէն բան չի մնար» (ՄԹԹ, 66):

Այսպիսով, արևմտահայերենում **ս**, **դ**, մասամբ նաև **ն** հոդերը հիմնականում գործածվում են ստացական իմաստով:

Արևելահայերենում ևս ստացական հոդերն ունեն տարածված գործառույթ: Այս իմաստով գործածվում են **ս**, **դ** հոդերը, իսկ **ն**-ն՝ հազվադեպ: Ցուցական-դիմորոշ իմաստից նաև ստացականի իմաստակիր լինելը բնորոշ է **ս**, **դ** հոդերին: «Երբ դիմորոշները, այսպիսով, այլևս վերացան, երրորդ դեմքի դիմորոշը (ն) քերականաբար պիտի դառնար որոշիչ հոդ և պիտի տարածվեր բոլորի վրա»¹: Այնուամենայնիվ, **ն/ը**-ով ստացական իմաստով կառույցները կա՞ն արդյոք, և կարո՞ղ ենք **ն/ը** հոդերը նաև ստացական համարել: Այս մասին հետաքրքիր դիտարկումներ է կատարում Ս. Աբրահամյանը իր «Արդի հայերենի ստացական հոդերը» հոդվածում: **Ը/ն**-ի ստացական իմաստով գործառույթը հեղինակը բնորոշում է ոչ թե նրան հատուկ իմաստ, այլ **ս**, **դ** հոդերի բացակայություն. «**Ը/ն** հոդն ունեցող բառերի ստացական իմաստը չի բխում հոդից. դա բառի ներքին ստացական իմաստն է, որի երրորդ դեմքի վրա կոնկրետանալը տրամաբանորեն բխում է տեքստից՝ պայմանավորված ոչ թե **ը/ն** հոդի առկայությամբ, այլ **ս**, **դ** հոդերի բացակայությամբ: Ուրեմն՝ անունների հետ գործածվող **ը/ն** հոդը ստացական հոդ չէ, այլ որոշիչ հոդ է»²:

¹ Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 986:

² Աբրահամյան Ս., Արդի հայերենի ստացական հոդերը, Գիտական աշխատություններ, հ. 42, Եր., ԵՊՀ հրատ., 1954, էջ 169:

Ներքին ստացական իմաստ են արտահայտում մարմնի մասերի անունները (ձեռք, ոտք, գլուխ և այլն), եթե դրանք կոնկրետ իմաստով են գործածվում: Համեմատենք՝ *Նա ձեռքը կոտրեց և ձեռքը կազմված է երկու մասից՝ բազուկ և դաստակ*¹: Ըստ հեղինակի՝ առաջին օրինակում ևս **ք**-ն որոշիչ հոդ է, և ստացական իմաստը (Նա (իր) ձեռքը կոտրեց) պայմանավորված է *ձեռք* բառի բառիմաստով: Ստացական իմաստ են արտահայտում նաև *քույր, եղբայր, մայր, հայր, ամուսին, կին* բառերը, որոնք ցույց են տալիս երկկողմանի հարաբերություն, այսինքն՝ օրինակ՝ *եղբայրը* կոնկրետ պատկանելություն ունի: *Եղբայրս ծառայում է բանակում: Եղբայրդ ծառայում է բանակում: Եղբայրը ծառայում է բանակում*՝ նախադասություններում **ս-իմ, դ-քո, ք-նրա** հոդերի՝ ստացական իմաստով գործառույթը երրորդ դեմքի դեպքում պայմանավորում է ոչ թե հոդը, այլ բառիմաստը, անշուշտ *եղբայր* բառի կոնկրետ գործառույթի դեպքում, իսկ ընդհանրական իմաստով գործածության ժամանակ (օրինակ՝ *Եղբայրը միշտ քրոջ թիկունքն է՝ ամուր և հգոր*) ունենք որոշիչ հոդ:

Ըստ Ս. Աբրահամյանի՝ **ը/ն/-**ն ստացական իմաստի կրող է դառնում **ս** և **դ** հոդերի բացառման հակադրությամբ (օրինակ՝ *հետս=ինձ հետ, հետդ=քեզ հետ, հետը=նրա հետ*). այսինքն՝ առաջին և երկրորդ դեմքերի բացառումը վկայում է երրորդ դեմքի առկայություն:

Երրորդ կարևոր փաստն այն է, որ **ս, դ** հոդեր կարող են ստանալ հոլովական հարացույցի բոլոր միավորները (*միտքս, մտքիս, մտքիցս, մտքովս, մտքումս*), իսկ **ը/ն** գրական լեզվում դրվում է միայն ուղղական և սեռական - տրական հոլովների վրա:

Ս, դ, ն հոդերի՝ ցանկացած իմաստով գործառույթի դեպքում առարկան կամ անձը տարրորոշված է, որոշակի: Նրանք, ծագած լինելով ցուցական **ս, դ, ն** դերանվանական միավորներից, սկզբնապես ամրակայված են եղել ցուցականության իմաստին, ինչը նոր գրական հայերենի արդի փուլում սահմանափակվում է որոշ բառերի շրջանակներում, և պիտի համաձայնել այն մոտեցմանը, որ այս իմաստով **ս** հոդի գործածությունը գնում է դեպի վերացում:

Գրաբարում **ս, դ, ն** հոդերի մեջ գերակա է ցուցականության իմաստը, միջին հայերենում այն ավելի թուլանում է՝ պայմանավորված որոշիչ դերում *այս, այդ, այն* ցուցական դերանունների՝ ուղղական հոլովով նախադաս գործառույթով, երբ այլևս կարիք չկար հոլովով և հոդով որոշյալի հետ որոշիչ համաձայնեցման:

Հոդերն առանձին դրսևորումներ ունեն նաև ոճական առումով: «Որովհետև կոչականը ցույց է տալիս առարկան, որին դիմում է խոսողը, ուրեմն և ունի երկրորդ դեմքի իմաստ, այդ պատճառով ոճավորված տեքստերում գրաբարյան ձևով նրա որոշիչը կարող է ստանալ երկրորդ դեմքի **դ** հոդը, ինչպես՝ «Օ՛, բյուրաստինք...», *օ՛, ոսկեմա՛յրդ Անահիտ*» (ՆՁԱԳ, 129), «Մի՞ թե արդար է այս, ո՛վ *անաչառդ* պարզևիչ» (ՆՁԱԳ, 130)»²: Նույն ձևով ունենք *Ձերդ մեծություն, Ձերդ պայծառափայլություն* ամրակայված կառույցները՝ իբրև պաշտո-

¹ Օրինակները բերվում են ըստ հոդվածի:

² **Ասատրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 224:

նական ոճի նմուշներ: Հետաքրքիր օրինակ է *Նվաստ* բառի հետ դիմորոշ հոդի գործածությունը համաձայնության առումով, ինչպես՝ *Նվաստս միշտ հետնել է Ձեր օրինակին* (առաջին դեմքի դիմորոշ հոդով ենթակայի հետ դրվում է երրորդ դեմքի ստորոգյալ): Կամ՝ *Մեղավորս եղել է Ձեր դուռը*: Տվե՛ք թողություն, խնդրում եմ:

Այսպիսով, *ս, դ, ն* հոդերը, լինելով բազմիմաստ, հոդային կարգի ենթակարգերի ցուցական, ստացական, դիմորոշ իմաստների իրենց դրսևորումներում միշտ արտահայտում են նաև որոշյալության իմաստ. նրանք տարրորոշում են առարկան կամ անձը՝ ըստ դեմքի, ըստ պատկանելության՝ այս դեպքում միաժամանակ որոշյալ դարձնելով տվյալ առարկան կամ անձը: *Ս, դ, ն* հոդերից *ն*-ն (դիրքային տարբերակը *ը*) առանձնանում է իբրև որոշյալ առման արտահայտման ձևաբանական միջոց՝ երկրորդական ձևույթ, *ս, դ* (մասամբ՝ *ն*) հոդերը՝ իբրև ստացական, դիմորոշ, *ս*-ն՝ նաև ցուցական իմաստների արտահայտման ձևույթներ, սակայն քանի որ նրանք իրենց ցանկացած գործառնություն առարկան կամ անձը տարրորոշում են, ուստի նաև առկայացման կարգի արտահայտման կրողներ են:

ИРИНА МЕЛКОНЯН

Ереванский государственный университет,
кафедры диаспорологии,
соискатель

НЕКОТОРЫЕ СООБРАЖЕНИЯ ОБ АРТИКЛЯХ «У, Д, Ё»

Грамматическая категория определенности и неопределенности типична для слов, имеющих смысл определенности, поэтому она является грамматической чертой существительного. Морфемы или артикли «u, d, n» являются средством проявления категории определенности и неопределенности, грамматическими частицами. Артикли не имеют словарного смысла, они имеют только грамматический смысл. Артикли «u, d, n» в процессе развития языка имели разно практическо-смысловое определение.

IRINA MELKONYAN

YSU, Chair of Diaspora Studies,
Applicant

SEVERAL DISCOURSES ABOUT “S”, “D”, “N” ARTICLES

Grammatical order of presentation is typical for words with an idea of substantivity. So it is a grammatical characteristic of the noun. “S”, “d”, “n” articles are the means of expressions of grammatical forms or grammatical particles. The Articles are free from word meanings they have only grammatical meanings. In the language development process “s”, “d”, “n” articles have had different semantic and functional description.

ՌԱՅԻԿ ՊԼՈՒՋՅԱՆ

Վանաձորի Վ. Տերյանի անվ. թիվ 5 ավագ դպրոցի,

**ԲԱՌԱՊԱՇՇԱՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՃԻՇՏ ԱՐՏԱՄԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՐԼԹԱՑՈՒՄ**

Հողվածում քննարկվում են օտար լեզվի բառապաշարի ուսուցման, հարստացման, ինչպես նաև բառերի ճիշտ արտասանության կարևորության գիտակցումը և համապատասխանմեթոդների կիրառումը, որոնք կնպաստեն աշակերտների բառապաշարի հարստացմանը և օտար լեզվի յուրացմանը:

Բանալի բառեր՝ կրթություն, ուսուցիչ, աշակերտ, օտար լեզու, բառապաշար, ճիշտ արտասանություն:

Ժամանակակից հասարակության մեջ, մարդկային գործունեության բազմաբնույթ ոլորտներում, ուրույն տեղ է զբաղեցնում կրթությունը, որի ուղղվածությունից ու արդյունավետությունից են կախված հասարակության զարգացման հեռանկարները:

Գիտության զարգացման արդի պայմաններում վերանայվում ու կատարելագործվում են կրթության բովանդակությունը, ուսուցման կազմակերպման ձևերը, իսկ դրանց արդյունքում անհրաժեշտաբար վերանայվում են նաև ուսումնական մեթոդները, ծրագրերն ու դասագրքերը: Ուսուցիչն այսօր նոր մարտահրավերների առջև է կանգնած. կրթական ոլորտի շարունակական բարեփոխումները, ժամանակակից աշակերտի մտածելակերպն ու պահանջները և շատ այլ գործոններ ուսուցչին ստիպում են վերանայել իր աշխատատեղը, մեթոդները, անձնային որակները, մասնագիտական պատրաստվածությունը, հրաժարումը նախկին կարծրատիպերից, այլապես ձախողումն անխուսափելի կլինի: Այս ամենից բխում է, որ կրթություն իրականացնողների վրա մեծ պարտականություն է դրված. նրանք պետք է կարողանան նպատակային կազմակերպել ուսումնադաստիարակչական գործընթացը և նպաստել դրա արդյունավետության բարձրացմանը, որը երիտասարդ սերնդին հնարավորություն կտա ինքնուրույն կյանք մտնելու և ինքնահաստատվելու:

Հողվածի նպատակն է պարզել.

ա) ուսուցչի հոգեբանա-մանկավարժական առանձնահատկությունները,

բ) օտար լեզվի բառապաշարի բավարար առկայությունը աշակերտների մոտ,

գ) ուսուցչի դերն ու նշանակությունը բառապաշարի հարստացման գործընթացում:

Ուսուցիչն իր աշխատանքի ընթացքում ակտիվ փոխներգործության մեջ է աշակերտների հետ, ուղղակի և անուղղակի կերպով ներգործում է նրանց վրա, սեր է արթնացնում ուսման, տարբեր առարկաների, մասնավորապես՝ օտար լեզվի, ինչպես նաև ամեն մի նորի նկատմամբ: Օտար լեզվի յուրացումը միշտ չէ, որ հեշտ է տրվում աշակերտներին: Ուսուցչից մեծ ջանքեր, համբերություն, առարկայի իմացություն և նվիրվածություն է պահանջվում: Նա պետք է հետաքրքրություն առաջացնի օտար լեզվի նկատմամբ, բառապաշարը հարստացնելու տարբեր հնարներ ու միջոցներ կիրառի, զուգորդություններ ստեղծի, բացատրի, թե ինչ է իրենից ներկայացնում լեզուն: Լեզուն մարդ-

կանց շփման, հաղորդակցման միջոց է: Այն հնարավորություն է տալիս մտքեր, տեսակետներ, գիտելիքներ հաղորդել միմյանց և հասնել փոխըմբռնման, ազդել միմյանց վարքի ու մտածելակերպի, հույզերի ու զգացմունքների վրա: Լեզուն նաև անձի առանձնահատկությունն արտացոլելու միջոց է: Ուսուցանել որևէ օտար լեզու (տվյալ դեպքում՝ անգլերեն), նշանակում է սովորողի մեջ զարգացնել խոսքային տարբեր ունակություններ՝ խոսելու, լսելու, կարդալու, գրելու: Սակայն կան իրական դժվարություններ, օրինակ հաճախ է պատահում, որ գրավոր խոսքը հասկացողը և տեքստը թարգմանողը դժվարանում է խոսելու մեջ, այսինքն՝ չունի ակտիվ բառապաշար: Սովորողների խոսքի անկատարության գլխավոր պատճառը «ակտիվ և պասիվ բառապաշարի միջև եղած զգալի անհամապատասխանությունն է» [4, էջ 41]:

Բառապաշարը բառերի և բառիմաստի մասին ունեցած գիտելիքն է: Բառերը լինում են բանավոր և գրավոր, ինչպես խոսքն է: Բանավոր բառապաշարն ընդգրկում է այն բառերը, որոնք մենք հիշում և օգտագործում ենք լսելիս և խոսելիս: Գրավոր բառապաշարը այն բառերի ամբողջությունն է, որոնք մենք հիշում և օգտագործում ենք կարդալիս և գրելիս: Բառապաշարը լինում է 2 տեսակ՝

- ա/ դյուրըմբռնվող, ընկալելի (receptive) և
- բ/ գործուն, արդյունավետ (productive):

Առաջին տեսակի բառերը նրանք են, որոնք մենք հիշում ենք լսելիս և տեսնելիս, իսկ երկրորդ տեսակն ընդգրկում է այն բառախումբը, որը մենք օգտագործում ենք խոսելիս կամ գրելիս: Ընդ որում, ռեցեպտիվ բառապաշարն ավելի մեծ ու ընդգրկուն է մյուսից և կարող է շատ բառեր ընդգրկել, որոնք տարբերիմաստներ ունեն և, նույնիսկ, եթե չենք կարող հիշել դրանց բոլոր բացատրություններն ու իմաստները, կամ որոնք մենք չենք օգտագործում խոսելիս կամ գրելիս: Կառուցողական բառապաշարը հզոր միջոց է կյանքի ու կարիերայի համար նավելի ընդգրկուն բառապաշար կառուցելիս հաճելի ու օգտակար միջոց կարող է լինել ժամանակի ու ջանքերի ծախսման առումով: Օրական մոտ 15 բառերի կենտրոնացված ուսումնասիրությունը կարող է բառապաշարի արագ բարելավման հանգեցնել, որն էլ իր հերթին կարող է մեծացնել հաղորդակցման հնարավորությունները ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր խոսքում: Դա դրսևորվում է դպրոցում, աշխատանքում և կյանքի բոլոր ոլորտներում: Այն օգնում է ավելի արդյունավետ դարձնել դասերը, սպրել ավելի ինքնաբավ կյանքով: Իհարկե, գիտենք շատ բառեր, որոնցից շատերը սովորել ենք նաև պատահաբար՝ կարդալիս, ֆիլմերից, գրուցելիս, այնուամենայնիվ բառերի արագ, արդյունավետ յուրացումը պահանջում է ավելի հետևողական, քրտնաջան և համակարգված աշխատանք: Նույնիսկ մաթեմատիկական հաշվարկով կարելի է իմանալ, թե որքանով կարելի է ավելացնել բառապաշարը մեկ, երկու տարում, օրական մեկ-երկու և ավելի բառեր սովորելու դեպքում: Ուրեմն բառապաշարի ուսուցումը լեզվի ընդհանուր ուսուցման կարևոր օղակն է: Մյուս կողմից, կարևոր է նաև, թե ինչ բառեր կամ դարձվածքներ պետք է ընտրվեն ուսուցման համար:

Ակնհայտ է, որ բառերի թիվը պետք է սահմանափակ լինի այն պատճառով, որ պետք է հիմնվի ծրագրային պահանջների վրա: Օտար լեզուների ուսուցման ցանկացած դասընթաց հիմնված է աշակերտների 4 հմտությունների զարգացման վրա. լսել, խոսել, ընթերցել, գրել, իսկ վերոհիշյալ 4 հմտություններից յուրաքանչյուրը հիմնվում է լեզվի ուսուցման 3 բաղադրիչ մասերի վրա. արտասանություն, բառապաշար, քերականություն: Ուրեմն, բառապաշարը պետք է ընտրվի լեզվական նյութին համապատասխան: Ընտրված բառերը պետք է լինեն ամենահաճախակի օգտագործվող, հեշտությամբ համադրվող (nice book, room, film), ոճական առումով անսահմանափակ (բանավոր, գրավոր), ընդգրկված լինեն ծրագրային նյութերի ցանկի մեջ, արժեքավոր լինեն բառակազմության տեսանկյունից (use, used, useful, useless): Բառապաշարի ուսուցման հիմնական նպատակը իմաստի ընկալումը, նմանեցումն է, բառի ձևի ու գործածության նմանեցումն է բանավոր կամ գրավոր խոսքին: Մարդիկ կարող են ունենալ շատ տարբեր մոտեցումներ զանազան հարցերի վերաբերյալ, բայց առանց լայն ու ճիշտ ընտրված բառապաշարի չեն կարող արտահայտել իրենց մտքերը, չեն կարող բացահայտել իրենց ընդունակությունները: Բառապաշարը բնական կարողություն չէ, այն ձեռք է բերվում աշխատասիրության շնորհիվ: Ամենահաջող ընտրված բառապաշարի կարևոր գործոնը հասկացումն է հիմնավորումը, մոտիվի ստեղծումը: Շատ դժվար կլինի բազմաթիվ բառերի ուսուցումը առանց հասկացման և առանց հիմնավորվածության, այսինքն, թե ինչու պետք է դրանք սովորել:

Ուսումնասիրվող նյութի սիստեմատիկ կապակցումը անցյալում յուրացրած գիտելիքների հետ ունի երկակի նշանակություն: Դա նպաստում է անցածի ամրապնդմանը, կանխում է մոռացումը, ակտիվացնում սովորողի հիշողությունը, մտածողությունը [1, էջ 215]: Օտար լեզվի յուրացումը նպաստում է աշակերտների լեզվական կարողությունների զարգացմանը, նրանց ճանաչողական ոլորտի ընդլայնմանը, համաշխարհային դասական ստեղծագործությունների իմացությանը և դրանք ըստ արժանիքի գնահատելուն, հարստացնում է կենսափորձը և կամուրջ գցում տարբեր մշակույթների միջև, նվազեցնելով տարածական և լեզվական սահմանափակումները: Այդ ամենը իրականանում է լեզվին տիրապետելու, բառապաշարը հարստացնելու միջոցով:

Հայտնի են 4 հիմնական քայլեր բառապաշարի ավելի լավ յուրացման համար.

1. ծանոթ լինել բառերին,
2. կարողանալ կարդալ դրանք,
3. բառարան օգտագործել,
4. կանոնավոր կերպով կրկնել դրանք:

Ընդամիս, որքան ավելի է մեծանում յուրացված բառերի քանակը, այնքան ավելի է հեշտանում դրանք արդեն իմացած բառերի հետ կապեր, զուդորդություններ ստեղծելը, բնականաբար հեշտանում է դրանք հիշելը և կիրառելը: Բայց միայն շատ կարդալը բավական չէ բառապաշարի ավելացման. հարստացման համար, հարկավոր է նաև մանրագնին ուսումնասիրություն, համեմատություն:

Բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների համար դժվար չէ հաղորդակցվելը անկախ լեզվից (մայրենի կամ օտար), այնուամենայնիվ, նրանց նույնպես հարկավոր է ընդարձակել իրենց բառապաշարը ավելի արտահայտիչ խոսք կառուցելու համար: Ավելին, որոշ լեզվաբաններ պնդում են, որ բառապաշարի ուսուցումը պետք է լինի լեզվի ուսուցման կարևորագույն մասը, քանի որ լեզուն բաղկացած է քերականական բառապաշարից, և ոչ բառապաշարի վրա հիմնված քերականությունից:

Լեզվի բառաֆոնդի մեծ մասը բարդ բառեր են, որոնք կազմված են պարզ արմատներից, նախածանցներից ու վերջածանցներից, որոնք ունեն իրենց սեփական բացատրությունները և երբ դրանք ծանոթ են լինում աշակերտին, կարող են հասկանալի լինել առանց բացատրության: Իսկ այդ պրոցեսը կարող է գործել լեզվի ուսուցման բոլոր 4 բաղկացուցիչ մասերի գործընթացներում:

Տեքստը պատշաճ արագությամբ և ճիշտ կարդալու համար անհրաժեշտ է բառապաշարի բավարար քանակ: Այդ քանակը ապահովելու համար հարկավոր է կուտ հիշողություն, որը պահանջում է բառերի, նախ կարճաժամկետ հիշողություն, որը հետագայում վերածվում է երկարատև հիշողության: Իսկ ինչ է հիշողությունը:

Հիշողությունը անհատի կողմից իր փորձը, ընկալված ինֆորմացիան ուղեղում պահելու և հետագայում վերարտադրելու ընդունակությունն է: Հիշողությունը անհատական կենսափորձի ստեղծման ու պահպանման հիմքն է [2, էջ121]:

Հիշողությունը ապահովում է մարդու գիտելիքների ձեռքբերման, պահպանման, վերարտադրման, ինչպես նաև «Ես»-ի ամբողջականության պահպանման գործը: Այդ առթիվ ռուս հայտնի ֆիզիոլոգ Ի. Մեչենովը նշել է, որ եթե մարդը հիշողություն չունենար, ապա միշտ կմնար նորածին մանկան վիճակում [3 , էջ178]:

Այդ պրոցեսը անվերահսկելի է: Ուղղակի հարկավոր է, որ կարճաժամկետ հիշողությամբ հանձնված բառերի քանակը չզերագանցի յոթը,որովհետև ավելիի դեպքում, պրոցեսը կարող է խաթարվել: Իսկ երկարաժամկետ հիշողության բառերի քանակը կարող է անսահման լինել, քանի որ իմաստով միմյանց կապակցված բառերը երկար են մնում հիշողության մեջ:

Նոր բառեր սովորեցնելիս կարևոր է միասնական մոտեցումը

ա) թարգմանությունը միանգամից չասելը, կոնտեքստի վրա հիմնվելը, բառարանում փնտրելը, մանավանդ՝ վերացական հասկացությունների դեպքում,

բ) կարող է ընդգրկել հարցեր տալը, օրինակներ բերելը, որոնք աշակերտին մղում են բառերի թարգմանությանը,

գ) կոնտեքստի վերընթերցումը, որի միջոցով կարելի է հանգել որևէ հուշող իմաստի, որը և հնարավորություն կտա կռահել բառի իմաստը,

դ) կարելի է նույնիսկ բառը ենթարկել քերականական, բառակազմական վերլուծությունների, միայն թե ստեղծվի որևէ կապ բառի ձևի և իմաստի միջև, միայն այդ դեպքում կարող է բառը երկար մնալ աշակերտի հիշողության մեջ:

Բառն ակտիվ բառապաշարում պահելը անհատական պրոցես է և կախված է անձի անհատականությունից: Ուրեմն, կարևորություն է ստանում նաև ուսուցչի կողմից աշակերտին ճանաչելը, նրա անհատական առանձնահատկությունների իմացությունը:

Արտասանության ուսուցումը նույնպես օտար լեզվի ուսուցման անբաժանելի մասն է, քանի որ անմիջականորեն ազդում է սովորողի հաղորդակցման կարողության վրա: Քերականական-թարգմանական մեթոդի օգտագործման ժամանակ արտասանության ուսուցումը դիտվում էր որպես լեզվի ուսուցման «Մոխրոտիկը», համարելով այն ոչ կարևոր ու երկրորդական: Բայց առանց ճիշտ արտասանված բառի ու, առավել ևս, բառակապակցության շղթայի, հաջողակ երկխոսություն չի լինի, ավելին, սխալ արտասանության դեպքում խոսքը կարող է ապակողմնորոշիչ հետևանքներ ունենալ ունկնդրի վրա, մանավանդ բարձր մակարդակի միջազգային քաղաքականության ժամանակ: Ներկայումս համարժեք արտասանության ուսուցումը ներառված է և կազմում է լեզվի ուսուցման 4 բաղկացուցիչ մասերից մեկը:

Կան դեպքեր, երբ որքան էլ որ ուսուցանողը պարզորոշ, հստակ արտասանում է բառը, սովորողները չեն կարողանում հետևել նրա օրինակին, նմանակումները չեն համապատասխանում բնօրինակին:

Դրա պատճառը տվյալ հնչյունի բացակայությունն է սովորողի մայրենի լեզվում, շեշտը և ինտոնացիան նմանեցվում են մայրենի լեզվին, ինչպես նաև այն, որ անզլերենի հնչյունները անձանոթ են սովորողին: Բացի այդ, հարկավոր է հաշվի առնել արտահայտության զգացական ներգործության հետևանքը, որը կարող է տարբեր լինել տարբեր տոների ընտրության դեպքում: Չէ՞ որ իջնող տոնը ունենում ենք հաստատական նախադասությունում, **Wh** հարցերի դեպքում, անջատական հարցերի դեպքում, կարճ նախադասությունների, բազմակի լրացումների դեպքում: Բաղադրյալ ձայներանգը ունենում են այնուչ հարցերը, նույն անջատական հարցերը, բայց երբ համոզվածություն չեն արտահայտում, նույն **Wh** հարցերը, երբ ստույգ պատասխան են պահանջում և այլն:

Ելնելով վերոհիշյալից ուսուցիչը պետք է հետևի արտասանության ուսուցման որոշ սկզբունքների, որոնք կօգնեն նրան ճիշտ ուղղությամբ տանել գործընթացը.

ա) հարկավոր է ցույց տալ, թե ինչպես է տվյալ հնչյունը ֆիզիկապես արտասանվում,

բ) հարկավոր է, նման դեպքերում, ձայնագրել սովորողի սխալ արտասանված հնչյունը և թույլ տալ նրան լսել ինքն իրեն,

գ) ուսուցիչն ինքը պետք է համոզված լինի իր ճիշտ արտասանության մեջ,

դ) ուսուցիչը դասարանում պետք է ստեղծի փոխվստահության, աջակցելու տրամադրվածության մթնոլորտ,

ե) նա պետք է արտասանություն ուսուցանի պարբերաբար, աշակերտին անընդհատ մղելով ճիշտ արտասանության, հեշտից դժվարը սկզբունքով:

Այս ամենի իմացությունը և կիրառումը կօգնի աշակերտին հասկանալու և հարստացնելու բառապաշարը, կյանքում, միջանձնային հարաբերություններում, շփումներում լինել ավելի ազատ, անկախ, տեղեկացված և ինքնաբավ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ա. Բալյան**, Մանկավարժական հոգեբանության հարցեր, Լույս, Երևան, 1983, 456 էջ
2. **Ա. Նալչաջյան**, Հոգեբանական բառարան, 239 էջ
3. **Ա. Նալչաջյան**, Հոգեբանության հիմունքներ, Հոգեբան հրատ., Ե., 1997, 648 էջ
4. **Клычникова З. И.** Психологические особенности обучения чтению на иностранном языке. -М. Просвещение, 1973.

РАФИК ПЛУЗЯН

Ванадзорская старшая школа №5 им.В. Теряна,
специалист по английскому языку

ВАЖНОСТЬ ОСВОЕНИЯ СЛОВАРНОГО ЗАПАСА И ПРАВИЛЬНОЕ ПРОИЗНОШЕНИЕ В ПРОЦЕССЕ ИЗУЧЕНИЯ ИНОСТРАННОГО ЯЗЫКА

В статье обсуждается процесс изучения словарного запаса иностранного языка, а так же осознание важности правильного произношения, использование соответствующих методов, которые помогут обогатить словарный запас и освоить иностранный язык.

RAFIK PLUZYAN

Vanadzor high school N5 named after V. Teryan,
English Language Specialist

THE IMPORTANCE OF TEACHING VOCABULARY AND ITS CORRECT PRONUNCIATION

The article discusses the enrichment of the vocabulary of a foreign language, as well as the awareness of the importance of correct pronunciation, the use of appropriate methods that will help enrich the vocabulary and learn a foreign language.

ՀԱՐՄԻ ԱԿՐՅԱՆ

НАН РА, Институт литературы им. М. Абеяна,
старший научный сотрудник отдела “Зарубежной и сопоставительной
литературы”, кандидат филологических наук, доцент

ПОЭТИЧЕСКАЯ ИНДИВИДУАЛЬНОСТЬ СЕРГЕЯ ЕСЕНИНА В ПЕРЕВОДАХ ВААГНА ДАВТЯНА

В статье представлены переводы В. Давтяна из лирики С. Есенина, свидетельствующие о переводческом мастерстве армянского поэта. Для выявления качества переводов в статье дан сопоставительный анализ перевода и подлинника, с учетом основных требований теории перевода.

Ключевые слова: лирика, перевод, подлинник, рифма, лирический герой, эмоция, адекватность, литературные связи.

Художественный перевод на протяжении веков был одной из важнейших форм литературных взаимосвязей. Благодаря ему происходит сближение и взаимообогащение культур разных народов. С конца XIX века армянские поэты - переводчики проявляли большой интерес к русской культуре, литературе, которая не только вдохновила их на прекрасные переводы, но и имела большое влияние на формирование их мировоззрения, нравственные и эстетические ценности.

Большую лепту в развитии русско - армянских литературных связей внесли Ов. Туманян, Е. Чаренц, В. Терьян, П. Севак, В. Давтян, С. Капутикян, А. Сагиян, Г. Эмин и многие другие.

В начале XX века поэзия С. Есенина, наряду с лирикой других выдающихся русских поэтов, вызвала большой переводческий интерес у таких армянских поэтов - переводчиков, как Е. Чаренц, В. Терьян, Г. Маари, которые не только стали переводить его стихотворения на армянский язык, но и оказались под большим воздействием его лирики, на что в своих статьях указывали и армянские, и русские литературоведы.

Со второй половины XX столетия поэзия русского лирика объединила вокруг себя таких талантливых поэтов, как А. Сагиян, П. Севак, Г. Эмин, В. Давтян, Г. Тамразян и другие, которым удалось в своих переводах отразить поэтическую индивидуальность русского поэта.

Изучение стихотворений С. Есенина в армянских переводах свидетельствует, что большая заслуга в популяризации поэзии русского поэта в Армении принадлежит В. Давтяну.

Ваагн Давтян (1922 - 1996) - известный поэт, переводчик, заслуженный деятель культуры.

Лучшими поэтическими сборниками Давтяна являются *“Первая любовь”* (1947) [1], *“Утро мира”* (1950) [2], *“Дорога через сердце”* (1953), [3], *“Лирика”* (1956) [4], *“Свет как хлеб”* (1981) [5], *“Сказание о любви”* (1984) [6] и другие.

Чувство к Родине, глубокая народность связали творчество Давтяна с лирикой С. Есенина, которая была близка армянскому поэту своей сердечной искренностью, гуманизмом, одухотворенностью.

Признавая высшее дарование Есенина, Давтян писал: «Поэзия тогда глубоко влиятельна и действенна, когда она по-человечески искренняя и честная, когда поэт всецело открывает свою душу перед читателем. Таким исключительно искренним и непосредственным поэтом является Сергей Есенин, а его творчество – самая трогательная, самобытная, богатая национальными оттенками страница русской поэзии.

В идиллически-прозрачных строках Есенина, в похожих на мелодии вольных песнях живет и дышит великая душа, полная любви к родному краю, к жизни, к человеку». [7, с.9].

Из лирики Есенина Давтяну принадлежат свыше пятидесяти переводов стихотворений, написанных поэтом в 1910 - 1925 годы. Среди них выделим такие, как «Сыплет черемуха снегом...», «Я снова здесь, в семье родной...», «Устал я жить в родном краю», «Разбуди меня завтра рано...», «Я по первому снегу бреду...», «Все живое особой метой...», «Эта улица мне знакома...», «Письмо матери», «Шаганэ ты моя, Шаганэ!..», «Собаке Качалова» и многие другие, где армянскому поэту удалось воссоздать их аналоги на армянском языке.

Выделяя поэтическую индивидуальность Есенина, Давтян писал: «Его поэзия исходит из глубоких и прозрачных народных истоков и доходит до классической ясности. Он русский национальный поэт, один из выразителей народного духа». [7, с.4].

Переводы Давтяна всецело отразили фольклорные мотивы поэзии Есенина, его национальную самобытность, безграничную любовь поэта к своей Родине, ее народу.

С утонченным лиризмом Давтян воссоздал на армянском языке те стихотворения Есенина, где наблюдается высшая гармония между поэтом и природой, отразившая его мироощущение, образное восприятие мира. Свидетельством тому может послужить стихотворение «Сыплет черемуха снегом...», где Давтяну удалось передать не только образ, но и свежий запах весны, которым пронизано все стихотворение.

В переводе Давтян передал и душевный подъем, эмоциональное состояние поэта, которые созвучны подлиннику. Перевод не уступает подлиннику также своим лирическим звучанием:

Подлинник:

Сыплет черемуха снегом,
Зелень в цвету и росе.
В поле, склоняясь к побегам,
Ходят грачи в полосе.

Никнут шелковые травы,
Пахнет смолистой сосной.
Ой вы, луга и дубравы, -
Я одурманен весной...

Перевод:

Թխենին ձյուն է թափում լեռին,
Մեզն ու ծաղկունքն են ցողից փայլում,
Թեքվելով կանաչ ընձյուղներին
Մերմնագրավներն են դաշտով քայլում:

Մետաքսե խոտն է փոփում գետնին,
Սոճուց բուրմունք է գալիս խեժի,
Օ՛յ, թափուտներ ու մարգագետին,
Ես թափառում եմ, նման գժի...

[8, с.79][7, с.21]

Сравнивая перевод с подлинником, видно, что он с предельной точностью передает его смысл и форму и также состоит из четырех столбцов с четырехстишиями, с перекрестной рифмовкой **абаб** и с точной рифмовкой в окончании стихов. **Сравним:**

Подлинник: *снегом - побегам, росе – полосе, травы – дубравы и т. д.*

Перевод: լեռին -ընձյուղներին, փայլում – քայլում, գետնին - մար-
զագետնին, խեժի - զժի և др.

В переводе Давтяну удалось воссоздать и разнообразие метафор, олицетворения подлинника, передающие красоту, дыхание, свежесть русской природы. Например:

Подлинник: Никнут шелковые травы, / Пахнет смолистой сосной и др.

Перевод: Մետաքսե խոտն է փոփում գետնին, / Սոճուց բուրմունք է գալիս խեժի և др.

Перевод, как и подлинник, имеет яркую интонационную окраску, где верно воссозданы обращения, логические ударения стихотворения:

*Сыпь ты, черемуха, снегом,
Пойте вы, птицы, в лесу.*

*Թխենի՛, թափի՛ ը դու ձյունը քո,
Երգե՛ք ք անտառում, հալքերի՛ս հեզ...*

Следуя подлиннику, переводчик не упустил в переводе и междометие **ой**, подчеркивающее эмоциональное состояние поэта, его радостное ощущение от увиденного, что, бесспорно, также соответствует поэтическому стилю русского поэта:

Ой вы, луга и дубравы / Օ՛յ, թափուտներ ու մարզագետնին

Перевод всецело передает настроение поэта, его личное отношение к пробуждению природы, которым пронизано все стихотворение:

*Радуют тайные вести,
Светятся в душу мою...*

*Թարուն լուրերն ինձ ուրախացնում,
Լուսափորփում են իմ հոգու մեջ...*

На основании анализа приведенных примеров можно заключить, что перевод является аналогом подлинника, где мысли и чувства Есенина на армянском языке зазвучали с новой впечатляющей силой.

Указывая на роль и значение переводческой деятельности, П. Топер отмечал, что литература – единственный вид искусства, требующий перевода, она национально ограничена в прямом этимологическом значении этого слова. Живопись или скульптура, привезенная в другую страну, доступна без посредника, то же и хореографическое искусство, музыка, театр. Книга же в другой стране остается “книгой за семью печатями”, которую все же необходимо перевести и довести до читателя [9, с.208].

С глубоким экспрессивным чувством Давтяну удалось перевести на армянский язык стихотворения Есенина о животных, отразившие лучшие качества поэта, его человечность, доброту, чуткость, пронизательность, идущие из глубин широкой русской души.

Ярким примером тому может послужить перевод стихотворения «Собаке Качалова», которое в переводе на армянский язык является эквивалентом подлинника. Для сопоставления подлинника с переводом представим фрагмент стихотворения:

Подлинник:

Перевод:

Дай, Джим, на счастье лапу мне,
Такую лапу не видал я сроду
Давай с тобой полаем при луне
На тихую, бесшумную погоду.
Дай, Джим, на счастье лапу мне.

Пожалуйста, голубчик, не лижись.
Пойми со мной хоть самое простое.
Ведь ты не знаешь, что такое жизнь,
Не знаешь ты, что жить на свете стоит...

Բախտի հավատով ինձ տուր թաթը, Ջիմ,
Չեմ տեսել երբեք ես այսպիսի թաթ,
Եկ որնանք քեզ հետ լուսնյակի դեմ ջինջ
Այս գիշերի մեջ խաղաղ ու հանդարտ:
Բախտի հավատով ինձ տուր թաթը, Ջիմ:

Խնդրեմ, անգինս, մի լիզվիր այդպես,
Հասկացիր ինձ հետ բանն այս հասարակ,
Դու դեռ չգիտես, որ արժե ասրել,
Դու դեռ չգիտես՝ ի՞նչ ասել է կյանք...
[8, с.238][7, с.268]

Из сопоставительного анализа следует, что перевод выполнен с максимальной точностью, где смысл и стиль перевода равнозначны подлиннику. Переводчик полностью воспроизвел строфическое деление подлинника со схемой *абаб*, с точной рифмовкой, обеспечивающее фонетическое звучание стиха.

Следуя смыслу подлинника, Давтян передал образ собаки так:

Ты по-собачьи дьявольски красив / Եվ դու շնորեն չքնաղ ես այնպես...

Или:

Как пьяный друг, ты лезешь целоваться... / Համբուրի համար քո դուկը բարի и др., а также, аналогично подлиннику, переводчик воссоздал образ самого хозяина.

Сравним:

*Хозяин твой и мил и знаменит,
И у него гостей бывает в доме много...*

*Քո տերն, իմ անգին, հայտնի է ու մեծ,
Ու շատ հյուրեր են լինում նրա մոտ...*

Поэтический синтаксис перевода, как и подлинника, состоит из таких фигур, как обращение, риторические вопросы (5 столбец), отражающие эмоциональное состояние поэта.

Сравним:

Дай, Джим, на счастье лапу мне... / Բախտի հավատով ինձ տուր, թաթը Ջիմ,

Или:

Пожалуйста, голубчик, не лижись. / Խնդրեմ, անգինս, մի լիզվիր այդպես...

В построении перевода Давтян не упустил также рефрен стихотворения, который использован Есениным в первом столбце, где ощущается ласковое отношение поэта к собаке. Как и в подлиннике, рефрен придал переводу выразительное, музыкальное звучание.

Сравним:

Дай, Джим, на счастье лапу мне... / Բախտի հավատով ինձ տուր թաթը, Ջիմ:

Перевод не уступает подлиннику также своим лексическим составом, где использованы такие изобразительно - выразительные средства языка, как сравнения, метафоры, аллитерации, придающие стихотворению особую эмоциональную окраску.

Например: *Тебя по шерsti бархатной потрогать.../ Շոյում են այնպէս թափշը
բրբիս...*

Лексическое богатство перевода, в свою очередь, свидетельствует о поэтическом таланте самого переводчика, проникшегося поэтическим стилем Есенина.

В переводе ощущаются также настроение поэта, его чувства, эмоциональное состояние, что тоже является одной из важнейших заслуг переводчика.

Из сопоставительного анализа следует, что перевод является аналогом подлинника, его творческим переосмыслением средствами другого языка.

Давтян, работая над переводами из лирики Есенина, признавал, что перевод произведений Есенина связан с большими трудностями. Показать присущую им тончайшую певучесть, лиризм, богатство национальных выразительных средств, весь неповторимый колорит другого языка целостно, без потерь если не невозможно, то очень затруднительно.

Из вышерассмотренных стихотворений следует, что переводам В. Давтяна присущи отточенность формы, музыкальность и тонкость, богатая ритмика и глубина содержания, которые всецело соответствуют поэтическому почерку Есенина. В переводах отражены смысловые элементы подлинника, которые коммуникативно релевантны, где наблюдается семантическая общность в содержании подлинника и перевода.

ЛИТЕРАТУРА

1. **Давтян В.** Первая любовь. -Москва: Советский писатель, 1947.- 150 с.
2. **Давтян В.** Утро мира. Москва: Советский писатель, 1950. -170 с.
3. **Давтян В.** Дорога через сердце. Ереван: Армянское гос. издательство, 1953. - 110 с.
4. **Давтян В.** Лирика. Ереван: Армянское гос. издательство, 1956.- 91 с.
5. **Давтян В.** Свет как хлеб. -Ереван: Советакан грох, 1981. 232 с.
6. **Давтян В.** Сказание о любви.- Москва: Художественная литература, 1984. 342 с.
7. **Есенин С.** Избранное. /На армянском языке. -Ереван. Армянское государственное издательство Айпетрат. 1961.-408 с..
8. **Есенин С.** Собр. соч. в 3 т. / Гл. Ред. Ю. Л. Прокушев. Том I. М: Художественная литература, 1977.-309 с.
9. **Топер П.** Возрожденная поэзия. Мастерство перевода.- М., 1959. -208 с.

ԶԱՐՈՒՀԻ ՀԱՅՐԵԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, Մ. Աբեղյանի գրականության ինստիտուտի
ավագ գիտաշխատող

ՄԵՐԳԵՑ ԵՄԵՆԻՆԻ ՊՈԵՏԻԿ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ ԹԱՐԳ- ՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հոդվածում ներկայացված են Վ. Դավթյանի թարգմանությունները Ս. Եսենինի քնարերգությունից, ինչը վկայում է հայ բանաստեղծի թարգմանչական վարպետությունը: Թարգմանությունների որակը բացահայտելու նպատակով տրվել է համեմա-

տական վերլուծություն բնօրինակին և թարգմանությանը, հաշվի առնելով թարգմանության տեսության հիմնական պահանջները:

ZARUHI HAYRYAN

National Academy of Sciences of the RA, Institute of Literature.

After M. Abegyan, Candidate of Philological Sciences,

Associate Professor,

Senior Research Assistant

**THE POETIC INDIVIDUALITY OF SERGEY ESENIN VAHAGN DAVTYAN'S
TRANSLATIONS**

The article presents V. Davtyan's translations from Yesenin's lyrics, which shows the Armenian poet's translation skills To determine the quality of translations, the article provides a comparative analysis of the translation and the original, taking into account the basic requirements of the theory of translation.

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեխնիկական գիտությունների թեկնածու

ԱՐՄԻՆԵ ԳՈՒԼՈՅԱՆ

«ՍՏ ԱՐՏ» ՍՊԸ ճարտարապետ

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՌԵԿՐԵԱՅԻՈՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԴԵՐԸ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄԵՁ**

Հոդվածում ներկայացվում է ճարտարապետական ռեկրեացիոն ռեսուրսների դերը զբոսաշրջության կազմակերպման մեջ և դրանց դերը հանրապետության սոցիալ- տնտեսական զարգացման գործում: Քննարկվում է այդ դերի իրագործման հետ առնչվող քաղաքաշինական և ճարտարապետական հուշարձանների սպասարկման հետ կապված խնդիրները: Բերված են նկատառումներ Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության զարգացման գործում քաղաքաշինական և ճարտարապետական հուշարձանների կարևորության վերաբերյալ:

Հանգուցային բառեր՝ Քաղաքաշինություն, ճարտարապետություն, հուշարձան, ռեկրեացիոն, էկոլոգիա, տեղեկատվական համակարգեր:

Ճարտարապետական ռեկրեացիոն ռեսուրսների դասին է պատկանում քաղաքաշինական և ճարտարապետական հուշարձանները: Դրանք են պատմական բնակավայրերի, թաղամասերի, փողոցների, այգիների կառուցման հատակագծերը, բնակելի, պալատական, պաշտամունքային, հասարակական, արտադրական և ճարտարագիտական կառույցները, ժողովրդական տները, ճարտարապետական կոթողները, ինչպես նաև մոնումենտալ քանդակագործության, գեղանկարչության և դեկորատիվ արվեստի նմուշները: Աշխարհը Հայաստանին և հայ ժողովրդին առաջին հերթին ճանաչում է ճարտարապետությամբ, որն ունի հազարամյակների պատմություն: Որպես ճարտարապետական ռեկրեացիոն ռեսուրսներ են հանդես գալիս պաշտամունքային, ռազմա- պաշտպանական, արդյունաբերական, բնակելի ու քաղաքային և մեմորիալ հուշարձանները, որոնք բնութագրվում են ինքնատիպությամբ և հաճախ ներկայացնում են տվյալ դարաշրջանի յուրօրինակ հանրագիտարաններ՝ նշանավորելով ճարտարապետական առանձին դպրոցներ և ուղղություններ:

Հայաստանի ճարտարապետական ժառանգության մեջ պաշտպանունքային հուշարձանները ներկայացված են ամենաբազան տեսակներով և տիպերով: Դրանք հիմնականում վերաբերվում են միջնադարին, իսկ անտիկ ժամանակներից պահպանվել են եզակի թվով հուշարձաններ: Միջնադարյան պաշտամունքային հուշարձանները ներկայացված են բազիլիկատիպ և կենտ-

րոնագմբեթ տեսակներով, ինչպես նաև դանց սինթեզված տարատեսակներով (գմբեթավոր դահլիճ և այլն): Պաշտամունքային կառույցները հանդես են գալիս եկեղեցիների և վանքային համալիրների տեսքով: Դրանցից շատերը գունագեղությամբ, բազմապիսի ու բազմաթիվ շենքերի ծավալատարածական հորինվածքների համաչափության և բնության հետ ունեցած ներդաշնակ կապի շնորհիվ ասամբլային ճարտարապետության փառահեղ նմուշներ են [1], որոնք նախապայման են հանդիսանում գիտական և ճանաչողական զբոսաշրջության համար:

Գիտական զբոսաշրջությանն են վերաբերվում այցելություն մարզերում քաղաքական և ճարտարապետական հուշարձանների վերաբերյալ գիտական տեղեկատվության հավաքագրումը: Դրանք սովորաբար կատարվում են գիտնականների կողմից՝ հետևաբար վատ ուսումնասիրված հուշարձանների վերաբերյալ առկա տեղեկատվության լրացման նպատակով՝ արշավախմբերի կազմակերպման եղանակով: Սովորաբար այդ արշավախմբերին մասնակցում են տարբեր երկրների գիտնականներ, որը նպաստում է դրանց միջև գիտական կապերի ամրանդմանը, գիտնականների և ուսանողների խմբերի փոխանակմանը:

Ճանաչողական զբոսաշրջությունը զբոսաշրջություն է՝ դասական առումով: Այն ընդգրկում է այն ճամփորդությունները որոնք կատարվում են պատմամշակութային հուշարձանների հետ ծանոթանալու նպատակով: Ճանաչողական զբոսաշրջությունը իրականացվում է արահետների միջոցով, որոնք հնարավորություն են տալիս զբոսաշրջիկին ծանոթանալու ոչ միայն տվյալ տարածքի պատմամշակութային հուշարձանների բազմազանության հետ այլ գիտակցելու դրա պահպանության անհրաժեշտությունը:

Հայաստանի Հանրապետությունում (ներառյալ Արցախը) հաշվում են շուրջ մի քանի տասնյակ հազար պատմամշակութային արժեքներ՝ վանքային համալիրներ, եկեղեցիներ, մատուռներ, սրբավայրեր, ամրոցներ, դամբարաններ, բնակատեղիներ, գերեզմանոցներ, խաչքարեր, ճարտարագիտական կառույցներ, քարավանատներ, կամուրջներ և այլն, որոնք վերաբերվում են մարդկային քաղաքակրթության զարգացման բոլոր ժամանակներին՝ հնադարից մինչև մեր ժամանակները [2]:

Հանրապետությունը քաղաքաշինական և ճարտարապետական հուշարձաններով ամենահարուստը լինելով հանդերձ՝ ուղեկցվում է նաև այդ հուշարձանների որակական բարձր արժեքներով: Այդ ամենով հանդերձ, հանրապետության հուշարձաններից շատերի վիճակը վատթար է [3]: Ժամանակը, տարերքը ավերն ու ասպատակությունները քայքայել են դրանք, քչերն են բարվոք վիճակում, մեծ մասամբ խարխլված եմ կամ խոնարհված: Տարերքը և ժամանակը մեծ վնաս են հասցրել: Քչերն են ենթարկվել նորոգման, վերականգնման և ամրակայման: Մինչ դեռ քաղաքաշինական և ճարտարապետական հուշարձանները՝ բնության և մարդու ստեղծած պատմամշակութային այլ հուշարձանների հետ, մեր երկրի ներուժն են: Անգնահատելի է դրանց դերը գիտության, քաղաքակրթության, գեղարվեստի, հայրենասիրական դաստիարակության և այլ առումներով: Դրանք տպավորիչ, հարուստ և շո-

շափելի կարող են դարձնել միջավայրը, իմաստավորել և կարևորել կատարելիք դերը: Հիմնախնդիրները անմիջականորեն վերաբերվում են մշակութային արժեքների պահպանության դրվածքի լավացմանը և կազմակերպչորեն, և գործնական առումով: Որպես բարձր քաղաքակրթական արժեքներ քաղաքաշինական և ճարտարապետական հուշարձանները դեպի իրենց են ձգում մարդկանց՝ աշխարհի տարբեր ծայրերից: Դրանց գոյությունը քաղաքական մեծագույն շնորհ է ինչն առաջադրում է նաև պահանջ և պատասխանատվություն: Առաջին հերթին նկատի է առնվում քաղաքաշինական և ճարտարապետական հուշարձանների նորոգումը, ամրակայումը և վերականգնումը, և առավել կարևորը՝ հուշարձանների բնականոն վիճակի բերելը, հնարավորություն կտա դրանք լայնորեն ներառել սոցիալ-տնտեսական հարաբերությունների մեջ, ստեղծել հանգստի և գործունեության զարգացած համակարգ, ոլորտը դուրս բերել կանաչ ճանապարհ, որ հաստատեն, սերունդներին փոխանցվեն արարչագործության այդ վավերագրերը [4]: Քաղաքաշինական և ճարտարապետական հուշարձանները ժողովրդի նյութական պատմությունն են, որոնք պատկանում են ավելի շատ ներկային, քան թե՛ անցյալին: Դրանց պահպանությունը, կյանքի և գործունեության մեջ ներառելը, գալիք սերունդներին անխաթար փոխանցելը երկրի և ընդհանուր հոգածության գործը պետք է լինի: Ցավոք, և հնում, և նոր ժամանակներում պեղման արդյունքներն ուղղորդել են միայն նյութական մշակույթի արժեքների որոնմանը, բայց ոչ հնավայրերը պահպանելու, թանգարանացնելու մտահոգության, որի հետևանքով պեղած հնավայրերից քչերի հետքերն են մնացել, մյուսներն անխնամ վիճակի և անտարբերության հետևանքով հողմահարվել են և ծածկվել հողի շերտով [3]:

Ճարտարապետական ռեսուրսները զգալիորեն բարձացնում են տարածքի ռեկրեցիոն արժեքը: Ի տարբերություն մյուսների, ճարտարապետական ռեսուրսները ունեն յուրահատկություն. Դրանք հանդես են գալիս որևէ կոնկրետ հուշարձանի տեսքով: Դրանց ընկալումն ավելի շատ կրում է հուզական/էմոցիոնալ/ բնույթ:

Հուշարձանը և միջավայրը փոխադարձորեն լրացնում, արժևորում և որակ են հաղորդում միմյանց՝ դառնալով օրգանական և փոխհարաբերացնող բաղադրիչներ: Խնդրի նման ըմբռնումը պայմանավորում է ոչ միայն բուն հուշարձանների ֆիզիկական գոյությունը, այլև դրան միջավայրի անխափան պահպանումը, ինչը հաճախ անտեսվում է: Դրանք դարերի ընթացքում դարձել են տվյալ միջավայրի անբաժան մասեր: Հանգստի և տուրիզմի կազմակերպումն ամենից առաջ անմիջական շփում է բնության հետ, վերջինիս հնարավորություններից առավելագույն չափով օգտվել ինչի հնարավորությունները հանրապետությունում բավական մեծ են: Հանրապետությունում ճարտարապետական ռեկրեացիոն ռեսուրսների ներուժի առկայությունը դեռևս լիարժեք և բավարար երաշխիք չէ տուրիզմի և հանգստի գործի զարգացման համար: Խնդիրը նաև այդ ներուժի հնարավորությունները նպատակահարմար օգտագործելը և տուրիզմի ու հանգստի գործի զարգացման նպաստող միջավայրի ստեղծումն է, որը կլուծի կարևորագույն խնդիրներ, ինչպիսիք են նոր աշխա-

տատեղերի ստեղծումը, ճարտարագիտական ենթակառուցվածքների արդիականացումը՝ կարևոր նախադրյալներ ստեղծելով հանրապետության կառուցման տնտեսական աճի համար:

Զբոսաշրջային ռեսուրսների զարգացման կարևոր փուլը քաղաքաշինական և ճարտարապետական հուշարձանների հայտնաբերման ուսումնասիրության և գնահատման համակարգի ստեղծումն է: Զբոսաշրջային ռեսուրսների վարման համար նպտակահարմար է կիրառել նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները՝ տարածաժամանակային տեղեկատվության մշակման համակարգերը (USZ) և ծրագրաապարատային մարդ-մեքենա համակարգը, որոնք ապահովում են տարածական տվյալների հավաքում, մշակում, պատկերում, տարածում, պահպանում և հուսալիություն: Դրանք նաև ապահովում են շրջակա միջավայրի և հասարակության տարածական կազմակերպման և կառավարման, վերլուծության և մոդելավերման, ինչպես նաև կանխատեսման հետ կապած գիտական և կիրառական խնդիրների լուծման դեպքում այդ տվյալների արդյունավետ օգտագործում [5]: Արդյունքում ձևավորվում է ճարտարապետական ռեկրացիոն համակարգերի տեղեկատվական համակարգ, որտեղ կարևորվում է ծրագրային փաթեթի ընտրությունը: Վերջինս պետք է հնարավորություն տա տարաբնույթ և ցրված տեղեկատվական քառսից քաղել առավելագույնը, գործուն տեղեկատվությունը համակարգված ձևով ընդունելու, պահպանելու, որոշակի ժամանակահատվածում զոսաշրջային ռեսուրսների իրավիճակը որոշող դինամիկ երևույթների գնահատում կատարելու համար, մշակելով մեծածավալ տեղեկատվություն՝ էլեկտրոնային քարտեզագիտական հիմքի վրա և հաշված վարկյանների ընթացքում ստանալու անհրաժեշտ տվյալներ [6]:

Դրանց գնահատումը (տեղոլոգիական, տնտեսական, սոցիալական, էկոլոգիական) ռեսուրսների օգտագործման առավելագույն արդյունք ստանալու անհրաժեշտ նախապայմանն է, որը հնարավորություն կտա հանրապետության զբոսաշրջային ռեսուրսների փորձագիտական արժեքների վրա հիմնաված՝ տարածքների գնահատման երկրաէկոլոգիական հարաբերական ցուցանիշի որոշման եթողի կիրառմամբ զբոսաշրջային երթուղիները հանգեցնել նոր և մինչև օրս շրջանառության մեջ չմտած զբոսաշրջության օբյեկտներով և երթուղիներով, դրանով իսկ թուլացնելու ճնշումը հիմնական զբոսաշրջության օբյեկտների վրա և երկարացնել զբոսաշրջային ժամկետը [7]:

Իմի բերելով զբոսաշրջության զարգացման գործում ճարտարապետական ռեկրեացիոն ռեսուրսների վերաբերյալ նկատառումները, դրանք կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

1. Հանրապետությունը հայտնի է իր քաղաքաշինական և ճարտարապետական հուշարձաններով, որոնք անփոխարինելի դեր ունեն տուրիզմի և ակտիվ հանգստի գործի զարգացման գործում:
2. Քաղաքաշինական և ճարտարապետական հուշարձանների դերը անգնահատելի է գիտության, քաղաքակրթության, մշակութաբանական, կառուցողական-գեղարվեստական եզակի հատկանիշներով, ճանաչողության և այլ առումներով:

3. Հուշարձաններից շատերը վատթար վիճակում են, կարիք ունեն նորոգման, վերականգնման, ամրակայման, տարածքի բարեկարգման և մոտեցումների կարգավորման:

4. Հաշվի առնելով վերջին տասնամյակում լայն թափ ունեցող քաղաքաշինական և ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրության, քարտեզագրման և ներկայացման հետ կապված աշխատանքները, առաջարկում ենք վերանայել պայմանական նշանների բովանդակությունը և ավելացնել նոր՝ «Տեսարժան վայրեր» բաժինը, որում արտացոլվելու են ճարտարապետական ռեկրեացիոն ռեսուրսներ հանդիսացող բոլոր օբյեկտները, կամ կիրառել քարտեզագրական պատկերման այնպիսի երևույթներ և մեթոդներ, որոնք նմանորինակ օբյեկտները կարող են առանձնացնել ընդհանուր ֆոնից:

5. Կարիք կա ճանապարհատրանսպորտային սպասարկման և ճարտարագիտական ենթակառուցվածքների զարգացման ու կատարելագործման:

6. «Ռեկրեացիա» հասկացության տակ պետք է հասկանալ ոչ միայն հանգստի, սպորտի, առողջության ամրապնդման և այլ ուղղությունները, այլև սոցիալ-տնտեսական գործունեության բնագավառը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության օրենքը «պետության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրերի պահպանության և օգտագործման մասին» 1998:

2. Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման գլխավոր նախագիծ «Հայնախագիծ» ՓԲԸ, քաղաքաշինության արվեստանոց. – Երևան, 2002:

3. **Շուխիկյան Գ.** Ոգի, Գույն, Կերպար. – Երևան, 2009. – էջ 192-201:

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսատրամաբ «ՀՀ ճարտարապետական և շինարարական համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկությունների և հանձնարարականների մշակում» մշտական մոնիտորինգի կիրառմամբ» ծրագրի շրջանակում:

4. **Բարսեղյան Ն.Տ.** ճարտարապետական հուշարձանների դերը Լոռու մարզի սոցիալական զարգացման գործում // ՉՇՀԱՀ գիտ. աշխատություններ. – Երևան, 2016. Հ. I (60). – էջ 3-8:

5. **Մումարյան Շ. Գ., Մուրադյան Վ. Ս.** Հողերի էրոզիոն վտանգավորության աստիճանի գնահատում ԱՏՀ և կառավարում. – 2012ՀԿ. – 216 էջ:

6. **Գևորգյան Գ. Ա.** Զբոսաշրջության ռեսուրսների կադաստրի առանձնահատկությունները // ՉՇՀԱՀ տեղեկագիր – Երևան, – 2016. – N4 – էջ 107-110:

7. «Հայաստանի Հանրապետության երկտեղեկատվական համակարգի ստեղծման և վարման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007թ. Մարտի 2-ի N197 որոշում:

ГЕВОРГ ГЕВОРГЯН

Кандидат технических наук

АРМИНЕ ГУЛОЯН

ООО «СТ-АРТ», архитектор

РОЛЬ АРХИТЕКТУРНЫХ РЕКРЕАЦИОННЫХ РЕСУРСОВ В ТУРИЗМЕ

В статье показана роль архитектурных рекреационных реформ в организации туризма и их роль в социально-экономическом развитии республики. Рассматриваются проблемы,

связанные с обслуживанием градостроительных и архитектурных памятников, связанных с реализацией данной роли. Приведены доводы о важности градостроительных и архитектурных мемориалов в деле развития туризма в Республике Армения.

GEVORG GEVORGYAN

Candidate of Technical Sciences

ARMINE GULOYAN

"ST-ART" LLC, Architect

THE ROLE OF ARCHITECTURAL RECREATIONAL RESOURCES IN TOURISM

The article presents the role of architectural recreational reforms in the organization of tourism and their role in the socio-economic development of the republic. The problems connected with servicing of town-planning and architectural monuments connected with the realization of this role are considered. The arguments about the importance of town-planning and architectural memorials in the development of tourism of the Republic of Armenia are presented.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE
REPUBLIC OF ARMENIA

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
МЕЖДУНАРОДНЫЙ НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ ЦЕНТР
INTERNATIONAL SCIENTIFIC-EDUCATIONAL CENTER

**ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ
COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES**

*Համարի թողարկման պատասխանատու և գլխավոր խմբագիր՝
ՆԱԻՐԱ ՀԱՎՈՐՅԱՆ*

Համակարգչային ձևավորումը՝ ՄԱՐԻԵ ԺԱՆՃԱՊԱՆՅԱՆԻ

Չափսը՝ 70x100 1/16:
Պատվեր՝ 4: Տպաքանակ՝ 100: Գինը՝ պայմանագրային:

«Նաիրի» հրատարակչություն» ՓԲԸ
Երևան-9, Տերյան 91